Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐ. ՂԱՐԻԲՅԱՆ

ԲԱՆ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 194[illegible]

164.
340
391.
272

Армянская ССР
Ереванский Государственный Университет им. В. М. Молотова

АР. ГАРИБЯН

Профессор, доктор филологич. наук

КРАТКИЙ КУРС АРМЯНСКОЙ ДИАЛЕКТОЛОГИИ

ИЗДАТЕЛЬСТВО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН *1941*

Հայկական ՍՍՌ

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ անվան ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

491.99.0
Ղ-51

ԱՐ. ՂԱՐԻԲՅԱՆ

ՖԻԼ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1941

A II / 12786

ԱՌԱՋԱԲԱՆ

«Համառոտություն հայ բարբառագիտության» վերնագիրը կրող այս աշխատանքը կազմված է այն նկատառումով, որ ուսանողությունն ու ուսուցչությունն իրենց ձեռքի տակ ունենան մեր բարբառների մասին ընդհանուր տեղեկություններ տվող մի աղբյուր։ Միաժամանակ այս աշխատանքով փորձ ենք անում տալու մի համառոտ ընդհանուր տեսություն հայերեն բարբառների հնչյունաբանության և ձևաբանության վրա, որ մինչև հիմա չի արված, եթե նկատի չառնենք մեծավաստակ Ա. Այտընյանի թույլ փորձը (տես՝ Ա. Այտընյան. Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Նախաշաւիղ)։ «Համառոտության» առաջին մասն ամբողջությամբ նվիրված է տեսության, իսկ երկրորդ մասում նկարագրել ենք 13 բարբառներ, տալով յուրաքանչյուրից մեկ-երկու տեքստ։ Տեքստերի մեջ երբեմն նկատվում են գրական լեզվի հետքեր, որովհետև մեզ դրավոր հասած տեքստերը ստուգելն անհնարին է (օրինակ՝ Թբիլիսիի բարբառի), կամ համարյա չկա բարբառ, որ այժմ զերծ լինի գեթ ամենափոքր չափով գրական լեզվի ազդեցությունից։ Ուրիշի կողմից գրի առնված տեքստերը մեր կողմից ստուգված են և վերածված գիտական ուղղագրության։ Բնավ նպատակ չունենալով տալու մեր բոլոր բարբառների նկարագրությունը, մենք նկարագրել ենք 13-ը մեր շուրջ 40 բարբառների բոլոր չորս ճյուղերից, որպեսզի հետաքրքրվողը կարողանա գաղափար կազմել դրանց մասին։ «Ում» ճյուղից վերցրել ենք վեց բարբառներ, քանի որ այդ բարբառների հիման վրա է կազմված մեր արդի գրական լեզուն։ «Ս» ճյուղից ընտրել ենք 3-ը, որոնցից յուրաքանչյուրը, պատկանելով միևնույն ճյուղին, նմանություններով հարում է այս կամ այն հարևան ճյուղի բարբառին (Ուրմիայի բարբառը «Լ» ճյուղի Մարաղայի բարբառին, Կարճևանի բարբառը «Ում» ճյուղի Ագուլիսի բարբառին, Արթվինի բարբառը «Ում» ճյուղի Թբիլիսիի բարբառին)։ «Լ» ճյուղից վերցրել ենք առայժմ լավ ուսումնասիրված Մարաղայի բարբառը (տես՝ պրոֆ. Հ. Աճառյան.

քննություն Մարաղայի բարբառի)։ «Կը» ճյուղից ընտրել ենք հինգ բարբառ ըստ բաղաձայնական սիստեմի մեր կլասիֆիկացիայի. պայթականների երկաստիճան ձայնեղագուրկ խմբից՝ Վանի բարբառը, երկաստիճան խլագուրկ խմբից՝ Պոլսի բարբառը, եռաստիճան խլագուրկ խմբից՝ Համշենի բարբառը, քառաստիճան պայթականներ ունեցող խմբից՝ Կարնո բարբառը և տեղաշարժ-տեղափոխություն կրող Կիլիկիայի բարբառը։

Այդ բարբառներին ծանոթ լինելը ընդհանուր գաղափար է տալիս «Կը» ճյուղի բարբառների մասին։

Աշխատանքը գրելիս օգտագործել ենք տարիներով հավաքած մեր նյութերն ու կատարած ուսումնասիրությունները և հրապարակում եղած գրականությունը, որի ցանկը նշված է «Հայ բարբառագիտության պատմությունից» գլխում։ Օգտագործել ենք ակադ. Ա. Շանիձեի խիստ շահեկան մի շարք խորհուրդներ (տես՝ Ա. Շանիձե. Մի նոր գործ հայ բարբառագիտության մասին. Արմֆանի տեղեկագիր 3, 1941 թ.), այլև պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի, պրոֆ. Գ. Ղափանցյանի և պրոֆ. Հ. Կուսիկյանի գրավոր ու բանավոր դիտողությունները։

Բարբառների անունները ըստ մեծի մասին պահպանել ենք ըստ այն գլխավոր բնակավայրերի (քաղաք կամ գյուղ), որոնց շրջանում խոսել կամ խոսում են այդ բարբառներով, չնայած որ տեքստերն ամեն անգամ լիովին չեն համապատասխանում դրանց, գրի առնված լինելով ենթաբարբառով կամ խոսվածքով։

Ար. Ղարիբյան

ՄԱՍՆ 1
ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայ բարբառագիտությունը կազմում է հայոց լեզվի գիտության մի մասը։ Հայերեն լեզու ասելով սխալ կերպով հասկացել են միշտ հայերեն գրական լեզուները՝ գրաբարը, միջին հայերենը և աշխարհաբար գրական լեզուն։

Մինչդեռ դրանք կազմում են հայերեն լեզվի միայն մի կես մասը, այն, ինչ որ գրի է առնված։ Այդ կեսից ավելի հարուստ է և ոչ պակաս հետաքրքրական մյուս կեսը, ժողովրդի խոսած տարբեր լեզուները։ Հայ լեզվաբանությունը կամ լեզվաբանական հայագիտությունը սովորաբար զբաղվել է միայն գրական լեզուներով։ Հնչյունաբանական օրենքներ, ձևաբանական կատեգորիաների ծագում, շարահյուսություն, բառական փոխառություններ և նման լեզվական գիտական այլ հարցեր քննվել ու լուծվել են միշտ՝ նկատի առնելով գրի առնված լեզուները։ Սակայն երբ այդ օրենքները և եզրակացությունները փորձարկվում են հայերեն լեզվի երկրորդ բնագավառով, ժողովրդական լեզվով, բարբառներով, ապա նշված բոլոր օրենքները և եզրակացությունները հող և հաստատում չեն գտնում։

Ուրեմն հայերեն լեզվի ուսումնասիրությունը լրիվ չի կարող լինել առանց բարբառների ուսումնասիրության։ Բարբառներում շատ հաճախ հնարավոր է լինում գտնելու գրական լեզվի մեջ երևան եկած այս կամ այն կատեգորիայի զանազան տարբերակները, այս կամ այն օրինաչափության միանգամայն բոլորովին հակադիր վիճակը և կամ այնպիսի օրենքներ, որոնք ցույց են տալիս հայերեն լեզվի բոլոր տարբերակների ընդհանուր գծերը։ Օրինակ, ներկա ժամանակի կազմությունը բարբառներում լեզվական մտածողության մի ընդհանուր հատկանիշ, «հայկական հատկանիշ» է ցուցաբերում, մինչդեռ արտաքին ձևով այդ նույն կազմությունը երևան է հանում այլ և այլ անսպասելի տարբերակներ (գրում էմ, գըրըմ էմ, գրելիս էմ, գրել եմ, գրէս իմ—այդ բոլորը նշանակում են «գրելու ընթացքի մեջ եմ»)։

Հայ բարբառագիտության ուսումնասիրությունը արժեք է ներկայացնում ոչ միայն հայերեն լեզվի տեսակետից, այլ և ընդհանուր լեզվաբանության տեսակետից· օրինակ՝ լեզվաբանական խոշոր արժեք են ներկայացնում այնպիսի երևույթներ, ինչպիսին են ապառնի ժամանակի կազմությունը, հոլովման անալիտիկ սիստեմը, խոնարհման անալիտիկ սիստեմը, անցյալ ժամանակների բաղադրյալ կազմությունը, հնչյունական սիստեմը և այլն։

Հայերենի մի շարք բարբառները աֆրիկատների օրինաչափ պարզեցմամբ կարող են ծառայել լավագույն ապացույցներ հնչյունական սիստեմի զարգացման այն սխեմայի համար, որ նշել է հանճարեղ Մառը։ Հայ բարբառների բառապաշարի ուսումնասիրությունը լավագույն ապացույցները կտա հանճարեղ Էնգելսի բարբառների ծագման տեսության համար, նույնպես և այն ընդհանուր ճշմարիտ ֆորմուլայի, որ հասարակական գոյը պայմանավորում է հասարակական գիտակցությունը։

Հայ բարբառների ուսումնասիրության երկրորդ կարևորությունն այն է, որ դա բազմաթիվ ապացույցներ կտա մեր ժողովրդի պատմության համար։ Մեր ժողովրդի էթնիկական կազմությունը և առաջացումը, հնադարյան կեցությունը, ֆեոդալական բաժանվածությունը, ճորտատիրական հասարակական հարաբերությունները կարելի է նկատել բարբառների մեջ, նրանց պատմության ուսումնասիրության ընթացքում։

Բարբառների ուսումնասիրությունը նաև մեր ժողովրդական ստեղծագործության ուսումնասիրությունն է, մի ստեղծագործություն, որը տևել է տասնյակ դարեր և տվել մնայուն հետևանքներ։

Հայ բարբառների ուսումնասիրության երրորդ կարևորությունն այն է, որ դրանով ամբողջանում է հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունը։ Մինչև այժմ հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունը կատարվել է գրական լեզվի տվյալներով, ուրեմն ոչ ամբողջական եղանակով. բարբառների ուսումնասիրությունը երևան է հանում այն աղբյուրները, որտեղից սնվել են գրական լեզուները և այդ միջոցով բացատրվում են գրական լեզվի մեջ երևացող օտար կամ անբացատրելի լեզվական իրակությունները (օրինակ՝ հոգնակիները, դերբայները, խոնարհման սիստեմի մեջ երևացող շեղումները և այլն)։ Բարբառների ուսումնասիրությունը հիմնավորում է նաև գրական

լեզվի պատմության պերիոդիզացիան, բացատրում է նաև այն ժողովրդայնությունը, որ թափանցում է գրական լեզվի մեջ և դառնում վերջին շրջանի գրական լեզվի հիմունքը։ Առանց բարբառագիտության անհնարին է հասկանալ հայոց լեզվի պատմությունը։

Բարբառագիտության ուսումնասիրությունն ունի նաև մանկավարժական արժեք։ Մեր գրական լեզուն դպրոցների և գրականության միջոցով դառնում է համաժողովրդական։ Դպրոցական ավանդվող առարկա լինելով, նա հանդիպում է բազմաթիվ բարբառների դիմադրության աշակերտների բերանում։ Ուսուցման գործը կրկին անգամ դժվարանում է նրանով, որ սովորողների բացարձակ մեծամասնությունը բարբառախոս է։ Բարբառախոսությունը ստեղծում է հաճախ այնպիսի դժվարություններ, որոնք հաղթահարելը կրկնակի դժվարություն է ներկայացնում, երբ սովորեցնողը չգիտե բարբառագիտությունը։ Բարբառագիտության իրավական դրությունը բուհական սիստեմում ամրանալով, կստիպի վերակառուցել լեզվի ուսուցման մեթոդիկան և նույնիսկ կշոշափի ուսուցողական կադրերի բաշխման խնդիրը։ Բարբառագիտությունը մեծ չափով կօժանդակի դասագրքերը որակով կազմելուն և ուսուցման դժվարությունները կանխելուն։

2. ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայերեն բարբառների մասին առաջին անգամ խոսել է հոլանդացի հայագետ Սկրոդերը իր Thesaurus linguae Armeniacae (Գանձ արամեան լեզուի) գրքում, որ լույս է տեսել Ամստերդամում 1711 թվին։ Գիրքը գրված է լատիներեն լեզվով և շարադրում է հայոց լեզվի ծագման հարցը, գրաբարի քերականությունը, ապա գրաբարի բառապաշարը և վերջում նմուշներ տալիս հայերենի բարբառներից։ Տրված նմուշներից երևում է, որ Սկրոդերին հայտնի են եղել Ագուլիսի, Ջուղայի, Թբիլիսիի, Ղարաբաղի և Փոքր Հայքի բարբառները։

Երկրորդ աշխատությունը, որ հայերենի բարբառների մասին տեղեկություն է տալիս, դա Շահան Ջրպետ Նվգոկկիացու ֆրանսերեն լեզվով գրած հայերեն քերականությունն է (Grammaire de la langue arménienne, Paris 1823), որի մի մասը նվիրված է հայերեն բարբառներին։

Երրորդ աշխատությունը, որ նվիրված է բարբառներին, դա Գևորգ Հախվերդյանի «Սայաթ-Նովայ»-ն է։

Այդ աշխատությունը իսկապես առաջին լուրջ գիտական ուսումնասիրությունն է հայ բարբառագիտության մեջ։ Գրքի

բովանդակությունը Սայաթ-Նովայի բանաստեղծություններն են, որոնց իբրև նախաբան Հախվերդյանը տվել է Թբիլիսիի բարբառի համառոտ նկարագրությունը (1—41 էջ)։ Նկարագրությունը վերաբերում է գլխավորապես ձևաբանությանը։ Քանի որ ինքը Հախվերդյանը Թբիլիսեցի էր, լավ գիտեր իր մայրենի լեզուն, ուստի նրա տեղեկությունները Թբիլիսիի բարբառի մասին անսխալ են և վերաբերում են այն շրջանին, երբ ինքն էր ապրում։ Ուսումնասիրությունից երևում է, որ Թբիլիսիի բարբառը արդեն ենթարկվում է Երևանի բարբառի խիստ ազդեցությանը, որովհետև Հախվերդյանը Թիֆլիսիի բարբառի ձևերի կողքին հիշատակում է նաև այնպիսի ձևեր, որոնք Երևանինն են։ Այդուհանդերձ նրա աշխատությունը իր արժեքը չի կորցնում։

Հայ բարբառագիտության խնդիրներով զբաղվել է նաև Այտընյանը։

Իր «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության նախաշավիղում Այտընյանը բավական ընդարձակ կերպով խոսում է հայ բարբառների մասին և տալիս է նրանց առաջին կլասիֆիկացիան։ Այտընյանի աշխատության մեջ գտնում ենք այնքան տեղեկություններ մեր բարբառներից, որ զարմանալի է, թե որտեղից է նա այդ բոլորը հավաքել, երբ այդ ժամանակ բարբառային տեքստերի հրատարակություն բնավ չկար։ Այտընյանի տված տեղեկություններից երևում է, որ նա մեր բոլոր հիմնական բարբառներին ծանոթ է, գիտե յուրաքանչյուրի առանձնահատկությունը որոշել, այդ պատճառով էլ փորձում է դասակարգումը կատարել։

Բարբառագիտության հաջորդ աշխատողը Ք. Պատկանյանն է, որ նախ հրատարակել է գերմաներեն լեզվով իր ուսումնասիրությունը Ագուլիսի բարբառի մասին (1866 թ.), ապա ութը հայ բարբառների նկարագիրը տվող իր «Исследование о диалектах армянского языка» աշխատությունը, որը հիմնված է մի շարք գրավոր աշխատությունների և իր անձնական տեղեկությունների վրա։ 1875 թվին նույն հեղինակը հրատարակեց «Материалы для изучения армянских наречий» երկուպրակ աշխատությունը, որոնցից մեկը Նոր Նախիջևանի բարբառի տեքստեր էր ամփոփում, մյուսը՝ Մշո բարբառի։ 1867 թվին հայագետ Պետերմանը հրատարակել է Թբիլիսիի բարբառի քննությունը։

1883 թվին Ս. Սարգսյանցը հրատարակեց Ագուլիսի բարբառի մանրամասն ուսումնասիրությունը, որը մինչև հիմա էլ իր գիտական արժեքը պահպանում է և օգտավետ է բարբառագիտական ուսումնասիրությունների համար։

1886 թվին լեհացի հայագետ Հանուշը ուսումնասիրեց լեհահայոց բարբառը և հրատարակեց իր ուսումնասիրությունը առաջին աշխատությամբ՝ Sur la langue des Arméniens polonais, I. Mots recueillis á Kyti, Cracowie, և ապա Beiträge zur armenischen Dialectologie գործը։

Այս աշխատությունները լավագույն վկայություններն են լեհահայոց բարբառի մասին, բայց ցավոք սրտի, ուսումնասիրությունը կիսատ են թողնում։

1887 թվին հայագետ Տոմսոնը հրատարակեց իր ուսումնասիրությունը Ախալցխայի բարբառի մասին, իսկ 1890 թվին՝ Թբիլիսիի բարբառի մասին։ Այդ երկու աշխատությունները հնդեվրոպական լեզվաբանության շկոլայի սկզբունքներով են կատարված։

Հայ բարբառագիտության մեջ մի շարք աշխատանքներ ունի Մելիք Ս. Դավիթ Բեկ հեղինակը։ 1896 թվին նա լույս է ընծայել Մարաղի բարբառի համառոտ քննությունը։ 1900-ական թվերին Արաբկիրի բարբառի քննությունը։

1897 թվին լույս է ընծայվել Լ. Մսերյանցի Մշո բարբառի քննությունը։

1899 թվին հրատարակված է Գաղանճեանի «Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը» փոքրիկ աշխատությունը։

1898 թվից հայ բարբառագիտության ասպարեզ մտավ իր աշխատություններով Հ. Աճառյանը։ Նրա առաջին աշխատությունները լույս տեսան 1898—99-և 1901 թվերին և նվիրված էին Ասլանբեկի, Սուչավայի ու Ղարաբաղի բարբառների քննությանը։ Այդ աշխատությունները համեմատաբար փոքր ծավալ ունեին և դրանցից մեկը, Սուչավայի բարբառի քննությունը, մնացել է կիսատ։

Պրոֆ. Աճառյանի գրչին է պատկանում գերմաներենով գրված Lautlehre des Van Dialekts աշխատությունը, որն ամփոփում է Վանի բարբառի մանրամասն հնչյունաբանությունը։

1909 թվին Հ. Աճառյանը հրատարակեց հայ բարբառագիտության մեջ դարագլուխ կազմող իր Classification des dialectes arméniens *աշխատությունը ֆրանսերեն լեզվով։*

1911 թվին «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի հրատարակությամբ լույս ընծայվեց Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» (հատոր Ը.) աշխատությունը։

Այս աշխատությունը նրա նախորդ աշխատության ընդարձակությունն է։ Այս երկու աշխատությամբ պրոֆ. Հ. Աճառյանը ստեղծեց հայ բարբառագիտությունը և կատարեց հայերեն բարբառների առաջին գիտական դասակարգումը։ Իրեն հատուկ բարեխղճությամբ և ջանասիրությամբ պրոֆ. Հ. Աճառյանը հավաքել է նմուշներ բոլոր բարբառներից, ստուգել է բանավոր կերպով այդ բարբառները լավ խոսողների միջոցով և գիտական տառադարձությամբ զետեղել «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ։ Այդ աշխատության մեջ Աճառյանը տվել է 31 բարբառի համառոտ նկարագրությունը, երբեմն այնպիսի հմտությամբ, որ ընթերցողն այդ փոքրիկ տեղեկություններով մի ամբողջական գաղափար է կազմում նկարագրած բարբառների մասին։ Կան բարբառներ, որոնց մասին, բացի Աճառյանի ուսումնասիրությունից, ուրիշ ոչ մի տող չկա, և կան բարբառներ, որոնք այլևս կենդանի չեն հայ ժողովրդի այն մեծ ողբերգությունից հետո, որ նա ապրեց 1915 թվին, և միայն Հ. Աճառյանի այդ աշխատությունն է վկայում նրանց երբեմնի գոյության մասին։

Հայ բարբառագիտության հետագայի ուսումնասիրությունը, բնական է, մի շարք փոփոխություններ կմտցնի պրոֆ. Աճառյանի ուսումնասիրությունների մեջ, այդ անում է նաև ինքը Աճառյանը, բայց աշխատանքն իր արժեքը երբեք չի կորցնի։

Նույն հեղինակը իր կյանքի սովետական շրջանում հրատարակել է մի շարք մոնոգրաֆիկ աշխատություններ առանձին բարբառների մասին։ Դրանք են.

1. Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926 թ.

2. Քննություն Նոր-Նախիջևանի բարբառի, Երևան, 1925 թ.

3. Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935 թ.
4. Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Երևան, 1939 թ.
5. Քննություն Գորիսի բարբառի, Երևան, 1941 թ.

Իր բարբառագիտական աշխատանքներով Հ. Աճառյանը առեղծեց մի առանձին շկոլա։ Հետևելով Աճառյանի մեթոդին Մեղրու բարբառի քննությունը կատարեց Է. Աղայանը։ Նրա աշխատությունն այժմ տպագրվում է Համալսարանի «Տեղեկագիր» հատոր XIX-ում։

Մեծ հայագետ Մառը զբաղվել է նաև հայերենի բարբառներով։ Նա հրատարակել է Материалы по хемшинскому наречию армянского языка.

1822 թվին «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» ժողովածվի մեջ Տ. Գողոսյանը հրատարակեց Հավարիկի բարբառի համառոտ ուսումնասիրությունը։ Այդ աշխատությունը հետաքրքրական նորություններ տվեց հայ բարբառագիտությանը։ Ցավալի է, որ դրա ընդարձակ հրատարակությունը չկա։

1939 թվին լույս տեսավ նաև իմ աշխատությունը «Հայ բարբառների մի նոր ճյուղ» վերնագրով, Պետական Համալսարանի տեղեկագրի հատոր XI-ում։

Այդ աշխատությամբ պարզվում է, որ Հ. Աճառյանի ձևաբանական կլասիֆիկացիան գիտական է և ճիշտ է, որովհետև այդ կլասիֆիկացիայից ելնելով հայտնագործվում է մի ամբողջ նոր ճյուղ, որ ընդունված է կոչել հայ բարբառների «Ը» ճյուղ։

Ինչպես տեսանք այդ համառոտ շարադրանքից, հայ բարբառագիտության շուրջը կան բավական աշխատություններ, սակայն հայ բարբառագիտության բնագավառում աշխատանքը դեռ հեռու է վերջացած լինելուց։ Անհրաժեշտ է, որ լեզվաբանները, հայագետները մոնոգրաֆիկ աշխատանքներ գրեն հայերեն բոլոր բարբառների մասին, ինչպես այդ անում է Հ. Աճառյանը, անհրաժեշտ է, որ բոլոր բարբառներով գիտական ճշտությամբ հրատարակվեն ընդարձակ տեքստեր, որպեսզի այդ բոլորից հետո հնարավոր լինի տեսական ընդհանուր ամփոփումներ կատարել հայ բարբառների մասին։

Եվ քանի որ այդ դեռ չի արված, ամեն տեսակ ամփոփում կունենա զգալի թերություն, որպիսինից ազատ չի լինի նաև մեր այս աշխատանքը։ Այդուհանդերձ մենք չենք վարանում ընդհանուր տեսական մի համառոտ ամփոփում կատարելու մեր բարբառների մասին, փորձելով տալ նրանց մի շարք լեզվական

իրակությունների համեմատական նկարագիրը, որ կարող է կռվան դառնալ հետագայի ավելի խոր ուսումնասիրությունների համար։

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Չկա մի լեզու, որ բարբառներ չունենա։ Սխալ է որևէ լեզու ասելով հասկանալ միայն գրական լեզուն։ Իրապես գրական լեզուն դա ընդհանուր լեզու է, մի լեզու, որը սովորում են հասկանալ և գրել բոլոր նրանք, ովքեր գրագետ են, չնայած որ խոսում են տարբեր բարբառներով։ Ժողովուրդը, այսինքն ամեն մի ազգության ճնշող մեծամասնությունը, գրական լեզվով չի խոսում, այլ խոսում է բարբառներով. նշանակում է որևէ ազգության լեզվի մեջ մտնում է ընդհանուր գրական լեզուն և ժողովրդի խոսվածքները։ Երբ սովորում են օտար լեզու, օրինակ ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, իսկապես սովորում են միայն գրական լեզուն։ Օտար լեզու սովորողի մեջ ստացվում է այն տպավորությունը, թե նա սովորում է բոլոր ֆրանսիացիների, բոլոր անգլիացիների, բոլոր գերմանացիների, բոլոր իտալացիների լեզուն, մինչդեռ այդ ճիշտ չէ. սովորում են միայն ամեն մի ժողովրդի գրական լեզուն, իսկ բարբառները մնում են անծանոթ։ Մինչդեռ ժողովրդի մեծամասնությունը խոսում է ոչ թե գրական լեզվով, այլ բարբառներով։

Բարբառները տեղական լեզվի խոսվածքի բնույթն ունեն, սահմանափակվում են որևէ մարզով կամ շրջանով և կամ մեկ երկու գյուղերով։

Բարբառների լեզվական արժեքը գիտական-պատմական է և ոչ պրակտիկ-գործնական. ուստի օտար լեզվի բարբառ սովորելը որևէ միտք չունի, բայց օտար լեզվի գիտական ուսումնասիրությունը միշտ կլինի թերի, եթե չուսումնասիրվեն այդ լեզվի բարբառները։

Գրական լեզուն սովորաբար հատուկ մշակության ենթակա լեզու է, կարելի է ասել, նույնիսկ, արհեստական լեզու է, թեև նրա սկիզբը միշտ լինում է ոչ արհեստական։ Մինչդեռ բարբառները պատմականորեն առաջացած, բնականորեն մշակված, սահմանափակ միջավայրի լեզվական ստեղծագործություն են։ Եվ հենց բնական լինելով ուսումնասիրության համար խիստ հետաքրքրական են։ Լեզվի գոյությունն իսկ մարդկային կուլտու-

բայի բարձրագույն էտապի վկայություն է, ուստի ամեն մի բարբառ իրենից ներկայացնում է այդ բարբառով խոսող մասսայի ստեղծած կուլտուրան։ Այդ կուլտուրան ստեղծվել է պատմական կյանքի այն ընթացքում, որ ունեցել է այդ մասսան։ Պատմականության արտահայտությունը նաև այն կապերն են, որ կան և եղել են այդ բարբառի և շրջապատող բարբառների և առանձին լեզուների միջև։

Բարբառների գոյությունը վկայում է մի կողմից այն ընդհանրության մասին, որ ստեղծվել է մի ժողովրդի տարբեր հատվածների մեջ կամ երբեմն անկախորեն ապրող ցեղերի մեջ, որ առաջ է եկել նրանց միացման հետևանքով և գոյացրել ժողովուրդ, մյուս կողմից ապացույց է այն անջատականության, որ եղել է ժողովրդի զանազան հատվածների մեջ նրա պատմության ընթացքում։

Որքան որ բարբառների նմանությունը ապացույց է ժողովրդի զանազան հատվածների պատմական կապերին, այնքան էլ բարբառների տարբերությունը ապացույց է կուլտուրական զարգացման զանազանության, երբեմն նույնիսկ հետամնացության որ արդյունք է շահագործական հարաբերությունների։

Ֆեոդալիզմի շրջանը, տերիտորիալ կերպով անջատ պահելով ժողովուրդ կազմած տարբեր ցեղերին, թույլ չի տալիս նրանց միանալու և լեզվական տեսակետից մի կուլտուրական ամբողջություն կազմելու, որովհետև յուրաքանչյուր ֆեոդալ իր կալվածքի մեջ անջատ էր պահում աշխատավորությանը մյուս հատվածներից՝ իրեն սեփականացնելու համար նրա ստեղծած հարստությունը։ Ֆեոդալիզմի օրենքով այդ իրավունքը սրբագործված էր և ժառանգական դարձված, ուստի ժողովուրդը և նրա հատվածները անջատվել են միմյանցից, անջատ են պահվել տեղականորեն, դարերի և նույնիսկ հազարամյակների ընթացքում։ Այս անջատման հետևանք է բարբառների տեղական գոյությունը։

Կապիտալիզմը իր բնույթով, իր արտադրական բնույթով ընդհանրական է. նրա զարգացման համար անհրաժեշտ է, որ ամբողջ ժողովուրդը ընդգրկվի մի ընդհանուր շուկայի մեջ, սակայն այնուամենայնիվ այդ նա չի միացնում ամբողջ ժողովուրդն այնպես, որ նա դառնա լեզվական տեսակետից միաձույլ։ Ամենամեծ իմաստությունը լինում է այն, որ կապիտալիզմի ժամանակ ստեղծվում է ազգային լեզու, ընդհանուր խոսակցական լեզու բոլոր

նրանց համար, ովքեր ի վիճակի են ուսում ստանալու, այսինքն ամենից առաջ բուրժուազիայի համար և ապա ժողովրդից դուրս եկած այն անձանց համար, որոնք ուսում են ստանում դառնալու համար բուրժուական շրջանի ինտելիգենտ, ծառայելու համար բուրժուազիայի շահերին։ Ժողովուրդը մնում է կուլտուրական ցածր աստիճանի վրա և շարունակում է իբրև հաղորդակցության միջոց, իբրև իր գիտակցությունը արտահայտելու միջոց գործածել իր բարբառը։

Բարբառների պահպանվելը կապիտալիզմի ժամանակ տեղի է ունենում այն պատճառով, որ տեղային անջատումները փոխարինվում են դասակարգային անջրպետներով։ Ծորտերի փոխարեն կազմվում է գյուղացիների և բանվորների դասակարգը, որոնք սոցիալական վիճակի և դիրքի տեսակետից դրվում են ստորին աստիճանի վրա։ Ուսումը մատչելի չի դառնում բոլորին, կուլտուրական բարիքները, ինչպես բոլոր նյութական բարիքները սեփականացնում է բուրժուազիան, ուստի ժողովրդին մնում է բավականանալ իր դարավոր լեզվական կուլտուրայով։ Ժողովրդի դարավոր հետամնացությունը պատճառ է դառնում բարբառների կենդանի մնալուն։ Կապիտալիզմի ժամանակ նրանք չեն էլ կարող վերանալ, եթե նույնիսկ վերանա գյուղացիությունը, ինչպես այդ տեսնում ենք Անգլիայում, որտեղ գյուղացիությունը 13 տոկոսն է կազմում, բայց բարբառները շարունակում են պահպանվել։ Եթե ֆեոդալիզմի ժամանակ բարբառների գոյության պատճառը տերիտորիալ և սոցիալական էր, ապա ամենազարգացած կապիտալիզմի ժամանակ, եթե տերիտորիալ պատճառները վերանան, սոցիալական պատճառները պահպանվում են, և քանի նրանք կան, կլինեն նաև բարբառները։

Երբ մենք ասում ենք, թե բարբառները, ավելի ճիշտ բարբառների գոյությունը, ժողովրդի կուլտուրական հետամնացության պատճառով են, ապա դա բնավ չի նշանակում, թե բարբառը հետամնաց կուլտուրայի արտահայտություն է։ Ամեն մի բարբառ ունի լեզվական մշակված կուլտուրա և ամեն ժամանակ կարող է հիմք ծառայել որևէ գրական լեզու ստեղծելու։ Դրա ամենալավ ապացույցն այն է, որ ժողովրդական ստեղծագործության գոհարները լիարժեք ձևով ներկայացվում են այն ժամանակ, երբ նրանք գրի են առնված ժողովրդական լեզվով (արտասանությամբ և քերականությամբ)։

Հետամնացություն համարում ենք ոչ թե առանձին բար-

բառերը, այլ բառբառների առկայությունը լեզվի մեջ ընդհանրապես, որովհետև այդ առկայությունը խանգարում է ժողովրդի զանազան հատվածներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուրեմն և կուլտուրական և հասարակական ստեղծագործությունը կատարելու միասնաբար։

Որպեսզի ամբողջ ժողովուրդը լծվի միևնույն գործին, իր սեփական ժողովրդական գործին—սոցիալիզմի շինարարությանը, անհրաժեշտ է, որ ժողովրդի՝ հատվածները միմյանց հասկանան։ Եթե բառբառները գոյություն ունեն, որքան էլ դրանցից յուրաքանչյուրը զարգացած լինի, այնուամենայնիվ դրանք խոչընդոտ կդառնան ընդհանուր գործին, ընդհանուր գաղափարներ հասկանալուն և ընդհանուր գործ կատարելուն։ Ահա այդ տեսակետից է բառբառների գոյությունը հետամնացության արտահայտություն։ Թե չէ՝ ամեն մի բառբառ մի կատարյալ լեզվասիստեմ է և մյուսին ոչնչով չի զիջում. նա հարմարված է արտահայտելու այն ժողովրդի կամ ժողովրդի այն հատվածի իրականությունն ու իղձերը, որի համար նա ծառայում է իբրև խոսվածք, իբրև լեզու։ Ամեն մի բառբառ ընդունակ է իր մեջ ընդունելու լեզվական ամեն տեսակ միջոցներ և արտահայտություններ—օտար բառեր, օտար ձևեր, և կուլտուրապես առաջ գնալու։ Դրա ամենալավ ապացույցն այն է, որ գիր չունեցող ժողովրդի բառբառներից որևէ մեկը հեշտությամբ դառնում է գրական լեզվի պատվանդան և վերամշակվելով՝ վերածվում գրական լեզվի։

Եթե բառբառների գոյությունը ժողովրդի պատմության վկաներն են, ապա նրանք հենց ժողովրդի պատմության նաև լավագույն աղբյուրներն են։ Այս տեսակետից բառբառների ուսումնասիրությունը շատ կարևոր է և անհրաժեշտ ամեն մի ժողովրդի կուլտուրայի պատմության համար։

Յուրաքանչյուր լեզու մի սիստեմ է, մի բարձրագույն մշակույթ, որի ուսումնասիրությունը բացում է մարդկային կուլտուրայի պատմության գաղտնիքները համաշխարհային մասշտաբով։ Այդ տեսակետից պակաս արժեք չունեն նաև բառբառները։ Ներկայացնելով ինքնուրույն սիստեմ միևնույն լեզվի ընդհանուր սիստեմում, նրանք լավագույն ապացույցներն են այն բանի, թե ինչպես է լինում լեզվական կուլտուրայի ընդհանուրը և մասնավորը, ինչպես ընդհանուր սիստեմն իր մեջ կարող է ամփոփել մասնավոր և ինքնուրույն սիստեմներ, ինչպես տարբեր լեզու-

ներից կազմավորվում է ընդհանուր լեզու, կամ ինչպես է առաջ գալիս, պատմականորեն առաջանում ընդհանրություններ տարբեր լեզուների մեջ և նրանք վերածում մի ընդհանուր լեզվի իր տարբերակներով։

Մեր կարծիքով հենց բարբառները պահում են իրենց մեջ համաշխարհային միասնական լեզվի առաջանալու եղանակների և ձևերի գաղտնիքները։

Ընդգրկված լինելով մի տերիտորիայի, մի պետության սիստեմում տարբեր ցեղական լեզուներից առաջացել են բարբառներ, միևնույն լեզվի զանազան տարբերակներ։

Այդ պատմական պրոցեսը, որ տեղի է ունեցել մի ժողովրդի կյանքում, մի տերիտորիայի վրա, տեղի կունենա ամբողջ աշխարհում այն ժամանակ, երբ կոմունիզմը կենցաղ կդառնա, երբ կհաղթահարվեն ժողովուրդների անջատող ազգային ձևերը, տարածությունը, կուլտուրայի տարբերությունները և այլն։ Ահա այդ տեսակետից ևս շատ կարևոր է բարբառների ուսումնասիրությունը։

4. ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Բարբառների առաջացման մասին կա երկու տեսակետ. մեկը բուրժուական գիտությանն է, բուրժուական լեզվաբանության — հնդեվրոպաբանությանը, մյուսը մարքսիստականը։

Ըստ հնդեվրոպաբանության բարբառներն առաջանում են, երբ «...լեզվի մեջ առաջ եկած փոփոխությունները սահմանափակվում են որոշ տեղում և չեն անցնում ուրիշ կողմեր, ուր կամ հին լեզվական ձևերն են պահպանվում կամ առաջ են գալիս տարբեր փոփոխություններ»[1])։

Այս մոտեցումը ընդունված է իբրև մի անխախտելի սկզբունք, և բխում է ազգային լեզուների առաջացման տեսության այն ընդհանուր սկզբունքից, ըստ որի մի մայր լեզուն ծնում է բազմաթիվ դուստր լեզուներ, որոնք իրենց հերթին կարող են ծնել իրենց դուստր լեզուները և այդ դուստր լեզուներն էլ իրենց դուստր լեզուները և այլն։ Ամենաերիտասարդ դուստրերը դրանցից կամ ամենավերջին սերունդները՝ դրանք մի լեզվի բարբառներն են, որոնք ծնվել են ընդհանուր լեզվից։ Այդ

1. Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն՝ 1931 թ.

բարբառների տևական գոյությունն աստիճանաբար նրանց կվերածի առանձին լեզուների և իրավունք կտա մի նոր սերնդի մայր դառնալու։ Այդպես են եղել բոլոր ազգային լեզուները, — պնդում է այդ գիտությունը, — որոնք սկզբից եղել են բարբառային վիճակում, իրար հանդեպ ունեցել են բարբառային տարբերություններ և հետագայում միմյանցից հեռանալով վերածվել են առանձին լեզուների։ Այդ տեսությունը իր այս կանոնից որևէ բացառություն չի ընդունում։

Այդ տեսությունը ճիշտ չէ և պատմությանը հակառակ է։ Իհարկե, չի բացառվում այն, որ որևէ լեզվի մի հատված, հեռանալով իր միջավայրից, ընկնում է մի ուրիշ լեզվի միջավայր և աստիճանաբար վերափոխության ենթարկվում ու վերածվում նախորդ լեզվի բարբառի։ Սակայն վերջ իվերջո, մնալով այդ նոր լեզվի լեզվական միջավայրում, նա այնքան կարող է վերափոխվել, որ կարող է դառնալ այդ նոր լեզվի բարբառ, որի միջավայրում նա այժմ գտնվում է։ Սակայն սխալ է ընդունել, որ միմիայն բարբառը մի ճանապարհով է կազմվում, այն է՝ բաժանման ճանապարհով։

Ե՛վ ազգային լեզուները, և՛ ժողովրդական լեզուները, և էթնիկական լեզուները առաջանում են ոչ որպես իբրև բաժանման երևույթ, այլ իբրև պատմականորեն գոյացած ընդհանրություն, այսինքն իբրև միացման և մոտեցման երևույթ։ Մարքսիզմի տեսակետը հենց այդ է և դա պատմական է ու համապատասխան ճշմարտության։ Թե ինչպես է առաջացել բարբառը, այդ մասին վկայում է Էնգելսը իր «Ֆրանկյան բարբառը» աշխատության մեջ։ Հիշելով գերմանական բարբառները նա ասում է.

«Հեսսենը և Թյուրինգիան ունեն իրենց սեփական, ինքնուրույն բարբառները, որպես ինքնուրույն ցեղերով բնակվածներ։ Մայնյան Ֆրանկոնիայում սլավոնական, Թյուրինգյան և սաքսոնյան բնակչությունը ծծված էր բավարական և ֆրանկյան տարրերով և մշակել էր իր հատուկ բարբառը»։

Այսպիսով Էնգելսը այստեղ ցույց է տալիս բարբառի առաջացման երկու ճանապարհ՝ մեկ այն, որ ամեն մի բարբառ առաջանում է որևէ ցեղական լեզվից, որովհետև իրականում ցեղն ու բարբառը համընկնում են։

Երկրորդ ճանապարհն այն է, որ տարբեր բարբառներ և նույնիսկ տարբեր լեզուներ մի որևէ լեզվական ընդհանուր մի-

ջավայրում միախառնվելով առաջացնում են այդ լեզվի մի նոր բարբառ։ Որովհետև ճշմարտությունն այն է, որ ցեղերն ավելի հին են, քան թե ժողովուրդները, որովհետև «ցեղերից ու տոհմերի միացումից առաջացել են ժողովուրդներն ու ազգերը», ապա, ինդեվրոպաբանության կարծիքին հետևելով կստացվի այն, որ դուստր համարվողները իրապես մայրեր կդառնան, այսինքն՝ ըստ ինդեվրոպաբանության պատմական պրոցեսը դրված է գլխի վրա։

Բոլոր տվյալները վկայում են այն մասին, թե ինչպես բարբառների գոյությունը բացատրվում է նրանով, որ ամեն մի ժողովուրդ առաջացել է բազմաթիվ ցեղերի միացումից, ուրեմն նրա լեզուն էլ առաջացել է բազմաթիվ ցեղական լեզուների միացումից։ Այդ միացումը սակայն քիմական չէ, կամ ավելի ճիշտ, այդ միացման արդյունքը չի լինում մի միաձույլ լեզու, այլ լինում է բարբառների մի ամբողջ խումբ, որոնք միասին հենց կազմում են այդ նոր լեզուն։ Հարցը բարդանում է միայն այն ժամանակ, երբ այդ բարբառներից ստեղծվում է խոսվածքի մի տարբերակ, նույնպես լայն իմաստով մի բարբառ, որով խոսում է ժողովրդի տվյալ պատմական շրջանի վերնախավը, իշխող դասակարգը, մայրաքաղաքը, թագավորական պալատը։ Այդ լեզուն իբրև դասակարգային լեզու, իբրև իշխողների լեզու հետագայում դիտվում է իբրև կատարյալ տարբերակ, մյուս խոսվածքները, որոնք ժողովրդի բերանումն են ապրում, համարվում են աղավաղյալ լեզուներ։ Այստեղից ստեղծվում է այն թյուր կարծիքը, որ հետագայում որդեգրեցին բուրժուական գիտնականները գըտնելով, որ «... բարբառը... այլ բան չէ, բայց եթե ավելի կամ պակաս անհաջող պատճենը այդ ժողովրդի բարձր լեզվի»[1])։

Իշխող դասակարգի խոսվածքը, «բարբառը», դառնում է գըրական լեզու, և դա շատ բնական է ու հասկանալի։ Ժողովրդական լեզուները իրավունք չեն ստանում տեղ գտնելու գրականության մեջ և շարունակում են դարեր շարունակ պահպանվել ժողովրդի բերանում։

Այսպիսով բարբառների առաջացումը բացատրելի է միայն պատմականորեն, կապելով ամեն մի ժողովրդի առաջացման հետ և այդ ժողովրդի պատմության հետ, մի այնպիսի պատմության,

---

[1]*)* A. Meillet. «Les langues d'Europe nouvelle», 1928.

որի մեկնության և շարադրման հիմնական սկզբունքը պատմական մատերիալիզմի սկզբունքն է, այսինքն՝ «հասարակական կեցությունը որոշում է հասարակական գիտակցությունը»։

Մարքսիզմը պատմության գիտության մեջ կատարեց այն մեծ հայտնագործությունը, որ մարդկային հասարակության պատմությունը դա իսկապես ֆորմացիաների պատմություն է, յուրաքանչյուր ֆորմացիայի ներսում ճշմարտորեն դրսևորվում է պատմական մատերիալիզմի վերևը հիշված հիմնական օրենքը։

Բարբառները եղել են ու գոյություն ունեն, որովհետև մարդկային հասարակության կյանքի սկզբնական շրջանները տոհմական և ցեղական կեցության շրջան են եղել, որին փոխարինել է ստրկատիրական հասարակական կեցությունը, ապա ֆեոդալական հասարակական կեցությունը, ապա կապիտալիզմը և այժմ արդեն սկսվել է սոցիալիզմի դարաշրջանը։

Հենց բարբառների գոյությունը կենդանի վկաներ են մարդկության պատմության զարգացման այդ օրենքների, այդ ճշմարտության։

Առանձին տոհմական լեզուներ լինելով, աժմյան բարբառները անցյալում վերածվել են միևնույն լեզվի բարբառների, երբ այդ տոհմական ցեղական հասարակությունը վերածվել է ստրկատիրական և ապա ֆեոդալական հասարակության։ Հենց ստրկատիրական կամ ֆեոդալական հասարակության հիմնական բնույթը պահպանել է այդ բարբառները, աստիճանաբար նրանց միջից վերացրել է առանձին լեզվի հատկանիշները և ստեղծել մի լեզվի տարբեր բարբառների հատկանիշներ ու, քարացնելով այդ հատկանիշները, պահպանել նրանք ու տևականացրել։ Բարբառները ժողովրդի զանազան հատվածների մեջ գիտակցվել են խորը կերպով և պահպանվել այն պատճառով, որ ֆեոդալիզմը մի կողմից այդ հատվածները միմյանցից անջատ է պահել, մյուս կողմից՝ պահել է ժողովրդի, գյուղացու, ճորտի տևական վիճակում, դասային վիճակում։ Այնուհետև բարբառներն իբրև այդպիսին պահպանվել են, որովհետև ֆեոդալիզմին փոխարինել է կապիտալիզմը, որը տերիտորիալ անջատումը վերացնելով՝ պահպանել է սոցիալական անջրպետումը, ստեղծել է դասակարգային խորը տարբերություններ ու այդ տարբերությունները տևականացրել։ Սակայն նույն կապիտալիզմը մոտեցրել է այդ բարբառները բավական չափով

հենց այն պատճառով, որ նա տերիտորիալ անջատումը վերացրել է։

Բարբառների վերացումը որպես ժողովրդական կուլտուրայի բարձրացման հետևանք, որպես սոցիալական տարբերությունների վերացման հետևանք, որպես գյուղի և քաղաքի տարբերության վերացման հետևանք տեղի է ունենալու սոցիալիզմի դարաշրջանում, երբ սոցիալիզմը կենցաղ դառնա։

Բարբառները վերանալու են, որովհետև սոցիալիզմի շրջանում զարգանում է ազգային ձևը, ունենալով միջազգային բովանդակություն։ Ազգային ձևի ուժեղացումը միաժամանակ բարբառների մահացման պրոցես է, դա համաժողովրդական ընդհանուր լեզու ստեղծելու և բարբառները վերացնելու մի պրոցես է, որի հետևանքը կլինի ոչ միայն՝ այդ բարբառների վերացումը այլև ազգային լեզուների վերածումը համաշխարհային ընդհանուր լեզվի բարբառների այն ժամանակ, երբ կոմունիզմը համաշխարհային մասշտաբով կենցաղ կդառնա։

Այդ տեսակետից բարբառների ուսումնասիրությունը այժմ անհրաժեշտ է, որպեսզի մի կողմից նրանց մեջ եղած արժեքավոր լեզվական հարստությունն օգտագործվի, մյուս կողմից նշվի նրանց վերանալու ուղիները և ապա՝ օգտագործվեն նրանք իբրև ժողովրդի անցյալի կուլտուրայի ուսումնասիրության կենդանի հուշարձաններ, հեռավոր անցյալի կենդանի մնացած զարմանալի վկայություններ։

Հայերենի բարբառների ուսումնասիրությունը անհրաժեշտ է հենց այժմ կատարել, քանի որ գրական լեզվի մասսայականացման հետ միաժամանակ բարբառները աստիճանաբար տեղի են տալիս, առայժմ մասնակի ձևով փոխարինվում են գրական լեզվով, որ հետագայում տեղի կունենա ավելի լայն չափով։ Բարբառային շատ գծեր այժմ բարբառներում չկան, մոռացված են հատկապես այնպիսի բարբառներում, որոնք ներկայացվում են խոսողների փոքրաթիվ քանակությամբ, որոնք ենթակա են կամ գրական լեզվի, կամ մի այլ բարբառի ուժեղ ազդեցության։

Ուստի քաջալերելի է ամեն մի քայլ, որ արվում է որևէ բարբառ որևէ չափով ուսումնասիրելու համար։

5. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ էթնիկական լեզուն ձևակերպվել ու որակ է դարձել հայկական էթնոսի, հայկական պետականության, հայկական ֆեոդալիզմի կազմավորման հետ միասին, մոտավորապես 2-րդ դարի վերջերին ն. ք. մեր դարաշրջանը:

Այդ ժամանակին նախորդող շրջանում լեզվական փոխադարձ ներթափանցման հետեվանքով (իսկ դա տեղի էր ունենում տնտեսական եվ քաղաքական փոխադարձ ներթափանցումից) տոհմական անջատ ու առանձին լեզուների մեջ առաջանում են լեզվական իրողությունների ընդհանրություններ, որոնք դարեդար խտանալով նոր որակ են ստանում, ընդհանուր հայկական որակ: Այդ տեղի է ունենում այն ժամանակ, երբ տոհմերը, քայքայվելով և դասակարգայնորեն դիֆերինցիացիայի ենթարկվելով, ձեռք են բերում նոր հասարակական հարաբերություններ, ըստ էության շահագործական հարաբերություններ, որոնց հիման վրա ստեղծվում է հայկական պետությունը, յուրահատուկ ֆեոդալիզմի բնույթով: Պետությունը ղեկավարող տոհմի կամ տոհմախմբի լեզուն բոլոր «նախաբարբառների» համեմատությամբ հեղինակություն է ստանում և դառնում ընդհանուր լեզու ողջ իշխող դասակարգի համար: Նախկին տոհմական լեզուների խիստ փոփոխված վերապրուկները դառնում են հայերենի բարբառներ: Այդ բարբառները լինում են միմյանցից շատ հեռու և նույնիսկ անհասկանալի, բայց նրանց մեջ կային արդեն ընդհանուր դարձած այնքան կողմեր, որ բարբառները իբրև առանձին կամ անկախ լեզուներ, բացասվում էին: Դարեդար բարբառների փոխադարձ նմանությունները կուտակվում էին, ավելանում: Այդ ավելի արագ կատարվում էր երկու հարեվան բարբառների միջև, իսկ ընդհանրապես երկրի կենտրոնական մասերում: Բնական է, որ ծայրամասերում գտնվող խոսվածքները միմյանցից կլինեին շատ հեռու, այն չափով որ միմիանց կլինեին անհասկանալի: Դարեդար ֆեոդալ դասակարգի ընդհանուր լեզվի, մեր հաջորջմամբ՝ գրաբարի, ազդեցության տակ, ինչպես և փոխադարձ ազդեցությամբ բարբառները ավելի ու ավելի են մոտենում միմյանց և միմյանց հասկանալի դառնում: Սակայն շուրջերկրյա բարբառները կմնային միմյանցից շատ հեռու և

հասկանալի չէին լինի, ինչպես այդ մասին վկայում է 8-րդ դարի հեղինակ Ստեփաննոս Սյունեցին։

«Իսկ երրորդ մասն ասէ զլեզուն և զՆնազետ պատմութիւնն. արդ լեզուս ասէ որ շուրջ դքև սահմանակից աշխարհք իցեն. գիտութիւն լեզուաց նոցա, վասնզի կարի աւգտակարք են այսք առ ստուգաբանութիւն։

Եւ դարձյալ գքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեզերականսն որպես զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ Հայեցին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան, այլև աւգտակարք ի պատմութիւնսն, զի մի վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»[1]։

Այս հեղինակը վկայում է հայերենի 6 շուրջերկրյա բարբառների մասին, ապա միջերկրյա բարբառների մասին և ապա ոստանիկ (մայրաքաղաքների) լեզվի մասին։ «Շուրջերկրյա» բարբառներն անջատում է «Միջերկրյա» բարբառներից իբրև անհասկանալի բարբառներ։ Որ այդ այդպես է, կարելի է նկատել Թովմա Արծրունու, այսինքն մի քանի դար ավելի ուշ ապրած հեղինակի վկայությունից Խույթի բարբառի մասին.

«Եւ կոչին սոքա մեկնազէնք սուրհանդակք, բնակեալք ի լերինն, որ բաժանէ ընդ Աղձնիս և ընդ Տարօն. և յաղագս խըրթընի և անհետազօտելի խօսիցն (ընդգծումս իմն է—Ա. Ղ.) և բարուցն կոչին Խութ, յորոց անուն և լեառն Խոյթ անուանի»[2]։

Եթե Սյունեցուց դարեր հետո դեռ Խույթի լեզուն այդքան խրթին էր, բնական է, Սյունեցու ժամանակ է՛լ ավելին պիտի լիներ։ Այդպես էին նաև Կորճէից, Չորրորդ Հայոց, Սպերացոց, Տայեցոց և Արցախի բարբառները, որ Սյունեցին ընդհանուր անունով կոչում է «բառք եզերականք»։ Կարելի է այժմ մոտավորապես ասել, որ Կորճեից լեզուն Ուրմիայի բարբառն է, Չորրորդ Հայոց լեզուն համապատասխանում է Մալաթիայի բարբառին, Սպերացոց լեզուն դա Կարնո բարբառն է, Սյունյաց և Արցախի լեզուները Ղարաբաղի բարբառն են։ Աշխարհագրորեն, գոնե, դրանք միմյանց համընկնում են, և հիշյալ բարբառները

---

[1]) Ստ. Սիւնեցի, եջ 17։ Н. Адонц. Дион. Фрак. и армянск. толкователи.

[2]) Թովմայ վարդ. Արծրունւոյ. Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 204, Թիֆլիս, 1917.

այժմ անգամ միմյանցից այնքան են տարբեր, որ միմյանց անհասկանալի են։ Ուստի Սյունեցու վկայությունը մի գեղեցիկ ապացույց է, որ մեր բարբառներն առաջացել են մոտեցման ճանապարհով և ոչ ընդհակառակն, և որ գրաբարի գրական լեզու եղած ժամանակ և շատ ու շատ ավելի վաղ մեր բարբառները գոյություն ունեին։

Բարբառների գոյության մասին վկայություն ունի նաև Անանուն մեկնիչը (տես «Հնչունաբանություն» գլուխը), ապա Մագիստրոսը և ուրիշները։ Բայց բարբառների գոյության լավագույն վկայություն տալիս է մի հեղինակ, որի վրա արժե կանգ առնել։

1921 թվին մեզանում տպագրվեց «Պատմություն Շապհոյ Բագրատունւոյ[1]» գիրքը։ Այդ գիրքը մի հետաքրքրական նորություն էր, որովհետև գալիս էր լուծելու պատմական մի լուրջ պրոբլեմ։ Բանասերների և ամեն մի հայագետ պատմագետի հետաքրքրությունը շարժում էր Հովհաննես Դրասխանակերտցու հետևյալ վկայությունը.

> «... վասն զի հաճեցաւ բանս ոչ երկրորդել միւսանգամ զհետեւանս գրուցաց Շապհոյ Բագրատունւոյ և մերումս ժամանակի պատմագրի...»։ «...ըստ խուռնմ ժամանակի ընդանի գոլով նորա գրուցացն ամենայնի գեղջուկ բանիւ բաւական քեզ տալ պատճառս տեղեկութեան[2]»։

Այս վկայությամբ 10-րդ դարում ապրելիս է եղել Շապուհ Բագրատունի անունով հեղինակ, որը գրել է Բագրատունյաց պատմությունը գեղջկական լեզվով, այսինքն բարբառով։ Այդ աշխատությունն անհայտ էր և, բնական է, պիտի շարժեր հայոց պատմությամբ զբաղվողների հետաքրքրությունը։ Այդ հեղինակը, կասկածից վեր է, որ պատմած պիտի լիներ հայոց պատմության հետաքրքրական դարաշրջաններից մեկի, 9-րդ դարի անցքերը։ Հասկանալի է, որ հայոց պատմությամբ հետաքրքրվողի համար շատ կարևոր է ունենալ այդ ժամանակակցի վկայությունը։ Այդ պատճառով էլ Շապուհ Բագրատունու «Պատմությունը» որոնում էին շատերը և շատ վաղուց։

1921 թ. հրատարակված վերոհիշյալ ձեռագիրը հավակնություն ունի ներկայացվելու իբրև Շապուհ Բագրատունու

---

[1]) Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, ի լոյս ածին Գ. Տ. Մկրտչյան և Մեսրոպ եպիսկ. Էջմիածին, 1921 թ.

[2]) Հովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 181—32, Թբիլիսի, 1912.

պատմություն և դրա համար բավական տվյալներ ունի։ «Պատմության» մեջ նկարագրված անցքերը սկսվում են 7-րդ դարից և տևում մինչև 914-20 թիվը և, ինչպես հրատարակիչներն են պնդում, շատ է տարբերվում մեր ճանաչված պատմիչների գործերի բնույթից ու ոգուց։

Նկատելի է, որ պատմության սկզբնական շրջանների մասին հաղորդածը կրում է հեքյաթի բնույթ, ավելի ճիշտ՝ ֆոլկլորային բնույթ, որից եզրակացվում է, թե հեղինակը գրավոր աղբյուր չի օգտագործում, այլ իր բանավոր լսածն է գրի առել. սակայն, քանի մոտենում է իր ժամանակներին, այսինքն 9-րդ դարի վերջերին, պատմությունը դառնում է ստույգ, դեպքերը հավաստալի, և զգացվում է, որ շարադրողը դեպքերի ականատեսն է կամ գրի է առնում ականատեսների պատմածից։ Հեշտ է եզրակացնել, որ հեղինակը ապրել է 9-րդ դարի վերջերին և 10-րդ դարի սկզբներին։

Բարբառագիտության համար Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակության մեջ հետաքրքրական է հատկապես այն ակնարկը, թե Շապուհն իր պատմությունը գրել է գեղջկական լեզվով։

Այդ վկայությունը շատ կարևոր է մեր լեզվի պատմության համար, քանի որ հեղինակը պարզապես վկայում է, թե այդ ժամանակ կար գեղջկական լեզու, այսինքն բարբառ, որով գրելը առանձին քաջալերանքի արժանի չի եղել. Կասկածից վեր է, որ այդ դարում բարբառներ կային, որովհետև այդ մասին վկայում է հենց ինքը պատմիչը, բայց թե ինչպիսի՞ն էին այդ բարբառները, ներկայացնում էին, արդյոք, մի որևէ սիստեմ, ունեի՞ն, արդյոք, նմանություն մեր այժմյան բարբառներին— այդ ամենի մասին տեղեկություններ չկան։

Շատ ուսումնասիրողներ բավականանում են գեղջկական համարել այնպիսի ձեռագրեր, որոնց մեջ դիտվում են մի քանի բարբառային ձևեր, բառեր և ոճեր։

Այդ ամենից եզրակացնում են, թե գրաբար լեզուն ժողովրդի բերանում սկսել է աղավաղվել, և ահա այդ ոճերն ու ձևերը այն ուղին են, որով գրաբարը վերածվեց բարբառների։

Այս մոտեցումը հիմնովին սխալ է, իրողությունը բոլորովին այդպես չէ։

Գրաբարի հետ զուգընթաց գոյություն են ունեցել նաև մեր բարբառները, ժողովուրդը եղել է բարբառախոս, իսկ գրաբար լեզվով խոսել են մայրաքաղաքի բնակչությունը և պալատական

մարդիկ։ Գրաբար լեզուն եղել է ընդհանուր լեզու պետությունը կառավարողների համար, պետության նշանավորների համար, երկրի այդ ժամանակվա տերերի համար, այսինքն ազնվական դասի համար։

Գրաբարը օգտագործվել է իբրև պետական լեզու, այսինքն այնպիսի մի լեզու, որը հասկանալի պիտի լիներ այն դասակարգի համար, որը տնօրինում էր երկրի պետական քաղաքական բախտը։ Երկիրը կառավարելու համար կառավարողները միմյանց լավ պիտի հասկանային, միմյանց հետ պիտի խոսեին, իսկ դրա համար նրանք պետք է գտնեին մի ընդհանուր լեզու։ Այդ ընդհանուր լեզուն կարող էր լինել միմիայն երկրի կենտրոնի, երկրի ամենահեղինակավոր վայրի լեզուն, իսկ հին Հայաստանում, ինչպես ֆեոդալական ամեն մի երկրում, ամենահեղինակավոր կենտրոնը պալատն էր և մայրաքաղաքը։ Մայրաքաղաքը և պալատը հանդիսանում էին միաժամանակ կուլտուրայի կենտրոններ, նաև առևտրի ու արվեստների կենտրոններ։

Մենք չենք պնդում, որ հայ ազնվականությունը ամենուրեք խոսում էր գրաբար լեզվով. դա անհնարին էր. ամեն մի ֆեոդալական տուն ապրում էր իր կալվածակալության մեջ, այսինքն, երկրի զանազան տեղերում։ Բնական է, որ ֆեոդալը պետք է իմանար այդ տեղի բարբառը, որովհետև, մեծ մասամբ տեղացի էր բայց մշտական առնչության մեջ լինելով պալատի և ուրիշ երկրների ազնվականների հետ՝ պետք է որ ընդուներ այն լեզուն կամ մի լեզու, որով կարողանար հաղորդվել մյուսների հետ։ Այդ լեզուն հենց կարող էր լինել միայն պալատական լեզուն։ Մի ուրիշ հանգամանք ևս ազնվականությանը կսովորեցներ այդ լեզուն, դա այն է, որ ազնվականության զգալի մասը իր կրթությունը ստանում էր պալատում, թագաժառանգի շրջապատում, մայրաքաղաքի մեջ, ուրեմն չէր կարող չգիտենալ ոստանիկ լեզուն։ Այսպես է վկայում Խորենացին.

«Ապա առնու Գնել իւր կին զՓառանձեմ ումն յազգէն Սիւնեաց. և թագաւորապէս արարեալ հարսանիս, տայ առատապէս պարգևս ամենեցուն նախարարացն։ Որոց հաճեալ ընդ նա և սիրեալ, ետուն առ նա զզաւակս իւրեանց, զորս առեալ, մեծապէս հանդերձեաց զարդու և զինու. և առաւել ևս սիրեցին զնա[1]»։

---

[1]) Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 281։ 1913 թ. Թբիլիսի

Այսպիսի միջավայրում ազնվականը չէր կարող չսովորել ոստանիկ լեզուն, ուստի ազնվական դասը, բացի թագավորների ազգականներից, երկլեզվյան էր, գիտեր իր տեղական բարբառը, միաժամանակ և գրաբարը։ Հենց այդ երևույթը հանդիսանում էր գրաբարի թարմացման աղբյուրը, գրաբարի հարստացման աղբյուրը, քանի որ այդ ազնվականությունը գրաբարի մեջ մուծում էր ժողովրդական լեզվի հարստությունը։

Անկախ ժողովրդի ցանկություններից, ուրեմն, ազնվականությունը մի տեսակ միջնորդ էր մի կողմից բարբառների, մյուս կողմից գրաբարի միջև. բարբառի հարստությունը մուծում էր գրաբարի մեջ և նրան անընդհատ կենդանացնում, միաժամանակ և գրաբար լեզվաձևերը հաղորդում ժողովրդին, քանի որ թագավորն ու իր պալատը և ադմինիստրացիան ժողովրդի բոլոր հատվածների հետ գործ չունեին և, ըստ ֆեոդալական կարգերի, նրանց վարչական, հարկային, դատական և այլ իրավունքները սահմանափակվում էին իրենց ղոմեններով։ Եթե ազնվականները միմյանց հետ կապվում էին գրաբար լեզվով, ապա յուրաքանչյուրն իր հպատակների հետ կապվում էր տեղական բարբառով։

Ֆեոդալի բարբառային խոսվածքի մեջ չէր կարող չլինել գրաբարի հետքերը, որոնք հաղորդվում էին ժողովրդին։ Ինչպես և նույն ֆեոդալի գրաբար խոսվածքի մեջ չէին կարող չլինել իր բարբառի տարրերը, որոնցից մի մասը կարող էր յուրացվել գրաբարի կողմից և ընդհանրանալ։

Այդ հանգամանքը մի կողմից, մյուս կողմից այն, որ գրաբարը կազմավորվել էր ժողովրդական լեզուներից, ստեղծել էր այնպիսի մի դրություն, երբ լեզվական շատ մեծ ընդհանրություններ կային ժողովրդական լեզվի և գրաբարի միջև։

Ուստի պետք է ընդունել, որ գրաբարի սովորական խոսակցական լեզուն, ինչպես օրինակ «Տուր զհաց», «Տամ զջուր», «Առնում զհարկս իմոյ աշխարհին» և այլն, հասկանալի կլինեին ժողովրդին երբև պարզ խոսակցություն, բայց գրաբարի ամբողջական սիստեմն այն ժամանակ ժողովրդի սեփականությունը չէր և լինել էլ չէր կարող։

Աշխարհաբար գրական լեզուն անգամ, որ իր սիստեմով ժողովրդական լեզուների պատճենն էր, նախահոկտեմբերյան շրջանում մեր ժողովրդի բազմաթիվ հատվածներին հասկանալի չէր։ Դրա համար հեռու գնալու կարիք չկա, բերենք մեր հայտնի գիտնականներից մեկի կարծիքը.

«Մեր բառարանը (խոսքն աշխարհաբար գրական լեզվի մասին է։—Դ.) բոլորովին գրաբար է և շատ կը տարբերի բուն ժողովրդի խոսակցական լեզուէն։ Ասոր համար է, որ հասարակ ժողովուրդը մեր գրական լեզուն կը կոչէ գրաբար»[1]։

Եվ, իրոք, որքա՞ն հասկանալի կարող է լինել մեր գրական լեզուն մի կիլիկեցու, մի համշենցու, մի սյունեցու, կամ ագուլեցու։ Ասածներիս հավատալու համար հարկավոր է հաշվի՛ առնել այդ բարբառների հսկայական տարբերությունները։

Անվերապահորեն կարելի է ասել, որ եթե հիշյալ բարբառների ներկայացուցիչներն իրար հանդիպեն և յուրաքանչյուրը խոսի իր բարբառով առանց հարմարվելու մյուսին, ապա նրանք միմյանց չեն հասկանա։

Այսպես է հիմա կամ մեր ժամանակներում, երբ հայերի զանազան հատվածներն այնքան հաղորդվում են միմյանց հետ, ապա ինչպե՞ս կլիներ հին Հայաստանում, երբ հայ գյուղացիները իրավազուրկ էին և ֆեոդալիզմը անանցանելի անջրպետ էր ստեղծել նրանց մեջ։ Եթե ավելացնենք դրան նաև այն, որ 19-րդ դարի գյուղացին ավելի զարգացած պետք է եղած լինի, քան 5-րդ դարի գյուղացին, այն ժամանակ պարզ կլինի, թե ինչու ժողովրդի բոլոր հատվածները չէին կարող խոսել մի ընդհանուր լեզվով և պիտի ունենային իրենց բարբառները։

5-րդ դարում ժողովրդական լեզուների գոյության փաստը ապացուցում է մի այլ երևույթ ևս. հայտնի է, որ գրաբար լեզվի առաջին էտապը, մեր գրական լեզվի առաջին ժամանակաշրջանը, որ սկսվում է գրերի գյուտով, 406 թվին, և տևում է մինչև 460 թ., ընդունված է կոչել «ոսկեդարյան» հայերեն։ Այդ ժամանակի լեզուն ստացել է այդ կոչումը որպես գրաբար լեզվի լավագույն էտապը, օրինակելի էտապը։

Հետագայում որակով վատանում է գրաբարը, ուստի և կոչվում է «արծաթե դարի» գրաբար։

Հարց է առաջ գալիս, թե ինչո՞ւ առաջին շրջանի գրաբարը, երբ գրականությունը դեռ նոր էր սկսվել, այնքան «կատարյալ» էր, մինչդեռ ավելի ուշ, երբ կար գիր ու գրականություն, ուրեմն լեզվի մշակման հնարավորություն, նկատում ենք գրաբարի որակի «անկում»։ Պետք էր սպասել ընդհակառակն։ Չէ՞ որ գրականության առկայությունը հնարավորություն է տալիս «տարերային խոսողու-

---

1 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Ը, էջ 20, 1911 թ.։

թյունը» մշակել ու կատարելագործել և դարձնել կանոնավոր գրական լեզու։

Շատերը գրաբարի այս առեղծվածը լուծում են շատ հասարակ ձևով. ասվում է, թե գրաբարն աստիճանաբար աղավաղվեց, որովհետև ժողովուրդը գրագետ չէր և փչացնում էր լեզուն և իբր թե ժողովրդի կողմից գրաբար լեզվի փչացումն առաջացրեց հայերեն բարբառները։

Այդ տեսակետը հիմնովին ճիշտ չէ։

Եթե իսկապես ժողովուրդը փչացնում էր լեզուն, ապա ինչու նա այդ ակտը սկսեց կատարել 5-րդ դարուց սկսած, ինչու մինչև 5-րդ դարը այդ փչացումը չէր կատարում նա, երբ գիր ու գրականություն չկար, ուրեմն և գրավոր կոնտրոլ չկար լեզվի վրա։

Մի տեսակ միստիկական է դառնում գրաբար լեզվի աղավաղման տեսակետը, որովհետև գիր ու գրականություն ունենալուց հետո ժողովուրդը շատ ավելի առիթներ կունենար կանոնավոր լեզվով խոսք լսելու, քան այն ժամանակ, երբ գիր չկար։ Ուրեմն պետք էր սպասել գրաբարի աղավաղում մինչև գրերի գյուտը և կանոնավորում գիրը հնարելուց հետո։ Ուրեմն գրականության սկզբի լեզուն պետք է լիներ անկատար և գնալով ավելի կատարյալ դառնար (5-րդ դարից հետո), մինչդեռ մենք տեսնում ենք ընդհակառակն, այն է՝ նախ լինում է գրաբարի «ոսկեդար», ապա «արծաթե դար» և ապա «երկաթե դար»։ Պարզ է, որ աղավաղման տեսակետը սխալ է և ոչինչ չի բացատրում։ Եվ վերջապես, ի՞նչ է նշանակում լեզվի աղավաղում։ Անմիտ և աննպատակ և առանց պատճառի աղավաղում չի լինում։ Կարող է պատահել որ այդպիսի բան կատարվի մի քանի բառերի հետ, նրանց գրությունը սխալ վերծանվելու պատճառով, օրինակ ՇԱԳԱՃԱԿ բառը, որ եղել է շագանակ, բայց բառամիջի գ-ն սխալ վերծանվելով գ, ավել է բառի այժմյան պատկերը. նույնը և ՇԵՐԱՄ բառը, որ գրված է եղել ՇԵՐԱՍ, սխալմամբ կարդացվել է ՇԵՐԱՄ և պահպանվել այդ սխալ ձևով։ Բայց այդ կատարվել է հենց գրավոր լեզվի պատճառով, իսկ բանավոր լեզվի մեջ նման բառերը լուրջ և օրինական և կամ իբրև լեզվաբանական երևույթ ընդունելը անզգուշություն է լեզվի թեորիայի հանդեպ։ Մեկ-երկու բառի աղավաղումը ոչ մի հետք չի թողնում լեզվի վրա, ուր մնաց թե փոխի նրան։ Իսկ եթե ընդունենք, այնուամենայնիվ, որ աղավաղումների միջոցով է լեզուն փոխվում, այդ դեպքում

պետք ընդունենք, որ լեզվական գործունեության մեջ մարդիկ ավելի խելացի բան, քան անընդհատ լեզվական աղավաղումներ կատարելը, դեռ չեն հնարամտել։ Բայց այդ կլիներ իսկապես մի զրպարտանք մարդկային հասարակության հանդեպ։ Մարդկային հասարակության կուլտուրան, այն էլ լեզվական կուլտուրան, աղավաղումներով չէ, որ փոփոխվում է, որովհետև աղավաղումներ կատարողը կարող է լինել այս կամ այն անհատը, իսկ հասարակությունը ամեն մի անհատին ենթարկում է լեզվական հսկողության, քանի որ անհատի խոսած լեզուն իրենը չէ, իր ստեղծածը չէ, այլ հասարակությանը։

«Մարդկային մտածողությունը գոյություն ունի որպես անցյալի, ներկայի և ապագայի բազում միլիարդ մարդկանց անհատական մտածողություն»[1]։

Ուրեմն ամեն մի անհատի լեզու սեփական գլխարկի, վերարկուի կամ նամակաթղթի նման չէ, որի հետ վարվի անհատը ինչպես ցանկանում է։ Այդպես չի կարող մտածել լեզվաբանական հասուն գիտությունը, մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներով տոգորված գիտությունը, որ ընդունել է թե «լեզուն հենց գործնական, ուրիշի համար նաև գոյություն ունեցող, և միայն դրանով իսկ ինձ համար ևս գոյություն ունեցող իրական գիտակցություն է»[2]։

Հետևաբար ամեն մի անհատ իր լեզուն կոնտրոլի է ենթարկում հասարակական լեզվի միջոցով։

Հետևաբար անհավատալի է նաև, որ անհատը զբաղվի միայն լեզուն աղավաղելով։ Եթե այդ անհավատալի է, ապա ուրեմն որքան մեծ անճշտություն է խոսել ամբողջ հասարակայնության մասին, վերագրելով նրան լեզուն աղավաղելու հարատև տենդենց։ Ժողովրդի հասցեին դա անտեղի մի հերյուրանք է։ Դրա ամենալավ ապացույցն այն է, որ ժողովրդի խոսվածքի յուրաքանչյուր տեսակը, բարբառը իրենից ներկայացնում է մի իսկական, առանձնահատուկ սիստեմ, որ իր ներքին օրինաչափություններով, լեզվական տրամաբանությամբ ոչնչով չի զիջում ամեն մի գրական լեզվի։ Ուրիշ հարց է, թե ամեն մի բարբառի մեջ երևում են տեղայնության, սահմանափակության գծերը, բայց դա հասկանալի է այն ընդհանուր սկզբունքով, որով բացատրվում են

[1] К. Маркс и Фр. Энгельс, Соч. т. XIV, стр. 86, 1931г.

[2] К. Маркс и Фр. Энгельс, Соч. т. IV. стр. 21. 1931 г

սոցիալական բոլոր երևույթները, այն է՝ «հասարակական գոյը որոշում է հասարակական գիտակցությունը»։

Ինչպես տեսնում ենք աղավաղման տեսությունը գիտական լեզվաբանության հետ որևէ գործ չունի, որևէ առնչություն չունի, հետևաբար բարբառների առաջացումը գրաբարյան աղավաղումներով բացատրելը ճիշտ չէ։

Այդ բոլորից հետո շարունակում է մնալ չստուգված ու չապացուցված այն հարցը, թե ինչու գրաբարը ավելի կանոնավոր էր գրականության սկզբնական էտապում, քան հաջորդում, ինչու նախ լեզվական «ոսկեդար», ապա «արծաթե դար» և ոչ ընդհակառակը։

Այդ պարզելու համար քննենք հարցն ըստ էության։

Գրաբարի «աղավաղումները» երկու տիպի են, մեկ՝ կառուցվածքի մթագնում կամ շարահյուսական աղավաղումներ, մեղանչանք գրաբարի օրինաչափ կառուցվածքի հանդեպ, մեկ էլ՝ ձևաբանական աղավաղումներ, այսինքն սխալներ և մեղանչանքներ գրաբարի ձևաբանական օրինաչափությունների հանդեպ։

Այդ երկու տիպի աղվաղումների պատճառները կարող են լինել երկուսը. մեկ՝ օտարամտածությունը կամ օտարաբանությունը, մյուս՝ բարբառամտածությունը կամ բարբառաբանությունը։

«Օտարամտածություն» ասելով հասկանում ենք օտար լեզվի սիստեմով հայերեն կամ մայրենի լեզվով խոսելն ու գրելը։ Մեզ հայտնի է, որ հայ հեղինակները շատ գրքեր են թարգմանել հունարենից, ասորերենից և պարսկերենից, հետևաբար նրանք այդ լեզուները պետք է լավ իմանային։ Եվ իրոք, հայ հեղինակներից շատերը ուսում են ստացել այդ լեզուների երկրներում, հատկապես Հունաստանում։

Նշանակում է՝ նրանց լեզվական մտածողությունը խիստ չափով ազդված պիտի լիներ այդ երկրների լեզուներից, որի հետևանքով էլ հայերեն գրելիս գործածվել են հունաբան, պարսկաբան և ասորաբան ոճեր։ Հայտնի է, որ գրաբար լեզուն 7-րդ դարից սկսած ունի մի ամբողջ շկոլա, հեղինակների մի ամբողջ շարք, որոնք ներկայացնում են հունաբան դպրոցը (Մովսես Քերթող, Դավիթ Անհաղթ փիլիսոփա, Անանուն, Անանիա Շիրակացի և այլն)։ Այդ հեղինակները, մտածելով հունարեն, գրել են հայերեն, ուստի և նրանց լեզուն խախտում է, ուրիշները կասեին, աղավաղում է գրաբար լեզվի սիստեմը։

Այդ նույն երևույթը տեղի է ունեցել 7-րդ դարից ավելի առաջ, մեր կարծիքով, մեր գրականության հենց սկզբից, հենց այն հեղինակների մոտ, որոնց կրթությունը եղել է հունական, ուստի սխալ է գրաբար լեզվի մեջ հունաբանությունն ընդունել միայն 7-րդ դարից։ Հունաբանությունը գրաբար լեզվի մեջ նկատվում է հենց 5-րդ դարից սկսած և 7-րդ դարում ձևավորվում է իբրև շկոլա։ Ուրեմն՝ սխալ է նաև այն տեսակետը կամ այն վարմունքը, երբ մի հեղինակի մոտ գտնվում են հունաբանության հետքեր, շտապում են անմիջապես տեղափոխել այդ հեղինակին 5-րդ դարից դեպի ետ, դեպի ուշ ժամանակներ, առնվազն 7-րդ և երբեմն էլ 8, 9-րդ դարերը, չնայած նույնիսկ նույն հեղինակի հակառակ վկայություններին։ Այդպես են վարվել և շարունակում են վարվել մեր 5-րդ դարի պատմագիր Մովսես Խորենացու հետ, նույն ձևով են վարվում այժմ Մխիթարյանները Եղիշեի հետ, չնայած այն բանին, որ հեղինակն ասում է —

«...ճառագրեմք զբազում հարուածսն, յորում պատահեցաք և մեք իսկ ականատեսք լինելով»[1]։

Օտարամտածությունը լեզուների խաչավորման միջոցներից մեկն է, եթե դա չափից շատ չէ։ Չափից շատ լինելու դեպքում օտարմտածությունը մթագնում է լեզուն, զրկում ճկունությունից, բայց քիչ լինելու դեպքում՝ ոչ թե վնասում, այլ օգուտ է տալիս։ Քանի որ լեզուն միևնույն սխեմով չի կարող արտահայտել բոլոր ժամանակների և բոլոր շրջանների փոփոխված գիտակցությունը, ուստի օտարամտածության օգնությամբ հաղորդվում են գիտակցված իրականության այնպիսի երևույթներ, որոնք յուրացրել է ուրիշներից տվյալ հասարակությունը իր զարգացման ճանապարհին։

Լեզվի համար որոշ չափի օտարամտածությունը նույնքան անհրաժեշտ է, որքան բառային փոխառությունը։ Յուրաքանչյուր լեզու լեզվական մտածողության որոշ կայուն սխեմ ունենում է միշտ, սակայն, երբ այդ սխեմն ինքն իրեն սպառում է և անզոր է լինում արտահայտելու փոփոխված գիտակցությունը, օտարամտածության երևույթների յուրացումը դառնում է անհրաժեշտություն։

Ահա օտարամտածության այդ դեպքերի երևույթը գրաբարի մեջ «պուրիստների» կողմից ընդունվում է իբրև գրաբարի աղավաղում։

[1] Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 11։

Մեր կարծիքով, գրաբարում բայի ներխուժումը որոշիչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի միջև օտարամտածության արտահայտություն է, որ հաճախ կգտնենք հունաբան հեղինակների մոտ, նաև Խորենացու, Սեբեոսի և ուրիշների։

«...զքաջաց արդեօք եթէ զվատաց անցեալ ունիցի զտեղի...»

«...յունականաւն վարէին գրով...»։

(համեմատիր՝ լատ. Solo venit atheniensis)։

Մեսրոպյան շրջանի մի շարք հեղինակների մոտ այդ համարյա նկատելի չէ (Եզնիկ, Հովհան Օսկեբերան, Աստվածաշնչի թարգմանիչներ և այլն)։

Գրաբար լեզվի «աղավաղման» երկրորդ պատճառը բարբառամտածությունն է։

Ետոսկեդարյան հեղինակների մոտ հաճախ ենք հանդիպում նախադասությունների այնպիսի կառուցվածքի, որոնք հիշեցնում են ժողովրդական լեզուները։

Մեր կարծիքով, ոսկեդարյան շրջանի և ետոսկեդարյան շրջանի որոշիչի և հատկացուցչի առաջադաս գործածությունը գրաբարինը չէ, այլ ժողովրդական լեզվինը, որից չէր կարող երբեք խուսափել գրաբար լեզուն։

Գրաբար լեզվի հոլովումն ու խոնարհումը կուռ սիստեմ են ներկայացնում, եթե հետևենք օրինաչափական ձևերին, սակայն այդ ձևերից կատարվում են բազմաթիվ շեղումներ. այդ ևս պետք է բացատրել ժողովրդական լեզվի ազդեցությամբ։

Գրաբարի մեջ անբացատրելի համարվող, կամ իբրև աղավաղում ընդունվող բազմաթիվ ձևեր ու երևույթներ կան. դրանք վերաբերում են և՛ շարահյուսության, և՛ ձևաբանության, և՛ բառագործածության, և ամբողջ լեզվական մտածողության։

Այդ բոլոր շեղումները բացատրել անհատական աղավաղումով չի կարելի, ոչնչով չի էլ հիմնավորվում, ուրեմն պետք է որոնել մի այլ պատճառ, բայց լուրջ և հիմնավորված։

Մեր կարծիքով լեզվական փոփոխությունների կամ աղավաղումների երկրորդ պատճառը կարող էին լինել ժողովրդական բարբառները։

Իբրև կենդանի լեզու, նրանք թափանցում են գրական լեզվի մեջ (նաև միմյանց մեջ) և ստեղծում այն անկանոնությունները, որոնք դիտվում են իբրև «աղավաղումներ». օրինակ, գրաբար լեզվի հոգնակի հայցականը ունենում է ս հոլովակազմիչ և

տարբերվում է ուղղականից, մինչդեռ ժողովրդական լեզվի հայցականը միշտ նման է ուղղականին (տարկայի առումով վերցրած գոյականը) ուսափ Խորենացու

«...ընկեց ի մեջք օրիորդին Ալանաց և շատ ցավեցոյց զմեջք փափուկ օրիորդին» և, կամ Եղիշեի «և արք պարսիկք... կալան և ետ ի ձեռս նորա» հայցականների ք-ն պետք է համարել ժողովրդական լեզվի ազդեցություն։ Ուրեմն գրաբարի «աղավաղումը» կատարվել է գրաբարի լեզվաձևերը ժողովրդական լեզվի ձևերով փոխարինելու միջոցով։

Գրաբար լեզուն ունի ք հոգնակի, բայց Փարպեցու մոտ գտնում ենք եր հոգնակի ունեցող բառեր («հայեր», «հարկեր»)։

Հետևաբար գրաբարն «աղավաղվել» է ժողովրդական հոգնակիով, գրաբարինը փոխարինվել է աշխարհաբարի հոգնակիով։

Այս և նման բազմաթիվ երևույթներ ցույց են տալիս, որ գրաբարը չէ, որ աղավաղվում է, որպեսզի հետո ստեղծվեն բարբառներ, այլ ընդհակառակը, գրաբար լեզվի կողքին գոյություն ունեին ժողովրդական լեզուներ, որոնց այս կամ այն ձևերը թափանցելով գրաբարի մեջ՝ խախտում էին նրա սիստեմը։ Շատերը ստանում են այն տպավորությունը, թե գրաբար լեզուն աստիճանաբար «աղավաղվում» է և այդ «աղավաղումը» տանում է դեպի բարբառների գոյացումը։

Գրաբարին զուգընթաց ժողովրդական լեզուների առկայությունը կասկածից վեր է, որովհետև ոչ մի այլ կերպ գրաբարի սիստեմի խախտումը բացատրել հնարավոր չէ։ Լեզվի «ներքին օրինաչափ զարգացում» հասկացողությունը հնարավոր է ըմբռնել միայն այն իմաստով, որ լեզվի ներսում ստեղծվում է սիստեմի միօրինակություն և համաչափություն։ Հասարակական գիտակցությունը ուղղվում է միշտ այն կողմը, որն ավելի հասարակականորեն շահավետ և տնտեսական է (խոսքը վերաբերվում է լեզվական օրինաչափություններին), որովհետև այդ ձևով հեշտանում է լեզուն։ Անգամ օտար փոխառությունները ամեն մի լեզու հարմարեցնում է իր սիստեմին, միօրինականացնում է իր լեզվական երևույթների համաձայն, իսկ սեփականացված ձևերն այդ միօրինականացման ենթարկվում են է՛լ ավելի ուժեղ։ Դրա ամենալավ ապացույցն է գրաբար լեզվի հոլովման սիստեմը, որ բացառություններ չգիտե, եթե նկատի չառնենք մասնակի շե-

ղումները, որոնք բացատրվում են դրսի ազդեցությամբ, ժողովրդական լեզվի ազդեցությամբ։

Դրա ապացույցն է նաև խոնարհումների թվի կրճատումը հայերենում (գրաբարում 5, ժամանակակից հայերենում 2)։

Միայն այն ժամանակ, երբ դրսից առնված ձևերը լեզուն չի կարողանում հարմարեցնել իր սիստեմին, նա իր մեջ ընդունում է իր սիստեմին հակառակ նոր օրինաչափություններ։ Ուստի գրաբարին օտար կամ անհարազատ լեզվական օրինաչափությունները գրաբարինը չեն, այլ գրաբարին զուգահեռ գոյություն ունեցող ժողովրդական բարբառներինը, ուստի գրաբարի շեղումները ու բացառությունները, որոնք հիշեցնում են բարբառների ձևերը, ամենալավ ապացույցն են բարբառների գոյության՝ 5-րդ դարում և ավելի առաջ։

Կարելի է առարկել, թե մեկ երկու ձևերը, որ հիշեցնում են բարբառները, գուցե նոր գոյացումներ են հենց իրեն՝ գրաբարի մեջ, և որ այդ երկու օրինակները չեն կարող ապացուցել ժողովրդական լեզուների ամբողջ սիստեմի առկայությունը։

Այստեղ, սակայն, լեզվաբանության մեջ պետք է կիրառել այն, ինչ որ կենդանաբանության մեջ ընդունված է, այն է՝ մարմնի անդամներից մեկի միջոցով վերականգնել կենդանու ամբողջ ֆիզիոլոգիական կառուցվածքը։

Իսկապես, ժողովրդական լեզվի ինչպիսի՞ երևույթներ կան գրաբարի մեջ։

1. Որոշիչի և հատկացուցչի առաջադաս գործածությունը։

Գրաբարը ժողովրդական լեզուներից հենց տարբերվում է շարահյուսական այդ ձևերով. ժողովրդական լեզուների մեջ որոշիչի և հատկացուցչի հետադաս գործածությունը անհնարին է և անըմբռնելի։

2. Հոգնակի հայցականի և ուղղականի նմանությունը։

3. Ներգոյական հոլովի գործածությունը[1]։

4. Նախադասության անդամների շարադասության տարբերությունը։

Այդ ամենը վկայում են, որ այդ ձևերը ոչ թե պատահական են, այլ մի առանձին բարբառախմբի ժամանակի վկայություններ։

[1] Տե՛ս Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, 1913 թ. էջ 35 «...ի բարձրավանդակում կոյս կալով ի տեղւոջ...»։

Հետևաբար, գրաբարի «անկումը» ժամանակագրական շրջանում բացատրվում է ժողովրդական լեզուների ներթափանցմամբ. միաժամանակ այդ «անկումը» ապացուցում է ժողովրդական լեզվի գոյությունը գրաբարին զուգահեռ և գրաբարի գոյության ամբողջ ժամանակաշրջանում։

Ինչու, սակայն, գրաբար լեզուն ապրում է «անկում», այսինքն ինչու գրաբար լեզուն 5-րդ դարի 2-րդ կեսին ավելի ուժեղ է ենթարկվում ժողովրդական լեզուների ազդեցության, քան առաջին կեսին։

Գրաբար լեզվի խոսակցական բազան թագավորական պալատն էր և մայրաքաղաքը։

Այդտեղ լեզվական կրթություն էին ստանում բոլոր նրանք, որոնք առնչություն ունեին կամ կապված էին այդ պալատի հետ։ Մայրաքաղաքի հասարակայնությունը օրինականություն էր տալիս լեզվաձևերին, հասարակականորեն վերարտադրել տալիս ժառանգաբար մշակված լեզվաձևերը։

Առաջին հեղինակները այդ միջավայրի ազդեցության ներքո գրաբարը շատ լավ գիտեին և պահանջված դեպքում կարող էին սովորել, ինքնակոնտրոլի ենթարկել իրենց, ուստի նրանց լեզուն «մաքուր» գրաբարյան էր։ Բայց ահա անցնում են ժամանակները, պալատը կորցնում է իր նշանակությունն առանձնապես 429 թվից հետո, երբ դադարում է գոյություն ունենալուց հայ թագավորությունը նաև անվանապես, մայրաքաղաքը ևս կորցնում է իր նշանակությունը, ցրվում է գրաբարախոս հասարակայնությունը, թուլանում է գրաբարի խոսակցական բազան, կուլտուրական կենտրոնները դառնում են զանազան ազնվականների պալատները, որ բարբառային խոսակցություններից զերծ չէին։

Բնական է, որ դրա հետևանքը պետք է լիներ ժողովրդական լեզուների ուժեղ ազդեցությունը գրաբարի վրա։ Ահա ինչու գրաբարի զարգացման սխեման «գլխի վրա» է կանգնած, այսինքն, նախ կատարյալ էտապն է, ապա աստիճանաբար «անկումը»։

Գրաբարի «անկումը» պետք է բացատրել և մեկ ուրիշ հանգամանքով։

Մեր գրողների զգալի մասը գեղջուկներ են, գեղջկական ծագում ունեցող մարդիկ։ Նրանք ազնվականության կողմից վերցվել են իբրև անձնական սպասավորներ։

Գեղջուկները սպասարկել են ազնվականությանը ամեն ինչով. ազնվականության ապրուստը, սեղանի բոլոր բարիքները, հագուստը, արդ ու զարդարանքը, բնակելի շենքերը, գեղարվեստա-

կամ ճաշակը բավարարող բոլոր ֆրերը ստեղծվել են գեղջուկների ձեռքով։ Գեղջուկները սպասարկել են ազնվականներին նաև գիր ու գրականությամբ։ Ազնվականները ուշիմ գեղջուկ մանուկներին վերցել են և գիր սովորելու տվել՝ մի կողմից ազատելով իրենց այդ ծանր բեռից, մյուս կողմից գրագետ գեղջուկներին պահել իրենց պալատներում քարտուղարության կամ գրով սպասարկելու համար։ Այդպիսի գեղջուկ է եղել Մեսրոպ Մաշտոցը, հայերեն գրի հնարողը, այդպիսին էր Ղազար Փարպեցին, այդպիսին էր Խորենացին և այլն։

«Իսկ որ զատոյցն զիս պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհիս և ազատութեան եղե մեզ առիթ, տէր Աղան՝ քո տեառն քեռի էր»[1]։ — Իսկ այն մարդը որ պարեգոտով այս աշխարհի ծառայությունից (այսինքն գեղջուկ վիճակից — Ղ.) ինձ զատեց և առիթ եղավ մեր ազատության (ազատ վիճակ ունենալուն — Ղ.) քո, տեր, քեռին էր, տեր Աղանը։ — վկայում է Փարպեցին իր մասին։

Ազնվականության պետքերին սպասարկելով ժողովրդի այս տաղանդավոր զավակներն օբեկտիվորեն կատարել են համաժողովրդական գործ, նրանք ստեղծել են մեր ժողովրդի գրաբարալեզու կուլտուրան։ Այդ գրելու ընթացքում նրանք գրաբարն օգտագործել են իբրև սովորած, երկրորդ մայրենի լեզու, այդ պատճառով էլ հաճախ գրաբարի մեջ մուծել են իրենց լեզվական մտածողության տարրերը։ Դա դիտվել է իբրև գրաբարի աղավաղում, մինչդեռ դա ժողովրդական լեզվի թափանցումն է գրական լեզվի մեջ։

Այստեղից կարելի է անել մի կողմնակի եզրակացություն. այն գրողները, որոնց մոտ ժողովրդական լեզվի տարրերը շատ ուժեղ են, այսինքն, որոնք գրաբարից շատ սխալներ են անում և որոնց մայրենի լեզուն եղել է բարբառը, նրանք ծագումով գեղջուկ են։

Այդպիսի մի գեղջուկ գրող է նաև կարծեցյալ Շապուհ Բագրատունին։

Ասացինք՝ վաղ ժամանակի գրաբարի մեջ ժողովրդական լեզվի հետքերը քիչ են, որովհետև գրաբարի խոսակցական բազան ուժեղ էր, և հեղինակները լավ են սովորել կենդանի լեզուն և քիչ սխալներով գրել, բայց երբ ցրվեց այդ բազան, տարրալուծվեց,

[1] Ղ. Փարպեցայ Պատմութիւն Հայոց և Թուղթ..., էջ 138, 1904 թ.։

գրաբարի խոսակցական բազան մանրացավ, թուլացավ, հեղինակները, վատ սովորելով կամ գրքերով սովորելով գրաբարը, ավելի էին ենթակա ժողովրդական լեզվին։ 9—10-րդ դարերում մեր գրաբար լեզվի խոսակցական միջավայրը անհետանալու վրա էր արդեն, գրաբարը սովորում էին միմիայն գրքերով և, բնական է, շատերին չէր հաջողվում լիակատար կերպով տիրապետելու այդ լեզվին, ուստի նրանք սխալներ շատ էին անում։ Իսկ այն դեպքում, երբ գրում է մեկը, որը գրաբարը սովորել է միայն գրքով, չի խոսում գրաբարով և գիտե իր մայրենի բարբառը միայն, այդպիսի մեկը գրաբար լեզվով գրելիս պիտի խառնի գրաբարի սիստեմն աշխարհաբարին, հատկապես իր մայրենի բարբառին։

Այդպիսի մեկը չի էլ ենթադրում, որ ինքը սխալներ է կատարում, քանի որ նա ամեն անգամ չէ, որ գիտակցում է գրաբարի լեզվական նորմաները։ Սխալները կլինեն մեծ մասամբ ոճի և շարադրության մեջ։

Այն դեպքում, սակայն, երբ գրողը գրաբարի խոսակցական միջավայրում չի, գրաբարը սովորել է գրքով, ինքնուրույն գրելիս սխալներ կանի նաև ուղղագրության մեջ, այսինքն գրաբարի հնչյունական սիստեմի մեջ։ Այդ սխալները բավական պարզությամբ կդրսևորեն նրա բարբառի առանձնահատկությունները։

Մեր բարբառների հնչյունական սիստեմի հնագույն վիճակի մասին շատ տեղեկություններ չունենք։ Չկան ուսումնասիրություններ, չկան տեքստեր, իսկ եթե լինեին էլ, գրի առնված չպիտի լինեին գիտական այնպիսի մի մեթոդով, որը գաղափար տար ամբողջ լեզվասիստեմի մասին։ Ուստի մեր բարբառների հնչյունական սիստեմի հնագույն վիճակի մասին բնագիր-տեղեկություններ ունենալն անհնարին է։

Բարեբախտաբար կա մի միջոց, որով կարելի է մոտավոր չափով վերականգնել բարբառների լեզվական սիստեմի հնագույն վիճակը կամ գաղափար կազմել նրա մասին։ Այդ միջոցը բարբառային տիպի սխալների ուսումնասիրությունն է։ Այդ տիպի սխալներ հեղինակները կատարել են հնագույն շրջաններից սկսված, կատարում են նաև այսօր։

Այդ տեսակետից դասական և զարմանալի երևույթ է կարծեցյալ Շապուհ Բագրատունու աշխատությունը[1]։

Ուղղագրական ինչ սխալներ ունի Շապուհ Բագրատունին և ինչ են ցույց տալիս դրանք։

---

[1] Պատմություն Շապհոյ Բագրատունւոյ, 1921։

1. Բառասկզբին գրաբարի ձայնեղների դիմաց չափազանց հաճախ են պատահում շնչեղ խուլեր, այսինքն բ, դ, ձ, ջ, գ հնչյունների դիմաց՝ փ, թ, ց, չ, ք հնչյուններ։

Օրինակներ.

«... դիարդ կարացից սուր մերցեցուցանել ի կենսափեր փայտ խաչին» (12)[1]։

«... և տայ նմա որ ասպընչան իցէ» (12)։

«... հսկեցին դէրիշերն ամենայն բազում աշխատութեամբ» (13)

«... դարմացաւ ընդ հավաստ կնոջն...» (13)։

«... յանկարծակի նստաւ չորիս ...» (13)։

«... ոչ կարաց շարժել ի տեղոչէն» (13)։

«Եվ դէմ եքեալ երթալ ի վերայ Դարբանդին...» (18)։

«... դէնք թորայ մի կարասցեն տալ խոց թշնամեաց քոց... (27)։

«... արդ ունիմ դէիր ձեռին Մահմետի հօր քո...» (26)։

«... և աղատագունդն ընտրածք փիւրոց...» (62)[2]։

«... այս Ի ամ է որ ի նեղութիւն և արքելք եմ կացել...» (63)։

«... ոչխարք ջերք և պարարտք...» (63)։

«... և գմեծ շահապտանն դԹվլին...» (72)։

«... ով իշխան, ահայ աւուրս որսոյ, բազում լաքընտկանք են նստուցել ծառայքն մեր, արի երթանք որսանք»։ Եվ նայ հեծաւ չորի և գնաց դհետ նոցայ և հասան եզր ագեացն, որ Վարդափոյն կոչեն» (75)։

«... և նայ արքիլեց դչորին...» (75)։

«... քաջ մարդիկ աղէէն Գնունեաց...» (82)։

«... աւձին ցագն լավ է սպանանել, որ ոչ վիշապանան» (84)։

2. Այդ սխալները կարելի էր համարել արտագրողի սխալներ (թեև անգրագետ արտագրողն անգամ չէր կարող կատարել այդպիսի սիստեմատիկ սխալ), եթե չլինեին հակադարձ տիպի բարբառային սխալները, այսինքն՝ գրողը, որովհետև գրաբարի ձայնեղները կարդալիս արտասանում է շնչեղ խուլ, ուստի գրելու ժամանակ իր արտասանության շնչեղ խուլը գրում է ձայնեղի նշանով։ Ուրիշ խոսքով փ, թ, ք, ց, չ-ի փոխարեն գրում է բ, դ, գ,

[1] Փակագծերում նշվում են գրքի էջերը։

ճ, չ, քանի որ կարդալիս նա արտասանում է շնչեղ խուլ։

Օրինակներ.

«... և անկարծակի զարդեան արք վաճառականք զարհուրեցան» (1)։

«... զԴաւիթ զհայրն Մուրկայ» (3)։

«... շինեալ զամրոցն առ աբն Խորեան գետոյ» (4)։

«... պատուական բայտ խաչին գտանիցէ թէ ուր է» (8)։

«... Եվ արև տիկինն, յերկրէպագ արգային և առաջեալ գնաց զճանապարհն իւր» (12)։

«... և պատուական մորթս գազանաց...» (18)։

«... զոր ի թղթին գրեալ էր... (28)

«... զի անխաբոն լինիցի յիշատակ...» (34)։

«... զոր չէ պատեհ ...» (66)։

«... դու զայդ դոզուս և այլազգի երթաս...» (66)։

«... դեռ չէ եկել» (74)։

«... իջաւ ի ձիոցն և ընդացաւ հետևակ ընդ առաջ նորայ (63) և այլն։

Այսպես կարող է սխալվել միայն ինքնուրույն շարադրողը, բայց ոչ երբեք արտագրողը։ Ուրեմն այն սխալները, որ մենք հանդիպում ենք Շապուհի գրքում, դա հենց իրենն է, Շապուհինը։

3. Խուլ հնչյունների դիմաց շատ հաճախ գտնում ենք ձայնեղներ, այսինքն՝ պ, տ, ծ, ճ, կ, հնչյունների փոխարեն գտնում ենք բ, դ, ձ, ջ, գ, և ընդհակառակն (տեղաշարժ դեպի ձախ)։

Օրինակներ.

«... սկսաւ զմեծայմեծ բանճառս ատկցի լալել»(3)

«... և առաջ եկ գնաց երկիրն Վասբուրականի» (9)

«... և արեալ զքաղաքն Տարբանդ (18)։

«Եւ Աշոտի եղեն Գ. որդի և անուանեց զաւագն Գրիգոր Դէրէն, և միւսն Կագիկ, և երրորդին՝ Համազասբ» (39)։

«... և նոքա փողահեալ եկին առ Դէրէնն...» (47)։

«... Կարի ամպոխ են...» (70)։

«... երթային ընդ դաշտն անտեալ Հերայ» (70)։

«... հար ըռըմբոզտ» (70)։

«... եհար ըմբզով ի կողն նորա» (70)։

Այդ երկու տեղաշարժերի հետևանքը տալիս է երկաստիճան

խլացուցիկ բաղաձայնական սիստեմ, որ հարուստ է շնչեղ խուլերով.

բ փ
դ թ
ձ ց
ջ չ
գ ք

Այդ խմբին են պատկանում Տիգրանակերտի, Մալաթիայի և Ռոդոստոյի բարբառները։ Հետևաբար Շապուհը խոսում էր այդ բարբառներից մեկն ու մեկով։ Այժմ պետք է որոշել, թե դրանցից որը կարող էր լինել։

4. Այս հարցին պատասխանում է հեղինակի մի ուրիշ սխալը. դա ռ-ի և ր-ի սխալն է. հեղինակը շատ հաճախ շփոթում է այդ երկու գիրը, ուրեմն և հնչյունները, և գրում սխալ։

Օրինակներ.

«... արք վաճարականք... (1)[1]։

«... զթագաւորութիւն Հորմոց (3), զմեծայմեծ բանճառ ... (3) որում կա խաչափայտն ձեռ...»(9)։

«... փայտ խաչին ձեռոյ (9). թագաւորին մեռոյ» (9)։

«...էառ զամենայն յերկիրն (20). առքայն յԵրուսաղէմայ (21). արդ լուր կաց» (21)։

«...յառուցեալ գնաց մաւտ առ տաղանն» (23) և այլն։

Օրինակները վկայում են, որ հեղինակը ր և ռ հնչյունների պարզ գաղափարը չունի։ Հավանական պիտի համարել, որ այդ երկու հնչյունների տարասանությունը Շապուհի բարբառում թուլացած և շփոթված էր։ Այդպես է Կիլիկիայի բարբառում Զեյթունի խոսվածքի մեջ, Խոտրջրի և Սեբաստիայի բարբառում, Հադրութի շրջանի Տումիի խոսվածքում և այժմ Լենինականի շրջանի Փանիկ գյուղում։ Նշանակում է՝ հեղինակը խոսել է մի այնպիսի խոսվածքով, որը պատկանում է Մալաթիայի բարբառին, բայց ենթարկված է Կիլիկիայի բարբառի ազդեցությանը։ Ո՞րը կարող էր լինել այդ խոսվածքը։

Ստեփանոս Սյունեցու վկայությամբ, մեր խոշոր բարբառներից մեկն է 4-րդ Հայքի բարբառը։

Աշխարհագրորեն Մալաթիան ընկնում է 4-րդ Հայքին համեմա-

---

[1] Փակագծերում նշվում են գրքի էջերը։

տարբեր ժամ շրջաններում, հետևաբար կարծեցյալ Շապուհ Բագրատունին խոսել է Չորրորդ Հայքի բարբառով։

Այս եզրակացությունը թելադրում է անելու հետևյալ նոր եզրակացությունները.

1. Մեզ հայտնի է, որ Չորրորդ Հայքում Բագրատունիներ չեն եղել, նրանց հողատիրությունը եղել է հյուսիսային նահանգներում, հետևաբար գրքի հեղինակը Բագրատունին չէ։

2. Մալաթայի բարբառի հնությունը հասնում է 9—10-րդ դարին, որովհետև անվիճելի է, որ կարծեցյալ Շապուհ Բագրատունին 9—10-րդ դարի հեղինակ է։

3. Այունեցու հիշատակած Չորրորդ Հայքի բարբառը ընդգրկում է Տիգրանակերտի, Մալաթիայի և Ռոդոստոյի (մասամբ Խարբերդի, Երզնկայի) բարբառները։ Նրա հիմնական հատկանշական գիծը ձայնեղների տեղաշարժն է դեպի հեռավոր աջ (առաջին աստիճանի տեղաշարժ) և խուլ հնչյունների տեղաշարժն է դեպի ձախ, որից ստացվում է երկաստիճան բաղաձայնական սիստեմ, շնչեղ խուլերով առատ։ Այդ դեպքում Մալաթիայի և մյուս բարբառների սիստեմի հնությունը կհասնի 7-րդ դարին։

4. Հայերեն բարբառախմբերի հիմնական սիստեմը գոյություն ուներ 7-րդ դարում նույն հարաբերությամբ, ինչպես որ այժմ է։

6. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հայերեն բարբառների դասակարգման հարցն առաջ եկավ 19-րդ դարի 60-ական թվականներին։ Բարբառների գոյությունը հայերենի մեջ գիտությանը ծանոթ էր շատ վաղուց, սակայն նրանց ուսումնասիրությամբ սկսեցին զբաղվել 1823 թվից[1]։ Գիտական լուրջ ուսումնասիրություն կարելի է համարել Գևորգ Ախվերդյանի աշխատությունը Թբիլիսիի բարբառի մասին, որն առաջաբանից հետո իբրև ներածական ամփոփվել է նրա կողմից Սայաթ-Նովայի երգերի առաջին հրատարակության մեջ «Թիֆլիզու բարբառի մէ քանի յատկութիւններու վրա» վերնագրով[1],

1866 թվին Արսեն Այտընյանը իր դարագլուխ կազմող «Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի» աշխատության նա-

[1] Շահան Ջրպետ Ներսեկիացու գրքում՝ Grammaire de la langue arménienne. Paris, 1823:

[2] Սայեաթ Նօվայ, լուս գցած աշխատասիրութէնով Գէորգեայ Ախվերդյան, Մոսկվա, ի տպարան Վլադիմիրայ Գոտիէ, 1852։

խաղավղի մեջ տալիս է հայ բարբառների առաջին դասակարգումը։ Նա այդ կատարում է հետևյալ ձևով.

«Ա. միջ գւռ. Հայաստան. (Վան, Միջագետք, են).

Բ. Կոստանդնուպոլիս—Փոքր Ասիա,

Գ. Արեւմտեան Լեհաստան—Առաեալ.

Դ. Արեւելյան. Ատրպատական—Պարսկաստան, որ կը ձգուի Ռուսաստանէն մինչեւ Հնդկաստան»[1]։

Այս դասակարգման հիմքում ընկած է աշխարհագրական սկզբունքը և նկատի չի առնված լեզվական բուն մատերիալը։ Այտընյանին ծանոթ են եղել Վանի, Մշո, Պոլսի, Լեհահայոց, Աստրախանի, Երևանի և Ջուղայի բարբառները, որոնց մասին նա հիշատակում է իր Նախաշավղի մեջ։

Բարբառների դասակարգումը հետագայում լեզվաբաններին ճշտելու փորձեր կատարեցին, և ընդհանուր ձևով գրականության մեջ ընդունվեց բարբառները դասակարգել ըստ երկու տիպի՝ արևելյան և արևմտյան կամ՝ ինչպես այն ժամանակ Հայաստանի քաղաքական բաժանումը թելադրում էր՝ տաճկահայ և ռուսահայ։ Բարբառների այդպիսի դասակարգման հիմքն այն էր, որ 19-րդ դարի կեսերից կազմավորվեցին և քաղաքացիական իրավունք ստացան գրական լեզվի երկու տիպեր, որոնցից մեկը կոչվեց արևելահայ կամ ռուսահայ գրական լեզու, իսկ մյուսը արևմտահայ կամ տաճկահայ գրական լեզու։

Այս դասակարգումը զգալի չափով ճիշտ էր, որքան որ Ռուսահայաստանում գտնվող հայերենի բարբառները մեծ մասամբ միմյանց նմանվող բարբառներ էին, ինչպես և Տաճկահայաստանում գտնվող հայերենի բարբառները ընդհանուր գծերով միմյանց նման էին։ Արևելահայ՝ գրական լեզվի հիմք ու հենարան դարձան արևելահայ բարբառները, իսկ արևմտահայ գրական լեզվի համար՝ արևմտահայ բարբառները։

Բարբառների այդ տիպի դասակարգումը, սակայն, ոչինչ չէր ասում բարբառների բուն լեզվական առանձնահատկությունների մասին. ամենաշատը այստեղ առկա էր մի ընդհանուր հասկացողություն բարբառների երկու մեծ խմբերի մասին, սակայն առանց կոնկրետացման, առանց լեզվական մատերիալի վրա ճշտելու, ուստի հայ բարբառագիտությունը սպասում էր դեռ իր գիտական դասակարգողին։

---

[1] Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի. յօրինեաց Արսէն վ. Այտընեան, Վիեննա, 1866, էջ 166։

Բարբառների դասակարգումը կարելի է կատարել զանազան եղանակներով։ Իբրև դասակարգման հիմք կարելի է վերցնել ձայնավորները, ինչպես այդ արված է ռուսերեն լեզվի մեջ (акающие и окающие говоры)։

Կարելի է իբրև դասակարգման հիմք ընտրել որևէ բնորոշ բառ, ինչպես այդ արված է ֆրանսերեն բարբառների նկատմամբ (oc և oïl—այո)։

Կարելի է հիմք ընդունել թեկուզ հենց որևէ բնորոշ հնչյունի՝ բաղաձայնի տարբերություն, օրինակ՝ «հ» և «խ» հնչյունները հայերեն լեզվի մեջ և այլն։ Վերջին տեսակի կլասիֆիկացիայի լավ օրինակ կարող են ծառայել հայերենի բարբառները, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբերի։ Առաջին խմբի արտասանության մեջ կա «հ», իսկ երկրորդ խմբի արտասանության մեջ այդ հնչյունի փոխարեն՝ «խ». օրինակ՝ հաց, հայ, հեր, հավ, հոգի, հոր, հարս և այլն, և ապա՝ խաց, խայ, խեր, խավ, խոքի, խոր, խարս և այլն։ Հայերեն բարբառներից «հ»-ի փոխարեն արտասանում են «խ» Վանի բարբառը և նրա շրջակայքում գտնվող բարբառներն ու խոսվածքները (Ուրմիայի, Խոյի, Մոկաց և Ջուղայի բարբառները, Մշո բարբառի արևելյան հատվածը)։ Մյուս բոլոր բարբառները արտասանում են «հ»։

Այս կլասիֆիկացիան ընդգրկելով միայն մեկ հատկանիշ և բարբառների մի փոքրիկ քանակություն, չի կարող բնորոշել խմբերը, ծանոթացնել բարբառներին, գիտակցել տալ այդ բարբառները, ուստի հարմար չէ դասակարգման համար։ Դասակարգումը կատարում ենք այն նպատակով, որ կարողանանք տիրապետել բարբառներին, ճանաչել այդ բարբառների հիմնական գծերը և դասակարգումով գիտակցել նրանց, հիշել նրանց փաստական լեզվական մատերիալի առանձնահատկությունների ընդհանուր գծերը։

Երբ դասակարգումն ընդգրկում է փոքրաթիվ հատկանիշ, ապա այդ նպատակը մնում է անիրագործելի, դասակարգումը դառնում է անօգտակար, մինչդեռ հայերենում հայտնի են շուրջ քառասուն բարբառներ. այդ թվով բարբառները ճանաչելու և ուսումնասիրելու դժվարությունները շատ և շատ են, դրանց դասակարգումը մի կողմից կփոքրացնի խմբերի քանակությունը և մատչելի կդարձնի նրանց ճանաչելը, տիրապետելը, մյուս կողմից կկապի միմյանց և հենարան կդառնա լուծելու ու բացատրելու ժողովրդական լեզվի պատմության կարևոր խնդիրները։

Հայերեն բարբառների դասակարգումը կարելի չէ կատարել

նաև ըստ ձայնավորների, որովհետև, թեև զանազան բարբառներ ներկայացնում են միևնույն ձայնավորների տարբեր տեսակներ, օրինակ՝ ա, ա̈, ա̊, օ բայց այդ փոփոխությունները որոշ օրինաչափությամբ չեն կատարվել։

Երբ առաջ եկավ բարբառների գիտական դասակարգման հարցը, ապա անհրաժեշտ էր գտնել բարբառների մեջ այնպիսի մի հատկանիշ, որն ընդգրկեր մեծ թվով բարբառներ, միաժամանակ լինելով խիստ բնորոշ և էական որպես լեզվական մատերիալ։ Այդ հատկանիշը գտնողը եղավ պրոֆ. Հր. Աճառյանը և կատարեց բարբառների առաջին գիտական դասակարգումը։

Իբրև բարբառների դասակարգման հիմք Հր. Աճառյանը ընտրեց ձևաբանական հատկանիշ, այն է բայերի ներկա ժամանակի կազմության եղանակը։ Ըստ այսմ իր ժամանակին հայտնի բարբառներից ելնելով՝ նա դասակարգեց այդ բարբառները երեք ճյուղի՝ «ում», «կը» և «էլ»։ Առաջին ճյուղի մեջ տեղավորվեցին այն բարբառները, որոնք ներկան կազմում էին անկատար դերբայով, որն ուներ «ում», «ըմ», «ամ», «իմ» վերջավորություն։ Այդ ճյուղի մեջ մտան Երևանի, Թբիլիսիի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի, Ագուլիսի և Ջուղայի բարբառները։ Երկրորդ ճյուղի մեջ դասավորվեցին այն բարբառները, որոնք իրենց ներկա ժամանակը կազմում էին հետևյալ մասնիկներով «կը», «գը», «գա», «գի», «գօ», «կու», «գու»։ Այս ճյուղին պատկանում են Վանի, Մշո, Կարնո, Խարբերդ-Երզնկայի, Տիգրանակերտի, Մալաթիայի, Սվիդիայի, Կիլիկիայի, Ակնա, Սեբաստիայի, Արաբկիրի, Շապին-Գարահիսարի, Եվդոկիայի, Նիկոմեդիայի, Զմյուռնիայի, Ռոդոստոյի, Պոլսի, Սուչավայի, Ղրիմի, Տրապիզոնի և Համշենի բարբառները։

Երրորդ ճյուղի մեջ դասավորվեցին Արթվինի, Մարաղայի և Խոյի բարբառները, որոնց ներկան կազմվում էր «էլ» կամ «իլ» կամ «ալ» վերջավորություն ունեցող դերբայով։ Բարբառների այդպիսի կլասիֆիկացիան զուգադիպում էր նաև բարբառների աշխարհագրական դասավորությանը (նկատի առնելով պատմական Հայաստանը), բացառելով գաղթականությունը։ Այն ժամանակ, երբ Հայաստանից չէր եղել որևէ գաղթականություն, «ում» ճյուղի բարբառները դասավորված էին Հայաստանի հյուսիսային նահանգներում (հետագայում Ռուսահայաստան կոչվածը), «կը» ճյուղի բարբառները դասավորված էին Հայաստանի միջին, հարավային և արևմտյան նահանգներում (հետագա-

յում Տաճկահայաստան կոչված) և «էլ» ճյուղի բարբառները դասավորված էին Հայաստանի արևելյան նահանգներում (հետագայում Պարսկահայաստան կոչված)։

Այս դասակարգումը գիտական է, որովհետև նա հենվում է բարբառների լեզվական մատերիալի վրա. վերցվում է մի այնպիսի հատկանիշ, որը կազմում է լեզվի էական մասերից մեկը, էական ձևերից մեկը, որն ընդգրկում է և բռնում է շատ մեծ տեղ լեզվագործածության մեջ։ Հայտնի է, որ բայը նախադասության կազմող գլխավոր անդամներից մեկն է դառնում, ուստի և նրա մի ձևը՝ ներկան, որը կազմում է երկու ժամանակ, կհանդիպի բոլոր նախադասությունների մեջ այն դեպքերում, երբ գործածվում են այդ ժամանակները, հետևաբար այդ հատկանիշով բարբառի ճանաչումը հեշտ է և դասակարգումը դյուրին։

Բարբառների դասակարգման ձևաբանական սիստեմը գիտական է նաև այն պատճառով, որ նա զուգադիպում է բարբառների աշխարհագրական դասավորությանը։ Հասկանալի է, որ միևնույն տերիտորիայի վրա կամ մոտ տերիտորիայի վրա դասավորված բարբառները միմյանց ավելի նման կլինեն, քան թե տերիտորիալ կերպով, տեղագրորեն միմյանցից հեռու գտնվող բարբառները։

Եվ վերջապես բարբառների դասակարգման այդ սիստեմը ճիշտ է, որովհետև նա պատմական է, և արդարացվում է պատմությամբ։ Տեղագրորեն միմյանց մոտ լինելով հայերենի բարբառների մեջ առաջ են եկել ընդհանրություններ, որոնցից մեկն է նաև ներկայի կազմության եղանակը։ Լինելով երբեմնի անկախ լեզվի վերապրուկ, բարբառներից յուրաքանչյուրը, պահպանելով առանձնահատկություններ, ստեղծում է նաև ընդհանրություններ իր հարևանների հետ, և դրա հետևանքով էլ առաջացել են և առաջանում են բարբառների տարբեր խմբեր ու ճյուղեր։ Ամեն մի բարբառ երբեմնի անկախ լեզու է, ինչպես բազմիցս ասել է սովետական հանճարեղ լեզվաբան ակադեմիկ Մառը, ելնելով Էնգելսի բարբառների ծագման նույնանման տեսությունից (տես «Բարբառների առաջացումը» գլուխը)։

Էնգելսյան դրույթի մեջ բացի այն, որ ամեն մի բարբառ դիտվում է իբրև մի երբեմնի ցեղական առանձին լեզու, նաև հաստատվում է այն ճշմարտությունը, որ բարբառները պատմա-

կանոբեն միմյանց մոտենում են, ստեղծում ընդհանուր գծեր, և որոշ դեպքերում ընտակչության միախառնվելու հետևանքով կարող է մշակվել նաև առանձին, հատուկ բարբառ։ Պատմականորեն առաջացող ընդհանրությունը ամենից առաջ ընդհանուր գծեր է ստեղծում հարևան բարբառների մեջ և վերածում նրանց մի մեծ խմբի. գիտական կլասիֆիկացիայի խնդիրն այն է, որ կարողանա գտնել նման բարբառների ընդհանուր հատկանիշը։ Ահա ինչու ձևաբանական կլասիֆիկացիան ճիշտ է ու պատմական, և հեղինակը գտել է այն հատկանիշը, որը առաջացել է պատմականորեն իբրև ընդհանրություն և այժմ ծառայում է այդ բարբառները ճանաչելու համար իբրև հատկանիշ։

Ձևաբանական այս կլասիֆիկացիան ճիշտ է նաև այն պատճառով, որ հետագայի հետազոտությունները հայտաբերեցին մի նոր ճյուղ ևս, «ս» ճյուղը։ Այսպիսով տեսությունը ստուգվեց պրակտիկայով, ավելին, այդ տեսության հիման վրա կատարվեց մի ամբողջ ճյուղի հայտնագործում։

Հայերենի բարբառների «ս» ճյուղի հայտնագործումով որոշ ճշտում է մտցված բարբառների ձևաբանական դասակարգման մեջ։ «Ում» և «կը» ճյուղերը մնում են անփոփոխ։ «էլ» ճյուղը վերանվանվում է «լ», որովհետև «էլ» ճյուղի բարբառների անկատար դերբայի վերջավորությունն է ոչ միայն «էլ», այլև «ալ», ու «իլ» (կըրել եմ—գրում եմ, կ՛իրիլ իմ—գրում եմ, կարդալ էմ—կարդում եմ)։ Հետևաբար, իբրև ընդհանուր հատկանիշ, հարմար չէ վերցնել «էլ» ամբողջ վերջավորությունը, այլ միայն «լ»-ն, ուստի և կստացվի «լ» ճյուղ։

«էլ» ճյուղից դուրս է ընկնում Արթվինի բարբառը, որի դերբայական վերջավորությունն է «էլիս» կամ «ալիս», իսկ բուն վերջավորությունն է «ս», ուստի և դասավորվում է «ս» ճյուղի մեջ։ Այդ վերափոխությունից հետո ստացվում է «ս» չորրորդ ճյուղը, որին պատկանում են հետևյալ բարբառները՝ Արթվինի, Ուրմիայի, Հադրութի, Շաղախի, Մեղրու և Կարճևանի բարբառները։

Բարբառների այս դասակարգումը ցույց տվեց նաև մի նոր հետաքրքրական երևույթ, որի մասին հիշատակվում է վերևում բերված Էնգելսի կարծիքի մեջ։ Ամբողջ այդ ճյուղերից դուրս է մնում Հավարիկի բարբառը, որովհետև այդ բարբառում նկատում ենք միաժամանակ և «ս» և «լ» և «ում» ճյուղերի հատկանիշները։ Այսպես, օրինակ, Հավարիկի բարբառը խոնար-

հումը կատարում է հետևյալ ձևով՝ «գիրելիս իմ, գիրելում ես, գիրելում է, գիրելում ենք, գիրելում էք, գիրելում են»։ Այս բարբառի առաջին դեմքում դերբայն ունի «ս», մյուս դեմքերում «ում», իսկ բոլոր դեմքերում առկա է «լ»-ն, ուստի ստացվել է միջճյուղային մի առանձին բարբառ, ինչպես Մայնյան Ֆրանկոնիայում, որ հիշատակել է Էնգելսը։ Այդ բարբառը առաջացած պետք է լինի «ում», «լ» և «ս» ճյուղերին պատկանող բնակչության փոխադարձ ներծծումից, միախառնվելուց, որի հետևանքով պատմականորեն մշակվել է այդ յուրահատուկ բարբառը։ Հավարիկի բարբառը մի զարմանալի վկայություն է Էնգելսյան հանճարեղ դրույթի ճշմարտության։

Այսպիսով հայերենի բարբառների ձևաբանական կլասիֆիկացիան մեզ տալիս է չորս ճյուղ՝ «ում», «կը», «լ» և «ս»։ Սրանով, սակայն, բարբառների կլասիֆիկացիան չի սպառվում, որովհետև նկատելի է, որ հարևան բարբառները շատ հաճախ միմյանց նմանվելով ձևաբանորեն մտնում են միևնույն ճյուղի մեջ, բայց միմյանցից տարբերվում են հնչյունական սիստեմով։ Այդ երևույթը նկատելի է հատկապես այնպիսի բարբառների մեջ, որոնք գտնվում են ճյուղերի աշխարհագրական դասավորության սահմանների վրա, ինչպես, օրինակ, Վանի և Ուրմիայի բարբառները, Կարնո և Արարատյան բարբառները, Մեղրու և Ագուլիսի բարբառները և այլն։ Ձևաբանորեն տարբեր լինելով, ուրեմն և տարբեր ճյուղերի պատկանելով, հիշյալ բարբառները միմյանց նման են հնչյունական կազմությամբ, հատկապես բաղաձայնական սիստեմով։ Հետևաբար ձևաբանական դասակարգումը չի սպառում այդ բարբառները ճանաչելու հնարավորությունները, միաժամանակ նաև չի բացատրում այն նմանությունները, որ կան այդ բարբառների հնչյունական սիստեմի մեջ։ Բացի այս, միևնույն ճյուղին պատկանող բարբառների հնչյունական սիստեմների մեջ զգալի տարբերություններ կան. այդ տարբերություններով հաճախ բարբառները կարելի է դասակարգել առանձին խմբերով, որով ավելի կճշտվի այդ բարբառների առանձնահատկությունները։ Օրինակ, տեսանք, որ Կարնո բարբառը և Ակնա բարբառը պատկանում են միևնույն «ում« ճյուղին. այդ դեռ չի տալիս այն գաղափարը, թե այդ բարբառներից յուրաքանչյուրն իրենից ինչ է ներկայացնում։ Պետք է ցույց տալ նաև նրանց մեջ եղած տարբերությունը, իսկ այդ տարբերությունը երևան է գալիս բնորոշ կերպով միայն հնչյունական կազմու-

թյան մեջ, ըստ որում Կարնո բարբառն ունի քառաստիճան բաղաձայնական սիստեմ, իսկ Ակնա բարբառը՝ եռաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ։ Այդ վերջին բնորոշումն է՛լ ավելի ճշտում է բարբառը ու որոշում նրա տեղը ընդհանուր դասակարգման մեջ։ Նույնը կարելի է ասել նաև Պոլսի և Վանի բարբառների, Կիլիկիայի և Տրապիզոնի բարբառների մասին և այլն։ Այդ ամենից պարզ է դառնում, որ բարբառների ձևաբանական դասակարգումը բավական չէ, անհրաժեշտ է նաև նրանց հնչյունական դասակարգումը։

Բարբառների հնչյունական դասակարգումը կարելի է կատարել զանազան եղանակներով։ Վերևում արդեն ասացինք, որ հնչյունական դասակարգման համար իբրև հիմք կարելի է վերցնել «հ» և «խ» հնչյունների փոխադարձ փոխարինումը, բայց այդ ընդգրկում է չափազանց քիչ բառեր ու լեզվական երևույթներ և ուրեմն բնորոշ լինել չի կարող։ Հարմար կլիներ ձայնավորները վերցնել իբրև հիմք բարբառների դասակարգման համար, սակայն հայերենի բարբառների մեջ ձայնավորների օրինաչափ փոփոխություններ չեն նկատվում, հետևաբար դասակարգում կատարելն էլ ձեռնտու չէ։ Կարելի է նույնպես հիմք ընտրել «փ» և «կ» հնչյունների փոխարինումները, այսինքն՝ «ֆ»-ի բացակայությունը որոշ բարբառներում և նրա փոխարինումը «փ»-ով, ինչպես օրինակ Ղարաբաղի, Թբիլիսիի, Ուրմիայի և Խոյի բարբառներում։ Բայց այդ նման կլիներ վերևի դեպքերին և չէր ընդգրկի բարբառների լեզվական առատ երևույթները։ Ամենից լավը և ամենից հաջողը կլինի բարբառների դասակարգումը ըստ բաղաձայնական սիստեմի համակարգի։

Հայերեն լեզվի մեջ, հատկապես գրաբարում, բաղաձայնների այդ համակարգն ունի հետևյալ պատկերը։

Ձայնեղ	Խուլ	Շնչեղ խուլ
բ	պ	փ
դ	տ	թ
ձ	ծ	ց
ջ	ճ	չ
գ	կ	ք

Բաղաձայնների այս համակարգն ընդգրկում է հնչյունական երևույթների մի զգալի մասը, միաժամանակ և օրինաչափ կերպով ներկայացնում է տարբերակներ զանազան բարբառներում։ Այդ համակարգի հորիզոնական շարքերը խեղման չեն ենթարկ-

վում, փոփոխվում են միայն ուղղահայաց շարքերը։ Այդ փոփոխությունը ընդհանուր լեզվաբանությունից վերցված և Էնգելսի կողմից ընդունված «տեղաշարժ» (передвижение) տերմինով ենք կոչում։

Բարբառների այդ ձևի դասակարգումը կատարելիս, գրաբարի սիստեմն ընդունում ենք իբրև անփոփոխ և կայուն սիստեմ, ուստի և «տեղաշարժերը» առնվելու են այդ սիստեմի համապատասխան։

Բարբառների բաղաձայնական համակարգի տեղաշարժերի բոլոր դեպքերի մասին մենք խոսելու ենք մի ուրիշ տեղ[1]։ Այստեղ դա ուզում ենք դարձնել հիմք բարբառների դասակարգման համար։

Նկատի ունենալով բոլոր փոփոխությունները բոլոր բարբառների մեջ, կարելի է ասել, որ մեր բաղաձայնական սիստեմը բոլոր բարբառներում փոփոխություն է կրում հիմնականում երկու տիպի տեղաշարժերի և մեկ տեղաշարժ-տեղափոխման միջոցով։

Առաջին տեղաշարժ կոչում ենք ձայնեղների խլացման և շնչեղ խլացման երևույթները։

բ ⊳ պ, բ ⊳ փ
դ ⊳ տ, դ ⊳ թ
ձ ⊳ ծ, ձ ⊳ ց
ջ ⊳ ճ, ջ ⊳ չ
գ ⊳ կ, գ ⊳ ք

Երկրորդ տեղաշարժ ենք կոչում դրա հակառակ երևույթը՝ ձայնեղացումը և շնչեղ ձայնեղացումը

պ ⊳ բ, բ ⊳ բ́
տ ⊳ դ, դ ⊳ դ́
ծ ⊳ ձ, ձ ⊳ ձ́
ճ ⊳ ջ, ջ ⊳ ջ́
կ ⊳ գ, գ ⊳ գ́

Տեղաշարժ-տեղափոխում ենք կոչում այդ երկու երևույթի միաժամանակյա առկայությունը միևնույն բարբառում, այսինքն ձայնեղների խլացում և խուլերի ձայնեղացում միաժամանակ

բ ⊳ պ, պ ⊳ բ
դ ⊳ տ, տ ⊳ դ

---

[1] Տես՝ «Հնչյունաբանություն» գլուխը։

ձ > ծ, ծ > ձ
ջ > ճ, ճ > ջ
գ > կ, կ > գ

Նկատի ունենալով այդ ամենը, բարբառները դասակարգում ենք հետևյալ կերպ.

I. Բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժ[1]։

Ըստ այդ տեղաշարժի ձայնեղ հնչյունները վերածվում են խուլ հնչյունների բոլոր այն բառերում, որոնք գործածված են գրաբարում կամ հին հայերեն բառերում։ Օրինակ.

բ > պ.	Բերան > պէրան
դ > տ	Դուռն > տուռ, տո̈ւռ, տօռնը
ձ > ծ	Ձու > ծո̈ւ
ջ > ճ	Ջուր > ճո̈ւր
գ > կ	Գինի > կ'ինի, կինի։

Այդ տեղաշարժը կրում են հետևյալ բարբառների բաղաձայնական սիստեմը.

Աստրախան, Շամախի, Ղարաբաղ, Հադրութ, Շաղախ, Մարաղա, Ուրմիա, Խոյ, Վան, Մուշ։

Այդ բոլոր բարբառների բաղաձայնական սիստեմը երկաստիճան ձայնեղազուրկ սիստեմ է։ Այդ տեղաշարժին չեն ենթարկվում բոլոր օտար բառերը, որոնք թյուրքական կամ նոր պարսկական, կամ նոր արաբական փոխառություններ են։ Նոր ասելով մենք նկատի ունենք 10-րդ դարից հետո կատարված փոխառությունները։ Օրինակ՝ բէգ, բէգ', բա̈գ', բախտ, դո̈ւգ'ո̈ւն, գ'ա̈մէշ, գ'ա̈դա̈ և այլն։

II. Բաղաձայնական համակարգի երկրորդ տեղաշարժ.

Ըստ երկրորդ տեղաշարժի խուլ հնչյունները ձայնեղանում են, իսկ ձայնեղները կարող են դառնալ շնչեղ խուլ բոլոր այն բառերում, որոնք հին հայերենում ևս կան։ Այդ տեղաշարժի հետևանքով ստացվում են բարբառների հետևյալ խմբերը.

1. Երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներ, այսինքն՝

պ > բ	պապ > բաբ	բերան > բէրան
տ > դ	տատ > դադ	դուռն > դուռ

[1] Հին հայերենի (գրաբարի) և բարբառների շնչեղ խուլ հնչյունների մեջ տարբերություն չկա, ուստի այդ շարքը չենք հիշատակում։ Բացառություն (որոշ խմաստով) կարող է կազմել միայն Մշո բարբառը։

ծ>ձ	ծուխ>ձուխ	ձու>ձու
ճ>ջ	ճակատ>ջագադ	ջուր>ջուր
կ>գ	կերակուր>գերագուր	գինի>գինի

Այդ խմբին են պատկանում «կը» ճյուղի հետևյալ բարբառները՝ Պոլսի, Եվդոկիայի (Ամասիա, Մարզվան, Սամսոն և այլն), Ղրիմի (Նոր-Նախիջևանի) և Տրապիզոնի։

2. Եռաստիճան խլացուցիկ բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներ, այսինքն՝

պ>բ, բ>բ՛	պապ>բաբ	բերան>բ՛էրան
տ>դ, դ>դ՛	տատ>դադ	դուռն>դ՛ուռ
ծ>ձ, ձ>ձ՛	ծուխ>ձուխ	ձու>ձ՛ու
ճ>ջ, ջ>ջ՛	ճակատ>ջագադ	ջուր>ջ՛ուր
կ>գ, գ>գ՛	կերակուր>գերագուր	գինի>գ՛ինի

Այս խմբին են պատկանում «կը» ճյուղի հետևյալ բարբառները՝ Համշենի, Սյուրիայի, Ակնա, Արաբկիրի, Հաճընի, (Կիլիկիայի ենթաբարբառ) Շապին-Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի, Սուչավայի և Սեբաստիայի։

3. Քառաստիճան բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներ, այսինքն՝

բերան>բ՛երան	Փարպի>Փարբի	պապ>պաբ
դուռն>դ՛ուռ	մանր>մանդըր	տատ>տադ
ձու>ձ՛ու	մեծ>մէնձ	ծուխ>ծուխ
ջուր>ջ՛ուր	ճանճ>ճանջ	ճակատ>ճագադ
գինի>գ՛ինի	աշակերտ>աշագերտ	կերակուր>կէրագուր

Այդ խմբին են պատկանում «կը» ճյուղից Կարնո և Մշո բարբառները, «ում» ճյուղից Երևանի և Նոր-Ջուղայի բարբառները։

III. Բաղաձայնական համակարգի տեղաշարժ ու տեղափոխություն։

Ըստ տեղաշարժ-տեղափոխության ձայնեղ հնչյունները վերածվում են խուլ կամ շնչեղ խուլ հնչյունների, իսկ խուլ հնչյունները ձայնեղանում են, այսինքն.

բ>պ	բ>փ	պ>բ	բերան>պէրան
դ>տ	դ>թ	տ>դ	դուռն>տուռ
ջ>ճ	ջ>չ	ճ>ջ	ջուր>ճուր
ձ>ծ	ձ>ց	ծ>ձ	ձու>ծու
գ>կ	գ>ք	կ>գ	գինի>կինի

բերան > փէրան	պապ > բաբ
դուռն > թուռ	տատ > դադ
ջուր > չուր	ճակատ > ջագադ
ձու > ցու	ծուխ > ձուխ
գինի > քինի	կերակուր > գէրագուր

Այդ տեղաշարժ տեղափոխության հետևանքով ստացվում են երկու խմբի բարբառներ.

1. Երկաստիճան խլազուրկ *բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներ. այսինքն.*

բ > փ	պ > բ	բերան > փէրան	պապ > բաբ
դ > թ	տ > դ	դուռն > թուռ	տատ > դադ
ձ > ց	ծ > ձ	ջուր > չուր	ճակատ > ջագադ
ջ > չ	ճ > ջ	ձու > ցու	ծուխ > ձուխ
գ > ք	կ > գ	գինի > քինի	կերակուր > գէրագուր

Այս խմբին են պատկանում «կը» ճյուղի հետևյալ բարբառները՝ Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոստոյի և Նիկոմեդիայի (Ատափազար, Պարտիզակ, Ասլանբեկ և այլն)։

Այս խմբից է վերցրել իր բաղաձայնական սիստեմը ուղղախոսության (արտասանության) մեջ արևմտահայ գրական լեզուն։

2. Միջին հայերենի սիստեմին համապատասխանող բաղաձայններ ունեցող բարբառներ, այսինքն՝

բ > պ	պ > բ	բերան > պերան	պապ > բաբ
դ > տ	տ > դ	դուռն > տուռ	տատ > դադ
ձ > ծ	ծ > ձ	ձու > ծու	ծուխ > ձուխ
ջ > ճ	ճ > ջ	ջուր > ճուր	ճակատ > ջագադ
գ > կ	կ > գ	գինի > կինի	կերակուր > գէրագուր

Այս սիստեմին պատկանում են Կիլիկիայի բարբառի Մարաշի ենթաբարբառը և Զեյթունի Շորվայան թաղի խոսվածքը։

IV. *Կա բարբառների մի չորրորդ խումբ, որի բաղաձայնական սիստեմը բառասկզբին փոփոխություն չի կրում։ Բարբառների չորրորդ խմբին են պատկանում Թբիլիսիի, Մեղրու, Կարճևանի, Ագուլիսի և Արթվինի բարբառները։ Այդ բարբառների բառասկզբի բաղաձայնական սիստեմը գրաբարին նման է, այսինքն*

բ > բ	պ > պ	բերան > բէրան	պապ > պապ
դ > դ	տ > տ	դուռն > դուռ	տատ > տատ
ձ > ձ	ծ > ծ	ձու > ձու	ծուխ > ծուխ
ջ > ջ	ճ > ճ	ջուր > ջուր	ճակատ > ճակատ
գ > գ	կ > կ	գինի > գինի	կերակուր > կէրակուր

Բարբառների բաղաձայնական այդ սիստեմին պատկանում է նաև ժամանակակից հայ գրական լեզուն։

Իբրև ընդհանուր դիտողություն պետք է ասել, որ բարբառների բաղաձայնական սիստեմի այս տարբերակները ցայտուն կերպով երևան են գալիս հիմնականում բառասկզբին և հատկապես բոլոր այն բառերի մեջ, որոնք գրաբարի մեջ գործածված են։ Հաճախ կարելի է պնդել, որ այդ երևույթները բացառություններ չունեն, հետևաբար հնում, գրաբարի ժամանակ գոյություն ունեցող բարբառային բաղաձայնական կուռ սիստեմների անհերքելի վկայություններն են։

Երկրորդ դիտողությունն այն է, որ ձայնեղները բառամիջում համարյա բոլոր բարբառներում (բացառություն է կազմում Ագուլիսի բարբառը և մասնակի բացառություն՝ Մեղրու և Կարճևան բարբառները) վերածվում են շնչեղ խուլերի, իսկ խուլերը ռնգայիններից հետո վերածվում են ձայնեղների, այսինքն՝

վարդ > վարթ	ընկեր > ընդեր
որբ > որփ	ճանճ > ճանջ
փորձ > փորց	
վերջ > վերչ	
կարդ > կարք	

Բարբառների այս դասակարգումը վկայում է, որ յուրաքանչյուրը դրանցից մի կուռ սիստեմ ներկայացնող առանձին, մեր կարծիքով, ցեղական լեզվի վերապրուկ է և որ այդ սիստեմը անփոփոխ մնաց գրաբարի կենդանի լեզու եղած ժամանակաշրջանում, այսինքն հայկական հին պետականության գոյության ժամանակաշրջանում և փոփոխության է ենթարկվել գրաբարի «մահից» հետո, այսինքն 11-րդ դարից սկսած։

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հայերեն բարբառներն ունեն այն բոլոր հնչյունները, որոնք գտնվում են գրական լեզվի մեջ։ Դրանցից դուրս հայերեն բարբառներն ունեն բավական քանակությամբ տարբեր հնչյուններ, որոնք նշանակում ենք նույն հայերեն տառերով, ավելացնելով այս կամ այն պայմանական նշանը։ Երկբարբառները նշանակում ենք կրկնակի կամ եռակի գրերով, այնպես որ նրանց հնչումը մոտավորապես համապատասխանի երկբարբառին։

Ըստ այսմ ընդունել ենք հետևյալ գրերն ու պայմանական նշանները.

ա̈—վերին բարձրության կամ փափուկ ա.
ա̣—ներքին բարձրության կամ կոշտ ա.
ե—յոտացիայի ենթարկված «է», մոտավորապես յէ հնչմամբ.
է—սովորական մաքուր է.
ը́—ներքին բարձրության կամ կոշտ «ը».
ո̈—կամ ö վերին բարձրության կամ փափուկ «օ».
ո̈ւ—վերին բարձրության կամ փափուկ «ու».
օ—հայերեն գրական լեզվի սովորական o ձայնավորը.
ո—թեթև շրթնայնացած «օ».
ըէ—երկբարբառային կոշտ «է».
ը́ի—կոշտ «ի», որ համապատասխան է ռուսերեն ы հնչյունին.
աւ—երկբարբառային հնչյուն իբրև ա և «ու» հնչյունների միացություն.
ուէ—երկբարբառային հնչյուն իբրև «ու» և «է» հնչյունների միացություն.
ո̈է— « « » իբրև փափուկ «օ» և «է» հնչյունների միացություն.
ուի— « « » իբրև «ու» և «ի» հնչյունների միացություն.
օւ— « « » իբրև «օ» և «ու» հնչյունների միացություն.
ո̆=եռաբարբառային հնչյուն, իբրև «ու», «է» և «օ» հնչյունների միացություն.
բ՛, դ՛, ձ՛, ջ՛, գ՛—իբրև շնչեղ ձայնեղ հնչյունների գրեր.
գ՛, կ՛, ք՛—իբրև քմային կամ փափուկ «գ» «կ» «ք» հնչյունների գրեր.
հ՛—իբրև «հ» և «յ» հնչյունների միացություն.
հ̆—իբրև ձայնեղ «հ» հնչյունի նշան.
ղ̊—իբրև պայթական «ղ».
լ̆—իբրև փափուկ «լ».
ր̣—իբրև շնչեղ «ր»

7. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ բարբառների հնչյունական կազմությունը ավելի հարուստ է, քան գրական լեզվինը և գրաբարինը։ Այդ հարստությունը, սակայն, չի տալիս մեզ այնպիսի նոր երևույթներ, որ մեծ հնչյունական տարբերություն ունենա գրաբարի և ժամանա-

կակից գրական լեզուների հնչյուններից, այսինքն բարբառների հնչյունական հարստությունը տեղի է ունենում ի հաշիվ գրաբարի և գրական լեզվի միևնույն հնչյունի տարբերակների. օրինակ՝ «ա» ձայնավորի դիմաց բարբառներում գտնում ենք քմային[1] և շրթնային «ա» ձայնավոր՝ գրականի սովորական «ա» ձայնավորի հետ միասին։ Բացառություն կարելի է համարել միայն Տիգրանակերտի բարբառի կոկորդային շփական բաղաձայն ղ՛ և Թբիլիսիի բարբառի «ո̊» հնչյունը. գուցե և մի այդպիսի երևույթ կարելի է հաշվել նաև Սեբաստիայի բարբառի «ո̆»-ն։

Հայերենի բարբառներում կան ձայնավորներ, բաղաձայններ և երկբարբառներ։ Հակառակ գրական լեզվին և գրաբարին, բարբառների ձայնավորները առատ են։ Կենտրոնական բարբառները (Արարատյան և Կարին) միայն ունեն գրական լեզվի չափ ձայնավորներ

ՁԱՅՆԱՎՈՐ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

Ա

«Ա» ձայնավորը գրաբարի մեջ, ինչպես և աշխարհաբար երկու գրական լեզվի մեջ, պատկանում է ետին շարքի միջին բարձրության, օրինակ՝ Արարատ, Արագած։

Բարբառներում հանդիպում ենք այդ ձայնավորի երկու տարբերակի՝ քմային (վերին բարձրության) և շրթնային (ներքին բարձրության)։ Քմային ձայնավոր «ա̈» ունեն հիմնականում մեր արևելյան բարբառները, համարյա բոլոր այն բարբառները որոնք ունեն ձայնեղների խլացում, այսինքն կրում են առաջին կարգի տեղաշարժը, օրինակ՝

Ղրբ. բրբ. կ՛ա̈մ, լա̈վ,
Շամախիի » պա̈ն, պա̈ցըռնըմ ամ, ք՛ինա̈ցա̈լ էս
Մարաղայի » խա̈րիր, հա̈րթո̈ւն, նա̈րա̈, նա̈րմէն։
Ուրմիայի » դա̈ն, տա̈շտ, ծա̈վա̈ր, վա̈ռել։
Հադրութի » ճա̈նջ, ճա̈շ, ճըրա̈ք՛։

Այդ նույն քմային ա ձայնավորը գտնում ենք նաև Մեղ-

---

[1] Թեև «քմային» տերմինը ձայնավորի նկատմամբ ճիշտ չէ, բայց տեխնիկական հարմարության համար այդպես ենք կոչում վերին բարձրության ձայնավորները։

րու, Կարճևանի, Ագուլիսի, Նիկոմեդիայի, Սեբաստիայի, Արաբկիրի, Կիլիկիայի, Համշենի, Շապին-Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի և Տիգրանակերտի բարբառներում։ Այդ ձայնավորով առանձնապես առատ են Տիգրանակերտի և Վանի բարբառները։

«Ա» ձայնավորի քմայնացումից համեմատաբար ազատ են Արարատյան, Կարնո, Արթվինի, Ջուղայի, Պոլսի, Սուչավայի, Նոր-Նախիջևանի, Ռոդոսթոյի, Եվդոկիայի, Ակնա, Սյուրիայի, Տրապիզոնի, Թբիլիսիի, Մշո և Աստրախանի բարբառները։

Շրթնային «ա» ձայնավոր ունեն Երևանի ենթաբարբառին պատկանող Բայազետի և Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքները, օրինակ՝ Արօ̈մ> Արամ, օ̈րէղ> արաղ, մօ̈րթ> մարդ և այլն։

Այս շրթնայնացած «ա» ձայնավորը անցման այն աստիճանն է, որից այն կողմը «ա» ձայնավորը վերածվում է պարզ «օ» ձայնավորի։ Այդ տեղի է ունենում ամենից առաջ ռնգային հնչյուններին նախորդող վիճակում. օրինակ՝

Ակնա բարբառ՝ ջօնջ> ճանճ, օրդեվ> անձրև
Համշենի » բօն> բան, թօն> թան, օմիս> ամիս.

Որոշ բարբառներում դա դառնում է համարյա օրենք օրինակ՝

Կիլիկիայի բարբառ՝ իճօն> իջան, դօն> տուն, էղօն> եղան, քօսօն> քսան.

Համշենի բարբառ՝ գաշթօմ> կարդամ, էղօնը> եղանը, օնցընինք> անցնենք, հօմար> համար։

Մի շարք բարբառներում «ա» ձայնավորի վերածվելը «օ» ձայնավորի այլևս չի ենթարկվում վերևում հիշատակված օրինաչափության և չափազանց հաճախ մեզ համար անակնկալ տեղերում հանդիպում ենք այդ երևույթին։ Օրինակ՝ Ագուլիս, հօց> հաց, մօրդ> մարդ, ճըրօգ> ճրագ։

Կիլիկիա. օսղ> աստղ, բարօբ> պարապ (Մարաշ), հազօր> հազար (Հաճըն), դօդ> տատ (Անտիոք)։

Թբիլիսի. կօսիմ,> կասեմ, կօնիմ> կանեմ։

Արթվին կօռնիմ > կառնեմ, կօսին > կասեն։

Հավանական է, որ «ա» ձայնավորը վերածվել է «օ» ձայնավորի այնպիսի տեղերում, որտեղ նա արտասանվել է շրթնայնացած։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ այդ բարբառներին նախորդող լեզուները, այսինքն այն տոհմական լեզուները, որոնք վերածվել են հայերենի բարբառների, ունեցել են շրթնայնացած «ա» ձայնավոր արտասանելու հատկություն, վերածվելով հայերենի՝ ուժեղացրել են շրթնային էլեմենտը ու այդ բոլոր տեղե-

րու, Կարճևանի, Ագուլիսի, Նիկոմեդիայի, Սեբաստիայի, Արաբկիրի, Կիլիկիայի, Համշենի, Շապին-Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի և Տիգրանակերտի բարբառներում։ Այդ ձայնավորով առանձնապես առատ են Տիգրանակերտի և Վանի բարբառները։

«Ա» ձայնավորի քմայնացումից համեմատաբար ազատ են Արարատյան, Կարնո, Արթվինի, Ջուղայի, Պոլսի, Սուչավայի, Նոր-Նախիջևանի, Ռոդոսթոյի, Եվդոկիայի, Ակնա, Սյունիայի, Տրապիզոնի, Թբիլիսիի, Մշո և Աստրախանի բարբառները։

Շրթնային «ա» ձայնավոր ունեն Երևանի ենթաբարբառին պատկանող Բայազետի և Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքները, օրինակ՝ Արա̊մ> Արամ, ա̊րէղ> արաղ, մա̊րթ> մարդ և այլն։

Այս շրթնայնացած «ա» ձայնավորը անցման այն աստիճանն է, որից այն կողմը «ա» ձայնավորը վերածվում է պարզ «օ» ձայնավորի։ Այդ տեղի է ունենում ամենից առաջ ռնգային հնչյուններին նախորդող վիճակում. օրինակ՝

Ակնա բարբառ՝ ջօնջ> ճանճ, օրդեվ> անձրև
Համշենի » բօն> բան, թօն> թան, օմիս> ամիս.

Որոշ բարբառներում դա դառնում է համարյա օրենք օրինակ՝

Կիլիկիայի բարբառ՝ իճօն> իջան, դօն> տուն, էղօն> եղան, քօսօն> քսան.
Համշենի բարբառ՝ գաշթօմ> կարդամ, էղօնը> եղանը, օնցընինք> անցնենք, հօմար> համար։

Մի շարք բարբառներում «ա» ձայնավորի վերածվելը «օ» ձայնավորի այլևս չի ենթարկվում վերևում հիշատակված օրինաչափության և չափազանց հաճախ մեզ համար անակնկալ տեղերում հանդիպում ենք այդ երևույթին։ Օրինակ՝ Ագուլիս, հօց> հաց, մօրդ> մարդ, ճըրօգ> ճրագ։

Կիլիկիա. օսղ> աստղ, բարօբ> պարապ (Մարաշ), հազօր> հազար (Հաճըն), դօդ> տատ (Անտիոք)։
Թբիլիսի. կօսիմ,> կասեմ, կօնիմ> կանեմ։
Արթվին կօռնիմ > կառնեմ, կօսին > կասեն։

Հավանական է, որ «ա» ձայնավորը վերածվել է «օ» ձայնավորի այնպիսի տեղերում, որտեղ նա արտասանվել է շրթնայնացած։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ այդ բարբառներին նախորդող լեզուները, այսինքն այն տոհմական լեզուները, որոնք վերածվել են հայերենի բարբառների, ունեցել են շրթնայնացած «ա» ձայնավոր արտասանելու հատկություն, վերածվելով հայերենի՝ ուժեղացրել են շրթնային էլեմենտը ու այդ բոլոր տեղե-

րում, որանց «ա»-ն արտասանվում է շրթնայնացած, ուղղակի արտասանում են պարզ «օ» ձայնավոր։

«Ա» ձայնավորը որոշ բառերի մեջ տարբեր բարբառներում տարբեր փոփոխություն է կրում, այսինքն վերածվում է «է»,, «ա̈», «օ̈», «այ», «ի» հնչյուններին.

օրինակ՝

պէն>բան (Ղրբ.), բա̈րա̈կ>բարակ (Ագլս.), պա̈րա̈կ (Ուրմիա), բօ̈րձ>բարձ (Ագլս.), այսա̈ղ>ասեղ (Ագլս.), իվիլ>ավել (Ղրբ.)։

Այդ փոփոխություններից հետաքրքրական է «ա» ձայնավորի «է»-ի վերածվելու ճանապարհը։ Մենք արդեն ասացինք, որ որոշ բարբառներ «ա» ձայնավորը արտասանում են քմային ա̈, այսինքն արտասանության ժամանակ լեզվի ետին մասը բարձրանում է դեպի քիմքը։ Այդ բարձրացման հետ միասին մի փոքրիկ տեղաշարժ լինելիս դեպի առաջ՝ արդեն քմային «ա» ձայնավորը վերածվում է առաջին շարքի միջին բարձրության ձայնավորի, որից և ստացվում է մաքուր «է» ձայնավորի արտասանությունը։ Օրինակ՝ բան բառը Ուրմիայի բարբառում արտասանվում է «պա̈ն», իսկ Ղարաբաղի բարբառում՝ «պէն», այսինքն՝ բան—պա̈ն—պէն։

«Ա» ձայնավորը գրաբարի մեջ հնչյունափոխության չի ենթարկվում, համարվում է ուժեղ, կայուն ձայնավոր։ Հազվե չենք առնում մի երկու դեպք, ինչպես օրինակ, աստուած—աստուծոյ բառը։

Աշխարհաբար գրական հայերենում «ա» ձայնավորը նույնպես դիմացկուն ձայնավորներից է և փոքրիկ բացառությամբ անփոփոխ է մնում ամեն դեպքում։ Բայց միջին հայերենում արդեն նկատում ենք «ա» ձայնավորի անկումը որոշ բառերում և կամ նրա վերափոխվելը «ը» ձայնավորի, օրինակ՝ առաջեաւ > առջև, աղաչեմ> աղչեմ։

Եթե աշխարհաբար գրական լեզվի մեջ «ա» ձայնավորի անկում կամ փոփոխություն կա, ապա այդ կատարվել է ոչ ընդհանուր օրենքով, այսինքն շեշտի տեղափոխության հետևանքով, այնպես, ինչպես մյուս ձայնավորները՝ ի, ու։ Այդ փոփոխությունը կատարվել է գրաբարից աշխարհաբար անցնելու միջոցին, այսինքն՝ աշխարհաբար գրական լեզուն «ա» ձայնավորի փոփոխություն է կատարում այնպիսի բառերի մեջ, որոնք գրաբարից են վերցված և գրաբարում այդպիսի փոփոխություն չունեն. օրինակ՝

առաջեաւ> առջև, ագանիմ> հագնեմ, իջանեմ> իջնեմ, ելանեմ> ելնեմ և այլն։

Իր սեփական ձայնավոր «ա»-ն աշխարհաբար գրական լեզուն հնչյունափոխության չի ենթարկում, օրինակ՝ ազատ, ազատի, մարդ, մարդի, մարդով և այլն։

Բարբառներում «ա» ձայնավորը ենթարկվում է հնչյունափոխության շատ հաճախ և այնպիսի դեպքերում, երբ շեշտը ընկած է «ա» ձայնավորից հետո։ Այդպիսի դեպքում կամ «ա» ձայնավորը վերածվում է «ը» ձայնավորի և կամ ուղղակի դուրս է ընկնում։ Օրինակ՝ Ղրբ. ըվըտնըրան> ավետարան, ըխճըկան> աղջիկան, տըվմըրավ> տավարով, ճըղըցնէ՛ն> ջաղացները։

Ուրմիա. մարաք—մարքի—մարքեն, վարժըպըրեծ> վարժապետ։

Է

Գրաբար լեզվի մեջ, մեր կարծիքով, չի եղել մաքուր «է» ձայնավոր, այլ յոտացիայի ենթարկված կամ քմայնացած «է», որի արտասանությունը մոտ է երկբարբառայինին, համարյա այնպիսի «է», որպիսին ունի ռուսաց լեզուն շեշտի տակ (е) օրինակ՝ нет, свет, совет և նման բառերի մեջ։ Այդպիսի Է-ն բարբառագրության մեջ, ինչպես և գրաբարում գրվում է «ե» տառով։

Այդպիսի «ե» ունեն մեր բարբառներից մի քանիսը միայն, հատկապես Վանի, Ուրմիայի, Խոյի բարբառները, Մշո բարբառի արևելյան հատվածը, Արարատյան բարբառի Նոր Բայազետի ենթաբարբառը. օրինակ՝

Վանի բարբառ. մե (մին), քե, խալեմ (խալիեմ)...
Ուրմիայի « տես (տիես), տանեմ (տանիէմ), պեռթ (պիեռթ)...
Խոյի « պըրծե (պըրծիե), տըրե (տըրիե)...
Ն. Բայազետի բարբ. մեր (միեր), ձեր (ձիեր)...

Գրական լեզուն ունի պարզ «է» ձայնավոր, որը փոխարինում է գրաբարյան «ե» ձայնավորին և «է» երկբարբառին. վերջինս գրաբարում արտասանվում էր «էյ»։ Գրաբարի է-ն գրական լեզվի մեջ ճանաչվում է նրանով, որ կրում է հնչյունափոխություն. օրինակ պարտէզ—պարտիզի, կէս—կիսատ, սէր—սիրո և այլն։ Այդ բոլոր բառերը գրաբարում ունեցել են է, այսինքն է ձայնավորի կողքին նաև կիսաձայն «ի»=յ։ Շեշտի տակ ձայնավոր է-ն գերակշռություն է ունեցել, մինչդեռ շեշտը հաջորդ վանկին անցնելիս յ կիսաձայնը է ձայնավորից վերցնում է ձայնավորա-

կան հատկանիշը և վերածվում է «ի» ձայնավորի։ Այդ տեղի է ունենում հենց արտասանական հարմարության պատճառով, որովհետև այս երկու հնչյունները էլ վերին բարձրության հնչյուններ են, և լեզվի փոքրիկ տեղաշարժը միաձուլում է դրանց. «է» ձայնավորը կորցնում է իր տեղը, երբ լեզվի միջին մասը մի քիչ առաջ է շարժվում, իսկ «յ» կիսաձայնը արտասանվում է ավելի մեծ բացվածքով և կորցնում է իր բաղաձայնական տարրը, որից և ստացվում է ի ձայնավոր, իսկ ընդհանուր հետևանքը լինում է հնչյունափոխությունը (կեյս-կեյիսատ-կիսատ)։

Երկրորդ «է»-ն գրական լեզվի մեջ ստացվում է գրաբարյան քմային «ե»-ից, որտեղ քմայնացումը կորչում է և ստացվում է մաքուր «է», օրինակ՝ մեր, ձեր, բերել և այլն։

Բարբառներում «է» ձայնավորը ևս ունի տարբերակներ և փոփոխականներ։

Նկատելի է, որ գրաբարյան երկհնչյունի դիմաց բարբառներում միշտ «է» հնչյունն է, իսկ գրաբարյան «է»-ի դիմաց մի շարք բարբառներում, որոնց մասին հիշեցինք վերևը, գտնում ենք երկբարբառային «ե»։ Օրինակ՝ գրբ. մէջ, Վան՝ մէչ, գրբ. տեղ Վան՝ տեղ։

Այդ «ե»-ի դիմաց բարբառներում կան նաև միջին բարձրության «է» և «ե», որ նույնպես երկբարբառային արտասանություն ունեն, օրինակ՝ Մշո բարբառում՝ տըեղ > *տեղ, Ղարաբաղի բարբառում։* մըեր > *մեր,* ծըեր > *ձեր։*

«Ե» ձայնավորը գրաբարում հնչյունափոխության երբեք չէր ենթարկվում։ Հնչյունափոխության չի ենթարկվում նաև գրական լեզուների մեջ, սակայն բարբառներում, հատկապես արևելյան բարբառներում թե հնչյունափոխության է ենթարկվում և թե ուղղակի վերածվում է այլ ձայնավորի (է, ա̈, ա, ի, օ̈ և յէ, վերջինս բառասկզբին)։

ե > է

Պոլիս՝ ես > էս, Նիկոմեդիա՝ երեք > էրեկ։

ե > ա կամ ա̈

Ագուլիս, Ղրբ. Մեղրի, Կրն. արազ > երազ, արկաթ > երկաթ.

Ագուլ. *ա̈րկու > երկու,* բա̈րա̈ն > բերան. Հադրութ՝ ա̈րա̈զ > երազ։

ե > օ̈

Ագուլիս՝ *օ̈րգո̈ւմ > երգում։*

Գրաբարի «ե» բառասկզբին յէ գտնելը հանրահայտ է. օր. Երևան յէս > ես, յէզ > եզն և այլն։

է> ի

Երևան՝ իրեք> էրեք, Ուրմիա, Զեյթուն. իրեք'> երեք, էյլիս> էրես, *տիղ> տեղ(Թբիլ.)*, յիգ> եգն*(Համշեն)*, կուզիմ > կուզեմ *(Տրապիզոն)*,

Ը

«Ը» ձայնավորը հայերեն լեզվի սպեցիֆիկ ձայնավորն է։ Այդ ձայնավորն է հայերեն լեզուն դարձնում բարեհնչուն։ Երբ հանդիպում են բաղաձայնների կուտակումներ, ապա «ը» ձայնավորը մեջտ գրվում է դրանց արանքում և հնարավոր դարձնում բաղաձայնների փոխարեն վանկեր արտասանել, օրինակ՝ Մկրտիչ, *որտեղ չորս բաղաձայն կա, սակայն դրանց ներսում գրվում է երկու «ը» ձայնավոր, որով գրաֆիկայի մեջ մեկ վանկ ունեցող բառը արտասանության մեջ դառնում է եռավանկ՝* Մըկըրտիչ. մըղկըրտալ *(գրվում է՝* մղկտալ*) և այլն։*

Բառասկզբի երկու բաղաձայնի արտասանությունը հայերենում անհնարին է. անպայման կամ դրանց միջև պետք է լինի մի «ը» ձայնավոր կամ դրանցից առաջ։ Դրա հետևանքով է որ ակ, ապ *և նման կապակցությունները արտասանության մեջ սկզբից ունենում են մի «ը» ձայնավոր։ Եթե նույնիսկ մի օտար բառ, ունենալով բառասկզբին երկու բաղաձայն, մտնում է հայերեն լեզվի մեջ, հայերեն լեզուն ավելացնում է դրանց միջև կամ դրանց վրա մի ձայնավոր, հաճախ «ը» ձայնավորը։ Օրինակ՝* бригада> *բըրիգադ (գրվում է բրիգադ),* проспект> *պըրոսպեկտ (գրվում է՝ պրոսպեկտ)։*

«Ը» ձայնավորի առկայությունը երկու բաղաձայնի միջև այնքան է սովորական, որ հայերեն գրական լեզուն ավանդական կերպով որոշում ունի չգրելու այդ ձայնավորը։ Մի ուրիշ լեզվի մեջ նման երևույթ նկատված չէ։

Հայերեն լեզուն այնքան է սիրում «ը» ձայնավորը, որ ուրիշ հնչյուններ ենթարկելով հնչյունափոխության՝ վերածում է «ը» ձայնավորի։ Օրինակ՝ ջուր—ջըրի, գիր—գըրի *և այլն։*

Բարբառներն էլ ավելի շատ են սիրում «ը» ձայնավորը։ Կարելի է ասել, որ այդ «ը» ձայնավորի առատությունը մեր ժողովրդական լեզուների ընդհանուր հատկությունն է։ Բարբառները հնչյունափոխության հետևանքով «ը» ձայնավորի են վերածում համարյա բոլոր մյուս ձայնավորները։ Օրինակ՝ ի> ը *գիր> գըրի. ու> ը, ջուր> ջըրի (Երևան). ա> ը ադուլեցի> ըդ'ըլըցի, հավաքված> հըվաքված (Ագլս.). ե> ը, տեսա> տըսամ (Ուրմ.),*

հնտանում եմ> հըռընտաս ըմ (Հադրութ). ռ>ը, ողողում եմ> ըղըղէյ յըմ (Կարճ.) և այլն։

«Ը» ձայնավորի մի երկու տարբերակ կա բարբառներում։ «Ը» ձայնավորը արտասանվում է ավելի ցածր դիրքով «ը̀»։ Օրինակ՝ մը̀ս> միս, սը̀րտ> սիրտ (Շամախի), գը̀նագ> կնիկ (Զեյթուն), տըվը̀մ> տվեցի (Ուրմիա)։

«Ը» ձայնավորը արտասանվում է երբեմն միջին շարքի վերին բարձրության ը̈, ռուսական «Ы»։

Օրինակ կը̈նը̈կ> կնիկ (Ուրմիա), խը̈մը̈ր> խմոր, անձը̈վը̈ր> անձրև (Մարաղա)։

«Ը» ձայնավորը որոշ բարբառներում բառասկզբին դժվարությամբ է արտասանվում. օրինակ՝ Վանի բարբառում և Ուրմիայի բարբառում ռնգայինից առաջ արտասանվում է «ի», օրինակ՝ Վան, Ուրմիա՝ ինգ՛եր> ընկեր, Ուրմիա՝ ինգ՛ոզ> ընկույզ, ինել> ընկնել։

Որոշ դեպքերում ներդաշնակության օրենքով կարող է վերածվել ուրիշ ձայնավորի՝ օրինակ, Ուրմիա՝ ո̈նթո̈նէլ> ընդունել, խտիպէլ> ստիպել։

Թիֆլիսի բարբառում «ըն» կապակցության փոխարեն լինում է նըն, այսինքն «ը» ձայնավորը սկզբից մի բաղաձայն է ստանում արտասանվելու համար, օրինակ, նընգնիլ — ընկնել, նընգիր — ընկեր։

Մի շարք բարբառներում ստանում է բառասկզբին «հ» բաղաձայնը, օրինակ, հընգեր — ընկեր, հըմեն — ըմեն (ամեն)։

Սովորաբար հայերեն լեզվի մեջ բառասկզբին «ը» ձայնավորով սկսվում են ընդ և ըստ նախդիրները և բոլոր այն բառերը, որոնք բարդված են ընդ բառով։ Բացառություն են կազմում ըղձալ, ըղձական, ըմպել և նման բառեր, որտեղ «ը» ձայնավորը հնչյունափոխված «ի» կամ «ու» ձայնավորն է։ «Ը» ձայնավորով սկսվում են խիստ քիչ թվով բառեր։

Այդու հանդերձ բանավոր խոսքի մեջ «ը» ձայնավորը դրվում է երկու բաղաձայն ունեցող բառի սկզբում, օրինակ՝ ըստանալ, ըսպասել, ըսկսել և այլն։

Վանի բարբառում ըն կապակցությունը դուրս է ընկնում ընկույզ բառի մեջ (գ՛ոզ — ընկույզ), ապա և՝ ձիկ (ընձիկ) բառում։

«Ը» ձայնավորով հարուստ է առանձնապես Շամախու բարբառը։ Հայտնի է, որ «ը» ձայնավորը հայերեն լեզվի մեջ անշեշտ ձայնավոր է, այսինքն՝ երբեք շեշտն այս ձայնավորով

կաղմված վանկի վրա չի լինում, մինչդեռ Շամախու բարբառում շատ հաճախ այս ձայնավորը շեշտվում է: Գիտենք, որ ուրիշ ձայնավորներ վերածվում են «ը» ձայնավորի անշեշտ դիրքում, իսկ Շամախու բարբառում՝ շեշտի տակ, որի հետևանքով «ը» ձայնավորը շեշտվում է։ Օրինակ՝ մըտկ-միտք, սըրտ-սիրտ և այլն

Նույն երևույթն ավելի թեթև կերպով նկատվում է Ուրմիա-յի և Տիգրան. բարբառներում. օրինակ՝ մըռ—ցեց, սըռ—գաղտնիք։

Ի

«Ի» ձայնավորը զանազան տարբերակներ կարող է ունենալ։ Լեզվաբանությանը հայտնի են կարճ ի, երկար ի և այլն։ Գրաբարի և աշխարհաբարի ի-ն սովորական միջին երկարության ձայնավոր է։ Այդ ձայնավորը առաջին շարքի վերին բարձրության ձայնավոր է։ Լինելով խիստ թույլ ձայնավոր, ենթարկվում է հնչյունափոխության թե գրաբարում և թե աշխարհաբարում կամ էլ դուրս է ընկնում, ինչպես օրինակ, ամիս ամսական, պատիվ>պատվական, և կամ վերածվում ը ձայնավորի, ինչպես օրինակ՝ ջիղ>ջղեր, գիրք>գրքեր և այլն։

Կարելի է ասել, որ այդ ձայնավորը հայերենի բոլոր ձայնավորներից ավելի շատ և շուտ հնչյունափոխության ենթարկվող ձայնավորն է, մինչդեռ շատ լեզուներում, օրինակ, ռուսերեն, ֆրանսերեն, լատիներեն և այլն, հնչյունափոխության չի ենթարկվում։

Այդ ձայնավորը բարբառներում ունի երեք տարբերակ։

1. Միջին շարքի վերին բարձրության ի, ռուսերենի ы-ի նման։ Օրինակ՝ Ուրմիա- խըռծըկ—խրձիկ (տիկնիկ), կըթըկ-կնիկ։

2. Երկբարբառային երկար ի, որ մոտենում է էյ երկբարբառի արտասանության։ Օրինակ՝ խնամէյ—խնամի, խէյզար—խիզար, վէյզ>վիզ (Ողմեցոց ենթաբարբառ)։

Ի ձայնավորը երկբարբառային արտասանություն ունի Ղարաբաղի բարբառում։ Օրինակ՝ մըէս-միս, կըռըէվ-կռիվ։

Բարբառներում «ի» ձայնավորի դիմաց՝ մենք գտնում ենք «է» ձայնավոր Ղարաբաղի բարբառում. օրինակ՝ քէթ > քիթ տարէ > տարի, կ՚ծըէ > գարի։

Մեր կարծիքով այս փոփոխությունը տեղի է ունեցել այն պատճառով, որ Ղարաբաղի բարբառի նախորդը, Սյունյաց տոհմական լեզուն, ունեցել է երկար «ի» ձայնավոր արտասանելու հատկություն և հայերեն բարբառ դառնալու պրոցեսում այդ երկար

«ի» ձայնավոր արտասանելիս վերածել է նրանց պարզ «է» ձայնավորի, որի հետևանքով ստացվել է այս փոփոխությունը։

Ի ձայնավորը ուրիշ բարբառներում ունի հետևյալ փոփոխությունները.

ըէ. ամըէս > ամիս (Ղրբղ).

ը̈. սը̈րտ > սիրտ (Շամախի).

էյ. լէյզիլ > լիզել (Ագուլիս), մարթէյկ > մարդիկ (Ոզմի).

ույ. մույն > մին (Ագուլ.)

ու. ունչ > ինչ (Ագուլ.)

այ. մայս > միս (Ագուլ.)

ա̈. սա̈րու̈ն > սիրուն (Ագուլ.)

ա. սարտ > սիրտ (Ագուլ.)

ե. կըշեռք > կշիռ (Վան), քըշեռք > կշիռ (Ուրմիա)։

Ո

Այդ ձայնավորը, մեր կարծիքով, գրաբարում եղել է երկբարբառային արտասանությամբ ո͡ը ձևով, ինչպես այդ լսվում է ռուսերեն что բառի մեջ, կամ շեշտված վանկում։ Այդպիսի արտասանություն ունի Զեյթունի (Կիլիկայի) բարբառը. օրինակ՝ ախո͡ըրտ > աղքատ։

Վանի բարբառն այդ արտասանությունը է՛լ ավելի երկբարբառացնում է և վերածում ուէ արտասանության։ Նույնն է նաև Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառներում։ Օրինակ՝

Վան—խոտ (խուէտ), խող (խուէղ).
Ուրմիա—խոտ (խուէտ), խող (խուէղ).
Մարաղա—խոտ (խուէտ), խող (խուէղ)։

Այսպես է նաև Աշտարակի, Օշականի և Լոռու խոսվածքներում. օրինակ՝

Աշտարակ, Օշական՝ փող (փուէղ).
Լոռի՝ փող (փուէղ).

Այդ նույն արտասանությունը գտնում ենք Նոր-Բայազետի ենթաբարբառի մեջ. օրինակ՝

Ն. Բայազետ՝ դ՛որ (դուէր)։

Ո ձայնավորի արտասանությունը բառամիջում իբրև ó գտնում ենք բարբառների մեծ մասում՝ Պոլիս, Նոր-Նախիջևան, Ռոդոսթո, Կարին, Մուշ, Համշեն և այլն։

Բառասկզբին գրական լեզվի մեջ գրաբարյան այս ռ ձայնավորը արտասանվում է «վօ», որ ամենալավ ապացույցն է, թե այդ ձայնավորը երկբարբառային արտասանության շրթնային

ձայնավոր է եղել, որի մեջ երկբարբառային էլեմենտը ուժեղանալով վերածվել է շրթնաատամնային «վ» բաղաձայնի: Այդ երևույթը նկատվում է Երևանի և մի շարք այլ բարբառներում, մինչդեռ Ղարաբաղի բարբառում վերածվել է վըէ հնչյունախմբի: Օրինակ՝ Երևան. վօտ > ոտն, Ջուղա. վօր > որ, Ն. Նախիջևան. վօրն է > որն է և այլն:

Ուրմիայի և Եվդոկիայի բարբառներում ո-ն ընդունել է բառասկզբին «վուէ» (վուե) կերպարանքը և արտասանվում է երեք հնչյունով միասին, օրինակ՝ Ուրմիա. վուէտ > ոտն, վուէրփ > որբ. Եվդոկիա. սուէխ > սոխ, հուէդ > հոտ:

Նույնը և Վանի բարբառում, Բայազեդի ենթաբարբառում և այլն. օրինակ՝

Վան. վուեր > որ, վուեռպօ՛վէրի > որբևայրի.

Ն. Բայազեդ. վուեսկի > ոսկի:

Մի շարք բարբառներում այդ ձայնավորը, բառասկզբին զրկվելով իր երկբարբառային էլեմենտից, արտասանվում է պարզ օ. օրինակ Կարին. օր, օսկրռնէր *> որ, ոսկրներ, Մուշ.* օր, օտք *>* որ, ոտք: *Տիգրանակերտ՝* օսկի *>* ոսկի: *Խարբերդ՝* օդք *>* ոտք, *Տրապիզոն՝ օսգօռ > ոսկր. Համշեն՝ օդք > ոտք:*

Այդ հնչյունի դիմաց մենք մի շարք բարբառներում գտնում ենք տարբեր հնչյուններ: Թբիլիսիի և Ագուլիսի բարբառներում ո-ն վերածվում է «ու» ձայնավորի միավանկ բառերում և շեշտի տակ. օրինակ՝ փուր > փոր, փուղ > փող (Թբիլիսի), փուր > փոր, հուտ > հոտ (Ագուլիս):

Բառասկզբին այդ նույն ձայնավորը արտասանվում է վու. օրինակ՝ վուտ > ոտն, վուրթի > որդի:

Բառամիջում «ու» է արտասանվում նաև Ղարաբաղի բարբառում. օրինակ՝ տուրուն > տորոն, կուտեմն > կոտեմն, յէխտուտ > աղտոտ և այլն:

Ո ձայնավորի համապատասխան շատ տարբեր հնչյուններ մենք գտնում ենք զանազան բարբառներում. օրինակ՝
ո > ըէ. վըէտ > հոտ, վըէղ > հող, վըէր > հոր (Դրբդ).
ո > վըէ. վըէնը > ոտն, վըէսկըէռ > ոսկոր (Դրբդ).
ո > ո̈ւ գ՚ո̈ւղ > գող, գ՚ո̈ւգ՚ > գոգ, խընձո̈ւր > խնձոր (Ագլս).
ո > է ջէրի > ջորի, հէգի > հոգի, էխչա̈ր > ոչխար (Ագլս).
ո > ա̈ գ՚ա̈վիլ > գովել, կ՚ա̈տիմ > կոտեմն (Ագլս).
ո > ա. փահիլ > փոխել, մախիր > մոխիր, ասկի > ոսկի (Ագլս).
գ՚ավմէշ > գոմէշ (Սեբաստիա).

ո ▷ ö̆ (ուէօ) գö̆րդ ▷ գորտ, փö̆րթ ▷ հորթ (Սեբաստիա)։

Այս ո ձայնավորը թե գրաբարի և թե գրական լեզվի մեջ հնչյունափոխության չի ենթարկվում, սակայն միջին հայերենում այդպիսի փոփոխությունների ենթակա է. օրինակ՝ ժողովեմ ▷ ժողվեմ, բոլորել ▷ բոլրիմ։ Ժամանակակից գրական լեզվի մեջ ո ընկել է սորտ, դորտ և նման ձևերում։ Բարբառներում որոշ դեպքերում նույնպես հնչյունափոխվում է։

Այս ձայնավորի քմային արտասանությունը գտնում ենք Ղարաբաղի, Վանի, Ուրմիայի Համշենի և Շամախու բարբառներում. օրինակ՝

ծöր ▷ ձոր, կ'öղ ▷ գող (Ղրբ)
կ'öռտ ▷ գորտ, կ'öռծ ▷ գործ (Վան).
ցöրöն ▷ ցորեն, պöլöր ▷ բոլոր (Ուրմիա).
հüլöր ▷ ոլոր (Շամախի), չöյս ▷ չորս (Համշ).

Իբրև üէ արտասանվում է Ուրմիայի և Մարաղայի բարբառներում. օրինակ՝

լüէր ▷ լոր, ծüէր ▷ ձոր (Ուրմիա).
կ'üէրծ ▷ գործ, խüէտ ▷ խոտ (Մարաղա).

Երկբարբառներ

Գրաբարը հարուստ է եղել իր երկբարբառներով։ Այդ երևում է հենց գրաբարյան գրությունը պարզ վերլուծման ենթարկելու միջոցով։ Գրաբարի ձայնավորները միանալով կիսաձայնների հետ՝ արտահայտում են երկբարբառ հնչյունը։ Այս կիսաձայներն են ւ և յ-ն։ Եթե մենք կազմենք մի պարզ աղյուսակ գրաբարի երկբարբառների գրության, ապա մենք կնկատենք հետևյալը։

ա+ւ=աւ   ա+յ=այ
ի+ւ=իւ
ե+ւ=եւ   ե+յ=եյ=է
ո+ւ=ու   ո+յ=ոյ

Երկբարբառ են կազմում նաև ե և ա ձայնավորները.

ե+ա=եա, ե+ա+յ=եայ

Այս երկբարբառներից ու-ն Ողմեցոց ենթաբարբառում պահպանվել է իր երկբարբառային արտասանությամբ. օրինակ։

ձ'օ͡ու=ձու, ջ'օ͡ուր=ջուր։

Ու-ն գրական լեզվի մեջ, ինչպես բարբառների մեծ մասի մեջ, փակ վանկում արտասանվում է ու, իսկ ձայնավորից առաջ

վ․ օրինակ՝ առու, առվի, առվակ, կատու, կատվի և այլն։

Ու ձայնավորը քմային արտասանություն ունի շատ բարբառներում, հատկապես արևելյան բարբառներում։ Օրինակ՝ ճո̈ւր, ծո̈ւ (Ղարաբաղ, Ուրմիա, Վան)։ Այդ նույն արտասանությունը կարելի է գտնել ուրիշ շատ բարբառներում։

Ու ձայնավորի դիմաց գտնում ենք «օ» արտասանություն Ղարաբաղի, Հադրութի, Մեղրու, Կարճևանի, Կիլիկիայի բարբառներում․ Օրինակ՝ տօն (տուն—Ղրբղ), օրախ (ուրախ—Հադրութ), պըտօղ (պտուղ—Մեղրի)․ կըտօց (կտուց—Կարճևան), տօն (տուն—Կիլիկիա)։

Ու ձայնավորը գրական լեզվի մեջ ենթարկվում է հնչյունափոխության, հաճախ դուրս է ընկնում կամ վերածվում ը ձայնավորի, սովորաբար բոլոր վանկերում, բացի վերջին վանկից։ Օրինակ, ջուր—ջրի, անասուն—անասնական և այլն։

Բարբառների մեջ ու ձայնավորի հնչյունափոխությունը շատ ավելի առատ է և հաճախակի նույնիսկ վերջին վանկում, որտեղ նա շեշտայալ չէ՝ օրինակ՝ դմշտըմը—դաշտում, փո̈րըմը—փորում և այլն։

Ու ձայնավորը արտասանվում է նաև ö․ օրինակ՝ öրփöթ (ուրաթ—Հադրութ)։

Աւ երկբարբառը գրական լեզվի մեջ փակ վանկում վերածվել է «օ» ձայնավորի, իսկ բաց վանկում երկհնչյուններից։ Օրինակ՝ աւր>օր, խաւսել>խօսել, լաւ>լավ և այլն։

«Աւ» երկբարբառային արտասանությունը գտնում ենք Սյուրիայի և Սուչավայի բարբառների մեջ․ օրինակ՝ անա͡ուն > անուն (Սյուրիա), ցաու > ցավ (Սուչ.)

Բարբառներում մեծ մասամբ նույն երևույթն ենք նկատում, ինչ որ գրական լեզվի մեջ, այսինքն փակ վանկում արտասանվում է օ, իսկ բաց վանկում «ավ»․ օրինակ՝ լöվ (Ղրբղ․) մըտավ (Երևան), էգավ (Պոլիս), օր > աւր (բոլոր բարբառներում) և այլն։

Ոյ

Ոյ երկբարբառը գրական լեզվի մեջ վերածված է «ույ» երկհնչյունի, օրինակ՝ քոյր—քույր, յոյս—հույս և այլն։ Բարբառների մեջ «ոյ» երկբարբառի դիմաց գտնում ենք մեծ մասամբ «ի» կամ «ու» կամ «ո̈ւ» օրինակ՝ լիս (Երև․), լուս (Թբիլիսի), քիր, (Երևան), քուր (Թբիլիսի), քո̈ւր (Ուրմիա) և այլն։

Որոշ բարբառներում «ոյ» երկբարբառի դիմաց գտնում ենք ուրիշ նոր երկբարբառներ՝ ուէ, ö

վ. օրինակ՝ տռու, տռվի, տռվակ, կատու, կատվի և այլն։

Ու ձայնավորը քմային արտասանություն ունի շատ բարբառներում, հատկապես արևելյան բարբառներում։ Օրինակ՝ ճո̈ւր, ծո̈ւ (Ղարաբաղ, Ուրմիա, Վան)։ Այդ նույն արտասանությունը կարելի է գտնել ուրիշ շատ բարբառներում։

Ու ձայնավորի դիմաց գտնում ենք «օ» արտասանություն Ղարաբաղի, Հադրութի, Մեղրու, Կարճևանի, Կիլիկիայի բարբառներում. Օրինակ՝ տօն (տուն—Ղրբղ), օրախ (ուրախ—Հադրութ), պըտօղ (պտուղ—Մեղրի)· կըտօց (կտուց—Կարճևան), տօն (տուն—Կիլիկիա)։

Ու ձայնավորը գրական լեզվի մեջ ենթարկվում է հնչյունափոխության, հաճախ դուրս է ընկնում կամ վերածվում ը ձայնավորի, սովորաբար բոլոր վանկերում, բացի վերջին վանկից։ Օրինակ, ջուր—ջրի, անասուն—անասնական և այլն։

Բարբառների մեջ ու ձայնավորի հնչյունափոխությունը շատ ավելի առատ է և հաճախակի նույնիսկ վերջին վանկում, որտեղ նա շեշտյալ չէ՝ օրինակ՝ դա̈շտըմը—դաշտում, փո̈րըմը—փորում և այլն։

Ու ձայնավորը արտասանվում է նաև օ̈. օրինակ՝ օ̈րփա̈թ (ուրաթ—Հադրութ)։

Աւ երկբարբառը գրական լեզվի մեջ փակ վանկում վերածվել է «օ» ձայնավորի, իսկ բաց վանկում երկհնչյունների։ Օրինակ՝ աւր > օր, խաւսել > խօսել, լաւ > լավ և այլն։

«Աւ» երկբարբառային արտասանությունը գտնում ենք Սյուրիայի և Սուչավայի բարբառների մեջ. օրինակ՝ անաւուն > անուն (Սյուրիա), ցաւ > ցավ (Սուչ.)

Բարբառներում մեծ մասամբ նույն երևույթն ենք նկատում, ինչ որ գրական լեզվի մեջ, այսինքն փակ վանկում արտասանվում է օ, իսկ բաց վանկում «ավ». օրինակ՝ լա̈վ (Ղրբղ.) մըտավ (Երևան), էգավ (Պոլիս), օր > աւր (բոլոր բարբառներում) և այլն։

Ոյ

Ոյ երկբարբառը գրական լեզվի մեջ վերածված է «ույ» երկհնչյունի, օրինակ՝ քոյր—քույր, յոյս—հույս և այլն։ Բարբառների մեջ «ոյ» երկբարբառի դիմաց գտնում ենք մեծ մասամբ «ի» կամ «ու» կամ «ո̈ւ» օրինակ՝ լիս (Երև.), լուս (Թբիլիսի), քʻիր, (Երևան), քուր (Թբիլիսի), քʻո̈ւր (Ուրմիա) և այլն։

Որոշ բարբառներում «ոյ» երկբարբառի դիմաց գտնում ենք ուրիշ նոր երկբարբառներ՝ ուէ, ո̈է

Օրինակ՝ պուէն > բոյն, լöէս > լոյս (Ուրմիայի բարբառ)։

Իւ

Գրական լեզվի մեջ փակ վանկում արտասանվում է «յու», իսկ բաց վանկում «իվ». օրինակ՝ իւրաքանչիւր*—յուրաքանչյուր* պատիւ*—պատիվ և այլն։*

«Իւ» երկբարբառի հարազատ արտասանությունը գտնում ենք Սուչավայի բարբառում. օրինակ՝

բաղիու > պատիվ։

Երևանի, Ղարաբաղի և մի շարք այլ բարբառներում «իւ» երկբարբառը արտասանվում է «ի». օրինակ՝ հարիր > հարիւր (Երևան), թըղօթին > թուղութիւն (Ագուլիս), խöյիր > հարիւր (Ուրմիա)։

Թբիլիսիի բարբառում, ինչպես և բարբառների մեծ մասում այդ երկբարբառի դիմաց գտնում ենք հաճախ «ու»։ Օրինակ՝ հարիւր > հարուր (Թբիլիսի Աստրախան, Պոլիս և այլն)։ Ղարաբաղի և մի շարք այլ բարբառներում լինում է ո̈ւ. օրինակ՝ ձիւն > ծո̈ւն (Ղարաբ., Ուրմիա, Մարաղա), ա̈րո̈ւն < արիւն (Ագուլիս), ա̈խպո̈ւր < աղբիւր (Վան) և այլն։

Ձայնավորների այսքան մեծ տարբերությունները մեր բարբառների մեջ հանդիսանում են այն պատճառը, որի հետևանքով բարբառները միմյանց չեն հասկանում. և իրոք, եթե ձայնեղների փոխարեն գործածվի խուլ բաղաձայն, բայց բառի ուրիշ հնչյունները, հիմնական ձայնավորները, անփոփոխ լինեն, բառը չի դառնա անհասկանալի և բարբառներում փոխադարձաբար կհասկացվի. օրինակ՝ դուռ—տուռ, բերան—պերան, կատու—գադու և այլն։ Բայց ո՞վ կարող է ենթադրել, թե «ծա̈րո̈ւն» բառը (Ագուլիս) նշանակում է ծիրան *և կամ բօն > բան (Կիլիկիա) կըո̈ւլ > գայլ (Ղրբղ) և այլն։*

Ձայնավորների փոփոխության հետևանքով բարբառի անհասկանալի դառնալու պատճառն այն է, որ ձայնավորները քիչ լինելով, շատ բառերի մեջ և հաճախ են գործածվում և դրա հետևանքով անհասկանալի դարձնում խոսքը լսողի համար։

Բաղաձայններ

Բաղաձայնների փոփոխության մասին մենք խոսել ենք բարբառների կլասիֆիկացիայի հարցի կապակցությամբ։ Բարբառների բաղաձայնների փոփոխությունը շատ հասկանալի է, երբ նկատի ունենանք, որ այդ փոփոխությունը սիստեմային փո-

փոխություն է։ Այդ փոփոխությունն այնպիսի օրինաչափություններ ունի, որ հաճախ կարելի է գուշակել բոլոր նման երևույթները, եթե գիտես մեկ երևույթը։ Բարբառների պայթական բաղաձայնների սիստեմային տարբերությունը նկատվել է շատ հին ժամանակներից սկսած։

Անանուն Մեկնիչի քերականության մեջ կա մի ուշագրավ վկայություն.

«Այլ էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խաւսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ» (ընդգծումը մերն է—Ղ)։

Այդ վկայությունը պարզապես ասում է այն մասին, թե ժողովրդական լեզուն ունի տարբեր վարիանտներ՝ «տեսակ խաւսից», այսինքն բարբառներ, որոնք տարբեր սիստեմ են ներկայացնում, գոնե իրենց բաղաձայնական հնչյունական կազմության մեջ։ Գաղափար չունենալով հնչյունաբանության մասին, Անանունը, այնուամենայնիվ, հնարավորություն է գտել արտահայտելու այդ սիստեմների տարբերությունը, և, որպեսզի օրինակով պարզ դարձնի իր ասածը, նա ընտրել է «բազուկ» բառը, այսինքն սկզբին շրթնային ձայնեղ ունեցող մի բառ, և տվել է այդ ձայնեղի տեղաշարժը դեպի աջ՝ բ, պ, փ։

Այդ վկայությունը խիստ ուշագրավ է այն պատճառով, որ բարբառների ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ երևույթի լիակատար առկայությունը հայերենի մեջ նաև ներկայումս, որ վերևում մենք կոչել ենք «տեղաշարժ» տերմինով (տես գլուխ «Հայերեն բարբառների դասակարգումը»)։

«Տեղաշարժ» տերմինը մենք վերցնում ենք իբրև պայմանական տերմին, քանի որ, իրոք, չի եղել մեկ միաձույլ հայերեն լեզու, որի հնչյունական սիստեմն այս կամ այն կերպ տեղաշարժվեր, այլ, ընդհակառակն, եղել են նախահայերեն տարբեր լեզուներ յուրաքանչյուրն իր հնչյունական սիստեմով, որ եղել է կայուն և պահպանվել է այդ լեզուների մեջ այն ժամանակ, երբ նրանցից յուրաքանչյուրը իբրև հայերենի բարբառ պահպանվել է ու պահպանվում է մինչև այսօր մեր ժողովրդի յուրաքանչյուր տարբեր հատվածի բերանում։ Յուրաքանչյուր նոր ձև, նոր լեզվական երևույթ «հայական», այսինքն՝ ընդհանուր հայկական բնույթ ընդունելով յուրաքանչյուր բարբառում ենթարկվել է այն հնչյունական սիստեմին, որն ունեցել է այդ բարբառը և որը ժառանգել է այդ բարբառը իր նախորդ անկախ վիճակից։ Այդ հասկանալի դարձնելու համար պետք է հի-

չենք այն պարզ երևույթը, որը նկատելի է ադրբեջանական լեզվի մեջ, երբ նա, ընդունելով պ, կ, տ *խուլ հնչյուն ունեցող օտար բառեր, վեր է ածում իր արտասանության՝* փ, թ, ք. *օրինակ* փարթիա—պարտիա, քոմունիստ—կոմունիստ, թելեգրաֆ—տելեգրաֆ: *Նույնպես և ռուսերենը և կամ մի այլ լեզու, երբ ընդունում է իր մեջ մի բառ, որն ունի իրեն անհարազատ որևէ հնչյուն, այդ հնչյունը վերափոխում է այնպիսի մի հնչյունի, որն իր լեզվի մեջ կա և ի մոտո համապատասխան է օտար հնչյունին (օրինակ՝ փափախ*—папаха*)*:

Այս եղանակով հայերենի յուրաքանչյուր բարբառ պահպանել է իր հնչյունական սիստեմը և, երբ համեմատում ենք բոլոր բարբառները գրաբարի հնչյունական սիստեմի հետ, արտաքին կողմից՝ դրսից առաջին հայացքից թվում է, թե գրաբարի բառերն են վերափոխված, հարմարեցված տեղական բարբառային արտասանության, մինչդեռ հաճախ հավանական է հակառակը, այսինքն թե գրաբարը, ունենալով իր հատուկ հնչյունական սիստեմը, ժողովրդական լեզվից վերցրել է բառերը և հարմարեցրել իր արտասանությանը:

Տարբեր լեզուների հնչունական սիստեմները տարբեր են միմյանցից. զուգադիպությունը հազվագյուտ է: Զուգադիպությունը վկայում է, որ լեզուները հարևան են եղել, երկարատև փոխազդեցություն են ունեցել և փոխադարձաբար միասնություն ձեռք բերել, ինչպես, օրինակ, հին հայերենը և հին վրացերենը: Որպեսզի պարզ լինի մեր ասածը, վերցնենք հայերեն, ռուսերեն և ադրբեջանական լեզուների բաղաձայնական սիստեմը և համեմատենք միմյանց հետ.

ՀԱՅԵՐԵՆ	*ՌՈՒՍԵՐԵՆ*	*ԱԶԵՐԲ.*
բ պ փ	б п —	b—ph
դ տ թ	д т —	d—th
ձ ծ ց	— — ц	— ——
ջ ճ չ	— — ч	ջ — չ
գ կ ք	г к —	ġ —kh

*Համեմատությունը ցույց է տալիս, որ հայերենի բաղաձայնական սիստեմը համեմատաբար լրիվ է, բոլոր հնչյունները ներկայացված են երեք աստիճանով ըստ արտասանության որակի՝ ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ: Ռուսերենի մեջ բացակայում են շրթնային առաջնալեզվային հնչյունների շնչեղ խուլերը (*փ, թ, ք*), բայց շնչեղ խուլի սկզբունքը ռուսերենին օտար չէ, որովհետև*

այդ շարքը ներկայացված է «ց» և «չ» շնչեղ խուլ աֆրիկատներով. Նշանակում է՝ հնչյունական զարգացման պրոցեսում ռուսերենը կորցրել է այդ շարքը։ Որովհետև աֆրիկատներից երկու շարք ռուսերենը չունի, բայց նույն ց և չ հնչյուններով ներկայացնում է աֆրիկատների ֆոնեմատիկ առկայությունը ռուսաց լեզվի մեջ, հետևաբար կարելի է ենթադրել, որ ռուսերենի նախորդ էտապներում և կամ ռուսերենին նախորդող լեզուներում աֆրիկատներ եղել են, եթե ընդունում ենք լեզվաստեղծման պրոցեսի միասնական սկզբունքը։

Ադրբեջանական լեզվի մեջ ընդհակառակն է։ Չկա խուլերի շարքը՝ պ, տ, կ, կան շնչեղ խուլերը. Նշանակում է՝ ադրբեջանական լեզվի նախորդ էտապից դուրս են ընկել խուլերը, որից հետո ստացվել է այդ հնչյունական սիստեմը։ Աֆրիկատներից ադրբեջաներենն ունի ջ-Ճ և չ-ն, որ նույնպես վկայվում է, թե այդ լեզվի նախորդ էտապում եղել են աֆրիկատներն իրենց լրիվ կազմով։ Այս խորհրդածությունները առաջ են գալիս այդ մի սոսկ պարզ համեմատությունից, բայց այն դեպքում, երբ ընդունում ենք Մառի հռչակավոր տեսությունը լեզվաստեղծման պրոցեսի համաշխարհային միասնականության մասին։ Այդ համեմատությունները, սակայն, ասում են մի ուրիշ բան ևս, որ այդ լեզուները՝ հայերենը, ադրբեջանականը և ռուսերենը, հեռավոր անցյալում փոխադարձաբար քիչ են կապված եղել, դրանց հնչյունական սիստեմի մեջ ընդհանուր միասնականություն չի նկատվում։

Բայց երբ վերցնում ենք հայերենի բարբառները և համեմատում գրաբարի հետ, հատկապես հնչյունական սիստեմի տեսակետից, նկատում ենք զարմանալի օրինաչափություն։ Եթե ձայնեղ հնչյունների որևէ դեպք խլացման է ենթարկված, ապա ձայնեղների ամբողջ սիստեմն է խլացման ենթարկվել և ընդհակառակն։ Օրինակ գրաբարն ունի բաղաձայնական եռաստիճան սիստեմ, իսկ Վանի բարբառը երկաստիճան սիստեմ [1]։

ԳՐԱԲԱՐ			ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ	
բ	պ	փ	պ	փ
դ	տ	թ	տ	թ
ձ	ծ	ց	ծ	ց
ջ	ճ	չ	ճ	չ
գ	կ	ք	կ	ք

[1] Խոսքը վերաբերվում է «գրաբարյան» բառերին։

Լեզվական համեմատությունը ցույց է տալիս, որ եթե «բ» հնչյունով սկսվող բառերը Վանի բարբառում արտահայտվում են «պ»-ով, օրինակ Գրբ. «բերան» Վն. բրբ. «պերան», ապա առանց սխալվելու կարելի է ասել, որ «դ» հնչյունով սկսվողները կլինեն «տ»-ով, օրինակ Գրբ. «դուռն», Վն. բրբ. «տո̈ւռ», «ձ» հնչյունով սկսվողները կլինեն «ծ»-ով, օրինակ Գրբ. «ձու», Վն. բրբ. «ծո̈ւ», «ջ» հնչյունով սկսվողները՝ «ճ»-ով, օրինակ. Գրբ. ջուր, Վն. բրբ. ճո̈ւր, «գ» հնչյունով սկսվողները «կ»-ով կամ «կյ»-ով, օրինակ Գրբ. «գարուն», Վն. բրբ. «կյա̈րո̈ւն» և այլն:

Այդ նույն ձևով կարելի է համեմատել մյուս բոլոր բարբառները: Բավական է իմանալ մեկ ձայնեղի փոփոխությունը, որպեսզի կարելի լինի առանց սխալվելու ասել մյուս ձայնեղների հետ կատարվող փոփոխությունը և կամ, ընդհակառակը, մեկ խուլի փոփոխությունը հիմք է տալիս գիտենալու մյուս բոլոր խուլերի փոփոխությունը: Այսչափ տրամաբանական ու օրինաչափական է բարբառների և գրաբարի արտասանական-հնչյունական սիստեմների փոխհարաբերությունը: Այս է այն միասնականը, որը ճայակաց, ընդհանուր հայկական է: Այդ սիստեմավորությունն է, որ Վանի բարբառը պահպանում է հայերեն լեզվի սահմաններում ի տարբերություն ոչ հայերեն լեզուների: Վերևում տեսանք, որ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուները նման տիպի համեմատությունների ենթակա լինել չեն կարող, ուրեմն և տարբեր լեզուներ են, մինչդեռ հայերենի բարբառների վերևում ցուցադրված սիստեմավորությունը այդ բարբառները պահպանում են հայերեն լեզվի սահմաններում: Այդ է պատճառը, որ մենք որոշում ենք բաղաձայնների «տեղաշարժ» տերմինն ընդունել իբրև պայմանական տերմին:

Գրաբար լեզուն ունի բաղաձայնական սիստեմի երեք տիպ՝ եռաշարք, երկշարք և միաշարք:

բ	պ	փ	զ	ս	վ	—
դ	տ	թ	ժ	շ	մ	
ձ	ծ	ց	ղ	խ	լ	
ջ	ճ	չ			ն	
գ	կ	ք			ռ	
					ր	
					—	հ

Երկշարք և միաշարք սիստեմի մեջ նկատելի տարբերություններ հայերենում չկան և դրանք չեն բնորոշում բարբառի

հնչյունական սիստեմը, մինչդեռ եռաշարք սիստեմը այնքան տարբերություններ է ներկայացնում բարբառներում և կամ օտար լեզուներում, որ միայն այդ շարքով բնորոշ է լինում լեզվի բաղաձայնական սիստեմը։ Ուստի, երբ խոսքը տեղաշարժի մասին է, այդ վերաբերում է միայն եռաշարք բաղաձայնական սիստեմին։

Գրաբարի համեմատությամբ մեր բարբառներն ունեն.

1. Երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սիստեմ.

ԳՐԱԲ.			ԲԱՐԲ.	
բ	պ	փ	պ	փ
դ	տ	թ	տ	թ
ձ	ծ	ց	ծ	ց
ջ	ճ	չ	ճ	չ
գ	կ	ք	կ	ք

Այդ բարբառների շարքին են պատկանում Աստրախանի, Շամախու, Ղարաբաղի, Հադրութի, Շաղախի, Մարաղայի, Խոյի, Ուրմիայի, Վանի և Մոկաց բարբառները։ Օրինակ Աստրախ. ճուր, Վան, Մարաղա, Ուրմիա, Խոյ, Ղրբ., Հադրութ, Շաղախ՝ ճöւր։

2. Երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ՝ խուլ շնչեղներով հարուստ.

ԳՐԱԲ.			ԲԱՐԲ.	
բ	պ	փ	բ	փ
դ	տ	թ	դ	թ
ձ	ծ	ց	ձ	ց
ջ	ճ	չ	ջ	չ
գ	կ	ք	գ	ք

Այդ շարքին են պատկանում Տիգրանակերտի, Մալաթիայի Ռոդոսթոյի և Նիկոմեդիայի բարբառները և արևմտահայ գրական լեզուն։ Օրինակ. Գրբ. ջուր, Տիգրան. չուր, Մալաթ. չուր, Ռոդ. չուր, արևմտահայ. գր. լեզ. չուր։

3. Եռաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ։

ԳՐԱԲ.			ԲԱՐԲ.		
բ	պ	փ	բ́	բ	փ
դ	տ	թ	դ́	դ	թ
ձ	ծ	ց	ձ́	ձ	ց
ջ	ճ	չ	ջ́	ջ	չ
գ	կ	ք	գ́	գ	ք

Այդ խմբին են պատկանում Ակնա, Շապին-Գարահիսարի,

Համշենի, Սուչավայի և Սյուրիայի բարբառները. օրինակ Գրաբ. ջուր, Ակն՝ ջ՛ուր, Սբստ. ջ՛ուր. Գրաբ. տուն, Ակն. դուն, Սչվ. դուն, Սբստ. դուն։

3. Երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ՝ ձայնեղներով հարուստ.

ԳՐԱԲ. ←			ԲԱՐԲ.	
բ	պ	փ	բ	փ
դ	տ	թ	դ	թ
ձ	ծ	ց	ձ	ց
ջ	ճ	չ	ջ	չ
գ	կ	ք	գ	ք

Այս խմբին են պատկանում Պոլսի, Տրապիզոնի, Ղրիմի, Եվդոկիայի բարբառները, օրինակ՝ Գրաբ. տուն, Պոլիս. դուն, Տրապ. դուն, Ղրմ. դուն։ Գրաբ. դուռն, Պոլ. դուռ, Տրապ. դուռ, Ղրմ. դուռ։

4. Քառաստիճան բաղաձայնական սիստեմ.

ԳՐԱԲ. ←←←			ԲԱՐԲ.			
բ	պ	փ ↓	բ́	բ	պ	փ
գ	կ	ք	դ́	դ	տ	թ
դ	տ	թ	ձ́	ձ	ծ	ց
ջ	ճ	չ	ջ́	ջ	ճ	չ
ձ	ծ	ց	գ́	գ	կ	ք

Այս խմբերին են պատկանում Երևանի, Կարնո, Մշո և Ջուղայի բարբառները, օրինակ. Գրաբ. դուռն, Երևան դ՛ուռ, Կրն. դ՛ուռ, Ջուղ. դ՛ուռ։

Այս շարքի մեջ աջից դեպի ձախ տեղաշարժ է կատարում բոլոր շարքերով Մշո բարբառը միայն, այսինքն այդ բարբառում շնչեղ խուլերն էլ երբեմն վերածվում են խուլերի։ Այս բարբառին հատուկ եղակի երևույթ է այդ։ Այս բարբառի մեջ տեղաշարժն ըստ սիստեմի լիակատար է։

5. Միջին հայերենի բա́ղաձայնական սիստեմ.

ԳՐԱԲ. ⇄			ԲԱՐԲԱՌՆԵՐ		
բ	պ	փ	բ	պ	փ
դ	տ	թ	դ	տ	թ
ձ	ծ	ց	ձ	ծ	ց
ջ	ճ	չ	ջ	ճ	չ
գ	կ	ք	գ	կ	ք

Այս շարքին են պատկանում, ըստ իս, Կիլիկիայի և Խարբերդի բարբառները. օրինակ Գրաբ. ջուր, Կիլիկ. ճօյ, Խարբ. ճուր; Գրաբ. պատ, Կիլիկ. բօդ, Խարբ. բադ։

6. Գրաբարին նման բաղաձայնական սիստեմ ունեցող (միայն բառասկզբին)։

ԳՐԱԲ.			ԲԱՐԲԱՌ		
բ	պ	փ	բ	պ	փ
դ	տ	թ	դ	տ	թ
ձ	ծ	ց	ձ	ծ	ց
ջ	ճ	չ	ջ	ճ	չ
գ	կ	ք	գ	կ	ք

Այս խմբին են պատկանում Թբիլիսիի, Ագուլիսի, Մեղրու, Կարճևանի բարբառները և մեր գրական լեզուն, օրինակ, Գրաբ. դուռն, Թբիլ. դուռը, Ագուլ. դուրք, Մեղրի. դուրք։ Գրաբ. տուն, Թբիլ. տուն, Ագուլ. տօն, Մեղրի. տօն։

Այս բոլոր տեղաշարժերը սովորական լսողի համար կունենան երեք աստիճան միայն.

1. Ձայնեղ արտասանություն, օրինակ՝ բազուկ, դանակ, գիր, ջուր, ձու։

2. Խուլ արտասանություն, օրինակ՝ պազուկ, տանակ, կիր, ճուր, ծու։

3. Շնչեղ խուլ արտասանություն, օրինակ՝ փազուկ, թանազ, քիր, չուր, ցու։

Միայն ձախից դեպի աջ տեղաշարժ ունեն մեր բարբառների մեծագույն մասը, ուստի լեզվաբանությունից անտեղյակ մարդու համար նրանք կլինեն նկատելի։ Այժմ էլ այս փոփոխությունները աչքի են զարնում ամեն մի քայլափոխման, քանի որ Սովետական Հայաստանում կան այդ բոլոր բարբառների ներկայացուցիչները։ Հիշյալ տեղաշարժերն ըստ մեր կլասիֆիկացիայի [1] առաջին աստիճանի տեղաշարժեր են և ընդգրկում են մեր բարբառների մեծագույն մասը թե ըստ բարբառների թվի և թե ըստ խոսողների թվի։ Տեղաշարժերի մյուս երեվույթները ներկայացված են խոսողների համեմատաբար ավելի քիչ թվով։

Այսպիսով Անանուն Մենքիչի վկայությունը հայերեն բարբառ-

---

[1] *Տես էջ՝ 51*

ների բաղաձայնական սիստեմների մասին տրամադրում է մեր բարբառների բաղաձայնական սիստեմի առաջին տեղաշարժը ձախից դեպի աջ, այսինքն մեր հիմնական բարբառների գոյությունը դեռ 7-րդ դարում բաղաձայնական նույն սիստեմով, որ մենք գտնում ենք այժմ մեր կենդանի բարբառների մեջ:

Փակագծերի մեջ ավելացնենք, որ Անանունի այդ սրամիտ վկայությամբ հաստատվում է՛ այն կարծիքը, թե գրաբար լեզվի ամենազարգացած շրջանում անգամ մեր բարբառները գոյություն ունեին, ավելին—նրանք գոյություն ունեին համարյա նույն սիստեմով, նույն տարբերությամբ, ինչ որ այժմ։ Բարբառների մեջ եղած հետագա փոփոխությունները բաղաձայնների սիստեմին չեն դիպել։ 7-րդ դարում (Անանուն Մեկնիչը համարվում է 7-րդ դարի հեղինակ) գոյություն ունեցող այդ բարբառների սիստեմը պետք է որ գոյություն ունենար նաև շատ դարեր դրանից առաջ, քանի որ բարբառները փոփոխության ավելի ենթակա են եղել 7-րդ դարից հետո, քան առաջ։

Պայթական բաղաձայնների տարբերությունները պարզեցինք, այժմ մեզ մնում է խոսել բաղաձայնների այնպիսի տարբերակների մասին, որ կրում են մասնակի բնույթ։

Բաղաձայնական սիստեմից դուրս մեր բարբառներում նկատում ենք բաղաձայնների տարբերակներ բաղաձայնների մեծ մասի համեմատությամբ։

Հ.

«Հ» բաղաձայնը գրաբարում և գրական լեզվի մեջ խուլ կոկորդային հնչյուն է, բնական է, շփական։ Այդ «հ» բաղաձայնը կա համարյա բոլոր բարբառներում, բացի Վանի բարբառից, որտեղ, եթե կա էլ, ապա այն սովորական «հ» ունեցող բառերում չէ, այլ ստացված է ուրիշ բաղաձայնների փոփոխությունից (ք)։

Վանի, Ուրմիայի, Խոյի, Մարաղայի բարբառներում, Մշո բարբառի հյուսիս-արևելյան հատվածում, Բայազեդի ենթաբարբառում և Ջուղայի բարբառի քաղաքի խոսվածքում «հ» բաղաձայնի դիմաց արտասանվում է ետնալեզվային շփական «խ» բաղաձայնը։ Օրինակ՝ հաց > խաց, հէր > խէր, հող > խուէղ, հարս > խարս և այլն։

«Հ» բաղաձայնը խ-ի վերածելու մեջ հետևողական է միայն Վանի բարբառը։ Մյուս բարբառները որոշ դեպքերում շեղումներ են կատարում։

Մենք արդեն հայտնել ենք այն կարծիքը, որ հնչյունական այդ երևույթը Վանի բարբառը ժառանգություն է ստացել խալդական լեզվից, որը ըստ երևույթին չի ունեցել «հ» բաղաձայնը, ինչպես այժմ Վանի բարբառը։ Պատահական չէ, որ հնչյունական այդ երևույթը գոյություն ունի բոլոր այն բարբառներում, որոնք շրջապատում են Վանի բարբառը, այսինքն այդ հատկությունը ունեցել են բոլոր այն տոհմական լեզուները, որոնք շրջապատած են եղել Բիայնայի լեզուն և գտնվել են նրա խիստ ազդեցության տակ։ Մենակ այդ հատկությամբ չէ, որ այդ բարբառները նման են Վանի բարբառին և նրա միջոցով նաև Բիայնայի լեզվին։ Մեր կարծիքով, խալդերեն լեզվի իե ձայնավորը ոչ թե երկու ձայնավոր է, այլ պարզապես Վանի երկբարբառային ե-ն է, ուստի ենթադրում ենք, որ խալդերեն լեզվի մեջ եղել է երկբարբառային ե, որից և ժառանգել են Վանի, Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառները. օրինակ՝ մեր, ձեր (արտասանվում են՝ միեր, ծիեր)։

«Հ» բաղաձայնի ձայնեղ տարբերակը գտնում ենք մի շարք բարբառներում, ինչպես Կարնո և Մշո բարբառներում, Նոր-Բայազեդի և Մարտունու ենթաբարբառներում։ Օրինակ՝ Հակօփ, Հօվանէս, հարտ=դեպի արտ (Մուշ) և այլն։

«Հ» հնչյուն է ստացվում նաև «խ» բաղաձայնի թուլացումից։ Այդ երևույթը նկատելի է Երևանի բարբառում, հատկապես այն բառերի մեջ, որտեղ կա ետնալեզվային ղ։ Օրինակ՝ խաղող—հավօղ, խաղալ—հաղալ, խեղդել—հէխտէլ, խեղճ—հէղջ և այլն։

«Խ» բաղաձայնի վերածվելը հ-ի նկատելի է նաև Ագուլիսի բարբառի մեջ. օրինակ՝ ահուռ>ախոռ, ծօհ>ծուխ, փ՛ըլո՛հ> գլուխ, hörqğr>խուրձն և այլն։

«Հ» բաղաձայնը վերածվում է «ֆ» հնչյունի «ո» ձայնավորից առաջ Արարատյան (Երևանի) և Կարնո բարբառներում. օրինակ հող—ֆօղ, հոր>ֆօր, հոգի>ֆօքի և այլն։

Ղարաբաղի բարբառում նույն «ո» ձայնավորից առաջ «հ» բաղաձայնը վերածվում է ատամնաշրթնային «վ» ձայնեղ բաղաձայնի, այսինքն Երևանից տարբերվում է միայն ձայնեղացմամբ. օրինակ՝ հող>վըէղ, հոր>վըէր և այլն

Բ

Այս բաղաձայնը հայերենի բարբառներում ենթարկվում

Մենք արդեն հայտնել ենք այն կարծիքը, որ հնչյունական այդ երևույթը Վանի բարբառը ժառանգություն է ստացել խալդական լեզվից, որը ըստ երևույթին չի ունեցել «հ» բաղաձայնը, ինչպես այժմ Վանի բարբառը: Պատահական չէ, որ հնչյունական այդ երևույթը գոյություն ունի բոլոր այն բարբառներում, որոնք շրջապատում են Վանի բարբառը, այսինքն այդ հատկությունը ունեցել են բոլոր այն տոհմական լեզուները, որոնք շրջապատած են եղել Բիայնայի լեզուն և գտնվել են նրա խիստ ազդեցության տակ: Մենակ այդ հատկությամբ չէ, որ այդ բարբառները նման են Վանի բարբառին և նրա միջոցով նաև Բիայնայի լեզվին: Մեր կարծիքով, խալդերեն լեզվի իե ձայնավորը ոչ թե երկու ձայնավոր է, այլ պարզապես Վանի երկբարբառային ե-ն է, ուստի ենթադրում ենք, որ խալդերեն լեզվի մեջ եղել է երկբարբառային ե, որից և ժառանգել են Վանի, Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառները. օրինակ՝ մեր, ձեր (արտասանվում են՝ միեր, ծիեր):

«Հ» բաղաձայնի ձայնեղ տարբերակը գտնում ենք մի շարք բարբառներում, ինչպես Կարնո և Մշո բարբառներում, Նոր-Բայազեդի և Մարտունու ենթաբարբառներում: Օրինակ՝ Հակօփ, Հօվանէս, հարտ=դեպի արտ (Մուշ) և այլն:

«Հ» հնչյուն է ստացվում նաև «խ» բաղաձայնի թուլացումից: Այդ երևույթը նկատելի է Երևանի բարբառում, հատկապես այն բառերի մեջ, որտեղ կա ետնալեզվային ղ: Օրինակ՝ խաղող—հավօղ, խաղալ—հաղալ, խեղդել—հէխտէլ, խեղճ—հէղջ և այլն:

«Խ» բաղաձայնի վերածվելը հ-ի նկատելի է նաև Ագուլիսի բարբառի մեջ. օրինակ՝ ահուռ> ախոռ, ծօհ> ծուխ, գ՛ըլուհ> գլուխ, հօրգճր> խուրձն և այլն:

«Հ» բաղաձայնը վերածվում է «ֆ» հնչյունի «ո» ձայնավորից առաջ Արարատյան (Երևանի) և Կարնո բարբառներում. օրինակ հող—ֆօղ, հոր> ֆօր, հոգի> ֆօքի և այլն:

Ղարաբաղի բարբառում նույն «ո» ձայնավորից առաջ «հ» բաղաձայնը վերածվում է ատամնաշրթնային «վ» ձայնեղ բաղաձայնի, այսինքն Երևանից տարբերվում է միայն ձայնեղացմամբ. օրինակ՝ հող> վըէղ, հոր> վըէր և այլն

Բ

Այս բաղաձայնը հայերենի բարբառներում ենթարկվում

է բազմաթիվ փոփոխությունների։ Այս փոփոխությունները կարելի է պատկերացնել հետևյալ ձևով. ր>ր^{ɦ}>ժ>շ>յ։

«Ր» բաղաձայնը արտասանվում է «ɹ» Խոտրջրի, Կիլիկիայի բարբառներում, Հադրութի բարբառի Տումի գյուղի խոսվածքում և Ղափանի Սրաշեն գյուղում։ Այդ բարբառներով գրված տեքստերի մեջ կնկատենք, որ ամեն տեղ «ր» հնչյունը վերածված է ɹ հնչյունի։ Այդ կատարվել է այն պատճառով, որ արտասանության ժամանակ լեզվի ծայրը դեպի քիմքն է բարձրացրել շատ ավելի քիչ, քան պետք է, ր-ն մեղմացել է և վերածվել է ɹ հնչյունի։ Փափկացման այդ միջին ճանապարհը կարելի է գտնել Երևանի արվարձան հանդիսացող Նորքի խոսվածքի մեջ։

Սեբաստիայի բարբառում «տր» կապակցությունը դարձել է յյ. օրինակ՝ գըյյուղ>կորուկ, Բէյյօս>Պետրոս և այլն։

Լենինականի որոշ գյուղերի ինչպես և Արթիկի մեջ կնկատենք այդ հնչյունի շփական արտասանությունը այնպես, որ ստացվում է այդ հնչյունի որոշ շնչեղացումը «րɦ». օրինակ՝ կէրɦթամ կը Ա̈րɦթիկ։

Համշենի և Կիլիկիայի (Հաճըն) բարբառներում ատամնային պայթականներից առաջ ր-ն արտասանվում է ʊ։

Օրինակ՝ մաշդիդ գէշդօն գուքօն—մարդիկ գնում (էրթում) գալիս են (Համշեն), գաշդի, գաշդիյ, գաշդէյ—գնում էի (էրթում), գնում էիր, գնում էր (Հաճընի խոսվածք)։ Այդ նույն երևույթը նկատելի է նաև Նոր-Նախիջևանի բարբառում, օրինակ՝ մաշթ—մարդ, մօշթի—մօրթի, էշթալ—երթալ և այլն։

Այդ տեղի է ունեցել այն պատճառով, որ հնչյունի արտասանության ժամանակ լեզուն շատ ավելի է մոտենում վերին լնդին, քան պետք է, և դրա հետևանքով «ր» հնչյունը չչական հատկություն է ստանում։ Երբ «ր» հնչյունի ձայնեղ հատկությունը պահպանվում է, այդ դեպքում ստացվում է «ժ», ինչպես նոր Նախջևանի բարբառում. օրինակ ժէք—երեք, ժէնք—իրենք։

Գ, Կ, Ք,

Գ, կ, ք հնչյունները որոշ բարբառներում վերածվում են ɹ կամ ճժ։ Վանի և Սեբաստիայի բարբառներում ք-ն վերածում է ճɹ, օրինակ՝ կ'ինիճ'տեր—գինիք'տեր—գինիներ, մառանճɹտեր—մառանք'տեր—մառաններ (Վան)։ Ուրմիայի բարբառում կ-ն

հաջորդող բաղաձայնից առաջ լինում է յ. օրինակ՝ taxtak ուճեմ, բայց՝ տախտայ չկա։

Նույն բարբառում եէ-ի դիմաց գտնում են ճձ. օրինակ էթահ^ծ տունա >գնանք (երթանք) տուն։

Նիկոմեդիայի բարբառում գ-ն վերածվում է յ-ի. օրինակ՝ մուկ մը> մուկ մը, մի մուկ։

Ջ, Ճ, Չ,

Այս աֆրիկատները մի շարք բարբառներում հետաքրքրական փոփոխություններ են կրում։ Ուրմիայի բարբառում ջ, ճ, չ հնչյունները բաղաձայնից առաջ կորցնում են իրենց պայթական բաղադրիչ հնչյունը, պահպանելով շ և ժ շչականները, օրինակ՝ մըշնէկ—միջնակ, կըշպել—կճպել, ճաշնալ—ճանաչել (ճանչնալ—ձևից), խմշփմրմգ—խաչփարագ (խաչապաշտ) և այլն։

Դերսիմի ենթաբարբառում (Խարբերդ-Երզնկայի բարբառ) ջ, ճ, չ հնչյունները փոխարինվել են ձ, ծ, ց հնչյուններով, այսինքն շչական աֆրիկատները փոխարինվել են սուլական աֆրիկատներով, դրան համապատասխան շչական «շ»-ն փոխարինվել է սուլական «ս» հնչյունով. օրինակ՝ ձուր> ջուր, ձէրմակ> ճերմակ, ցամից—չամիչ, ցամից ցիգա> չամիչ չկա, գը քասիմ> կը քաշեմ, քաշում եմ և այլն։

Եվդոկիայի բարբառում ջ, ճ, չ-ն, Ուրմիայի բարբառի նման, բաղաձայնին նախորդելիս կորցնում են իրենց բաղադրիչ պայթականը և պահպանում միայն բաղադրիչ շփականները՝ ժ, շ հնչյունները. օրինակ՝ ջաժ մը> ճանճ մը, գարշ քիթ> կարճ քիթ և այլն։

Ձ, Ծ, Ց

Այս աֆրիկատները ևս նույնպիսի փոփոխություն են կրում, ինչպես որ ջ, ճ, չ-ն։ Ուրմիայի բարբառում բաղաձայնին նախորդելիս ձ, ծ, ց հնչյունները կորցնում են բաղադրիչ պայթականը, պահպանելով զ և ս շփական հնչյունները. օրինակ խիզ չկա> խինձ չկա, տասկեմ> ծածկեմ, խեզնել> հեծնել, խասկան > հացկան (տաշտաքեր) և այլն։

Ուրմիայի բարբառին բոլորովին նման է Նիկոմեդիայի բարբառը ձ, ծ, ց հնչյունների փոփոխությամբ։ Այդ բարբառում ևս բաղաձայնին նախորդելիս ձ, ծ, ց հնչյունների տեղ գտնում ենք շփական զ-ն և ս-ն. օրինակ՝ մէզ մարթ> մեծ մարդ, վէս դըղա> վեց տղա և այլն։

Ի վերջո հիշատակելի է նաև մի տարօրինակ երևույթ Նի-

կոմեդիայի բարբառի մեջ (Ասլանբեկի ենթաբարբառ), որ հիշատակում է պրոֆ. Հ. Աճառյանը։ Փ, Ք, Բ, Դ, Թ հնչյունները բաղաձայնին նախորդելիս դուրս են ընկնում և խոսակցության ժամանակ փոխարինվում են «հանկարծական ընդհատումով և կոկորդի սեղմումով». օրինակ՝ փա՛ գա̂—փայտ կա̂, ծ՛քը—ոտքը և այլն.

Անկասկած հայերեն բարբառները բաղաձայնների շատ ավելի տարբերակներ են ներկայացնում, քան մենք հիշեցինք, որովհետև աշխատանքի մեր բնույթը հնարավորություն չի տալիս մեզ ընդարձակվելու։ Մյուս կողմից քիչ թվով բարբառների մասին կան մոնոգրաֆիկ աշխատություններ, որոնք կատարված լինեին գիտական գոհացուցիչ ճշտությամբ, ուստի այսքանն առայժմ գտնում ենք բավական։

8. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերեն բարբառների ձևաբանությունը զգալի տարբերություններ է ներկայացնում։ Այդ բոլոր տարբերությունները, սակայն, հատուկ են միայն հայերենի բարբառներին, որ նշանակում է, թե հայկական ամբողջության կողմից կամ ամբողջ հայ հասարակության կողմից այս կամ այն ձևերը գիտակցված են իբրև լեզվական երևույթներ որո՛շ բովանդակությամբ, որո՛շ իմաստով։ Ձևաբանական տարբերությունները երբեմն այնքան մեծ են, որ թվում է, թե գործ ունենք տարբեր լեզուների հետ, սակայն այդու հանդերձ այդ տարբերությունները չեն հիշեցնում որևէ օտար լեզու, կան ու մնում են հայերեն։

Հնչյունական տարբերակները հեշտ է բացատրել նրանով, որ արտասանության ինչ որ շեղում պատճառ է դարձել այդ հնչյունական փոփոխություններին, «աղավաղումներին» և այդ պատճառաբանությունը խելքի մոտ, հասկանալի, նույնիսկ, հավատալի է լեզվաբանության անծանոթ մարդու համար։ Թեև այդ մասին արդեն ասել ենք, որ «աղավաղում» ըմբռնումը հարաբերական է։ Յուրաքանչյուր լեզու ունի իր արտասանական որոշ բազան, որ հասարականորեն գիտակցված է և վերարտադրվում է հասարակության յուրաքանչյուր անդամի բերանում, այդ պատճառով էլ մի հասարակության (մեր խոսքը վերաբերում է միևնույն տեղում ապրող և ամեն օր առնչվող մարդկանց) աղավաղումները ոչնչով չեն պատճառաբանվում, որովհետև նեղ հասարակության մեջ, անդամներով ամեն օր առնչվող հասարա-

կության մեջ ամեն մի լեզվական շեղում ենթարկվում է հասարակական կոնտրոլի և անողոք կերպով ուղղվում։ Երբ, սակայն, հնչական տեսակետից տվյալ լեզվին անհարազատ մի բառ ընկնում է այդ լեզվով խոսողների բերանը և նրանք անհրաժեշտություն են զգում արտասանելու այդ բառը, գիտակցելով այն իր իմաստի հետ, այդ դեպքում օտարոտի արտասանություն ունեցող բառը հնչական տեսակետից հարմարեցվում է տվյալ լեզվին և արտասանվում մոտավոր ճշտությամբ, ոչ այնպես, ինչպես օտար լեզվի մեջ։ Օրինակ՝ «տրակտոր» բառը անգլերեն լեզվի մեջ կունենա թրէքթըր արտասանությունը, բայց ռուսերեն լեզվի մեջ չկան թ և ը (քմային ա) հնչյունները, ուստի այդ հնչյունների համար ընտրվում են ռուսաց լեզվի մեջ եղած ամենամոտիկ հնչյունները, որոնք են т և о հնչյունները։ Վերջինիս արտասանությունը բխում է նաև «տրակտոր» բառի գրապատկերից։ Այդ դեպքում անգլերեն բառի արտասանությունը կատարվում է ռուսական լեզվի հնչյունական բազայի վրա և ստացվում է трактор բառը։

Այդ նույն եղանակով էլ ամեն մի բարբառի մեջ կազմավորվել են բառերի արտասանության այն ընդհանուր կանոնները, որ ունի այժմ յուրաքանչյուր բարբառ։ Լինելով տոհմական լեզվի մի տեսակ, ամեն մի բարբառ ընդհանուր հայերեն դարձող բառը արտասանել է իր հնչական բազայի հիմունքներով և դրա հետևանքով ստացվել է ընդհանուր հայերեն բառի արտասանության տվյալ բարբառային տարբերակը։ Օրինակ՝ Նախահայկական «սխունի» ցեղը լեզվի մեջ չի ունեցել ձայնեղ բ, դ, ձ, ջ, գ հնչյունները, ուստի այն բառերը, որոնք ունեցել են այդ հնչյուններից որևէ մեկը, և դարձել են ընդհանուր հայկական, հարմարեցրել է իր արտասանությանը և դրանց փոխարեն արտասանել է՝ պ, կ, տ, ծ, ճ։ Դրա հետևանքով ընդհանուր հայերեն դարձած պարսկական «բամբակ» բառը արտասանվել է «պէնբակ», ընդհանուր հայերեն «բան» բառը արտասանվել է «պէն», ընդհանուր հայերեն «ձու» բառը արտասանվել է «ծöւ», ընդհանուր հայերեն «ջուր» բառը արտասանվել «ճöւր» և այլն։ Այդ նույն ձևով տարբերվել է նաև ձայնավորների արտասանությունը, և ահա ստացվել է հայերեն լեզվի սխունիական տարբերակ կամ Ղարաբաղի բարբառը։ Պետք է ասել, որ հավանական է նաև, որ մի կարգ բառեր ընդհանուր հայկական դարձած լինեն սկսելով իրենց գոյությունը «սխունի» ցեղի լեզվից։ Այդ պարզելը շատ դժվար է, միայն կարելի է նկատել, որ բազմաթիվ բարբառներ ունեն

ընդհանուր հայկականից և օտար լեզվից փոխ առնված բառերից բացի, նաև այնպիսի բառեր, որոնք պատկանում են միայն այդ տեղին, այդ բարբառին։ Իբրև օրինակ կարելի է հիշատակել Ղարաբաղի «ճղոպուր»—ընկույզ բառը, որ ուրիշ տեղերում այլ անուն ունի՝ կակալ, պապաք, ընգուզ։

Այսպիսով բարբառների հնչյունական տարբերությունն անգամ աղավաղումից չէ. նա վկայում է հայերեն լեզվի ընդհանուր դառնալու մասին, այսինքն պատմականորեն ընդհանրության ստեղծվելու մասին, միաժամանակ վկայելով, թե իր տարբերությունները գալիս են հնից, մի անկախ, առանձին լեզվից։

Ավելի ևս մեծ տարբերություններ կան ձևաբանության մեջ և այդ տարբերությունները չէին կարող առաջ գալ ինչ որ աղավաղումից, որովհետև ինչ եղանակով և ինչու բարբառները պետք է «սարից» ձևը դարձնեին սարան, սարեն ճեճից կամ սարեն ճան, կամ սարեմեն, կամ սարերաց (հոգն.), կամ թե սարեն իճի։

Նույն փաստի համար լավ վկայություն կարող է լինել այն, որ ոչ մի աղավաղումով գրում ես ձևը չէր կարող փոխարինվել գրելիս իս ձևով և կամ գրել ես, գրելում ես ձևերով։

Այսպիսի տարբերությունները առաջ են գալիս քերականական տարբեր ժառանգություններից և ցուցահանում են քերականական կազմության ինքնուրույնություն, ինքնություն, ընիկություն, ուստի աղավաղման տեսությունն այստեղ որևէ օգուտ տալ չի կարող, ոչինչ բացատրել չի կարող։ Աղավաղման տեսության կողմնակիցները նշում են միայն, իբր թե, կատարված փաստը, բայց որևէ մեկը չի փորձում բացատրելու, թե ինչ պատճառով է կատարվել այդ աղավաղումը և ինչ օրենքով։ Եթե ամեն մի բարբառ լիներ ինչ որ մի խառնիխուռն բան, չունենար ոչ մի սիստեմ, հասկանալի կլիներ և գուցե կարելի կլիներ հավատալ, թե այդպիսի բան կատարվել է, բայց իրոք այդպես չէ, ոչինչ բարբառի մեջ խառնիխուռն չէ, այլ սիստեմավորված և հետևողական, ուստի դա վկայում է, թե այդտեղ մենք գործ ունենք հասարակական գիտակցության հետ և ոչ խառնիխուռն աղավաղման ինչ որ տարերային երևույթի, լեզուն տարերային կերպով փչացնելու հետ։

Հայերեն բարբառների ձևաբանությունը հիմնականում համապատասխանում է այն խմբավորման, որ նրանք ենթարկվում են ըստ ճյուղերի բաժանելիս, սակայն յուրաքանչյուր

ճյուղի ներսում նույնպես նկատելի են ավելի կամ պակաս չափով տարբերություններ։

Հոգնակիներ

Բարբառների ընդհանուր հոգնակին է «էր» մասնիկը։

Համարյա չկա մի բարբառ, որ այդ հոգնակին չունենա, սակայն այդ հոգնակիի հետ միասին կամ նրա հետ բարդված՝ մենք գտնում ենք բազմաթիվ այլևայլ հոգնակիներ։

Բավական տարածված է ան հոգնակին. օրինակ՝ իշան, ձիան (Բայազեդի ենթաբարբառում), տեղան «անկողիններ» (Սեբաստիայի բարբառ)։

Այդ ան հոգնակին բարդվում է «տ» հոգնակիի հետ և ստացվում է տան, օրինակ՝ պառվըտան,—պառավներ, գլխըտան—գլուխներ, գուլպըտան—գուլպաներ։

Ունենք անի հոգնակի, օրինակ՝ որսողանի—որսորդներ ուրիշանի—ուրիշներ (Ջուղայի բարբառ)։

«էնի» հոգնակին գտնում ենք Շամշադինի և Ղազախի շրջանում, օրինակ, կատվենի—կատուներ, վեդրենի—վեդրոներ, կուրենի—կրիաներ, գուլպենի—գուլպաներ։

«Ներ» հոգնակին կարելի է գտնել համարյա բոլոր բարբառներում, դա բաղադրյալ հոգնակի է, կազմված ն և եր հոգնակիացույց մասնիկներից։

«Նի» վերջավորությունը նշանակում է հոգնակի Պոլսի բարբառում (ոտներնիս, գրքերնիս—մեր ոտները, մեր գրքերը)։ Նույն հոգնակին նէ ձևով գտնում ենք նաև Ղարաբաղի բարբառում, օրինակ՝ ճըղըցնէ—ջաղացներ, ըխըրկնէ—տախտակներ։

Այդ հոգնակին կարող էր ստացվել նաև ներ հոգնակիից վերջին բաղաձայնի անկումի հետևանքով։

Օտ—հոգնակի գտնում ենք նույնպես Ղարաբաղի բարբառում (օրինակ, թըթօտ, խընձօրոս—թթի ծառեր, խնձորի ծառեր)։

Ստան հոգնակին, որ առաջին անգամ հանդիպում ենք միջին հայերենում, լիառատ կերպով գոյություն ունի Արթվինի բարբառում։ Բոլոր այն բառերը Արթվինի բարբառում, որոնք վերջավորվում են ձայնավորով, ստանում են ստան վերջավորությունը. օրինակ՝ վարժուհի—վարժուհիստան, սրա—սրէստան (շարքեր). թղա—թղէստան (թղաներ)։ Այդ հոգնակին կա նաև Շապին-Գարահիսարի բարբառում (էքէսղան—այգիներ)։

Այդ ըստան հոգնակին գտնում ենք նաև Ախալքալաքի և

Ալաշկերտի խոսվածքներում։ Այստեղ նույնպես՝ այնպիսի բառերի վրա, որոնք վերջավորվում են ձայնավորով, բայց ոչ բոլոր ձայնավորով վերջացող բառերի վրա, ինչպես Արթվինի բարբառում, որ վկայում է, թե այդ հոգնակի մասնիկը վերցված է արի լինցիներից։ Օրինակ, բաղնեստան—բաղնիքներ, բանլեստան—բանալիներ, գուլպեստան—գուլպաներ, և այլն։ Այս ստան հոգնակին բաղադրված է հետևյալ հոգնակիներից՝ ս+տ+ան։

Վնի և վներ հոգնակի, որ բաղադրված է վ, ն և եր հոգնակիներից, գտնում ենք Ալաշքալաքերի և Ալաշկերտի խոսվածքներում, Համշենի, Տրապիզոնի Սուչավայի և Կարնո բարբառների մեջ։ Մեզ հայտնի է միջին հայերենի վի հոգնակին։ Ալաշքալաքերի բարբառում այդ հոգնակին բաղադրված է հանդես գալիս, օրինակ, աչվըներս, ոտվըներս, ունքվըներս։ Այս վերջին բառի մեջ առկա է նաև գրաբարի հոգնակին։

Վդիք հոգնակին գտնում ենք Տրապիզոնի բարբառի մեջ (քուրվըդիք)։

Տեր, տիր հոգնակիներ գտնում ենք Մոկաց և Վանի բարբառներում։ Օրինակ՝ կինիʻտեր, մառաʻտեր, կիʻտեր, որ նշանակում են գինիներ, մարդներ, կանայք։

Առնեք բաղադրյալ հոգնակին գտնում ենք Ջուղայի և Երևանի բարբառների մեջ. օրինակ, գեղառնեք, տեղառնեք—գյուղեր, տեղեր։

Ք հոգնակին, որ գրաբարինն է, գտնում ենք շատ բարբառներում։ Այդ ք հոգնակին առկա է խոնարհման մեջ հոգնակի առաջին դեմքում բոլոր բարբառներում, օրինակ կու գըրենք, կըրել ենք, գըրըմ ըք, կու կʻիրենքʻ, գրելիս ինք, գըրենք, գըրինք և այլն։

Ք հոգնակին կա նաև մենք, դուք, էսոնք, սո՛նք,սոնք և նման դերանունների մեջ։

Ք հոգնակին հանդիպում ենք նաև գոյականների մեջ ոչ միայն պարզ ձևով, այլև բաղադրյալ ձևով, օրինակ, գեղացիք, քաղքցիք, ձիանք, իշվանք և այլն։

Քդիր բաղադրյալ հոգակին գտնում ենք Ոզմեցոց բարբառում. այդ հոգնակին կազմված է ք+դ(տ)+իր (եր) մասնիկներից. օրինակ՝ տըղէյքդիր—տղաներ։

Քʻեր հոգնակի գտնում ենք Ուրմիայի բարբառում և Լոռվա խոսվածքի մեջ, օրինակ՝ կարասքʻեր—կարասներ, գʻոմեշքʻեր—գոմեշներ, սափորքʻեր—սափորներ (Ուրմիայի բարբառ), վէդրօ-

քէր—վեղրոնեը (Ստեփանավան)։

Բարբառներում կան նաև վաճք, դաճք (Տրապ., Խարբ.-Եղըն-կա) և այլն։

Հոլովում

Բարբառներում կան տարբեր թվով հոլովներ։ Ամենաշատ հոլով Երևանի, Թբիլիսիի, Ղարաբաղի, մի խոսքով «ում» ճյուղի բարբառներն ունեն, իսկ ամենաքիչը, ընդամենը չորս հոլով, կան Պոլսի բարբառում, իսկ Վանի բարբառի հոգնակիում ընդամենը երեք հոլով։ «Ում» ճյուղի բարբառների հոլովները նույնն են, ինչ որ արևելահայ գրական լեզվինը, այսինքն՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական։ «Լ» և «Ս» ճյուղի բարբառներում բացակայում է ներգոյական հոլովը, որ փոխարինված է սեռականով և մեջ հետադրությամբ։ «Կը» ճյուղի բարբառների մեջ նույնպես չկա ներգոյական հոլովը։ Այդ բարբառներում սեռականն ու տրականը բոլորովին նույնացել են, իսկ որոշ բարբառներում նաև հայցականն ու ուղղականն են նույնացել։

«Ս» ճյուղի բարբառներից մի երկուսի մեջ (Շաղախ, Կարճևան, Մեղրի) բացառական հոլովը ևս տարրալուծվել է կամ՝ ավելի ճիշտ, փոխարինվել է սեռականով և որևէ հետադրությամբ։ «Կը» ճյուղի որոշ բարբառներում, օրինակ՝ Ոզմի խոսվածքում (անօունց խէյդ>նրանցով) գործիականը փոխարինվել է սեռականով և հետադրությամբ։ Այսպիսով բարբառներում հոլովների մեջ նկատվում է ձգտում դեպի անջատականություն։

Ինչպես գրաբար լեզվի, նույնպես և աշխարհաբար գրական լեզվի մեջ ուղղական հոլովը ձև չունի, կամ հատուկ ձև չունի և այդ ձև չունենալն էլ նրա համար հոլովական ձև է։ Բոլոր բարբառներում ուղղական հոլովը ստանում է «ը» հոդը և գործածվում է իբրև ենթակա։ «Ը» հոդ չի ստանում միայն Վանի բարբառը, օրինակ «տըղէ՞ններ կուկ՚ա՞ն», բայց ձայնավորով վերջացող բառերը «ն» հոդ ստանում են. օրինակ՝ փէսէն կուկ՚ա՞։

Եզակի սեռական հոլովը սովորաբար բոլոր բարբառներում ստանում է մեծ մասամբ «ի» վերջավորություն, բացի մի երկու բարբառից, որտեղ հատուկ անունները ստանում են «ա» վերջավորություն, օրինակ՝ Մեղրու բարբառում. ուղղական՝ Կարապետ, սեռական՝ Կարապետա:

Որոշ բարբառներում «ի» ձայնավորը սղվելով վերածվում

է «ը» ձայնավորի, ինչպես օրինակ՝ Ուրմիայի և Խոյի բարբառներում. ուղղական՝ տախտակ, սեռական՝ տախտըկը։

«Ում» ճյուղի համարյա բոլոր բարբառները, բացի Ղարաբաղի բարբառից, սեռականում հոդ չեն ստանում, իսկ Ղարաբաղի բարբառը ստանում է «ն» հոդը, օրինակ՝ ծառին տակը (Ղարաբաղ), ծառի տակ (Երևան), ծառի տակ (Թբիլիսի) և այլն։

Հոդ չի ստանում նաև «Լ» և «Ս» ճյուղի բարբառների սեռականը, բացի Շաղախի և Հադրութի բարբառներից, որոնք նման են Ղարաբաղի բարբառին։

«Կը» ճյուղի բոլոր բարբառները, բացի Վանի բարբառից, կամ այդ բարբառների մեծ մասը, ստանում են սեռականում «ն» հոդը։ Օրինակ՝ սարին վրա (Պոլիս և այլն)։

Տրական հոլովը բոլոր բարբառներում «ն» հոդ է ստանում, ուստի այն բոլոր բարբառներում, որոնց մեջ սեռականն էլ հոդ ունի, տրականը նույնությամբ նման է սեռականին, մինչդեռ սեռականում հոդ չստացող բարբառներում տրականը դրանով տարբերվում է։ Հայցական հոլովը «կը» ճյուղի մի շարք բարբառներում ուղղականին նման է ամեն դեպքում, նաև այն դեպքում, երբ գոյական անունը անձի անուն է, օրինակ՝ Գարաբէդը ձէձէց Բօղօսը (Պոլսի բարբառ)—Կարապետը ծեծեց Պողոսին։

Մյուս բոլոր բարբառներում մեր գրական լեզվի նման, երբ գոյականը ցույց է տալիս իր, հայցականը նման է ուղղականին, իսկ երբ ցույց է տալիս անձ և նույնիսկ շնչավոր առարկա միայն, հայցականը նման է դառնում տրականին. օրինակ՝ Պօղօսը կտանչելիս է Պետրօսին (Արթվինի բարբառ), Պօղվուէսը կտանչելի Պէդրուէսին (Ուրմիայի բարբառ), Պօղօսը կտանչըմ ա Պէդրօսին (Երևանի բարբառ), Պօղօսը կտանչէ գը Պէռօսին (Լենինականի խոսվածք) և այլն։

Բացառական հոլովը բարբառներում ավելի բարդ պատկեր ունի։ Այդ հոլովի վերջավորությունը գրական լեզվում «ից» մասնիկն է։ Այդ վերջավորությունը գտնում ենք Երևանի և Ագուլիսի բարբառներում, Ջուղայի բարբառում իբրև երկրորդական ձև և Վանի բարբառում, այն էլ՝ եզակիում։ Հաշտարխանի բարբառում այդ «ից» վերջավորությունն ունի «իծ» ձևը, որ արդյունք է «ց» հնչյունի շնչեղազրկման։

Մյուս բոլոր բարբառներում այդ «ից» վերջավորությունը բացակայում է, թեև բավական հեռավոր տեղերում անակընկալ կերպով այս ու այն տեղ հանկարծ երևում է, օրինակ Զեյթունի բարբառի խոսվածքներում։

Վանի բարբառի հոգնակի բացառականը կազմվում է աց *վերջավորությամբ, որ միաժամանակ թե սեռականի և թե տրականի վերջավորություն է։*

«Կը» ճյուղի բարբառները, բացի Վանի բարբառից, ունեն «է» կամ «էն» վերջավորություն բացառականում։ Նույնն են նաև «Ն» ճյուղի բարբառները և Ուրմիայի բարբառը «Ս» ճյուղից (օրինակ՝ սարէ և սարէն)։ Ղարաբաղի բարբառն ունի «ան» վերջավորություն. օրինակ՝ սարան, տա̈շտան, ծառան—սարից, դաշտից, ծառից։ Այդ ան *վերջավորությունը կա նաև Շամախու և Հադրութի բարբառներում։*

Թբիլիսիի և Արթվինի բարբառներում բացառական հոլովն ունենում է հմեն, իմեն և ամէն *վերջավորություններ։*

Մյուս բարբառներում բացառական հոլովը կազմվում է անալիտիկ սիստեմով, սեռականով և մի որևէ հետադրությամբ, այսպես օրինակ, Մեղրու բարբառում դրվում է «հէնից» հետադրությունը, որը երևի «հէտնից» բառն է, օրինակ՝ Կարապետ ճենից, սարեն հենից—*Կարապետից, սարից։ Կարճևանի բարբառում գործածվում է «հէնի» հետադրությունը, որ նույն Մեղրու հետադրությունն է առանց ց-ի։ Շամախի բարբառը, որ Ղարադաղի բարբառն է, գործածում է «անա» հետադրությունը, օրինակ՝* սարեն անա—*սարից,* Կարապետին անա—*Կարապետից և այլն։*

Հադրութի բարբառը և Ղարաբաղի բարբառի բազմաթիվ խոսվածքներ գործ են ածում «նըէստա» հետադրությունը, օրինակ՝ «սարեն նըէստա», տըխտակեն նըէստա—*սարից, տախտակից։ Մեղրու շրջանի Ագարակ գյուղի խոսվածքում գործ են ածում «նա̈ն», «ըննա̈ն», օրինակ* սարին նա̈ն—*սարից։ Նույնիսկ Մոկաց բարբառում երբև երկրորդական ձև բացառականը կազմվում է «ինի» հետադրությամբ՝* փանջարեն ինի—*փանջարայից,* սըրտեն ինի—*սրտից։*

Գործիական հոլովը *բոլոր բարբառներում ունի «օվ» վերջավորություն. միայն Ղարաբաղի, Հադրութի, Շամախի, Կարճևանի և Ագուլիսի բարբառներն են, որ ունեն «ավ» կամ «ա̈վ» վերջավորություն. օրինակ՝*

Ղարաբաղի բարբառ՝	*սարավ, սարէրավ*
Հադրութի բարբառ՝	*սարավ, սարէրավ*
Ագուլիսի բարբառ՝	*աղավ, ձիյա̈վ, աղէրա̈վ, ձիյէրա̈վ*
Մեղրու բարբառ՝	*սարավ, սըրէրավ*
Շամախի բարբառ՝	*տըխտակավ, տըխտըկնավ*

Կարճևանի բարբառ՝ սարավ, սարօրավ։

Արաբկիրի բարբառի գործիականն ունի «օք» վերջավորություն, օրինակ՝ ձեռքօք> *ձեռքով,* ըսելօք> *ասելով։*

Ոմանց բարբառում գործիական հոլովը փոխարինվում է սեռականով և հետ *հետադրությամբ, որ ցույց է տալիս, թե գործիական հոլովը «և», «ու», «միասին» բառերի նշանակություն ունի, օրինակ՝ խամի> ինձ հետ=ինձնով, խաքի> քեզ հետ=քեզնով, անօֆ և անօխէյտ> նրա հետ=նրանով։*

Ներգոյական հոլով *ունեն «ում» ճյուղին պատկանող բոլոր բարբառները (Երևանի, Թբիլիսիի, Ղարաբաղի, Շամախու, Ջուղայի, Աստրախանի և Ագուլիսի) և «Ը» ճյուղին պատկանող Հադրութի, Շաղախի, Կարճևանի և Արթվինի բարբառները։ Այդ ապացույցներից մեկն է, և ամենազորեղը, որ «ում» ճյուղի անկատար դերբայը ներգոյական հոլովն է։ Մեղրու և Կարճևանի բարբառներն ունեն Ագուլիսի բարբառին նման ներգոյական, նշանակում է նրանից են յուրացրել, վորովհետև բոլոր փաստերը վկայում են այն մասին, որ այդ երկու բարբառները գտնվել են Ագուլիսի բարբառի ուժեղ ազդեցության տակ և շատ բան են վերցրել նրանից։ Հանդրութի և Շաղախի բարբառները, գտնվելով Ղարաբաղի բարբառի խիստ մեծ ազդեցության տակ, նրանից են վերցրել այդ հոլովաձևը։ Ինչ վերաբերում է Արթվինի բարբառին, ապա արդեն ապացուցված է, որ նա շատ ուժեղ խաչավորվել է Թբիլիսիի բարբառի հետ և դրա հետևանքով վերցրել նրա ներգոյական ձևը* [1]*։ Դրանից դուրս ներգոյական ձև ունի նաև Հավարիկի բարբառը, որ մենք կոչել են միջճյուղային բարբառ, վորովհետև նա խաչավորում է «ում», «ս» և «լ» բարբառների էլեմենտները, ուստի բնականորեն պետք է յուրացրած լինի երկու ճյուղերում գոյություն ունեցող ներգոյականի ձևը։*

Ներգոյական հոլովն ունի կամ ում *(ըմ) կամ* ամ *(ա̈մ) վերջավորություն։*

Թբիլիսի	Արթվին	Երևան	Ղարաբաղ	Հադրութ	Շաղախ
սար (ը)	*սար (ը)*	*սար (ը)*	*սար (ը)*	*սար (ը)*	*սար (ը)*
սարի	*սարի*	*սարի*	*սարէ (ն)*	*սարէ (ն)*	*սարէ (ն)*
սարին	*սարին*	*սարի (ն)*	*սարէ (ն)*	*սարէ (ն)*	*սարէ (ն)*
սար (ը)	*սար (ը)*	*սար (ը)*	*սար (ը)*	*սար (ը)*	*սար (ը)*

[1] *Այդ նույն բարբառներում, ինչպես և մյուս բոլոր բարբառներում, ներգոյական հոլովը կազմվում է սեռականով և մեջ հետադրությամբ օրինակ՝ սարի մ՚ըչին (Թբիլիսի), սարի մըչին (Երևան), սարէն մաչէն (Հադրութ), սարուն մանջին (Մեղրի), սարու մանջին (Կարճևան), սարին մաջը (Ագուլիս)։*

սարէմէն	սարիմէն	սարից(ը)	սարան (սարէն նըէստա)	սարան	սարէն անա
սարօվ	սարօվ	սարօվ (ը)	սարավ	սարավ	սալավ
սարում(ը)	սարում(ը)	սարըմ(ը)	սարըմ	սարըմ(ը)	սարըմ(ը)

Ագուլիս	Կարճևան	Մեղրի	Հավարիկ
աղ (ը)	սար(ը)	սար(ը)	սար(ը)
աղի(ն)	սարու(ն)	սարու(ն)	սարին
աղի(ն)	սարու(ն)	սարու(ն)	սարին
աղ(ը)	սար(ը)	սար(ը)	սար(ը)
աղից	սարու հէնի	սարան հէնից	սարինա̈
աղավ	սարավ	սարավ	սարան
աղամ	սարում(ը)	սարամ	սարըմը

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Բարբառների ձևաբանության մեջ ամենահետաքրքրականը դերանուններն են, որոնք այնքան շատ այլաձևություններ են ներկայացնում, որ դժվար է լինում ամբողջը միանգամից ընդգրկել։ Ոչ մի բարբառ դերանվանական մի նոր արմատ չի գործածում, բոլորը գործ են ածում միևնույն արմատները, բայց տարբեր արտասանությամբ և տարբեր ձևավորումով։ Շատ հաճախ կարելի է դերանունների նմանությունից որոշել բարբառների հարևան լինելը կամ հարևան եղած լինելը.

Առաջին դեմքի համար գործածվում է հայերեն ընդհանուր «ես» բառը. որն ունի հետևյալ տարբերակները.

«Յէս» (Երևանի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի, Կարնո, Տիգրանակերտի, Խարբերդ-Երզնկայի, Համշենի, Նոր-Նախիջևանի, Սուչավայի բարբառներում).

«Յես» (Վանի, Մշո, Ուրմիայի, Հավարիկի և Խոյի բարբառներում)

Յէս (Թբիլիսիի և Մարաղայի բարբառներում).

Էս (Պոլսի բարբառում).

Իս (Շաղախի, Կարճևանի, Մեղրու, Զեյթունի, Մարաշի, Ագուլիսի բարբառներում)։

Ջուղայի բարբառը յ-ն ձայնեղացնում է, որից ստացվում է «հ'ես», այնուհետև Արթվինի բարբառում արմատը դուրս է ընկնում, որից ստացվում է «յէ». այդ սովորությունը հատուկ է Արթվինի բարբառին, որովհետև «պէս» բառի մեջ «ս» կորելով

դարձնում է «պէ», օրին. «ինչպէ»> ինչպես։

Սեռական հոլովը ունենում է հետևյալ ձևերը.

«Իմ»—Երևանի, Թբիլիսիի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի, Կարնո, Մշո, Վանի, Տիգրանակերտի, Խարբերդ-Երզնկայի, Համշենի, Զեյթունի, Պոլսի, Նոր-Նախիջևանի և այլ բարբառներում։

Ագուլիսի բարբառը միայն ունենում է «ամ»—«իմ» ձևը։

Միայն Սուչավայի բարբառը «իմ» բառի առաջ դնում է «զ» նախդիրը, ունենալով «զիմ» ձևը։

Տրական հոլովը լինում է մեծ մասամբ «ինձ», «ինձի», «ընձի»։ «Ինձ» լինում է Երևանի Ղարաբաղի, Շամախու (այստեղ լինում է նաև «ինձի»), Շաղախի, Կարճևանի և Մեղրու բարբառներում)։

«Ընձի» լինում է Պոլսի, Նոր-Նախիջևանի, Մշո, Տիգրանակերտի և Ուրմիայի բարբառներում։

«Ինձի» ձև ունեն Արթվինի, Համշենի, Խարբերդ-Երզնկայի, Կարնո, Թբիլիսիի, Աստրախանի, Ռոդոսթոյի, Սուչավայի և Մարաղայի բարբառները։

Վանի բարբառը, չսիրելով «ըն» կապակցությունը, գործածում է պարզապես «ձի», «ընձի» ձևից դուրս գցելով առաջին երկու հնչյունը։ Ոզմին գործածում է «ձէյ» կամ «ընձէյ» ձևերը։ Զեյթունը գործածում է «ինձէ» ձևը, Մարաշի ենթաբարբառը գործ է ածում «իէս» տարօրինակ ձևը, Ագուլիսի բարբառը գործ է ածում «ա̈նձ» ձևը։

Մի շարք բարբառներում ավելացվում է «իկ» կամ «կ» կամ դրանց ձայնեղը՝ «իգ», «գ» և ստացվում «ընձիկ» (Ուրմիա), «ձիկ» (Վան), «ինձիգի» (Համշին)։

Շամախու բարբառը այդ «ի»>«իգ» ձևը այնքան է սիրում, որ գործածում է անձնական բոլոր դերանուններքի վրա և կրկնում մինչև երեք անգամ. տես օրինակ՝ յէսիգի, յէսիգիգի, յէսիգիգիգի. հաճախ ստացական հոդերն էլ ավելացվելով դառնում է՝ յէսիգիգիգիս, ցո̈ւ, ցո̈ւիիգիգիս, քէզանիգ՛ա̈ն, քեզանիգ՛օ̈վ և այլն։

Հայցական հոլովը սովորաբար նման է տրականին (Արթվինի, Շամախու, Կարճևանի, Մեղրու, Հադրութի, Ուրմիայի, Կարնո, Մշո, Վանա, Նոր-Նախիջևանի, Երևանի, Թբիլիսիի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի, Ագուլիսի և Ջուղայի բարբառում), որոշ ձևափոխությունով հայցականը նման է ուղղականին

«զ» նախդիրով. «իզիս» (Համշեն), «զըս», «ըսըզ» (Զեյթուն), «զիս» (Սուչավա), «զիս» (Մուշ)։

Ոզմի բարբառն ունենում է «ձը» «ըզձը» ձևերը, Տիգրանակերտի բարբառն ունենում է «յէսի» ձևը, Խարբերդ-Երզնկան ունի «ինձիս» կամ «ընձիս» ձևը, Պոլիսը գործածում է «իս», Ռոդոստոն՝ յէս՝ իսկ Մարաշի ենթաբարբառը «յաս» ձևը։

Բացառական հոլովը ունենում է «է» կամ «էն» վերջավորությունը «կը» ճյուղի բոլոր բարբառներում, բացի Վանի բարբառից, ինչպես և «Ը» և «Լ» ճյուղի բարբառներում։ «Ում» ճյուղի և «Ը» ճյուղի մի քանի բարբառներում բացառականը լինում է «անա» կամ «անէ» վերջավորությամբ (Շաղախ—անէ, Հադրութ—անա, Ղարաբաղ, Շամախի—անա)։

Երևանի և Աստրախանի բարբառներում, ինչպես և Ագուլիսի ու Ջուղայի բարբառներում բացառականը լինում է «ից» վերջավորությամբ։

Այն բարբառները, որոնց բացառականը վերջավորվում է «է» հնչյունով, այդ հնչյունից առաջ դնում են կամ «ն» կամ «մ» հնչյունը և այդ վերջավորությունը սովորաբար ավելացնում տրական հոլովի վրա. օրինակ, ինձմէ (Կարին), ընձնէ (Ոզմի) ընձնէ (Մուշ), ընձմէ (Տիգրանակերտ), ինձնէն (Համշեն), ընձիմէն (Նոր-Նախիջևան), ընձմըէն (Ուրմիա)։

Մի շարք բարբառներ բացառականը կազմում են սեռականից, օրինակ, Մարաշի բարբառ՝ «իմէ», Խարբերդ-Երզնկա՝ «իմընէ», Զեյթունի ենթաբարբառները՝ «իմէց», այսինքն՝ սեռականը «ում» ճյուղի վերջավորության հետ։ Սուչավայի բարբառը ըստ իր սովորության բացառականի վրա «զ» նախդիր է դնում և դարձնում է «զիմմե», Պոլիսը՝ «նձ» հնչյունները սղում է և փոխարինում «զ»-ով, այսինքն «ձ» աֆրիկատի բաղադրիչ մասով, որից և ստացվում է «իզմէ»։ Բոլորովին տարօրինակ է կազմում Վանի բարբառը, «ինձ» բառից թողնելով միայն «ձ» հնչյունը, վրան ավելացնում է մի շարք անծանոթ հնչյուններ և ապա «ից» բացառական վերջավորությունը և դարձնում «ձիգնից»—ինձնից։ «Ը» ճյուղի Արթվինի բարբառը ավելացնում է «իմէն» կամ «նիմէն» վերջավորությունը և դարձնում «ինձիմէն» կամ «ինձնիմէն»։ Ուրմիան գործածում է «ընձմէն»։

«Ը» ճյուղի երեք բարբառ բացառականը կազմում են անալիտիկ ձևով, տրական հոլովի հետ գործածելով մի առանձին բառ։ Կարճևանի բարբառը ավելացնում է «հէնի» բառը, Մեղրու բար-

բառն ավելացնում է «հէնից», իսկ Հադրութի բարբառը նըէստա» (Կարճևան՝ ինձ հէնի, Մեղրի՝ ինձ հէնից, Հադրութի բարբառ՝ ինձ նըէստա)։ Մոկաց բարբառը ավելացնում է «ինի» բառը, իսկ Մեղրու շրջանի Ագարակ գյուղը ավելացնում է «նա՛նի», օրինակ՝ սարին նա՛նի ա՛ կյ՛ծյիս—սարից է գալիս։ «Ո՛ւնդո՛ւր նա՛նի»—նրանից։

«Ում» ճյուղի Երևանի, Ագուլիսի, Ջուղայի և Աստրախանի բարբառներն ավելացնում են «ից» վերջավորությունը։ Ագուլիսի բարբառն ունի «ա՛նձա՛նից, իսկ մյուս բարբառները «ինձնից» կամ «ինձանից»։

Գործիական հոլովը համեմատաբար ավելի պարզ է․ «կը» ճյուղի բարբառների մեջ սովորաբար ավելանում է «օվ» վերջավորությունը նույն հիմքին, ինչ որ բացառականն է օգտագործում, օրինակ՝ ինձնօվ, ինձմօվ, ձիզնօվ (Վանի բարբառում)։ Զեյթունի բարբառն ավելացնում է «ծվ» (իմնծվ, ինձմծվ), Մարաշի ներթաբարբառը ու (իմու)։ Մի շարք բարբառներ գործիական ձևը կազմում են անալիտիկ սիստեմով, «հետ» բառով, այսպես, օրինակ, Սուչավայի բարբառը՝ ինձի հէտ, Ոզմին՝ խաձէյ, որ նշանակում են—ինձնով։

«Ս» ճյուղի բարբառներից Արթվինը կազմվում է «օվ» վերջավորությամբ (ինձնօվ), Շաղախը, Կարճևանը, Մեղրին և Հադրութը «անավ» կամ «ա՛նա՛վ» վերջավորությամբ․ օր. ինձա՛նա՛վ (Հադրութ), ինձէնա՛վ (Կարճևան), ինձա՛նավ (Մեղրի)։

Ուրմիայի բարբառն ունի «ընձըմով», Հավարիկի բարբառը (միջճյուղային բարբառ) գործածում է հաճախ միայն «օ»—«ինձնօ»։ Երևանի, Շամախու և Աստրախանի բարբառները գործ են ածում «ինձանօվ» ձևը։

Ներգոյական հոլով ունեն «Ում» ճյուղի բարբառները և «Ս» ճյուղի մի քանի բարբառներ, ուստի այդ հոլովի այլաձևություններ համարյա չկան․ Երևանի Շամախու և Աստրախանի բարբառները ունեն «ինձանում». Ջուղայի բարբառը «ինձնում», Թբիլիսիի բարբառը՝ «ինձանում», Շաղախի և Հադրութի բարբառները «ինձա՛նըմ», իսկ Ագուլիսի բարբառը՝ «ընձա՛նա՛մ»։

Հոգնակի ուղական հոլովը լինում է հետևյալ ձևերով․

1․ «Մէնք» (Երևան, Աստրախան, Կարին, Խարբերդ-Երզնկա, Պոլիս, Նոր-Նախիջևան)։

«Մենք» (Մուշ, Ջուղա)․

«Մենք՛» (Վան, Ուրմիա).

«Մինք» (Տիգրանակերտ, Զեյթուն, Մարաշ, Սուչավա, Թիֆլիս).
Մինք՛ (Մարաղա).
«Մէք» (Շամախի, Հավարիկ).
«Մէք՛» (Մեղրի).
«Մուք» (Հադրութ, Շաղախ).
«Մունք» (Ղարաբաղ).
«Միք՛» (Ագուլիս, Կարճևան)։
«Միք» (Համշեն)։

Սեռականը լինում է կամ «մէր», կամ «մեր», միայն՝ Մուշն ունի «մըր» ձևը, Ոզմին «մի» ձևը, Տիգրանակերտը և Թիֆլիսին՝ «միր» ձևը, Համշենը՝ կամ «միր» կամ «միյ», Զեյթունը՝ միայն «միր» ձևը։

Տրական հոլովը լինում է՝ «մէզ», «մէզի», «մեզ» «մէզիկ՛» (Ուրմիա), մէզիգի» (Համշեն), «միզ» (Թիֆլիս), «միզի» կամ մըզի (Խարբերդ-Երզնկա), մե (Վան), «մըզի» (Մուշ)։

Հայցական հոլովը տրականին նման է, բացի հետևյալ բարբառներից. «ըզմըզի» (Մուշ), «ըզմի» (Ոզմի), «ըզմիզ» (Զեյթուն), «միզնի» (Մարաշ), «սմէզ» (Սուչավա)։

Բացառական հոլովը եզակիի սկզբունքով է կազմվում և առանձին նորություններ չունի, նույնը և գործիական հոլովը։

Երկրորդ դեմքի դերանունը բարբառներում լինում է կամ «դու», կամ «դուն» (Թիֆլիսի, Համշենի, Պոլսի, Նոր-Նախիջևանի, Սուչավայի և Տիգրանակերտի բարբառներում. այս վերջինում «թուն» ձևով)։ Երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառներում լինում է՝ «տո̈ւ» կամ «տու», Ագուլիսի բարբառում դո̈ւ, դո̈ւէ; Ոզմիի բարբառում լինում է «դ՛ö», «դ՛ո̈ւ», Մարաղայի բարբառում՝ տո̈ւն։ «Ում» ճյուղի բարբառների մեծ մասում «դու» դերանունը հոդ չի ստանում։

Մարաշի ենթաբարբառում լինում է «դօն», նույնը և Զեյթունի բարբառում։

Սեռականը լինում է կամ «քօ», կամ «քու», կամ «քո» ձևով, ըստ որում որոշ բարբառներում ք-ն քմայնանում է, ինչպես օրինակ՝ Վանի, Ոզմիի, Մարաղայի և Ուրմիայի բարբառներում (ք՛օ, ք՛ո)։

Տրական հոլովը լինում է «քէզ», «քէզի», «ք՛եզի», «քըզի» (Մուշ) ձևերով, Վանն ունի «ք՛ե» ձևը, Ոզմին՝ «ք՛ի» ձևը, Կարճևանը և Շաղախը «ք՛ի» ձևը, նույնը և Հավարիկը։ Իսկ Մեղրունն է «ք՛իզ»։

Հայցական հոլովը նման է տրականին, միայն Զեյթունի

բարբառում լինում է «ըսքիղ», Մարաշի բարբառում՝ «ըսգի», Սուչավայի բարբառում «սքեղ», Մշո բարբառում «ըսքի» կամ «ըղքըղի», Ոզմիի բարբառում «ըղք'ի»։

Բացառականը կազմվում է առաջին դեմքի անձնական դերանվան պես, օրինակ՝ «քէզնէ» (Կարին), քէզմէ (Տիգրանակերտ, Պոլիս), քէզիմէն (Նոր-Նախիջևան, Արթվին), քէզնիմէն (Արթվին), քիզմէն (Թբիլիսի), ք'իզիմէն (Մարաղա), ք'էզըմէն (Ուրմիա), ք'եզնից (Վան), ք'ինէ, ք'իզնէ (Ոզմի), քուննէ (Խարբերդ-Երզնկա), ըղքումէ (Սուչավա), քիննէ (Մարաշ), քինէց (Զեյթուն), քիյա̈նա̈ (Շաղախ, Հավարիկ), ք'ի հէնի (Կարճևան), քիզ հէնից (Մեղրի), քըզա̈նա̈ (Հադրութ), քըզանա (Ղարաբաղ), քէզանա̈ (Շամախի)։

Գործիականը կազմվում է նույնպես առաջին դեմքի դերանվան նման, այսինքն՝ տրականի վրա ավելացրած համապատասխան վերջավորություն։ Ներգոյականը նույնպես։

Հոգնակի ուղղական հոլովը ունենում է «դ'ուք» (Կարին, Մուշ), «դուք» (Պոլիս, Նախիջևան), «տօք» (Զեյթուն), դէք (Մարաշ), «դունք» (Համշեն), «տյո̈ւք'» (Վան, Ուրմիա), տուք (Հադրութ, Ղարաբաղ), «դ'էք» (Ոզմի), դո̈ւք (Հավարիկ)։

Սեռականը լինում է՝ «ձէր» (Երևան) «ծիր» (Թբիլիսի), «ծէր» (Շամախի, Աստրախան), «ծեր» (Վան, Ուրմիա), «ձըր» (Մուշ), «ձիր» (Մարաշ), «ձիյ» կամ «ձիր» (Համշեն), «ծի» (Զեյթուն), «ձեր» (Սուչավա), «ծըէր» (Ղարաբաղ), «ծիր» (Մարաղա), «ձիր» (Ագուլիս)։

Տրական հոլովը լինում է «ձէզ (Երևան), «ձիզ» (Թբիլիսի Մեղրի, Կարճևան, Մարաշ) «ձէզի» (Կարին), ձէզի (Պոլիս, Ն. Նախիջևան, Համշեն, Արթվին). «ձիզի» (Խարբերդ-Երզնկա), ցէզի (Տիգրանակերտ, Ռոդոսթո), «դձըզի» (Մուշ), ձէզի (Սուչավա), «ձի» (Ոզմի), ծե (Վան, Ուրմիա, Խոյ) ,ծըզ (Շաղախ)։

Հայցական հոլովը նման է տրականին, բացի հետևյալ բարբառներից, որ ունեն «ըզձի», «ձի» (Ոզմիի բարբառ), «ձիզնի» (Մարաշի բարբառ), «ըզձի» (Զեյթունի բարբառ), ձիյս (Համշենի բարբառ), սձեզ (Սուչավայի բարբառ)։

Երկրորդ դեմքի դերանունը բացառական հոլովում առանձին նորություն չունի, բարբառների մեծ մասում այդ հոլովը կազմում է այնպես, ինչպես առաջին դեմքի դերանունը, այսինքն՝ տրական հոլովի վրա ավելացվում են՝ նէն, մէն, անա, ից

վերջավորությունները, գործիականը և ներգոյականը նույնպես նորություն չեն ներկայացնում, միայն Սուչավայի բարբառում գործիականը լինում է «ձ՛եզի հեդ», իսկ Ոզմիի բարբառում՝ «խաձի», որ=ձեզնով. այս նշանակում է, թե սեռական-տրականը «հետ» բառով նշանակում են գործիական։ Տալիս ենք անձնական դերանունների հոլովման հատընտիր օրինակ՝

Ե Զ Ա Կ Ի

	Երևան	Ղարաբաղ	Պոլիս	Վան
Ուղղ.	յէս	յէս	էս	յես
Ս.	իմ	իմ	իմ	իմ
Տր.	ինձ	ինձ	ընձի	ձի (ձիկ)
Հ.	ինձ	ինձ	իս, ընձի	ձի (ձիկ)
Բ.	ինձանից	ընձանա	իզմէ	ձիզնից
Գ.	ինձանով	ընձանավ	իզմով	ձիզնով
Ն.	ինձանըմ	ընձանըմ		

	Ոզմի	Մարաղ	Սուչավա	Ագուլիս
Ուղղ.	իս	իս	՛յէս	ես
Ս.	իմ	իմ	զիմ	ա̈մ
Տր.	ձ՛էյ, ընձէյ	իէս	ինձի	ա̈նձ
Հ.	ձը, ըզձը	յաս	զիս	ա̈նձ
Բ.	ընձնէ	իմնէ	զիմմէ	ա̈նձա̈նա̈
Գ.	խաձէյ	իմու̈	ինձի հէդ	ա̈նձա̈նա̈վ
Ն.	—	—		ա̈նձա̈նա̈մ

Հ Ո Գ Ն Ա Կ Ի

	Երևան	Ղարաբաղ	Պոլիս	Վան
Ուղղ.	մէնք	մունք	մէնք	մենք՛
Ս.	մէր	մըէր	մէր	մեր
Տր.	մէզ	մըէզ	մէզի	մե
Հ.	մէզ	մըէզ	մէզի	մե
Բ.	մէզանից	մըզանա	մէզնէ	մեզնից
Գ.	մէզանով	մըզանավ	մէզնով	մեզնով
Ն.	մէզանըմ	մըզանըմ		

	Ոզմի	Մարաղ	Սուչավա	Ագուլիս
Ուղղ.	մինք՛	մինք	մինք	միք՛
Ս.	մի	միր	միր	միր
Տր.	մի	միզ	մէզի	միզ
Հ.	զմի	միզնի	սմեզ	միզ

Բ.	*միղնէ, մինէ*	*միընէ*	*մըրմէ*	*միզմնից*
Գ.	*խամի*	*միընով*	*մերհեդ*	*միզմնով*
				մեզմնոմ

Ցուցական դերանուններ

Ցուցական դերանուններից բարբառներում գտնում ենք միայն սա, դա, նա *և* այս, այդ, այն*։*

Սույն, դույն, նույն *դերանունները բարբառներում չկան։* Սա, դա, նա *դերանունները չենք գտնում մի շարք բարբառներում (Ուրմիա, Մարաղա, Կարճևան, Մեղրի, Հադրութ, Համշեն և այլն)։ Դրան հակառակ՝* այս, այդ, այն *դերանունները կան բոլոր բարբառներում։* Սա, դա, նա *դերանունները Ագուլիսի բարբառում լինում են՝ սօ, դօ, նօ, Մարաշի բարբառում՝ ըսօ, ըդօ, ընօ։ Այս դերանունների իրենց հատուկ հոլովումը ունեն համեմատաբար քիչ բարբառներում, օրինակ՝ Երևանի, Թբիլիսիի, Շամախու, Պոլսի, Արթվինի։*

Երևանի բարբառը հոլովվում է գրականի նման, միայն՝ բացառական, գործիական և ներգոյական հոլովներում հոդ է ընդունում։ Թբիլիսիի բարբառը Երևանին նման է հոլովվում, միայն բացառականը լինում է «նրամէն, նրանցմէն» ձևով։ Շամախու բարբառը նույնպես նման է, բացառությամբ «նրանա, նրանցանա» ձևերից։ Հադրութի բարբառն ունի միայն ուղղական ձևը՝ «իզէն»։

Հոլովման պատկեր

	Շամախու բ.	Պոլսի բ.
	Եզակի	
Ուղղ.	*սա*	*սա*
Սեռ.	*սըրա*	*սըվօր*
Տր.	*սըրան*	*սըվօր*
Հ.	*սըրան*	*սըվիգա*
Բ.	*սըրանա*	*սըվգէ*
Գ.	*սըրանօվ*	*սըվօվ*
Ն.	*սըրանըմ*	
	Հոգնակի	
Ուղղ.	*սրանք*	*սավօնք*
Սեռ.	*սըրանց*	*սավօնց*
Տր.	*սըրանց*	*սավօնց*
Հ.	*սըրանց*	*սավօնք*
Բ.	*սըրանցանա*	*սավօնցմէ*
Գ.	*սըրանցանօվ*	*սավօնցմօվ*
Ն.	*սըրանցանըմ*	—

Ագուլիսի բարբառում լինում է հետևյալ կերպ.

Ուղղական՝ սո, սեռական՝ սրո, տրական՝ սրո, բացառական՝ սռա̈նից, սրոա̈նից, սրոճա̈նից, գործիական՝ սրա̈նա̈վ, սրոա̈նա̈վ, սռոհա̈նա̈վ, սռոնա̈վ, ներգոյական՝ սրոնա̈մ սրոա̈նա̈մ։

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ. սրունք. սեռակ. սռուց, տրական՝ սրուց, հայցական՝ սռուց, բացառական՝ սռուցա̈նից կամ սռուցճա̈նից, գործիական՝ սրուցա̈նա̈վ կամ սռուցճա̈նա̈վ, ներգոյական սրուցա̈նա̈մ կամ սռուցճա̈նա̈մ։

Սո, դո, նո, դերանունները հոլովվում են նաև հետևյալ կերպ. Ուղղ. սո, դո, նո. Սեռ. Տր. Հայց. հա̈տու̈ր, դա̈տու̈ր, նա̈տու̈ր. Բաց. հա̈տու̈ր (-ա̈ն,-հա̈ն) ից, դա̈տու̈ր (-ա̈ն,-հա̈ն) ից, նա̈տու̈ր (-ա̈ն,-հա̈ն) ից. Գործ. հա̈տու̈ր (-ա̈ն) ա̈վ, դա̈տու̈ր (-ա̈ն)ա̈վ, նա̈տու̈ր (-ա̈ն)—ա̈վ. Ներգ. հա̈տու̈ր (-ա̈ն) ա̈մ, դա̈տու̈ր (-ա̈ն) ա̈մ, նա̈տու̈ր (ա̈ն)—ա̈մ։ Հոգնակի. Ուղղ. հա̈տու̈ք, դա̈տու̈ք, նա̈տու̈ք, Սեռ., Տր. Հյց. հա̈տուց, դա̈տու̈ց, նա̈տու̈ց, Բաց. հա̈տու̈ցա̈նից, դա̈տուցա̈նից նա̈տու̈ցա̈նից. Գործ. հա̈տու̈ցա̈նա̈վ, դա̈տու̈ցանա̈վ, նա̈տուցա̈նա̈վ. Ներգ. հա̈տուցա̈նա̈մ դա̈տուցա̈նա̈մ, նա̈տուցա̈նա̈մ։

Այս օրինակներից երևում է, որ բարբառների հոլովումը կազմվում է սեռական հիմքով, որ է նռա, գրբ. նորա, որին ավելանում է ն հոդը և դառնում տրական՝ նռան, որ և դառնում է հիմք մյուս բոլոր եզակի և հոգնակի հոլովների համար։

Բոլորովին ուրիշ սկզբունքով է կազմում դերանվան հոլովումը Արթվինի բարբառը, որն իբրև հիմք վերցնում է գրաբարի տրական հոլովը՝ նմա և ապա կազմում մյուս հոլովները։

Ուղղական՝ նա, սեռական՝ նմա, տրական՝ նման, հայցական՝ նման, բացառական՝ նմամէն, գործիական՝ նմանով։

Հոգնակի ուղղակ. նանք, սեռական՝ նմանց, տրական՝ նմանց, հայցական՝ նմանց, բացառական՝ նմանցէմէն, գործիական՝ նմանցով։

Պոլսի բարբառը, ինչպես վերը տեսանք, նույնպես տարբեր է կազմում. գրաբարյան սորա ձևի տեղ ունի սվոռ ձևը, այսինքն՝ կորցնում է վերջին ա-ն. հետո ո հնչյունի շրթնայնացումը ուժեղացնում է, որից և ստանում և սվոռ ձևը։

էս, էդ, էն, դերանունները, որոնք այս, այդ, այն դերանուններն են, կան բոլոր բարբառների մեջ, մեծ մասամբ հենց էս, էդ, էն, ձևով. այդ դերանունների է-ն փոխարինում է գրաբարի այ երկբարբառին։

Որոշ բարբառներում այ *երկբարբառը պարզանալով դարձել է* ա *և ստացվել* աս, ադ, ան *(Պոլիս, Ռոդոստո, Նոր-Նախիջևան, Սուչավա, Ոզմի, Ագուլիս, Կարճևան) կամ* ա̈ս, ա̈դ, ա̈ն *(Տիգրանակերտ, Զեյթուն, Մեղրի)։ Կարնո բարբառում լինում է* իսի, իտի, ինի, *իսկ Վանի բարբառում՝* ես, եսա, եսիկ. ետ, ետա, ետիկ, են, ենա, ենիկ։ *Տիգրանակերտի բարբառում նաև՝* ըսի, ըսիգի, ընի, ը̣նիգի. *Տիգրանակերտի բարբառն* այդ *դերանունը չի գործածում։ Նոր-Նախիջևանի բարբառում լինում է նաև* իսանը, իդանը, *Համշենի բարբառում նաև* իսա, իդա, ինա։

Սեռական և մյուս հոլովները «ում» ճյուղի բարբառներում ստանում են ա *հնչյունը և ավելացնում* ուր, ու *և այլ վերջավորությունները։*

Հ ո լ ո վ մ ա ն   ա ղ յ ո ւ ս ա կ ը

Ե զ ա կ ի

	Երևան			Թբիլիսի		
Ուղ.	*էս*	*էտ*	*էն*	*էս*	*էտ*	*էն*
Սեռ.	*ըստուր*	*ըտուր*	*ընդուր*	*էստու*	*էտու*	*էնդու*
Տր.	*ըստուր*	*ըտուր*	*ընդուր*	*էստու*	*էտու*	*էնդու*
Հ.	*էս,*	*էտ,*	*էն,*	*էս,*	*էտ,*	*էն,*
	ըստուր	*ըտուր*	*ընդուր*	*էստու*	*էտու*	*էնդու*
Բաց.	*ըստուց*	*ըտուց*	*ը̣նդուց*	*էստումէն*	*էտումէն*	*էնդումէն*
Գոր.	*ըստօվ*	*ըտօվ*	*ընդօվ*	*էստօվ*	*էտօվ*	*էնդօվ*
Ներգ.	*ըստում*	*ըտում*	*ընդում*	*էստում*	*էտում*	*էնդում*

	Ղարաբաղ			Աստրախան		
Ուղղ.	*էս*	*էտ*	*էն*	*էս*	*էտ*	*էն*
Սեռ.	*ըստրա*	*ըտրա*	*ընդրա*	*էստուր*	*էստուր*	*էնդուր*
Տր.	»	»	»	»	»	»
Հայց.	»	»	»	»	»	»
Բաց.	*ըստրանա*	*ըտրանա*	*ընդրանա*	*էստուց*	*էտուց*	*էնդուց*
Գործ.	*ըստրանավ*	*ըտրանավ*	*ընդրանավ*	*էստօվ*	*էտօվ*	*էնդօվ*
Ներգ.	*ըստրանում*	*ըտրանում*	*ընդրանում*	*էստում*	*էտում*	*էնդում*

	Ջուղա		
Ուղղ.	*էս*	*էտ*	*էն*
Սեռ.	*ստուր*	*տուր*	*ընդուր, նուր*
Տր.	*ստուր*	*տուր*	*ընդուր, նուր*
Հայց.	»	»	» »
Բաց.	*ստուց*	*տուց*	*ընդուց, նուց*
	ստուցից	*տուցից*	*ընդուցից*
Գործ.	*ստօվ, ստուցօվ, սօվ*	*տուցօվ, տօվ*	*ընդուցօվ, նուցօվ*

Հ ո գ ն ա կ ի

Երևան

Ուղղ.	ըստոնք	ըտոնք	ընդոնք
Ս.	ըստոնց	ըտոնց	ընդոնց
Տ.	»	»	»
Հ.	»	»	»
Բ.	ըստոնցից	ըտոնցէց	ընդոնցից
Գ.	ըստոնցօվ	ընտոնցօվ	ընդոնցօվ
Ն.	ըստոնցում	ըտոնցում	ընդոնցում

Թբիլիսի

Ուղղ.	էստունք	էտունք	էնդունք
Ս.	էստունց	էտունց	էնդունց
Տ.	»	»	»
Հ.	»	»	»
Բ.	էստունցմէն	էտունցմէն	էնդունցմէն
Գ.	էստունցմօվ	էտունցմօվ	էնդունցմօվ
Ն.	էստունցում	էտունցում	էնդունցում

Ղարաբաղ

Ուղղ.	սհանք[1]	դհանք[1]	նհանք[1]
Ս.	սհանց	դհանց	նհանց
Տ.	»	»	»
Հ.	»	»	»
Բ.	սհանցանա	դհանցանա	նհանցանա
Գ.	սհանցանավ	դհանցանավ	նհանցանավ
Ն.	սհանցանըմ	դհանցանըմ	նհանցանըմ

Աստրախան

Ուղղ.	էստունք	էտունք	էնդունք
Ս.	էստուընէրի	էտուընէրի	էնդուընէրի
Տ.	»	»	»
Հ.	»	»	»

[1] Այդ ձևերի փոխարեն գործածվում է նաև ըստրանf, ըտրանf, ընդրանf, ըսsրանց, ընդրանց. ըտրանց, ըստրանցանա, ըտրանցանա, ընդրանցանա և այլն, կամ՝ ըստիանf, ըտըիանf, ընդըիանf և այլն

Բ.	*էստուրնէրից*	*էտուրնէրից*	*էնդուրնէրից*
Գ.	*էստուրնէրով*	*էտուրնէրով*	*էնդուրնէրով*
Ն.	*էստուրնէրում*	*էտուրնէրում*	*էնդուրնէրում*

Ագուլիսի բարբառում լինում է՝ ուղղ. ա̈ս, ա̈տ. ա̈ն *սեռ.* ա̈ստուր, ա̈տուր, ա̈նուր, *տր.* ա̈ստուր, ա̈տուր, ա̈նուր, *հայց.* ա̈ստուր, ա̈տուր, ա̈նուր, *բաց.* ա̈ստուրանից, ա̈տուրանից, ա̈նդուրանից, *գործ.* ա̈ստուրանավ *կամ՝* ա̈սավ, ա̈տուրանավ *կամ՝* ա̈տավ ա̈նդուրանավ *կամ՝* ա̈նավ. *ներգ.* ա̈ստուրանամ, ա̈տուրանամ, ա̈նդուրանամ։ *Հոգնակի ուղղ.*, ա̈ստունք, ա̈տունք, ա̈նդունք, *ս. տր. հ.* ա̈ստուց ա̈տուց, ա̈նդուց, *բաց.* ա̈ստուց *(-ան)ից*, ա̈տուց *(-ան)ից*, ա̈նդուց— *(-ան)ից*, *գործ.* ա̈ստուցավ *(-անավ)*, ա̈տուցավ *(-անավ)*, ա̈նդուցավ *(-անավ)*, *ներգ.* ա̈ստուցամ *(-անամ)*, ա̈տուցամ, *(-անամ)*, ա̈նդուցամ *(-անամ)*։

«Կը» ճյուղի բարբառները ցուցական դերանունների հոլովված ձևերի մեջ ս-ն չեն ունենում։

Մեր կարծիքով այդ ս-ն առաջ է եկել այն պատճառով, որ նախ հոլովվել է «այդ» դերանունը և ապա նրա վրա ավելացել են այս, այդ *և* այն *դերանունների ու կազմել հոլովում, այսինքն՝*

էտ, տուր, տուց, տով, տում, ապա՝

էս+տուր=էստուր, էս+տուց=էստուց, էս+տով=էստով, էս +տում=էստում։

էնտուր=էն+տուր կամ էնդուր, էն+տուց=էնդուց, էն+տով =էնդով, էն+տում=էնդում։

Այդ բոլորից ստացվում է՝ է̈ստուր *կամ* է̈ստու, է̈ստուց, է̈ստով է̈ստում։

էնտուր կամ էնդուր կամ էնդու (ր-ի կորուստ), էնդուց, էնդով, էնդում։

Եթե է-ն վերածվի ը-ի, կստացվի ըստուր, ըստուց, ըստով ըստում. *ընդուր, ընդուց, ընդով, ընդում։*

Ղարաբաղի բարբառի ըստրա, ըտրա, ընդրա *ձևերը կազմվել են նույն եղանակով։ Երկրորդ դեմքի* տրա, տրան, տրանա, տրանավ, տրանում *ձևերին ավելացել են* է̈ս *(ըս), էտ (ըտ), էն (ըն) դերանունները և ստացվել են՝ էս+տրա=էստրա կամ ըստրա, էս+տրան=էստրան կամ ըստրան։*

էն+տրան=էնտրան> էնդրան> ընդրան։

էս+տրանա=էստրանա > ըստրանա։

էն+տրանա=էնդրանա > ընդրանա։

էս+տրանավ=էստրանավ > ըստրանավ։

էն+տրանավ=էնդրանավ > ընդրանավ։
էս+տրանըմ=էստրանըմ > ըստրանըմ։
էն+տրանըմ=էնտրանըմ > ընդրանըմ։

«Կը» ճյուղի բարբառների ցուցական դերանունների հոլովումը կազմվում է համեմատաբար միօրինակ։ Սեռական հոլովում դերանվան ուղղական ձևի վրա ավելանում է կամ «օր» վերջավորությունը (Պոլիս, Ն. Նախիջևան, Կարին, Մուշ) կամ «որ» (Վան), կամ «ուր» (Տիգրանակերտ), կամ նույնիսկ «ու» (Համշէն)։ Զեյթունի բարբառում սեռականում լինում է «ուց» վերջավորություն, Մարաշում՝ «ուր»։ Բոլորովին տարբեր է կազմում սեռականը Սուչավայի բարբառը. սեռականում այդ բարբառն ունենում է «արա» վերջավորության ցուցական դերանունների համար, այնուհետև այդ վերջավորությունը դարձնում է հիմք մինչև գործիական հոլովը. հոգնակիում լինում է «սաքա», «դաքա», «նաքա», որոնց «ք»-ն մյուս հոլովներում փոխարինվում է ց-ով (դ'ացա)։ Հոգնակիում դերանունները ենթարկվում են «ց» հոլովման։ Թե եզակի և թե հոգնակի բացառականում ունենում են «մէ», «մէն» վերջավորություն, գործիականում «օվ» վերջավորություն. Պոլսի բարբառը բացառականում ունենում է ասգէ, ադգէ անգէ *ձևերը, Զեյթունի բարբառն ունենում է սեռականում էց > ից վերջավորություն, գործիականում «öվ» վերջավորություն։ Մարաշի ենթաբարբառն ունենում է բացառականում «էմ», գործիականում «ու» վերջավորությունները։ Ոզմինի սեռականում և մյուս հոլովներում «ու» ձայնավորի դիմաց ունենում է «օւ» երկբարբառը։*

«Կը» ճյուղի ցուցական դերանունների հոլովման պատկերը

Ե զ ա կ ի

	Կարին	Վ ա ն	Պոլիս
Ուղղ.	*ինիկ*	*էն, էնա, էնիկ*	*ան*
Սեռ.	*ինօր*	*ինոր*	*անօր*
Տր.	*ինօր*	*ինոր*	*անօր*
Հայց.	*ինիկ*	*էն, էնա, էնիկ*	*ան*
Բաց.	*ինօրէն* *ինօրմէն*	*ինորմից*	*անդէ*
Գործ.	*ինօրօվ, ինօրմօվ*	*ինորմօվ*	*անօվ*

	Ոզմի	Տիգրանակերտ	Համշեն
Ուղղ.	ան	ա̈ն, ընի, ընիգի	էն, ինա
Սեռ.	անօւր, նանօւր	ընուր	էնու, էնու
Տր.	անօւր, նանօւր	ընուր	»
Հայց.	զանէկ	ա̈ն, ընի, ընիգի	էն, զըն
Բաց.	օնմընէ	ընուրմէ, ընուրմէնց	էնդի, ընդի ընդօրմէն
Գործ.	օնօվ, օնօ խէյտ	ընուրմով	էնու հիդ

	Ջեյթուն	Մարաշ	Սուչավա
Ուղղ.	ա̈ն	էն, ընօ	ան
Սեռ.	ծ̈նո̈ւց	ընո̈ւր	նարա
Տր.	»	»	նարա
Հայց.	զա̈ն	»	ան
Բաց.	էնէգէց	ընիգէմ	նարամէն
Գործ.	ծ̈նո̈ւգծ̈վ	ընիգո̈ւ	նարա հէդ

Հ ո գ ն ա կ ի

	Կարին	Վան	Պոլիս
Ուղղ.	ինօնք	իսոնք'	անօնք
Սեռ.	ինօնց	իսոնց	անօնց
Տր.	»	»	»
Հայց.	ինօնք	իսոնք'	անօնք
Բաց.	ինօնցէն ինօնցմէն	իսոնցից	անօնցմէ
Գործ.	իննօնցօվ ինօնցմօվ	իսոնցօվ	անօնցմօվ

	Ոզմի	Տիգրանակերտ	Համշեն
Ուղղ.	անօւնք նանօնք	ընունք	էնիր, ինա
Սեռ.	անօւնց նանօնց	ընունց	էնուց, ինու
Տր.	»	»	»
Հայց.	անօւնք, նանօնք	ընունք	էնիր, ինիր, զէնիր
Բաց.	անօւնցմնէ	ընունցմէ	էնուցմէն ինուցմէն

Գործ.	անօւնց խէյտ	ընունցմօվ	էնուցմօվ

	Զեյթուն	Մարաշ	Սուչավա
Ուղղ.	էնիյ	ընինք, ո̇ւնո̇ւնք	դաքա, ադօնք
Սեռ.	ծնո̇ւնց	ընո̇ւնց	դացա
Տր.	»	»	»
Հայց.	զէնիյ	ընինք, ո̇ւնո̇ւնք	դաքա
Բաց.	ծնո̇ւնցնէ	ընո̇ւնցմէ	դացամէ
Գործ.	ծնո̇ւնցմօվ	ընո̇ւնցմո̇ւ, ո̇ւնո̇ւնցմո̇ւ	դացա հէդ

Հարցական դերանունները նույնպես որոշ հետաքրքրություն ներկայացնում են։ «Ով» բառը զանազան բարբառներում զանազան տեսակ է արտասանվում։ Կարնո բարբառում ասվում է «վէվ», Համշենի բարբառում՝ «վօվ», Զեյթունի խոսվածքում՝ «ո̇ւվ», Վանի բարբառում՝ «վուէվ», Տիգրանակերտի բարբառում՝ «վօվ»։ Մյուս հոլովներում հետաքրքրական է Վանի բարբառը, որ ունենում է վիր, վիրնից, վիրնօվ, *հոգնակին՝ վուրոնք, վուրոնց, -ից, -ցմօվ, ապա Տիգրանակերտի բարբառը, որ ունենում է* վօրու, վօրմը, վօրմենի, *հոգնակիում՝* վօվեր, վօվէրուն, վօրօնցմենէ, *Կիլիկայի բարբառը, որ ունենում է՝ օմ, օմը, զիվ, ումնէց, օմ հէդ։*

Այս բարբառում հետաքիր է նաև «ինչ» դերանունն ու իր հոլովումը, որ լինում է չիյէ, *չէյքու, չիյքէն, չո̇ւնք։*

«Կ» ճյուղի բարբառները և «ս» ճյուղից Ուրմիայի բարբառը իրենց հոլովումը կազմում են նույն սկզբունքով, ինչ որ «ում» ճյուղի բարբառները։ Այդ բարբառներում բացակայում է «էս» դերանունը, մնում է «էտ» և «էն», որոնցից «էդ» գործ է ածվում նաև «էս» դերանվան փոխարեն, «էտ» դերանվան սեռականը լինում է «տա̈ր», իսկ «էն» դերանվան սեռականը լինում է «դա̈ր»։ Այդ վերջինս կազմված է «ում» ճյուղի բարբառների նման, այսինքն «էտ» դերանվան հոլոված ձևերի վրա ավելանում է «էն» դերանունը և ստացվում է «էնդա̈ր» կամ «ընդա̈ր». ։-ն ձայնեղանում է ն ունդայինի պատճառով և հետո ն-ն դուրս է ընկնում, մնում է «դա̈ր», ճիշտ այնպես, ինչպես այս բարբառի

«ընձի» ձևը Վանի բարբառում դառնում է «ձի», որովհետև «ըն» դուրս է ընկնում։ Մարաղայի բարբառի հոլովումը մի քիչ տարբեր է կազմում։

Ե զ ա կ ի

	Ուրմիա		Մարաղա	
Ուղղ.	էտ	էն	էտ	էն
Սեռ.	տա̈ր	դա̈ր	տա̈ր	նա̈ր, ընդա̈ր
Տր.	տա̈րա̈(ն)	դա̈րա̈(ն)	տա̈րա̈(ն)	նա̈րա̈ (ն), ընդա̈րա̈(ն)
Հայց.	էտ, »	էն, »	»	»
Բաց.	տա̈րմէն	դա̈րմէն	տա̈րմէն	նա̈րմէն, ընդա̈րմէն
Գործ.	տա̈րմօվ, տա̈րօվ	դա̈րմօվ դա̈րօվ	տա̈րմօվ	նա̈րմօվ, ընդա̈րմօվ

Հ ո գ ն ա կ ի

Ո ւ ր մ ի ա

Ուղղ.	տա̈նք՛	տա̈նք՛
Սեռ.	տա̈նց (տա̈ս)	դա̈նց (դա̈ս)
Տր.	տա̈նցա̈ (ն)	դա̈նցա̈ (ն)
Հայց.	»	»
Բաց.	տա̈սմէն, տա̈նցէն	դա̈սմէն, դա̈նցէն
Գործ.	տասմօվ, տա̈նցօվ	դա̈սմօվ, դա̈նցօվ

Մ ա ր ա ղ ա

Ուղղ.	տա̈նք՛	նանք՛	ընդա̈նք՛
Սեռ.	տա̈նց (տա̈ս)	նա̈նց (նա̈ս)	ընդա̈նց (ընդա̈ս)
Տր.	տա̈նցա̈ (ն)	նա̈նցա̈ (ն)	ընդա̈նցա̈ (ն)
Հայց.	»	»	»
Բաց.	տա̈սմէն	նա̈սմէն, նա̈նցէն	ընդա̈սմէն, ընդա̈նցէն
Գործ.	տա̈սմօվ	նա̈սմօվ, նա̈նցօվ	ընդա̈սմօվ, ընդա̈նցօվ

Ուրմիայի բարբառում հետաքրքրական է նաև «մէնէն» ձևը, որ նշանակում է «իրենից»։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Հայերենի բարբառների խոնարհումը կատարվում է աշխարհաբարի քերականության մեջ ընդունված բոլոր եղանակներով՝ սահմանական, ըղձական, պայմանական հարկադրական և հրամայական։ Բարբառների մեծ մասը ունեն համարյա բոլոր ժամանակները, միայն որոշ բարբառներում բացակայում են անցյալ կատարյալի ձևերը, որ փոխարինվում են վաղակատարի ձևերով։ Սահմանական եղանակի ներկա ժամանակը ունեն բոլոր բարբառները, այդ ժամանակի կազմության տարբերությունը որոշվում է այն ճյուղով, որին պատկանում է տվյալ բարբառը։ «Ում», «Լ» և «Ս» ճյուղերի բարբառները ներկան կազմում են դերբայով և օժանդակ բայի ձևերով, իսկ «Կը» ճյուղի բարբառները ներկան կազմում են գրաբարի ձևերով կամ աշխարհաբարի ըղձական եղանակի ապառնի ժամանակի ձևերով, ավելացնելով դրան «կը» մասնիկը։

Օրինակ՝ գըրում եմ, գըրէլիս իմ, կըրէլ եմ, կըգըրէմ։

Միևնույն ճյուղի բարբառները ներկա ժամանակը կազմելով միևնույն եղանակով, միմյանցից տարբերվում են կամ օժանդակ բայերի արմատի փոփոխությամբ և կամ դերբայի կամ խոնարհվող բայի վերջավորության փոփոխությամբ, կամ էլ հնչյունական սիստեմի ընդհանուր տարբերությամբ առաջացած զանազանությամբ։

Անորոշ դերբայը բարբառներում ունենում է «էլ», «ալ», «իլ» վերջավորություններ, որ մի առանձին նորություն չի ներկայացնում։ Միայն Համշենի բարբառում այդ դերբայն ունենում է «ուշ» վերջավորության. օրինակ՝ եշթուշ> երթալ, գուշթուշ> կարդալ, խօսուշ> խօսել։ Հավանական է, որ «ուշ» վերջավորությունն առաջացել է «ուլ» վերջավորությունից «ուր» ձևի վրայով (թողուլ> թողուշ)։

Խոնարհումը բարբառներում բազմաթիվ տարբերակներ ունի. այդ տարբերակներն այնքան շատ են, որ միանգամից ընդգրկելը հնարավոր չէ։ Երբեմն տարբերություններն այնպիսին են, որ թվում է, թե բարբառով չէ, այլ բոլորովին մի ուրիշ լեզվով է։ Օրինակ, ի՞նչ պիտի հասկանան հայերը հետևյալ նախադասություններից։

Մօրդիկ՛ նէլխըն նէլ (Ագուլիսի բարբառ)—մարդիկ գալիս էին։

Իս մալլա ցում լէ (Կարճևանի բարբառ)—ես պիտի տեսնեի։

Եթե թարգմանություն չլինի, այդ նախադասությունները չեն հասկանա հայերից և ոչ մեկը, բացի նրանցից, որոնք խոսում են այդ բարբառներով։

Ձևաբանության մեջ ոչ մի կատեգորիա այնքան նշանակություն չունի, որքան բայը. քանի որ բայով է ձևավորվում նախադասությունը, ուրեմն բայի միջոցով է ձևավորվում արտահայտած միտքը կամ հասկացվում այդ միտքը, ուստի շատ հաճախ ամբողջ նախադասությունը դառնում է անհասկանալի, երբ չի հասկացվում բայը։

Ասացինք, որ հիմնական տարբերությունները բայերի խոնարհման մեջ երևան են գալիս ներկա ժամանակում։ Դրա հետևանքով էլ բարբառները այդ ներկա ժամանակով խմբավորվում են ըստ ճյուղերի։

Ներկա ժամանակը սովորաբար ցույց է տալիս, որ խոսողը կամ նախադասության ասողը կամ ինքն է գործողության ընթացքի մեջ և կամ նա, ում մասին, որ խոսում ենք, ուրիշ կերպ ասած՝ Ներկա ժամանակը ցույց է տալիս, որ ենթական գործողությունը կատարում է խոսելու վայրկյանին, *կամ* խոսելու վայրկյանին գործողությունը սկսվել է և ընթացքի մեջ է։

Այդ իմաստն արտահայտելու համար սովորաբար զանազան լեզուներ զանազան միջոցների են դիմում։

Թեքական լեզուները ներկան արտահայտելու համար մշակած ունեն հատուկ վերջավորություններ։ Նույնպիսի վերջավորություններ մշակել են նաև այլ ժամանակներ արտահայտելու համար (անցյալ, ապառնի և այլն)։ Լեզվաբանությունն ասում է, որ այդ վերջավորություններն առաջացել են առանձին բառերից, ուրեմն ամբողջ բայի կազմությունը եղել է բառերից կազմված նախադասությունը, որի մեջ եղել է բայը արմատական իմաստով, էական բայը և դերանունը։ Որոշ լեզուներ արտահայտել են ուղղակի բայարմատով և դերանվան միջոցով։ Օրինակ՝ ուզբեկերեն լեզուն իր ներկան կազմել է բայի արմատից, ասպես, ket *և* mən, sən, miz, siz *դերանուններից.* ketəmən, ketemiz—*գնում եմ, գնում ենք։*

Թուրքերեն լեզուն վարվել է նույնպես։

Հայերեն լեզուն էլ նույնպես խոնարհումը կազմել է բառարմատով, էական բայի արմատով և ապա դերանունով, միայն, ի տարբերություն մյուսների, ընտրել է դերանվան սեռական հոլովը ուղղականի փոխարեն, օրինակ.

գրել էի=գրեալ է ի(մ)
գրել էր=գրեալ է (իւ)ր

Այսպիսով ներկան կազմելու համար լեզվի զարգացման սկզբնական շրջանում ավել է ամբողջ նախադասություն, հետագայում այդ նախադասության էական մասը, բայարմատը մնացել է իբրև բայահիմք, իսկ էական բայերն ու դերանունները դարձել են նրա համար վերջավորություններ։ Հայերենի բարբառները ներկան կազմել են նույն եղանակով, բայց տարբեր բառերով և տարբեր եղանակներով, դրա հետևանքով էլ ստացվել են ներկա ժամանակի կազմության տարբեր ձևեր։

«Ում» ճյուղի բարբառները ներկան կազմում են «ում» վերջավորություն ունեցող անկատար դերբայով և օժանդակ բայով։

«Ում» վերջավորություն ունեցող անկատար դերբայը իսկապես բայարմատի ներգոյական հոլովի կազմությունն է, այսինքն գրում, լսում, խոսում *նշանակում է* գրի մեջ, լսի մեջ, խոսի մեջ։

Հետևաբար անկատար դերբայի «ում» վերջավորությունը այլ բան չէ, բայց եթե ներգոյական հոլովի «ում» վերջավորությունը։

Դրա ամենահիմնական և անհերքելի ապացույցն այն է, որ «ում» վերջավորությամբ դերբայ *ունեն բոլոր* այն բարբառները, *որոնք միաժամանակ ունեն նաև* ներգոյական հոլով։ *Այսպես՝* ում *ճյուղին պատկանող հայերենի բարբառները՝ Երևանի, Շամախու, Թբիլիսիի, Ագուլիսի, Ղարաբաղի, Հաշտարխանի և Ջուղայի, ունեն նաև ներգոյական հոլով։*

Դրան հակառակ շատ բարբառներ, որոնք ներգոյական հոլով չունեն, չգիտեն նաև «ում» վերջավորություն ունեցող անկատար դերբայը։

Այդ նշանակում է, թե «ում» վերջավորություն ունեցող անկատար դերբայով ներկա ժամանակ կազմող բարբառները ներկա ժամանակն արտահայտելու համար կազմում են մի ամբողջ նախադասություն։

Գրում եմ *նշանակում է՝ ես* գրի մեջ եմ *(բառացի) կամ* ես գրելու ընթացքի մեջ եմ, *նույնպես և*

Գրում ես, գրում է *նշանակում են՝* դու գրի մեջ ես, նա գրի մեջ է, *այսինքն՝* դու գրելու ընթացքի մեջ ես, նա գրելու ընթացքի մեջ է։ *Այսպիսով անկատար դերբայով («ում» վերջավորություն ունեցող) ներկա ժամանակ կազմող բարբառներն իրենց ներկայի ձևով ասում են մի ամբողջ նախադասություն, որի հիմնական միտքն է՝* ենթական գտնվում է գործողության ընթացքի մեջ, *ըստ որում գործողության գաղափարն արտահայտում են բա-*

յիմաստով, բայիմաստի հոլովված ձևով, Ներգոյական հոլովով։ Իհարկե, այժմ արդեն անկատար դերբայի կազմությունը բարբառախոսի լեզվական մտածողության մեջ այլևս չի նշանակում գործողության մեջ, այլ նշանակում է պարզապես ներկա ժամանակ, սակայն մակբայական գործածությամբ դեռ այժմ մի շարք բարբառներում արտահայտվում է նույն ձևով գործողության մեջ լինելը, օրինակ՝

Գրում ժամանակ (Երևանի բարբառ)—գրելու ընթացքի մեջ լինելու ժամանակ։

Դեր գալումը (Արթվինի բարբառ)—ներս գալու ընթացքի մեջ լինելու ժամանակ

Հետևաբար բոլորովին անժխտելի է և մեկառմիշտ ապացուցված պետք է համարել, որ գրական լեզվի անկատար դերբայի «ում» վերջավորությունը հայերենի ներգոյական հոլովի վերջավորությունն է։

Այդ «ում» վերջավորությունը դերբայում երևան է գալիս տրական հոլովում ածականների կամ դերանունների մեջ հատկապես այնպիսի ժամանակ, երբ այդ տրականն ունի «ի» նախդիր և նշանակում է մեջ. օրինակ՝

Ի միում աւուր— մի օրում։

«Ում» վերջավորությունը բարբառների մեջ զանազան փոփոխություններ է կրում շեշտի տեղափոխության հետևանքով։ Այսպես օրինակ՝ Երևանի և Ղարաբաղի բարբառում վերածվում է «ըմ» ձայնավորի, ինչպես սովորական է հայերեն լեզվի մեջ, զանազան խոսվածքներում և բարբառներում՝ ամ, ո̇ւմ, իմ և այլն. օրինակ գըրըմ էմ (Երևանի բարբառ), կ՚իրըմ ըմ (Ղարաբաղի բրբ.) կ՚իրամ ամ (Շամախու բրբ.), կիրիմ իմ (Ագարակի խոսվածք, Մեղրու շրջանի) կ՚ո̇ւրո̇ւմ ո̇ւմ (Սրաշեն գյուղ, Կապանի շրջան) և այլն։

Վերջին փոփոխությունները տեղի են ունեցել բարբառի ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն. այսպես օրինակ՝ Շամախու բարբառում օժանդակ բայի առաջին դեմքն է ամ և դրա հետևանքով էլ բայի վերջին վանկը դառնում է ամ (կիրամ ամ)։ Ագարակի խոսվածքում օժանդակ բայի առաջին դեմքն է իմ, դրա հետևանքով դերբայն ունենում է կիրիմ ձևը։

Դրան հակառակ Սրաշենի խոսվածքում օժանդակ բայը և արմատի առաջին ձայնավորն է ներդաշնակում դերբայի վերջավորության հետ, որի հետևանքով ստացվում է՝ կ՚ո̇ւրո̇ւմ ո̇ւմ։

Բոլորովին առանձին է Ջուղայի բարբառը, որի մեջ չեզոք

և կրավորական բայերի դերբայը վերջանում է ման մասնիկով՝ գօլման—գալիս, ալրման—ալրում, սիրման—սիրում, իսկ ներգործական բայերի վերջավորությունը լինում է ում։

Ընդունված է, որ ան վերջավորությունը առաջացել է ումն գոյական կազմող ածանցից, որի տրականը կլինի՝ գըրման, որ «ի» նախադիրով կլինի «ի գրման» և կստացվի՝ փրի կամ փրելու մեջ։ Մեր բարբառներից մեկը, Հավարիկի բարբառը, ում ներգոյական վերջավորությունն ավելացնում է անորոշ դերբայի վրա, որ մի նոր ապացույց է այդ վերջավորության նույնությանը ներգոյականի վերջավորության հետ. օրինակ՝ գըրէլում էս, գըրէլում է, փ՛ա՛րդալում էս, փ՛ա՛րդալում է (Հավարիկ)։

Այսպիսով «ում» ճյուղի բոլոր բարբառներն իրենց ներկան կազմում են միատեսակ եղանակով, ասում են մի ամբողջ նախադասություն, արտահայտում են մի միտք և այդ միտքը, այդ նախադասությունն արտահայտում է բայի ներկա ժամանակը։ Դա լեզվական մտածողության հնագույն ձևերից է, հնագույն եղանակներից է։

«Ում» ճյուղի նման ներկա ժամանակը կազմում են մի ամբողջ նախադասության միջոցով նաև «Լ» և «Ս» ճյուղի բարբառները։

«Լ» ճյուղի բարբառներում ներկան լինում է.

Կըրիլ իմ (Մարաղայի բարբառ)—գրում եմ.

Կըրէլ եմ (Խոյի բարբառ)—գրում եմ։

«Լ» վերջավորություն ունեցող այս դերբայը հայերեն լեզվի անորոշ դերբայն է, որ բոլոր բարբառներում միատեսակ վերջավորություն ունի, բացի Համշենի բարբառից, որի մեջ անորոշ դերբայը կազմվում է «ուց» ընդհանուր վերջավորությամբ.

գաօրուց—կարդալ, էշթուշ—երթալ, գրուց—գրել, խօսուց—խոսել։

Այս «Լ» ճյուղում ևս ներկա ժամանակ կազմելու համար օգտագործվող անորոշ դերբայը վերածված է ներգոյական հոլովի իմաստով ձևի, ուստի կրել եմ նշանակում է ի գրել եմ, այսինքն գրելու մեջ եմ։ Հայտնի է, որ ժամանակակից գրական լեզուները, ինչպես մեր բարբառները, «ի» նախդիրը չունեն։ Այն բոլոր բարբառները, որոնք ներգոյական հոլով կազմելու վերջավորություն չունեն, այդ ներգոյական հոլովը արտահայտում են կամ սեռականով և «մեջ» հետադրությամբ (գաօդին մէջ, ցա՛ծցը մէչա՛),

կամ էլ ուղղակի հայցական հոլովով, որ նման է ուղղականին, օրինակ՝

—Բաբան տունն ի՞ (հայրիկը տանն է)—Ուրմիայի բարբառ։

—Չէ, էք՛ին ի (ոչ, այգում է)։

Ինչպես տեսնում ենք, հայցականը գործածվում է իբրև ներգոյական։

Հետևաբար կարդալ եմ, կըրել եմ նշանակում են՝ կարդալու մեջ եմ և գրելու մեջ եմ։ Միջին հայերենում հանդիպում ենք «Ես եմ ի կարդալ, ես եմ ի գրել»—ես կարդում եմ, ես գրում եմ, ձևերին, որ միանգամայն նման է «Լ» բարբառների կազմությանը։ Վերջապես մեզ հայտնի է, որ գրաբար լեզվին ևս օտար չէր անորոշ դերբայի հայցական հոլովի գործածությունը ներգոյականի իմաստով, օրինակ՝

...Բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն սատակեցին (Եղիշէ) «Շատերը ձեզանից գնալու մեջ (գնալու ժամանակ) խորշակից կսատկեն»։

Ահա այս եղանակով է կազմվել «Լ» ճյուղի բարբառների ներկան։ Եթե «է» խոնարհման փոխարեն տեսնում ենք «ի» խոնարհում (կըրիլ, ասիլ), ապա այդ բխում է բարբառի հնչյունական ընդհանուր սիստեմից և կամ թե բարբառում գերակըշռում է «ի» խոնարհումը, իսկ դա որևէ փոփոխություն չի մտցնում վերևի ընդհանուր դիտողության մեջ։

Ավելի բարդ է դրությունը «Ս» ճյուղի բարբառների ներկայի կազմության մեջ։

«Ս» ճյուղի բարբառների ներկան բազմատեսակ է և բազմօրինակ, այսպես.

Գրելիս, կարթլիս (Արթվինի բարբառ)։

Կ՛ըրիյս, կարթայիս (Ղարադաղի կամ Շաղախի բարբառ)։

Գ՛իրիս, կարդիս (Մեղրու բարբառ)։

Գ՛իրիյ (ս), Կ՛ըրդիյ (ս) (Կարճևանի բարբառ)։

Կ՛իրէս, կ՛ա̈րթաս (Ուրմիայի բարբառ)։

Նկատելի է, որ այս բոլոր բարբառների դերբայական լրիվ ձևը ներկայացնում է Արթվինի բարբառը, որտեղ դերբայական վերջավորությունն է «լիս» (էլիս, ալիս)։ Մյուս բարբառները վերջից այս կամ այն կերպ սղում են այդ վերջավորությունը։ Այդ սղման պրոցեսը շատ պարզ երևում է, երբ մենք հաջորդաբար կարդում ենք վերևի բերած բոլոր օրինակները։ Նկատվում է, որ ալիս, էլիս ձևերի լրիվ վերջավորությունները թուլանում են,

Թուլանում է ամենից առաջ «ղ» հնչյունը, վերածվելով յ հնչյունի (կ՛ըրիյս, կարթայիս—Ղարաբաղի բարբառ), որն իր հերթին ձուլվում է հաջորդող «ի» ձայնավորին և վերածվում պարզ «յ» բաղաձայնի Կարճևանի բարբառում (փ՛իրիյս, կ՛ըրդիյս), այնուհետև դուրս է ընկնում նաև այդ յ-ն և մնում է Մեղրու բարբառի ձևը—փ՛իրիս, կարդիս: Այդ նույն պրոցեսն է կատարվել նաև Հադրութի և Ուրմիայի բարբառների մեջ: Հատկապես Ուրմիայի բարբառի մեջ ունենք շատ լավ տվյալ այդ մասին: Այդ բարբառի ներկայի ժխտական ձևը կլինի.

Չեմ կ՛իրէլի, չեմ կ՛ա̈րթալի, որից երևում է, թե լրիվ գրական ձևը պետք է որ լիներ կիրէլի(ս) եմ, կ՛ա̈րթալի(ս) եմ:

Այսպիսով տեսնում ենք, որ «Ս» ճյուղի բոլոր բարբառները անցյալում ունեցել են ալիս, էլիս վերջավորություն ունեցող դերբայի լրիվ ձևերը և հետագայում հնչյունափոխության և կամ շեշտափոխության հետևանքով աղում են այդ ձևերը, կենտրոնացնելով այդ ամբողջ վերջավորության իմաստը վերջին ս հնչյունի մեջ, դարձնելով այն ներկայի գաղափարն արտահայտելու միջոց:

Գրելիս, կարդալիս դերբայական ձևերը գտնում ենք գրական լեզվի մեջ իբրև անկատար դերբայի երկրորդական ձև:

Այդ դերբայը ցույց է տալիս գլխավոր գործողության հետ կատարվող մի երկրորդական գործողություն, որը դառնում է գլխավոր գործողության ժամանակը ցույց տվող, այսինքն՝ համապատասխանում է միանգամայն ռուսական деепричастие-ին: Օրինակ՝

Փողոցով անցնելիս տեսա բարեկամիս, այսինքն՝ այն ժամանակ, երբ ես անցնում էի փողոցով, հանդիպեցի բարեկամիս: Ինչպես տեսնում ենք, անցնելիս դերբայական ձևը ցույց է տալիս գլխավոր գործողության կատարման ժամանակը:

Գրաբարից մեզ հայտնի է, որ այդպիսի իմաստ արտահայտում է անորոշ դերբայի հայցական հոլովը. օրինակ՝

«Ի բառնալ ազգին Արշակունեաց» (Եղիշէ):

Անկատար դերբայի այս ձևը ժամանակ արտահայտելու համար նույնպես գործածվում է հայցական հոլովով, նշանակում է գրելիս, կարդալիս հայցականի ձևեր են՝ համասար ի գրէլիս, ի կարդալիս ձևերին, սակայն ինչպիսի՞ հայցական են դրանք: Մեր կարծիքով «Ս» ճյուղի բարբառներում սրանց կազմությունը մի

քիչ տարբեր է. ոչ մի կասկած, որ գրելիս, կարդալիս ձևերը հայցական լինելով ուղղականում պետք է ունենան գրելիք, կարդալիք ձևեր։ Ժամանակակից հայերենով գրելիք նշանակում է այն, որ պիտի գրվի, «կարդալիք» նշանակում է այն, որ պիտի կարդացվի։ «Ս» ճյուղի բարբառների գրելիս, կարդալիս ձևերը, մեր կարծիքով, այդ իմաստից չեն կազմվել, նրանք կազմվել են ճիշտ նույն ձևի մի տարբեր իմաստից։

Գրաբար լեզվի մեջ «ելի» վերջավորություն ունեցող դերբայական ձևը նշանակում է կատարող, տանող, օրինակ,

«Եթէ աստուծոյ կամօք գործէին այնպիսի չարիք, ընդէ՞ր ի գործելեաց չարեացն վրէժս պահանջէ[1] (Եզնիկ Կողբացի)։

«Զի եթե խոփ և գերանդի և մանգաղ ոք գործիցէ, ի բարւոք իրս պաշտեցաւ. ապա եթէ սուսեր և գեղարդ և սլաք, և այլ ինչ դէն՝ որ վնասակար մարդկան է, գործ չարութեան գործէ. և պատճառ չարութեան գործելին, և ոչ երկաթն (Եզն. Կողբ.) (ընդգծումները մերն են)։

Այս ձևի հոգնակին կլինի գործելիք, այսինքն՝ կատարողներ, գրելիք, այսինքն՝ գրողներ, կարդալիք, այսինքն՝ կարդացողներ։ Սրանց հայցականը կլինի՝ գրելիս, կամ ի գրելիս—գրողների մեջ, ի կարդալիս—նշանակում է կարդացողների մեջ, հետևաբար «Ս» ճյուղի բարբառների գրելիս եմ, կարդալիս եմ—նշանանակում են՝ գրողների մեջ եմ, շարքին եմ, կարդացողների մեջ եմ, շարքին եմ, որ արտահայտում է ներկա ժամանակի գաղափարը, որովհետև, եթե ես գրողների շարքումն եմ, ուրեմն գրում եմ, կամ՝ կարդացողների շարքումն եմ, ուրեմն՝ կարդում եմ։

Այսպիսով «Ս» ճյուղի բարբառների ներկայի կազմությունը ևս մի ամբողջ նախադասություն է, որ նշանակում է պատկանել կամ լինել գործողություն կատարողների շարքին։

Իհարկե, բառացի այդ իմաստն այլևս չկա, դրա փոխարեն ուժեղացել է ներկայի իմաստը, այսինքն ժամանակի իմաստը, որ է ներկան։

Այս երեք ճյուղի բարբառների ներկայի կազմության գաղտնիքը բացում է մի շատ հետաքրքրական բարբառ—Հավարիկի բարբառը։ Այդ բարբառը ներկայի կազմության մեջ համադրում է բոլոր երեք ճյուղերի ներկայի կազմությունը, դրանով

[1] Եթե աստուծո կամքով էին գործվում այդ չարիքները, ինչու չարիք գործողներից է վրեժ պահանջում։

[2] Եթե մեկը շինում է խոփ, գերանդի և մանգաղ, ուրեմն լավ գործ է բռնում. իսկ եթե սուր, գեղարդ, սլաք և մի որևէ այլ զենք, որ մարդկանց համար վնասակար է, ապա չարության գործ է կատարում։ Եվ չարության պատճառը գործողն է և ոչ երկաթը։

ցույց տալով, որ դըրանք բոլորը իմաստով միմյանց հավասար են։ Հավարիկի բարբառը ներկան կազմում է հետևյալ կերպ․

Գ՛իրէլիս ըմ, գ՛իրէլում ըս, գ՛իրէլում ի, գ՛իրէլում անք, գ՛իրէլում աք, գ՛իրէլում ան։

Առաջին դեմքը կազմված է անկատար դերբայի երկրորդական ձևից կամ «Ս» ճյուղի բարբառները կազմող անկատար դերբայից և օժանդակ բայից, երկրորդ և մյուս դեմքերը կազմված են «ըւմ» վերջավորություն ունեցող անորոշ դերբայից, ըստ որում անորոշ դերբայը դա «Լ» ճյուղի անկատար դերբայն է, իսկ ըւմ վերջավորությունն էլ Ում ճյուղի անկատար դերբայի վերջավորությունն է և կամ այդ ճյուղի ներգոյական հոլովի ձևը։ Ի դեպ, պետք է հիշել, որ գըրիլըմ (գրէլում) ձևը ուղղակի մատնացույց է անում, որ նրան համապատասխանող գըւմ ձևը ներգոյական հոլովի կազմությունն է․ միայն առաջին դեպքում անորոշ դերբայն է հոլովվում, որ հատուկ է հայերենին, իսկ երկրորդ դեպքում հոլովվում է բայարմատը։

Ասացինք, որ «Ում» ճյուղի բարբառների ներկան կազմվում է «ում» վերջավորություն ունեցող անկատար դերբայով և օժանդակ բայով։

Օժանդակ բայն այս բարբառներում ունենում է տարբեր ձևեր՝

Երևանի բարբառ՝	էմ,	էս	ա,	էնք,	էք,	էն
Թբիլիսիի բարբառ՝	իմ,	իս	է,	ինք,	իք,	ին
Շամախու բարբառ	ամ,	էս,	ա,	անք,	էք,	ան
Ագուլիսի բարբառ՝	ըմ,	ըս,	ա,	ըք,	ըք,	ըն
Աստրախանի բարբառ՝	էմ,	էս,	ա,	էնք,	էք,	էն
Ղարաբաղի բարբառ՝	ըմ,	ըս,	ա,	ընք,	ըք,	ըն
Ջուղայի բարբառ՝	ամ,	աս,	ա,	անք,	աք,	ան

Այսպիսով, կազմությամբ լինելով միատեսակ՝ մանրամասնությունների մեջ տարբեր բարբառներ որոշ զանազանություն են ներկայացնում։ Այդ զանազանությունն առաջանում է հատկապես օժանդակ բայերի մեջ և նրանով, որ տարբեր բարբառներ օժանդակ բայերի տարբեր արմատներ են օգտագործում․ օրինակ՝ Երևանը օգտագործում է ներկայի բոլոր դեմքերում «է» արմատը, իսկ երրորդ դեմքում «ա» արմատը (գըրըմ ա՛), Թբիլիսիի բարբառը բոլոր դեմքերում օգտագործում է «ի» արմատը, միայն երրորդ դեմքում «է» արմատը (գըրում է), Ջուղայի բարբառը հետևողականորեն օգտագործում է «ա» արմատը, իսկ Շամախու բարբառը «է» և «ա» արմատները, Ղափանի և Մեղրու շրջանի խոսվածքները «ի» և «ու» արմատները և այլն։

Ճիշտ է, որ այս արմատներից մեկ-երկուսը կարող են զուգադիպած լինել հնչյունափոխության կամ ներդաշնակության հետևանքով առաջացած հնչյունների զանազանությանը, բայց հիմնականում օժանդակ բայի արմատների հնչյունական տարբերությունները առաջանում են նրանից, որ հայերեն լեզվի մեջ էական բայի իմաստով գիտակցվել են ա, ե, ի, ո և ու ձայնավորները։ Աշխարհաբար գրական լեզուն հետևողականորեն օգտագործում է միայն «է» ձայնավորը, գրաբարն էլ նույն «է»ն, սակայն անորոշ դերբայի լծորդի մեջ (խոնարհիչի մեջ) երևում են էական բայի բոլոր այն տարբերակները, որոնք գիտակցվել են իբրև էական բայեր (ա, ե, ի, ո, ու)։

Ընդհանուր պատկերը տալու համար, բերում ենք բոլոր բարբառների ներկա ժամանակի կազմության ընդհանուր աղյուսակը։

Սահմանական ներկա

ԲԱՐԲԱՌՆԵՐ

Երևանի		Թբիլիսիի		Ղարաբաղի		Աստրախանի	
գ'ըրըմ	էմ	գըրում	իմ	կ'իրըմ	ըմ	կըրըմ	էմ
»	էս	»	իս	»	ըս	»	էս
»	ա	»	է	»	ա	»	ա
»	էնք	»	ինք	»	ընք	»	էնք
»	էք	»	իք	»	ըք	»	էք
»	էն	»	ին	»	ըն	»	էն

Շամախու		Ագուլիսի		Ջուղայի			
կ'իրըմ	ամ	կըտրում	ըմ	գ'ըրում	ամ	փախման	ամ
»	էս	»	ըս	»	ըս	»	աս
»	ա	»	ա	»	ա	»	ա
»	անք	»	ըք	»	անք	»	անք
»	էք	»	ըք	»	աք	»	աք
»	ան	»	ըն	»	ան	»	ան

«Լ» ճյուղի բարբառների ներկան, գիտենք, որ կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի ձևերով։ Այս դեպքում տարբերություն լինում է կամ դերբայական ձևի մեջ և կամ օժանդակ բայի արմատի մեջ։ Այսպես, օրինակ, Խոյի բարբառի անորոշ դերբայն ունի «կըրէլ» ձևը, իսկ Մարաղայի բար-

բառի անորոշ դերբայն ունի «կ՛իրէլ» ձևը։ Նույն եղանակով Խոյի բարբառի օժանդակ բայի բոլոր դեմքերի համար օգտագործվում է «է» արմատը, բացի երրորդ դեմքից, որտեղ օգտագործվում է «ի» արմատը (կըրէլ ի), իսկ Մարաղայի բարբառի մեջ օժանդակ բայի «ի» արմատը օգտագործվում է բոլոր դեմքերի համար, բացի հոգնակի II դեմքից, որ ունենում է «է» արմատը։

«Լ» ճյուղի բարբառների երրորդ դեմքի էական բայը արտասանության մեջ միանում է դերբային և բառի ամբողջ կապակցության շեշտն իր վրա առնելով դառնում է համարյա վերջավորություն (կըրէլի—գրում է)։ Մարաղայի բարբառը խոնարհման ժամանակ դերբայի վրա վերցնում է «ի» կամ «ը» ձայնավորը, հաճախ «ի»-ն միաձուլում է օժանդակ բայի արմատին և կազմում իսկական վերջավորություն։

Ը ն դ հ ա ն ո ւ ր ա ղ յ ո ւ ս ա կ ը կ լ ի ն ի հ ե տ և յ ա լ ը

Խոյի բարբառ	Մարաղայի բարբառ	
կըրել էմ	կ՛իրէլի իմ	կ՛իրէլիմ
» ես	» իս	կ՛իրէլիս
կըրէլի	կ՛իրէլի ի	կ՛իրէլի
կըրել ենք	կ՛իրէլի ինք՛	կ՛իրէլինք՛
» էք	» իք՛	կ՛իրէլիք՛
» են	» ին	կ՛իրէլին

«Ս» ճյուղի բարբառների ներկան, ինչպես ասացինք, կազմվում է «ս» վերջավորություն ունեցող դերբայով և օժանդակ բայի ձևերով։ Մեզ արդեն հայտնի է, որ «Ս» ճյուղի բարբառների դերբայները կազմված են նույն եղանակով, ինչ որ գրական լեզվի անկատար դերբայի երկրորդական ձևի կազմությունը (գրելիս, կարդալիս)։ Միայն լրիվ ձևը պահպանված է Արթվինի բարբառում, իսկ մյուս բարբառներում սղումների հետևանքով, որ տեղի է ունեցել շեշտադրության փոփոխության պատճառով, դերբայն ստացել է զանազան կազմություն, բայց հիմնականում պահպանել է ս-ն ու նրա միջոցով գիտակցել ներկայի գաղափարը։

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Արթվինի	Շաղախի	Կարճևանի	Մեղրու
գըրէլիս իմ	կ՛ըրէյս ըմ	գ՛իրէյ յիմ	գ՛իրիս իմ
» իս	» ըս	» յիս	» իս
» է	» ա	գ՛իրէյս ա	» ի

գըրէլիս ինք	կ'իրէյս ըք	փ'էրէյ յէք'	փ'իրէս իք'
» իք	» էք'	փ'իրէյ յէք'	» իք'
» ին	» ըն	» յին	» ին

Հադրութի	Ուրմիայի
կ'իրէս ըմ	կ'իրես եմ
» ըս	» ես
» ա	կ'իրէլի
» ընք	կ'իրես ենք'
» ըք	» էք'
» ըն	» են

Աղյուսակից երևում է, որ սկզբից թուլանում է լ-ն և վերածվում յ հնչյունի, (կ'իրէլիս—կ'իրէյիս), ապա յ և ի հնչյունները միմյանց ձուլվելով տալիս են պարզ յ (կ'իրէյս, տայս——գըրելիս, տալիս)։ Այնուհետև այդ յ-ն էլ ընկնում է, որովհետև ժողովրդական լեզվի մեջ այդպիսի երկբարբառ չի պահպանվում և ստացվում է՝ կ'իրէս, տաս։

«Կիրիյիս» ձևը պահպանված է Ղարաբաղի մարզի Մարտունու շրջանի մի շարք գյուղերի խոսվածքների անցյալ անկատարի կազմության մեջ, օրինակ՝ Ճարտար և Շեխեր գյուղերը՝ կ'իրէյս ըմ լա՛լ, կ'իրէյիս ըս լա՛լ, կ'իրէյիս ա̈ լա՛լ—գրում էի, գրում էիր, գրում էր։

Մնայիս ըմ լա՛լ, մնայիս ըս լա՛լ, մնայիս ա̈ լա՛լ—մնում էի, մնում էիր, մնում էր։

Նույն ձևի կազմությունն ունի նաև Ղափանի շրջանի Սրաշեն գյուղի խոսվածքի անցյալի անկատարը։

Միայն մի բարբառում ս վերջավորությունը կորած է բոլոր դեմքերում, բացի եզակի երրորդ դեմքից, դա է Կարճևանի բարբառը, որտեղ լինում է՝ գ'իրիյ իմ, գ'իրիյ իս, գ'իրիյս ա̈—գրում եմ, գրում ես, գրում է։

Մնայ իմ, մնայ իս, մնայս ա̈—մնում եմ, մնում ես, մնում է։

Այս բարբառի դերբայի կազմության պրոցեսը, ընթանալով նույն ճանապարհով, ինչ որ մյուս բարբառներում, վերջում որոշ. շեղում է կատարում, այն է՝ գիրիյս, մնայս ձևերի մեջ ոչ թե կորցնում է յ-ն, այլ կորցնում է ս-ն՝ և յ-ն պահպանում ու գիտակցում նրա մեջ ներկայի կազմությունը, սակայն ժխտական ձևի մեջ ընթանում է նույն ձևով, ինչ որ իր եղբայրակից մյուս բարբառները, այսինքն կորցնում է յ-ն և պահպանում ս-ն.

օրինակ՝ գյիրիս չիմ, գյիրիս չիս, գ՛իրիս չի։ Դրա պատճառը, հավանական է, այն է, որ դերբային հաջորդող բայն սկսվում է բաղաձայնով։

Օժանդակ բայի կազմությունն այդ բարբառներում նույնպես տարբեր է։

Այս բարբառներում ևս օգտագործվում է օժանդակ բայի մերթ «է» արմատը, մերթ «ի» և մերթ «ա» արմատը, այսպես, Արթվինի, Մեղրու և Կարճևանի բարբառները օգտագործում են «է» արմատը, իսկ Շաղախի և Հադրութի բարբառները բոլոր դեմքերում «ե» (ը) արմատը, իսկ երրորդ դեմքում «ա̈» արմատը, մինչդեռ Ուրմիայի բարբառն օգտագործում է բոլոր դեմքերի համար «ե» արմատը, իսկ երրորդ դեմքի համար «ի» արմատը, բոլորովին նմանվելով Խոյի բարբառին։

Արթվինի բարբառի օժանդակ բայի կազմությունը նման է Թբիլիսիի բարբառին։ Նույնպիսի նմանություն ունեն Մեղրու և Կարճևանի բարբառները միմյանց և Թբիլիսիի բարբառի հետ, բացի երրորդ դեմքից, որտեղ գտնում ենք ա Թբիլիսիի բարբառի է-ի դիմաց։ Հադրութի և Շաղախի բարբառների օժանդակ բայերի կազմությունը նման է Ղարաբաղի բարբառին, իսկ Ուրմիայինը՝ Խոյի բարբառին։ Այդ նմանությունները բացատրվում են նրանով (Կարճևանը բացառված է), որ այդ բարբառները միմյանց կողքի լինելով դարերի ընթացքում փոխադարձաբար ներհյուսվել են, և մեզ համար այժմ շատ դժվար է պարզել, թե իսկապես ձրին է պատկանում սկզբնաձևը։ Մի բան պարզ է սակայն, որ Ուրմիայի բարբառի դերբայական ձևը, որ օգտագործվում է ժխտական խոնարհման դեպքում (կ՛իրէլ, կ՛արթալ) նման լինելով Խոյի բարբառին՝ պատկանում է իրեն և առաջացած է կ՚իրէլիս, կ՚ա̈րթալիս ձևերից ս-ի կորուստով։ Հետևաբար այդ դեպքում Խոյի բարբառն է փոխ առել Ուրմիայից և ոչ ընդհակառակն։

Հայ բարբառների չորրորդ ճյուղի ներկա ժամանակի կազմությունը բոլորովին տարբեր է։ Այդ ճյուղի բարբառներում խոնարհումը դերբայական չէ, այլ գրաբարին նման, միայն առաջից դրվում է «կը» մասնիկը—կըգրեմ կըտեսնեմ, կըխօսեմ, կասեմ և այլն։ Այդ կը մասնիկը բարբառներում երևան է գալիս զանազան ձևերով՝ կը, կու, գու, գա, գի, գօ, գու̈, քը. օրինակներ՝

սիրէմ կը (Կարնո բրբ.)
կը սիրիմ (Մշո բրբ.)
կու կ'ամ (Վանի բրբ.)
գը սիրիմ (Խարբ.-Երզնկայի բրբ.)
սիրիմ գու (Տրապիզ. բրբ.)
գօ սիրիմ (Զեյթունի բրբ.)
գի սիրիմ (Մարաշի խոսվածք)
բերիմ գա (Տարընտեյի խոսվածք)
գու̈ խըրգիմ (Ակնա բրբ.)
քըսիրիմ (Ն. Նախիջ. բրբ.)
գի սիրիմ (Սուչավայի բրբ.).

«Կը» մասնիկը սովորաբար գրվում է սկզբից, որոշ բարբառներում միայն, օրինակ Կարնո բարբառում, դրվում է բայից հետո, օրինակ, գըրէմ կը, խօսէմ կը։ Սեբաստիայի բարբառում գը մասնիկը դրվում է բայի թե առաջից և թե հետևից։ Այն դեպքում, երբ բայն սկսվում է ձայնավորով, «գը» մասնիկը դրվում է բայից հետո, իսկ բայն սկզբից ստանում է մի «գ» ևս. օրինակ՝ ճարցնէ գը, գէրթա գը։ Վերջին ձևն ունի նաև Տրապիզոնի բարբառի խոսվածքը։

Կարնո բարբառում ևս միավանկ կամ ձայնավորով սկսվող բառերի մոտ կը մասնիկը դրվում է երկու կողմից էլ և սկզբից և վերջից, օրինակ՝ կուգամ կը,—գալիս եմ, կէնէմ կը,—անում եմ, կուտամ կը—տալիս եմ, կուզեմ կը—ուզում եմ։

Համշենի բարբառում ձայնավորով սկսվող բայերից առաջ դրվում է գ, իսկ բաղաձայնով սկսվող բայերից միայն հետո է դրվում գը մասնիկը. օրինակ՝ գուդիմ—ուտում եմ, բ'էրիմ գու—բերում եմ։

Այդ կը մասնիկի ծագումը շատ որոշ չէ, իշխում է այն կարծիքը, թե այդ մասնիկն առաջացել է կա ու բառերից, որ սղվելով տվել է կու, իսկ վերջինից ստացվել է կը։

Այդ կարծիքը հավանական պետք է համարել, որովհետև կը ճյուղի բարբառների մեջ կան նաև այնպիսիները, որոնք արտասանում են «կա» (գա), «բերիմ գա» (Արաբկ. բրբ.)։ Կարծում ենք, որ դա ոչ թե հնչյունափոխության հետևանքով է, այլ այստեղ պահպանված է կա բառի լրիվ ձևը։ Այդ կա և ու բառերը, որ նշանակում են՝ որևէ գործողություն գոյություն ունի, իմաստավորվել են իբրև ներկա ժամանակ ցույց տվող մասնիկներ, ուրեմն, երբ ասվում է կա ու գրեմ, նշանակում է՝ իմ գրելու գործողությունը կատարվում է այժմ, որի հետևանքով և ստացվում է ներկայի գաղափարը։

«Կը» ճյուղի բարբառների ներկայի բայական ամբողջ խոնարհումը առանց մասնիկի լիակատար չափով գրաբարյան է, որ մեր բոլոր բարբառներում գոյություն ունի, սակայն, ոչ ներկա

ժամանակն արտահայտելու համար, այլ ըղձական եղանակի ապառնին, օրինակ՝ գրաբար՝ գրեմ, գրես, գրէ և այլն նշանակում են՝ գրում եմ, գրում ես, գրում է. մինչդեռ աշխարհաբարում այդ նույն՝ գրեմ, գրես, գրէ և այլն նշանակում են՝ ցանկանում եմ գրել, ցանկանում ես գրել, ցանկանում է գրել։ Այդ ձևը իր իմաստով մոտենում է գրաբարի ստորադասական եղանակին, որովհետև որևէ ենթադրական կամ պայմանական բառ ավելացնելով վրան՝ տալիս է պայմանականի կամ ստորադասականի և կամ նույնիսկ հրամայականի իմաստ, օրինակ, եթե գրեմ, թե գրեմ, թե որ գրեմ, կգրեմ, պետք է գրեմ, թող գրեմ և այլն։

Կը մասնիկն այդ ըղձական ձևերի վրա ավելանալով առաջացնում է բարբառներում պայմանական կամ ենթադրական եղանակի ձևեր, օրինակ՝

Ցեա կըգ̀ըրեմ, եթէ դու ցանգանաս (Երևան)։

Ցես կըկ̀իրեմ, ա̈յա̈ր տու̈ ու̈զես (Ուրմիա)։

Ցիս կու գըրիմ, թէ վուր ուզիս (Թբիլիսի)։

Ցես կըկ̀իրիմ, ա̈յ վուեր ու̈զիս (Մարաղա)։

Վըեր օ՛զըմ ըս, յէս կըկ̀իրիմ (Ղարաբաղի) և այլն։

Այդ նույն իմաստն է ստանում նաև կը ճյուղի բոլոր բարբառներում, օրինակ՝

կըկ̀իրեմ—կըգրեմ (Վան)

Բայց միաժամանակ այս պայմանականի ձևը կը ճյուղի բարբառներում գիտակցվում է իբրև ներկայի ձև, ուրեմն՝ կըգրեմ, կը կարգում ձևերը կը ճյուղի շատ բարբառներում նշանակում են և ներկա (գրում եմ), և պայմանական ապառնի (կըգրեմ)։

Վանի բարբառում այդ ձևը միաժամանակ նշանակում է և ներկա, և սահմանական ապառնի և պայմանական ապառնի։

Ցես կըկ̀իրեմ—նշանակում է՝ ես գրում եմ, ես գրելու եմ, ես կգրեմ. օրինակ՝

Գ̀օ նըստեր եմ կըկ̀իրեմ—ահա նստած գրում եմ։

Վա̈ղ իմ լաճուն նամայ կըկ̀իրեմ—վաղը որդուս նամակ կգրեմ.

Թ̀է վուեր կուզես կըկ̀իրեմ—եթե ուզես կգրեմ.

Այսպիսով մենք տեսանք, որ հայերենի բարբառները ձևաբանական սկզբունքով դասակարգելը ճշտիվ կերպով արտահայտում է բարբառախմբերի հիմնական տարբերությունները և առանձնահատկությունները։ Ըստ այդ դասակարգման արևմտյան հարավային և կենտրոնական Հայաստանի (պատմական Հայաս-

տանի) բարբառները պատկանում են միևնույն ճյուղին, կազմում են իրենց ներկա ժամանակը միևնույն եղանակով։ Թվում է, թե այդ երևույթը չի կարող չարժանանալ մի առանձին ուշադրության, հատկապես, երբ նկատի ենք առնում նաև մյուս ճյուղերի դասավորությունը։ Մի քիչ ուշադիր դիտելով, նկատում ենք, որ «Ում» ճյուղի բարբառները պատմականորեն դասավորված են Հայաստանի հյուսիսային նահանգներում, որ բռնում է Արարատյան դաշտը, նրա արևելքը մինչև Ջուղա, նրա հյուսիսը մինչև Թբիլիսի, հյուսիս-արևելքը մինչև Արցախ և Շամախի։

Բացառություն կազմում են միայն Արթվինի բարբառը և Լենինականի, Ախալքալակիի ու Ախալցխայի խոսվածքները։ Վեճի առարկա չէ բոլորովին, որ Ախալքալաքին և Ախալցխան այժմ բնակված են 19-րդ դարում գաղթած Կարնո շրջանի բնակիչներով։ Այդպես պետք է ընդունել նաև Կարսի և Լենինականի բնակչությունը։ Մի քիչ դժվար է լուծել Արթվինի բարբառի գոյությունը «Ում» ճյուղի բարբառների միջավայրում, բայց նկատի ունենալով նրա նմանությունը Թբիլիսիի բարբառին և միաժամանակ նրա ճյուղակիցների աշխարհագրական դիրքը, որ է Ղարադաղի հյուսիսը և Սյունիքի հարավ-արևելքը (Փայտակարան?), իրավունք կա ենթադրելու, որ այդ բարբառը հարյուրավոր տարիներ առաջ գաղթել է Արևելքից, հենց այդ հիշված աշխարհագրական միջավայրից[1]։

«Լ» ճյուղի բարբառները գտնվում են Մակվի շրջանից արևելք և Ատրպատականի արևմուտքում, հավանական է այն երկրում, որ երբեմն կոչվել է Մաննա (բևեռագիր արձանագրությունների մեջ)։ Այս բարբառի միջավայրը մաննացիների և արևմտյան մարերի միջավայրն է։ Մենք կարծում ենք, որ դրանց մոտ գտնվող Մարանդ տեղանունը կազմված է Մար և անդ —Մարի տեղ, Մարի վայր նշանակող մասերից։

«Ա» ճյուղի բարբառները գտնվում են Մարաստանի հյուսիսում, Սյունյաց և Արցախի հարավում և արևելքում, Մեղրիի շրջանում և Գողթանում։ Մենք Գողթանն էլ մտցնում ենք այդ միջավայրի մեջ, որովհետև Ագուլիսի բարբառը կիսով չափ պատկանում է «Ա» ճյուղին։ Այսպես՝ տեքստերից հայտնի է դառնում, որ Ագուլիսի բարբառի ենթաբարբառ համարվող Ցղնա և Ռամիս

[1] Տես՝ Ա. Ղարիբյան, «Հայ բարբառների մի նոր ճյուղ», Պետհամալսարանի Գիտ. աշխատությունները, հատ. XI։

գյուղերի խոսվածքները պատկանում են «Ս» ճյուղին (օրինակ՝ փրխնալիս ա, տըսնալիս ա̈, ըստըկէլիս ա̈ և այլն—Թամիս, փըխ-նաս ա, տըսնաս ա, ստըկէս ա և այն—Ցղնա)։ Ագուլիսի բար-բառի Ա խոնհարման բայերը պատկանում են «Ս» ճյուղին։ Եվ վերջապես Ագուլիսի բարբառի բաղադրյալ անցյալ ժամանակնե-րի կազմությունը միանգամայն զուգադիպում է «Ս» ճյուղի բար-բառներին։ Կարելի է կարծել, որ Ագուլիսի բարբառը երբեմն պատկանել է «Ս» ճյուղին և «Ում» ճյուղի ազդեցությամբ զգալի չափով վերափոխվել է «Ում» ճյուղի։ Աշխարհագրորեն էլ նա դասավորված է այնպես, որ գտնվում է «Ում» և «Ս» ճյուղերի սահմանի վրա։ Այս ամբողջ շրջանը բռնված է եղել մարական և սակական ցեղերով, որոնց խառնուրդից կազմված է այդտեղի հայ բնակչությունը։ Հենց զօկ բառը նույն սօկ բառն է, միայն Ագուլիսի բարբառի արտասանությամբ։ Այսպես, Ագուլիսի բար-բառում «սա» բառը արտասանվում է սօ, բայց անձ նշանակելիս արտասանվում է զօ, օրինակ՝

«Իս ալ տա̈համ օր դո̈ւ բըձրա̈նա̈մ ըս, ինքյըս ա̈մ մաջիս ահամ թա̈ զօ յիտ չի դա̈ռնիլ, կյա̈րա̈մ հօվը» (Ես էլ տեսա, որ դու բարձրանում ես, ինքս իմ մեջ ասացի, թե սա ետ չի դառնա, հավը կերա)։

Հետևաբար սօկ բառն էլ կարող էր արտասանվել զօկ, ու-րեմն իրենք ագուլեցիք պահել են իրենց ցեղական անունը այդ զօկ բառով։ Կարծում ենք, որ բացի մառ և սօկ ցեղերի խառ-նուրդից, այդտեղ, այդ բնակչության մեջ կան նաև տեղացի ու-րիշ տոհմերի խառնուրդ, որոնց անունները մեզ հասած չեն, օրի-նակ, մենք չգիտենք թե ինչ է նշանակում Մեղրի, Փառակա, Ցղնա և նման անունները, որոնք կարող են լինել ցեղերի անուն-ներ։

«Ս» ճյուղի մի ներկայացուցիչն էլ գտնվում է Ուրմիայի լճի արևմտյան ափերին, դա Ուրմիայի բարբառն է։ Այդ մեզ ի-րավունք է տալիս ասելու, թե այդ ճյուղը բռնած է եղել երբեմ-նի ամբողջ Ատրպատականը մինչև Վասպուրականի սահմանները։ Ուրմիայի բարբառը բռնում է «Լ» ճյուղի, Վանի բարբառի («Կը» ճյուղի) և «Ս» ճյուղի հարավ-արևմտյան սահմանները. դրանով էլ պետք է բացատրել «Ս» ճյուղի բարբառներից մեկի առկայու-թյունը այդ վայրում։ Այսպիսով, կարելի է անել եզրակացու-թյուն, թե «Կը» ճյուղն իր առանձնահատկություններով պար-տական է նախահայկական ցեղերի մի խմբավորման, որի մեջ ընդգրկվել են նաև բիայնացիք արևելքում և արմենները Արև-

մուտքում (արմենա-բելյանական խումբ)։ «Ում» ճյուղի բարբառները առաջացել են նախահայկական ցեղերի հյուսիսային— ալարոդյան ցեղախմբերի միության լեզվից։ «Ս» ճյուղի բարբառները առաջացել են Ատրպատականի, Սյունիքի հարավ-արևելքի և Գողթանի բնակչության միավորած լեզուներից, իսկ «Լ» ճյուղի բարբառներն առաջացել են ժաննա-մարական ցեղախմբերի միության լեզուներից։

Անցյալի անկատար ժամանակ

Համարյա բոլոր բարբառներում անցյալի անկատար ժամանակը կազմվում է միևնույն եղանակով, ինչպես որ ներկան, և կամ էլ ներկայի ձևերից, սակայն տարբեր բաղադրությամբ։

«Ում» ճյուղի բարբառների անցյալի անկատարը կազմվում է միևնույն անկատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով։ Այդ անցյալի ձևերը տարբեր են։ Այսպես, օրինակ, Թբիլիսիի բարբառում գրաբար լեզվի օժանդակ բայերի ձևերը պահպանվում են լրիվ կերպով. օրինակ՝ գրում էի, գրում էիր, գրում էր *և այլն։ Թբիլիսիի բարբառի այդ ձևերը միանգամայն նման են գրական լեզվին։*

Երևանի բարբառը օժանդակ բայի անցյալում կորցնում է արմատը, բացի երրորդ դեմքից, որից ստացվում է՝ ի, իր, եր, ինք, իք, ին *(*գ̇ըրըմ ի, գ̇ըրըմ իր, գ̇ըրըմ եր, գ̇ըրըմ ինք, գ̇ըրըմ իք, գ̇ըրըմ ին*)։*

Նույն բանը կատարվում է Ղարաբաղի բարբառում երրորդ դեմքի տարբերությամբ, որտեղ լինում է ար *(էր), օրինակ* կ՛իրըմ ար, խօսըմ ար *և այլն։*

Հաշտարխանի բարբառում օժանդակ բայի և արմատի փոխարեն գործածվում է ի, *օրինակ,* կըրում իիմ, իիր, իինք, իիք, իին*։*

Թե այս բարբառում և թե Երևանի բարբառի մի շարք խոսվածքներում գործ է ածվում ներկայի առաջին դեմքում մ *վերջավորությունը օժանդակ բայի համար, օրինակ՝ գ̇ըրըմ իմ կամ կըրըմ իմ։*

Առաջին դեմքում վերջավորության մեջ մ *գործածելը հատուկ է նաև «Ս» ճյուղից Ուրմիայի բարբառին, «Լ» ճյուղից Խոյի և Մարաղայի բարբառներին։*

«Կը» ճյուղի բարբառներում անցյալի անկատարը կազմվում է ներկայի նման «կը» մասնիկով. միայն բայի վերջավորու-

թյունները լինում են էյի, էյիր, էր, էյինք, էյիք, էյին. օրինակ՝ կը գրէյի, կը գրէյիր, կը գրէր, կը գրէյինք, կըգրէյիք, կըգրէյին։

Մշո բարբառում անցյալի անկատար եղակի առաջին դեմքը գործ է ածում հոգնակի առաջին դեմքի ձևը. օրինակ՝

Ցես կըգ'ինք—ես կգայի
Մենք կըգ'ինք—մենք կգայինք։

Անցյալի անկատարի կազմությունը մի շարք բարբառներում հիմնովին տարբեր է։ Տեսանք, որ անցյալի անկատար ժամանակը կազմվում է դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով (գրում էի, գրում եիր, գրում էր, գրում էինք, գրում եիք, գրում էին—Թբիլիսիի բարբառ)։ Մի շարք բարբառներ օժանդակ բայի անցյալի արմատը կորցնում են և պահպանում միայն դեմքի վերջավորությունները, որոնց մեջ դիտակցվում է օժանդակ բայի և դեմքի նշանակությունը. օրինակ՝ կ'իրըմ ի, կ'իրըմ իր, կ'իրըմ ար, կ'իրըմ ինք, կ'իրըմ իք, կ'իրըմ ին։

Խական բայի արմատը պահպանվում է միայն երրորդ դեմքում։ (ա—ր, ե—ր)։ Որոշ բարբառներ օժանդակ բայի անցյալի անկատարի ձևերը չունեն։ Հետաքրքրականն այն է, որ այդ բարբառները ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակի վերջավորություններ էլ չունեն, և այդ ժամանակը կազմում են անալիտիկ սիստեմով, այսինքն ըղձականի ապառնիի ձևով և անցյալ ժամանակ արտահայտող բառ-մասնիկով։ Այդ մի ուժեղ ապացույց է այն բանի, որ հայերեն դիմավոր բայերի վերջավորությունները օժանդակ բայի ձևերն են։

Անցյալ անկատարի օժանդակ բայի ձևերը չունեն Ագուլիսի, Կարճևանի, Մեղրու, Շաղախի, Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառները։ Հադրութի բարբառը գործ է ածում երկու ձև՝ և օժանդակ բայի անցյալի ձևերը և առանց այդ ձևերի։

Ագուլիսի բարբառը, ինչպես և մյուս բոլոր բարբառները անցյալի անկատարը կազմելու համար վերցնում են անփոփոխ կերպով ներկայի ձևերը և դրանց վրա ավելացնում մի որևէ բառ-մասնիկ, որի հիմնական ֆունկցիան է ցույց տալ միայն անցյալի գաղափարը։ Մենք գիտենք, որ գրական լեզվի մեջ և մյուս բարբառներում օժանդակ բայի անցյալի ձևերը ցույց են տալիս և անցյալ ժամանակի գաղափար և միաժամանակ նաև դեմք, իսկ մեր հիշած բարբառներում անցյալ անկատար ժամանակի բայական դեմքը ցույց է տրվում օժանդակ բայի ներկա-

յի ձևերով, ուստի և ավելացող բառ-մասնիկներն ծնում է միայն ցույց տալու անցյալի գաղափարը։

Ագուլիսի բարբառն անցյալ ժամանակը կազմելու համար ներկային ավելացնում է ենել բառ-մասնիկը, որ լինել բառի հապավված ձևն է։ Խոնարհումը կազմում է հետևյալ ձևով։

սըրում ըմ նէլ,—սրում էի
սըրում ըմ́ նէլ—սրում էիր
սըրում ա նէլ—սրում էր
սըրըմ ըք նել—սրում էինք
սըրըմ ըք նէլ—սրում էիք
սըրըմըն նէլ—սրում էին

Կարճևանի բարբառը նույն անցյալի անկատար ժամանակը կազմում է նույնպես՝ ներկային ավելացնելով «լէ» բառ-մասնիկը, որ երևի ենել կամ գուցե լինել բայի հապավված ձևն է, որով և ստացվում է.

գ՛իրիյ յիմ լէ—գրում էի
գ՛իրիյ յիս լէ—գրում էիր
գ՛իրիյս ա̈ լէ—գրում էր
գ՛իրիյ յիք՛ լէ—գրում էինք
գ՛իրիյ յիք՛ լէ—գրում էիք
գ՛իրիյ յին լէ—գրում էին

Մեղրու բարբառը այդ նույն ժամանակը կազմում է նույնպես ներկային ավելացնելով «լա̈» բառ-մասնիկը, որ երևի «լալ >լեալ> լինել բայի հապավված ձևն է, որով ստացվում է.

գ՛իրէս իմ լա̈—գրում էի
գ՛իրիս իս լա̈—գրում էիր
գ՛իրիս ի լա̈—գրում էր
գ՛իրիս իք՛ լա̈—գրում էինք
գ՛իրիս իք՛ լա̈—երում էիք
գ՛իրիս ին լա̈—գրում էին

Շաղախի բարբառը վարվում է բոլորովին նախորդ բարբառների նման, միայն ավելացնում է «լա̈լ» լրիվ ձևը, որով ստացվում է

Կ՛ըրիյս ըմ լա̈լ—գրում էի
Կ՛ըրիյս իս լա̈լ—գրում էիր
Կ՛ըրիյս ա̈ լա̈լ—գրում էր

Կ՚ըրիյս ըք լա̈լ—գրում էինք
Կ՚ըրիյս էք՚ լա̈լ—գրում էիք
Կ՚ըրիյս ըն լա̈լ—գրում էին

Շաղախի բարբառի «լա̈լ» ձևը արդեն հաստատում է, որ Մեղրու, Կարճևանի բարբառների «լա̈», «լէ» ձևերը առաջացել են այդ «լա̈լ» լրիվ ձևից, որը նույնպես առաջացել է լեալ կամ լինել ձևերից։

Հադրութի բարբառը անցյալի անկատարը կազմում է Շաղախի բարբառի նման, միայն «լա̈լ» ձևը ավելացնում է իր ներկայի վրա. միաժամանակ նաև Հադրութի բարբառը անցյալի անկատարը կազմում է Ղարաբաղի բարբառի նման։

Կ՚իրիս ըմ լա̈լ կամ Կ՚իրիս ի—գրում էի
Կ՚իրիս ըս լա̈լ կամ Կ՚իրիս իր—գրում էիր
Կ՚իրիս ա̈ լա̈լ կամ Կ՚իրիս ա̈ր—գրում էր
Կ՚իրիս ընք լա̈լ կամ Կ՚իրիս ինք՚—գրում ենք
Կ՚իրիս ըք լա̈լ կամ Կ՚իրիս ին—գրում էիք
Կ՚իրիս ըն լա̈լ կամ Կ՚իրիս ին—գրում էին

Ուրմիայի (նույնպես և Խոյի ու Մարաղայի) բարբառները, պահպանելով ընդհանուր սխեմը, անցյալի անկատարը կազմելու համար ավելացնում են մի բոլորովին տարբեր մասնիկ, որ է «էր» մասնիկ-բառը։ Մեր կարծիքով այդ «էր» մասնիկը օժանդակ բայի երրորդ դեմքի «էր» ձևն է, որը դիմակազրկվելով ցույց է տալիս միայն անցյալի գաղափար։

Կ՚իրես եմ էր—գրում էի
Կ՚իրես ես էր—գրում էիր
Կ՚իրես էր—գրում էր
Կ՚իրես ենք՚ էր—գրում էինք
Կ՚իրես էք՚ էր—գրում էիք
Կ՚իրես են էր—գրում էին

Երրորդ դեմքում ներկայի օժանդակ բայը դուրս է ընկնում, որովհետև «էր» մասնիկ-բառը այստեղ վերականգնում է երրորդ դեմք ցույց տվող իր նշանակությունը։

Շ ա ր ո ւ ն ա կ ա կ ա ն ժ ա մ ա ն ա կ ն ե ր

Ներկայի և անկատարի ձևերը ունեն նաև այսպես կոչված շարունակական ձևեր։ Շարունակական ձևը սովորական ձևից տարբերվում է նրանով, որ ցույց է տալիս գործողության շա-

րունակական, տևական լինելը։ Օրինակ՝ ճախարակը պտտվում է նախադասությունից երևում է, որ ճախարակը պտտվելու գործողությունը կատարելու հատկություն ունի, մինչդեռ ճախարակը այժմ պտտվում է նախադասությունը ցույց է տալիս, որ ճախարակի գործողությունը ընթացքի մեջ է այժմ, տևական գործողություն է կատարում։

Երկիրը պտտվում է արևի շուրջը—նախադասությամբ արտահայտվում է ոչ այնքան այն միտքը, թե երկիրը պտտվում է, որքան այն միտքը, թե երկիրը արևի շուրջը պտտվելու մշտական հատկություն ունի։

Ենթադրենք մեկին հարց ենք տալիս փողոցում։

—Ի՞նչ ես անում։ Նա պատասխանում է.

—Գրում եմ։

Բնական է, որ փողոցում այդ մարդը չի գրում, այլ զբոսնում է, բայց նրա միտքն այն է, որ ասի՝ թե ինքը գրող է և զբաղված է երկեր գրելով։ Իսկ եթե նա նստած գրում է, ապա նրա գործողությունն ընթացքի մեջ է արդեն։ Ահա այդպիսի գործողություն արտահայտող ձևը կոչվում է «շարունակական»։

Շարունակական ձևերով հարուստ է անգլերեն լեզուն.

օր. I am having, I was having, I have been having, I had been having, I shalle be having, I shoud be having, I shall have been having, I should have been having.

Հայերենի բարբառներից շարունական ձևեր ունեն Տիգրանակերտի, Տրապիզոնի, Արաբկիրի, Սեբաստիայի, Եվդոկիայի, Նիկոմեդիայի, Պոլսի, Ռոդոսթոյի, Մալաթիայի և Ղարաբաղի բարբառները։

Ղարաբաղի բարբառը շարունակական ձևը կազմում է մի առանձին դերբայով, որ վերջավորում է ա̈վ-ով. օրինակ՝ կ՛իրէլա̈վ, կըրթէլա̈վ։ Ըստ երևույթին այդ ձևը կազմված է անորոշ դերբայի գործիական հոլովից, որովհետև Ղարաբաղի բարբառի գործիական հոլովն ունի ավ վերջավորություն։ Դերբայի հոլովումն ունի հետևյալ պատկերը.

Ուղղ.	կ՛իրիլ
Սեռ.	կ՛րէլո̈ւ(ն)
Տրկ.	կ՛իրէլո̈ւ(ն)
Հայց.	կ՛իրիլ
Բաց.	կ՛իրէլան
Գործ.	կ՛իրէլա̈վ
Ներգ.	կ՛իրէլո̈ւմ

Այս հոլովված ձևերից վերցված է գործիականի ձևը և կազմած մի առանձին դերբայ, որով և կազմվում են շարունակական ժամանակները այնպես, ինչպես ներգոյական հոլովի կազմությամբ վերցված է անկատար դերբայը, և կազմվում է ներկայի սովորական ձևը (կ՛իրըլ՛, կարթըմ)։

Ղարաբաղի բարբառի ներկա շարունականը կազմվում է օժանդակ բայի ներկայի ձևերով, իսկ անցյալը օժանդակ բայի անցյալի ձևերով։ Ընդհանուր պատկերը կլինի հետևյալը.

Շարունակական ներկա		Շարունակական անցյալի անկատար	
կ՛իրէլա̈վ	ըմ	կ՛իրէլա̈վ	ի
»	ըս	»	իր
»	ա	»	ար
»	ընք	»	ինք
»	ըք	»	իք
»	ըն	»	ին

Ղարաբաղի բարբառի նման նույն դերբայով կազմում է շարունակական ձևեր նաև Հադրութի բարբառը, սակայն այն տարբերությամբ, որ Հադրութի բարբառում շարունակական անցյալը կազմվում է [ա̈] անփոփոխ բառամասնիկով։ Հադրութի բարբառը շարունակական անցյալի անկատար ձևերը կազմում է նաև «նիս» մասնիկ բառով։ Բերում ենք շարունականի ընդհանուր պատկերը Հադրութի բարբառում։

Շարունակական անկատար և շարունակական դերբայով կազմված անցյալի անկատար

Ներկա

Խըմէս	ըմ	նիս	Խըմէլա̈վ	ըմ
»	ըս	նիս	»	ըս
»	ա̈	նիս	»	ա
»	ընք	նիս	»	ընք
»	ըք	նիս	»	ըք
»	ըն	նիս	»	ըն

Անցյալի անկատար

խըմէս ի նիս	խըմէս ի լա՛լ	խըմէլա՛վ ի նիս	խըմելա՛վ ի լա՛լ
» իր »	» իր »	» իր »	» իր »
» ար »	» ար »	» ար »	» ար »
» ինք՛ »	» ինք՛ »	» ինք՛ »	» ինք՛ »
» իք՛ »	» իք՛ »	» իք՛ »	» իք՛ »
» ին »	» ին »	» ին »	» ին »

Ապառնի շարունակական

Ապառնի	Անցյալի ապառնի	
խըմըլական ըմ նիս	խըմըլական ի նիս	խըմըլական ի լա՛լ
» ըս »	» իր »	» իր »
» ա »	» ար »	» ար »
» ընք »	» ինք՛ »	» ինք՛ »
» ըք »	» իք՛ »	» իք՛ »
» ըն »	» ին »	» ին »

Վաղակատար շարունակական

Վաղակատար	Անցյալի վաղակատար	
խըմալ ըմ նիս	խըմալ ի նիս	խըմալ ի լա՛լ
» ըս »	» իր »	» իր »
» ա »	» ար »	» ար »
» ընք »	» ինք՛ »	» ինք՛ »
» ըք »	» իք՛ »	» իք՛ »
» ըն »	» ին »	» ին »

Հարակատար շարունակական

Հարակատար	անցյալի հարակատար	
խըմած ըմ նիս	խըմած ի նիս	խըմալ ի լա՛լ
» ըս »	» իր »	» իր »
» ա »	» ար »	» ար »
» ընք »	» ինք՛ »	» ինք՛ »
» ըք »	» իք՛	» իք՛ »
» ըն »	» ին »	» ին »

«Կը» ճյուղի բարբառների շարունակական ձևերը Ղարաբաղի նման հատուկ դերբայով չեն կազմվում, այլ մի առանձին մասնիկ ավելացնելով ներկայի խոնարհման ձևերի վրա՝ բաղադրվում են շարունակական ձևերը։

Շապին-Գարահիսարի բարբառը շարունակականը կազմում է «դար» *մասնիկով, սակայն այդ մասնիկը դնում է բայից հետո, որի հետևանքով «գը» մասնիկը սկզբից պահպանվում է, օրինակ.*

Շարունակական ներկա	Շարունակական անցյալի անկատար
գըսիմ դար	*գըսէյի դար*
գըսէս դար	*գըսէյիր դար*
գըսէ դար	*գըսէր դար*
և այլն։	*և այլն։*

Տրապիզոնի բարբառը շարունակականը կազմում է բոլորովին տարբեր ձևով։ Ներկայի համար օգտագործում է «էր» մասնիկ-բառը, իսկ անցյալ անկատարի համար «ունի» բառը։ «էր» մասնիկը դա երևի «ել» էական բայի երրորդ դեմքի ձևն է, իսկ «ունի» բառը սովորական հայերեն ունենալ *բառն է։*

Շարունակական ներկան կազմելու համար Տրապիզոնի բարբառը սկզբի «գը» մասնիկը դուրս է գցում («գը» գրիմ, շարունակական՝ գրիմ էր), երբ բայը սկսվում է բաղաձայնով, իսկ երբ բայն սկսվում է ձայնավորով, ապա «գը» մասնիկը պահպանվում է, օրինակ՝

Շարունակական ներկա		Շարունակական անցյալի անկատար	
գառնիմ էր	*սիրիմ էր*	*գէրթայի ունի*	*բէրէյի ունի*
գառնիս էր	*սիրիս էր*	*գէրթայիր ունի*	*բէրէիր ունի*
գառնէ էր	*սիրէ էր*	*գէրթար ունի*	*բէրէր ունի*
գառնինք էր	*սիրինք էր*	*գէրթայինք ունի*	*բէրէյինք ունի*
գառնիք էր	*սիրիք էր*	*գէրթայիք ունի*	*բէրէիք ունի*
գառնին էր	*սիրին էր*	*գէրթային ունի*	*բէրէին ունի*

Շարունակականի անցյալի անկատարը կազմելու համար Արաբկիրի բարբառը ավելացնում է «նը» մասնիկը, որ երևի ունի *ամբողջական ձևից է սղվել։ Այդ դեպքում սկզբի սովորական ներկայի «գը» մասնիկը դուրս է ընկնում, եթե բայն սկսվում է բաղաձայնով, որից ստացվում է հետևյալ աղյուսակը.*

Շարունակական ներկա				Շարունակական անցյալի անկատար			
Գերթամ	նը	խըմիմ	նը	գէրթայի	նը	խըմէյի	նը
գերթաս	«	խըմիս	նը	գէրթայիր	«	խըմէյիր	«
գերթա	«	խըմէ	«	գէրթար	«	խըմէր	«
գերթանք	«	խըմինք	«	և այլն		և այլն	
գերթաք	«	խըմիք	«				
գերթան	«	խըմին	«.				

Սեբաստիայի բարբառը իր շարունակական ձևերը կազմում է «գօր» մասնիկով, որ դրվում է բայից հետո և ներկայի կամ անցյալի անկատարի ձևերի վրա։ Սովորական ներկայի «գը» մասնիկը դուրս է ընկնում այն ժամանակ, երբ բայն սկսվում է բաղաձայնով, իսկ երբ բայն սկսվում է ձայնավորով, այդ դեպքում սկզբից «գը» մասնիկը պահպանվում է, օրինակ.

Շարունակական ներկա		Շարունակական անցյալի անկատար	
Քընանամ	գօր	քընանայի	գօր
քընանաս	գօր	քընայիր	գօր
քընանա	գօր	քընանար	գօր
քընանանք	գօր	և այլն.	
քընանաք	գօր		
քընանան	գօր		

Եվդոկիայի բարբառը (Ամասիայի և Մարզվանի խոսվածքները) շարունակական ձևերը կազմում են Սեբաստիայի բարբառի նման, միայն ավելացնում են բայից հետո «գա» մասնիկը որ երևի «կա» բառն է. այդ գա, կա *բառը բացատրում է նաև* գօր *ձևը, որ երևի առաջացել է* կա որ *կապակցությունից ա-ի սղումով (կա որ—կոր—գոր—գօր)*

Եվդոկիայի բարբառը ևս բաղաձայնով սկսվող բայերի առաջից «գը» մասնիկը դուրս է գցում, իսկ ձայնավորով սկսվող բայերից առաջ պահպանում է. օրինակ՝

Շարունակական ներկա				Շարունակական անցյալի անկատար			
գրէմ	գա,	գէրթամ	գա	գրէյի	գա	գէրթայի	գա
գրէս	գա,	գէրթաս	գա	գրէյիր	գա	գէրթայիր	գա
գրէ	գա,	գերթա	գա	գրէր	գա	գէրթար	գա
գրէնք	գա,	գէրթանք	գա	գրէյինք	գա	գէրթայինք	գա
գրէք	գա,	գէրթաք	գա	գրեյիք	գա	գէրաթյիք	գա
գրէն	գա,	գերթան	գա	գրէյին	գա	գէրթային	գա

Նիկոմեդիայի բարբառը ավելացնում է մի բոլորովին ուրիշ վերջավորություն՝ «հայէ», որ մեր կարծիքով կազմվել է հա *և*

ե բառերի կապակցությունից, որ նշանակում է միշտ կա։ Այսպիսի դեպքում սովորական ներկայի «գը» մասնիկը ամենուրեք պահպանվում է։ Օրինակ՝

Շարունակական ներկա	Շարունակական անցյալի անկատար
Գը քըրիմ հայէ	Գը քըրէյի հայէ
Գը քըրիս հայէ	Գը քըրէյիր հայէ
Գը քըրէ հայէ	Գը քըրէր հայէ
Գը քըրինք հայէ	Գը քըրէյինք հայէ
Գը քըրիք հայէ	Գը քըրէյիք հայէ
Գը քըրին հայէ	Գը քըրէյին հայէ

Պոլսի բարբառը նույն Նիկոմեդիայի նման, չփոխելով ներկայի և կամ անցյալի անկատարի կազմության ձևը, ուղղակի ավելացնում է «գոր» մասնիկ-բառը որից ստացվում է հետևյալ պատկերը,

Շարունակական ներկա	Շարունակական անցյալի անկատար
Գը գըրէմ գոր	Գը գըրէյի գոր
Գը գըրէս գոր	Գը գըրէյիր գոր
Գը գըրէ գոր	Գը գըրէր գոր
Գը գըդրէնք գոր	Գը գըրէյինք գոր
Գը գըրէք գոր	Գը գըրէյիք գոր
Գը գըրէն գոր	Գը գըրէյին գոր

Ռոդոսթոյի բարբառը, լինելով բոլորովին նման Պոլսի բարբառին, ավելացնում է «գօ» մասնիկ բառը, որից ստացվում է հետևյալ պատկերը։

Շարունակական ներկա	Շարունակական անցյալի անկատար
Գը քըրիմ գօ	Գը քըրէյի գօ
Գը քըրէս գօ	Գը քըրէյիր գօ
Գը քըրէ գօ	Գը քըրէր գօ
Գը քըրինք գօ	Գը քըրէյինք գօ
Գը քըրէք գօ	Գը քըրէյիք գօ
Գը քըրին գօ	Գը քըրէյին գօ

Ռոդոսթոյի «գօ» մասնիկը առաջացել է Պոլսի «գոր» մասնիկի նման, կորցնելով ր-ն։ Մալաթիայի բարբառը շարունականը կազմում է «ա» մասնիկով։

Ա պ ա ռ ն ի ժ ա մ ա ն ա կ

Սահմանական ապառնի ժամանակի կազմությունը բարբառներում բավական տարբեր է։ Սահմանական եղանակի ապառնին գրական լեզվի մեջ կազմվում է ապառնի դերբայից, որ անորոշ դերբայի սեռական հոլովաձևն է։

Անորոշ　　　　　　　　Ապառնի
Գրել, կարդալ　　　　　　Գրելու, կարդալու

Տարօրինակ կթվա առաջին հայացքից, թե ինչու է անորոշ դերբայական հոլովը ապառնի դերբայի վերածվում, այսինքն արտահայտում ապառնիի գաղափար, գործողությունը հետագայում կատարելու գաղափար։ Այդ չափազանց հեշտ բացատրելի է։ Ներկայի կազմության ուսումնասիրությունից մենք տեսանք, որ հայերենի բոլոր բարբառներն իրենց ներկայի կազմությամբ ասում են բառացի՝ գտնվում եմ գործողության մեջ, կամ (եմ) գործողության մեջ։

Կը գրեմ—գրելու եմ, կամ (եմ) գրելու գործողության մեջ։
Գրում եմ—բառացի՝ գրի մեջ եմ, կամ (եմ) գրի գործողության մեջ։
Կրել եմ—բառացի՝ կամ ի գրել, գրելու գործողության մեջ եմ։
Գրելիս եմ—բառացի՝ գրողների շարքի մեջ եմ, կամ նրանց մեջ, որոնք գրում են։

Այսպիսով ներկայի կազմությունը բառացի ամբողջ նախադասություն է, որով արտահայտվում է ժամանակի գաղափարը։ Այդ ժամանակի գաղափարը արտահայտվում է լինել բայով, որ էական բայն է, և ապա դերբայի այն հոլովներով (հայցական եզակի, հայցական հոգնակի և ներգոյական), որոնք ցույց են տալիս գործողության տեղը, այն առարկան, որի մեջ կատարվում է գործողությունը, իսկ եթե գործողությունը կատարվում է հենց իրեն՝ գործողության մեջ, ապա այդ կրկնակի գործողությունը արտահայտում է ներկա ժամանակի գաղափարը։ Այդ է պատճառը, որ խոնարհումը մեր բոլոր բարբառներում դերբայական է, որովհետև դերբայն արտահայտում է գործողության ընդհանուր գաղափարը, դերբայի ներգոյական հոլովը գործողությունը դարձնում է նաև տեղ, որի հետևանքով առաջանում է ներկայի ժամանակի գաղափարը, իսկ այդ գաղափարը ավելի ուժեղացնելու, ապա գործողության լինելիությունը ցույց տալու համար գործածվում է էական բայի արմատը, իսկ ենթակայի դեմքը ցույց տալու համար օգտագործվում են էական բայի դեմքի վերջավորությունները, որի հետևանքով և էական բայը (եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին) վերածվում է օժանդակ բայի։ Երբ սակայն, խոնարհումը չի կատարվում դերբայով, ինչպես «կը» ճյուղի բարբառներում, այդ դեպքում դեմքի վերջավորությունը և գործողության գաղափարը արտահայտվում են բայի խոնարհված ձևերով, իսկ գործողության մեջ լինելու գաղափարը ար-

տահայտված է կա, կա ու—կու—կը—գը մասնիկով։ Իսկ շարունակականի համար օգտագործվում է նույն կա բառը, բայց ոչ ու շաղկապի հետ, այլ որ շաղկապի հետ, որից ստացվում է կա որ—կոր—գոր>գօր։

Այսպես են վարվում հայերենի բարբառները ներկայի գաղափարը արտահայտելու համար։ Այդ ցույց է տալիս, որ բոլոր լեզուները ժամանակների գաղափարը սկզբից արտահայտել են առանձին բառերով, նույնպես և դեմքի գաղափարներն արտահայտել են առանձին բառերով կամ դերանուններով, որոնք հետագայում կորցնելով իրենց էական իմաստը, անկախ բառ լինելու հատկանիշը, վերածվել են ժամանակ և դեմք ցույց տվող ձևույթների։ Հնչյունական փոքրիկ կամ ավելի մեծ փոփոխությունները կտրել են նրանց կապը, արտաքին նմանությունը իրենց նախորդ ձևերից և վերածել նաև օժանդակ բառերի, ապա վերջավորությունների։ Այդ են ցույց տալիս հենց հայերեն լեզուն և նրա բարբառները։

Եթե անորոշ դերբայի հայցական և ներգոյական հոլովաձևերը օգտագործվել են ներկայի գաղափար արտահայտելու՛ համար, իսկ գործիական հոլովը օգտագործվել է շարունակական ժամանակները արտահայտելու համար (Ղարաբաղի և Հադրութի բարբառներում), ապա սեռական հոլովը օգտագործվել է ապառնիի գաղափարն արտահայտելու համար։ Ինչպե՞ս և ինչո՞ւ։

Մեզ հայտնի է, որ համարյա բոլոր լեզուներում սեռական հոլովի հիմնական ֆունկցիան է պատկանելություն ցույց տալը, օրինակ՝ մարդու գլուխ, սեղանի ոտ, պտղի գույն և այլն, այդ բոլոր կապակցությունների մեջ մարդու, սեղանի և պտղի ձևերը ցույց են տալիս գլուխ, ոտ և գույն գոյականների պատկանելությունը։ Նույն եղանակով էլ գրելու նամակ, ուտելու հաց, գնելու տետր կապակցությունների մեջ, գրելու, ուտելու, գնելու ձևերը սեռական են և ցույց են տալիս, որ նամակ, հաց և տետր առարկաները պատկանում են դրանց։ Միայն՝ այստեղ սեռական ձևերը ոչ թե առարկա են ցույց տալիս, որոնց պատկանում են ուրիշ առարկաներ, այլ գործողություններ, որոնց պատկանում են ուրիշ առարկաներ, որ նշանակում է, թե այդ առարկաների վրա կկատարվեն կամ կատարվելու են սեռականով արտահայտված բայերի գործողությունը։ Հետևաբար գործողության պատկանելը նշանակում է այդ գործողության ապագա կատարումը պատկանող առարկաների նկատմամբ։ Ուստի անորոշ դեր-

բայի սեռական հոլովները ցույց տալով պատկանելություն գործողությանը՝ նշանակում են ապագայի գործողություն, այսինքն ապառնի ժամանակ։ Այսպես է առաջ եկել ապառնի ժամանակի գաղափարը հայերենի բայերում, նաև գրաբարում (գրելոց, գալոց և նման ձևերը հոգնակի սեռական են)։

Գրական լեզվի նման ապառնի ժամանակ կազմում են հայ բարբառների զգալի մասը. ամենից առաջ Երևանի, Թբիլիսիի, Հաշտարխանի, Ջուղայի, Պոլսի բարբառները։ Յուրաքանչյուրը դրանցից կազմում է երկու տիպի ապառնի—բուն ապառնի և անցյալի ապառնի։ Բուն ապառնին կազմվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, իսկ անցյալի ապառնին կազմվում է նույն ապառնի դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով։ Այդ բարբառներում ապառնիի կազմության տարբերությունն այն է, որ յուրաքանչյուրը գործ է ածում օժանդակ բայի իր սովորական ձևերը զանազան արմատներով կամ հնչյունափոխության զանազան եղանակներով։ Օրինակ, Երևանի բարբառը օգտագործում է օժանդակ բայի «է» արմատը բոլոր դեմքերում, բացի երրորդ դեմքից, որտեղ օգտագործում է ա արմատը (գրելու յա), իսկ անցյալի անկատարում կորցնում է էական բայի արմատը բոլոր դեմքերում և պահպանում միայն երրորդ դեմքում (գրելու յի, գրելու յիր, գրելու յէր)։

Ջուղայի բարբառը օգտագործում է օժանդակ բայի «ա» արմատը բոլոր դեմքերի համար (ամ, աս, ա և այլն), իսկ անցյալ անկատարում օժանդակ բայի «է» արմատը։

Հիշյալ բարբառների ապառնի ժամանակի կազմության ընդհանուր պատկերը կլինի հետևյալը.

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Երեվանի բ.	Թբիլիսիի բ.	Աստրախանի բ.
գըրէլու յէմ	գըրէլու իմ	կըրէլի յէմ
« յէս	« իս	կըրէլի յէս
« յա	« յէ	կըրէլի յա
« յէնք	« ինք	կըրէլի յէնք
« յէք	« իք	կըրէլի յէք
« յէն	« ին	կըրէլի յէն

Ջուղայի բարբ.	Պոլսի բարբ.
սիրելու ամ	սիրէլու էմ
« աս	« էս
« ա	« է

սիրելու	անք	սիրէլու	էնք
«	աք	«	էք
«	ան	«	էն

Ա ն ց յ ա լ ի   ա պ ա ռ ն ի

Երևանի բարբ.		Թբլիսիի բարբ.		Աստրախանի բարբ.		Պոլսի բարբ.	
գըրէլու	յի	գըրէլու	էի	կըրէմ	իիմ	գըրէլու	էի
«	յիր	«	էիր	«	իիր	«	էիր
«	յէր	«	էր	«	էր	«	էր
«	յինք	«	էինք	«	իինք	«	էինք
«	յիք	«	էիք	«	իիք	«	էիք
«	յին	«	էին	«	իին	«	էին

Ղարաբաղի բարբառի Ջանգեզուրի ենթաբարբառում ապառնի դերբայի ու վերջավորությունը շրթնայնանում է և վերածվում վ-ի, երբ օժանդակ բայն անմիջապես հաջորդում է դերբային։ Օրինակ, կ'իրէլո̈ւ վէմ, կ'իրէլո̈ւ վէս, կ'իրէլո̈ւ վա այլն Գնդևազ գյուղի խոսվածքում ապառնին ունի կիրհլօ յհմ ձևը։

Ապառնի դերբայի գործածությունը իբրև ժամանակ կազմող ձև չենք գտնում մի շարք բարբառներում, օրինակ՝ Վանի, Կարնո, Տիգրանակերտի, Խարբերդ-Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Համշենի և այլ։ Այդ բարբառները, Վանի բացառությամբ, ապառնիի փոխար են գործեն ածում հարկադրական եղանակի ձևերը բիդի, բըդը, բի, բը, դը մասնիկներով և բառերով։ Վանի բարբառը ներկայի և անցյալ անկատարի ձևերը գործ է ածում իբրև ապառնի։

Երևանի բարբառի Լոռու մի շարք գյուղական խոսվածքներում ապառնի դերբայի փոխարեն գործ է ածվում ենթակայական դերբայն իբրև նպատակի պարագա. օրինակ՝

—Ո՞ւր ես գը̀նըմ։

—Գը̀նըմ էմ ջուր բերող (այսինքն ջուր բերելու)։

Հավարիկի բարբառում ապառնի դերբայը արտասանվում է իբրև գ'իրէլա̈, գ'ա̈րդա̈լա̈։ Դժվար է որոշել՝ արդյոք դա հնչյունական փոփոխություն է, թե մի ուրիշ բան։ Հավանական է, որ Հավարիկի բարբառի բայերի հոլովման ժամանակ սեռականն ստանում է ա վերջավորություն, փոխանակ ու վերջավորության։ Ա հոլովումը կարելի է գտնել մեր մի քանի բարբառներում։ Օրինակ՝ Մեղրու բարբառում հատուկ անունները սեռականում ունենում են ա վերջավորություն. օրին. ուղղական—Կարապետ սեռ.—Կարապետա։

Ունենք բարբառներ, որոնք ապառնի ժամանակը կազմում են այլ կազմություն ունեցող դերբայներով։ Ղարաբաղի բարբա-

ող ապառնին կազմում է ական *վերջավորություն ունեցող դեր-բայով։ Այդ* ական *վերջավորությունը ավելանում է անորոշ դեր-բայի վրա, որով և ստացվում է, օրինակ,* կ'իրըլական, կըրթըլական *ձևերը։* Ական *վերջավորությունը ածական կազմող ածանց է.* ընկէրական, բարէկամական, աշակէրտական *և այլն։ Այդ* ական *վերջավորությունը գրաբարում նաև հոգնակի կազմող վերջավո-րություն էր։* Ական *ածանցը ածականներին տալիս է ստացական իմաստ, այսինքն արտահայտում է պատկանելություն. օրինակ՝* աշակէրտական *նշանակում է* աշակէրտին պատկանող *կամ* աշակէր-տի *պատկանող (աշակերտական տետր, աշակերտական նստարան),* ընկէրական *նշանակում է* ընկէրին պատկանող, ընկէրին վէրաբէրող *(ընկերական խրատ, ընկերական խորհուրդ—ընկերի խորհուրդ, ընկերի խրատ)։*

Անորոշ դերբայի վրա դրվելով ական *վերջավորությունը նշանակում է* գործողության պատկանի, գործողության վէրաբէրի, *ուստի* կ'իրըլական և կըրթըլական *նշանակում են* գրելուն պատկանող կարդալուն պատկանող։ *Մենք արդեն ասացինք, որ գործողու-թյան պատկանելը հայերենում նշանակում է ապագայում գործել, ապագայում կատարել այդ գործողությունը, ճիշտ այնպես, ինչ-պես անորոշ դերբայի սեռական հոլովի արտահայտած իմաստն է։ Այդ պատճառով էլ անորոշ դերբային* ական *ավելացնելով՝ ստացվում է ապառնի դերբայ։ Հայտնի է, որ հայերեն լեզուն ստացականությունը արտահայտում է սեռական հոլովով, որը հաճախ փոխարինվում է ածականով, որ ունի* ական *վերջավո-րություն և կամ ընդհակառակն, այդ պատճառով էլ բնական է, որ անորոշ դերբայի վրա* ական *վերջավորություն ավելացնելով՝ պետք է այնպիսի մի գաղափար արտահայտել, ինչպիսին արտա-հայտում է անորոշ դերբայի սեռական հոլովը։*

Նախորդ բարբառների նման Ղարաբաղի, նաև Հադրութի, բարբառը, ական *վերջավորություն ունեցող ապառնի դերբային ավելացում է օժանդակ բայի ձևերը և կազմում ապառնի ժա-մանակ։*

Ապառնի		Անցյալի ապառնի			
Ղրբ. և Հադրութ		Ղրբ. և Հադր.		Հադրութ	
խըմըլական	*ըմ*	*խըմըլական*	*ի*	*խըմըլական*	*ըմ լըյ*
«	*ըս*	«	*իր*	«	*ըս «*
«	*ա*	«	*ար*	«	*ա «*

խըմըլական	ընք	խըմըլական	ինք	խըմըլական	ընք լա՛լ
«	ըք	«	իք	«	ըք «
«	ըն	«	ին	«	ըն «

Մեղրու և Կարճևանի բարբառները ապառնի ժամանակը կազմում են ական վերջավորություն ունեցող դերբայով (գ՛իրըլական, կ՛ըրդըլական)։

Այս դերբայը ևս առաջանում է անորոշից, վրան ավելացրած ական վերջավորությունը, որն առաջացել է ացական վերջավորությունից։ Այդ վերջավորությունը կազմված է գրաբարի հոգնակի սեռական ձևից (գրելոց, կարդալոց) ական ածականական վերջավորությունից։ Գրական լեզվի մեջ ացական ածանցը քիչ գործածություն ունի, բայց այնուամենայնիվ կա, օրինակ,

Տէրևնէրն ին գնացական
Արմատնէրն ին մնացական։

Այդ ացական վերջավորությունը ցույց է տալիս գործողությունը ապագայում կատարող, հետագայում կատարող։ Մնացական բառը նշանակում է՝ նա որ ապագայում կմնա, որի պատճառով և այդ սովորական հայերեն բառը դարձել է հատուկ անուն։ Երեխայի՛ն կոչելով Մնացական, ցանկանում են դրանով ներշնչել նրան երկար կյանք, այսինքն՝ չի մեռնի, կմնա։

Մեղրու և Կարճևանի բարբառները ացական վերջավորությունը ավելացնում են անորոշ դերբայի՛ն, որոնք արտահայտում են ապառնի գործողության գաղափար, սակայն այդ ացական վերջավորությունը ձայնավորի սղում է ունենում և ց աֆրիկատը թուլանում է, պարզանում, վերածվում բաղաձայնին ս հնչյունի, որից ստացվում է ական (գ՛իրըլական, կըրդըլական),

Ապառնի ժամանակ կազմելու համար այդ դերբայներին ավելանում են օժանդակ բայի համապատասխան ձևերը, որից և ստացվում է խոնարհման հետևյալ պատկերը։

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Մեղրու		Կարճևանի	
կըրդըլա՛սկան	ըմ	կ՛ըրդըլասկան	ըմ
«	ըս	«	ըս
«	ա	«	ա
«	ըք	«	ըք

«	ըք	«	ըք
«	ըն	«	ըն

Անցյալի ապառնին այդ նույն բարբառները կազմում են անցյալի անկատարի նման, այսինքն իրենց ապառնի ձևին ավելացնում են համապատասխան մասնիկը։ Մեղրու բարբառն ավելացնում է «լӓ» մասնիկը, իսկ Կարճևանի բարբառը ավելացնում «լէ» մասնիկը, որից ստացվում է հետևյալ պատկերը։

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Մեղրու			Կարճևանի		
կըրդըլӓսկան	ըմ	լӓ	կ'ըրդըլասկան	ըմ	լէ
«	ըս	«	«	ըս	«
«	ա	«	«	ա	«
«	ըք	«	«	ըք	«
«	ըք	«	«	ըք	«
«	ըն	«	«	ըն	«

Ագուլիսի բարբառը ապառնի ժամանակը կազմում է այնպիսի մի դերբայով, որն ունի էլ (օլ) վերջավորություն։ Այդ մի նորություն է, որ ուրիշ բարբառներում չկա. այդ դերբայեն ավելացնելով իր սովորական «ել» մասնիկը, կազմում է անցյալի ապառնին։ Ընդհանուր պատկերը հետևյալն է.

Ապառնի		Անցյալի ապառնի		
թակել	ըմ	թակել	ըմ	նէլ
«	ըս	«	ըս	«
«	ӓ	«	ӓ	«
«	ըք	«	ըք	«
«	ըք	«	ըք	«
«	ըե	«	ըն	«

Նույն Ագուլիսի բարբառը ապառնի է կազմում նաև երկրորդ ձևով, մի առանձին դերբայով, որ ունի «ելաց» (ելӓց) վերջավորություն։

Այդ դերբայը գտնում ենք նաև Ջուղայի բարբառում— «սիրէլէց» ձևով։ Հասկանալի է այդ։ Ջուղայի և Ագուլիսի բարբառները եղել են միմյանց սահմանակից և, բնական է, կարող էին գործածել միևնույն դերբայը։ Այս դերբայի կազմությունը հայտնի չէ, բայց կարելի է ենթադրել, որ գրաբարյան «գրելոց» ապառնի դերբայն է կամ նրա նման կազմված։

Գրաբարի ապառնի դերբայը սխտեմով նման է աշխարհա-

բարին, այսինքն անորոշ դերբայի հոլոված ձևն է և սեռական հոլովը է, սակայն ոչ թե եզակի, ինչպես աշխարհաբարում, այլ հոգնակի։ Հետևաբար գրաբար լեզվի մտածողության մեջ ևս ապառնի ժամանակի հասկացողությունն առաջացել է կատարվող գործողության, բայց ցույց տված գործողության պատկանելու գաղափարից։ Հոգնակին չի խանգարում այդ իմաստն արտահայտելու, այլ միայն ուժեղացնում է պատկանելու գաղափարը։

*Ագուլիսի և Ջուղայի բարբառների ապառնի դերբայը կազմված է նույն անորոշ դերբայից, միայն Ագուլիսի բարբառում ավելանում է «աց» վերջավորությունը (գ'իրէլաց), իսկ Ջուղայի բարբառում «էց» (գիրէլէց)։ Հավանական պետք է համարել, որ «աց», «էց» վերջավորություններն ունեն միևնույն ծագումը, այն է՝ առաջացել են «եաց» ձևից (գրելեաց), որ Ագուլիսի բարբառում ստացվել է «աց», *եաց* երկբարբառի հնչյունափոխությամբ։*

Ագուլիսի բարբառում «եա» երկբարբառը արտասանվել է «ա», իսկ Ջուղայի բարբառում հայերեն լեզվի սովորական եղանակով վերածվել է «ե»-ի (հմմտ. Առաքեալ, Առաքել, մեռեալ—մեռել). այդ ձևերը նման են գրական լեզվի վաղակատար ժամանակի «ել» վերջավորության, որ առաջացել է «եալ» ձևից (գրեալ—գրել, մնացեալ—մնացել):

Ագուլիսի և Ջուղայի բարբառները սահմանական եղանակի ապառնի ժամանակը կազմելու համար իրենց դերբային ավելացնում են օժանդակ բայի համապատասխան ձևերը։ Անցյալի անկատարը կազմելու համար Ագուլիսի բարբառը ապառնիին ավելացնում է անցյալ ժամանակի գաղափար ցույց տվող «նէլ» մասնիկը, իսկ Ջուղայի բարբառը օժանդակ բայի ներկայի ձևերի փոխարեն գործածում է անցյալի անկատար ձևերը, որից ստացվում է հետևյալ պատկերը.

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Ագուլիսի				Ջուղայի			
Ապառնի		*Անցյալի ապառնի*		*Ապառնի*		*Անցյալի ապառնի*	
գ'իրէլ'ըց	*ըմ*	*գ'իրէլ'ըց*	*ըմ նէլ*	*գ'իրէլէց*	*ամ*	*գ'իրէլէց*	*ի*
«	*ըս*	«	*ըս* «	«	*աս*	«	*իր*
«	*ը̈*	«	*ը̈* «	«	*ա*	«	*էր*
«	*ըք*	«	*ըք* «	«	*անք*	«	*ինք*
«	*ըք*	«	*ըք* «	«	*աք (էք)*	«	*իք*
«	*ըն*	«	*ըն* «	«	*ան*	«	*ին*

Շամախու բարբառը ապառնին կազմելու համար «ալու» (կըրթիլու) վերջավորություն ունեցող դերբայից բացի գործ է ածում բոլորովին մի այլ վերջավորությամբ դերբայ։ Շամախու բարբառում ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբային ավելացրած «ան» վերջավորություն, կ'իրիլան, կըրթիլան։ Կարելի է ենթադրել, որ Երևանի բարբառի գիրելօն, կարթալօն, դերբայական ձևերը Շամախու բարբառի նույն ձևերն են, թեև «ա» ձայնավորի վերածվելը օ-ի Երևանի բարբառում որևէ այլ փաստով չի հիմնավորվում։

Շամախու բարբառի դերբայի կազմությունը ևս բավական տարօրինակ ձևով արտահայտում է ապառնիի գաղափարը։ Մեզ հայտնի է, որ հայերենում «ան» մասնիկը եղել է հոգնակիի վերջավորություն (ձիան—ձիեր), իսկ ժամանակակից գրական լեզվի մեջ գործ է ածվում իբրև միևնույն գործողությունը կատարող, իրեն արհեստ դարձնող անձ կամ առարկա։ Օրինակ՝ ասվում է սուտասան, վիպասան, կծան, փա̈կան, կռան, կապան և այլն։ Անորոշ դերբայի վրա դրվելով ան վերջավորությունը նշանակում է գործողությունը շատ կատարողների թվին պատկանող, որ փոխաբերաբար կնշանակի գործողությունը պիտի հետո կատարի, եթե պատկանում է այդ գործողությունը կատարողների շարքին. օրինակ՝ կ'իրիլան ամ—նշանակում է հաճախ գրողներից եմ, ուրեմն հետո ևս կգրեմ, այսինքն գրելու եմ։

Շամախու բարբառը ևս մյուսների նման սահմանական եղանակի ապառնի ժամանակը կազմելու համար դերբայի վրա ավելացնում է օժանդակ բայի իրեն հատուկ ձևերը։

Անցյալի ապառնի կազմելու համար համապատասխանաբար ավելացնում է օժանդակ բայի անցյալի անկատար ձևերը։

Ղարաբաղի մարզի Մարդակերտի շրջանի մի քանի գյուղեր ապառնի ժամասակը կազմում են Շամախու բարբառի նման, միայն որոշ գյուղեր դերբայի վերջին ա-ն երկարացնում են, որից ստացվում է կ'իրլաան ըմ, կիրլաան ըս, կիրլաան ա։

Ապառնի ժամանակի կազմության մի առանձին ձև էլ նկատում ենք մենք Թբիլիսիի բարբառում։ Սովորաբար Թբիլիսիի բարբառը իր ապառնի ժամանակը կազմում է Երևանի նման, այսինքն գրելու, կարդալու ձևի դերբայներով և օժանդակ բայով. օրինակ՝

գըրելու իմ	գըրէլու էի
« իս	« էիր
« է	« էր
և այլն	և այլն։

Թբիլիսիի բարբառը ապառնի դերբայ է կազմում նաև ացու *վերջավորությամբ՝* տալացու, գրէլացու։

Ացու *վերջավորությունը գրական լեզվի մեջ մի ածանց է, որ նշանակում է ապագայում դարձող, դառնալու համար, կամ դառնալու նախապատրաստվող։ Օրինակ՝ վարպետացու—նշանակում է ապագայում վարպետ դարձող, կամ վարպետ դառնալու նախապատրաստվող, փեսացու—նշանակում է ապագայում փեսա դարձող կամ փեսա դառնալու համար անձ և այլն։*

Հասկանալի է, որ ացու *վերջավորությունը արդեն ունի իր մեջ ապառնիի գաղափար, ուստի անորոշ դերբայի վրա ավելանալով՝ ցույց է տալիս գործողության ապառնի, ապագայի կատարումը, այդ պատճառով էլ* գրելացու, տալացու, կարթալացու *նշանակի ապագայում գրելու, ապագայում կարդալու գործողություն կատարելը։*

Այս ապառնի դերբայը Ղարաբաղի և Մեղրու բարբառներում գործածվում է ք *ածանցով, որից ստացվում է* կիրըլացուք, կըրըլյա̈ցու̈ք *(Ղրբ.) ձևերը, որը հաճախ կրավորական իմաստ է արտահայտում նաև։ Ըստ երևույթին* ք *վերջավորությունը դա հոգնակի* ք *մասնիկն է, որ դրվելով* ացու *ածանցի վրա՝ արտահայտվում է գրելու գործողության պատկանողների շարքին գտնվելու իմաստը։ Մենք գիտենք, որ գրաբարում ապառնի դերբայը կազմվում է հոգնակի ձևից, այն է՝ հոգնակի սեռականից։ Ըստ երևույթին այստեղ ևս մենք գործ ունենք նույն երևույթի հետ, որ սովորական է հայերենի մեջ։ Փոխանակ գործողության գաղափարն ուղղակի կերպով արտահայտելու՝ ասվում է՝* գործողների շարքին պատկանել։

Մյուս դերբայների նման այս դերբայից ևս ապառնի կազմելու համար օգտագործվում է օժանդակ բայի ձևերը։

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Թբիլիսիի		Ղարաբաղի	
տալացու	*իմ*	*սիրըլյա̈ցուք*	*ըմ*
գընալացու	*իմ*	*սիրըլյա̈ցուք*	*ի*
գըրէլացու	*իմ*	*սիրըլյա̈ցուք ի*	*ըլյա̈լ*

Այս բոլոր օրինակներից տեսանք, որ ապառնի ժամանակը հարարյա բոլոր բարբառներում կազմվում է դերբայական եղանակով, վերլուծական եղանակով, դերբայով և օժանդակ բայով։

Սովորաբար ապառնիի դերբայական *բոլոր ձևերը կազմվում են երկու եղանակով՝ կամ* սեռական հոլովով *և կամ* պատկանելություն *ցույց տվող* ածանցներով, *որ ավելանում են անորոշ դեր-*

բայի վրա։ Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում ապառնի դերբայի հիմնական իմաստը ստացականությունն է, գործողությանը պատկանելը, գործողության վերաբերվելը։

«Կը» ճյուղի մի շարք բարբառներում ապառնին կազմվում է բոլորովին տարբեր եղանակով։ Ավելի ճիշտն ասած՝ ապառնի ձև առանձին անկախ գոյություն չունի, ուղղակի ներկայի ձևը օգտագործվում է նաև ապառնի ժամանակ արտահայտելու համար։

Վանի բարբառում ներկայի և անցյալ անկատարի ձևերը օգտագործվում են իբրև ապառնի ժամանակ արտահայտելու ձևեր։ Օրինակ կ'ըկ'իրեմ—նշանակում է և՛ գրում եմ, և գրելու եմ և կգրեմ. կ'ըկ'իրի նշանակում է՝ և գրում էի, և գրելու էի, և կգրեի։

Աշխարհաբար գրական լեզվի մեջ արդեն պայմանական եղանակի ձևերը օգտագործվում են նաև ապառնի ժամանակ արտահայտելու համար, միայն թե այդ ապառնին անստույգ է, ենթադրական է. մինչդեռ ստույգ ապառնիի համար գործածվում է սահմանական եղանակի դերբայական ապառնին։ Հասկանալի է, որ «կը» մասնիկով խոնարհումը համարյա բոլոր բարբառներում արտահայտում է ապառնիի գաղափար, միայն Վանի և մի երկու այլ բարբառներում, արտահայտում է նաև սահմանական եղանակի ապառնին, այսինքն ստույգ ապառնի, ստույգ գործողություն։

Կան բարբառներ, որոնք ապառնի ժամանակի համար օգտագործում են հարկադրական եղանակի ձևերը։ Օրինակ Մուկաց, Պոլսի, Տրապիզոնի և այլ բարբառները, այսպես՝

Բիդի էրթամ, բի էրթամ, դի էրթամ, բիըզօմ...=գնալու եմ։

Վերջապես Տիգրանակերտի բարբառը ապառնին կազմում է սովորական ներկայից, վրան ավելացնելով սկզբից «մըն» անծանոթ մասնիկը. իսկ անցյալի անկատարի համար նույն մասնիկն ավելացնում է սովորական անցյալի անկատարի վրա, որից ստացվում է.

Ապառնի	Անցյալի ապառնի
մըն փէրիմ (բերում եմ)	*մըն փէրէյի*
» փէրիր	*» փէրէյիր*
» փէրէ	*» փէրէր*
» փէրինք	*» փէրէյինք*
» փէրիք	*» փէրէյիք*
» փէրին	*» փէրէյին*

Ժխտական ձևը կազմելիս ավելացնում է չ մասնիկը ըսկըզբից, օրինակ՝

Ներկա	Անցյալի անկատար
Չըմըն փէրիմ	Չըմըն փէրէյի
Չըմըն փէրիր	Չըմըն փէրէյիր
և այլն.	և այլն.

«Մըն» մասնիկը ավելանալու դեպքում Տիգրանակերտի բարբառի ներկայի սովորական «գը» մասնիկը դուրս է ընկնում։

Վ ա ղ ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Սահմանական եղանակի վաղակատար ժամանակը գրական լեզվում կազմվում է երկու տեսակ, կամ «էլ» ըամ «էր» վերջավորությամբ։ Արևմտահայ գրական լեզվի մեջ վաղակատարը կազմվում է «էր» վերջավորությամբ (գրէր էմ, կարդացէր էմ)։ Արևելահայ գրական լեզվի և մեր ժամանակի սովետական գրական լեզվի մեջ վաղակատար դերբայն ունի «էլ» վերջավորություն (գրէլ էմ, կարդացէլ էմ)։ Բարբառներում վաղակատար դերբայը նույնպես կազմվում է կամ «էլ» և կամ «էր» վերջավորությամբ։ Կան, սակայն, բարբառներ, որտեղ վաղակատար դերբայը կազմվում է «իլ» վերջավորությամբ, այսպես է Թբիլիսիի բարբառում. օրինակ՝

տարիլ	իմ	մնացիլ	իմ
»	իս	»	իս
»	է	»	է
»	ինք	»	ինք
»	իք	»	իք
»	ին	»	ին

Երևանի բարբառը կազմում է «էլ» վերջավորությամբ։ Երևանի նման «էլ» վերջավորությամբ է կազմում Ղարաբաղի ենթաբարբառի Գանձակի խոսվածքը։ Գանձակի խոսվածքում վաղակատար ժամանակը գործ է ածվում պայմանական եղանակի իմաստով. օրինակ,

—Դէ՛ ասէլ էիր էլի, այսինքն՝ դեհ կասէիր է՛լի։

Ղարաբաղի բարբառում գրական լեզվի «ել» խոնարհման բայերն ունեն ալ վերջավորություն (կ՛իրալ, նըստալ, խօսալ),

իսկ «ա» խոնարհման որոշ բայեր ունենում են եցալ կամ ացալ վերջավորություն։

Ղարաբաղի բարբառի նման վաղակատար դերբայ են կազմում Շամախու, Հադրութի և Մեղրու բարբառները։

«Ս» ճյուղի բարբառներից Ուրմիայի բարբառը վաղակատար դերբայը կազմում է «իր» վերջավորությամբ (կ՚իրիր, կ՚ա՛րթացիր)։ Նույն ձևով էլ «Լ» ճյուղի բարբառները կազմում են իրենց վաղակատար դերբայը։ Այդ ճյուղի բարբառների խոսվածքներում հաճախ վերջին ր-ն վերածվում է յ հնչյունի (Կոտայքի շրջանի Արամուս գյուղ՝ (կիրիյ յեմ)։ Վանի բարբառը, որը պատկանում է «Կը» ճյուղին, վաղակատար դերբայը կազմում է նույնպես, ինչպես և Ուրմիայի բարբառը։ «Կը» ճյուղի մյուս բարբառները ինչպիսին են Պոլսի, Կարնո, Համշենի, Մալաթիայի, Արաբկիրի և այլն, ունենում են կամ «իր» կամ «էր» վերջավորություն, նայած բային և նրա խոնարհմանը։ Արևմտահայ գրական լեզուն էլ վաղակատար դերբայը կազմում է «էր» վերջավորությամբ։

Այս բոլոր բարբառները վաղակատար ժամանակը կազմելով նույնանուն դերբայից՝ վրան ավելացնում են օժանդակ բայի ներկայի ձևերը իրենց համապատասխան կամ սովորական սխտեմով։ Անցյալի վաղակատարը նույնպես յուրաքանչյուրն իրեն հատուկ սխտեմով է կազմում. այսինքն՝ այն բարբառները, որոնք օժանդակ բայը օգտագործում են և՛ ներկայի և՛ անցյալի համար, գործ են ածում նաև այդ բոլորը վաղակատար դերբայի հետ, իսկ այն բարբառները, որոնք անցյալ ժամանակները կազմում են առանձին բառամասնիկով, վաղակատար ժամանակները կազմելիս վարվում են նույն եղանակով, ինչ որ անցյալի անկատարը կազմելիս, այսինքն՝ վաղակատարի վրա ավելացնում են ներկայի ձևերը, իսկ անցյալի վաղակատարի համար գործ են ածում իրենց հատուկ կցառ-մասնիկը՝ Ուրմիայի բարբառը՝ «էր», Հադրութի բարբառը՝ «լա՛լ» և այլն։

Վ ա ղ ա կ ա տ ա ր

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Երևանի	Կարնո	Ուրմիայի	Արթվինի	Հադրութի
գըրէլ էմ	գըրէր էմ	կ՚իրիր եմ	գըրիլ իմ	կ՚իրա՛լ ըմ
» էս	» էս	» ես	» իս	» ըս
» ա	» է	» ի	» է	» ա

»	էնք	»	էնք	»	ենք՛	»	ինք	»	ընք
»	էք	»	էք	»	էք՛	»	իք	»	ըք
»	էն	»	էն	»	են	»	ին	»	ըն

Անցյալի վաղակատար

Բարբառներ

Գըրէլ ի	գըրէր էյի	կ՚իրիր եմ էր	գըրէլ էյի	կ՚իրա̈լ ըմ լա̈լ
» իր	» էյիր	» ես էր	» էյիր	» ըս »
» էր	» էր	» էր	» էր	» ա »
» ինք	» էյինք	» էնք՛ էր	» էյինք	» ընք »
» իք	» էյիք	» էք՛ էր	» էյիք	» ըք »
» ին	» էյին	» են էր	» էյին	» ըն »

Վաղակատար ժամանակի, ինչպես և բոլոր բաղադրյալ ժամանակների, ժխտական ձևերը կազմվում են զանազան եղանակով. այսպես, օրինակ՝ Երևանի բարբառներում, ավելի ճիշտ Երևանի բարբառի մի շարք խոսվածքներում «չ» ժխտական մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա և օժանդակ բայը մնում է իր տեղում, մինչդեռ գրական լեզվի մեջ օժանդակ բայը տեղափոխվում է դերբայից առաջ, օրինակ։

Գրական լեզու	Երևանի բարբառ
Գրել եմ, չեմ գրել	*Գըրէլ էմ, գըրիլ չէմ*
Գրել ես, չես գրել և այլն։	*Գըրէլ ես, գըրէլ չէս և այլն։*

Երևանի բարբառում հաճախ գործ է ածվում նաև չէմ գրէ *ձևը, այսինքն վերջին լ-ն դուրս է նետվում։*

Ղարաբաղի բարբառում վաղակատարի, ինչպես և բոլոր բաղադրյալ ձևերի, ժխտականը նույնպես կազմվում է «չ» մասնիկով, որը դրվելով օժանդակ բայի վրա, թողնում է նրան իր տեղում (կ՚իրա̈լ չըմ, կըրթէցալ չըմ)։

Ուրմիայի և «Լ» ճյուղի բարբառներում ժխտականը կազմըվում է «չ» մասնիկով, որն ավելանում է օժանդակ բայի վրա և նրան տեղափոխում դերբայից առաջ, իսկ դերբայը կորցնում է իր վերջին «ր» հնչյունը (չեմ կ՚իրի, չեմ կ՚ա̈րթացի)։ Այդ ձևով վաղակատարի ժխտականը նույնանում է պայմանականի ժխտականի հետ։

Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառներում անցյալ վաղակատարի ժխտականը կազմելու համար «չ» մասնիկն ունեցող օժանդակ բայի և դերբայի միջև ընկնում է անփոփոխ «էր» մասնիկը։

Ձեմ էր կ՚իրի, չես էր կ՚իրի, չէր կ՚իրի։
Ձենք՚ էր կ՚իրի և այլն։

Խոյի խոսվածքներում, ինչպես և Վանի բարբառում դերբայը հաճախ ունենում է «ե» վերջավորություն (չեմ կիրե), իսկ Մեղրու և Կարճևանի և Ագուլիսի բարբառներում՝ «էլ» և «ալ» վերջավորությունները։

Մի շարք բարբառներում, ինչպես Շաղախի, Կարճևանի, Մեղրու և Ագուլիսի, վաղակատար ժամանակը բացակայում է, բայց վաղակատար ժամանակի ձևերը կան։ Այդ ձևերը գործ են ածվում անցյալ կատարյալի իմաստով։ Օրինակ՝

Կըրքէցալ ըմ—կարդացի (Շաղախ), գ՚իրէլ ըմ—գրեցի (Կարճևան)։

Գ՚իրալ ըմ—գրեցի (Մեղրի), թակալ ըմ—թակեցի (Ագուլիս)։

Այսպիսով վաղակատարի ձևերը կան, բայց իմաստը չկա, մինչդեռ անցյալ կատարյալի ձևերը չկան, բայց իմաստը կա, որ արտահայտվում է վաղակատարի ձևերով։

Այս բարբառներում անցյալի վաղակատար ձևերը չկան, որ ապացույց է, թե վաղակատար ժամանակը գործ է ածվում ոչ վաղակատար իմաստով, որովհետև ամեն մի բարբառում, որի մեջ գտնում ենք վաղակատարի ձևերն ու իմաստը, գտնում ենք նաև անցյալ վաղակատարի ձևերն ու իմաստը։

Բերում ենք անցյալ կատարյալի լրիվ աղյուսակը.

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Շաղախի		Կարճևանի		Մեղրու		Ագուլիսի	
Կ՚ըրա̈լ	ըմ	գ՚իրէլ	ըմ	գ՚իրալ	ըմ	թակալ	ըմ
»	ըս	»	ըս	»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա̈	»	ա	»	ա
»	ընք	»	ընք	»	ընք	»	ընք
»	ընք՚	»	ընք	»	ընք	»	ընք
»	ըն	»	ըն	»	ըն	»	ըն

Հ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ

Հայերեն գրական լեզուների մեջ հարակատար ժամանակը կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ձևերով։ Օրինակ՝ Ըսած էմ, Ըսած էս, Ըստած է և այլն, կամ Ըսած էի, Ըստած էիր, Ըսած էր և այլն։

Հայերենի բարբառներում ևս հարակատար ժամանակը գոյություն ունի և կազմվում է նույն եղանակով, միայն այն տարբերությամբ, որ յուրաքանչյուր բարբառ դերբայի ավելաց-

նում է օժանդակ բայի յուր ձևերը, իսկ դերբայը արտասանում է ըստ իր հնչյունական կառուցվածքի։ Մեծ մասամբ հարակատար դերբայն ունի ած վերջավորություն, բայց մի քանի բարբառներում, ինչպիսին է Մշո բարբառը, Մոկաց բարբառը և Երևանի բարբառի Նոր Բայազետի ենթաբարբառը հարակատար դերբայը կազմում է ուկ վերջավորությամբ, օրինակ՝ Ճստուկ, քճուկ, խառուկ և այլն։

Վանի բարբառը հարակատար դերբայը կազմում է և ած և ուկ վերջավորություններով։ Դժվար է որոշել, թե դրանցից որն է իրենը—Վանինը։ Կարծում ենք, որ ուկ վերջավորությունը պետք է ընդունել Մշո բարբառի սեփականություն, որ փոխանցվել է Վանի բարբառին։ Մյուս կողմից ած վերջավորությունն էլ Վանինը չէ, որովհետև, եթե այդ դերբայն ունենար, կարիք չէր ունենա նույն դերբայի մի այլ տարբերակը գործածել։ Ամենահավանականն այն է, որ Վանի բարբառը հարակատար դերբայ չի ունեցել և յուրացրել է և՛ արևմուտքից (Մշո բարբառից) և արևելքից։

Հարակատար ժամանակների կազմությունը բոլորովին նույնն է, ինչ որ վաղակատար ժամանակինը. յուրաքանչյուր բարբառ օժանդակ բայի իրեն հատուկ ձևերով է հարակատար ժամանակները կազմում։ Հարակատար ժամանակը որոշ բարբառներում արտահայտում է և վաղակատարի իմաստը և հարակատարի իմաստը։ Այդ լինում է այն բարբառներում, որտեղ վաղակատարի իմաստը չկա. օրինակ՝ թակած ըմ—թակել եմ, թակած եմ (Ագուլիս), կ՚ըրած ըմ—գրել եմ, գրած եմ (Շաղախ). գ՚իրէծ ըմ—գրել եմ, գրած եմ (Կարճևան). գ՚իրած ըմ—գրել եմ, գրած եմ (Մեղրի)։

Որոշ բարբառներ հարակատար ժամանակը սիրում են հաճախ գործածել, օրինակ Ղարաբաղի և Պոլսի բարբառները։ Այդ բարբառներում կարող է կազմվել հարակատար դերբայով բազմաթիվ երկրորդական բաղադրյալ ժամանակներ. օրինակ՝

Գըրած էմ, գըրած էմ էղէր, գըրած գըլլամ, գըրած գըլլամ էղէր, գըրած գըլլամ գօր, գըրած գըլլամ էղէր, գըրած ըլլամ նէ, գըրած ըլլամ նէ էղէր, գըրած էղա, գըրած բէդի ըլլամ, գըրած բէդի ըլլամ էղէր և այլն։

Դրանից դուրս, հենց հարակատար դերբայը ավելի է սիրված Պոլսի բարբառում, քան վաղակատարը։

Կան բարբառներ, որոնք արևելահայ գրական լեզվի նման չեն սիրում հարակատար դերբայը հաճախ գործածել։ Ավելին՝

մի շարք բայերից այդպիսի դերբայ կազմելը նույնիսկ ան-
հնարին է։

Հ ա ր ա կ ա տ ա ր ժ ա մ ա ն ա կ ի
խ ո ն ա ր հ մ ա ն ա ղ յ ու ս ա կ

Թբիլիսի		Ղարաբաղ		Նոր-Նախիջևան	
էրած	իմ	սիրած	ըմ	բէրաձ	իմ
»	իս	»	ըս	»	իս
»	է	»	ա	»	է
»	ինք	»	ընք	»	ինք
»	իք	»	ըք	»	իք
»	ին	»	ըն	»	ին

Ագուլիս		Կարճևան		Մուշ	
թակած	ըմ	գ'իրէծ	ըմ	գ́ըրուկ	իմ
»	ըս	»	ըս	»	իս
»	ա	»	ա̈	»	է
»	ըք	»	ըք	»	ինք
»	ըք	»	ըք	»	իք
»	ըն	»	ըն	»	ին

Ա ն ց յ ա լ ի հ ա ր ա կ ա տ ա ր

Թբիլիսի		Ղարաբաղ		Նոր-Նախիջևան	
էրած	էյի	սիրած	ի	բէրաձ	էյի
»	էյիր	»	իր	»	էյիր
»	էր	»	ար	»	էր
»	էյինք	»	ինք	»	էյինք
»	էյիք	»	իք	»	էյիք
»	էյին	»	ին	»	էյին

Ագուլիս			Կարճևան			Մուշ	
թակած	ըմ	նէլ	գ'իրէծ	ըմ	լէ	գըրուկ	էնք
»	ըս	»	»	ըս	»	»	էր
»	ա	»	»	ա̈	»	»	էր
»	ըք	»	»	ըք	»	»	էնք
»	ըք	»	»	ըք	»	»	իք
»	ըն	»	»	ըն	»	»	ին

Ա ն ց յ ա լ կ ա տ ա ր յ ա լ ժ ա մ ա ն ա կ

Գրական լեզվի և գրաբարի անցյալ կատարյալն ունի ցո-
յական հիմք (խոսքը կանոնավոր բայերի մասին է)։ Գրաբարում

միայն ու խոնարհման բայերը անցյալ կատարյալը կազմում են անցոյական հիմքով։ Օրինակ՝

Գրաբար		Գրական լեզու	
Գրեցի	Թողի	գրեցի	Թողեցի
գրեցեր	Թողեր	գրեցիր	Թողեցիր
գրեաց	եԹող	գրեց	Թողեց
գրեցաք	Թողաք	գրեցինք	Թողեցինք
գրեցիք	Թողիք	գրեցիք	Թողեցիք
գրեցին	Թողին	գրեցին	Թողեցին

Հայերենի բարբառների մեծ մասի անցյալ կատարյալը նման է գրական լեզվին, տարբերուԹյուն լինում է միմիայն ձայնավոր հնչյուններին մեջ կամ մեկ երկու դեմքում, օրինակ՝

Բ ա ր բ ա ռ ն ե ր

Թբիլիսի	Ղարաբաղ	Վան	Համշեն
Գըրէցի	կ՛իրէցէ	կ՛իրեցի	Թափէցի
գըրէցիր	կ՛իրէցէր	կ՛իրեցիր	Թափէցիր
գըրէց	կ՛իրից	կ՛իրեց	Թափից
գըրէցինք	կ՛իրէցէնք՛	կ՛իրեցինք՛	Թափէցաք
գըրէցիք	գ՛իրէցէք՛	կ՛իրեցիք՛	Թափէցիք
գըրէցին	կ՛իրէցէն	կ՛իրեցին	Թափէցին

Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառները անցյալ կատարյալը կազմում են երկու ձևով՝ «ե» խոնարհման բայերինը անցոյական հիմքով, իսկ «ա» խոնարհման բայերինը ցոյական հիմքով։ Միաժամանակ այդ բարբառների անցյալ կատարյալի առաջին դեմքը ունենում է «մ» վերջավորուԹյուն։ Օրինակ՝

Մարաղա	Ուրմիա	Մարաղա	Ուրմիա
Ջöք՛öւմ	կ՛իրիմ	աղացըմ	աղացըիմ
չöք՛öւր	կ՛իրիր	աղացիր	աղացըիր
չöք՛öւց	կ՛իրէց	աղաց	աղաց
չöք՛öւնք՛	կ՛իրինք՛	աղացընք	աղացըինք՛
չöք՛öւք՛	կ՛իրիք՛	աղացըք	աղացըիք՛
չöք՛öւն	կ՛իրին	աղացըն	աղացըին

Աստրախանի բարբառը և Աստաբատ գյուղի խոսվածքը ևս անցյալ կատարյալի առաջին դեմքում ունենում են մ վերջավորուԹյուն. օրինակ՝

Աստրախանի բրբ.	Աստապատի խոսվ. (Երև. բրբ)
կընացիմ	*գընացիմ*
կընացիր	*գընացիր*
կընաց	*գընաց*
կընացինք	*գընացինք*
կընացիք	*գընացիք*
կընացին	*գընացին*

Ասացինք արդեն, որ Շաղախի, Մեղրու և Կարճևանի բարբառները անցյալ կատարյալի հիմքը չունեն. այդ ժամանակի փոխարեն գործածում են վաղակատարի ձևերը։

Ագուլիսի բարբառը անցյալ կատարյալը կազմում է երկու ձևով։ Առաջին ձևը սովորական վերջավորությունների միջոցով է կատարվում, որ շատ հիշեցնում է գրաբարի ներկային։ Կարծում ենք, որ դա նույն բանն է, ինչ որ Ուրմիայի բարբառի «է» խոնարհման բայերի անցյալ կատարյալը, որը չունի ցոյական հիմք։ Երկրորդ ձևը բաղադրյալ ձևն է, որ հատուկ է Ագուլիսին և նրա նման բարբառներին։

Ագուլիսի բարբ.

Ա ն ց յ ա լ կ ա տ ա ր յ ա լ

I ձև	II ձև
Թակամ	*Թակալ ըմ*
Թակաս	*Թակալ ըս*
—	*Թակալ ա*
Թակաք	*Թակալ ըք*
Թակաք	*Թակալ ըք*
Թական	*Թակալ ըն*

Որոշ բարբառներ, ինչպես օրինակ՝ Ջուղայի կամ Աստրախանի բարբառը, անցյալ կատարյալում բայերի խոնարհումը փոխում են. օրինակ՝ տաամ, տաար, տաավ *և այլն.* տըվամ, տըվար, տըվ՛ավ *և այլն.* տաի, տաիր, տաավ, տաինք, տաիք, տաին։

Ը ղ ձ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

Աշխարհաբար գրական լեզուների ըղձական եղանակի ձևերը բոլորովին նույնն են գրաբարի ներկայի ձևերի հետ, տարբերությունը միայն իմաստի մեջ է։

Գրաբար	Աշխարհաբար
Գրեմ—գրում եմ	*Գրեմ—ցանկալի է՝ գրեմ*
գրես—գրում ես	*գրես— » » գրես*
Գրէ—գրում է	*գրե (գրի) » » գրի*

Բարբառներում անփոփոխ պահպանվում են ըղձական ապառնի ժամանակի ձևերը, տարբերություն լինում է միայն հնչյունների մեջ ըստ այն բարբառի հատկության, որը կազմում է իր ըղձականը։

Այսպես, օրինակ, Թբիլիսիի բարբառը արտասանում է գրիմ, գրիս, գրէ և այլն։ Երևանի բարբառը՝ գրէմ, գրէս, գրի։ Ուրմիայի բարբառը՝ կ՛իրեմ, կ՛իրես կ՛իրի և այլն։

Բարբառների մեջ տարբերություն կա միայն ըղձականի անցյալի ապառնիի կազմության մեջ։

Ըղձական անցյալի ապառնին գտնում ենք համարյա բոլոր բարբառներում։

Այդ ժամանակը բացակայում է միայն Շաղախի բարբառում։

Ուրմիայի, Մարաղայի, Խոյի, Կարճևանի, Հադրութի և Ագուլիսի բարբառները ըղձականի անցյալի ապառնին կազմում են անալիտիկ սիստեմով, ավելացնելով ապառնիի վրա յուրաքանչյուրն իրեն հատուկ բառ-մասնիկը։ Օրինակ՝

Ուրմիա	Կարճևան	Մեղրի	Ագուլիս	Մարաղա
		Եզակի		
կ՛իրեմ	*գ՛իրիմ*	*գ՛իրիմ*	*Թակիմ*	*կ՛իրիմ*
կ՛երես	*գ՛իրիս*	*գ՛իրիս*	*Թակիս*	*կ՛իրիս*
կ՛իրի	*գ՛իրի*	*գ՛իրի*	*Թակի*	*կ՛իրի*
կ՛իրենք՛	*գ՛իրիք՛*	*գ՛իրիք՛*	*Թակիք*	*կ՛իրինք՛*
կ՛իրէք՛	*գ՛իրիք՛*	*գ՛իրեք՛*	*Թակիք*	*կ՛իրէք՛*
կ՛իրեն	*գ՛իրին*	*գ՛իրին*	*Թակին*	*կ՛իրէն*
		Հոգնակի		
կ՛իրեմ էր	*գ՛իրիմ լէ*	*գ՛իրիմ լä*	*Թակիմ նէլ*	*կ՛իրիմ էր*
կ՛իրես էր	*գ՛իրիս լէ*	*գ՛իրիս լä*	*Թակիս նէլ*	*կ՛իրիս էր*
կ՛իր էր	*գ՛իրի լէ*	*գ՛իրի լä*	*Թակի նէլ*	*կ՛իրէր*
կ՛իրենք՛ էր	*գ՛իրիք՛ լէ*	*գ՛իրիք՛ լä*	*Թակիք նէլ*	*կ՛իրինք՛ էր*
կ՛իրէք՛ էր	*գ՛իրիք՛ լէ*	*գ՛իրիք՛ լä*	*Թակեք նէլ*	*կ՛իրէք՛ էր*
կ՛իրեն էր	*գ՛իրին լէ*	*գ՛իրին լä*	*Թակին նէլ*	*կ՛իրին էր*

Պայմանական եղանակ

Պայմանական եղանակը բարբառների մեծ մասում կազմըված է գրականին նման, այսինքն ըղձականի վրա ավելացվում է «կը» եղանակիչ։

Մի շարք բարբառներ պայմանական եղանակը տարբեր ձևով են կազմում։

Կարճևանի և Մեղրու բարբառները պայմանական եղանակի ապառնին կազմում են անորոշ դերբայով և օժանդակ բայով.

Պայմանական եղանակ

Ապառնի

Կարճևան		Մեղրի	
գ'իրիլ	իմ	գ'իրիլ	իմ
»	իս	»	իս
»	ա̈	»	ի
»	իք'	»	իք'
»	իք'	»	իք'
»	ին	»	ին

Կարճևանի և Մեղրու բարբառները պայմանական եղանակի անցյալի ապառնին կազմում են իրենց հատուկ անալիտիկ սիստեմով։ Շաղախի բարբառը, որ պայմանական եղանակի ապառնին կազմում է սովորական «կը» մասնիկով, անցյալի ապառնին կազմում է անալիտիկ սիստեմով, օգտագործելով անորոշ դերբայը, օժանդակ բայը և «լա̈լ» մասնիկ բառը։

Պյմանական անցյալի ապառնի

Կարճևան			Մեղրի			Շաղախ		
Գ'իրիլ	իմ	լէ	գ'իրիլ	իմ	լա̈	կ'ըրիլ	ըմ	լա̈լ
»	իս	»	»	իս	»	»	ըս	»
»	ա̈	»	»	ի	»	»	ա̈	»
»	իք'	»	»	իք'	»	»	ըք	»
»	իք'	»	»	իք'	»	»	էք'	»
»	ին	»	»	ին	»	»	ըն	»

Հարկադրական եղանակ

Աշխարհաբար գրական լեզվի հարակադրական եղանակը կազմվում է ըղձական եղանակով և պիտի եղանակիչ բառով, որ դրվում է սովորաբար խոնարհվող բայից առաջ. օրինակ.

Ըղձական եղանակ		Հարկադրական եղանակ	
Ապառնի	Անցյալի ապառնի	Ապառնի	Անցյալի ապառնի
գրեմ	*գրեի*	*պիտի գրեմ*	*պիտի գրեի*
գրես	*գրեիր*	*պիտի գրես*	*պիտի գրեիր*
գրի	*գրեր*	*պիտի գրի*	*պիտի գրեր*

Հայերենի բարբառներում հարկադրական եղանակ կազմելու սկզբունքը գրական լեզվի նման է, տարբերությունն այն է, որ խոնարհվող բայը ենթարկվում է հնչյունական փոփոխության, և կամ տարբեր է լինում եղանակիչը։

Երևանի և Թբիլիսիի բարբառը, սակայն, մի որոշ տարբերություն ներկայացնում են։ Երևանի բարբառը հարկադրական եղանակը կազմում է երկու ձևով. մեկ՝ գրական լեզվի նման (պըտի գըրեմ, պըտի գըրէս, պըտի գրի և այլն, պըտի գրէի, պըտի գըրէիր, պըտի գըրէր և այլն), մեկն էլ յուրօրինակ ձևով. խոնարհվող բայը մնում է անորոշ դերբայի անփոփոխ ձևով, իսկ եղանակիչը ստանում է դեմքի վերջավորություններ, այսինքն խոնարհվում է. այդ դեպքում եղանակիչն ընկնում է խոնարհվող բայից հետո. օրինակ՝

Ապառնի

Գըրել պըտէմ> պիտի գրեմ
գըրել պըտէս> պիտի գրես
գըրել պըտի> պիտի գրի
գըրել պըտէնք> պիտի գրենք
գըրրել պըտէք> պիտի գրեք
գըրել պըտէն> պիտի գրեն

Անցյալի ապառնի

Գըրել պըտէյի> պիտի գըրեի
գըրել պըտէյիր> պիտի գրեիր
գըրել պըտէր> պիտի գրեր
գըրել պըտէյինք> պիտի գրեինք
գըրել պըտէյիք> պիտի գրեիք
գըրել պըտէյին> պիտի գրեյին

Թբիլիսիի բարբառը ևս հակադրական եղանակը կազմում է մեկ՝ գրական լեզվի նման, մեկ էլ՝ յուրօրինակ ձևով։ Այդ բարբառի հարկադրական եղանակի կազմության յուրօրինակությունն այն է, որ եղանակիչը ստանում է բայական վերջավորություններ, խոնարհվում է՝ մնալով խոնարըհվող բայից առաջ։

Հարկադրական անցյալի ապառնին լինում է երեք ձևով, մեկ՝ գրականին նման, մեկ՝ Երևանի բարբառին նման, մեկ էլ՝ բաղադրված ձևով, երբ եղանակիչն ու խոնարհվող բայը մնում են անփոփոխ, վերջում ավելանում են օժանդակ բայի անցյալի անկատար ձևերը, որոնք ծառայում են դեմք ցույց տալու համար (պիտի գրել էի)։

Հ ա ր կ ա դ ր ա կ ա ն ե ղ ա ն ա կ

Ապառնի		Անցյալի ապառնի				
Պիտիմ	գրել	պիտէյի	գրել	պիտի	գրել	էի
պիտիս	»	պիտէյիր	»	»	»	էիր
պիտէ	»	պիտէր	»	»	»	էր
պիտինք	»	պիտեյինք	»	»	»	էյինք
պիտիք	»	պիտէյիք	»	»	»	էյիք
պիտին	»	պիտէյին	»	»	»	էյին

Ղարաբաղի բարբառը հարկադրական եղանակը կազմում է գրականի նման. օրինակ՝ պիտի կ՚երիմ, սակայն Ղարաբաղի ենթաբարբառներում, հատկապես Շամշադինի, Ղազախի և Դիլիջանի խոսվածքներում հարկադրական եղանակի կազմությունը տարբեր է։ Այդ խոսվածքներում հարկադրական եղանակը կազմվում է խոնարհվող բայի անորոշ դերբայից, հարկադրական եղանակիչի մնացորդ «տ» հնչյունից և օժանդակ բայից. օրինակ՝

Ապառնի		Անցյալի ապառնի		
Գրրել	դէմ	Գրրել	դի	(դէյի)։
»	դէս	»	դիր	(դէյիր)
»	դի	»	դէր	(դէր)
»	դէնք	»	դինք	(դէյինք)
»	դէք	»	դիք	(դէյիք)
»	դէն	»	դէն	(դէյէն)

Հարկադրական եղանակ կազմելու համար «պիտի» եղանակիչը իր լրիվ ձևով օգտագործվում է բարբառների մեկ մասում։

Համշենի բարբառում «պիտի» եղանակիչը դրվում է հետադաս, բայց առաջին դեմքում կորցնում է իր սկզբի «պ» հնչյունը, որից ստացվում է հետևյալ պատկերը.

Բ՛էրիմ	իդի	Բ՛էրէյի	բիդի
Բ՛էրիս	բիդի	Բ՛էրէյդը	բիդի
և այլն		Բէրէր	բէդի
		և այլն։	

Կիլիկիայի բարբառում հարկադրական եղանակիչն է «բի-դէ», սակայն իբրև հարկադրական եղանակիչ օգտագործվում է նաև «գիզիմ» ձևը, որ «կուզեմ» բայն է. այդ դեպքում խոնարհվող բայը մնում է անփոփոխ (գիզիմ բէյի, գիզիս բէյի և այլն)։

Որոշ ենթաբարբառներում «պիտի» եղանակիչը գործ է ածվում «բի» ձևով և դրվում է բայի հետ միացած (բիշդօմ—պիտի երթամ, բիգգօմ—պիտի գամ)։

Կիլիկայի բարբառում հարկադրական եղանակի ընդհանուր պատկերը կլինի հետևյալը։

		[պիտի գրեմ]		[պիտի երթամ]	
Բիդի	կ՛էյիմ,	գիզեմ	կ՛էյի	բիշդօմ	բիգ՛գօմ
»	կ՛էյիս	գիզիս	կ՛էյի	բիշդօս	բէգ՛գօս
»	կ՛էյէ	գիզէ	կ՛էյի	բիշդօ	բիգ՛գօ
»	կ՛էյինք	գիզինք	կ՛էյի	բիշդօնք	բիգ՛գօնք
»	կ՛էյէք	գիզէք	կ՛էյի	բիշդէք	բիգ՛գէք
»	կ՛էյին	գիզին	կ՛էյի	բիշդօն	բիգ՛գօն

Ակնա բարբառում իբրև հարկադրական եղանակիչ օգտագործվում է «դի» բառը, որ «պիտի» բառի կեսն է, ձայնավորով սկսվող բայերից առաջ օգտագործվում է պարզ «դ» հնչյունը։

Ապառնի		Անցյալի ապառնի	
Դի գ՛ըրիմ	դ՛ունդիմ	դի գ՛ըրէյի	դ՛ունդէյի
» գ՛ըրէս	դ՛ունդէս	դի գ՛ըրէյիր	դ՛ունդէյիր
» գ՛ըրէ	դ՛ունդէ	դի գ՛ըրէր	դ՛ունդէր
» գ՛ըրինք	դ՛ունդինք	դի գ՛ըրէյանք	դ՛ունդէյանք
» գ՛ըրէք	դ՛ունդէք	դի գ՛ըրէյիք	դ՛ունդէյիք
» գ՛ըրին	դ՛ունդին	դի գ՛ըրէյին	դ՛ունդէյին

Սեբաստիայի բարբառում օգտագործվում է և «բիդի» լրիվ ձևը, իսկ ձայնավորներից առաջ նաև «բի» բառը, որ «պիտի» բառի մասն է, օրինակ.

Բիդի գ՛ըրեմ,	բի ընեմ	բիդի գ՛ըրէի	բի ընէյի
և այլն		և այլն	

Նվդոկիայի բարբառում օգտագործվում է «բիդի» բառը, իսկ ձայնավորով սկսվող բայերից առաջ, այդ բառի «բիդ» ձևը, օրինակ՝

Բիդի գըրիմ, բիդ ընէմ	*Բիդի գըրէյի, բիդ ընէյի*
և այլն.	*և այլն. և այլն.*

Ռոդոստոյի բարբառը՝ հարկադրական եղանակիչը գործ է ածում «բըդը» ձևով, ձայնավորով սկսվող բառերից առաջ «բըդ»՝ ձևով, օրինակ՝ բըդը քըրէմ, բըդ անէմ և այլն. բըդը քըրէյի և այլն։

Տրապիզոնի, Պոլսի և Նոր-Նախիջևանի բարբառները «բէդի» եղանակիչն օգտագործում են և առաջադաս և հետադաս։ Օրինակ բիդի գըրէմ, բիդի գըրէս և այլն, կամ, գրէմ բիդի, գրէս բիդի, գրէ բիդի և այլն։

Խարբերդ-Երզնկայի բարբառը օգտագործում է «դըր» եղանակիչը, իսկ ժխտականի մեջ «չըվըդը», որ «չպիտի» բառն է. Օրինակ՝

Ապառնի	Անցյալի ապառնի
Դը սիրիմ	*Դը սիրէյի*
դը սիրիս	*դը սիրէյիր*
դէ սիրէ	*և այլն։*

Մոկաց խոսվածքում հարկադրական եղանակիչն է «տը», օրինակ՝

Ապառնի	Անցյալի ապառնի
Տը կ՚իրեմ և այլն	*Տը կ՚իրի և այլն։*

Ոզմիի բարբառում հարկադրական եղանակը կազմվում է կը+պա̈ բաղադրությամբ, այսինքն պայմանական և հարկադրական եղանակիչների միացմամբ (պա̈>պիտի եղանակիչի մի մասն է)։

Հ ա ր կ ա դ ր ա կ ա ն ե ղ ա ն ա կ

Ապառնի	Անցյալի ապառնի
Կըպա̈ կ՚ա̈մ	*կըպէր կ՚է*
» կ՚ա̈ս	*» կ՚էր*
» կ՚ա̈	*» կ՚էր*
» կ՚ա̈նք՚	*» կ՚ինք՚*
» կ՚ա̈ք՚	*» կ՚էք՚*
» կ՚ա̈ն	*» կ՚էն*

Նոր Նախիջևանի բարբառում օգտագործվում է «բիդ, բիդ օր», «բիդ ուր» և «բիդըր» եղանակիչները. վերջին երեքը առաջացել են «պիտի որ» կապակցությունից։

Սուչավայի բարբառում օգտագործվում է կամ «բիդօր» եղանակիչը, որ «պիտի որ» կապակցությունն է և կամ «բի» եղանակիչը, որ «պիտի» բառի առաջին կեսն է։ Ընդհանուր պատկերը լինում է հետևյալը

Ապառնի	Անցյալի ապառնի	
Բիդօր գըրիմ կամ բի գրիմ	Բիդօր գըրէյի կամ բի գըրէյի	
» գըրիս	» գըրէյիր	» գըրէյիր
» գըրէ	» գըրէր	» գըրէր
» գըրինք	» և այլն։	» և այլն։
» գըրիք		
» գըրին		

Ջուղայի բարբառում օգտագործվում է «պիտի» եղանակիչը սակայն գործածվում է նաև «պիտլա» կամ ուղղակի «պլա» ձևը, հաճախ նաև «պըտկա» ձևը, հետևաբար ստացվում է հարկադրական եղանակի կազմության հետևյալ պատկեր.

Ապառնի

Պըտի,	պիտլա,	պլա,	պըտկա	գըրեմ
»	»	»	»	գըրես
»	»	»	»	գըրի
»	»	»	»	գըրենք
»	»	»	»	գըրէք
»	»	»	»	գըրեն

Անցյալի ապառնի

պըտի,	պիտլա,	պլա,	պըտկա	գըրի
»	»	»	»	գըրիր
»	»	»	»	գըրեր
»	»	»	»	գըրինք
»	»	»	»	գըրիք
»	»	»	»	գըրին

Մինչև այժմ եղած դիտողություններից կարելի է նկատել, որ հարկադրական եղանակ կազմելու համար բարբառները օգտագործում էին «պիտի» եղանակիչը զանազան ձևափոխություններով, մերթ կրճատում են մինչև «պի», մերթ կրճատում են մինչև «տի», «տը», «դը», «բիդ» և այլն։ Միայն մի բարբառ

որ է Կիլիկայի բարբառը, հարկադրական եղանակը կազմում է մի առանձին բառով՝ «ուզել» բառով։ Բացի այդ բարբառից հայերեն լեզվի մեջ կան մի շարք բարբառներ, որոնք հարկադրական եղանակը կազմում են տարբեր եղանակիչով կամ տարբեր ձևերով։ Նախորդ ձևերին նման է կազմում Արթվինի բարբառը, որը «պիտի» բառը ուղիղ երկու կես է անում. վերջին կեսը՝ «տի» օգտագործում դրական խոնարհման համար (տի գրիմ), իսկ առաջին «կեսը (պի) օգտագործում է ժխտական խոնարհման համար, որից ստացվում է և հետևյալը.

Դրական խոնարհում

տի գրիմ,	*տի*	*գրէյի*	*կամ*	*տէյի*	*գրի*
տի գրիս,	*տի*	*գրէյիր*	*կամ*	*տէյի*	*գրի*
տի գրէ,	*տի*	*գրէր*	*կամ*	*տէր*	*գրի*
	և այլն.				

Ժխտական խոնարհում

չպի	*գրիմ,*	*չպի*	*գրէյի*	*չպէյի*	*գրի*
»	*գրիս,*	»	*գրէյիր*	*չպէյիր*	»
»	*գրէ*	»	*գրէր*	*չպէր*	»
և այլն.		*և այլն.*		*և այլն.*	

Ագուլիսի բարբառը հարկադրական եղանակը կազմում է «մը̈տը̈մ ը̈» կամ «մը̈տը̈լ ը̈» եղանակիչներով։ Կարելի է ենթադրել, որ «մը̈տը̈մ ը̈ եղանակիչը առաջացել է «պիտում ա» («պիտի» բառի խոնհարված ձևի երրորդ դեմքից՝ պիտում եմ, պիտում ես, պիտում ա) ձևից, որ առնմանության օրենքով դարձել է «մը̈տը̈մմը̈»։ Ղարաբաղի բարբառում լինում է՝ բէգմ ը̈—պէտմա, կարող էր ստացվել՝ «պիտումա»։

«Մը̈տը̈լ ը̈» ձևը առաջացել է «պիտի լը̈լ» ձևից, որ «մը̈տը̈մ ը̈» ձևի նմանությամբ դարձել է մը̈տը̈լ ը̈։ Ցղնայի ենթաբարբառում հենց լինում է «մէտում ա», որ «պետումա» ձևից է, որից և Ագուլիսի բարբառի «մը̈տը̈մ ը̈» ձևը, իսկ նույն Ցղնայի բարբառի «մէտիլ ը̈» եղանակիչից ստացված է «մը̈տը̈լ ը̈» ձևը Ագուլիսի բարբառում։ Հարկադրական եղանակի ընդհանուր պատկերը Ագուլիսի բարբառում կլինի հետևյալը.

Ապառնի			Անցյալի ապառնի		
Մա̈տա̈մ ա̈ կամ մա̈տա̈լ ա̈		*թակիմ*	*Մա̈տա̈մ ա̈*	*թակիմ*	*նէր*
»	»	*թակիս*	»	*թակիս*	»
»	»	*թակի*	»	*թակի*	»
»	»	*թակիք*	»	*թակիք*	»
»	»	*թակիք*	»	*թակիք*	»
»	»	*թակին*	»	*թակին*	»

Ցղնայի ենթաբարբառում՝

Ապառնի

Մէտիլ ա կամ մետում ա		*թակիմ*
»	»	*թակիս*
»	»	*թակի*
և այլն։		

Մեղրու բարբառում օգտագործվում է «մէտիլ» եղանակիչը ի տարբերություն Ցղնայի բարբառի «մէտիլ ա̈» ձևից։ Հատկանալի է, որ այդ «մէտիլ» ձևը նույն ծագումն ունի, ինչ որ Ցղնայի «մէտիլ ա» ձևը, սակայն «մէտիլ» ձևի գործածությունը հատուկ է միմիայն Մեղրու բարբառին։

Ապառնի	Անցյալի ապառնի
Մէտիլ գ՛իրիմ	*Մէտիլ գ՛իրիմ լա̈*
» գ՛իրիս	*» գ՛իրիս լա̈*
» գ՛իրի	*» գ՛իրի լա̈*
և այլն։	*և այլն։*

Կարճևանի բարբառում հարկադրական եղանակիչն է մա̈լլա̈, որն առաջացել է «պիտի լինել» համապատասխանաբար՝ «պիտի լա̈լ» կապակցությունից, ըստ որում «պէտումա»—«մէտումա̈» ձևի նմանողությամբ ստացվել է «պէտիլա̈լ»—«մէտիլա̈լ» ձևը, որտեղ «է»-ի հնչյունափոխությունը «ա̈»-ի և «լ»-ի նախորդող «ի»-ի անկումը տվել է մա̈տլա̈» ձևը, «տ»-ն ասիմիլյացիայի ենթարկվելով «լ»-ին տվել է «մա̈լլա̈»։

Օրինակ՝

իս մա̈լլա̈ ցում *ես պիտի տեսնեմ։*

Հադրութի բարբառում լինում է երկու ձևով. մեկ սովորական նախադաս «պիտի» եղանակիչով (բէդի կ՛իրիմ, բէդի կար-

թիմ), մեկ էլ յուրօրինակ ձևով, ըստ որի գործածվում է անկատար դերբայի ձևը և «պըտի» եղանակիչի հետադաս խոնարհվող ձևերը։ Պատկերը լինում է հետևյալը.

Ապառնի		Անցյալի ապառնի	
Բիդի կ'երիմ կամ	կ'երիս բիդիմ	Բիդի կ'երի կամ	կ'երիս բիդի
» կ'երիս	կ'երիս բիդիս	» կ'երիր	կ'երիս բիդիր
» կ'երի	կ'երիս բիդի	» կ'երըմ̈ր	կ'երիս բիդըմ̈ր
և այլն։		և այլն։	և այլն։

Շաղախի բարբառը հարկադրական ապառնին կազմում է սովորական ձևով (բիդի կ'ըրըմ), բայց անցյալի ապառնին կազմում է չորս առանձին բառերով, որոնցից առաջինն է «բիդի», երկրորդը՝ խոնարհվող բայի աներոշ դերբայը, երրորդը՝ օժանդակ բայը և չորրորդը՝ անցյալ ժամանակ կազմող «լա̈լ» անփոփոխ բառ-մասնիկը, որից ստացվում է հետևյալը։

Ապառնի	Անցյալի ապառնի
Բիդի կ'ըրըմ	Բիդի կ'երիլ ըմ լա̈լ
» կ'ըրըս	» » ըս »
» կ'ըրը	» » ը »
և այլն։	և այլն։

Բոլոր բարբառները հարկադրական եղանակները կազմելու համար եղանակիչը ավելացնում են ըղձականին, միայն Շաղախի բարբառն է հարկադրականի անցյալի ապառնիում «պիտի» եղանակիչը ավելացնում պայմանական անցյալ ապառնիին, որ Շաղախի բարբառում լինում է՝ կիրիլ ըմ լա̈լ—կգրէի։ Շաղախի բարբառը ըղձական անցյալի ապառնի չունի։

Մարաղայի բարբառում հարկադրական եղանակը կազմվում է բոլորովին տարբեր եղանակիչով, որ է «կիպտա̈» բառը։ Անցյալը կազմում է իրան հատուկ «էր» մասնիկ-բառով։

Ապառնի	Անցյալի ապառնի
Կիպտա̈ կ'երիմ	Կիպտա̈ կ'երիմ էր
» կ'երիս	» կ'երիս էր
» կ'երի	» կ'երէր
և այլն։	և այլն։

Մարաղայի բարբառն իբրև հարկադրական եղանակիչ օգտա-

գործում է նաև ադրբեջանական գա̈րճյի (գ՛ա̈րճք՛) բառը։ Օրինակ՝ գ՛ա̈րճյէ էթամ—պետք է գնամ, գ՛ա̈րճյէ կ՛իրիմ—պետք է գրեմ։

Մարաղայի բարբառի «կիպտա̈» եղանակիչը կազմված է «կը» և «պիտի» եղանակիչներից, որ միանալով և որոշ հնչական փոփոխության ենթարկվելով տվել են «կիպտա̈» ձևը։ Այս «կիպտա̈» եղանակիչը միանգամայն բացատրում է Ուրմիայի բարբառի մեջ գործածվող «կ՛ըտը» կամ «տըկ՛ը» եղանակիչը, որ կազմված է «կը»+«պիտի» կամ «պիտի»+«կը» կրկնակի եղանակիչներից։

Ուրմիայի բարբառը հարկադրական եղանակը կազմում է ըղձականից և վերոհիշյալ «կ՛ըտը» կամ «տըկ՛ը» բաղադրյալ եղանակիչից։ Հարկադրական անցյալի ապառնի եղանակը կազմվում է ըղձականի անցյալի ապառնի ձևերից։

Ապառնի	Անցյալի ապառնի
Կ՛ըտը կամ տըկ՛ը կ՛իրեմ	Կ՛ըտը կամ տըկ՛ը կ՛իրեմ էր
» » » կ՛իրես	» » » կ՛իրես »
» » » կ՛իրէ	» » » կ՛իրէր »
և այլն։	և այլն։

ՄԱՍՆ II

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՉՈՐՍ ՃՅՈՒՂԵՐԸ

ՀԱՅԵՐԵՆԻ «ՈՒՄ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Հայերենի «Ում» ճյուղի բարբառները բռնում են պատմական Հայաստանի հյուսիսային և հյուսիս արևելյան նահանգները։ Դրանք են՝ Երևանի (կամ՝ Արարատյան), Թբիլիսիի, Ագուլիսի, Ղարաբաղի, Շամախու, Աստրախանի և Ջուղայի բարբառները։ Այդ բարբառներից Երևանի բարբառն է միայն գտնվում Հայաստանում, մասամբ էլ Ղարաբաղի բարբառը (Զանգեզուր, Կապան)։ Ղարաբաղի, Շամախու և Ագուլիսի բարբառները գտնվում են Ադրբեջանում (Ագուլիսի բարբառը Նախիջևանի ինքնավար Ռեսպուբլիկայի մեջ), Աստրախանի բարբառը գտնվում է Ռուսաստանում, Նոր-Ջուղայի բարբառը գտնվում է Պարսկաստանի խորքերում, Սպահանի շրջանում, Նոր-Ջուղայում և մոտիկ գյուղերում։ Իսկ Թբիլիսիի բարբառը գտնվել է Վրաստանում։ Այդ բարբառներից գրական լեզվին համեմատաբար մոտ է Երևանի բարբառը, զգալի չափով նաև Թբիլիսիի և Ջուղայի բարբառները, մյուս բարբառները բավական տարբեր են, իսկ Ագուլիսի բարբառն այնքան տարբեր է, որ, ինչպես ակ. Մառն է ասում, կարծես թե առանձին լեզու է կազմում։ «Ում» ճյուղի բարբառների ընդհանուր գծերն են.

1. «Ում» վերջավորություն ունեցող անկատար դերբայով ներկա և անցյալի անկատար ժամանակները կազմելը.

2. Դերբայական (անալիտիկ) սիստեմով խոնարհում կազմելը (դերբայով և օժանդակ բայով).

3. Ներգոյական հոլով ունենալը։

«Ում» ճյուղի բարբառներն ունեն բաղաձայնական տարբեր սիստեմներ։ Երևանի և Ջուղայի բարբառներն ունեն քառաստիճան բաղաձայնական սիստեմ, այսինքն ենթարկվում են երկրորդ լրիվ տեղաշարժին։ Թբիլիսիի և Ագուլիսի բարբառները անտե-

ղաշարժ բաղաձայնական սիստեմ ունեն, այսինքն՝ գրաբարանման, եռաստիճան։ Ղարաբաղի, Շամախու և Աստրախանի բարբառները ենթարկվում են առաջին տեղաշարժին, այսինքն ունեն երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սիստեմ։

Այս ճյուղի բարբառները տարբերվում են միմյանցից նաև բացառական հոլովի կազմությամբ. Երևանի, Ջուղայի, Ագուլիսի և Աստրախանի բարբառներն ունեն բացառականում «ից» վերջավորություն, Ղարաբաղի և Շամախու բարբառներն «ան» վերջավորություն, իսկ Թբիլիսիի բարբառը «էմէն» կամ «էն» վերջավորություն։

«Ում» ճյուղի բարբառները միմյանցից որոշ չափով տարբեր են դերանունների հոլովումով և բայերի խոնարհումով։

Բայի ժամանակների կազմությամբ տարբեր է միայն Ագուլիսի բարբառը, մյուս բարբառներն ընդհանուր առմամբ նման են։

1. ԵՐԵՎԱՆԻ (ԿԱՄ ԱՐԱՐԱՏՅԱՆ) ԲԱՐԲԱՌ

Երևանի բարբառի հետքերը գտնում ենք հին գրականության, հին աղբյուրների մեջ սկսած 13-րդ դարից։ Առաջինը դրանցից Վարդան Բարձրաբերդցին է, որի մոտ գտնում ենք հետևյալ ոճը. «Ամենու սիրտն հետ քեզ լաւ են, և քեզ աղօթք կը առնում»։

Երևանի բարբառից այստեղ նկատելի է անկատար դերբայը, դերբայական խոնարհումը և նախադասության կառուցվածքը, որտեղ օժանդակ բայը ընկնում է դերբայից առաջ։

Երևանի բարբառի հետքերը երևում են նաև 15-րդ դարի հեղինակների մոտ, բայց Երևանի բարբառի ամենատիպիկ ներկայացուցիչը պետք է համարենք Զաքարիա Ագուլեցուն, որը լինելով Ագուլեցի և ապրելով այլուր ամուսմենայնիվ գրել է Երևանի բարբառով։ Ճիշտ է՝ Երևանի բարբառի հետ խառնված կան և՛ Ջուղայի և՛ Ագուլիսի բարբառների հետքերը, սակայն լեզվի հիմնական կառուցվածքը Երևանի բարբառինն է։ Իբրև օրինակ վերցնենք Ագուլեցու լեզվից մի հատված.

«Այս ԻԸ տարի այ, օսմանցին Վենետիկին Թուջին յիտ Գրիդուճն Բ բէրթի վերայ կուիվ այ։ Այս վեզիրս գնաց, Բ տարէ նստաւ, Բ բերթն առաւ»[1])։

---

[1]) Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, էջ 88, ՀՍՀՄ ԳԱԿ Հայկ. ֆիլիալ, Երևան, 1938։

Երևանի բարբառով խոսում են Արարատյան դաշտում, Վայոց Ձորում (Միկոյանի և Ազիզբեկովի շրջաններում), Կոտայքում, Նոր-Բայազետի, Լոռու և Սպիտակի շրջաններում։ Գրականությունից հայտնի է, որ Երևանի բարբառով խոսել են Սուրմալվի ու Կաղզվանի շրջանները։ Ինչպես տեսնում ենք, Երևանի բարբառը խոսվել է ընդարձակ տարածության վրա, սակայն այդ տարածության վրա այժմ բնակվող հայությունը խոսում է ոչ միայն Երևանյան բարբառով։ Բազմաթիվ գաղթեր պատճառ են դարձել, որ Երևանի բարբառով խոսողների կողքին կան այժմ հայերենի բազմաթիվ բարբառներ, օրինակ՝ Վաղարշապատի շրջանում 27 գյուղից 14 գյուղ խոսում է Երևանի բարբառով, 8 գյուղ խոսում է Ուրմիայի բարբառով, 3 գյուղ խոսում է Մշո բարբառով, 2 գյուղ խառը բարբառով և այլն։

Վայոց Ձորի շրջանում Երևանի բարբառով խոսողներին կոչում են «հին հայեր», իսկ Ուրմիայի, Խոյի և այլ բարբառով խոսողներին կոչում են «Թազա հայեր», թեև այդ հայերը հարյուր տարուց ավելի է, որ գաղթել եկել են այստեղ։

Վերևը նշված տարածության վրա բնակվողների մեծագույն մասը խոսում է տարբեր բարբառներով, ուստի Երևանի բարբառով խոսողները կղզիանման, հատ ու կենտ ընկած են տարբեր բարբառների մեջ։ Երևանի բարբառով խոսող քիչ թե շատ մեծ քանակությամբ գյուղեր գտնում ենք Երևանի, Կոտայքի, Վաղարշապատի և Աշտարակի շրջաններում։ Երևանի բարբառով խոսում են լոռեցիները. Լոռին է միակ վայրը, որտեղ Երևանի բարբառը կազմում է ճնշող մեծամասնություն, սակայն լոռեցիների խոսվածքը, պատկանելով Երևանի բարբառին, միաժամանակ և ունի իր մեջ թույլ տարբեր Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառներից, այնպես որ կարելի է այն անվանել Երևանի ենթաբարբառ։

Երևանի բարբառը, խառնվելով Մշո բարբառի արևելյան և հյուսիս-արևելյան (Արճեշ) հատվածին, տվել է Նոր-Բայազետի ենթաբարբառը, որին պատկանում են նաև Ախտայի շրջանի մի շարք գյուղերի խոսվածքները։ Երևանի բարբառի ենթաբարբառ է համարվում Աստաբատ գյուղի խոսվածքը, որի մեջ կա խառնուրդ Ջուղայի բարբառից։

Երևանի բարբառով մաքուր խոսվածք կարելի է գտնել Փարպի գյուղում, որովհետև Երևանի խոսվածքը գրական լեզվի ազդեցությամբ ենթարկված է ևիստ փոփոխության և մահանալու վրա է։ Վաղարշապատի և Քանաքեռի խոսվածքները որոշ տար-

բերություններ ունեն Երևանի բարբառից։ Մի քիչ ավելի հարազատ է Երևանի բարբառին Նորքի խոսվածքը։ Աշտարակի և Օշականի խոսվածքները միմյանց նման լինելով՝ որոշ տարբերություն ունեն Երևանից, որոշ տարբերություն են ներկայացնում նաև Ազիզբեկովի և Միկոյանի շրջանի գյուղերի խոսվածքները։

Երևանի բարբառի մի հատված է նաև այժմյան Թբիլիսիի խոսվածքը, որը տեղափոխվել է այդտեղ Երևանից գնացած գաղթականության միջոցով։

Թբիլիսիի խոսվածքի մեջ (Հավլաբար թաղում) նկատվում են Թբիլիսիի բարբառի հետքերը, որի հետևանքով էլ այժմյան Թբիլիսիում գտնվող Երևանյան բարբառը որոշ Թբիլիսյան երանգ է ստացել։

Երևանի բարբառը Դիլիջանի և Ղազախի ու Շամշադինի շրջանում խառնվելով Ղարաբաղի բարբառի հետ կամ ազդելով այդտեղի Ղարաբաղի խոսվածքների վրա՝ զգալի չափով փոփոխել է Ղարաբաղի բարբառի ընդհանուր պատկերը, որի հետևանքով դժվար է լինում որոշել, թե այդտեղի բարբառները Երևանի՞ն են պատկանում, թե՞ Ղարաբաղին։ Կարծում ենք, որ Գանձակի (Կիրովաբադի) ենթաբարբառի տարբերությունները Ղարաբաղի բարբառից նույնպես բխում են կամ բացատրվում են Երևանի ազդեցությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի բարբառը ունի վեց պարզ ձայնավորներ, որոնք են ա, ե, ի, ը, օ և ու։ Բարբառումս չկան երկբարբառային արտասանության «ո» և «ե» հնչյունները։ Միայն Աշտարակի խոսվածքում, ինչպես և Լոռու շրջանում լսվում է «ուէ» արտասանությունը. օրինակ՝

Փուէղ—փող, փուէչի—հոգի, վուէտ—ոտն և այլն։

Երևանցին վերին բարձրության ձայնավորներ արտասանելու մեջ դժվարանում է։ Երևանի բարբառի «ա» ձայնավորը ետին շարքի միջին բարձրության արտասանություն ունի, «օ» ձայնավորը նույնպես, «է» ձայնավորը նույնպես միջին բարձրության, բայց առաջին շարքի, «ու» ձայնավորը նույնպես միջին բարձրության և շրթնային արտասանություն ունի։ Մի խոսքով կարելի է ասել, որ Երևանի բարբառի ձայնավորները բառացի զուգադիպում են մեր ժամանակակից արևելահայ գրական լեզվի ձայ-

նավորների արտասանության։ Երևանի, բարբառը ձայնավորները և հատկապես «ու» ձայնավորը սղում է շեշտվող վանկից թե առաջ և թե հետո (օր. գըրըմ էմ, դա՛ցս...)։

Գրաբարի համեմատությամբ նկատում ենք հետևյալը։

ե> յէ, ես> յէս, եզն> յէզ.
> է, երազ> էրազ, բերք> բէրք.
> ի, երեք> իրէք, երեկո> իրիգուն.
ո> վօ, որ> վօր, որդի> վօրթի.
> օ, կտոր> կտօր, ձոր> ձ՛օր, ողորմի> օղօրմի։

Երևանի բարբառի բաղաձայնական սիստեմը քառաստիճան է, այսինքն ենթարկված է երկրորդ աստիճանի լրիվ տեղաշարժի։ Գրաբարի համեմատությամբ բառասկզբի ձայնեղները արտասանվում են շնչեղ ձայնեղ, բառամիջի խուլերը արտասանվում են ձայնեղ, բառասկզբի խուլերը մնում են խուլ, իսկ շնչեղները մնում են շնչեղ, որից ստացվում է հետևյալ պատկերը.

բ՛ բ պ փ բերան> բ՛էրան, Փարպի> Փարբի, պատ> պադ, փայտ> փէդ.
դ՛ դ տ թ դուռն> դ՛ուռ, Պետրոս> Պէդրօս, թուր> թուր.
ձ՛ ձ ծ ց ձու> ձ՛ու, ծիծաղել> ծիձաղէլ, ցորեն> ցօրէն.
ջ՛ ջ ճ չ ջուր> ջ՛ուր, պուճուր, չար> չար.
գ՛ գ կ ք գառն> գ՛առ, հակառակ> հագառագ, կատու> կադու, քաղաք> քաղաք.

գ, կ, ք հնչյունները ի, է ձայնավորներից առաջ քմայնանում են. օրինակ՝

գինի> գ՛ինի, կին> կ՛ին, քույր> ք՛իր։

Աշտարակի խոսվածքում այդ քմայնացումը առաջ գնալով հնչյունները վեր է ածում ջ, ճ, չ հնչյունների. օրինակ՝ ջինի> > գինի, ճէրա> կերա, չիր> քիր> քույր։

Բաղաձայնների մասնակի փոփոխություններից նկատելի է հետևյալը.

1. «Հ» հնչյունը «ո»-ից առաջ արտասանվում է ֆ, օրինակ՝ ֆօս> հոս, ֆօղ> հող, ֆօգի> հոգի, ֆօրթ> հորթ։

2. «Խ» հնչյունը վերածվում է «հ» հնչյունի, եթե բառի մեջ հաջորդող բաղաձայնը «ղ» է, օրինակ՝ հաղալ> խաղալ, հէխսել> > խեղդել, հավաղ> խաղող, հէղջ> խեղճ։

3. «Ր» հնչյունը որոշ բառերի մեջ դուրս է ընկնում. օրինակ՝ դուս> դուրս, նէս> ներս, արծել> ածել։

4. «Ր» և «ղ» հնչյուններից հետո բառամիջում և վերջում ձայնեղ հնչյունները վերածվում են շնչեղ խուլերի. օրինակ՝ մարթ > մարդ, կարք > կարգ, վօրփ > *որբ*։

5. «Տն» կապակցությունը վերածվում է «նն». օրինակ՝ գետնին > գէննին, ոտներ > վօններ։

6. «Ղ» հնչյունը խուլ հնչյուններից առաջ արտասանվում է «խ», օրինակ՝ կէխտօտ > *կեղտոտ*, մէխք > *մեղք* և այլն։

7. «Ր» հնչյունը խուլ պայթականներից առաջ արտասանվում է կոշտ «ր» կամ նույնիսկ «ռ», օրինակ՝ առտ > *արտ*, առծիվ > *արծիվ*։

8. Ռնգայիններից հետո, ինչպես և մյուս այլ դեպքերում ձայնավորներից հետո կամ առաջ խուլ հնչյունները արտասանվում են ձայնեղ, օրինակ՝ աշագէրդ > *աշակերտ*, հարգ > *հարկ*, ճանչ > *ճանճ*, ընձա > *ընծա* և այլն։

9. Բառամիջում ձայնավորներից հետո բոլոր ձայնեղները արտասանվում են շնչեղ խուլ. օրինակ՝ փօքի > *հոգի*, կարաք > *կարագ*, մարաք > *մարագ*, մարքարիտ > *մարգարիտ* և այլն։

Երևանի բարբառը երկբարբառ չունի, գրաբարյան բոլոր երկբարբառների դիմաց այստեղ գտնում ենք պարզ հնչյուններ. օրինակ՝

«Այ» երկբարբառի փոխարեն ա բառավերջում և է բառասկզբում և բառամիջում. օրինակ՝ էս, էտ, էն > *այս*, *այդ*, *այն*, էծ > *այծ*, էրէխա > *երեխայ*, փէսա > *փեսայ*։

Գրաբարյան «այ» երկբարբառը բառավերջում փակ վանկի մեջ ընկնելով՝ վերածվում է նույնպես «է»-ի, օրինակ՝ *երեխայն* > էրէխէն։ «Իւ» և «ոյ» երկբարբառների դիմաց Երևանի բարբառն ունի «ի», օրինակ՝ *քոյր* > քիր, *հարիւր* > հարիր, *արիւն* > արին, *լոյս* > լիս։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևանի բարբառը շեշտը դնում է բառերի վերջընթեր վանկի վրա, որով տարբերվում է գրական լեզվից։

Երևանի բարբառի սովորական հոգնակին է «էր» կամ «նէր» նույն օրենքներով, ինչ որ գրական լեզվում, այսինքն միավանկ բառերը ստանում են «էր», իսկ բազմավանկ բառերը «նէր» վերջավորություն. օրինակ՝ սիրտ > սըրտեր, ձի > ձիեր, կարպէտ > կարպէտնէր։

Ձայնավորով վերջացող, հատկապես «ի» ձայնավորով վերջացող բառերը հաճախ ստանում են «ք» հոգնակի, օրինակ՝ գէղըցի > գէղըցիք, իքի (այգի) > իքիք։

Մի քանի բառեր կան, որ ունեն «արէնք» վերջավորություն (գէղարէնք, սէղարէնք), «տիք» վերջավորություն (կըճկըտիք, կամ կըճտճիք), տիճք վերջավորություն (ախպըրտիճք—եղբայրներ)։

Հոլովումը Երևանի բարբառում գրականին բավական մոտ է։ Հիմնական առանձնահատկությունն այն է, որ Երևանի բարբառը բոլոր հոլովներում հոդ է ստանում[1]), բացի սեռականից, մինչդեռ գրական լեզուն ունի հոդ միայն ուղղականում, տրականում և հայցականում։

Շնչավոր առարկաները Երևանի բարբառը հաճախ անձնավորում է և այդ առարկաների անունները հոլովում է անձ ցույց տվող գոյականների նման։

Ուղղական	Մար(ը)	տախտակ(ը)	հոտաղ(ը)
Սեռական	Մարի	տախտակի	հոտաղի
Տրական	Մարի(ն)	տախտակի(ն)	հոտաղի(ն)
Հայցական	Մար(ը)	տախտակ(ը)	հոտաղ(ին),
Բացառական	Մարից(ը)	տախտակից(ը)	հոտաղից(ը)
Գործիական	Մարօվ(ը)	տախտակօվ(ը)	հոտաղօվ(ը)
Ներգոյական	Մարըմ(ը)	տախտակըմ(ը)	հոտաղըմ(ը)

Հոգնակի

Ուղղական	Մարէր(ը)	տախտակնէր(ը)	հոտաղնէր(ը)
Սեռական	Մարէրի	տախտակնէրի	հոտաղնէրի
Տրական	Մարէրի(ն)	տախտակնէրի(ն)	հոտաղնէրի(ն)
Հայցական	Մարէրը	տախտակնէր	հոտաղնէր (ին)
Բացառական	Մարէրից(ը)	տախտակնէրից(ը)	հոտաղնէրեց(ը)
Գործիական	Մարերօվ(ը)	տախտակնէրօվ(ը)	հոտաղնէրօվ(ը)
Ներգոյական	Մարէրըմ(ը)	տախտակնէրըմ(ը)	հոտաղնէրըմ(ը)

---

[1]) Բացառական հոլովի հոդ ստանալու լավագույն վկայությունները կլինեն երևանցիների հին երգի հետևյալ տողերը.

Այ ախչիգ քու դարդիցը
Ջան ախչիգ քու դարդիցը
Ինձ կըքըցէմ բալկօնիցը։

Կամ

Վօլօր մօլօր ջ'ուրն էր գալիս Կօվկաս սարիցը,
Մի անըմման գիր ըստացա յէս իմ յարիցը։

Երևանի բարբառը ներգոյական հոլով կազմում է և՛ անձ և՛ առարկա ցույց տվող գոյականներից, մինչդեռ գրական լեզուն անձ ցույց տվող գոյականներից ներգոյական հոլով չի կազմում։

Քʼիր> քույր

	Եզակի	Հոգնակի
Ուղղական	քʼիր(ը)	քըվօրտինք(ը)
Սեռ.	քըվօր	քըվօրտանց
Տր.	քըվօր(ը)	—»— (ը)
Հարց.	քʼիր, քըվօր	—»— (ը)
Բաց.	քըվօրից(ը)	քըվօրտանցից(ը)
Գործ.	քըվօրօվ(ը)	քըվօրտանցօվ(ը)
Ներգ.	քըվօրըմ(ը)	քըվօրտանցըմ(ը)

	Եզակի	Հոգնակի
Ուղղական	ախպէր	ախպէրտինք(ը)
Սեռ.	ախպօր	ախպէրտանց
Տր.	—»— (ը)	—»— (ը)
Հայց.	—»— (ը)	—»— (ը)
Բաց.	ախպօրից(ը)	ախպէտանցից(ը)
Գործ.	ախպօրօվ(ը)	ախպէրտանցօվ(ը)
Ներգ.	ախպօրըմ(ը)	ախպէրտանցըմ(ը)

ՀԱՐԱԴԻՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄ

Ուղղական	հէր ու տղա	ժարթ ու կին
Սեռական	հօր ու տղի	մարթ ու կընգա
Տրական	հօր ու տղի(ն)	մարթ ու կընգա(ն)
Հայցական	հօր ու տղի(ն)	մարթ ու կընգա(ն)
Բացառական	հօր ու տղից(ը)	մարթ ու կընգանից(ը)
Գործիական	հօր ու տղօվ(ը)	մարթ ու կընգանօվ(ը)
Ներգոյական	հօր ու տըղըմ(ը)	մարթ ու կընգանըմ(ը)

Հոգնակի

Ուղղական	հէր ու տղէրք(ը)
Սեռական	հօր ու տղէրքանց(ը)
Տրական	հօր ու տղէրքանց(ը)
Հայցական	հօր ու տղէրքանց(ը)
Բացառական	հօր ու տղերքանցից(ը)
Գործիական	հօր ու տղէրքանցօվ(ը)
Ներգոյական	հօր ու տղէրքանցըմ(ը)

Ուղղական	*մարթ ու կընանիք(ը)*
Սեռական	*մարթ ու կընանըքօնց*
Տրական	*մարթ ու կընանքօնց(ը)*
Հայցական	*մարթ ու կնանքօնց(ը)*
Բացառական	*մարթ ու կընանօնցից(ը)*
Գործիական	*մարթ ու կընանքօնցով(ը)*
Ներգոյական	*մարթ ու կընանքօնցում(ը)*

Հարադիր բարդության հոլովման ժամանակ երբեմն առաջին բառը բոլորովին չի հոլովվում կամ հոլովվում է մինչև սեռական, իսկ երկրորդ բառը հոլովվում է մինչև վերջ։

«Տղէրքանց» ձևը կարող է լինել «տղէրանց» (Կանգնեց վրդովված տղերանց միջին. Հ. Թ.)։ «Կընանըքօնց»-ի փոխարեն կարող է լինել նաև «կընանքանց»։

ԱԾԱԿԱՆՆԵՐ

Երևանի բարբառի ածականները առանձին նորություններ չեն ներկայացնում, միայն մտքի ուժեղացման համար հաճախ ածականը կրկնվում է. օրինակ՝ սիրուն սիրուն աղջիկ, *որ նշանակում է՝ բավական սիրուն աղջիկ,* մե-մեծ մարդ, *որ նշանակում է՝ բավական խոշոր մարդ,* սև սև աչքեր, *որ նշանակում է՝ բավական սև աչքեր։*

Ածականների համեմատության աստիճանները նույնն են, ինչ որ գրական լեզվի մեջ, միայն համեմատական աստիճանի համար ավելացնում է «ավելի» բառը հազվագյուտ դեպքերում, իսկ գերադրական աստիճանը կազմվում է «ամենա» բառով։ «Գույն» գերադրական կազմող ածանցը գործածական չէ Երևանի բարբառում։ Համեմատության աստիճանը կազմելու համար ավելի սովորական է բացառական հոլովի գործածությունը. օրինակ՝ խալիչեն կարբեցից սիրուն ա։ Սա ամենասիրուն խալիչեն ա։

Գրական լեզվի նման ածականները հոլովվում են գոյականների նման այն ժամանակ, երբ գործ են ածվում իբրև գոյական, փոխարինելով իրենց և այն գոյականին, որին վերաբերում են. օրինակ՝ մեծը պուճուրիցը լավ ա, մեծից *բան կհասկանաս, ամա* պուճուրիցը չէ։

Բավական հետաքրքրական է դերանունների հոլովումը։ Անձնական դերանունների հոլովումը բավական նման է գրական լեզվին։

	Եզակի		Հոգնակի	
Ուղղական՝	*յես*	*դու*	*մենք*	*դուք*
Սեռական՝	*իմ*	*քու*	*մեր*	*ձեր*
Տրական՝	*ինձ*	*քեզ*	*մեզ*	*ձեզ*
Հայցական՝	*ինձ*	*քեզ*	*մեզ*	*ձեզ*
Բացառական՝	*ինձանից*	*քեզանից*	*մեզանից*	*ձեզանից*
Գործիական՝	*ինձանով*	*քեզանով*	*մեզանով*	*ձեզանով*
Ներգոյական՝	*ինձանում*	*քեզանում*	*մեզանում*	*ձեզանում*

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Եզակի

Ուղղական	*էս*	*էդ*	*էն*
Սեռական	*էստուր*	*էտուր*	*էնդուր*
	ըստուր	*ըտուր*	*ընդուր*
Տրական	»	»	»
Հայցական	*էս*	*էդ*	*էն*
Բացառական	*էստուց*	*էտուց*	*էնդուց*
	ըստուց	*ըտուց*	*ընդուց*
Գործիական	*էստով*	*էտով*	*էնդով*
	ըստով	*ըտով*	*ընդով*
Ներգոյական	*էստում*	*էտում*	*էնդում*
	ըստում	*ըտում*	*ընդում*

Հոգնակի

Ուղղական՝	*էստոնք*	*էտոնք*	*էնդոնք*
	ըստոնք	*ըտոնք*	*ընդոնք*
Սեռական՝	*էստոնց*	*էտոնց*	*էնդոնց*
	ըստոնց	*ըտոնց*	*ընդոնց*
Տրական՝	»	»	»
Հայցական	*նման է տրականին կամ ուղղականին։*		
Բացառական՝	*էստոնցից*	*էտոնցից*	*էնդոնցից*
	ըստոնցից	*ըտոնցից*	*ընդոնցից*
Գործիական՝	*էստոնցով*	*էտոնցով*	*էնդոնցով*
	ըստոնցով	*ըտոնցով*	*ընդոնցով*
Ներգոյական՝	*էստոնցըմ*	*էտոնցըմ*	*էնդոնցըմ*
	ըստոնցըմ	*ըտոնցըմ*	*ընդոնցըմ*

Մյուս դերանունները նման են գրական լեզվին։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Երևանի բարբառն ունի երեք խոնարհում՝ «էլ», «իլ», «ալ». «իլ» խոնարհումը լինում է սովորաբար ժխտականի դեպքում։ Բաղադրյալ ժամանակները կազմվում են դերբայով և օժանդակ բայով։ Օժանդակ բայի անցյալի անկատարում «է» արմատը կորչում է, բացի երրորդ դեմքից։

Ներկա		Անցյալի անկատար	
գըրըմ էմ	կարթըմ էմ	գըրըմ ի	կարթըմ ի
գըրըմ էս	կարթըմ էս	գըրըմ իր	կարթըմ իր
գըրըմ ա	կարթըմ ա	գըրըմ էր	կարթըմ էր
գըրըմ էնք	կարթըմ էնք	գըրըմ ինք	կարթըմ ինք
գըրըմ էք	կարթըմ էք	գըրըմ իք	կարթըմ իք
գըրըմ էն	կարթըմ էն	գըրըմ ին	կարթըմ ին

Ապառնի				Անցյալի ապառնի			
գըրէլու	յէմ	կարթալու	յէմ	գրէլու	յի	կարթալու	յի
»	յէս	»	յէս	»	յիր	»	յիր
»	յա	»	յա	»	յէր	»	յէր
»	յէնք	»	յէնք	»	յինք	»	յինք
»	յէք	»	յէք	»	յիք	»	յիք
»	յէն	»	յէն	»	յին	»	յին

Վաղակատար				Անցյալի վաղակատար			
գըրէլ	էմ	կարթացէլ	էմ	գըրէլ	ի	կարթացէլ	ի
»	էս	»	էս	»	իր	»	իր
»	ա	»	ա	»	էր	»	էր
»	էնք	»	էնք	»	ինք	»	ինք
»	էք	»	էք	»	իք	»	իք
»	էն	»	էն	»	ին	»	ին

Հարակատար				Անցյալի հարակատար			
գրած	էմ	կարթացած	էմ	գըրած	ի	կարթացած	ի
»	էս	»	էս	»	իր	»	իր
»	ա	»	ա	»	էր	»	էր
»	էնք	»	էնք	»	ինք	»	ինք
»	էք	»	էք	»	իք	»	իք
»	էն	»	էն	»	ին	»	ին

Լոռու և մի շարք այլ խոսվածքներում օժանդակ բայի անցյալի ձևերը գործ են ածվում առանց սղվելու, գրականի նման (էի, էիր, էր, էինք, էիք, էին)։

Անցյալի կատարյալ

գ́րէցի	*կարթացի*
գ́ըրէցիր	*կարթացիր*
գ́ըրէց	*կարթաց*
գ́ըրէցինք	*կարթացինք*
գ́ըրէցիք	*կարթացիք*
գ́ըրէցին	*կարթացին*

Ըղձական և պայմանական եղանակները բոլորովին նման են գրական լեզվին․ այդ եղանակների անցյալի ապառնին տարբեր է, որ կլինի հետևյալ ձևով․

գ́ըրի	*կարթայի*	*կըգ́ըրի*	*կըկարթայի*
գ́ըրիր	*կարթայիր*	*կըգ́ըրիր*	*կըկարթայիր*
գ́ըրէր	*կարթար*	*կըգ́ըրէր*	*կըկարթար*
գ́ըրինք	*կարթայինք*	*կըգ́ըրինք*	*կըկարթայինք*
գ́ըրիք	*կարթայիք*	*կըգ́ըրիք*	*կըկարթայիք*
գ́ըրին	*կարթային*	*կըգ́ըրին*	*կըկարթային*

Հարկադրական եղանակ

Ապառնի

պըտի գ́ըրէմ կամ
գ́ըրիլ պըտէմ
պըտի գ́ըրէս կամ
գ́ըրիլ պըտէս
պըտի գ́ըրի կամ
գ́ըրիլ պըտի
պըտի գ́ըրէնք կամ
գ́ըրիլ պըտէնք
պըտի գ́ըրէք կամ
գ́ըրիլ պըտէք
պըտի գ́ըրէն կամ
գ́ըրիլ պըտէն

պըտի կարթամ կամ
կարթալ պըտէմ
պըտի կարթաս կամ
կարթալ պըտէս
և այլն։

Անցյալի ապառնի

պըտի գըրի կամ
գըրել պըտի
պըտի գըրիր կամ
գըրել պըտիր
պըտի գըրէր կամ
գըրել պըտէր
և այլն։

պըտի կարթար կամ
կարթալ պըտէր
և այլն։

Ալավերդու և Նոյեմբերյան շրջանի մի շարք գյուղերում (օրին. Թումանյան, Շնող) ենթակայական դերբայն օգտագործում են անորոշ դերբայի տրական հոլովի կամ ապառնի դերբայի փոխարեն. օրինակ՝

—Տղէ՛րք, գ՛ընանք կակալ (ընկույզ) քաղող (քաղելու)։

—Ախչի՛ Թամար, էդ վօ՞րդի։

—Ջ՛ուր բէրող էմ գնում։

—Ի՞նչ էղան Անդիկն ու Շուշանը։

—Գընացին ծընէփակ ու սինդիկ քաղող։

Երևանի բարբառի ենթաբարբառներն են Նոր-Բայազեդի և Աստաբատի խոսվածքները։

Նոր-Բայազեդի ենթաբարբառի հիմնական հատկությունները հետևյալն են.

1. «ա̈» ձայնավորի առկայությունը. օրինակ՝ Բա̈յա̈զէդ։

2. «Ե» և «ո» հնչյունների երկբարբառային արտասանությունը. օրինակ դոր > դուէր, նոր > նուէր։

3. «Հ» հնչյունի «խ»-ի վերածվելը. օրինակ՝ խեր, խաց, խավ.

4. Գալ, լալ, տալ *բայերի* ում *վերջավորությամբ գործածվելը (գալում եմ, լալում եմ, տալում եմ)։ Սա նշանակում է, թե Նոր-Բայազեդի ենթաբարբառը բնավ չունի «իս» վերջավորություն ունեցող դերբայ։*

5. Հարակատար դերբայը «ուկ» վերջավորությամբ կազմելը. օրինակ՝ քնուկ, պառկուկ, խասուկ։

6. Հարցականի ժամանակ օժանդակ բայը կրկնելը. օրինակ՝ ի՞նչ ես ասում ես։

Աստաբադի ենթաբարբառի մեջ նկատելի է.

1. Օժանդակ բայի այնպիսի ձևերի գործածությունը, որոնք նույնն են Ջուղայի բարբառի հետ (ամ, աս, ա, անք, աք, ան).

2. Բացառականը թէ «ից» թէ «է» վերջավորությամբ կազմելը.

3. Անցյալ կատարյալի առաջին դեմքում «մ» վերջավորություն ստանալը (օրինակ՝ նստամ, տեսամ, էկամ)։

ՆՄՈՒՇՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻՑ

ԱՇՏԱՐԱԿԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

***

Մի մութը քըշէր ա, իքու հափումը կանած ի։ Մէջ էլ տէհա, Թըմբիցը խըշխըշուէց էկավ։ «Այ տա, էտ ի՞նչ պըտի ըլլի», ասի, գուէղ ա, խի՞ ա ձէն հանըմ, ջէլ ա, Թըփէրի հէտ ի՞նչ փուէրձ ունի, ծիտ ա, քըշէրը խի՞ ա դէս ու դէն Թըռչըմ... Ասէնք՝ յէս վախըմ չի, համա սիրտըս վըրիցս պուէկմէր փալի։ Ցէննա ասէցի. «Ցավաշ տէնամ՝ փուէղ կըլլի»... Ուզըմ էմ մօղանամ, սիրտըս վըրիս բանդ չի ըլըմ։ Ասէցի. «Ա՛յ սիրտ, վախիլ մի՝ ծիտ ա»։

Էս շան տըղի մալը չի ըլնըմ, չիչ ա մընըմ բէրանօվս դուս գա։ Ասի. «Ա՛յ սիրտ, վախիլ մի, ծիտ ա, հօ չէղ չի ուտի»... Ճար չէլավ։ Մէջ էլ ասի, է՛լի չէլավ։

—Տօ, դէ,—ասի,—ջէ՛լ ա, ճաքըմ էս, ճաչի, քու տիրուէնչ վար դան յօխը»...

Մէջէլ տէնամ էն դըհիցը գոռացին. «Ավէ՛դ...»

Ասի. «Հօ, ի՛...» յէննա ասի. «Ադա Ջէղմ՛մ...»

Ասէց. «Ի՞նչ ա»։

Ասի... «Զօռ, քու հօր փուէչի՛ն... դէ Թէզ ձէն հանա, յէ...

Մի չիչ էլ յէդ իր ձէն հանէլ, ղափալխլուն բաց ի Թուէղըմ»։

ՓԱՐՊԻԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Տանուտէր Գօքօրը

Ասըմ էն՝ մէր փէղըմը մի հատ գըլավին ա էլէ, անըմը Բօբօղ։ Էտ գըլամխի Բօբօղին մի հատ տանուտէր ա ունէնըմ, անըմը Գ՛օքօր։ Մի իրիգուն գըլավին Բօբօղը ասըմ ա։

—Գօքօր, առավօտը Թէզ կըգաս իմ կուշտը, վօր էքուց պըտի էԹաս Էջմիածին։

Էտ Գօքօրը ասըմա. «Լավ»։ Մըտհան արի, վօր ասէմ՝ տանուտէր Գօքօրի տունը փէղի էս ծէրին ա ըլնըմ, իսկ գըլավին Բօբօղի տունը էն գըլխին. իրարից ա՛նաք՛ին հէռու։

Էտ տանուտէր Գօքօրը իրիգունը մըտկով քընըմ ա, վօր առավօտը Թէզ Էջմիածին պըտի էԹա։ Առավօտը հըլա լիսը չըբացված էտ Գօքօրը տէղիցը վէր ա կէնըմ, պատրաստվըմ ա էԹալու։ Իրանց տընիցը դուս ա գալի, մըտիկ անըմ. «Մէգ էլ էս բէվախ-

տին էթամ գլամ̆ու կուշտը ի՞նչ անէմ, էնա ասէց. «պըտի էթաս էշմիածին», էլի, մինչև էթամ փէղի փըլուխը, ահաջ՛ին ճամփա կըկըղըէմ»։ Տէնց ասըմ ա ու ընգնում ա ճամփա։ Դըուստ վօր ահաջ՛ին ճամփա յա կըղըըմ, արևը դուրս չէգած՝ Ուշագան անց ա կէնըմ։ Ցէղօվ էթըմա, էթըմ, արևը մի բառղաբօյ բանցրանըմ ա, հասնըմ ա էշմիածին, վըռազ վըռազ մըննըմ ա բաղարը, պըտըղ-վըմ ա ու էլի քըըղնամըխած յէդ ա գալի։ Դու խաբար տու հըլա գըլավին Բօբօղիցը։ Ասէց թէզ կըգաս կուշտըս, օրը ճաշ ա դ՛առէլ, հըլա չըկա մէր Գօքօրը։ 2—3 մարթ ա ղըրգըմ Գօքօրի տունը, ասըմ էն՝ տանը չի։

—Այ հա՛յ,—ասըմ էն,—էս մարթն ծեր ա գ՛ընացէլ բա... հէնց էտ վախտը մէր Գօքօրը քըըղնամըխած, վօննէրը թօզօտ մըննըմ ա գըլավին Բօբօղի տունը։ Օրը էն ա հալալ ճաշ ա։

—Ա՛յ տղա, ծեր էս դ՛ու առավօդվանից,—գօմշի նըման գօ-ռըմ ա գլավին Բօքօղը։

— Գ՛ընացի էշմիածին՝ էկա,—հըպարտ հըպարտ պատասխա-նըմ ա Գօքօրը։

—Ա՛յ տա, ընչի՞ հըմա գ՛ընացիր։

—Բա դ՛ու չասիր՝ էքուց էշմիածին պըտի էթաս, ադա։

—Ա՛յ վօչխար, յէս ասի՛ բանի հըմար պըտի էթաս, հօ չըպըտի դատարկ էթաս, դատարկ գաս։

—Իա՛, բա էրէկ խի չի միտըս քըցիր, վօր բանի հըմար էմ էթալու։ Ի՞նչ բանի հըմար էմ էթալու, ադա։

—Շաքար ու սապօն պըտի առնէյիր տան հըմար։ Առավօդ-վանի աշկըս ջուր դ՛առավ, թէ Գօքօրը պըտի գա էթա շաքար ու սապօն բէրի։ Դէ թէզ կանէս, կէթաս էս 5 մանէթին շաքար կառնէս, էս 5 մանէթին էլ սապօն ու կըգաս,—բարգացած հըրա-մայըմ ա գըլավինը։

Էտ հէղջ Գօքօրը էտ շօք կըրակին էլի ընգընըմ ա ճամփա դըըբա էշմիածին։ Էթըմ ա հասնըմ բաղարը, ջէբից փօղէրը հա-նըմ ա, վօր աբրանք առնի ու յէդ գա, մըտահան արած ա ըլ-նըմ, թէ գըլավինը վօր հընգանօցը՝ ասէց կտաս շաքարի, վօրը՝ սապօնի։ Շատ ա մըտածըմ, շատ, չի կարըմ իմանա։ Ինքն էլ վախըմ ա, թէ իրանու գըլուխ առնի, վայ թէ աղէն բարգանա։

—Ախար, ինքը ասէց. «էս 5 մանէթը կըտաս շաքարի, էս էլ սապօնի» հըմի յէսիմ՝ վօրն ա շաքարինը, վօրը՝ սապօնինը— ասըմ ա Գօքօրը ու յէդ ա գալի գըլամ̆ուց իմանա։

Պատմից՝ Գ. Ներսիսյան

ԼՈՌՈՒ ԲԱՐԲԱՌՈՎ

ՏԷՐՏԷՐԸ[1]

Մեր սիրուն Լոռու գեղերից մեկըմ,
Մի յեղակալած տէրտէր էր ապրում,
Ուտըմ էր անքան, միրուքն էր սանդըրըմ,
Ամէն մարթի տուն օրհնէլու էթըմ։

Փարաջան հաքած սաղ գէղն էր շըրջըմ,
Հըլա փողածածկ տըներն էլ մըտնըմ,
«Օրհնած փոքինէր տարահալ տըվէք,
Ի՞նչ կըլինի, վոր անասիլ բէրէք»...

Նըրա հէտ էին իրա ջուխտ վօրթին,
Մի-մի հատ ջըվալ կար նրանց ուսին,
Ու էսպես հօր հէդ նըրանք իրէքօվ,
Թալանըմ էին օրը ցէրէկօվ։

.... Մըշակ էր բըռնըմ փողէրը ցանըմ,
Ծէքից մինչի մութ արին էր քամըմ,
Նա շատ էր ուզըմ շատ գանձ ունէնալ,
Վարըմ էր խալխի փողէրը կիսրար։

—«Հօտիս պահապան հէր էմ բարէսիրտ,
Էրկու աչկօվ էմ նայըմ ամէնքիդ.
Ցէթէ սուրփ փոքիս ճամփիցը թէքվի,
Տէրը կուղարկի ծոցը գէհէնի...»։

Էսպէս էր ասըմ նա իրա հօտին,
Ցեփվոր տենըմ էր ամը էրէսնէրին.
Ժամ էր տալիս նա ցուցամատը իր,
Ասըմ էր. «Տիրոջ կամքը կատարիր»։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՋԱՖԱՐԱԲԱԴ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Գ՛ԻՐՔՈՐԸ[2]

Գ՛էղացի Համբօյի տունը կռիվ էր հընգ՛է։
Համբօն ուզում էր հիրա տասնէրգու տարէգան Գ՛իրքօրին

---

[1] *Գրեց՝ Կարապետ Գալունց, կուռթանեցի։*
[2] *Գրի առավ՝ Աշոտ Մաղաթյան։*

տանէր քաղաք, մէ փ՛որձի տար, վոր մարթ դա̈ռնար, աշխատանք անէր։

Կընիգը չէր ուզում էր։

—Զեմ ուզըմ, իմ քորփա̈ էրխին էն անիրավ աշխարքը մի քըցի, չեմ ուզըմ,—լալըմ էր կընիգը։

Հըմա Համբօն չըլըսավ։

Մէ դինջ հառավոտ էր, մէ անուրախ հառավոտ։ Տընէցիքն ու հարևանները էգան մինչև փեղի կըրաղը, Գիրքորի հէրէսնէրը (թշերը) պաչէցին ու ճամփու դըրին։

Քուրը, Զանէն լալըմ էր, հըմա պըստիկ Գալօն մօր խըդըղիցը ձէն էր տալըմ։

—«Գ՛իքօլ, էտ հ՛ուլ էս էթըմ, հէ Գիքօլ»։

Գիրքորը թէզ-թէզ քամագն էր հիշկըմ։

Տէնըմ էր հըլա̈ փեղի կըրաղէն կայնած էն ընդոնք ու մէրը միղարով սըրփըմ ա հա̈շկ՛երը։

Էլի հօր կողօվ վազնըմ յա հառաչըն էր հընգընում։ Մէգ էլ քամագն հիշկաց. փէղը ծածկվէր էր սարի քամագը։

Ընդուց հէգօ Գիրքորը հէդ էր հընգընըմ էր։

—Հարի հա, Գիրքոր ջան, հարի հա, հասանք հա,—տըղին կանչէլով էթըմ էր Համբօն, շըլգին մէ խուրջին, մէջը մէ քանի հաց ու պանիր ու մի էրգու դա̈ստա̈ թութուն։

Հիրգվա յանը, յէփօր հընցընըմ ին սարէրը, մէ անքամ էլ էրէվաց փեղը հէռու մըժըմը (մըժի մէջ)։

—Այ, ափօ, մէր տունը հէ՛նա հա,—ցույց տըվեց Գիրքորը, մաղը պարզէլօվ դըբա փէղը, հըմա տունը ըսկի չէր էրէվում ու հընցան։

Հառչի հիրգունը ղօնախ հիլան մէ փեղի մէջ։ Տան տէրը Համբօյի հ՛ին ծանօթն էր։

Դեղին սըմավարը թըշշըմ էր թախդի ծէրին։ Մէ ջա̈հէլ ախչիգ շըխգշըխգացնէլով ստքաննէրը լըվում էր ու չայ էր շինըմ էր։

Ն.-ԲԱՑԱՋԵԴԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Գ՛ԻՐՔՈՐ[1]

Գ՛եղացի Ծա̈մբօյ տունը կըռիվ էր հընգէր էր։

Ծա̈մբօն հիրա̈ն տըսնէրկու տարէկան Գ՛իրքորին ուզում էր քաղաք տանէր, մէ փործի տէր, հըմա կընիկը հօժար չէր։

---

[1] Գրի առավ Սուրեն Ղազարյան։

—Ցես չեմ ուզում եմ. իմ քօրփին էն անտէր աշխարքը մի քըցա,չեմ ուզում եմ,—լալում էր կնիգը։

Հըմա Ծա̈մբօն ըղուն հանգաջ չարավ։

Մէ խա̈խանդ սաբախտան էր, մէ դա̈ռն սաբախտան։

Հիրանց տնէցիքն ու դըրկըցները ժողվվան էկան չունքի փեղի ղըրաղը խա̈սա̈ն. հիրանքն էլ Գիրքօրի Թըշերը պաքին, ճա̈նփա դըրրին վընաց։

Հիրան քուր Ջանօն էլ լա̈ց էր հըլնում էր. հըմա պըրտղի Գալօն հիրան մօր վըրկի մըչից ձէն էր տալում էր. Գիրքո̈ր, էտ դա̈ր ես էթում ես, հէ՛յ Գիրքօր.

Գիրքօրը վըռազ-վըռազ դառնում էր հիդիվ, հիշկում էր հիրանց տընէցիքին. տէնում էր, վօր հիրանց տընէցիքը կայնուդ ին գեղի ղըրաղ։ Մէրն էլ փէշտըմլօվ հա̈շկերն էր սըրփում, Գիրքօրը վա̈զնում էր խօր կըշտօվ, յա հառէջն էր հընդընում էր։

Էրթալու վա̈խտ Գիրքօրը մէ դան էլ հիշկաց հիդևը, տէսավ հիրանց փեղը ծածկվուկ էր դըքներէ էն յանը (հիդևը), ընդուց դէն Գիրքօրը հըյրըրդըն հիդև էր հընդնում էր։

—Ա̈րի, հա̈, Գիրքօր ջա̈ն, ա̈րի հա̈, խա̈սանք հա̈,—տըղին ղանչէլօվ էրթում էր Ծա̈մբօն, շըլկին մէ խատ խուրջին կէր, ընդու մէջն էլ մէ քանի խա̈ց կէր ու պա̈նիր. մէ էրկու դա̈ստա̈ Թութուն կէր։

Հիրկվա յանը ընդօնք հըսնում ին սարերօվ, մէ դա̈ն էլ էրէվաց հիրանց փեղը մըղըրըրի մէջ։

—Ափէր, մէր տունը հէն ա, մադօվ նշանց տըվեց Գիրքօրը, հըմա հիրանց տունը ըսկի չէր էրէվում էր, հընցան վընացին։

Հա̈ռչի հիրգուն ընդօնք ղօնախ հէլան մէ գեղ, տան տէրը Ծա̈մբօյ ըվա̈լվա ծանօթն էր։ Ընդօնց սըմավարը Թըշթըշում էր Թախտի կուշտը, մէ խատ ջա̈էլ ախճիկ էլ սաքներն էր շըխկշըխկացնում, չայ էր շինում էր։ Էտ ախճիկը մէ խատ խօրօտ դէյրա էր խաքէր էր, Գիրքօր էլ մըտկին դըրեց, վօր հիրան քըվօր խըմար էլ դմալ խօրօտ դէյրա առնի, ճանփի։

2. ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌ

Ղարաբաղի բարբառը մեր կենդանի բարբառներից ամենամեծն է։ Այդ բարբառով (նաև ենթաբարբառներով) խոսողների թիվը երեք հարյուր հազարից ավելի է։ Այդ բարբառով խոսում են Ղարաբաղի բնակչությունը և բոլոր այն ղարաբաղցիները, որոնք գտնվում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամա-

խու շրջանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում և Տաջիկստանում, նաև՝ Զանգեզուրի և Ղափանի բնակիչները, Կիրովաբադի շրջանի բնակչությունը, Ղազախի, Շամշադինի, Դիլիջանի շրջանի բնակչությունը և մինչև անգամ Կիրովականի բնակչությունը։

Պրոֆեսոր Հ. Աճառյանի վկայությամբ այդ բարբառով խոսող երկու գյուղեր են եղել Մարմար ծովի ափին (Բռնըղմը և Օղէմիշ)։

Այդ մեծ տարածության վրա խոսողները որոշ տարբերություն ունեն իրենց լեզվի մեջ, թեև խոսվածքների ընդհանուր երանգը Ղարաբաղի բարբառինն է։

Նկատելի է, որ Ղարաբաղի բարբառը կլանել է մի շարք բարբառներ և ավելի կամ պակաս չափով անհետացրել այդ բարբառները։ Ղարաբաղի բարբառը շրջապատող այլ բարբառներ, լինելով նրանից ավելի փոքր, մեծապես ազդվել են նրանից, որոշ տեղերում նույնիսկ վերափոխվել Ղարաբաղի բարբառի։ Այժմ կարելի է մի շարք խոսվածքների մասին վիճել, թե այս կամ այն խոսվածքը Ղարաբաղինն է, թե մեկ ուրիշ բարբառի մնացորդ։

Հադրութի ամբողջ շրջանը խոսում է մի առանձին բարբառով, ավելի ճիշտ երկու առանձին բարբառով, մեկը՝ Հադրութի, մյուսը՝ Ղարադաղի, որ մենք կոչել ենք՝ Շաղախի։ Շատ շատերը Հադրութի և Շաղախի բարբառները նույնպես համարում են Ղարաբաղի բարբառ, կամ ամենաքիչը՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառներ։ Ոչ մասնագետի համար դա բնական է ու հասկանալի, որովհետև Հադրութի և Շաղախի բարբառների լեզվական ընդհանուր երանգը ղարաբաղական է, կամ Ղարաբաղինն է, սակայն երբ մոտիկից ծանոթանում ես այդ բարբառներին, զգացվում է նրանց և Ղարաբաղի բարբառների միջև խորը տարբերություն։ Այսպես, օրինակ, այն հիմնական հատկանիշը, որով որոշվում է բարբառների ճյուղային տարբերությունները, այն է ներկա ժամանակի կազմությունը, այս երկու բարբառում միանգամայն տարբեր է։ Օրինակ՝ Ղարաբաղի բարբառում ասվում է կի՛րըմ ըմ, կարթըմ ըմ, *իսկ այս բարբառներում ասվում է՝* կ՛իրիս ըմ, կըրթիս ըմ։

Տարբեր են նաև այս բարբառների բաղադրյալ անցյալ ժամանակների կազմությունը. օրինակ՝

Ղարաբաղի բարբառում ասվում է

կ՛իրըմ ի	կ՛ըրթըլական ի
կ՛իրըմ իր	կ՛ըրթըլական իր
կ՛իրըմ ար	կ՛ըրթըլական ար
և այլն	և այլն։

Հադրութի բարբառում գործածվում է և այս ձևի նման մի ձև և մեկ ուրիշ ձև.

կ՛իրիս ի	կ՛իրիս ըմ լ՝ա̈լ
կ՛երես եր	կ՛իրիս ըս լ՝ա̈լ
կ՛երեյս ա̈ր	կ՛իրիս ա̈ լ՝ա̈լ
և այլն.	և այլն։

Շաղախի բարբառում գործածվում է միմիայն հետևյալ ձևը.

կ՛ը́րեյս ըմ	կ՛ը́րեյս ըմ լ՝ա̈լ
կ՛ը́րեյս ըս	կ՛ը́րեյս ըս լ՝ա̈լ
կ՛ը́րեյս ա̈	կ՛ը́րեյս ա̈ լ՝ա̈լ
և այլն.	և այլն։

Այսպես է կազմվում ոչ միայն անցյալի անկատար ժամանակը, այլև անցյալի ապառնին, անցյալի վաղակատարը, անցյալի հարակատարը և այլն։

Տարբերություն կա նաև հոլովման կազմության մեջ։ Հադրութի բարբառին հատկանշական է բացառականի կազմությունը «նըէստա» բառի օժանդակությամբ ավելի, քան Ղարաբաղի սովորական բացառականի գործածությունը, իսկ Շաղախի համար՝ «անա» բառով բացառական կազմելը. օրինակ՝

	Ղարաբաղ	Հադրութ	Շաղախ
Բացառ.	*սարան*	*սարէն նըէստա*	*սարէն անա*

Դերանունների մեջ տարբերությունն է՛լ ավելի մեծ է։

Ղարաբաղի բարբառում դերանունները կազմվում են հետևյալ ձևով.

ես	ետ	են
ըստրա	*ըտրա*	*ընդրա*
ըստրանա	*ըտրանա*	*ընդրանա*
ըստրանավ	*ըտրանավ*	*ընդրանավ*

Այդ նույն դերանունները Շաղախի բարբառում լինում են հետևյալ ձևով.

կս	կտ	կճ
սա̈ռը	*տա̈ռը*	*ա̈նդա̈ռը*
սա̈ռըրա̈նա̈	*տա̈ռըրա̈նա̈*	*ա̈նդա̈ռըրա̈նա̈*
սա̈ռուրա̈նա̈վ	*տա̈ռըրա̈նա̈վ*	*ա̈նդա̈ռըրա̈նա̈վ*

Ինչպես ասացինք, Ղարաբաղն ընդարձակ երկիր է, ունի հարյուրավոր գյուղեր և ամեն մի գյուղում կարելի է նկատել տարբերություն մյուս գյուղերից, սակայն կարելի է մոտավորապես որոշել, թե բուն Ղարաբաղի հատկանիշները որոնք են, և խսկապես ո՞ր շրջանն է ավելի Ղարաբաղ՝ լեզվական տեսակետից, ո՞րը քիչ։

*Մեր հետազոտությունը նկատել է տալիս մեզ, որ Ղարաբաղի բարբառի հիմնական հատկանիշները կարելի է գտնել Մարդակերտում (Ջրաբերդի շրջանում), նույն հատկանիշները համեմատաբար ավելի լավ են պահպանված Զանգեզուրի շրջանում։ Ստեփանակերտի, Շուշու և Մարտունու շրջաններում գտնում ենք զանազան տիպի խոսվածքներ։ Կան գյուղեր, որոնց խոսվածքը պահպանում է Մարդակերտի շրջանի խոսվածքի նորմաները, մինչդեռ կան գյուղեր, որոնք այդ նորմաները այս կամ այն չափով խախտում են և երբեմն բոլորովին տարբեր ձևեր են գործածում։ Օրինակ՝ Մարտունու շրջանի Ճարտար և Շեխեր գյուղերը և մի շարք այլ գյուղեր ներկան կազմում են «ում» վերջավորություն ունեցող դերբայով (*կիրըմըմ, կիրըմըս կիրըմ ա, կիրըմ ընք, կիրըմ ըք, կիրըմ ըն*)։ Մինչդեռ անցյալ անկատարը կազմելիս գործածում են Ղարադաղի (Շաղախի) բարբառի ձևերը (*կ'իրիյս ըմ յա̈լ, կ'իրիյս ըս յա̈լ, կ'իրիյս ա̈ յա̈լ *և այլն)։*

Կան գյուղեր, օրինակ՝ Խանածախը (Ստեփանակերտի շրջան), որ գործածում է բոլոր ձևերն էլ, այսինքն թե Մարդակերտի խոսվածքի ձևերը, և թե Շաղախ-Հադրութի բարբառի ձևերը։

*Այդ շրջաններում գտնում ենք նաև այնպիսի գյուղեր, որոնց խոսվածքը Հադրութի բարբառին է պատկանում, օրինակ Շուշու մոտ գտնվող Շոշի գյուղը, որ իր խոնարհումը կազմում է հետևյալ կերպ՝ *կ'իրիս ըմ, կ'իրիս ըս* և այլն։*

Այդ ամենը ասում են մեզ, որ Ղարաբաղի տերիտորիայի վրա անցյալում եղել են երկու բարբառներ՝ հյուսիսային՝ Ղարաբաղի և հարավային՝ Հադրութի։ Այս երկուսը իրար հետ միա-

խառնվել են, գերակշռություն ստացել է Ղարաբաղի բարբառը, որը «կլանել» է Հադրութի բարբառի մեծ մասը, միաժամանակ նաև հաղորդելով մնացող մասին իր հիմնական գծերից շատ շատերը, և դրա հետևանքով ստացվել է այժմյան Հադրութի բարբառը, որը շատ գծերով նման է Ղարաբաղի բարբառին, բայց պահպանում է նաև իր սեփական առանձնահատկությունները։ Այժմ էլ հենց Հադրութում Ղարաբաղի բարբառով խոսելը համարվում է քաղաքավարի ձև։ Հադրութի շրջանում տեղավորվել են Ղարադաղից գաղթածներ. օրինակ՝ Շաղախ, Խծաբերդ, Խարժանջուղ, որոնք այժմ ավելի շատ տարբերիչ գծեր ունեն Ղարաբաղի բարբառից, քան Հադրութի բարբառը։ Ղարադաղի բարբառը ևս ազդելով Հադրութի բարբառով խոսող հասարակության վրա, ինչպես նաև Ղարաբաղի բարբառով խոսող բնակչության լեզվի վրա, որոշ հետք է թողել և այդ պատճառով էլ Ղարաբաղի բարբառով խոսող բնակչության հարավային հատվածում (օրինակ՝ Շեխեր գյուղում) նկատում ենք Ղարադաղի բարբառի հետքեր։ Նշանակում է՝ Մարտունու, Շուշվա և Ստեփանակերտի շրջանների որոշ գյուղերի խոսվածքներ ղարաբաղցված են, այսինքն ենթարկված են Ղարաբաղի բարբառի ազդեցության և բոլորովին վերափոխել են իրենց խոսվածքը, պահպանելով միայն որոշ հետքեր, իսկ Հադրութի և Ղարադաղի խոսվածքները, ազդվելով Ղարաբաղի բարբառից, յուրացրել են նրա շատ կողմերը, սակայն բոլորովին չեն անհայտացել։

Զանգեզուրի ենթաբարբառը համադրում է մի կողմից Ղարաբաղի բարբառը, մյուս կողմից Երևանի բարբառը, բայց Ղարաբաղի բարբառի բացարձակ գերակշռությամբ։ Զանգեզուրի ենթաբարբառում ձայնավորների սղումներն ավելի քիչ են, ավելի չափավոր են, բացակայում է գյուղերի մեծ մասի խոսվածքում «ական» վերջավորությամբ դերբայով ապառնի կազմելու Ղարաբաղի եղանակը։ Հնչյունական փոփոխությունների մեջ կան որոշ տարբերություններ։ Այդ ամենը սակայն չի վկայում այն մասին, որ այստեղ Ղարաբաղի բարբառը ևս նույնպիսի նվաճում է կատարել, ինչպես Ղարաբաղի Լեռնային Ինքավ. մարզի հարավային շրջանում։ Այստեղ նկատվում է միայն, որ Երևանի բարբառը հանդիպել է Ղարաբաղի բարբառի հետ և որոշ հետք է թողել։

Ղափանի և Մեղրու շրջանում պատկերը բոլորովին այլ է։ Ղափանում կան գյուղեր, որոնք խոսում են Հադրութի բարբառով. օրինակ՝ Եղվարդ, Ծավ և այլն։ Մի շարք ուրիշ գյուղերի խոս-

վածքներ ցույց են տալիս, որ իրենք պատկանել են Հադրութի խոսվածքին կամ Ղարադաղի խոսվածքին, բայց ձուլվել են Ղարաբաղի բարբառի հետ, օրինակ՝ Ագարակ, Հանդ և այլ գյուղերի խոսվածքները։

Մեղրու շրջանում նկատելի է, որ Ղարաբաղի բարբառը համխմբել է մի ուրիշ բարբառի և կլանելով այդ բարբառը՝ իր հերթին ենթարկվել է փոփոխության. օրինակ՝ Մեղրու շրջանի Ագարակ գյուղի խոսվածքի մեջ, թեև խոնարհումը կազմվում է «ում» վերջավորությամբ դերբայով, բայց հնչյունական փոփոխությունները և անցյալի կազմությունը հիշեցնում է Մեղրու և Կարճևանի բարբառները. օրինակ՝

կ՚öյիս իմ, կ՚öյիս իս, կ՚öյիս ա̈ և այլն.
կ՚իրիմ իմ, կ՚իրիմ իս, կ՚իրիմ ի և այլն։

Այդ նույն երևույթը կարելի է նկատել նաև հոլովման մեջ։

Այսպես է նաև Մեղրու շրջանի Շվանիձորի խոսվածքը, որ ներկայի կազմությամբ նմանվում է Ղարաբաղի բարբառին, բայց անցյալ անկատարի կազմությամբ հիշեցնում է Մեղրու բարբառը. օրինակ՝

կ՚իրիմ իմ, կ՚իրիմ իս, կ՚իրիմ ա̈ և այլն.
կ՚իրիմ իմ յա̈լ, կ՚իրիմ իս յա̈լ, կ՚իրիմ ա̈ յա̈լ և այլն։

Այդ ամենից նկատելի է որ Մեղրու բարբառը բռնել է ավելի ընդարձակ տարածություն, քան Մեղրի գյուղն է։ Այդ բարբառով խոսել են Մեղրու շրջանի բոլոր գյուղերը և Ղափանի հարավը, բայց ենթարկվելով Ղարաբաղի բարբառի ազդեցության, այդ շրջանի բոլոր գյուղերի խոսվածքները վերածվել են Ղարաբաղի բարբառի, պահելով իրենց մեջ մայրենի բարբառի մի շարք գծերը։

Նշանակում է՝ այն ամենը, ինչ որ մենք կոչել ենք կամ ընդունված է եղել կոչելու Ղարաբաղի բարբառ, դա Ղարաբաղի բարբառը չէ, այլ Ղարաբաղի բարբառի ուժեղ ազդեցության ենթարկված այլ բարբառներ։ Մեզ համար պարզ է դառնում, որ Ղարաբաղի և Սյունիքի հարավում գտնված գոնե չորս բարբառները «կլանվել են» Ղարաբաղի բարբառի կողմից և մեր այսօրվա պատմությունը գտնում է նրանց մնացորդները կամ որոշ դեպքում՝ հետքերը միայն։ Ենթարկվելով Ղարաբաղի բարբառի ազդեցության այս բարբառներն իրենց հերթին նույնպես ազդել են Ղարաբաղի բարբառի վրա, գոնե այն շրջաններում, որոնք

ընկած են հարավին ավելի մոտ և ահա այդ բոլորի հետևանքով է, որ Ղարաբաղի բարբառի մեջ մենք գտնում ենք միևնույն քերականական ձևերի բազմաթիվ տարբերակներ. այդ ավելի բացատրելի է նաև նրանով, որ Ղարաբաղի և Զանգեզուրի մի շարք շրջաններում այժմ ապրող գյուղերի մի մասը գաղթել է հարավային շրջաններից և տեղավորվել Ղարաբաղի բարբառով խոսող գյուղերի միջավայրում, ապա վերածվելով Ղարաբաղի բարբառի, պահպանել է իր մայրենի բարբառի տարբերակները— գծերը։ Դրա հետևանքով նույնպես առաջացել են այն տարբերությունները, որ այժմ կարելի է գտնել Ղարաբաղի բարբառով խոսող գյուղերից համարյա ամեն մեկում։

Մարդակերտի շրջանում կա մի ենթաշրջան, որ իր ապառնին կազմում է աճ վերջավորություն ունեցող ապառնի դերբայով։ Մեր կարծիքով այդ շրջանի խոսողների մի մասը պետք է որ լինեին Շամախուց գաղթածներ, քանի որ Շամախու բարբառում գտնում ենք մենք այդ դերբայը։

Կիրովաբադի խոսվածքը նույնպես կազմում է Ղարաբաղի բարբառի ենթաբարբառը, սակայն նրա մեջ եղած բոլոր այն տարբերությունները, որ նկատելի են Ղարաբաղի բարբառի համեմատությամբ, մոտեցնում են այդ խոսվածքը Երևանի բարբառին (ձայնավորների սղման և հնչյունափոխության նվազում, ակաճ վերջավորությամբ ապառնի դերբայ կազմելու բացակայությունը, օժանդակ բայերի նմանությունը Երևանի բարբառին և այլն)։ Կիրովաբադի շրջանի Գետաշեն և Բանանց գյուղերի խոսվածքները նման են Մարդակերտի շրջանի խոսվածքներին և վկայում են այնտեղից գաղթած լինելու մասին։

Կիրովաբադից սկսած, գալով դեպի արևմուտք, Երևանյան բարբառի գծերն ուժեղանում են և Ղարաբաղի բարբառի գծերը թուլանում։ Շամշադինի, Դիլիջանի և մանավանդ Կիրովականի խոսվածքների մեջ գերակշիռ տեղ բռնում են Երևանի բարբառի գծերը։ Ղարաբաղի բարբառի թույլ ազդեցությունը նկատվում է նույնիսկ Լոռու խոսվածքի վրա։

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ղարաբաղի բարբառն ունի գրական լեզվի բոլոր հնչյունները, բացի ֆ-ից, որի փոխարեն գործ է ածվում փ. օրինակ՝ փիզիկա>ֆիզիկա, փա̈նա̈ր>ֆանար և այլն։

Բացի այս, Ղարաբաղի բարբառն ունի ա̈, օ̈, ու̈ ձայնավոր-ները, նաև քմային գʹ, կʹ, քʹ բաղաձայնները։ Նկատելի է, որ

ա > ա̈. գամ, գառ > կʹա̈մ, կʹա̈ռ, գարուն > կʹա̈րունք.
> է. բան, բամբակ > պէն, պէմբակ, բարակ > պէրակ.
> ի. աղել > իղել.
ե > յէ, է. եռ > յէռ, եղն > յէղնը, բերան > պէրան.
> ի. թել > թիլ, աղել > իղիլ, ցերեկ > ցիրեկ.
> ա. երկաթ > արկաթ, երագ > արագ.
> ըէ. մեր > մըէր. ձէր > ծըէր, փեսայ > փըէսա.
ո > վըէ. ոտն > վըէննը, որ > վըէր, որձակ > վըէրցակ.
> ու. տոլոն > տուրուն, կոտեմ > կուտէմը.
> օ̈. գող > կʹօ̈ղ, ձոր > ծօ̈ր, գործ > կʹօ̈րծ.
ըէ > ը. սովորել > սըվըէրէլ.
ու > օ. տուն > տօն, թութ > թօթ, մուկն > մօկնը.
> ու̈. ձուկն > ծու̈կնը, ձու > ծու̈, ջուր > ճու̈ր.
> օ. ուրփաթ > օրփաթ, գլուխ > կʹըլօ̈խ.
ի > է. քիթ > քէթ, տարի > տարէ, գարի > կʹօրէ.
> ըէ. կռիվ > կըռըէվ, ամիս > ամըէս, միս > մըէս։

Երկբարբառներից՝ այ > է (այծ > էծ, այս, այդ, այն > էս, էտ, էն), իւ > ու̈ (ձիւն > ծու̈ն, հարիւր > հարու̈ր).

ոյ > ու̈ (բոյն > պու̈ն, կապոյտ > կա̈պու̈տ)։

Ղարաբաղի բարբառի բաղաձայնական սիստեմը երկաստի-ճան ձայնեղազուրկ է, ձայնեղներ պատահում են ռնգայիններից հետո և կամ օտար բառերում. օրինակ՝ բամբակ—պէմբակ, բէգʹ, ամբար, բուսաթ և այլն։

Մասնակի երևույթներից կարելի է հիշել «հո» կապակցու-թյան «վըէ» դառնալը. հող—վըէղ, հոտ—վըէտ, հոր—վըէր։ Մի շարք բառերի սկզբին ավելանում է հ. օրինակ՝ հօր—ուր, հինչ—ինչ, հընգʹէր—ընկեր, համօթ—ամօթ և այլն։ Գրաբարյան բա-ռավերջի ն-ն, որ գրական լեզվի մեջ ընկած է, այս բարբառում ոչ միայն պահպանվում է, այլև վրան ավելանում է մի «ը» ևս. օրինակ՝ մուկ > մօկնը, նուռն > նօռնը, ձուկն > ծու̈կնը, մատն > մաննը և այլն։

«ՏՆ կապակցությունը դառնում է ՆՆ», օրինակ՝ մատն—մաննը, ոտն—վըէննը և այլն։

Ղարաբաղի բարբառում սղվում են բոլոր ձայնավորները, եթե նրանք գտնվում են շեշտվող վանկից դուրս. օրինակ՝ աւե-տարան—ըվըտարան, եկեղեցի—յէխցէ և այլն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ղարաբաղի բարբառի շեշտը նախավերջին վանկի վրա է. օրինակ՝ ք՚էցալ ըմ, գ՚ո̈ղո̈մ չըմ և այլն։

Ղարաբաղի բարբառն ունի եր, ներ, նե, ենի և ստ հոգնակիներ. «էնի» հոգնակին գտնում ենք Շամշադինի խոսվածքում։

Հոլովում

Ղարաբաղի բարբառի հոլովումը գրականից տարբերվում է բացառականով և գործիականով և նրանով, որ սեռական հոլովը հոդ է ստանում. օրինակ, ծառին տակը։

Ուղղ.	սար	սարէր
Սեռակ.	սա̈րի(ն)	սարէ՛րի(ն)
Տրական	սա̈րի(ն)	սարէ՛րի(ն)
Հայցական	սար	սա̈րէր
Բացառ.	սա̈րան	սարէ՛րան
Գործիակ.	սա̈րավ	սարէ՛րավ
Ներգ.	սա̈րըմ	սարէրըմ

Ածականների մեջ նորություններ չկան, թվականները դասականը կազմում են ադրբեջանական «ինջի» վերջավորությամբ։

Անձնական դերանուններ

Ուղղակ.	յէս	տո̈ւ	մունք	տո̈ւք
Սեռակ.	իմ	քու	մըէր	ծըէր
Տրակ.	ինձ	քըէզ	մըէզ	ծըէզ
Հայցակ.	»	»	»	»
Բացառակ.	ընձանա	քըզանա	մըզանա	ծըզանա
Գործիակ.	ընձանավ	քըզանավ	մըզանավ	ծըզանավ
Ներգ.	ընձանըմ	քըզանըմ	մըզանըմ	ծըզանըմ

Ցուցական դերանուններ

Եզակի

Ուղղակ.	էս	էտ	էն
Սեռ.	ըստրա	ըտրա	ընդրա
Տրակ.	ըստրա(ն)	ըտրա̈(ն)	ընդրա(ն)
Հայց.	էս, ըստրա	էտ, ըտրա	էն, ընդրա
Բացառ.	ըստրա̈նա	ըտրա̈նա	ընդրա̈նա
Գործիակ.	ըստրա̈նավ	ըտրա̈նավ	ընդրա̈նավ
Ներգ.	ըստրա̈նըմ	ըտրա̈նըմ	ընդրա̈նըմ

Հոգնակի

Ուղղակ.	ըստըրանք,	ըստհանք,	ըտըրանք,	ըտհանք,
		սըհանք		տըհանք
Սեռակ.	ըստըրանց,	ըստհանց,	ըտըրանց,	ըտհանց,
		սըհանց		տըհանց
Տրական	»	»	»	»
Հայցական	»	»	»	»
Բացառակ.	ըստըրա՛նցան,	ըստհա՛նցան,	ըտըրա՛նցան	ըտհա՛նցան
		սըհա՛նցան		տըհա՛նցան
Գործ.	ըստըրա՛նցավ,	ըստհա՛նցավ,	ըտըրա՛նցավ,	ըտհա՛նցավ,
		սըհանցավ		տըհա՛նցավ
Ներգ.	ըստըրա՛նցըմ,	ըստհա՛նցըմ,	ըտըրա՛նցըմ,	ըտհա՛նցըմ,
		սըհա՛նցըմ		տըհա՛նցմ

Ուղղակ.	ընդըրանք,	ընդհանք,
		նըհանք
Սեռակ.	ընդըրանց,	ընդհանց,
		նըհանց
Տրական	»	»
Հայցական	»	»
Բացառակ.	ընդըրանցան,	ընդհանցան,
		նըհանցան
Գործ.	ընդըրանցավ,	ընդհանցավ,
		նըհանցավ
Ներգ.	ընդըրանցըմ,	ընդհանցըմ,
		նըհանցըմ

Խոնարհում

Ղարաբաղի բարբառը սահմանական եղանակի ժամանակները (բացի կատարյալից) կազմում է անալիտիկ սիստեմով, որ բաղադրվում է դերբայից և օժանդակ բայից. օժանդակ բայի անցյալի ձևերը իրենց արմատը կորցնում են։ Անկատար դերբայը կազմում է «ում» վերջավորությամբ, ապառնին՝ «ական» վերջավորությամբ, վաղակատարը «ալ» վերջավորությամբ։

Ներկա		Անցյալի անկատար	
կ՛էրըմ ըմ	կա՛րթըմ ըմ	կ՛էրըմ ի	կա՛րթըմ ի
» ըս	» ըս	» իր	» իր

Կ'երըմ	ա	կ'ըրթըմ	ա	Կ'երըմ	ար	կ'ըրթըմ	ար
»	ընք	»	ընք	»	ինք	»	ինք
»	ըք	»	ըք	»	իք	»	իք
»	ըն	»	ըն	»	ին	»	ին

Ապառնի

Կ'երըլական	ըմ	կըրթըլական	ըմ
»	ըս	»	ըս
»	ա	»	ա
»	ընք	»	ընք
»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն

Անցյալի ապառնի

Կ'երըլական	ի	կըրթըլական	ի
»	իր	»	իր
»	ար	»	ար
»	ինք	»	ինք
»	իք	»	իք
»	ին	«	ին

Վաղակատար

Կ'երալ	ըմ	կըրթացալ	ըմ
»	ըս	«	ըս
»	ա	»	ա
»	ընք	»	ընք
»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն

Անցյալի վաղակատար

Կ'երալ	ի	կըրթացալ	ի
»	իր	»	իր
»	ար	»	ար
»	ինք	»	ինք
»	իք	»	իք
»	ին	»	ին

Հարակատար

Կ'երած	ըմ	կըրթացած	ըմ
»	ըս	»	ըս
»	ա	»	ա
և այլն		և այլն	

Անցյալի հարակատար

Կ'երած	ի	կըրթացած	ի
»	իր	»	իր
»	ար	»	ար
և այլն		և այլն	

Անցյալի կատարյալ

Կ'երեցե Կ'երեցեր Կ'երեց Կ'երեցենք Կ'երեցեք Կ'երեցեն

Ըղձական և պայմանական եղանակները առանձին նորու- թյուն չունեն. կազմում են հետևյալ կերպ.

Կ՚ը́րէմ	կա̈րթամ	կ՚իրի	կըրթէ́
Կ՚ը́րէս	կա̈րթաս	կ՚իրիր	կըրթէ́ր
Կ՚ը́րի	կա̈րթա	կ՚իրար	կա̈րթար
Կ՚ը́րէնք	կա̈րթանք	կ՚իրինք	կըրթէ́նք
Կ՚ը́րէք	կա̈րթաք	կ՚իրիք	կըրթէ́ք
Կ՚ը́րէն	կա̈րթան	կ՚իրին	կըրթէ́ն

Պայմանական եղանակը ավելացնում է «կը», իսկ հարկա- դրական եղանակը «ըիդի» կամ «պէդմա» եղանակիչները։

Ղարաբաղի բարբառն ունի նաև շարունակական ձևեր, որ կազմվում են ավ (ա̈վ) վերջավորություն ունեցող դերբայով (կ՚իրէլա̈վ) և օժանդակ բայի ձևերով։ Շարունակական դերբայը կազմվել է անորոշ դերբայի գործիական հոլովից. օրին. կ՚իրէլ > կ՚իրելա̈վ, այսինքն՝ գրելով։ Գրական լեզվի մեջ անորոշ դեր- բայի գործիական հոլովը (գրելով) օգտագործվում է նախադա- սության մեջ գլխավոր գործողության զուգահեռ կատարվող երկ- րորդական գործողությունը ցույց տալու համար, ուստի «գրելով» նշանակում է «գրելու գործողության մեջ լինել»։ Ուստի Ղարա- բաղի բարբառը «կ՚իրէլա̈վ ըմ» ասելով բացահայտում է, թե խո- սողը շարունակաբար գործողության մեջ է խոսելու ժամենտին։

Շարունակականն ունի երկու ժամանակ՝ ներկա և անցյալ անկատար։

Շ ա ր ու ն ա կ ա կ ա ն

Ներկա	Անցյալի անկատար
կ՚իրէ՛լա̈վ ըմ	կ՚իրէ՛լա̈վ ի
» ըս	» իր
» ա	» ար
» ընք	» ինք
» ըք	» իք
» ըն	» ին

Ն Մ Ո Ւ Շ Ն Ե Ր

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՎ

*
* *

Տընգըլըրագլըս Թըխըմ ըմ, մին խաբար ա կա̈մ թա՝ նուրէ- բըմըս Լէմսըստանա[1] մին հայ կազէթըմ կ՚իրալ ըն, թա ընդէղ մի

[1] Լէմսըստան—Գերմանիա։

քօ՞նա կ՛իրըմ տուն ա յէկալ, վըէր Բավարացէք՛ հայէր ըն, ամ-մա ուրանք թարսվալ ըն, վըղավ չըն ձնըմ։

Տընգլըրագըս ասըմ ա՝ շատ ղալաթ ըն անըմ. Բավարացէք՛ հայէր ըն. էն էլ Ղըրըբաղան քուչըցրած. ըհա՛ բավար *պառը ինք՛ը նըշանց ա տամ, թա տըրանք հինչ թայփա ըն. չու՛ն* Բավարը—բավարար *պառի կըրճըցրածն ա.* բ- *ը յօռ ձնիս* ավար—*թալանչի տուն կը կ՛ա (իրևըմա վըէր առաչ շատ թալանչի ըն իլա՛լ, ըտրա մհար էլ քուչըցրալ ըն).* բ-*ին տեղը* ծ *տինիս,* ծա-վաք *կըտէնա (ծավա՛ր ստող էլ ըն իլա՛լ. ծըվարա էջմիածին լա՛վ փըլավ ըն իփըմ, կօղակն էլ յէրա),* խ *տինիս* խավար *տուն կը կ՛ա,* ց *տինիս* ցավար *կըտէնա (այսինքն տըվարու նըման* խավար, *յանի թա անպէն անասուն ըն իլա՛լ)։ Մախլաս թօըը վըէր շօռ տաս, հայավէտը նըէստա շըռշըռըմ ա՝ էտը գօ՞րա էլ հաստադըմ ընք՝ փօըը հացուտ իլած Բիսմարկը, վըէր Բավարացի ա, էլհա Ղըրըբաղան ա. բա վըէր Ղըրըբաղան չինա՛ր, կըլխըմը խէլք հըշտըղա՞ն կինա՛ր։*

(Տմբլաչի Խաչան. Զուռնա-Տմբլա, գիրք Ա, էջ 121—2, 1907)

ԹԸԼԸՂՐԱՄ

ԲԵՌԼԻՆ. Լէմէցնէրին.—Ծըէր մին կօնցուլին սպանէլին յէ-րա՛, վըէր տու՛ք Չինմանչինան մարթէք ըք պիրէլ տամ, վըէր հինչ ա ըռըչնէրիտ չօքին, ծօնդը տինին, ու՛րանց մէխքը քավին, բա տու՛ք վըէր հազարավըէր անմէղ մարթէք, «հայրէնիք սըր-փաղան» ըսէլա՛վ, թօփու ըռխի տըվիք, կուտուրէցիք, ընդհանց մէխքէրը հո՞նչավ յա հու՛նց բէդմա քավիք։

(Տմբլաչի Խաչան, Զուռնա-Տմբլա, գիրք Բ, էջ 161, 1908 թ.)

Կ՛ԷՐԹՆՈՒԿՆ ՈՒ ԿՕՎԸ

Մին օր կ՛էրթնուկը
Տէսնըմ ա կօվին
Խէ՛ շատ տըկըղած՝
Փօրը լա՛վ ըցված.
Կ՛ըլօ՞խը յօր չօնըմ,
Օղըմ ա ինք՛ն էլ
Օռչի, տըկըղի,
Կօվի չանք տէռնա,

Հընգէրունց առաջ
Վըէր միշտ պարծէնա։
Օժ ա տամ, օժ տամ,
Փըքվըմ, տըռըղըմ,
Ու կօղքի կաղնած
Ու՛րան քըվօըը
Շուտ շուտ հըրցընըմ.
—Ա, քու՛ր քըմմատաղ,

նըստէցինք ու ճամփա ընգ՛անք։ Կըլէր հինգ վէրս, ք՛ընա̈ցէլ ինք, մըն էլ էս Ա̈ք՛էլը տըզարած ծըյի կ՛ըլուխը շուռ տըվուց դըրա տուն։

—Էտ ի՞նչ ըլա̈վ Ա̈ք՛էլ։

Պա̈ն չասէց. տըզարած ք՛ընըմ ա։ Ծին ք՛ըշէցի, յէդնէն հըսա ու մըհէլ հըրցըրի։

—Ա, ա̈է հա̈լբա̈թ մի պա̈ն կա, վըէր յէտ էմ տառնըմ,— ասէց ու ծին ք՛ըշէց։

Ահակին տըէղ ք՛ընա̈ց, մըհի վըէնչ յէդնէն կարամ համնէմ, թէ յէտ տա̈ռնա̈մ, վըէնչ էլ հընա̈ր ունէմ ծըյի պըէռը վըէ տընէմ։ Տէսա վըէր ճար չի կա, ծին ք՛ըշէցի, ք՛ընա̈ցի յէդնէն։ Վըէր ք՛ընա̈ցինք տուն հըսանք, էս Ա̈ք՛էլը պա̈շի ծէրին կաղնէց ու կանչէց հարսին։

—Մանյակ, ա̈յ ախճի։

Հարսը տո̈ւս յէկավ։ Էս Ա̈ք՛էլը թէ՝

—Ախճի, մըէր սև վառէկն էրկու օր ա, ծո̈ւ յա ըլէլ, աչկօվ պահի ծո̈ւն կուրցնի վըէնչ։ Էս վըէր ասէց, յէտ տա̈ռա̈վ ու ասէց։

—Դէ ք՛ընա̈նք, Կ՛իկօլ։

3. ԹԲԻԼԻՍԻԻ ԲԱՐԲԱՌ

Թբիլիսիի բարբառը մեր մեռած բարբառներից մեկն է, բայց նա անմահացել է հայ գրականության երկու խոշոր ներկայացուցիչների գործերով՝ Սայաթ-Նովայի և Գ. Սունդուկյանի։

Թբիլիսի քաղաքում այժմ հայերը խոսում են Երևանի բարբառով, որը որոշ երանգավորում է ստացել Թբիլիսիի բարբառի ազդեցության տակ։ Երևանի բարբառով խոսող այդ հայերը Թբիլիսի են գաղթած հատկապես 19-րդ դարում և նրանց լեզվի ազդեցության տակ, մասամբ նաև գրական լեզվի ազդեցությամբ վերացվել է Թբիլիսիի բարբառը։ Դառնալով հայ կուլտուրայի կենտրոն 19-րդ դարում, Թբիլիսին դարձավ նաև հայ գրական լեզուն մշակող, հայերեն գրական լեզվի կենտրոն։ Ուստի և Թբիլիսի քաղաքի բնակչությունն աստիճանաբար շուռ տալով իր խոսվածքը՝ մոռացավ Թբիլիսիի բարբառը։ Բարեբախտաբար Թբիլիսիի բարբառով ունենք երկու հեղինակների՝ Սայաթ-Նովայի և Սունդուկյանի երկերը. միաժամանակ և երկու ուսումնասիրություն՝ մեկը բժիշկ Գևորգ Հախվերդյանի, Սայաթ-Նովայի առաջին հրատարակչի, որի ուսումնասիրությունը միաժամանակ նաև հայ բարբառագիտության առաջին գիտական ուսումնասիրությունն է և Տոմսոնի ուսումնասիրությունը, որը չունի Հախվերդյանի աշխատության անմիջականությունն ու ճշտությունը, բայց կա-

տարված է լեզվաբանական օրենքներով, հնդեվրոպական լեզվաբանության տեսակետով։

Թբիլիսիի բարբառի մեջ նկատում ենք «Կը» ճյուղի բարբառների հետքերը, միաժամանակ և ինքնուրույն այնպիսի գծեր, որոնք դարձնում են նրան մի ինքնատիպ բարբառ։ Հակառակ այն պատմական տվյալների, որ Թբիլիսիի բնակչությունը կազմված է Հայաստանի արևմտյան նահանգներից եկած գաղթականներով, Թբիլիսիի բարբառը մեզ ասում է, որ նա տեղական խոսվածք է, որ այդ բարբառով խոսողների գերակշիռ մասը տեղացիներ են. դրա ապացույցը նաև այն է, որ Թբիլիսիի բարբառին շատ նման գծեր ունի թե արտասանության և թե ձևաբանության մեջ Արթվինի բարբառը, որ գտնվում է Թբիլիսիից բավական հեռու և այժմ անմիջական առնչություն չունի նրա հետ։ Թբիլիսիի բարբառի և Արթվինի բարբառի միջև գտնվում են Կարնո բարբառի (Ախալքալաքի և Ախալցխայի) խոսվածքները։ Բայց հայտնի է, որ դրանք 19-րդ դարի գաղթականության խոսվածքներ են։ Արթվինի բարբառի նմանությունը Թբիլիսիի բարբառին թելադրում է մեզ մտածելու, որ Արթվինից մինչև Թբիլիսի երբեմնի խոսվել է Թբիլիսիի բարբառով, և կամ ամենաքիչը, Թբիլիսիի բնակչության ամենահին շերտը Արթվինի շրջանից եկած բնակչությունն է, նշանակում է, որ իրոք Թբիլիսիի բարբառը դա է Արթվինի հին շրջանի խոսվածքը, որ է Տայոց աշխարհի խոսվածքը։ Արթվինի բարբառի «Ս» ճյուղին պատկանելը վկայում է այն մասին, որ նա եկել է արևելքից, «Ս» ճյուղի հայրենիքից՝ Ղարադաղի, Ատրպատականի հյուսիսի, Ղարաբաղի ու Սյունիքի հարավի միջավայրից։ Հետևաբար Արթվինի բարբառի նմանությունը Թբիլիսիի բարբառին առաջ է եկել այն ազդեցությամբ, որ Տայոց խոսվածքն ունեցել է եկվոր արթվինցիների խոսվածքի վրա, ուստի Արթվինի բարբառի այն գծերը, որ նման են Թբիլիսիի բարբառին, վերագրելի են Տայոց աշխարհի խոսվածքին։

Կարնո բարբառի խոսվածքները, կտրելով աշխարհագրորեն Թբիլիսիի բարբառը Արթվինի բարբառից, նպաստել են մի կողմից Թբիլիսիի բարբառի առանձնանալուն և աստիճանաբար վերանալուն, մյուս կողմից՝ ազդել են Արթվինի բարբառի վրա և ազդվել նրանից։

Այսպիսով, մեր կարծիքով, Թբիլիսիի բարբառը՝ դա է նախկին Տայոց բարբառը, որի մասին հիշատակություն կա Սյունեցի քերական մեկնիչի վկայության մեջ։

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի բարբառն ունի ա, է, ի, օ, ու, ը ձայնավորները։ Այդ ձայնավորները արտասանությամբ նման են գրական լեզվին, այսինքն չունեն արտասանության տեղի ոչ ցածրացում և ոչ էլ բարձրացում։ Գրաբար ձայնավորների համեմատությամբ Թբիլիսիի բարբառը ներկայացնում է հետևյալ տարբերակները.

ե > յի ես > յիս, երբ > յիփ
> ի տեղ > տիղ, դեղ > դիղ, մեղք > միխկ
ո > վու ոտն > վուտ, որդի > վուրթի
> ու փոր > փուր, հող > հուղ
> օ «օսկէ ջրով վարաղնած»

«Օսկէ փարչումըն լըցուցած անմահական ջուր իս, ախպէր»։

Երկբարբառները Թբիլիսիի բարբառում փոխարինված են պարզ հնչյուններով, օրինակ՝ այ > ա կամ է. այս, այդ, այն > *էս, էդ, էն, հայր > հէր, մայր > մէր, վրայն > վըրէն, փեսայ > փէսա։*

Ոյ > ու․ քոյր > քուր, լոյս > լուս։
Իւ > ու․ հարիւր > հարուր, արիւն > արուն։
Եայ > է․ ոսկեայ > օսկէ, արծաթեայ > արծաթէ։

Թբիլիսիի բարբառը բառասկզբին ունենում է եռաստիճան բաղաձայնական սիստեմ, այսինքն անտեղաշարժ է. օրինակ՝

բերդ > բէրթ, բերան > բէրան
դուռն > դուռ, դուռ > դուն
ձիւն > ձուն, ձու > ձու
ջուր > ջուր, ջարդեմ > ջարթիմ
գովեմ > գօվիմ, գրեմ > գըրիմ

Բառամիջում սովորաբար ձայնեղները ենթարկվում են առաջին աստիճանի երկրորդ խմբի տեղաշարժին, այսինքն վերածվում են շնչեղ խուլերի։ Օրինակ՝ վարդ—վարթ, զարդ—զարթ, մարդ—մարթ, թագավոր—թաքավուր, կարդա—կարթա։

«Ամեն մարթ չի կանա կարթա, իմ գիրըն ուրիշ գըրէն է»։
«Ես բըլբուլ իմ, վարթըս մընաց խարումըն»։

Ս.-Ն.

Խուլ բաղաձայններից հետո, շնչեղ խուլերը հաճախ վերածվում են խուլի, կորցնում են շնչեղությունը, օրինակ՝ խօսկն—խոսքն, ուշկ—ուշք, աչկ—աչք։

«Մէշկըդ ջէյրան է, ռանգըդ շաքարի,
Փռանգըստանէն էկած խարա իս, գօզալ»։
«Էնդուր աչկըս ցամաքում՝ սըրտիս մէչըն արին մնաց»։

Ս.-Ն,

Որոշ դեպքերում նկատելի է նաև ձայնեղացում՝ կամ հաջորդող բաղաձայնի ազդեցությամբ կամ նախորդող. օրինակ՝ գուլխմ > կուղեմ.

«Թէգուզ արէգագ լուսնիակ, թէգուզ հուրիղադա ըլի,
Էտ քու ամեն մարիփաթօվ դիփունին կու ախտիս, գօզալ»։

Ս.-Ն.

Թբիլիսիի բարբառը չունի փ հնչյունը, որով նա նման է Ղարաբաղի և Ուրմիայի բարբառներին և գրաբարին։ Ֆ հնչյունի փոխարեն գործ է ածվում փ, օրինակ՝ փալագ > ֆալագ.

«Աչկիրըդ օսկէ փիալա չարխէմէն փընջան է քաշած.
Թէրթէրուկըդ՝ նիտ ու նաշտար, սուր ջալամթըրաշ, նազանի։

Ս.-Ն.

Թբիլիսիի բարբառը յուրացրել է վրացերեն ջ (ջ)հնչյունը, որ գործածական է մեծ մասամբ օտար բառերի մեջ. օրինակ՝ ջուլ—սարուկ, վարաջ—տերև, ջամար > ղամար (լուսին).

«Էրէսըդ փարսէվար ասիմ, նըման է շամս ու ջամարին»։

Ս.-Ն.

Ղ է գրվում նաև հայերեն ՑՂ կապակցության փոխարեն. օրինակ՝ վուրջանց—որտղանց, որտեղից, էսջանց—էստեղից (էստղանց)։

«Ըն» կապակցությունը արտասանվում է «նըն», օրինակ՝
«Ինձ սիրէցիր, էշխըն նընգար, խաղի դավթար իմ քիզ ամա.
Մի քաղի փըշի ծաղիկըն՝ վարթ սուսանբար իմ քիզ ամա»։

Ս.-Ն.

«Ա» ձայնավորը մի երկու տեղ դառնում է «օ», օրինակ՝ կօսիմ, կօնիմ.

«Առանց քիզ ի՞նչ կօնիմ սօյբաթն ու սազըն,
Ջէռնէմէս վէր կօնիմ չանգիրըն մէմէկ»։

Ս.-Ն.

Այս երևույթն ավելի հաճախական է Արթվինի բարբառում։

«Ր» հնչյունը դուրս է ընկնում «համար» բառի միջից, Օրինակ։

«Էնդու համա քու տխնօղը իր ճամփէմէն կու ժօլըրվի»։

Ս.-Ն.

«Ի» հնչյունը հաճախ արտասանվել է փափուկ, մի հատկություն, որ մինչև հիմա մնում է Թբիլիսեցիների խոսվածքում. օրինակ՝ «Մէժէկ ժէմէկ չի ասվի՝ Թարիփը դարավ քուլիչօվ»։

Ս.-Ն.

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի բարբառի շեշտը նախավերջին վանկի վրա է։

Թբիլիսիի բարբառի հոգնակին է իր կամ նիր. օրինակ՝ դաշտիր, ծովիր, յաղիր, խմաստուննիր և այլն։

Թբիլիսիի բարբառն ունի յոթ հոլով, այսինքն արևելահայ գրական լեզվի բոլոր հոլովները, ուրեմն և ներգոյական հոլով, որ հատկանշական է «Ում» ճյուղի բոլոր բարբառների համար։

Բառերի մեծ մասը պատկանում է «ի» հոլովման։

Թբիլիսիի բարբառի սեռականը հոդ չի ստանում, տրականը ստանում է. ուղղականի հոդը մեծ մասամբ «ն» հոդն է. օրինակ՝

Փահմէս կու հիռացնիմ հանգիրըն մէմէկ։

Ս.-Ն.

Ղուրթ ին ասի փիր ուստաքար դաղիրըն.
«Բաղ շինէցի, վարթն քաղէցին վաղիրըն»։

Ս.-Ն.

Հայցական հոլովը շնչավոր առարկա ցույց տվող գոյականի դեպքում նման է լինում տրականին, իսկ անշնչինը՝ ուղղականին։ Բացառական հոլովն ունենում է «է» կամ ումէն (ումէ, իմէ) վերջավորություններ։ Թբիլիսիի բարբառի բուն վերջավորությունն է, «էմէն», իսկ «է» վերջավորությունը Թբիլիսիի բարբառի մեջ է մտած Արևմտյան Հայաստանից գաղթածների լեզվի ազդեցությամբ։

Գործիականի վերջավորությունն է «օվ», իսկ ներգոյականինը «ում»։

Թբիլիսիի բարբառի հոգնակին ենթարկվում է «ու» հոլովման, որը նույնպես արևմտյան Հայաստանից գաղթածների լեզվի ազդեցության հետևանք է. օրինակ՝

	Եզակի	Հոգնակի
Ուղղական	*Ծով*	*Ծովեր*
Սեռական	*Ծովի*	*Ծովերու*
Տրական	*Ծովին*	*Ծովերու*
Հայցական	*Ծով*	*Ծովեր*
Բացառական	*Ծովէմէն*	*Ծովերումէն*
Գործիական	*Ծովով*	*Ծովերով*
Ներգոյական	*Ծովում*	*Ծովերում*

Դերանուններ

Թբիլիսիի բարբառն ունի երկու անձնական դերանուն՝ «յիս» և դու. երրորդ դեմքի համար գործ է ածվում ցուցական «նա» դերանունը։

Անձնական դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

Եզակի

Ուղղական	*յիս*	*դուն*
Սեռական	*իմ*	*քու*
Տրական	*ինձ, ինձի*	*քիզ, քիզի, քի*
Հայցական	*ինձ, ինձի*	*քիզ, քիզի, քի*
Բացառական	*ինձմէն*	*քիզմէն*
Գործիական	*ինձմով*	*քիզմով*
Ներգոյական	*ինձնում, ինձանում*	*քիզնում, քիզանում*

Բացառականը լինում է երբեմն՝ ինձնից, ինձանից, քիզնից, քիզանից, որ փոխ է առնված Երևանի բարբառից։

Հոգնակի

Ուղղական	*մինք*	*դուք*
Սեռական	*միր*	*ձիր*
Տրական	*միզ, միզի*	*ձիզ, ձիզի*
Հայցական	*միզ, միզի*	*ձիզ, ձիզի*
Բացառական	*միզմէն*	*ձիզմէն*
Գործիական	*միզմով*	*ձիզմով*
Ներգոյական	*միզնում, միզանում*	*ձիզնում, ձիզանում*

Բացառականը լինում է նաև՝ միզնից, միզանից, ձիզնից, ձիզանից, որ նույնպես Երևանի բարբառից է։

Ցուցական դերանունների հոլովումը

Թբիլիսիի բարբառում գործածական են սա, դա, նա դերանունները անձ ցույց տվող գոյականների համար, իսկ էս, էտ, էն դերանունները իր ցույց տվող գոյականների համար։

Սա, դա, նա դերանունները հոլովվում են գրականի նման, բացի բացառական հոլովից։

Եզակի

Ուղղական	նա	սա	դա
Սեռական	նըրա	սըրա	դըրա
Տրական	նըրան	սըրան	դըրան
Հայցական	նըրան	սըրան	դըրան
Բացառական	նըրամէն	սըրամէն	դըրամէն
Գործիական	նըրանօվ	սըրանօվ	դըրանօվ
Ներգոյական	նըրանում	սըրանում	դըրանում

Հոգնակի

Ուղղական	նըրանք	սըրանք	դըրանք
Սեռական	նըրանց	սըրանց	դըրանց
Տրական	նըրանց	»	»
Հայցական	նըրանց	»	»
Բացառական	նըրանցմէն	սըրանցմէն	դըրանցմէն
Գործիական	նըրանցօվ	սըրանցօվ	դըրանցօվ
Ներգոյական	նըրանցում	սըրանցում	դըրանցում

Բացառականում լինում է նաև՝ նըրանից և նըրանցից, սըրանից, սըրանցից, դըրանից, դըրանցից և այլն, որով Թբիլիսիի բարբառի հոլովման այս պատկերը նմանվում է բոլորովին գրական լեզվին։

Էս, էտ, էն դերանունների հոլովումը բավական նման է Երևանի բարբառին, միայն սեռականում և տրականում Թբիլիսիի բարբառը վերջին հոլովակազմիչը կորչում է (օրինակ Երևան՝ էստուր, էնդուր, Թբիլիսիի՝ էստու, էնդու) և բացառականում ունենում է ումէն վերջավորություն։

Եզակի

Ուղղական	էս	էտ	էն
Սեռական	էստու	էտու	էնդու
Տրական	էստուն	էտուն	էնդուն
Հայց.	էս	էտ	էն

Բացառական	*էստումէն*	*էտումէն*	*էնդումէն*
Գործիական	*էստօվ*	*էտօվ*	*էնդօվ*
Ներգոյական	*էստում*	*էտում*	*էնդում*

Հոգնակի

Ուղղական	*էստունք*	*էտունք*	*էնդունք*
Սեռական	*էստունց*	*էտունց*	*էնդունց*
Տրական	*էստունց*	*էտունց*	*էնդունց*
Հայցական	*էստունք*	*էտունք*	*էնդունք*
Բացառական	*էստունցմէն*	*էտունցմէն*	*էնդունցմէն*
Գործիական	*էստունցօվ*	*էստունցօվ*	*էնդունցօվ*
Ներգոյական	*էստունցում*	*էտունցում*	*էնդունցում*

Անդրադարձ դերանուն (*գործածվում է անձնականի տեղ*)

Ուղղական	*ինքը*	*իրանք*
Սեռական	*իր*	*իրանց*
Տրական	*իրան*	*իրանց*
Հայցական	*իրան*	*իրանց*
Բացառական	*իրմէն*	*իրանցմէն*
Գործիական	*իրմօվ*	*իրանցմօվ*
Ներգոյական	*իրանում*	*իրանցում*

Հարցական դերանուն

Ուղղական	*ո՞վ*	*ի՞նչ*
Սեռական	*ում*	*ինչու*
Տրական	*ում*	*ինչու*
Հայցական	*ում*	*ի՞նչ*
Բացառական	*ումէմէն*	*ինչի՞մէն*
Գործիական	*ումո՞վ*	*ինչո՞վ*
Ներգոյական	*ում մեջ*	*ինչու մէջ*

Հարցական դերանունն է նաև վուրդի՞, *որից և առաջ է գալիս* վուրդ՞անց։

Բայի խոնարհում

Թբիլիսիի բարբառն ունի երկու խոնարհում «իլ» և «ալ» (գրիլ, կարդալ), ունի նույնքան եղանակ, որքան և գրական լեզվի մեջ։ Անորոշ դերբայի վերջավորությունն է «իլ»

գրականի բոլոր «ե» խոնարհման բայերի դիմաց, և «ալ», գրականի նույն խոնարհման բայերի դիմաց։ Անկատար դերբայի վերջավորությունն է «ում» կամ «իս»։ Սովորական խոնարհվող բայը ունենում է միշտ «ում» վերջավորություն (գըրում, կարդում), իսկ գալ, լալ և տալ բայերը ունենում են իս վերջավորություն (գալիս, լալիս, տալիս)։

Ցուրաքանչյուր բայի անկատար դերբայական երկրորդական ձևն ունի միշտ «իս» վերջավորություն, որը գործածվում է իբրև մակբայական դերբայ երկրորդական գործողության ժամանակը ցույց տալու համար։

Ապառնի դերբայի ձևը նույնն է գրականի հետ, այսինքն ունի «իլու», «ալու» վերջավորությունը (գրէլու, կարթալու)։

Վաղակատար դերբայի վերջավորությունն՝ է «իլ» «է» խոնարհման բայերի համար և «ացիլ»՝ «ա» խոնարհման բայերի համար։

Վաղակատար դերբայը գրականի հետ նույնն է, ենթակայականը նույնպես, ժխտական դերբայի վերջավորությունն է «ի» կամ «ա»։ Այդ ժխտական դերբայը օգտագործվում է թե վաղակատար ժամանակների և թե պայմանական եղանակի ժամանակների ժխտականը կազմելու համար։

Բացի այս դերբայներից, Թբիլիսիի բարբառն ունի նաև «ացու» վարջավորություն ապառնի դերբայի համար։ Այդ «ացու» վերջավորությունն ավելանում է անորոշ դերբայի վրա՝ տալացու, գնալացու, գրէլացու և այլն։

Ներկա ժամանակը (սահմանական եղանակի) կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, ըստ որում օժանդակ բայի ձևերը լինում են իմ, իս, է, ինք, իք, ին։ Օրինակ՝

Գըրում իմ	Կարթում իմ
Գըրում իս	Կարթում իս
Գըրում է	Կարթում է
Գըրում ինք	Կարթում ինք
Գըրում իք	Կարթում իք
Գըրում ին	Կարթում ին

Շրջուն շարադասության ժամանակ օժանդակ բայն ընկնում է դերբայից առաջ։

Լալ, գալ, տալ բայի խոնարհումը կատարվում է նույն ձևով, միայն դերբայն ունենում է իս վերջավորությունը։

Լալիս իմ	Գալիս իմ	Տալիս իմ
Լալիս իս	Գալիս իս	Տալիս իս
Լալիս է	Գալիս է	Տալիս է
Լալիս ինք	Գալիս ինք	Տալիս ինք
Լալիս իք	Գալիս իք	Տալիս իք
Լալիս ին	Գալիս ին	Տալիս ին

Ըրջուն շարադասության ժամանակ այդ բայերը կորցնում են իրենց վերջին ս-ն. այս շրջուն շարադասությունը ստեղծվում է այն ժամանակ, երբ որ տրամաբանական շեշտն ընկնում է ոչ թե ստորոգյալի, այլ նախադասության մի այլ անդամի վրա և կամ թե խոնարհումը լինում է ժխտական բնույթի։ Օրինակ՝ չի գալի, չիմ ծալի, յիս իմ գալի.

Ման իմ գալի դեդարի հիդ։ (Ս.-Ն.)

Անկատար դերբայի վերջին ս-ն երբեմն նաև պահպանվում է, օրինակ՝ չիմ գալիս, չիմ ծալիս և այլն։

Լալ բայը խոնարհվում է նաև բաղադրյալ ձևով ըլիլ բայի օժանդակությամբ. օրինակ՝

Լաց իմ ըլում	Չիմ լաց ըլում	Լաց չիմ ըլում
Լաց իս ըլում	Չիս լաց ըլում	Լաց չիս ըլում
Լաց է ըլում	Չէ լաց ըլում	Լաց չէ ըլում
Լաց ինք ըլում	Չինք լաց ըլում	Լաց չինք ըլում
Լաց իք ըլում	Չիք լաց ըլում	Լաց չիք ըլում
Լաց ին ըլում	Չին լաց ըլում	Լաց չին ըլում

Ինչպես երևում է խոնարհումից, հարադիր բայերի ժխտական խոնարհման ժամանակ օժանդակ բայը կարող է ընկնել հարադրությունից առաջ և կամ հարադրվող բառերի միջև։

Անցյալի անկատարը կազմվում է նույն եղանակով, ինչ որ ներկան, միայն օգտագործվում է օժանդակ բայի անցյալի անկատար ձևերը, որ բոլորովին նման է գրական լեզվին.

Գըրգում էյի, կտրթում էյի…
Գըրում էյիր, կարթում էյիր և այլն։

Ժխտական բնույթի խոնարհումը կազմվում է գրականի ձևով, այսինքն, օժանդակ բայն ստանում է «չ» ժխտական մասնիկը և տեղափոխվում է դերբայից առաջ. օրինակ՝ չիմ գրում, չիս գրում, չէ գրում, չինք գրում, չիք գրում, չին գրում. չէյի գրում, չէյիր գրում, չէր գրում, չէյինք գրում, չէյիք գրում, չէյին գրում։

Ապառնի ժամանակը կազմվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի ձևերով։

Գըրէլու իմ	*Կարթալու իմ*
Գըրէլու իս և այլն	*Կարթալու իս և այլն։*

Ապառնի անցյալը կազմվում է նույն եղանակով։

Գըրէլու էյի	*Կարթալու էյի*
Գըրէլու էյիր և այլն	*Կարթալու էյիր և այլն։*

Վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայով. օրինակ՝

Գըրիլ իմ	*Կարթացիլ իմ*
Գըրիլ իս	*Կարթացիլ իս*
Գըրիլ է	*Կարթացիլ է*
Գըրիլ ինք	*Կարթացիլ ինք*
Գըրիլ իք	*Կարթացիլ իք*
Գըրիլ ին	*Կարթացիլ ին*

Պայմանական եղանակի ժխտական ձևը կազմվում է օժանդակ բայով ժխտական մասնիկի հետ միասին և վաղակատար դերբայով, որը կորցնում է իր վերջին «լ» հնչյունը։

Չիմ գըրի	*Չիմ կարթացի*
Չիս գըրի	*Չիս կարթացի*
Չի գըրի	*Չի կարթացի*
Չինք գըրի	*Չինք կարթացի*
Չիք գըրի	*Չիք կարթացի*
Չին գըրի	*Չին կարթացի*

Հարակատար ժամանակների կազմությունը բոլորովին նման է վաղակատար ժամանակներին, միայն այստեղ գործածվում է հարակատար դերբայը։

Օրինակ՝ գըրած իմ, կարթացած իմ և այլն։

Անցյալ կատարյալը կանոնավոր է կազմվում, միայն երրորդ դեմքում ունենում է «ից» փոխանակ «էց» վերջավորության։

Անցյալ կատարյալը լինում է նաև կցա, կցար, կցավ, կցանք, կցաք, կցան։ Այդ վերջավորությունն ստանում են սովորաբար կրավորական կերպի բայերը, թեև մի շարք չեզոք բայեր ևս ունեն նույն վերջավորությունը. օրինակ՝

Գըրէցի	Մաշվէցա	Ապրէցա
Գըրէցիր	Մաշվէցար	Ապրէցար
Գըրից	Մաշվէցավ	Ապրէցավ
Գըրէցինք	Մաշվէցանք	Ապրէցանք
Գըրէցիք	Մաշվէցաք	Ապրէցաք
Գըրէցին	Մաշվէցան	Ապրէցան

Ըղձական եղանակը կազմվում է առանց մասնիկի և բոլորովին նման է գրական լեզվին, միայն այն տարբերությամբ, որ Թբիլիսիի բարբառում ենթարկվում է իրեն հատուկ հնչյունափոխության։

Ըղձական եղանակ

Գըրիմ	Էրվիմ	Իմանամ
Գըրիս	Էրվիս	Իմանաս
Գըրէ	Էրվէ	Իմանա
Գըրինք	Էրվինք	Իմանանք
Գըրիք	Էրվիք	Իմանաք
Գըրին	Էրվին	Իմանան
Գըրէյի	Էրվէյի	Իմանէյի
Գըրէյիր	Էրվէյիր	Իմանէյիր
Գըրէր	Էրվէր	Իմանէր
Գըրէյինք	Էրվէյինք	Իմանէյինք
Գըրէյիք	Էրվէյիք	Իմանէյիք
Գըրէյին	Էրվէյին	Իմանէյին

Պայմանական եղանակը կազմվում է ըղձականից, վրան ավելացրած «կու» մասնիկը։

Ապառնի

կու գըրիմ	*կու էրվիմ*	*կու իմանամ*
կու գըրիս	*կու էրվիս*	*կու իմանաս*
կու գըրէ	*կու էրվէ*	*կու իմանա*
կու գըրինք	*կու էրվինք*	*կու իմանանք*
կու գըրիք	*կու էրվիք*	*կու իմանաք*
կու գըրին	*կու էրվին*	*կու իմանան*

Անցյալի ապառնի

կու գըրէյի	*կու էրվէյի*	*կու իմանէյի*
կու գըրէյիր	*կու էրվէյիր*	*կու իմանէյիր*
կու գըրէր	*կու էրվէր*	*կու իմանէր*
կու գըրէյինք	*կու էրվէյինք*	*կու իմանէյինք*
կու գըրէյիք	*կու էրվէյիք*	*կու իմանէյիք*
կու գըրէյին	*կու էրվէյին*	*կու իմանէյին*

Գործածական են նաև կու իմացայի, կու իմացայիր *և այլ ձևերը։*

Հետաքրքրական է «գալ» և «տալ» բայերի խոնարհման այս ձևը, որ լինում է՝ գու քէյի, գու քէյիր, գու քէր, գու քէյինք, գու քէյիք, գու քէյին, *ըստ որում «կու» մասնիկի խուլ հնչյունը ձայնեղանում է, իսկ «գալ» բայի ձայնեղ հնչյունը վերածվում է խուլ շնչեղի։ Բաղաձայնների այս փոփոխությունը հիշեցնում է արևմտյան բարբառների բաղաձայնական տեղաշարժները, որ երևի մի հետևանք է այդ շրջաններից Թբիլիսի եկած գաղթականության լեզվի ազդեցության։ Մյուս կողմից հետաքրքրական է նաև այն, որ «այ» երկհնչյունը վերածվում է «է» հնչյունի։ Այդպես է նաև* կու ցէյի, կու ցէյիր, կու տէր *և այլն։*

Ձայնավորով սկսվող բայերը խոնարհվելիս՝ կամ կորչում է «ու» ձայնավորը, կամ կորչում է բայի սկզբի ձայնավորը, կամ միացման հետևանքով նոր ձայնավոր է առաջ գալիս և կամ պահպանվում է։ Այսպես օրինակ՝ իմանալ բայի խոնարհման ժամանակ տեսանք որ պահպանվում է և «կու» բառի «ու» ձայնավորը և իմանալ բայի «ի» ձայնավորը, մինչդեռ ածիմ, ացիմ, ասիմ, *բայի խոնարհման ժամանակ «ու»-ի միաձուլումը տալիս է օ, որից ստացվում է* կօծիմ, կօսիմ, *և* կօցիմ *ձևերը (*կօսիմ, կօսիս, կօսէ, կօսինք, կօսիք, կօսին. *Նույնպես է և* կօցիմ *և* կօծիմ *բայի խոնարհումը)։*

«Ու»-ով սկսվող բայերի խոնարհման ժամանակ ու-երից մեկն ընկնում է, հավանական է «կու» մասնիկի ու-ն և ստացվում է՝ գուզիմ, գուզիս, գուզէ և այլն, կունենամ, կունենաս, կունենա և այլն։

Այդ բոլորին հակառակ ըլիլ բայի սկզբի ձայնավորն է դուրս ընկնում և ստացվում է կու լիմ, կու լիս, կու լի, կու լինք, կու լիք, կու լին։

Պայմանական եղանակի ժխտական ձևերը կազմվում են առանց կու մասնիկի, «չ» մասնիկով օժանդակ բայի հետ և և ըղձական դերբայով։

Պայմանական եղանակ

Չիմ գըրի	չիմ էրվի	չիմ իմանա
չիս գըրի	չիս էրվի	չիս իմանա
չի գըրի	չի էրվի	չի իմանա
չինք գըրի	չինք էրվի	չինք իմանա
չիք գըրի	չիք էրվի	չիք իմանա
չին գըրի	չին էրվի	չին իմանա

«Ըլ» բայի խոնարհման պայմանական եղանակի ապառնի երրորդ դեմքի ձևը տարբերվում է նույն բայի վաղակատար ժամանակի ժխտական երրորդ դեմքից նրանով, որ այնտեղ լինում է «չէ», իսկ այստեղ՝ «չի» (վաղակատար—չէ գրի, պայմանական՝ չի գրի)։

Անցյալի վաղակատար

Չեյի գըրի	չեյի էրվի	չեյի իմանա
չեյիր գըրի	չեյիր էրվի	չեյիր իմանա և այլն։

Պայմանական երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են անկատար դերբայով և «ըլիլ» բայի պայմանական ձևերով, օրինակ՝

Գըրում կուլիմ	էրվում կուլիմ	Իմանում կուլիմ
գըրում կուլիս	էրվում կուլիս	Իմանում կուլիս
և այլն	և այլն	և այլն։

Անցյալի ապառնի

Գըրում կուլեյի	էրվում կուլեյի	իմանում կուլեյի
և այլն	և այլն	և այլն։

Հարկադրական եղանակ

Հարկադրական եղանակի ապառնին *կազմվում է Երևանի բարբառի նման երկու ձևով, որոնցից առաջինում խոնարհվում է բայը, իսկ երկրորդում՝ պիտի եղանակիչը, միայն ի տարբերություն Երևանի բարբառի՝ Թբիլիսիի բարբառում* պիտի *եղանակիչը մնում է բայից առաջ.*

Ապառնի

I ձև	II ձև
պիտի գրրիմ	*պիտիմ գրրի*
» *գրրիս*	*պիտիս* »
» *գրրէ*	*պիտի* »
» *գրրինք*	*պիտինք* »
» *գրրիք*	*պիտիք* »
» *գրրին*	*պիտին* »

Հարկադրական անցյալի ապառնին ունենում է երեք ձև, առաջին երկուսը նման են ապառնիին, իսկ երրորդ ձևում պիտի *եղանակիչն ու բայը մնում են անփոփոխ և խոնարհվում է օժանդակ բայը.*

Անցյալի ապառնի

I ձև	II ձև	III ձև
պիտի գրրէյի	*պիտէյի գրրի*	*պիտի գրրէլ էյի*
» *գրրէյիր*	*պիտէյիր* »	» » *էյիր*
» *գրրէր*	*պիտէր* »	» » *էր*
» *գրրէյինք*	*պիտէյինք* »	» » *էյինք*
» *գրրէյիք*	*պիտէյիք* »	» » *էյիք*
» *գրրէյին*	*պիտէյին* »	» » *էյին*

ՆՄՈՒՇՆԵՐ ԹԲԻԼԻՍԻԻ ԲԱՐԲԱՌՈՎ

Ա.

Ամէն սազի մէչըն գօված դուն Թամամ դա́սն իս, քամանչա.
Նաքազ մարթ քիզ չի կանա տէսնի, դուն նըրա պա́սն իս, քա-
մանչա.
Ղաստ արա́ էլ լավ օրէրուն էդիվըն հասնիս, քամանչա.
Քիզ ինձնից օ՞վ կանա խըլի՝ աշուղի բասն իս, քամանչա.

Անդամըդ երծաթէն պիտի, գըլուխըդ ջավահիր քարած,
Կութըդ շիրմայէմէն պիտի, փուրըդ սադափով նախշ արած
Սիմըդ օսկէն քաշած պիտի, էրկաթըդ փանջարա արած,
Օչ ով ղիմէթըդ չի գիդի՝ լալ ու ալմասն իս, քամանչա։
Ծիպուտըդ վարաղընած պիտի՝ թահր ունէնա հազար ռանգով.
Զարըդ ռաշի կուդէն պիտի՝ վուր դուն խօսիս քաղցըր հանգով.
Շատին դարթուն կու լուսացցնիս, շատին կու քընէցնիս բանգով.
Անուշահամ գինով լիքըն դուն օսկէ թասն իս, քամանչա։
Ածողիդ էրկու կու շինիս, առաչ չայի ղափա գուզիս,
Կու մէձըրվիս այիվընումըն, պարապ վախտի րափա գուզիս.
Ցիփ վէր գու քաս մէջլիսումըն, քաղցըր զօղ ու սափա գուզիս.
Բօլօրքըդ գօղալնիր շարած մէջլիսի կէսն իս, քամանչա։
Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դու-
ղըն.
Ցիփ քաղցըր ձայնըդ վիր կօնիս՝ բաց կուլի հիդըդ խաղօղըն.
Խալխին էս իլթիմազն արա՝ ասին. «Ապրի քու ածօղըն».
Քանի սաղ է Սայաթ-Նօվէն, շատ բան կու տէսնիս, քամանչա։

Սայեաթ-Նօվայ, 1852 թ.

Նաքազ—վատթար
Ղաստ արա—ջանք արա
Շիրմայի—փղոսկր
Ղիմէթ—գին
Վարաղնած—ոսկեզօծ
Կուդի—պոչ
Բանգ—քնեցնող դեղ
Այիվան—սրահ, հովանոց
Գօղալ—գեղեցկուհի, չքնաղագեղ
Զօղ ու սափա—խրախճանք
Իլթիմազ—աղաչանք, միջնորդություն

Բ.

Ցիս մի գարիբ բուլբուլի պէս, դուն օսկէ ղափազի նըման.
Էրէսըս դի վուտիդ տակըն՝ անց կաց, փիանդազի նըման.
Ցար, քիզիդ խօսիլ իմ ուզում՝ Շահի իլթիմազի նըման.
Աջայիբ սուրաթի տէր իս՝ ռանգըդ է գուլգազի նման։
Ցար, մըտիլ իս բաղչի մէչըն, աջայիբ սէյրան իս անում.
Շուղկըդ արէգակի նըման է՝ տիմնօղին հէյրան իս անում.
Ջիգարիս կըրակ իս տըվի, էրվում իմ՝ բիրյան իս անում.

Վունց մէ գօղալ չէ ունէցի էտ քու արած նազի նըման։
Հէնց իմացի, յար, քու ղուլ իմ, թանգ հախօվ գընած չըրաղ իմ.
Դըրդանըդ ընկած ըլիմ, օ՛վ տէսնէ, ասէ, տուսաղ իմ.
Էշխէմէդ հիվանդացիլ իմ, վունց մեռնում իմ, վունց թէ սաղ իմ.

Ծօվի պէս ուրաղան իմ տալիս, գըժվիլ իմ Արազի նըման.
Օվ կու տէսնէ՝ ջունուն կուլի՝ բարգ էրէսիդ խալ իս անում.
Էլ ջուքամըն դո՛ւն կու քաշիս, չուն մահիս՝ խիալ էս անում.

Ցա՛ր յիս քիզ բարօվ իմ տալիս,—շուռ իս գալի՝ ղալ իս անում.
Զունքի խօսքդ անց է կէնում բէլլու շահանդազի նըման։
Սայաթ-Նօվէն ասաց՛ կու լամ. չիմ լաց ըլի՝ թէ ճար ունէնամ
Էլ յիս կու քաշիմ էս ղուսէն՝ թուղ, լի ահ ու զար ունէնամ.
Ցա՛ր, քիզ վըրէն արք ունենամ, մէ լավ իխտիար ունէնամ;
Առնում, տանիմ մէջլիսնիրըն օսկէջըրած սազի նըման։

Սայեաթ-Նօվայ, 1852

Փիանդազ՝ -ոտքի տակը գցվող խալիչա կամ դիպակ
Աջայիբ—չնաշխարհիկ, անաշխարհիկ
Գուլգազ—խաս ալ ու վառ
Սէյրան—զբոսանք, ճեմելը
Հէյրան—հիացում, դյութանք
Տուսաղ—բանտարկված
Էշխ—սեր
Վունց—ոչ
Ջունուն կուլի—կխելագարվի
Ջուքամ—նեղություն, վտանգ
Ղուսա—տրտմություն
Իխտիար—իրավունք, իշխանություն

Գ.

Անգլին ակըն վըրէդ շարած՝ անբան օսկու ռախտ իս, գօղալ։
Աստուած քիզ ու նըրան պահէ՝ ում հիդ վուր նըվախտ իս գօղալ.
Բըլբուլին լիզու շինեցիր՝ դուն վարթի դըրախտ իս, գօղալ.
Վարթըն մի ամիս ումբր ունէ, դո՛ւն ամէնան վախտ իս, գօղալ։
Մէմէկ մէմէկ էլ չի ասվի՝ թարիփը դարավ քուլիչօվ.
Պատիրըդ՝ զարօվ զարբաբօվ, դօշամէդ՝ խալօվ խալիչօվ,

Տախտակնիրըն էրծաթէմէն, մխխիրըն՝ օսկէ գուլինչօվ.
Խօսրօվ փաչայէմէն թօղած, դո՛ւն, Թօվուզի տախտ իս, գօզալ։
Սկանդարի Զուլղարի թօղած ջավահիր իս, անգին լալ իս.
Դանդըն գանդի մինչէն հանած, հիդքաշած մըրխալ մըրխալ իս.
Ցիփ դուն սէյրանգահըն կէհաս՝ օչ օվ այնումըդ չէ գալիս.
Փաք չունիս փաչահզադիմէն, անջամ՝ առանց սախտ իս գօզալ։
Թինդուզ մըտօք ճարտար ըլլի, կա՛նց Սօղօմօն դադա ըլլի,
Թէգուզ մարքարիտօվ լիքըն, Թէգուզ սադափ սադա ըլլի,
Թէգուզ արէգակ լուսնիակ, Թէգուզ հուրիզադա ըլլի,
Էտ քու ամէն մարիփաթով դիփունին կու ախտիս, գօզալ.
Էրգնուց վըրէդ ձուն է էկի՝ փունջ մանիշակ նուր իս, ջանում.
Մօղըդ նըստօղըն կու էրվի՝ էտ նազի տէր վուր իս, ջանում,
Դիու Սայաթ-Նօվէն չէ մէռի՝ դու ինչի՞ տըխուր իս, ջանում.
Թաք յիս մէռնիմ, դուն սաղ ըլլիս. գէրէզմանըս վաղ տիս, գօ-
զալ։

Սաեաթ-Նօվայ, 1852

Ռախտ — հանդերձ, զարդ
Նըվախտ — հարմար
Թարիփ — գովասանք
Գուլինչօվ — քսանյակներով
Գուլինչ — բևեռի գլուխը
Փաչա — փադիշահ — արքա
Թօվուզի տախտ — գոհարով ու մարգարիտով զարդարած արքայական ոսկե գահ, որի վերևում ակնաքարերով կերտված կար սիրամարգ
Դադա — վարպետ, իմաստուն
Սկանդար Զուլղար — Ալեքսանդր Մակեդոնացի
Սեյրանգահ — զբոսարան
Այնումդ — աչքումդ
Փաք — ահ
Անջամ — անհոգ
Հուրիզադա — հյուրիի սերունդ

ՏԵՍԻԼ ԺԱ

ՊԵՊՈ. ՄԵՆԱԿ ԱՐԽԱԼՈՒԽԻ ԿՈՃԱԿՆԵՐԸ ՄԵՐ ԳՑԻԼՈՎ

Գընա, Պէպօ գէդին լըզէ, խալխի վուտնէրուն պաչ արա, նըրանց վուտի ցիխը լըզէ... Օ՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարթահիսաբումն իս դուն, ի՞նչ անում ունիս դուն... Ցիփօր գուզին, վուտի տակը կու գըցին քիզ, վըրէտ կու ման գան, գէդնի հիդ

կու հավսըրին… Ի՞նչ հաջաթ, Չիանճվէլի վրա ինչօ՞վ իս ավէլ… Դուն խօ մարթ չիս, մարթկէրանց համա կէրակուր է սադէղծի քիզ աստուձ… Գիշէր չարչըրվի, ցէրէկ չարչըրվի, յէրգընքի տակը լուսացըրու, անձըրվի ու քամու հիդ կռիվ տու, ձմէռը ցըրտէմէն կծնկօտա, ամառը արէգակի շուքուժն էրվի ու խօրօվվի… գընա էնէնց մի թիքա հայ ճարէ ու էն թիքա հացօվ դէդիտ ու քըվիրըրդ պահէ… Էս ինչ, ինչ մարթութին… էսէնց շունն էլ է ճարում մէ թիքա, վուր տունը պահում է… Միթամ դուն էլ շուն իս… քանի աշխարքիս էրէսին ման իս գալի, դուն էլ շան պէս կէրակրվի… Էս ինչ մարթութին է… (դադար)։ Մարթ էյիր ուզում դառնա, կէհէյիր մարթիք կու թալնէյիր, գուղութին կօնէյիր, ինձ նըման խըղճէրուն կու զըրնէյիր. քսանուհինգ հազար տիղ արէն արտըսունք կու թափիլ տէյիր, էն արտսունքնիրը փուղ կու շինէյիր ու էն փուղօվ օսկէ տընիր… Մէչը փառավուր ման գու քէյիր… դըրօշկա, կալասկա, ձիանիր կու սարքէյիր, քսանուհինգ ինձպէսին գլխիդ ջարավաշ կու կանգնէցնէյիր… Այ, էն չախը կօսէյի քիզ մարթ իս Պէպօ, ինչ մարթուն պիտի… ինչ քէփդ գուզէր, էն սահաթին կու ճարէյիր… Էն չախը դիփունքը քիզ գըլուխ կու տէյին, կու մէձրէյին, պատիվ կու տէյին ու մէկս մէկու գըլուխ կու կօտրէյին, վուր քու աճկը նըրանց վրա քաղցըր ըլի՝ (Դուրս է գնում դիմացի դռնից)։

Գ. Սունդուկյան Պեպո.

4. ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌ

Ագուլիսի բարբառը հայերենի այնպիսի բարբառներից է, որոնք հայերի համար անգամ անհասկանալի են այն չափով, որ ոչ հայ լեզվաբաններն ուսումնասիրելիս գտնում են, որ դրանք կարող են համարվել հայերենից տարբեր լեզուներ։ Իրոք, եթե մենք հասկանալիության աստիճանը վերցնենք, ապա Ագուլիսի, Համշենի, Կիլիկիայի, Սիրիայի, Տիգրանակերտի բարբառները և Ողմեցիների խոսվածքը կարող ենք համարել տարբեր լեզուներ։ Սակայն այդ բոլոր բարբառների բառապաշարի հիմնական մասը և ամբողջ քերականությունը ընդհանուր հայկական է։ Բարբառի անհասկանալի լինելու պատճառը, մեր կարծիքով, ձայնավորների մեծ փոփոխություններն են. բաղաձայնների տեղաշարժները երբեք չեն վնասում հասկանալուն, հասկանալուն չեն վնասում նաև բաղաձայնների մասնակի փոփոխությունները, բայց ձայնավորների խիստ փոփոխությունը բարբառը դարձնում է

արդեն անհասկանալի։ Հատկապես այն ժամանակ, երբ ձայնավորների փոփոխությունը կատարվում է առանց օրենքի կամ առանց որոշակի օրինաչափությունների, այդ դեպքում բարբառները անհասկանալի են թվում։ Չէ՞ որ այս կամ այն ձայնավորը համարյա ամեն բառի մեջ կամ երկու-երեք բառերից մեկի մեջ անպայման հանդիպում է, որովհետև ձայնավորները փոքրաթիվ են և գործածվում են մի քանի անգամ մեծ թիվ կազմող բաղաձայնների հետ։ Ուստի եթե նրանք խիստ փոխված են, օրինակ՝ ա-ն վերածվել է կամ օ-ի, կամ է-ի, կամ ը-ի, է-ն վերածվել է ի-ի, ա-ի և այլն, այդ դեպքում բարբառը դառնում է անհասկանալի։ Բնական է, որ այս երևույթին միանալով ուրիշ շատ երևույթներ, ինչպես, օրինակ, բառապաշարի մասնակի տարբերությունը, բաղաձայնական սիստեմի տարբերությունը, բաղաձայնների մասնակի տարբերությունները, հոլովման և խոնարհման տարբերությունը, ինտոնացիայի տարբերությունը և այլն,—այդ ամենը բարբառը դարձնում են անճանաչելի, անհասկանալի։ Իլուստրացիայի համար վերցնենք մի օրինակ։

Ագուլիսի բարբառում ա ձայնավորի դիմաց մենք գտնում նք. օ. օրինակ, օհ > ահ, օրտ > արտ, բօկ—բակ, թօս—թաս, խօղ > խաղ, ծօռ > ծառ, հօստ > հաստ, տօկ > տակ, քօր > քար և այլն.

ու. օրինակ, քուղցր > քաղցր, թուն > թան, ժում > ժամ, սունդ > սանդ, տունձ > տանձ.

ո̈ւ. օրինակ, բո̈ւն > բան, գ՚ո̈ւլ > գալ, ծ՚ա̈րո̈ւն > ծիրան.

օյ. օրինակ, սօյլ > սալ, ծօյլ > ծալ, կօյլ > կալ.

օ̈. օրինակ, նօ̈լ > գնալ, լօ̈լ > լալ, բօ̈ռձ > բարձ, գ՚օ̈զ > գազ, գ՚օ̈ճ > գաջ.

է. օրինակ, վէզ > վազ, (ք), շէհ > շահ, բէժինք > բաժինք.

ա̈. օրինակ, հա̈նդարտ > հանդարտ, շա̈բա̈թ > շաբաթ.

ը. օրինակ, խըզօլ > հազալ, մըխօթ > մախաթ, կըթթօլ > կաթիլ, հըզօր > հազար.

ի. օրինակ, բիմբակ > բամբակ, բինջար > բանջար, գինգաթ > գանգատ.

այ. օրինակ, այսա̈ղ > ասեղ, ծայլիլ > ծալել, հայլիլ > հալել։

Այսպիսով Ագուլիսի բարբառում ա ձայնավորը վերածվում է համարյա բոլոր տեսակի ձայնավորների և երկհնչյունների։ Հասկանալի է, որ ա ձայնավոր ունեցող բառերը կդառնան անճանաչելի և անհասկանալի։

Համարյա նույնանման փոփոխություններ են կրում նաև մյուս ձայնավորները, երբեմն այնքան անսպասելի, որ հայոց լեզուն գիտցող, բայց բարբառներից անտեղյակ մարդը որևէ կերպ կռահել չի կարող, օրինակ.

ծա̈րո̈ն > ծիրան, սուպան > սապոն, թօփուր > թափոր,

տա̈գ' > տեկ, ըրա̈յնա̈կ > արեգակ, գ'ըլընըո̈ց > գլխաբաց և այլն։

Ձայնավորներին հակառակ՝ Ագուլիսի բարբառը բաղաձայնական սիստեմով գրաբարին նման է, նրա բաղաձայնները համարյա ամեն տեղ արտասանվում են իրենց հարազատ հնչմամբ, այսինքն տեղաշարժի ենթակա չեն, օրինակ.

Բա̈րա̈ն > բերան, խա̈րէլ > խաբել, էրբա̈թ > ուրբաթ, իր > երբ, դա̈նա̈կ > դանակ, մօրդ > մարդ, հէղդիլ > խեղդել, ծռդո̈ւմ > երդում, բո̈ւրդ > բուրդ, կ'ա̈ռդիլ > կարդալ, գըլո̈ւհ > գլուխ, օրագ' > ուրագ, գ'ո̈ւգ' > գոգ, մըրգ'ա̈րիթ > մարգարիտ, ձո̈ւր > ձոր, ձիգ' > ձիգ, ջո̈ւր > ջուր, հաջիլ > հաջել, մաջ > մեջ և այլն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագուլիսի բարբառն ունի հետևյալ հոգնակի վերջավորությունները—ք, ար, ա̈ր, ներ. օրինակ. կատու > կատուք, չուխա > չուխաք, իղնը > իղնուք (եղներ), տօն > տօնար (տներ), բուխկ > բուխկա̈ր (բողկ), էխտ > էխտա̈ր (աղտ), դէղ > դէղա̈ր, մայր > մայրա̈ր, գյո̈ւլ > գյո̈ւլա̈ր (գայլեր), ձմէռնը > ձմէռնընէր, հրօտ > հրօտնէր (խրատներ) և այլն։

Կան նաև անիք' և ա̈տիք' (նատիք') հոգնակի վերջավորություններ, օրինակ. գ'օղա̈ր > գ'ըղըրնա̈տիք (գաղարներ), ոսկոռ > ըսկըռատիք' (ոսկորներ), շա̈լա̈կ > շըլըկա̈տիք', տափակ > տըփըկանիք', քուռակ > քըռըկանիք'։

Բարբառումս կան նաև հոգնակիներ՝ արիք'—գ'իրք' > գ'իրք'ա̈րիք', գ'իր > գ'իրա̈րիք', ջո̈ւր > ջրարիք'.

Անք, ա̈նք > ձիանք, ըլվա̈նք (լվեր), գէրյանք.

Արք > խասկարք (խոսքեր), տղարք > տղաներ.

Աունք > սըրմա̈րո̈նք (սերմեր).

Օտիք' > խընըմօտիք' (խնամիներ)։

Ագուլիսի բարբառի հոլովումը ունի 7 հոլով, բացառականի վերջավորությունն էից, Երևանի բարբառի նման, գործիականի վերջավորությունն է ավ (ա̈վ), Ղարաբաղի նման, ներգոյականի

վերջավորությունն է ա̈մ (ա̈մ), որն առանձնահատուկ է Ագուլիսի բարբառին միայն։ Օրինակ,

	Եզ.	Հոգն.
Ուղղ.	դէղ	դէղա̈ր
Սեռ.	դէղի	դէղէրի
Տր.	դէղի	դէղէրի
Հ.	դէղի	դէղա̈ր
Բ.	դէղից	դէղէրից
Գ.	դէղավ	դէղէրա̈վ
Ն.	դէղամ	դէղէրա̈մ

Հատուկ անունները սեռականում ունենում են ա կամ օ օրինակ, Ավէտիս > Ավետիսա̈, Խաչատուր > Խաչատրօ, Պէտրուս > Պետրուսա, կամ Պիտրուսօ։ Որոշ բառեր բացառականը, գործիականը և ներգոյականը ունենում են եանի կամ նանից, եանով, եանում. այս ձևերից նանից ձևի զուգահեռը կա Մ'եղրու բարբառում իբրև նէնից, կամ Կարճևանի բարբառում իբրև նէնի։

Ագուլիսի բարբառի թվականների դասականները կազմվում են ադրբեջանական ինչի կամ մինչի ածանցով։

Հետաքրքրական է Ագուլիսի բարբառի դերանունները։ Անձնական դերանունների հոլովման պատկերը հետևյալն է.

Եզակի

Ուղղ.	իս	դու
Սեռ.	ա̈մ	քու
Տր.	ա̈նձ	քէզ, քի
Հայց	ա̈նձ	քէզ, քի
Բաց.	ա̈նձա̈նից, ընձա̈նից	քիզա̈նից, քիզհանից
Գործ.	ա̈նձա̈նա̈վ ընձա̈նա̈վ	քիզա̈նա̈վ, քիզհա̈նա̈վ
Ներգ.	ա̈նձա̈նա̈մ, ընձա̈նա̈մ	քիզա̈նա̈մ

Հոգնակի

Ու.	միքյ	դո̈ւք
Սեռ.	միր	ձիր
Տր.	միզ	ձիզ
Հայց.	միզ	ձիզ
Բաց.	միզա̈նից	ձիզա̈նից
Գործ.	միզա̈նա̈վ	ձիզա̈նա̈վ
Ներգ.	միզա̈նա̈մ	ձիզա̈նա̈մ

Սա, դա, նա, *ցուցական դերանունները լինում են* սօ, դօ նօ *ձևերով։* Սօ *ձևը լինում է նաև* զօ *ձևով, եթե ցույց է տալիս անձ։ Հոլովման պատկերը հետևյալն է.*

Եզակի

Ուղղ.	*սօ*	*դօ*	*նօ*
Սեռ.	*սրօ*	*դրօ*	*նրօ*
Տր.	*սրօ*	*դրօ*	*նրօ*
Հայց.	*սրօ*	*դրօ*	*նրօ*
Բաց.	*սրա̃նից, սրօա̃նից, սրօհա̃նից*	*դրա̃նից, դրօա̃նից, դրօհա̃նից*	*նրա̃նից, նրօա̃նից նրօհա̃նից*
Գործ.	*սրա̃նա̃վ, սրօա̃նա̃վ սրօհա̃նա̃վ*	*դրա̃նա̃վ, դրօա̃նա̃վ, դրօհանա̃վ*	*նրա̃նա̃վ, նրօա̃նա̃վ նրօհա̃նա̃վ*
Ներգ.	*սրա̃նա̃մ, սրօհա̃նա̃մ*	*դրա̃նա̃մ,, դրօհա̃նամ*	*նրա̃նա̃մ, նրօհա̃նա̃մ*

Հոգնակի

Ուղղ.	*սրուք*	*դրուք*	*նրուք*
Սեռ.	*սրուց*	*դրուց*	*նրուց*
Տր.	*սրուց*	*դրուց*	*նրուց*
Հայց.	*սրուց*	*դրուց*	*նրուց*
Բաց.	*սրուցա̃նից, սրուցհա̃նից*	*դուցա̃նից, դրուցըհա̃նից*	*նրուցա̃նից, նրուցհա̃նից*
Գործ.	*սրուցա̃նա̃վ, սրուցհա̃նավ*	*դրուցա̃նա̃վ, դրուցհա̃նա̃վ*	*նրուցա̃նա̃վ, նրուցհա̃նա̃վ*
Ներգ.	*սրուցա̃նա̃մ սրուցհա̃նա̃մ*	*դրուցա̃նա̃մ, դրուցհա̃նա̃մ*	*նրուցա̃նա̃մ, նրուցհա̃նա̃մ*

Այս, այդ, այն *դերանունները գործածվում են* աս, ատ, ան *ձևով և ունենում են հետևյալ պատկերը.*

Եզակի

Ուղղ.	*աս*	*ատ*	*ան*
Սեռ.	*աստուր*	*ատուր*	*անդուր*
Տր.	*աստուր*	*ատուր*	*անդուր*
Հայց.	*աս*	*ատ*	*ան*
Բաց.	*աստուրանից, աստրանից*	*ատուրանից, ատրանից*	*անդուրանից, անդրանից*

Գործ.	աստուրանավ, ասավ	ատուրանավ, ատավ	անդուրանավ, անավ
Ներգ.	աստուրանամ	ատուրանամ, ատամ	անդուրանամ, անդրանամ

Հոգնակի

Ու.	աստուք	ատուք	անդուք
Սեռ.	աստուց	ատուց	անդուց
Տր.	աստուց	ատուց	անդուց
Հայց.	աստուք	ատուք	անդուք.
Բաց.	աստուցուց, աստուցանից	ատուցուց, ատուցանից	անդուցուց, անդուցանից
Գործ.	աստուցավ, աստուցանավ	ատուցանավ, ատուցավ	անդուցավ, անդուցանավ
Ներգ.	աստուցամ, աստուցանամ	ատուցամ, ատուցանամ	անդուցամ, անդուցանամ

Ագուլիսի բարբառը խոնարհումը կազմում է յուրահատուկ ձևով։ «Ս» ճյուղի բարբառների լեզվական առանձնահատկությունների ամբողջ հանգույցը կարելի է գտնել Ագուլիսի բարբառում, հատկապես բայերի խոնարհման մեջ։ Ագուլիսի բարբառը խոնարհման սիստեմով մոտենում է ավելի շատ «Ս» ճյուղի, քան թե «Ում» ճյուղի բարբառներին։

Ագուլիսի բարբառում կան նույնքան եղանակներ, որքան գրական լեզվի մեջ և հետևյալ դերբայները. անորոշ՝ սըրիլ, թակիլ, անկատար՝ սըրում, թակում, վաղակատար՝ սըրէլ, թակալ, հարակատար՝ սըրած, թակած, ապառնի՝ սըրէլնց թըկէլնց։

Ագուլիսի բարբառն ունի օժանդակ բայի միայն ներկան. անցյալի ձևերը Ագուլիսի բարբառին անծանոթ են։ Այդպես են նաև «Ս» ճյուղի բարբառների մեծ մասը (Կարճևանի, Մեղրու, Շաղախի և Ուրմիայի բարբառները)։ Այս առանձնահատկություններից էլ բղխում է Ագուլիսի բարբառի խոնարհման ամբողջ սիստեմը։ Օժանդակ բայի ներկայի ձևերն են ըմ, ըս, ա, ըք, ըք, ըն, ըստ որում ներկայի առաջին և երկրորդ դեմքերը նույն են (հոգնակի). անցյալի ձևերը կազմելու համար (բաղդրյալ ժամանակների) Ագուլիսի բարբառն օգտագործում է նէղ բառմասնիկը, որ լինէղ բառի աղված ձևն է։ Անցյալ կատար-

յալի սովորական ձևը Ագուլիսի բարբառը չունի, այդպես են նաև «Ս» ճյուղի բարբառներից Կարճևանի, Մեղրու և Շաղախի բարբառները։ Փոխարենը գործ է ածվում կամ վաղակատարի ձևերը կամ մի առանձին ձև, որն ունենում է կմ, կս, կք, կն, կամ ըն, ըս, ա, ըք, ըն վերջավորություններ, ըստ որում բացակայում է երրորդ դեմքի ձևը. խոնարհման ընդհանուր պատկերը հետևյալն է.

Ներկա		Անցյալի անկատար
Թակամ ըմ սըրում ըմ		*սըրում ըմ նէլ, Թակամ ըմ նէլ և այլն.*
» ըս » ըս		*» ըս »*
» ա » ա		*» ա »*
» ըք » ըք		*» ընք »*
» ըք » ըք		*» ըք »*
» ըն » ըն		*» ըն »*

Ագուլիսի բարբառում բացակայում է վաղակատար ժամանակների սովորական գործածությունը։ Վաղակատար դերբայով և օժանդակ դերբայի ներկայի ձևերով կազմված խոնարհումը ցույց է տալիս անցյալ կատարյալի երկրորդական ձևերը, իսկ վաղակատարի գաղափարը արտահայտվում է հարակատար դերբայով կազմված բաղադրյալ ձևերով։ Այսպիսով հարակատար և վաղակատար ժամանակների գաղափարները նույնացել են։

Վաղակատար-հարակատար

Թական ըմ—Թակել եմ և այլն։	*սըրէծ ըմ—սրել եմ և այլն։*
» ըս	*» ըս*
» ա	*» ա*
» ըք	*» ըք*
» ըք	*» ըք*
» ըն	*» ըն*

Անցյալի վաղակատար-հարակատար

Թական ըմ «նէլ»՝ Թակել էի և այլն.	*սըրէծ ըմ նէլ—սրել էի և այլն.*
» ըս	*» ըս*
» ա	*» ա*

թակած	*ըք*	*նէլ*	*սըրկած*	*ըք*	*նէլ*
»	*ըք*	»	»	*ըք*	»
»	*ըն*	»	»	*ըն*	»

Անցյալ կատարյալ ժամանակը Ագուլիսի բարբառում կազմվում է երկու ձևով՝ պարզ և բաղադրյալ։ «Ե» խոնարհման բայերի պարզ ձևը կազմվում է Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառների նման անցողական (առանց «ց» ունենալու) հիմքով, իսկ «ա» խոնարհման բայերինը «ց» հիմքով, որ Ագուլիսի բարբառում վերածվում է «հ» հնչյունի։ «Ե» խոնարհման բայերի անցյալ կատարյալի պարզ ձևը եզակի երրորդ դեմք չունի։

Անցյալ կատարյալ (*պարզ ձև*)

թակամ—թակեցի և այլն.	*սըրէմ—սրեցի*	*ըրվա̈հա̈մ—երևացի և այլն.*	*մռահամ—մոռացա և այլն.*
թակաս	*սըրէս*	*ըրվա̈հա̈ս*	*մռահաս*
—	—	—	—
թակաք	*սըրէք*	*ըրվա̈հա̈ք*	*մռահաք*
թակաք	*սըրէք*	*ըրվա̈հա̈ք*	*մռահաք*
թական	*սըրէն*	*ըրվա̈հա̈ն*	*մռահան*

Ուրմիայի, Խոյի և Մարաղայի բարբառների նման Ագուլիսի բարբառն անցյալ կատարյալի առաջին դեմքում ունենում է «մ» վերջավորություն։

Անցյալ կատարյալի բաղադրյալ ձևը կազմվում է «Ս» ճյուղի մի քանի բարբառների նման (Շաղախ) վաղակատար դերբայով և օժանդակ բայով.

Անցյալ կատարյալի բաղադրյալ ձևը

թակալ ըմ—թակեցի և այլն.		*սըրէլ ըմ—սրեցի և այլն.*		*ըրվա̈հալ ըմ—երևացի և այլն*		*մռահալ ըմ—մոռացա և այլն.*	
»	*ըս*	»	*ըս*	»	*ըս*	»	*ըս*
»	*ա*	»	*ա̈*	»	*ա̈*	»	*ա*
»	*ըք*	»	*ըք*	»	*ըք*	»	*ըք*
»	*ըք*	»	*ըք*	»	*ըք*	»	*ըք*
»	*ըն*	»	*ըն*	»	*ըն*	»	*ըն*

Այսպիսով անցյալ կատարյալի կազմությամբ Ագուլիսի բարբառը մոտենում է «Ս» և «Լ» ճյուղի բարբառներին, հեռանալով «Ում» ճյուղից։

Սահմանական ապառնի ժամանակի ձևերը կազմվում են «էլա̈ց կամ ալա̈ց» վերջավորություն ունեցող դերբայով, որ նույնանում է գրաբարի ապառնի դերբայի հետ։

Ապառնի

Թըկէլա̈ց ըմ— թակելու եմ և այլն.	*մըռընկլա̈ց ըմ — մոռանալու եմ և այլն.*	*ըրվէլա̈ց ըմ— երևալու եմ և այլն.*
» ըս	*» ըս*	*» ըս*
» ա̈	*» ա̈*	*» ա̈*
» ըք	*» ըք*	*» ըք*
» ըք	*» ըք*	*» ըք*
» ըն	*» ըն*	*» ըն*

Անցյալի ապառնի

Թըկէլաց ըմ նէլ— թակելու էի և այլն	*մըռընէլա̈ց ըմ նէլ—մոռանալու էի*	*ըրվէլա̈ց ըմ նէլ —երևալու էի և այլն*
» ըս »	*» ըս »*	*» ըս »*
» ա̈ »	*» ա̈ »*	*» ա̈ »*
» ըք »	*» ըք »*	*» ըք »*
» ըք »	*» ըք »*	*» ըք »*
» ըն »	*» ըն »*	*» ըն »*

Ըղձական եղանակ

Ապառնին կազմվում է գրական լեզվի նման, անորոշ դերբայի «լ» վերջավորության փոխարեն ավելացնելով դեմքի վերջավորությունները, իսկ անցյալի ապառնին՝ ավելացնելով միայն «նէլ» մասնիկ-բառը։

Ապառնի

Թակիմ—թակեմ և այլն.	*մըռանիմ—մոռանամ և այլն.*	*ըրվօմ—երևամ և այլն.*
Թակիս	*մըռանիս*	*ըրվօս*

թակի	մըռանի	ըրվö
թակիք՛	մըռանիք՛	ըրվöք
թակիք՛	մըռանիք՛	ըրվöք
թակին	մըռանին	ըրվöն

«Երևալ բայը, ինչպես և «ալ» խոնարհման բոլոր բայերը անորոշ դերբայում ունենում են «օլ» կամ «öլ» վերջավորություն, ուստի ըղձական ապառնիում ունենում են «օմ» կամ «öմ» վերջավորություն։

Անցյալի ապառնին կազմվում է ապառնիից, ավելացնելով սովորական «նէլ» բառ-մասնիկը.

Անցյալի ապառնի

թակիմ նէլ թա-կեի և այլն.	մըռանիմ նէլ—մոռանայի և այլն.	ըրվöմ նէլ—երևայի և այլն.
		ըրվöս
թակիս »	մըռանիս »	ըրվö
թակի »	մըռանի »	և այլն
և այլն	և այլն	

Պայմանական եղանակի սովորական կազմությունը չկա, չկա ուրեմն և «կը» եղանակիչը, դրա փոխարեն պայմանականը կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայով.

Պայմանական եղանակ

Ապառնի

թակիլ	ըմ—կթակեմ և այլն.	ըրվöլ	ըմ—կերևամ և այլն.
»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա̈
»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն

Անցյալի ապառնի

թակիլ	ըմ նէլ—կթակէի և այլն	ըրվöլ	ըմ նէլ—կերևայի և այլն.
»	ըս	»	ըս

թակիլ	ա̈	ըրվօ̈լ	ա̈
»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն

Հարկադրական եղանակը *կազմում է «մա̈տա̈մ ա̈» կամ «մա̈տա̈լ ա̈» եղանակիչով, իսկ հարկադրական անցյալի ապառնին ստանում է սովորական «նէլ» մասնիկը. ընդհանուր պատկերը կլինի հետևյալը։*

Ապառնի			Անցյալի ապառնի		
մա̈տա̈մ ա̈ (մա̈տա̈լ ա̈)		*թակիմ—պիտի թակեմ և այլն.*	*մա̈տա̈մ ա̈ (կամ մա̈տա̈լ ա̈)*		*թակիմ նէլ*
»	»	*թակիս*	»	»	*թակիս* »
»	»	*թակի*	»	»	*թակի* »
»	»	*թակիքʼ*	»	»	*թակիքʼ* »
»	»	*թակիքʼ*	»	»	*թակիքʼ* »
»	»	*թակին*	»	»	*թակին* »

Մա̈տա̈լ ա̈ *եղանակիչը, որ Ցղնայի խոսվածքում լինում է* մէտիլ, *վերջին ձևով գտնում ենք Մեղրու բարբառում։ Թե այս դեպքում և թե բազմաթիվ շատ երևույթներով* Ցղնայի *խոսվածքն ավելի նման է Մեղրու բարբառին, քան Ագուլիսին։*

Անհրաժեշտ է հիշատակել Ագուլիսի բարբառի մի կարևոր հատկանիշ ևս, դա այն է, որ ձայնավորով սկսվող բայերն ստանում են սկզբից «ն» մասնիկ. օրինակ՝ ասում եմ—*նահամ ըմ՝* ուտում եմ—*նօտամ ըմ,* ուզում եմ—*նիզա̈մ ըմ և այլն։*

Ժխտականը կազմում է «չ» մասնիկով, որը դրվում է օժանդակ բայի վրա և ընկնում է բայից հետո. օրինակ.

թակում չեմ—*չեմ թակում,* սրում չեմ—*չեմ սրում*

թակամ չիմ նէլ—չէի թակում, սըրում չիմ նէլ—չէի սրում

թակած չիմ—չեմ թակել (թակած), սըրէծ չիմ—չեմ սրել (սրած)

թակալ չիմ—չթակեցի, սըրէլ չիմ— չսրեցի և այլն։

Խոնարհման պարզ ձևերի վրա ավելանում է «ունչ»—ոչ բառը. օրինակ՝

թակիմ ունչ—չթակեմ, սըրիմ ունչ—չսրեմ

թակիմ ունչ նէլ—չթակեի, սըրիմ ունչ նէլ—չսրեի և այլն։

Ագուլիսի շրջանի համարյա բոլոր գյուղերի խոսվածքները

նկատելի տարբերություններ ունեն Ագուլիսի բարբառից, առանձնապես նկատելի է Ցղնայի և Ոտմիսի խոսվածքների տարբերությունը, որ մոտենում է «Ս» ճյուղի բարբառներին։

ՆՄՈՒՇՆԵՐ ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՎ

* * *

Մույն[1] ումանի քայնթ ամման գինի խմէլիս մա շո̈ւտ կըրմըրում անէլ, հինգ'իրն ալ նըօ միշտ տընօղ անէլտալիս։ Նօ հինգ'իրին տօսը կօպէկ ա տըվէլ օր ալ ծըծա̈ղի ունչ։ Հինգ'իրը վիր ա կալալ փուղը։ Իբօր մույն անքամ ալ հացի վախտ նօ մույն քանի թօս գինի ա խըմէլ քայնթը ալ կըրմըրէլ ա, հինգ'իրը յիտ ա տըվէլ նըրօ փուղը, ահալ.

— Ախպար յինգօռ քու ա̈րկու շօհիտ. քընթիտ հալը հալ չի։

Մույն ուման—մի ոմնի	նըրօ —նրա
Քայնթ—քիթ	ահալ —ասել է
Տնօղ —տնազ	յինգօռ —ետ վերցրու
Տօսը —տասը	
Ունչ —ոչ	
Իբօր —երբ որ	

* * *

Մույն մօրդ պ'էլիս ա տէրտէրին կէշտը խընթըրում օր մույն խընթիրք օնի՝ տէրտէրը գըրի։ Տէրտէրը նահամ ա.

— Իս պ'ա̈րէլ չիմ գըրիլ, ատնարըս ցավամ ա։

— Դէ ճունչ կօ, տէրտէր, ատնէրավըտ չիս գրէլա̈ց հօ։

— Իս ամպէս ըմ գըռում,—նահամա աէրտէրը,—օր ա̈մ գրէծըս ուհման չի պ'ա̈րամ կարդիլ, ալ ա̈նձ ըն կանչամ ա̈մ գըրէծըս կարդիմ. հըրդօ ալ օր գըրիմ, ալ մա̈տիլ ա̈նձ կանչին կարդիմ, համա իս գա̈րիլ չիմ նօլ՝ ատնարըս ցավամ ա։

Նահամա ա —ասում է	ամպէս —այնպես
պ'ա̈րիլ չիմ գըրիլ—չեմ կարող գրել	ուհման —ոմն, որևէ մեկը
Ատնարըս—ատներս	ա̈նձ --ինձ
Չիս գըրէլա̈ց —չես գրելու	հըրդօ —հիմա

---

[1] Այս և հաջորդ երեք նմուշները վերցված են Ս. Սարգսյանցի «Ագուլիսի բարբառը» աշխատությունից։

մա՛տիլ — պիտի
նօլ — գնալ

***

Մ օ ր դ ը։ Ա՛յ կնակ՛, ասար մույն նօլն ըմ գդէծ, սօւրօւն պահա, յա՛տավ իրիք՛ նօլն ալ մույն տէղից գըղա՛նիլ ըք, մույն ձի ալ ճարիլ, վիր նէլիլ մույն տէղ Երուսաղէմ նօլ,
Կ ն ա կ՛ ը։ Աղիկ՛, Երուսաղէմից օր գ՛ո՛ւք, ձիը տօլ ըս օր էլիմ նօմ հայրացըս տխնիմ։
Մ օ ր դ ը կղնըվէլա կընգուն վա՛րան, ըսկսէլ թակի.— Ձիը բըղա՛րած, դու էլիս նօս հմյրացըտ։

***

Մույն մարդու շօտ հօւջաթ կնակ՛ ա նէլամ։ Մույն օր ատ մօրդ ընա՛ն ատ կընակ՛ը գիտի ղրաղավ նէլիս ըն նէլ։

Մօրդը տեսնամ ա գիտին ան ղրաղին խուտը քաղած ըն, նահամ ա կընգուն։

— Ա՛յ կնակ՛՝ տիս՝ գիտին ան ղրաղին խուտը քաղած ըն։
— Քաղած չին՝ խէզած ըն։
— Ա՛յ կնակ՛, խուտը խէզիլ չին՝ քաղիլ ըն։
— Չէ. քաղիլ չին՝ խէզիլ ըն։
— Ա՛յ կնակ՛, քաղած ըն՝ խէզած չին։
— Չէ. խէզած ըն՝ քաղած չին։
— Քաղած ըն...
— Խէզած ըն։

Մօրդը ըջըղվում ա, վիկալամ կընգուն գըձօւմ գիտը։

Կընակ՛ը հէղդվամ ա, ալմա հեղդվամ ժամանակը ձէրքը ջըրիցը հանամ ա՝ գ՛ըլհին վա՛րան մըկրատի նմուն շունց տալիս, ահիլըն ան թա՝ խէզած ըն, խէզած։

5. ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Ջուղայի բարբառը մեր այն բարբառներից է, որն ունի ամենահին տեքստեր, բայց և որը անհետանալու վրա է։ Ջուղայի բարբառով խոսում են Նոր-Ջուղա քաղաքի որոշ թաղերում, Շիրազի հայ բնակչության մեջ և Հնդկաստանի հայերը։ Այս բնակչությունը տարված է Հայաստանից 1605—6 թվերին Շահաբասի ձեռքով։ Հայ ժողովրդի ողբերգության էջերից մեկն է Արարատյան դաշտի Ջուղայի բնակչության այդ գաղթը, և դա գեղարվեստորեն վերարտադրված է Հովհաննես Թումանյանի «Թագավորն ու չարչին» պոեմի մեջ։

«...Եկավ վարար հեղեղի պես,
Զարկեց մեր շեն, մեր լի Ջուղան
Ոչ Սատըծուն նայեց, ոչ մեզ,
Սրբեց բերավ ողջ տեղահան։
...Աղաչեցինք աղերսելով,
Ետ շուռ եկանք ու անց կացանք.
Ծեծով, կոծով, հրով, սըրով՝
Ծով Արազի ափը հասանք։
Արազը ծո՛վ, Արազն էլմա՛ն,
Դուրս է եկել իր ափերից.
«Անցե՛ք», եկավ մեզ հրաման.
Շահն էր հրաման տալիս վերեց...
Ետևը սո՛ւր, առաջը ջո՛ւր,
Սո՛ւգ, վայնասո՛ւն, իրարանցո՛ւմ,
Բառաչում են մեծ ու պուճուր
Իրար գըկած՝ գետը լըցվում...»

Ջուղայի (Ջուլֆայի) այժմյան բնակչությունը իր բարբառով համարյա չի խոսում, նա ենթարկվել է Երևանի բարբառի ազդեցությանը և խոսում է համարյա Երևանի բարբառով։

Ջուղայի ամենահին տեքստը դա է «Աղերսագիր հայոց» 1658 թվից. այդ թվից հետո Ջուղայի բարբառով եղել են բավական քանակությամբ տեքստեր, բայց թե այդ հին տեքստը և թե հետագայի տեքստերը չեն պահպանել բարբառագրության կանոնները, ուստի տպագիր տեքստերով դժվար է ստույգ գաղափար կազմել Ջուղայի բարբառի մասին։ Բարեբախտաբար Նոր Ջուղայի բարբառը ուսումնասիրել է պրոֆեսոր Հ. Աճառյանը։ Իրեն հատուկ խնամքով և գիտակությամբ պրոֆեսոր Հ. Աճառյանը մանրազնին քննության է ենթարկել Նոր Ջուղայի բարբառը, անձամբ լինելով Նոր Ջուղայում և լսելով Նոր-Ջուղայի խոսվածքը։ Աշխատությունը կրում է «Քննություն Նոր-Ջուղայի բարբառի» վերնագիրը, և հրատարակվել է Երևանում 1937 թվին։ Աշխատությունը բռնում է 401 ձեռագիր էջ, ընդգրկում է Նոր Ջուղայի բարբառի պատմությունն ու վիճակագրությունը, հընչյունաբանությունը, ձևաբանությունը, բառապաշարը և նմուշները։

Համառոտ նկարագիր

Նոր Ջուղայի բարբառում կան հետևյալ ձայնավորները՝ ա, է, ի, օ, ու, ը, նաև երկբարբառային արտասանություն ունեցող ե, և ո, օրինակ եփել > եփիել, կերայ > կիերա, սոխ > սոխ, խմոր > խըմոր։ «Ե» բառասկզբին միավանկ բառերի մեջ ունի համապատասխանաբար «յե», բազմավանկ բառերի մեջ՝ «յե» կամ «յի». օրինակ՝ եզն > յեզ, ես > յես, երես > յիրես, եղունգ > յեղունգ։ Բառասկզբին «ո» հնչյունի դիմաց գտնում են «վո» միավանկ բառերում և փակ վանկում և «օ» կամ «ու»՝ բաց

վանկում. օրինակ՝ ոսպ > վոսպ, ոտն > վոտ, որդի > վօրթի, ոսկե-րիչ > վոսկրիչ, ոռն > օրոջ, ուլորել > հ'ուլորել։

Վերին բարձրության կամ քմային ձայնավորներ բարբառում չկան, երկբարբառներ էլ չկան, գրաբարի երկբարբառներից ոչ մի հետք չկա Ջուղայի բարբառում։

Բաղաձայնական սիստեմը երթարկվում է երկրորդ տեղաշարժին, հատկապես ձայնեղների խումբը բառասկզբին և բառամիջում վերածվում է շնչեղ ձայնեղների, իսկ բառավերջում ենթարկվում է առաջին տեղաշարժին, վերածվելով շնչեղ խուլերի. խուլ բաղաձայնները ռնգայիններից հետո վերածվում են ձայնեղների. շնչեղ խուլերը խուլ բաղաձայններից հետո երբեմն վերածվում են խուլերի, օրինակ

Բարձր > բ́անցըր, բոյն > բ́ուն, շաբաթ > շաբ́աթ, երբ > ջեփ, գարուն > գ́արունք, ագահ > ագ́ահ, հոգի > հոգ́ի, գոգ > գ́ոք, բա-նաք > թանակ, ճանկ > ճանգ, դեղին > դ́եղին, դու > դ́ու, գդակ գ́ը-դ́ակ, վարդ > վարթ, փեթակ > փեսակ, սանր > սանդր, ձայն > ձ'էն, ձի > ձ'ի, որձակ > վորձ'ակ, վարձք > վարցք, մեծ > մենձ, վենձ. ջուրի > ջ̈որի, առաջին > առջ'ի, յառաջ > ջառէչ, փուչքար > փունկար, ննջ > ննչ։

Հ հնչյունը վերածվում է խ *հնչյունի. օրինակ.*

Հայր > խէր, հայելի > խայլի, հաստ > խաստ, հանի > խանիկ։

ն *հնչյունը վերածվում է ձայնեղ* ն *հնչյունի կամ դուրս է ընկնում։ Դրանից դուրս կան բաղաձայնների մասնակի փոփոխություններ, որոնք առանձին օրենքներ չեն ցուցաբերում։*

Կարելի է հիշատակել միայն.

1. «յ» բառասկզբին > ջ. օրինակ. յաղթել > ջաղթել, յարմար > ջարմար։

2. «ն» հնչյունը, որը լինելով գրաբարում արմատական հնչյուն, աշխարհաբարում ընկած է, Ջուղայի բարբառում պահպանվում է շատ տեղերում. օրինակ՝ կաթն > կաթն, ծունկն > ձ'ունկն, սունկն > սունգն, դույզն > դ́ուզն *և այլն։*

Որոշ դեպքերում «ն» հնչյունի դիմաց գտնում ենք «մ», օրինակ՝

Անուն > անում, կոկոն > կոկոմ, մրջիւն > մըռջնմ։

3. Մի շարք բառերի մեջ ավելանում են բ, ն, տ, դ, ջ *հնչյունները, վերջինս ձայնավորով սկսվող բառերում. օրինակ՝* համրել > խամբրել, նմռել > նըմբռել, քիթ > քինթ, կաքաւ > կանքավ, օրէշ > շրիստ, պոզ > պոզդ, աւելել > ջավելել *և այլն։*

4. «Ա» ձայնավորի դիմաց մի շարք բառերում գտնում ենք «ո». օրինակ՝ գալ > գօլ, գառն > գօռն, գարի > գօրի։

5. «Ե» ձայնավորի դիմաց մի շարք բառերում գտնում ենք «ա» ըստ ներդաշնակության օրենքի. օրինակ՝ երկաթ > արկաթ, երկանք > արկանք։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջուղայի բարբառում կան թե եր, ներ և թե ք հոգնակի մասնիկներ։ Միավանկ բառերի հոգնակին է եր, բազմավանկ բառերի հոգնակին է ներ, իսկ ձայնավորով վերջացողներինը հոգնակին է ք. օրինակ.

Ձայն > ձէն, ձէներ, հայր > խէր, խէրէր, բերան > բէրան, բէրաններ, ականջ > անգոն, անգոններ, թշնամի > թըշնամի, թըշնամիք. գարի > գօրի, գօրիք և այլն։

Ձայնավորով վերջավորվող որոշ բառեր ստանում են քներ հոգնակի, օրինակ. մասանի,—մասանըքներ, ծառա—ծառէքներ. ճեռի—ճեռիքներ և այլն։

Դրանցից դուրս կան նաև հետևյալ հոգնակիները.

Անի. ամանանի—ամաններ, անըմանի—անուններ, վնասանի—վնասներ, վարպետանի—վարպետներ, առողանի—անողներ, գոլոցողանի—եկողներ և այլն.

Նի կամ նիք. ոսկինիք—ոսկիներ, գըրչնի—գրիչներ, ախկնի—աղիքներ և այլն.

Արէնք. կողմարէնք—կողմեր, գեղարէնք—գյուղեր.

Արունք. սերմարունք—սերմեր, դեղարունք—դեղեր.

Նէք. ճարակունէք—երեկոներ.

Էրք. ախչըկէրք > աղջիկներ, տարէրք > տարիք, քվէրք > քույրեր։

Ջուղայի բարբառում հոլովները Երևանի բարբառից տարբեր չեն, միայն հոգնակի ք վերջավորություն ունեցող բառերը ենթարկվում են ց հոլովման. օրինակ. կասուք, կասվըքոնց, կասվըքոնցից, կասվըքոնցով, կասվըքոնցում։ Թեև դրանք լինում են նաև «ի» հոլովմամբ. օրինակ. նամփէք, նամփէքի, նամփէքից, նամփէքով, նամփէքում (նամփէք, նամփէքոնց, նամփէքոնցից, նամփէքոնցով, նամփէքոնցում)։

Ջուղայի բարբառում ն հոդը դրվում է ոչ միայն ձայնավորով վերջացող, այլև բաղաձայնով վերջացող բառերի վրա. օրինակ՝ Մինն լէվ ա > միսը լավ է։

Ջուղայի բարբառում գործածական է դասական թվական-

ների առանձին ձևեր, որ մյուս բարբառներում սովորական չեն։ Ընդհանրապես նկատելի է, որ շատ քիչ բարբառներ ունեն դասական թվականներ, իսկ ավելի քիչ՝ դասական թվականների հատուկ ձևեր։ Ջուղայի բարբառը այդ հազվագյուտներից է. այդ բարբառում գործածական է դասական թվականները մի ձև էր*որդ վերջավորությամբ, ինչպես օրինակ՝* էրկուէրորդ, ջիրէք—էրորդ, չոքէրորդ հինգէրօրդ, *և այլն. կա և մի այլ ձև* ում *վերջավորությամբ. օրինակ.* ավվալում, էրկըքում, հիրեքում, չոքում, խըհգում *և այլն։ Դասական թվականների այդ* ում *վերջավորությունը նույնն է, ինչ որ ներգոյականի* ում *վերջավորությունը և կամ անկատար դերբայի* ում *վերջավորությունը. և իսկապես՝ այդ ձևի գործածությունը շատ տրամաբանական է, որովհետև երբ ասվում է* վեցում, *դա նշանակում է՝ վեցերորդ կամ «վեց թվի մեջ»։*

Այդ ձևը պետք է կազմված լինի այնպես, ինչպես ներգոյական հոլովը, նախդրիվ տրականով, որի մեջ «ի» նախդրի կորուստով ծնում է ում *վերջավորություն ունեցող ներգոյական հոլովը։*

Անձնական դերանունների մեջ առանձին նորություն չկա, հետաքրքրական է ցուցական դերանունների հոլովումը, որը հետևյալն է.

Եզակի

Ուղղ. էս	*էդ*	*էն*
Ս. Տ. Հ. ստուր	*տուր*	*ընուր, նուր*
Բ. ստուց, ստուցից	*տուց, տուցից*	*ընդուցից, նուցից, ընդուց*
Գ. ստուցով, ստով, սով	*տուցով, տով*	*ընդուցով, նուցով, ընդով, նով*
Ն. ստում	*տում*	*ընդում*

Հոգնակի

Ուղղ. ստոնք	*տոնք*	*էնդոնք, ընդոնք, նոնք*
Ս. Տ. Հ. ստոնց	*տոնց*	*էնդոնց, ընդոնց, նոնց*
Բ. ստոնցից	*տոնցից*	*էնդոնցից, ընդոնցից, նոնցից*
Գ. ստոնցով	*տոնցով*	*էնդոնցով, ընդոնցով, նոնցով*

Բայերի խոնարհումը

Ջուղայի բարբառն ունի «ել» և «ալ» խոնարհում. ուրիշ նորություն չունի։ Ունի նույն ժամանակները և նույն եղանակները, ինչ որ գրական լեզուն։

Ջուղայի բարբառն ունի հետևյալ դերբայները.

Անորոշ դերբայ՝ «ալ» կամ «ել» վերջավորությամբ. օրինակ՝ բախշել, խագալ.

Անկատար՝ ում *կամ* ման *վերջավորությամբ. օրինակ.* խագում, ցալման, ապըրման, մեռման, մընման, նեղաման։

Ապառնի դերբայ՝ էց *կամ* լու *վերջավորությամբ. օրինակ՝ կատարէլէց—կատարելու,* թողուլէց*—թողնելու,* ճոլէց > *գալու,* բըծըշկելէց > *բժշկելու.* կատարելու, խագալու *և այլն։*

Վաղակատար դերբայ՝ էլ *կամ* ացէլ *վերջավորությամբ։*

Հարակատար դերբայ՝ ած *կամ* ացած *վերջավորությամբ։*

Օժանդակ բայը ներկայում խոնարհվում է ա *արմատով՝* ամ, աս, ա, անք, աք, ան. *հոգնակի երկրորդ դեմքը լինում է նաև* էք։ *Օժանդակ բայի անցյալը լինում է՝* ի, իր, էր, ինք, իք, ին։

Ներգործական բայերը անկատար դերբայում մեծ մասամբ ունենում են ում *վերջավորություն, իսկ չեզոք բայերը՝* ման *վերջավորություն. օրինակ՝* սիրում, խագնում, ճնաման, ապըրման *և այլն։*

Ման *վերջավորություն ունեն նաև բոլոր կրավորական կերպի բայերը. օրինակ՝* մաշման ամ*—մաշվում եմ,* կապման ամ*—կապվում եմ։* Լալ, գալ, տալ *բայերի անկատարը կազմվում է անորոշ դերբայից, որի վրա ավելանում է* ման *վերջավորությունը. օրինակ՝* լալման, ճոլման, տալման։

«Ն» ածանց ունեցող բայերը ներկան կազմում են անկատար *դերբայով, որի* ման *վերջավորությունը ավելանում է արմատի վրա, իսկ կրավորական կերպինը,* ման *վերջավորությունն ավելանում է կամ* ն *ածանց ունեցող հիմքի վրա և կամ անցյալ կատարյալի հիմքի վրա. օրինակ.*

Ներգործական	Կրավորական
1. Առման ամ—առնում եմ	*առնըման ամ—առնըվում եմ*
Գողման ամ—գողանում եմ	*գողացման ամ—գողացվում եմ*
Մոռաման ամ—մոռանում եմ	*մոռացման ամ—մոռացվում եմ*
Տեսման ամ—տեսնում կմ	*տեսնըման ամ—տեսնվում եմ։*

Սահմանական եղանակ

Ներկա		Անցյալի անկատար	
Խաղում ամ	վազում ամ	խաղում էի	վազում էի
» աս	» աս	» իր	» իր
» ա	» ա	» էր	» էր
» անք	» անք	» ինք	» ինք
» աք(էք)	» աք(էք)	» իք	» իք
» ան	» ան	» ին	» ին

Ապառնի		Անցյալի ապառնի	
Խաղալէց ամ կամ խաղալու ամ		խաղալէց էի կամ խաղալու էի	
» աս	» աս	» իր	» իր
» ա	» ա	» էր	» էր
» անք	» անք	» ինք	» ինք
» աք (էք)	» աք (էք)	» իք	» իք
» ան	» ան	» ին	» ին

Անցյալ կատարյալ

սիրեցի	սիրեցինք
սիրեցիր	սիրեցիք
սիրեց	սիրեցին

Ըղձական եղանակ

Ապառնի	Անցյալի ապառնի
սիրեմ	սիրեի
սիրես	սիրեիր
սիրի	սիրէր
սիրենք	սիրեինք
սիրեք	սիրեիք
սիրեն	սիրեին

Պայմանական եղանակ

Պայմանական եղանակիչն է «կը», որ լինում է «գը», երբ բայն սկսվում է ձայնեղով, լինում է «գ՛ը», երբ բայն սկսվում է շնչեղ ձայնեղով, «քը», երբ բայն սկսվում է շնչեղ խուլով: Այդ

եղանակիչը ավելանում է պարզապես ըղձական ձևերի վրա. օ-րինակ՝

կըտամ	*փըճերեմ*	*գըլամ*	*քըցանեմ*
կըտաս	*փըճերես*	*գըլաս*	*քըցանես*
կըտա	*փըճերի*	*գըլա*	*քըցանի*
և այլն	*և այլն*	*և այլն*	*և այլն*

«Կը» եղանակիչը հնդկահայոց մոտ լինում է «կու» ձևով. օրի-նակ՝ կու սովորեմ, կու սիրեմ *և այլն:*

Անցյալի ապառնի

կըտի	*փըճերի*	*գըլի*	*քըցանի*
կըտիր	*փըճերիր*	*գըլիր*	*քըցանիր*
կըտէր	*փըճերէր*	*գըլէր*	*քըցանէր*
և այլն.	*և այլն.*	*և այլն.*	*և այլն.*

Պայմանական *կամ* ենթադրական *եղանակի մի ձևն էլ կազմվում է* պըլա *կամ* պիտլա *եղանակիչով, որ նշանակում է՝ կարող է որ կատարեմ. օրինակ՝*

Ապառնի			Անցյալի ապառնի		
պիտլա կամ	*պըլա*	*տամ*	*պիտլա կամ*	*պըլա*	*տի*
»	»	*տաս*	»	»	*տիր*
»	»	*տա*	»	»	*տէր*
»	»	*տանք*	»	»	*տինք*
»	»	*տաք*	»	»	*տիք*
»	»	*տան*	»	»	*տին*

Հարկադրական եղանակը կազմվում է պըտկա, պըցի *կամ* պիցիլ *(պիտիլ ա) եղանակիչներով:*

* * *

Նմուշներ Նոր Ջուղայի բարբառով[1]

— Բ՛արօվ, զարբաբի
— Բ՛արի սա էկէլ, վուեշթի (որդի):
— Խըրմը՛ր ա՝ ինչ ա. խանիկս ուզում ա քէ տեսնի: Ձե՛ս գըդէլ գօս մեր տունը, սօր դամզարակու:
— Բաբի Լուսին, սօր գընացել ի բաղը, մխտիք ալուքըրա ճէրի յըլղա վաստակած ամ, չեմ գըդեյման լամբէրը դար վէր գընամ, սաբայի գըփոմ:

[1] *Գրի առավ Հ. Ջեյթաղյան:*

Ծանիկ—հանի, տատ
Գըղէլ—կարող
Գըղէլման ամ—կարողանում եմ
Սօր—այսօր
Միտիք—մի պտիկ
Ալուքրա—գետնախնձոր
Սաբայի—վաղը
Դ'ամզարակու—երեկոյան դեմ

* * *

Մին օր քեռուս յարախան սէկտենդ ունէր։ Ցետօվ քեռիս ինձ ասավ.

— Վուէշըթի, մին գ̈ընա գ̈ըրկըցենց տունը, մին քըսան կաթ բեր, դօկտօրն ասըմ ա՝ կաթը խիվանդի խըմարիկ լէվ ա,

ջես գ̈ընաման ամ հարապետենց տունը, գ̈ուռը թակում ամ, ուրս ա գ̈օլման դըժկըցի լակոտը՝ ասըմ ամ.

— Այ յարախա, միտիկ կաթ տըվէք մեր արախի խըմարիկ։

Էն պատասխան ա տալման.

— Մերը, կօվ չի, ջեղ ա։

ջես էլ ասըմ ամ.

— Այ խողը գ̈ըլխիտ, էտ ի՞նչ թա՛ր յեղ ա, օր միտիկ կաթ էլ չի տալման։

6. ՇԱՄԱԽՈՒ ԲԱՐԲԱՌ

Շամախու բարբառով խոսում են միայն Շամախի քաղաքում։ Այժմ արդեն այդ բարբառով խոսողներ կան Բաքվում և այլուր, քանի որ շամախեցիներից շատերը ցրվել են զանազան տեղեր և պահպանում են իրենց բարբառը, որտեղ էլ նրանք գտնվելիս լինեն։ Շամախու բարբառը ընդհանուր առմամբ Ղարաբաղին նման է, սակայն մի շարք առանձնահատկություններ շատ որոշ կերպով անջատում են նրան Ղարաբաղի բարբառից։ Շամախու բարբառի բաղաձայնական սիստեմը համապատասխանում է առաջին տեղաշարժին, այսինքն երկաստիճան ձայնեղազուրկ է, արևելյան շատ բարբառների է նմանվում, բառամիջում և վերջում նկատվում է խուլերի ձայնեղացում (օր. պադիվ, տախտագ)։ Ձայնավորները նույնն են Ղարաբաղի բարբառի հետ, միայն քմայնացումը մի քիչ ավելի ուժեղ է։ Շամախու բարբառում ի ձայնավորը հաճախ ը է արտասանվում նույնիսկ շեշտի

տակ, որ շատ աչքի է զարկում. օրինակ, սը՛րտ, մը՛տկ, յաշը՛մը և այլն։

Այս երևույթը մեկ էլ նկատում ենք Տիգրանակերտի և Ուրմիայի բարբառներում ինչպես, օրինակ, սըսը՛ռնը, վըսպ, վըրփ, վըրթ։

Մյուս բարբառներում ինչպես և գրական լեզուներում ու գրաբարում ը ձայնավորը շեշտի տակ երբեք չի լինում։

Շամախու բարբառի շեշտը վերջին վանկի վրա է։ Հոլովման մեջ Ղարաբաղից տարբերվում է նրանով, որ գործիականում ունենում է «օվ» վերջավորություն։

Հոլովում

Եզակի

Ուղղ.	սը՛րտ	տախտագ
Սեռ.	սըրտի	տախտագի
Տր.	սըրտի(ն)	տախտագի(ն)
Հայց.	սը՛րտ	տախտագ
Բաց.	սըրտա՛ն	տախտագա՛ն
Գործ.	սըրտօվ	տախտագօվ
Ներգ.	սըրտըմ	տախտագըմ

Հոգնակի

Ուղղ.	սըրտէր	տախտագնէր
Սեռ.	սըրտէրի	տախտագնէրի
Տր.	սըրտէրի(ն)	տախտագնէրի(ն)
Հայց.	սըրտէր	տախտագնէր
Բաց.	սըրտէրա՛ն	տախտագնէրա՛ն
Գործ.	սըրտէրօվ	տախտագնէրօվ
Ներգ.	սըրտէրըմ	տախտագնէրը՛մ

Շամախու բարբառի դերանունները տարբեր են Ղարաբաղի բարբառից. Շամախին գործ է ածում՝ սա, տա, նա դերանունները, որ Ղարաբաղի բարբառը սովորություն չունի գործածելու։ Շամախին միաժամանակ և գործ է ածում ա̈ս, ա̈տ, ա̈ն դերանունները, որոնց հոլովումը նույն է սա, տա, նա դերանունների հետ։

Եզակի

Ուղղ. սա, ա̈ս   տա, ա̈տ,   նա, ա̈ն

Սեռ.	սըրա	տըրա	նըրա
Տր.	սըրան	տըրան	նըրան
Հայց.	սըրան, ըս	տըրան, ըտ	նըրան, ըն
Բաց.	սըրանա	տըրանա	նըրանա́
Գործ.	սըրանօվ	տըրանօվ	նըրանո՛վ
Ներգ.	սըրանըմ	տըրանըմ	նըրանը́մ

Հոգնակի

Ուղղ.	սըրանք	տըրանք	նըրանք
Սեռ.	սըրանց	տըրանց	նըրանց
Տր.	»	»	»
Հայց.	»	»	»
Բաց.	սըրանցանա՛	տըրանացանա՛	նրանցանա՛
Գործ.	սըրանցանօվ	տըրանցանօ́վ	նըրանցանօ́վ
Ներգ.	սըրանցանը́մ	տըրանցանը́մ	նըրանցանը́մ

Եզակի

Ուղղ.	յէս	տու	հօվ
Սեռ.	իմ	քու	հում
Տր.	ինձ	քեզ	հում
Հայց.	ինձ	քեզ	հում
Բաց.	ինձանա́	քեզանա	հումանա՛
Գործ.	ինձանօ́վ	քեզանօվ	հումանո՛վ
Ներգ.	ինձանը́մ	քեզանըմ	հումանը́մ

Հոգնակի

Ուղղ.	մեք	տո̃ւք	—
Սեռ.	մեր	ծեր	—
Տր.	մեզ	ծեզ	—
Հայց.	մեզ	ծեզ	—
Բաց.	մեզանա՛	ծեզանա՛	—
Գործ.	մեզանո՛վ	ծեզանո՛վ	—
Ներգ.	մեզանը́մ	ծեզանը́մ	—

Դերանունների մեջ «իկ» փոքրացուցիչ մասնիկը դըվում է համարյա բոլորի վրա, հաճախ նաև մի քանի անգամ կրկնվելով օրինակ՝ տոհիգիտ, մեջճիրիգիգիս, ճաիգիգի և այլն։ «Իկ» ից մասնիկը դըվում է նաև գոյականների՛ վրա։

Խոնարհում

Շամախու բարբառի խոնարհումը զգալի տարբերություն ունի Ղարաբաղի բարբառից։ Հիմնական տարբերությունը օժան-

դակ բայի ձևերի և բայի ըղձական եղանակի վերջավորություն-ների մեջ է։ Նկատելի է, որ ռնգային վերջավորություններից առաջ երևան է գալիս «ա» խոնարհիչը, իսկ մյուս դեպքերում «է» խոնարհիչը։ Շամախու բարբառի պայմանի դերբայը ական վերջավորություն չունի։

Սահմանական եղանակ

Ներկա	Անց. անկ.	Ապառնի	Անց. ապ.
սըրըմ ամ	սըրըմ ի	սըրըլու յամ	սըրըլու յի
» էս	» իր	» յէս	» յիր
» ա	» էր	» յա	» յէր
» անք	» ինք	» յանք	» յինք
» էք	» իք	» յէք	» յիք
» ան	» ին	» յան	» յին

Վաղակ.	Անց. վաղ.	Հարակատ.	Անց. հար.
սըրալ ամ	սըրալ ի	սըրած ամ	սըրած ի
» էս	» իր	» էս	» իր
» ա	» էր	» ա	» էր
և այլն	և այլն.	և այլն.	և այլն.

Անցյալ կատարյալ

սըրէցի, սըրէցիր, սըրէց
սըրէցինք, սըրէցիք, սըրէցին

Ըղձական եղանակ

Ապառնի	Անց. ապ.
սըրամ	սըրի
սըրէս	սըրիր
սըրի	սըրէր
սըրանք	սըրինք
սըրէք	սըրիք
սըրան	սըրին

Պայմանական եղանակը կազմվում է ըղձականից «կը» եղանակիչով, իսկ հարկադրականը նույնից՝ «պիտի» եղանակիչով։

ՀԱՅԵՐԵՆԻ «Մ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Հայերեն «Մ» ճյուղի բարբառներն իրենց ներկա կամ անկատար դերբայը կազմում են «մ» վերջավորության միջոցով։ Մեր կատարած հետազոտությունից և ուսումնասիրությունից պարզվում է, որ այդ ճյուղին պատկանում են Արթվինի, Շա-

ղախի[1], Կարճևանի, Մեղրու, Հադրութի, և Ուրմիայի բարբառները։

Այդ բարբառներից հայտնի էր միայն Արթվինի բարբառը, որ դասավորված էր «Լ» ճյուղի մեջ։ Այս բարբառների ուսումնասիրությունը մեզ բերեց հայ բարբառների մի ամբողջական ճյուղ՝ «Ս» ճյուղը հայտնաբերելու պատեհությանը, որով հայ բարբառները հարստացան մի նոր, չորրորդ ճյուղով և 5 նոր բարբառներով։

Ասացինք, որ անկատար դերբայի կազմությամբ է որոշվում բարբառի ո՛ր ճյուղին պատկանելը։ Մեր ներկայացրած բարբառների անկատարն ունի հետևյալ պատկերը։

Արթվին	Շաղախ	Կարճևան	Մեղրի	Հադրութ	Ուրմիա
մնալիս	մնայիս	մնայ (մնայս)	մնաս	մնաս	մնաս

Ինչպես տեսնում ենք, Արթվինի բարբառում առկա է դերբայի լրիվ ձևը՝ մնալիս, Շաղախի բարբառում «լ» հնչյունը թուլացած է, վերափոխված յ հնչյունի, բայց պահպանված է դերբայի լրիվ պատկերը՝ մնայիս, Կարճևանի բարբառում «իս» դուրս է ընկած, լ-ն վերածված է յ-ի, սակայն եզակի երրորդ դեմքում վերականգնվում է այն միջին ձևը, որից ստացվել է անկատար դերբայը՝ մնայս։ Մնացած բարբառներում դուրս է ընկած «լի», բայց պահպանվել է «ս» վերջավորությունը, քանի որ դերբայի գաղափար տվողը վերջավորությունն է։ Այդ բոլոր փոփոխությունները կատարվել են շեշտը վերջին վանկից նախավերջինի վրա տեղափոխվելու հետևանքով։ Դրա ամենալավ ապացույցն այն է, որ Արթվինի բարբառում շեշտը վերջին վանկի վրա մնալով՝ պահպանել է դերբայի պատկերն անվթար, օր. մնալիս։

Կարծում ենք, որ այդ դերբայը ծագել է գրաբարի հոգնակի հայցական հոլովի կազմության անալոգիայով, ըստ որում այդ հայցականը վերցված է եղել ներգոյական իմաստով, այսինքն

---

[1] Շաղախի բարբառը կարելի է կոչել նաև Ղարադաղի բարբառ, որովհետև այդ բարբառով են խոսել Ղարադաղի շրջանի Քեյվառ, Մեշափար և Աղաղանի ենթաշրջանները։ Ըստ Ավ. Ծատուրյանի (Կարճևանցի գիտակ անձ) վկայության այդ բարբառով խոսում են նաև Մուժումբար և Ալչամուլք գյուղերի հայերը։ Ղարադաղի Քլալա, Վըղան, Մզկիթ, Սըվավըէղ և Ամբատուլ գյուղերի խոսվածքի մասին տեղեկություններ հավաքեց Հեռակայի ուսանող Հ. Գասպարյանը, որով հաստատվում է վերևի կարծիքը։

կազմվել են ի փըելիս, ի մըտալիս, ի կարդալիս ձևերը։ Դրանց վրա ավելացնելով օժանդակ բայը, կազմվում է «Ս» ճյուղի անալիտիկ խոնարհումը «Ում» և «Լ» ճյուղերի նմանողությամբ։

Հետևաբար ի մըտալիս իմ, մըտալիս իմ, մըտոս իմ, նշանակում են «մնալու գործողների մեջ եմ», «մնացողների մեջ եմ»։ Իր այս իմաստով «Ս» ճյուղը համեմատաբար մոտ է «Լ» ճյուղին՝ մի խոշոր տարբերությամբ, որ վերջինս օգտագործում է անորոշ դերբայի եզակի նախդրիվ հայցականը, «Ս» ճյուղը նույն դերբայի հոգնակի նախդրիվ հայցականը։

Ի նախդիրը ժողովրդական լեզուների մեջ, չնչին բացառությամբ, գոյություն չունի, և զուրկ է հասարակական արժեքականությունից, հետևաբար բարբառների մեջ չի կարող մնալ։ Բարբառների մեջ նախդրիվ տրականն ու հայցականը փոխարինվում են սոսկ հայցականով և նույն իմաստով. օրինակ՝

Երթամ ի տուն։ — Նստեմ ի տանն։
Էթամ տուն։ — Նստում եմ տանը։

Այսպիսով «Ս» ճյուղի բարբառները լեզվական մտածողության առանձին սիստեմ են ներկայացնում, ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում են անալիտիկ սիստեմով, օգտագործելով անորոշ դերբայի հոգնակի հայցական հոլովը ներգոյականի իմաստով։ Երբեմնի՝ այդ ճյուղը խիստ ազդեցիկ պետք է եղած լինեն, քանի որ ազդել է նույնիսկ Երևանի բարբառի վրա, թողնելով իբրև հետք երեք միավանկ բայերի անկատար դերբայի կազմության ձևը (լալիս, գալիս, տալիս) որ իր մեջ է ընդունել ժամանակակից գրական լեզուն։

Երևանի բարբառում, ինչպես և գրական լեզվի մեջ, «Ս» ճյուղի անկատար դերբայի այս ձևը պահպանվել է իբրև մակբայական դերբայ, հիմնականում ժամանակ ցույց տվող. օրինակ՝

Նամակը գրելիս ճիշեցի ընկերոջս պատվերը։
Գրելիս նշանակում է «գրելու ժամանակ»։

Ղարաբաղի բարբառում այս ձևը կարող է փոխարինվել «գրում ժամանակ» ձևով։

«Ս» ճյուղի բարբառները, գտնվելով «Ում», «Լ» և «Կը» ճյուղերի բարբառների միջավայրում, խիստ ազդեցություն են կրել նրանցից, միաժամանակ և ազդել նրանց վրա։

Հադրութի և Շաղախի բարբառները ուժեղ չափով ազդվել են Ղարաբաղի բարբառից, Մեղրու և Կարճևանի բարբառները՝ Ագուլիսի բարբառից, մասամբ նաև Ղարաբաղի բարբառից, Ուրմիայի բարբառը՝ Խոյի և Վանի բարբառներից և Արթվինի բարբառը՝ Թբիլիսիի, Կարնո և քիչ չափով Տրապիզոնի բարբառներից։

Այս բոլոր ազդեցությունները, սակայն, չեն փոխել ամենահիմնականը, լեզվական մտածողության ոլորտը, որի հետևանքով բարբառները մնացել են իրենց պատկանած ճյուղի մեջ։ «Ս» ճյուղի բարբառների մեջ խիստ ուժեղ են բայերի եղանակային ձևեր կազմելու անալիտիկ առանձնահատկությունները։

1. Բոլոր բարբառները անկատար դերբայը կազմում են «ս» բերջավորությամբ, որից ստանում են իրենց ճյուղային անունը։

2. Բոլոր բարբառները, բացի Արթվինի բարբառից, բաղադրյալ ժամանակների անցյալը կազմում են մի առանձին մասնիկ-բառով՝ Հադրութ—նիս, լա̈լ, Շաղախ—լա̈լ, Մեղրի—լա̈, Կարճևան—լէ, Ուրմիա—էր, հետևաբար օժանդակ բայի անցյալի ձևերը չունեն։ Այդ կողմով «Ս» ճյուղը կապվում է Ագուլիսի[1] բարբառի հետ, որը գործ է ածում այդ նպատակի համար «նէլ» բառ-մասնիկը։ Այսպիսի հատկություն չկա մեր ոչ մի այլ բարբառի մեջ (Ագուլիսը չհաշված)։

	Հադրութ	Մեղրի	Կարճևան	Շաղախ	Ուրմիա
Ներկա	մընաս ըմ կ'իրած ըմ	մընաս ըմ գ'իրած ըմ	մընայ իմ գ'իրէծ ըմ	մընայիս ըմ կ'ըրած ըմ	մընաս եմ կ'իրած եմ
Անցյալ	մընաս ըմ նիս կ'իրած ըմ նիս	մընաս ըմ լա̈ գ'իրած ըմ լա̈	մընայ յիմ լէ գ'իրէծ իմ լէ	մընայս ըմ լա̈լ կ'ըրած ըմ լա̈լ	մնաս եմ էր կ'իրած եմ էր

[1] Ագուլիսի բարբառի ենթաբարբառ համարվող Ռամիսի և Ցղնայի խոսվածքները ավելի շուտ պատկանում են «Ս» ճյուղին, քան «Ում» ճյուղին։

3. Մեղրու, Շաղախի և Կարճևանի բարբառները չունեն հայերենի աորիստը, անցյալ կատարյալը կազմում են անալիտիկ սխեմով, որպես նպատակով օգտագործում են վաղակատար դերբայը և օժանդակ բայը։

	Կարճևան	Մեղրի	Շաղախ	Գրական լեզու
Անցյալ կատար.	գ'իրէլ ըմ կ'արդալ ըմ	գ'իրալ ըմ կ'ա̈րդալ ըմ	կ'ըրալ ըմ կըրթէցալ ըմ	Գրեցի կարդացի

4. Մեղրու, Շաղախի, Կարճևանի և Հադրութի բարբառները ապառնին կազմում են ռական կամ ական ածանցով։

	Մեղրի	Շաղախ	Կարճևան	Հադրութ	Գրակ. լեզու
Ապառնի ժամ.	գ'իըլասկան ըմ կ'ըրդըլասկան ըմ	կըրըլական ըմ կըրթըլական ըմ	գ'իրըլասկան ըմ կ'ըրդըլասկան ըմ	կ'իրլական ըմ կըրթըլական ըմ	գրելու եմ կարթալու եմ

5. Մեղրու, Շաղախի և Կարճևանի բարբառները չունեն վաղակատարի ժամանակները. հարակատարի ժամանակները գործ են ածում նաև որպես վաղակատար։

6. Մեղրու, Շաղախի և Կարճևանի բարբառները պայմանական անցյալի ապառնին կազմում են անորոշ դերբայով։

	Շաղախ	Մեղրի	Կարճևան	Անորոշ դերբայ
Պայմանական անցյալի ապառնի	կ'իրիլ ըմ լա՛լ կարթիլ ըմ լա՛լ	գ'իրիլ իմ լա կ'ա̈րդիլ իմ լա	գ'իրիլ իմ լէ կ'ա̈րդիլ իմ լէ	կ'իրիլ գ'իրիլ կարթիլ, կարդիլ կ'ա̈րդիլ

7. Գոյականների հոլովման մեջ Մեղրու, Կարճևանի, Հադրութի և Շաղախի բարբառների մեջ նկատելի են կազմության այնպիսի ձևեր, որ ուրիշ բարբառներում չկան, եթե չհաշվենք Ագուլիսի բարբառը։

Օրինակ՝

Հոլով	Մեղրի	Կարճևան	Հադրութ	Շաղախ	
Բացառ.	Սարու հէ-նից	սարու հէնի	սարէն նը-էստա	սարէն ա-նա	

8. Դերանունների հոլովման մեջ «Ս» ճյուղի բոլոր բարբառները ներկայացնում են բազմաթիվ յուրահատկություններ։

Ամփոփելով ձևաբանական առանձնահատկությունները՝ կարելի է եզրակացնել, որ «Ս» ճյուղի ենթադրյալ նորմաներին ավելի հարազատ են Մեղրու, Կարճևանի, Շաղախի բարբառները։ Այդ նորմաներից համեմատաբար ավելի հեռացած է Արթվինի բարբառը, իսկ Հադրութի և Ուրմիայի բարբառները բռնում են միջին տեղը։ «Ս» ճյուղի հիմնական բարբառների՝ Մեղրու, Կարճևանի, և Շաղախի բարբառների ձևաբանությունը վկայում է, որ այդ ճյուղը բռնում է միջին տեղը Ղարաբաղի և Ագուլիսի բարբառների միջև և կարող է դիտվել այդ երկու բարբառի և մի ինչ որ երրորդ տարրի խաչավորման արդյունք։ Մենք հակված ենք կարծելու, որ հայ բարբառների «Ս» ճյուղը կազմավորվել է Սիւնի և Մեղական ցեղախմբերի և եկվոր Սակ (զոկ) ցեղերի լեզուների խաչավորման հետևանքով։

Շաղախի բարբառը, որ Ղարադաղի բարբառն է, ավելի շատ նմանություններ ունի Մեղրու և Կարճևանի բարբառների հետ, սրանք էլ Ագուլիսի բարբառի (զոկերենի) հետ։ Ղափանի

խոսվածքը, ինչպես և Մեղրու շրջանի գյուղերի լեզուն, բայերի կազմությամբ նման է այս խմբին (բացի անկատար դերբայից, որ նման է Ղարաբաղին)։ Հետևաբար «սի-երը» (Սյունիք) միաձուլվել են «սակ-երի» հետ և կազմել մեր Սիսականը, այսինքն «սիեր և սակերը», որոնց լեզվական վկայությունը գտնում ենք Ղափանում և Արևիքում։ Դրանք էլ միանալով մարդական ցեղերի հետ, կազմել են հայ բարբառների «Ս» ճյուղով խոսող ժողովուրդը։ «Սիերը» և մարդերը տեղացիներ են, իսկ սակերը եկվորներ, սկյութական ցեղեր, ինչպես ընդունված է կարծել։

«Ս» ճյուղի բարբառներից յուրաքանչյուրն առանձնահատուկ գծերով լի է, թեև լի է և նմանություններով այլ բարբառների հետ։ Այդ կարելի է տեսնել հնչյունական սիստեմի և բառապաշարի մեջ։ Արթվինի բարբառը բաղաձայնական սիստեմով զգալի չափով նման է Թբիլիսիի բարբառին, բայց ձայնավորական սիստեմով այդ նմանությունն ավելի քիչ է։ Թբիլիսիի բարբառի առանձնահատուկ գիծը «ե» ձայնավորի «ի»-ի և «ո» ձայնավորի ու-ի փոխելն է։ Արթվինի բարբառում այդ նկատում ենք միայն օժանդակ բայի մեջ (իմ, իս, է, ինք, իք, ին) և մի քանի էպիզոդիկ դեպքերում։ Ընդհակառակը՝ նկատելի է, որ Արթվինի բարբառը ձայնավորներով նման է Կարնո բարբառին, բառապաշարով խիստ հարուստ, օգտագործում է և՛ պարսկերեն և՛ վրացերեն բառեր (փէնջարա, գօգօ, դէդա)։

Հադրութի և Շաղախի բարբառները հնչյունական սիստեմով խիստ նման են Ղարաբաղին, միայն տարբերվում են քմայնացման առատությամբ։

Շաղախի բարբառն ունի կոշտ «ը̊» որ ավելի է գործածվում, քան մյուս բարբառների ը-ն։ Բառական վիճակով այս երկու բարբառները կրում են պարսկերենի և ադրբեջանական լեզվի ազդեցությունը։

Մեղրու և Կարճևանի բարբառների բաղաձայնական սիստեմը նմանվում է Ագուլիսի բարբառին, իսկ ձայնավորական սիստեմը տարբերվում է նրանից և մոտենում Ղարաբաղին։ Բառապաշարով այս երկու բարբառները Հադրութի և Շաղախի նման կրում են պարսկերենի և ադրբեջաներենի ազդեցությունը, բայց ունեն նաև գրաբարի այնպիսի բառեր, որ ժամանակակից գրական լեզվի մեջ գործածական չեն (օրինակ. հօտք—ոտք, վըստակել—վաստակել՝ հոգնել, խնդիլ—խնդրել՝ ուզել, հուրմ—որմն՝ պատ, ըրկօն—զգոն՝ արթուն և այլն)։ Բացի այս՝ բարբառնե-

րումս կան բառեր, որ չկան հայերենում, կամ կան և գործ են ածվում այլ իմաստով (օրինակ՝ տատ > կարիճ, ռեխ—ծմերուկ, օքուտ—լավ, թուռ—անձրև, ցաք—մացառ, լիծակ—կույտ, մատակ—առու, օպրհամ—ռեհան, օվվիլ—վազել, քաշ—ագռավ և այլն)։

«Ս» ճյուղի բարբառների հայրենիքը պետք է համարել Արաքի ափերը՝ սկսած Ջուղայից մինչև Փայտակարան, մեջն առնելով հյուսիսային Ատրպատականը։

Հետաքրքրական նորություն է ներկայացնում, և չենք կարող չհիշատակել Տ. Պողոսյանի ուսումնասիրած «Հավարիկի բարբառը»։ Այդ բարբառում ներկան ունի հետևյալ պատկերը.

գիրէլիս ըմ	գիրէլըմ անք
գիրէլըմ ըս	գիրէլըմ աք
գիրէլըմ ի	գիրելըմ ան

Ինչպես երևում է, Հավարիկի բարբառի ներկայի առաջին դեմքը կազմվում է «Ս» ճյուղի նման, իսկ մյուս դեմքերը «Լ» և «Ում» ճյուղերի նման։ Նշանակում է՝ Հավարիկի բարբառը եղել է, կամ միաժամանակ կամ հերթով, այդ երեք ճյուղերի ազդեցության ներքո և պահպանել է այդ հետքերը։ Հավարիկի բարբառը, մեր կարծիքով պետք է կոչել «միջճյուղային բարբառ», որի նմանը պետք է որ գտնվեն նաև ուրիշ տեղեր։

1. ԱՐԹՎԻՆԻ ԲԱՐԲԱՌ

Արթվինի բարբառը այժմ էլ Բաթումիի հայերի մի մասի խոսակցական լեզուն է։ Այդ լեզվով խոսել է Արթվին քաղաքի և նրա շրջանի բնակչությունը։ Պատմական Հայաստանում այս շրջանը մտնում էր Տայքի մեջ։ Արթվինի բարբառն իր հնչյունական և ձևաբանական սիստեմով շատ նմանություններ ունի Թբիլիսիի բարբառի հետ։ Այժմ, ինչպես և այն ժամանակ, երբ Արթվինի բարբառը Արթվինի շրջանի խոսակցական լեզուն էր, նա անմիջական առնչություն չուներ Թբիլիսիի հետ, որովհետև աշխարհագրորեն այդ հնարավոր չէր՝ Արթվինը Թբիլիսիից հարյուրավոր կիլոմետրներով հեռու է։ Մյուս կողմից Արթվինի բարբառի և Թբիլիսիի միջև ընկած է Կարնո բարբառով խոսող մի ընդարձակ շրջան, որի մեջ մտնում են Ախալքալաքին և Ախալցիխան։ Հետևաբար Արթվինի բարբառի նմանությունը Թբիլիսիի բարբառին հնարավոր չէ բացատրել անմիջական առնչակ-

ցությամբ, հարևանությամբ։ Սակայն Արթվինի բարբառի մի շարք գծեր այնքան նման են Թբիլիսիի բարբառին, որ բացառում են ամեն մի պատահական զուգադիպություն։ Միակ ենթադրությունը մնում է այն, որ Թբիլիսիի բարբառը Տայքի բնակչության բարբառն է, որ հիշատակվում է Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ։

Արթվինի բարբառը տեղափոխվելով արևելքից (այսպես կոչված պատմական Պարսկահայքից, ավելի լավ է ասել՝ հյուսիսային Ատրպատականից) դեպի արևմուտք, տեղավորվել է Տայքի շրջանում։ Այստեղ երկար տարիներ ապրելով Տայքի բարբառի միջավայրում, ենթարկվել է նրա տեական ազդեցության և յուրացրել նրա մի շարք հատկանիշները։ Արթվինի բարբառի այդ նույն հատկանիշները վկայում են, որ Թբիլիսիի հայերի հիմնական տարրը եկել է Տայքից շատ հին ժամանակներում և ճընշող մեծամասնություն կազմելով՝ ձևավորել է Թբիլիսիի բարբառը։ Այդ բարբառը, սակայն, ենթարկվել է իր հերթին այն մեծ գաղթականության ազդեցության, որ խոսում էր Երևանի բարբառով և որ եկել ու նստել էր Հավլաբարում։ Այդ ազդեցությունը դարձել է Թբիլիսիի բարբառի մահացման պատճառ։ Թբիլիսիի բարբառի մահացման պատճառ է դարձել նաև այն հանգամանքը, որ Թբիլիսին 19-րդ դարում դարձավ հայ գրական լեզվի կուլտուրայի օջախը։ Հայերեն գրական լեզուն ևս արագացրեց Թբիլիսիի բարբառի անհետանալը։ Այժմ Թբիլիսիի բարբառը չկա, մեռած է, սակայն Հավլաբարի խոսվածքի մեջ շատ որոշ կերպով կան նրա հետքերը։ Դրան օրինակ կարող է լինել հավլաբարցիների հարկադրական եղանակի կազմությունը (պիտի սիրիլ էյի), ե ձայնավորի երբեմն ի-ի փոխվելը, օ ձայնավորի—ու-ի փոխվելը, փ հնչյունի հազվագյուտ գործածությունը, շեշտը և խոսակցական ինտոնացիան և այլն։

Այս ձևով լուծվում են երկու խնդիր։

Մեկ՝ պարզվում է, որ Թբիլիսիի բարբառը եկել է Տայքից։ Երկրորդ՝ հայտնի է դառնում Ստեփաննոս Սյունեցու հիշատակած բարբառներից մեկը, Թբիլիսիի բարբառը։ Դա հաստատում է, թե մեր բարբառները շատ մեծ հնություն ունեն և սխալ է նրանց համարել գրաբարից առաջացած։ Արթվինի բարբառի գալուստը Տայք պետք է ենթադրել 3—400 տարի առաջ, մեր կարծիքով 17-րդ դարի պարսիկ-տաճկական պատերազմների ժամանակ, երբ այդ պետություններից յուրաքանչյուրն աշխատում էր

կենդանի մարդկանց, շինականներին, աշխատավորներին կորզել հակառակորդի ձեռքից ու տանել բնակեցնել իր երկիրը՝ ճորտական շահագործման ենթարկելու համար։ Այդ նպատակով տեղափոխվեց և Ջուղայի բնակչությունը պարսիկների կողմից։ Ենթադրվում է, որ այդ գաղթեցումը կատարվել է նաև ռազմական նպատակներով, սակայն այդ քննելը մեր նյութից դուրս է։

Արթվինի բարբառը շատ քիչ, բայց ունի նմանություն Կարնո բարբառին, նա 100 տարուց ավելի է, որ անմիջական առնչություն ունի Կարնո բարբառի հետ։ 100 տարվա առնչությունը Կարնո բարբառի հետ շատ քիչ նմանություն է ստեղծել այդ երկու բարբառների մեջ. նշանակում է՝ Արթվինի բարբառը պետք է որ երկար ապրած լիներ Տայոց բարբառի միջավայրում, որպեսզի նրանից վերցներ և յուրացներ ձևաբանական կատեգորիաներ։

Այսպիսով Արթվինի բարբառը մեզ ցույց տվեց, բացատրեց Թբիլիսիի բարբառի բուն հայրենիքը և Տայոց բարբառը։

ԱՐԹՎԻՆԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Արթվինի բարբառի բաղաձայնական սիստեմը նման է Թբիլիսիին, այսինքն եռաստիճան է, գրաբարյան բաղաձայնների նման, ոչ մի տեղաշարժի չի ենթարկվում։

բ	պ	փ
դ	տ	թ
ձ	ծ	ց
ջ	ճ	չ
գ	կ	ք

Այս բարբառում ձայնեղ բաղաձայներն իրենց որակը պահում են բառասկզբին, մեծ մասամբ ձայնավորից առաջ. օրինակ՝ գէղացի, դէղին, ձէր, բի (բէր). բառամիջում, հատկապես ր, ղ բաղաձայններից հետո ձայնեղների փոխարեն գտնում ենք շնչեղ խուլ հնչյուններ։ Օրինակ՝ մարթ, օրթի (որդի), գարցած (դարձած), սրփէլ (սրբել), էքէմէր—այգիներ և այլն։ Ն և մ ռնգայիններից հետո, հաճախ նաև այլ դիրքում, խուլ հնչյունները ձայնեղանում են. օրինակ՝ դըրգից, էգնէ, մօգինալ, դէըընգան, գիդի և այլն։

Արթվինի բարբառում չկա Թբիլիսիի բարբառի ղ-ն (Թբլ. վուրղանց, Արթվինի բարբառ՝ վուրգաց), բայց կա Թբիլիսիի բարբառում բացակայող «ֆ» հնչյունը։ Արթվինի բարբառի ձայնավորական սիստեմը ավելի քիչ է ենթարկվել Տայոց բարբառի ազդեցության։ Ձայնավորները համապատասխան են գրական լեզվի ձայնավորներին, միայն օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերի մեջ «է» ձայնավորը վերածվում է ի-ի. իմ, իս, է, ինք, իք, ին։ *Արթվինի բարբառի շեշտը վերջին վանկի վրա է դրվում, դրա հետևանքով նախավերջին վանկի մի շարք ձայնավորներ ընկնում են, օրինակ՝* հրթլիս *(երթալիս),* կարթլիս *(կարդալիս),* հավսար *(հավասար) և այլն։*

Թբիլիսիի բարբառի նման Արթվինի բարբառում երկբարբառներ չկան, երկբարբառների դիմաց ամենուրեք գտնում ենք պարզ հնչյուններ. օրինակ՝ քույր > քուր, *այս >* է, *գողություն >* գողութէն, *ուրախություն >* ուրախութէն, *«ո» հնչյունը բառասկզբին արտասանվում է* օ, *օրինակ՝ որդի >* օրթի. *բառավերջի մի շարք հնչյուններ դուրս են ընկած. օրինակ ես >* յէ, *այս >* է, *ինչպես >* ինչպէ, *համար >* համա։

Կառնեմ, կասեմ, կանեմ և կերթամ *բառերը արտասանվում են* կոռնիմ, կոսիմ, կոնիմ, կորթամ։

Վրա *բառը արտասանվում է* րա. *օրինակ՝* ծէրի րա *> ծայրի վրա,* լէրքի բա *> լյարդի վրա (գրկում),* մէջքի րա։ Համար *բառը արտասանվում է* մա, համա, *օրինակ՝* Ջանիի մա *կամ* Ջանիի համա։ *Վերջինը Թբիլիսիի բարբառի ձևն է։*

Որ *հարաբերական դերանունը արտասանվում է* օրէ. օրէ *գործ է ածվում նաև* ուրպէսզի *իմաստով։*

Հարցական նախադասության մեջ ավելացնում են «մի» մասնիկ-բառը. օրինակ՝

— Բարօ, սանք օջախ չունի՞ն մի։

— Կա՞լ էլ մի չունին։

Այդ մի ձևի գործածությունը հիշեցնում է արևմտահայ բարբառները։

Արթվինի բարբառում հաճախ ներգոյական հոլովը գործ է ածվում ժամանակ ցույց տալու համար. օրինակ՝ էնումը*—այն ժամանակ,* անցնէլումը*՝ անցնելու ժամանակ։*

Արթվինի բարբառի այդ հատկությունը, առանձնապես անորոշ դերբայի ներգոյական հոլովով ժամանակ ցույց տալը հիշեցնում է գրաբարը։ Գրաբարի մեջ անորոշ դերբայի նախդիրով

հայցականը ներգոյական իմաստով նշանակում է բայի ցույց տված գործողության ժամանակ, օրինակ՝

«...Բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն *սատակիցին...» (Եղիշէ)։*

*«*Ցեղանելն *մեր հանդէպ ամբոխին Բելայ՝ դիպել ջանասցուք տեղւոյն, ուր անցեալ կայցէ ի մէջ խուռն քաջացն Բէլ» (Մ. Խորենացի)։*

Գրական լեզվի մեջ այս հատկությունը մնացել է անկատար դերբայի երկրորդական ձևն իբրև մակբայ գործածելու մեջ. օրինակ՝

— Փողոցով անցնելիս ճանդիպեցի ծանոթիս, *այսինքն՝* փողոցով ի անցնելիս...*Այս դեպքում արդեն վերցված է անորոշ դերբայի հոգնակի հայցականը, մինչդեռ գրաբարում սովորաբար վերցվում է եզակի հայցականը։*

Լեզվական մտածողության հենց այս հիմունքով էլ կազմված է Արթվինի բարբառի ներկայի խոնարհումը. ի երթլիս > յերթլիս > երթլիս, ի գրելիս եմ > *գրելիս էմ, այսինքն՝ գրելու գործողության մեջ եմ։*

*Իր խոնարհումն այսպես է կազմել ամբողջ «Ս» ճյուղը։ Արթվինի բարբառը յուրացնելով «Ում» ճյուղի ներգոյական ձևը՝ իր լեզվական մտածողությամբ մնացել է իրեն հավատարիմ, միայն իր հայցական-ներգոյական ձևի փոխարեն գործ է ածել հատուկ ներգոյական ձևը (*անցնելումը, կապելումը, կարթլումը*)։*

«Ում» ճյուղի բարբառները ներգոյական հոլով կազմում են բայի արմատից և ոչ անորոշ դերբայից, որից և ստացվում է «Ում» ճյուղի անկատար դերբայը (գրում, կարդում)*։ Անորոշ դերբայից ներգոյական հոլով է կազմում Արթվինի նման և Հավարեկի բարբառը, որը և դարձնում է անկատար դերբայ բոլոր դեմքերի համար, բացի եզակի առաջինից, որ վերցնում է Արթվինի բարբառից (օրինակ՝* գ'իրելիս ըմ, գ'իրելըմ ըս, գ'իրելըմ ի, գ'իրելըմ անք, գ'իրելում աք, գ'իրելըմ ան*)։*

Այդ երևույթը մատնանշում է Արթվինի բարբառի և Հավարեկի բարբառի երբեմնի հարևան եղած լինելու վրա։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Արթվինի բարբառում կան հետևյալ հոգնակիները՝ էր (աչքեր), նէր (դուքաննէր), էրոտ (թշէրոտ), ստան (սրէստան—շար-

քեր, զօզօստան—աղջիկներ), անէր (իշանէր), դանք (ընդէր-դանք)։

Վերջին հոդնակին գտնում ենք Կարնո բարբառի մեջ (Ախալքալաքի, Ախալցխա) միայն, հետևաբար այդ հոդնակին անցել է Արթվինի բարբառին Կարնո բարբառից։ «Օտ» հոդնակին գտնում ենք Ղարաբաղի բարբառում, հետևաբար այդ հոդնակիով Արթվինի բարբառը կապվում է Ղարաբաղի բարբառի հետ, որ նշանակում է, թե երբեմնի Արթվինի և Ղարաբաղի բարբառները միմյանց հարևան են եղել կամ գոնե ավելի մոտ հարևան, քան հիմա են նրանք

ստան *հոդնակին կա Կարնո բարբառի մեջ և. այդ հոդնակին կազմված է ս-տ-ան հոդնակիներից։ Այս* ստան *հոդնակին դրվում է ձայնավորով վերջացող բառերի վրա (սրա—սրէստան, զոզո—զօզօստան)։ Անցյալում մեր արած ենթադրությունն այն մասին, որ դա ոչ մի կապ չունի* ստան*—տեղ նշանակող մասնիկի հետ, մինդամայն ճշտվեց։*

Ձայնավորով վերջացող բառերը գրաբարում ունենում են ուղղականում՝ ք հոդնակի, հայցականում՝ ս, *որ ժողովրդական լեզուների մեջ ըմբռնվում է իբրև եզակի. օրինակ՝ բաղնիք—բաղնիս, կողպեք—կողպէս, հարսնիք—հարսնիս։ Դրա վրա ավելանալով* տան *հոդնակին՝ տալիս են* ստան *ամբողջական հոդնակի.* բաղնեստան, հարսնեստան, զօզօստան։ *Դրանից հետո այդ* ստան *հոդնակին, դառնալով օրինաչափություն, կարող է ավելանալ նաև ոչ ձայնավորով վերջացող գոյականների վրա։*

ՀՈԼՈՎՈՒՄ

Արթվինի բարբառն ունի 7 հոլով, որոնք նման են Թբիլիսիի բարբառին։ Բացառական հոլովն ունի «իմէն, ումէն» վերջավորություն, ներգոյական հոլովը ում, ըմ *վերջավորություն։ Սեռական հոլովը հոդ չի ստանում։*

Եզակի

Ուղղ.	*պատ (ը)*	*դէդա (ն)*	*կամ դէդա*
Սեռ.	*պատի*	*դէդայի*	*» դէդի*
Տր.	*պատի (ն)*	*դէդայի (ն)*	*» դէդի(ն)*
Հայց.	*պատ (ը)*	*դէդայի (ն)*	*» դէդի(ն)*
Բաց.	*պատիմէն*	*դէդիմէն*	*» դէդիմէն*
Գործ.	*պատօվ*	*դէդայօվ*	*» դէդօվ*
Ներգ.	*պատում (ը)*	*դէդի մէջ*	*» դէդի մէջ*

Հոլովման ընթացքում շեշտի տեղափոխության հետևանքով Արթվինի բարբառում տեղի է ունենում հնչյունափոխություն, որին ենթարկվում են համարյա բոլոր ձայնավորները․

Եզակի

Ուղղ․	դուքան	պառավ
Սեռ․	դըքնի	պառվի
Տր․	դըքնի(ն)	պառվի(ն)
Հայց․	դուքան	պառվի(ն)
Բաց․	դըքնիմէն	պառվիմէն
Գործ․	դըքնօվ	պառվօվ
Ներգ․	դըքնում(ը)	պառվի մէջ

Հոգնակի

Ուղղ․	պատէր(ը)	դէդէստան(ը)
Սեռ․	պատէրի	դէդէստնու
Տր․	պատէրի(ն)	դէդէստնու(ն)
Հայց․	պատէր(ը)	դէդէստան(ը)
Բաց․	պատէրիմէն	դէդէստնումէն
Գործ․	պատէրօվ	դէդէստնէրօվ
Ներգ․	պատէրում(ը)	դէդէստնու մէջ

Ուղղ․	դըքըննէր(ը	պառվըննէր(ը)
Սեռ․	դըքըննէրի	պառվըննէրի
Տր․	դըքըննէրի(ն)	պառվըննէրի(ն)
Հայց․	դըքըննէր(ը)	պառվըննէրի(ն)
Բաց․	դըքըննէրիմէն	պառվըննէրիմէն
Գործ․	դըքըննէրօվ	պառվըննէրօվ
Ներգ․	դըքըննէրում(ը)	պառվըննէրի մէջ

Արթվինի բարբառի գոյականները ենթարկվում են մեծ մասամբ «ի» հոլովման, բայց «ի»-ով վերջավորվող գոյականները ենթարկվում են «ու» հոլովման (օրթի, օրթուն)։ Հոգնակիում գոյականները ենթարկվում են կամ «ի» կամ «ու» հոլովման (պառվըներ—պառվըննէրի, գըլխըննէր—գըլխըննէրու)։

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Արթվինի բարբառի անձնական դերանունները երեք են՝ I, II և III դեմքի, վերջինս նույնացած է ցուցական դերանվան հետ։

«Ես ինքս» դերանունն ունի «յէ իրենս» ձևը։

Անձնական դերանունների տրականն ու հայցականը ունենում են «ի», բացառականը՝ «իմէն» վերջավորություն։

«Ես» բառն ունի յէ ձևը։

Եզակի

Ուղղ.	յէ, իրէնս	դու, ինքդ
Սեռ.	իմ	քու
Տր.	ինձի	քեզի
Հայց.	ինձի	քեզի
Բաց.	ինձիմէն, ինձնիմէն	քեզիմէն, քեզնիմէն
Գործ.	ինձնօվ, ինձօվ	քեզնօվ
Ներգ.	իմ մէջ, ինձի մէջ	քու մէջ, քեզի մէջ

Հոգնակի

Ուղղ.	մէնք	դուք
Սեռ.	մեր	ձեր
Տր.	մեզի	ձեզի
Հայց.	մեզի	ձեզի
Բաց.	մեզիմէն, մեզնիմէն	ձեզիմէն, ձեզնիմէն
Գործ.	մեզնօվ	ձեզնօվ
Ներգ.	մեզի մէջ, մեր մէջ	ձեզի մէջ, ձեր մէջ

Չափազանց հետաքրքրական է ցուցական դերանունների հոլովումը։ Բոլոր բարբառներում ցուցական դերանունների հոլովման հիմք է դառնում գրաբարի սեռականի «ր» հոլովակազմիչը։

Գրաբ. նորա, զրակ. լեզ. նրա, բարբառներ. ըստրա, ստրա, ըստուր, իսոր, ասօր, ստուր, ստար, տӧր և այլն։ Միմիայն Արթվինի բարբառում ցուցական դերանունների հոլովման հիմք է դառնում տրական ձևը «մ» հոլովակազմիչով, մի երևույթ, որ ոչ մի այլ բարբառում չկա։

Եզակի

Ուղղ.	սա	դա	նա
Սեռ.	սմա	դմա	նմա
Տր.	սման	դման	նման
Հայց.	սման	դման	նման
Բաց.	սմամէն	դմամէն	նմամէն

Գործ.	*սմանօվ*	*դմանօվ*	*նմանօվ*
Ներգ.	*սմա մեջ*	*դմա մեջ*	*նմա մեջ*

Հոգնակի

Հոգնակի ուղղականում «մ» չկա, հոգնակիի նշանն է «ն». հոլովման հիմք է ծառայում եզակի տրական հոլովը, ինչպես գրական լեզվում։

Ուղղ.	*սանք*	*դանք*	*նանք*
Սեռ.	*սմանց*	*դմանց*	*նմանց*
Տր.	*սմանց*	*դմանց*	*նմանց*
Հայց.	*սմանց*	*դմանց*	*նմանց*
Բաց.	*սմանցմէն*	*դմանցմէն*	*նմանցմէն*
Գործ.	*սմանցօվ*	*դմանցօվ*	*նմանցօվ*
Ներգ.	*սմանց մէջ*	*դմանց մէջ*	*նմանց մէջ*

Ինչպես սովորական է այս բարբառի համար՝ «էս» դերանունը կորցնում է ս-ն, և սոտացվում է «է»։ «է», «էդ», «էն» դերանուննները նույն ձևով են հոլովվում, ինչպես որ սա, դա, նա։

Ինքն և վօվ դերանուննները հոլովվում են հետևյալ կերպ՝

Եզակի

Ուղղ.	*ինքը*	*վօվ*
Սեռ.	*իրէն*	*ումի*
Տր.	*իրէն*	*ումին*
Հայց.	*իրէն*	*ումին*
Բաց.	*իրէմէն*	*ումիմէն*
Գործ.	*իրէնօվ*	*ումինօվ*
Ներգ.	*իրէն մէջ*	*ում մէջ*

Հոգնակի

Ուղղ.	*իրէնք*	*վօվք*
Սեռ.	*իրէնց*	*ումինց*
Տր.	*իրէնց*	*ումինց*
Հայց.	*իրէնց*	*ումինց*
Բաց.	*իրէնցմէն*	*ումինցմէն*
Գործ.	*իրէնցօվ*	*ումինցմօվ*
Ներգ.	*իրէնց մէջ*	*ումինց մէջ*

Արթվինի բարբառի մեջ «ով» դերանունը հոլովվում է նաև հոգնակի։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Արթվինի բարբառի խոնարհումը կազմվում է անալիտիկ սիստեմով՝ դերբայով և օժանդակ բայով։ Ժամանակների թիվը նույնքան է, որքան և գրական լեզվի մեջ և նույն իմաստով, ինչ որ գրական լեզվի մեջ։ Անորոշ դերբայն ունի «էլ» կամ «ալ» վերջավորություն՝ գըրէլ, կա̈րթալ։

Անկատար դերբայն ունի «էլիս», «լիս» վերջավորություն։ Երբ օժանդակ բայն ընկնում է դերբայից առաջ, այդ դեպքում անկատար դերբայն ունենում է «էլի», «լի» վերջավորություն՝ գըրէլի, կա̈րթլի *(տես՝ Ուրմիայի բարբառը)։*

Ապառնի դերբայն ունի նույն վերջավորությունը, ինչպես որ գրական լեզվի մեջ՝ գըրէլու, կա̈րթլու։

Վաղակատար դերբայն ունի «իլ», «ցիլ» վերջավորություն՝ գըրէլ, կա̈րթցիլ։

Հարակատար դերբայն ունի ած, ցած՝ գըրած կա̈րթցած։

Ենթակայական դերբայն ունի օղ, ցօղ՝ գըրօղ, կա̈րթըցօղ։

Ըղձական դերբայն ունի ի, ա՝ գըրի, կա̈րթա։

Օժանդակ բայն ունի ներկայի հետևյալ ձևերը՝ իմ, իս, է, ինք, իք, ին *(Թբիլիսիի նման), իսկ անցյալ կատարյալն ունի գրականի նման ձևեր՝ էյի, էյիր, էր, էյինք, էյիք, էյին։*

Կանոնավոր բայերը անցյալ կատարյալում ունեն ց-ական հիմք, «ե» խոնարհման բայերը անցյալ կատարյալում ունենում են ի, իր, ինք, իք, ին, *վերջավորություն. հիմքի* եց *ածանցը* III *դեմքում փոխվում է* ից *(գրից)։*

«Ա» խոնարհման բայերն ունեն ա, ար, ավ, անք, աք, ան։

Ըղձական եղանակի ապառնի ժամանակում «ե» խոնարհման բայերը խոնարհիչը փոխում են ի։ *Ըղձական անցյալի ապառնին նման է գրական լեզվին։ Պայմանական եղանակը կազմվում է ըղձականից, ավելացրած «կու» եղանակիչը, որով այդ բարբառի պայմանականը միանգամայն նմանվում է Թբիլիսիի բարբառին։ Հարկադրական եղանակը կազմվում է ըղձականից՝ ավելացրած «տի» եղանակիչը։ Ժխտական խոնարհման դեպքում ավելացվում է «պի» եղանակիչը «չ» մասնիկով՝* չպի *(չպի գըրիմ)։ Այսպիսով ստացվում է մի սրամիտ արարք. մեր սովորական* պիտի *եղանակիչը Արթվինի բարբառը բաժանում է երկու հավասար մա-*

ները՝ պի-տի, որոնցից վերջինը օգտագործվում է գրական խո-նարհման ժամանակ (տի գըրիմ), իսկ առաջինը՝ ժխտական խո-նարհման ժամանակ (չըպի գըրիմ)։

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ժխտական խոնարհումը կազմվում է սովորական «չ» բառա-մասնիկով, որ բաղադրյալ ժամանակներում միանում է է օժանդակ բային և նրան առաջ գցում։ Այդ դեպքում օ-ժանդակ բայը ունենում է թե «է» և թե «ի» արմատ, բացի եզակի երրորդ դեմքից (չէմ, չէս, չի) որ միշտ «ի» արմատ ունի։ Անկատար դերբայը կորցնում է իր վերջին ս—ն և ունենում է «էլի», «լի» վերջավորություն (միանգամայն նման Ուրմիայի բարբառին)։

Ժխտական խոնարհման պարզ ժամանակներում (անցյալ կատարյալ, ըղձական ապառնի և անցյալ ապառնի) գրական խո-նարհման վրա ավելացնում է «չի» մասնիկը (չի գըրէցի, չի գը-րիմ, չի գըրէյի), պայմանական եղանակի ժխտական խոնարհումը միանգամայն նման է գրականին։ Հարկադրականի մասին խո-սեցինք վերևում։

ԲԱՅ

Դերբայական ձևեր

Անորոշ դերբայ՝	*գըրէլ*	*կարթալ*
Անկատար դերբայ՝	*գըրէլիս*	*կարթլիս*
Ապառնի դերբայ՝	*գըրէլու*	*կարթլու*
Վաղակատար դերբայ՝	*գըրիլ*	*կարթցիլ*
Հարակատար դերբայ՝	*գըրած*	*կարթցած*
Ենթակայական դերբայ՝	*գըրող*	*կարթցող*
Ըղձական դերբայ՝	*(չէմ) գըրի,*	*(չէս) կարթա*

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Հաստատական կամ գրական խոնարհում

Սահմանական եղանակ

Ներկա անկատար

գըրէլիս իմ	*կարթլիս իմ*
գըրէլիս իս	*կարթլիս իս*
գըրէլիս է	*կարթլիս է*

գըրէլիս ինք	կարթլիս ինք
գըրէլիս իք	կարթլիս իք
գըրէլիս ին	կարթլիս ին

Անցյալի անկատար

գըրէլիս էյի	կարթլիս էյի
գըրէլիս էյիր	կարթլիս էյիր
գըրէլիս էր	կարթլիս էր
գըրէլիս էյինք	կարթլիս էյինք
գըրէլիս էյիք	կարթլիս էյիք
գըրէլիս էյին	կարթլիս էյին

Ապառնի

գըրէլու յիմ	կարթլու յիմ
գըրէլու յիս	կարթլու յիս
գըրէլու յէ	կարթլու յէ
գըրէլու յինք	կարթլու յինք
գըրէլու յիք	կարթլու յիք
գըրէլու յին	կարթլու յին

Անցյալ ապառնի

գըրէլու էյի	կարթլու էյի
գըրէլու էյիր	կարթլու էյիր
գըրէլու էր	կարթլու էր
գըրէլու էյինք	կարթլու էյինք
գըրէլու էյիք	կարթլու էյիք
գըրէլու էյին	կարթլու էյին

Վաղակատար

գըրիլ իմ	կարթցիլ իմ
գըրիլ իս	կարթցիլ իս
գըրիլ է	կարթցիլ է
գըրիլ ինք	կարթցիլ ինք
գըրիլ իք	կարթցիլ իք
գըրիլ ին	կարթցիլ ին

Անցյալի վաղակատար

գըրիլ էյի	կարթցիլ էյի
գըրիլ էյիր	կարթցիլ էյիր
գըրիլ էր	կարթցիլ էր

գրրել էյինք	կարթցել էյինք
գրրել էյիք	կարթցել էյիք
գրրել էյին	կարթցել էյին

Հարակատար

գրրած իմ	կարթցած իմ
գրրած իս	կարթցած իս
գրրած է	կարթցած է
գրրած ինք	կարթցած ինք
գրրած իք	կարթցած իք
գրրած ին	կարթցած ին

Անցյալի հարակատար

գրրած էյի	կարթցած էյի
գրրած էյիր	կարթցած էյիր
գրրած էր	կարթցած էր
գրրած էյինք	կարթցած էյինք
գրրած էյիք	կարթցած էյիք
գրրած էյին	կարթցած էյին

Անցյալ կատարյալ

գրրէցի	գրրէցինք	կարթցա	կարթցանք
գրրէցիր	գրրէցիք	կարթցար	կարթցաք
գրրից	գրրէցին	կարթցավ	կարթցան

2. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

գրէ՛ գրէ՛ք կարթա՛ կարթցէ՛ք

3. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

գրրիմ	կարթամ
գրրիս	կարթաս
գրրի	կարթա
գրրինք	կարթանք
գրրիք	կարթաք
գրրին	կարթան

Անցյալի ապառնի

գըրէյի	*կարթայի*
գըրէյիր	*կարթայիր*
գըրէր	*կարթար*
գըրէյինք	*կարթայինք*
գըրէյիք	*կարթայիք*
գըրէյին	*կարթային*

4. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

կու գըրիմ	*կու կարթամ*
կու գըրիս	*կու կարթաս*
կու գըրի	*կու կարթա*
կու գըրինք	*կու կարթանք*
կու գըրիք	*կու կարթաք*
կու գըրին	*կու կարթան*

Անցյալի ապառնի

կու գըրէյի	*կու կարթայի*
կու գըրէյիր	*կու կարթայիր*
կու գըրէր	*կու կարթար*
կու գըրէյինք	*կու կարթայինք*
կու գըրէյիք	*կու կարթայիք*
կու գըրէյին	*կու կարթային*

5. ՀԱՐԱԿԱՏԱՐ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

տի գ'րիմ	*տի կարթամ*
տի գ'րիս	*տի կարթաս*
տի գ'րի	*տի կարթա*
տի գ'րինք	*տի կարթանք*
տի գ'րիք	*տի կարթաք*
տի գ'րին	*տի կարթան*

Անցյալի ապառնի

տի գըրէյի, տէյի գըրի	*տի կարթայի, տէյի կարթա*

տի գըրէյիր, տէյիր գըրէ	տի կարթայիր, տէյիր կարթա
տի գըրէր, տէր գըրէ	տի կարթար, տէր կարթա
տի գըրէյինք, տէյինք գըրէ	տի կարթայինք, տէյինք կարթա
տի գըրէյիք, տէյիք գըրէ	տի կարթայիք, տէյիք կարթա
տի գըրէյին, տէյին գըրէ	տի կարթային, տէյին կարթա

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

1. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկա

չէմ գըրէմ	չէմ կարթմ
չէս գըրէմ	չէս կարթմ
չի գըրէմ	չի կարթմ
չէնք գըրէմ	չէնք կարթմ
չէք գըրէմ	չէք կարթմ
չէն գըրէմ	չէն կարթմ

Անցյալ անկատար

չէյի գըրէմ	չէյի կարթմ
չէյիր գըրէմ	չէյիր կարթմ
չէր գըրէմ	չէր կարթմ
չէյինք գըրէմ	չէյինք կարթմ
չէյիք գըրէմ	չէյիք կարթմ
չէյին գըրէմ	չէյին կարթմ

Ապառնի

չիմ գըրէլու	չիմ կարթլու
չիս գըրէլու	չիս կարթլու
չի գըրէլու	չի կարթլու
չինք գըրէլու	չինք կարթլու
չիք գըրէլու	չիք կարթլու
չին գըրէլու	չին կարթլու

Անցյալ ապառնի

չէյի գըրէլու	չէյի կարթլու
չէյիր գըրէլու	չէյիր կարթլու
չէր գըրէլու	չէր կարթլու

չէյինք գրելու | չէյինք կարդալու
չէյիք գրելու | չէյիք կարդալու
չէյին գրելու | չէյին կարդալու

Վաղակատար

չեմ գրել	չեմ կարդացել
չես գրել	չես կարդացել
չի գրել	չի կարդացել
չենք գրել	չենք կարդացել
չեք գրել	չեք կարդացել
չեն գրել	չեն կարդացել

Անցյալ վաղակատար

չէյի գրել	չէյի կարդացել
չէյիր գրել	չէյիր կարդացել
չէր գրել	չէր կարդացել
չէյինք գրել	չէյինք կարդացել
չէյիք գրել	չէյիք կարդացել
չէյին գրել	չէյին կարդացել

Հարակատար

չեմ գրած	չեմ կարդացած
չես գրած	չես կարդացած
չի գրած	չի կարդացած
չենք գրած	չենք կարդացած
չեք գրած	չեք կարդացած
չեն գրած	չեն կարդացած

Անցյալ հարակատար

չէյի գրած	չէյի կարդացած
չէյիր գրած	չէյիր կարդացած
չէր գրած	չէր կարդացած
չէյինք գրած	չէյինք կարդացած
չէյիք գրած	չէյիք կարդացած
չէյին գրած	չէյին կարդացած

Անցյալ կատարյալ

չի գըրէցի	*չի կարթցի*
չի գըրէցիր	*չի կարթցար*
չի գըրից	*չի կարթաց*
չի գըրէցինք	*չի կարթցանք*
չի գըրէցիք	*չի կարթցաք*
չի գըրէցին	*չի կարթցան*

2. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

մի՛ գըրի *մի՛ գըրիք* *մի՛ կարթա* *մի՛ կարթցիք*

3. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

չի գըրիմ	*չի կարթամ*
չի գըրիս	*չի կարթաս*
չի գըրի	*չի կարթա*
չի գըրինք	*չի կարթանք*
չի գըրիք	*չի կարթաք*
չի գըրին	*չի կարթան*

Անցյալ ապառնի

չի գըրէյի	*չի կարթայի*
չի գըրէյիր	*չի կարթայիր*
չի գըրէր	*չի կարթար*
չի գըրէյինք	*չի կարթայինք*
չի գըրէյիք	*չի կարթայիք*
չի գըրէյին	*չի կարթային*

4. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

չէմ գըրի	*չէմ կարթա*
չէս գըրի	*չէս կարթա*
չի գըրի	*չի կարթա*
չէնք գըրի	*չէնք կարթա*
չէք գըրի	*չէք կարթա*
չէն գըրի	*չէն կարթա*

Անցյալ ապառնի

չէյի գըրի	*չէյի կարթա*
չէյիր գըրի	*չէյիր կարթա*
չէր գըրի	*չէր կարթա*
չէյինք գըրի	*չէյինք կարթա*
չէյիք գըրի	*չէյիք կարթա*
չէյին գըրի	*չէյին կարթա*

5. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

չիպի գըրիմ	*չիպի կարթամ*
չիպի գըրիս	*չիպի կարթաս*
չիպի գըրի	*չիպի կարթա*
չիպի գըրինք	*չիպի կարթանք*
չիպի գըրիք	*չիպի կարթաք*
չիպի գըրին	*չիպի կարթան*

Անցյալ ապառնի

չիպի գըրէյի	*չիպի կարթայի*
չիպի գըրէյիր	*չիպի կարթայիր*
չիպի գըրէր	*չիպի կարթար*
չիպի գըրէյինք	*չիպի կարթայինք*
չիպի գըրէյիք	*չիպի կարթայիք*
չիպի գըրէյին	*չիպի կարթային*

Նմուշներ Արցախի բարբառով

«ԳԻՔՈՐ»-ից

Բարա ու օրթի նստած էյին բազազ Արտէմի խօհանոցումը։

— Դէ հիմի դուն գիդիս, Գիքօր ջան, տէսնիմ քէզի՝ ինչ տեսսակ մանչ տի դառնաս...։ էնէնց տի անիս, օրէ...յէ ի՞նչ գիդիմ...օ, տէր աստված.... պըտպըտաց Համբօն ու մըշտուկը լցից։

Համա Գիքօրը չօրս թէրէփէն էր աշէլի

— Բարա՛, սանք օջախ չունի՞ն մի։

— Չէ՛, սանք էստի սոփա ունին։

— Կալ էլ մի չունին։

— Սանք քաղքիմէն ին, գէղացի խօ չին, որ կալ կալ-ւէն։

— Արա վօրգացէն ին հաց ուտէլի։

— Փարօվ գընէլիս ուտէլիս ին, հացն էլ ին փարօվ գընէլի, յէղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փէտն էլ, ջուրն էլ...։

— Վա՜յ...

— Հա բա, սման Թիֆլիս կօսին։ Դուն հալա յէգին կէցի, հալա շատ բան կու իմանաս։

— Բաբա, սանք յամ ունին։

Ունին, հէլբէթ, սանք էլ մէզի պէ հայ քրիստոնյա ին։ Լավ աշէ հա,—գօղութէն չի անիս։ Վօվ գիդի, քէզի փօրցէլու համա փարա կու գըցին, չըղնի թէ մօղիկանաս։ Թէ կուվէրկալիս, տար ասա «խանում, էս ինչ փարա յէ, էստի դէրընգած էր. աղա, էս բանը էստի գըդա», թէ չէ...։

— Էստի յէլ մի պրիստավ կա...

— Կա, հելբէթ...։ Վախտ է վախտէսուզ էստի-էնդի չի դէ-րընգնիս, ձէռքումտ անցած փարէն քօռ ու փուչ չի անիս, հա-զար ու մէ տէսակ պակասութէն ունինք։ Քէզի էլ լավ անջուկ արա, գիշէրօվ չի բացվիս մի մըրսիս...։ Բաղի-բաղի էկօղնէրու հէտ գիր գըրէ...,—մէկ-մէկ մըշտուկը բէրնիմէն հանէլօվ օրթուն խրատէլիս էր Համբօն։ Համա Գիքօրը քընէլիս էր։

— Հացի մանդըրուքն ու քարթուն կուտան, կէրակըրին էլ ա-վէլցուկնէրը, շատ վախտի յէլ իրէնք կուտէն, քէզի չէն տա, խըզ-մէթկըրի ադէթը էտէնց է... օրէր ին, կու մըթնին, կու անց-նին...,—առաջ էր տանէլի բաբան իրէն խրատը։ Համա Գիքօրը մէչքը դէմ տուված քընած էր։

Էն էրկու օրվա մէչը էնքան բան էր տէսի, որ դաթրիլ էր ալայմալայ։ Մըրքէրօվ լիքը դուքաննէրը, սըրէստնօվ շարած ռէնգ-ռէնգ կալաթէղէնը, տէսակ-տէսակ խաղանէլիքնէրը, դըր-բասուն էրթօղ էկօղ խըմբէրը, մէկ մէկէլու էդնէվան էրթցօղ ֆայտօննէրը, կանաչէղէն բարցած էշանէրը, թաբախնէրը, գըլխ-նէրու բա կինտօնէր, ուխտէրու սրէստանը... էս թօմարու ճու-վալն ու ղըրղըրալը, շամաթէն ու գօռալը մէկ մէկէլու հէտ խառն-ված՝ ժըժնալիս էր նման գըլխըմը։ Նա դաթրիլ էր, բաբայի բա-յան էկած քընիլ էր։

Է վախտի բաղաղն ու իրէն կնիկը խօսք-խօրաթի մէչն էյին։ Կնիկը մըրթմըրթալիս էր, որ խըզմէթկըրը խամ է, նօր

տարիմէն էկած, համա էրիկը խընդըլիս էր, օրէ մէքանի տարօվ առանց փարի խըզմէթկըր է գըդի:

— Կուսօրվի, խօ էտէնց չի մնա,—ասէլիս էր նա կընկան։

— Կուսօվրի, օրթի, սիրտըդ շուռ մի տա,—աղաչէլիս էր բաղաղի պառավ դէդին։

Համա Նատօն չէր ուզի ըղնէլի։ Նա լալօվ անիծէլիս էր իրէն բախտը։

ԲԱՌԵՐ

Սօփա—վառարան։
Կօսին—կասեն։
Ցամ—եկեղեցի, ժամ
Աղէթ—կարգ։
Դաթրիլ էր—հոգնել էր։
Ալայմալայ—բոլորովին
Ռէնգ-ռէնգ—գույնզգույն
Կալաթէղէն—չթեղեն, չթերը։
Թօմարու—բոլորի։
Ղըրղըրալը—ղնգոցը, դռդռոցը։
Այախկաբիք—ոտնամաններ, կոշիկներ։
Ինչուքի—մինչև։
Վէրէրթա—բարձրանա։
Վօրգացէն—որտեղից։
Մէրաղըս—դարդս։
Շամաթէն—աղմուկը։
Ծըժընալիս—դժվժում։
Ցան էկած—թիկն տված։
Էրիկը--մարդը, ամուսինը։
Խընդըլիս էր—ուրախանում եր։

ՕՐՓԵՎԵՐԻ ԿԸՆԻԿՆ ՈՒ ԳՕՂ ՕՐԹԻՆ

Մէ օրփէվէրի կընիկ ունէնալիս է մի հատիկ օրթի։ Օրթին պըստիկ վախթվամէն ըսկըսէլիս է գօղութէն անէլ։ Դէդէն օրթուն չի խըրատէլի, հէդէվ օրթին ըսկըսէլիս է գօղանալ յէզ ու դահա մէծ ապրանքնէր։ Մէյէգ էլ գօղութէն անէլու վախտի դըման բըռնէլիս ին ու ուզէլիս ին կախաղան հանէլ։ Դա ուզէլիս է վէրջին էդ դէդին պաչէլ։ Դէդէն գալիս է ու օրթին դէդի քիթն է կըծէլի։ Կանչէլիս է թագավօրը մանչուն ու հարցնէլիս է, թէ՝ ինչի կըծիր դէդի քընթի բա։ Մանչը ասէլիս է, թէ մէղավօրը դէդէն է, օրէ իրէն պըստի վախտի չի խըրատի։

Ընուժը թագավօրը հըրամայէլիս է, օրէ օրթու տէղի բա դէդին կախին։

ՄԻԱՄԻՏ ԳՕՂՔ

Մարթն ու կընիկը պառկած էյին յաթխումը, համա հէլէ չէյին քընած։ Սաչխի բան մօթքաղված էյին էտ գիշէրը գօղէրի

սրէն։ Մէնէլ դանք պառկած տէղումը իմացան, օրէ գօղէր ին-էկած, էլ չի քընէցան։ Էրիկը կասուդ կընգան ըսկըսէլիս է պատմէլ, թէ ինչպէ իրէնը գէնչ վախտը էրթլիս էր ուրիշնէրու սաչխի րան վէրէրթլի։

—Ցէփօր օփալլօյի շօղէրը դէրընգնէլիս էր սաչխիմէն նէքսնէ, էնումը օփալլօյի շօղէրը խուտարած նէրքնէ էյինք դէրէրթլի —պատմէլիս էր էրիկը կընգան։

Գօղէրը էտ իմանալով, նանք էլ ճնացին, օրէ յէփ օփալլօյի շօղէրը դէրընգնին սաչխիմէն նէքսնէ, էնումը նանք էլ տի դէրգային։ Էտէնց էլ էղավ. շօղէրը դէրընգան նէքսնէ, նանք էլ մէ մէկ դէրէկան, համա դէրգալումը թօմարի դէրընգան ու մէռան։

ԲԱՌԵՐ

Ցաթխումը—անկողնում։
Սաչխի րան—տանիքի վրա, կտուրին։
Մօթքաղված—հավաքված։
Սըրէն—շարք։
Դանք—դրանք։
Կասուդ—դիտմամբ։
Օփալլօյի—լուսնյակի։
Էնումը—այն ժամանակ։
Խուտարած—դրկած։
Դէրէրթլի—իջնում (դէրէրթլիս էյինք—իջնում էինք)։
Թօմարի—բոլոր։

2. ՈՒՐՄԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Արևելահայ բարբառներն իրենց հնչական և ձևաբանական վիճակով մի առանձին երանգ ունեն, որն առիթ է տալիս այդ բոլոր բարբառները կոչելու Խոյի բարբառ։ Այդ, սակայն, ճիշտ չէ։

Արևելահայ բոլոր բարբառները Խոյի բարբառը չեն, այլև Խոյի բարբառի ճյուղին անգամ չեն պատկանում։ Այդ բարբառների մեջ Ուրմիայի բարբառը պատկանում է ոչ թե «Ել» ճյուղին, ինչպես ընդունված է մինչև հիմա կոչել այն, այլ «Ս» ճյուղին։ Այդ բարբառով խոսողներն անգամ սխալմամբ իրենց խոյեցիներ են կոչում։ Ուրմիայի բարբառին պատկանում են Ուրմիայից, Սալմաստից, Բարանդուզից գաղթածների խոսվածքները։ Սովետական Հայաստանում նրանք ապրում են գյուղերով։ Այդ բարբառով խոսողների հիմնական մասսան կազմում է Ղամարլվի շրջանի գյուղերի (Ղամարլվի, Ցուվայի, Դարղալվի, Արտաշատի,

Բաշնալվի, Բուրաստանի, Գյողաքլվի, Այգեստանի, Դվինի, Դոխկուզի և այլն) բնակչությունը։

Այդ բարբառով խոսում են Միկոյանի և Ազիզբեկովի շրջանների գյուղերի մեծ մասը («Թաղա հայեր» կոչվածները)։

Այդ բարբառով խոսողներ կան Հոկտեմբերյան շրջանում, Վաղարշապատի, Արթիկի և Կոտայքի շրջաններում։ Ընդհանուր առմամբ Ուրմիայի բարբառով խոսում են շուրջ 90 հայկական գյուղեր։

Ուրմիայի բարբառը, գտնվելով մի կողմից Խոյի բարբառի, մյուս կողմից Վանի բարբառի շրջապատում, իր լեզվական վիճակով ցուցահանում է իր կրած ազդեցությունները այդ երկու բարբառներից։ Իր հնչյունական սիստեմով նա ավելի մոտ է Խոյի բարբառին։ Այդ բարբառի բառապաշարն ամփոփում է իր մեջ և Վանի և Խոյի բարբառների բառապաշարի հիմնական մասը։

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուրմիայի բարբառն իր հնչյունական ընդհանուր վիճակով նման է արևելյան բարբառներին (Ղարաբաղ, Հադրութ, Խոյ, Վան), սակայն հնչյունական սիստեմի մասնավոր գործածությամբ յուրահատուկ է։ Բարբառս ունի հետևյալ ձայնավորները՝ ա, ա̈, ե, է, ո, օ, օ̈ ու, ո̈ւ, ը, ը̈, ի, ուէ, ո̈է։ Հետևաբար Ուրմիայի բարբառում, բացի գրական հայերենի սովորական ձայնավորներից, կան նաև հետևյալ ձայնավորները՝ ա̈, ո̈ւ, օ̈, ե, ո, ը̈ նաև՝ ուէ և ո̈է երկբարբառները։

Նկատելի է, որ «վ» հնչյունից հետո Վանի բարբառի նման Ուրմիայի բարբառը ևս ունի քմայնացած «ա» (ա̈), օրինակ, լվա̈լ, վա̈ղնէլ, վա̈խ, վա̈րթ և այլն։ Ուրմիայի բարբառի բաղաձայնական սիստեմը կրում է բաղաձայնների առաջին տեղաշարժի լրիվ պատկերը, ուստի Ուրմիայի բարբառի բաղաձայնները երկաստիճան ձայնեղազուրկ են, այսինքն՝ գրաբարի եռաստիճան բաղաձայնների փոխարեն բարբառս ունի երկաստիճան բաղաձայններ։ Բառասկզբին գրաբարի ձայնեղ հնչյունների դիմաց այս բարբառում գտնում ենք միշտ խուլ հնչյուն. օրինակ՝

բերան > պերան	բուրդ > պո̈ւրթ	բան > պա̈ն
դադ > տա̈տ	դաշտ > տա̈շտ	դու > տո̈ւ
ձու > ծո̈ւ	ձիւն > ծո̈ւն	ձէթ > ծէթ
ջուր > ճո̈ւր	ջրաղաց > ճա̈ղա̈չ	ջարդել > ճա̈ռթել
գարուն > կʲա̈րո̈ւն	Գրիգոր > Կʲիկʲոր	գող > կʲող

Ուրմիայի բառբառում կան դʼ, կʼ, քʼ քմայնացած հնչյուն-ները. օրինակ.

Գալուստ > Կʼալուէստ, կամ > դʼäմ, գարուն կʼäրուն, քո > քʼօ։

Ձայնեղ բաղաձայններ այդ բարբառում հանդիպում են ռնգայիններից հետո և նոր փոխ առնված օտար բառերում։ Ռնգայիններից հետո խուլ հնչյունները նույնպես դառնում են ձայնեղ, օրինակ՝

Բամբակ—պäմբäկʼ, ընկեր > ինգʼէր։

Ուրմիայի բարբառում կա «հʼ» հնչյունը, որ ստացվում է կամ «ք» հնչյունի փոխարեն կամ «նք» երկհնչյունի փոխարեն. օրինակ՝

äհʼլծր > աքլոր, էթäհʼ տունա > երթանք տուն։

äհʼլծրխըսուէցին > աքլորականչին

«Ֆ» հնչյունի փոխարեն գործ է ածվում «փ». օրինակ ֆայտոն > փայտոն, ֆանար > փäնäր, ֆուրգոն—փըռգօն։ Ուրմիայի բարբառում կա նաև ջ̈ հնչյունը. օրինակ՝ ջ̈ուշ > թռչուն ջ̈äրջ̈ä > ագռավ։

Ուրմիայի բարբառում աֆրիկատով վերջավորվող բառին բաղաձայնով սկսվող բառ հաջորդելիս տեղի է ունենում աֆրիկատների անկում. ձ, ծ, ց, ջ, ճ, չ հնչյունների փոխարեն ըստացվում են ս, զ, շ, ժ. օրինակ,

Մշնէկʼ > միջնակ, տասկել > ծածկել, խասկան > հացական (տաշտաքեր).

խաս կա > հաց կա, խիզ կա > սինձ կա.

խըրսներ > խուրձեր։

Ուրմիայի բարբառում «հ» հնչյունի փոխարեն նկատում ենք «խ», Վանի բարբառի նման. օրինակ խաց > հաց, խավ > հավ, խարնիս > հարսանիք, խող > հող և այլն։

Եթե բառը վերջանում է «կ» հնչյունով և հաջորդ բառը սկսվում է բաղաձայնով, ապա այս կ-ն վերածվում է յ հնչյունի. օրինակ՝

Տախտայ կա > տախտակ կա։

Եթե բառը վերջավորվում է «ք» հնչյունով կամ «նք» հնչյունով և հաջորդ բառը սկսվում է բաղաձայնով, ապա այդ հնչյունները վերածվում են «հʼ» հնչյունի. օրինակ.

Թäնäհʼ տու > թանաք տուր, մնացէհʼ մէնակ > մնացինք մենակ։

Մյուս բոլոր բարբառների նման «ր», «ռ» և «ղ» բաղա-

ձայններից հետո, ինչպես և ձայնավորներից հետո, ձայնեղ հնչյունները արտասանվում են շնչեղ խուլ. օրինակ.

Պուրթ > բուրդ, վա՛րթ > վարդ, խօքի > հոգի, ախչիկ' > աղջիկ, խուրց > խուրձ, պա՛րց > բարձ։

Բառասկզբին ձայնեղ հնչյուններ պատահում են օտար բառերի մեջ, այսինքն այն բառերի, որ փոխ են առնված մեր թըրքականության վերջին հազարամյակում, օրինակ. բա՛րա՛ > առու, դա՛րա՛ > ձոր և այլն։

«Այ» երկբարբառը վերածվում է պարզ «է» ձայնավորի, «ոյ» երկբարբառը «ու» կամ «ուէ», «ո՛է», «ու» երկբարբառը, ու և ո՛ւ. օրինակ, այդ > էտ, այն > էն, հայր > խէր, քոյր > ք'ո՛ւր, բոյն > պուէն, լոյս > լո՛էս, արիւն > էրո՛ւն, սիւն > սուն, ձիւն > ձո՛ւն և այլն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուրմիայի բարբառն ունի երեք տեսակ հոգնակի «էր», «նէր» «ք'էր»։ «Էր» հոգնակին ավելանում է միավանկ բառերի վրա, օրինակ՝ պատէր, քարէր, փէտէր և այլն։

«Նէր» հոգնակին ավելանում է ձայնավորով վերջավորվող բազմավանկ բառերի վրա. օրինակ, բա՛րա՛նէր, առունէր և այլն։

«Ք'էր» հոգնակին ավելանում է բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերի վրա. օրինակ, ճամբախք'էր—ճանապարհներ կարասք'էր—կարասներ և այլն։

Կան նաև ustaƃf, vьkьq', stan'q'kr, bьƃkr և ա՛յլ հոգնակիների դեպքեր. sьƃьustaƃf, sьuvkrq', kq'ьstar, kьƃbьƃkr > կաƃajf և այլն։ Ը հոդը բարբառում արտասանվում է ա կամ ա՛ օրինակ, դաշտապտուղ > տա՛շտը պըտուղա։

Ուրմիայի բարբառի հոլովումը մեծ մասամբ լինում է «ի» ձայնավորով, այսինքն Ուրմիայի բարբառում գերակշռում է «ի» հոլովումը։ Նույնիսկ այնպիսի բառեր, որոնք ուղղականում վերջավորվում են ի-ով, նույնպես ենթարկվում են «ի» հոլովման. օրինակ, կ'ինիի, ճա՛րիի (գինու, գարու)։ «Ցան» հոլովման պատկանող բառերն անգամ ենթարկվում են «ի» հոլովման. պարէկամըթոն—պարէկամըթոնի։ Սեռականի «ի»-ն արտասանվում է ը. օրինակ, ձեռը տակա > ձեռքի տակ։

Ուրմիայի բարբառն ունի 6 հոլով, բացակայում է ներգոյական հոլովը։

Բացառական հոլովը վերջավորվում է «էն», «էն» երբեմն

ձայններից հետո, ինչպես և ձայնավորներից հետո, ձայնեղ հնչյունները արտասանվում են շնչեղ խուլ. օրինակ.

Պո̈ւրթ > բուրդ, վա̈րթ > վարդ, խօքի > հոգի, ախչիկʼ > աղջիկ, խուրց > խուրձ, պա̈րց > բարձ։

Բառասկզբին ձայնեղ հնչյուններ պատահում են օտար բառերի մեջ, այսինքն այն բառերի, որ փոխ են առնված մեր թըվականության վերջին հազարամյակում, օրինակ. բա̈րա̈ > առու, դա̈րա̈ > ձոր և այլն։

«Այ» երկբարբառը վերածվում է պարզ «է» ձայնավորի, «ոյ» երկբարբառը «ու» կամ «ուէ», «ո̈է», «ու» երկբարբառը, ու և ո̈ւ. օրինակ, այդ > էտ, այն > էն, հայր > խէր, քոյր > քʼո̈ւր, բոյն > պուէն, լոյս > լո̈էս, արիւն > էրո̈ւն, սիւն > սուն, ձիւն > ձո̈ւն և այլն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուրմիայի բարբառն ունի երեք տեսակ հոգնակի «էր», «նէր» «քʼէր»։ «Էր» հոգնակին ավելանում է միավանկ բառերի վրա, օրինակ՝ պատէր, քարէր, փէտէր և այլն։

«Նէր» հոգնակին ավելանում է ձայնավորով վերջավորվող բազմավանկ բառերի վրա. օրինակ, բա̈րա̈նէր, առունէր և այլն։

«Քʼէր» հոգնակին ավելանում է բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերի վրա. օրինակ, ճամբախքʼէր—ճանապարհներ կարասքʼէր—կարասներ և այլն։

Կան նաև սցաճք, վըերքʼ, ստտհʼքʼեր, թըճեր և ա՛յլ հոգնակիների դեպքեր. տըճըսցաճք, տըռվեռքʼ, եքʼըստար, կըճթըճեր > կաճայք և այլն։ Ը հոդը բարբառում արտասանվում է ա կամ ա̈ օրինակ, դաշտապտուղ > տա̈շտը պըտուղ։

Ուրմիայի բարբառի հոլովումը մեծ մասամբ լինում է «ի» ձայնավորով, այսինքն Ուրմիայի բարբառում գերակշռում է «ի» հոլովումը։ Նույնիսկ այնպիսի բառեր, որոնք ուղղականում վերջավորվում են ի-ով, նույնպես ենթարկվում են «ի» հոլովման. օրինակ, կʼինիի, Ղա̈րիի (գինու, գարու)։ «Ցան» հոլովման պատկանող բառերն անգամ ենթարկվում են «ի» հոլովման. պարէկամըթոն—պարէկամըթոնի։ Սեռականի «ի»-ն արտասանվում է ը. օրինակ, ձեռը տակա > ձեռքի տակ։

Ուրմիայի բարբառն ունի 6 հոլով, բացակայում է ներգոյական հոլովը։

Բացառական հոլովը վերջավորվում է «է», «էն» երբեմն

նաև «մէն» մասնիկներով։ Հոլովման մեջ գիտակցվում է շնչավոր և անշունչ առարկաների տարբերությունը։ Կենդանիների անունները հոլովվում են անձանց անունների պես։

Ուրմիայի բարբառի շեշտը վերջին վանկի վրա է։

ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

Ուղղ.	*սար(ա)*	*տըրկ'եց(ա)*	*խավ(ա)*
Սեռ.	*սարի(ը)*	*տըրկ'եցի(ը)*	*խավի(ը)*
Տր.	*սարի(ն)*	*տըրկ'եցի(ն)*	*խավի(ն)*
Հայց.	*սար(ա)*	*տըրկ'եցին*	*խավ(ին)*
Բաց.	*սարէն*	*տըրկ'ցէն*	*խավէն*
Գործ.	*սարօվ*	*տըրկ'եցօվ*	*խավօվ*

Հոգնակի

Ուղղ.	*սարէր(ա̈)*	*տըրկեսք'էր(ն)*	*տըղնէր(ա̈)*
Սեռ.	*սարէրի(ը)*	*տըրկեսք'էրի(ը)*	*տըղնէրի(ը)*
Տր.	*սարէրի(ն)*	*տըրկեսք'էրի(ն)*	*տըղնէրի(ն)*
Հայց.	*սարէր(ա̈)*	*տըրկեսք'էրէն*	*տըղնէրի(ն)*
Բաց.	*սարէրէն*	*տըրկեսք'էրէն*	*տըղնէրէն*
Գործ.	*սարէրօվ*	*տըրկըսք'էրօվ*	*տըղնէրօվ*

	«Ան» հոլովում	«Ոչ» հոլովում
Ուղղ.	*տուռ(ա)*	*ք'ո̈ւր(ա̈)*
Սեռ.	*տըռան*	*ք'ըրոչ*
Տր.	*տըռան*	*ք'ըրոչ*
Հայց.	*տուռ (ա)*	*ք'ըրոչ*
Բաց.	*տըռնէն*	*ք'ըրոչմէն*
Գործ.	*տըռնօվ*	*ք'ըրոչմօվ, ք'ըրոչօվ*

	«Օր» հոլովում	«Վա» հոլովում
Ուղղ.	*խէր*	*տարի(ն)*
Սեռ.	*խօր*	*տարվա*
Տր.	»	*տարվան*
Հայց.	»	*տարի(ն)*
Բաց.	*խօրմէն*	*տարվընէն*
Գործ	*խօրօվ*	*տարօվ*

Ուղղ.	*խէրէր(ա̈)*	*տարինէր(ա̈)*
Սեռ.	*խէրէրի*	*տարինէրի*
Տր.	*խէրէրին*	*տարինէրի(ն)*
Հայց.	*խէրէրին*	*տարինէր(ա̈)*
Բաց.	*խէրէրէն*	*տարինէրէն*
Գործ.	*խէրէրօվ*	*տարինէրօվ*

Ածականները մի առանձին նորություն չեն ներկայացնում միայն հատկությունն ուժեղացնելու նպատակով որակական ածականները կրկնված են գործածվում. օրինակ՝ մէ խօրօտ-խօրօտ ախչիկ՛—մի սիրուն աղջիկ։

Թվականները հետևյալ ձևով են արտասանվում. մէկ, էրկու, իրէք՛, չուէրս, խինգ՛, վեց, օխտ, ութ, իննա̈, տասը, տասնըմէկ՛, տասնէրկու, տասնիրէք՛, տասչուէրս, տասնըխինգ՛, տասնըվէց, տասնօխտ, տասնութ, տասնիննա̈, քըսան, յեռէսուն, քառասուն, իցցուն, վացցուն, օխտանասուն, ութանասուն, իննանասուն, խա̈յիր, խա̈զա̈ր։

Որոշյալ թվականներն ունենում են ա (ա̈) որոշող հոդը. օրինակ՝ քսանա, խա̈զա̈րա̈։ Ութսուն, իննսուն թվականները յոթանասունի նմանողությամբ ստանում են «ան» մասնիկը (ութանասուն)։

Դասական թվականները բոլորովին բացակայում են այդ բարբառում և միայն սովետական իշխանության շնորհիվ դպրոցների բազմանալու և մասսայականանալու կապակցությամբ ըսկըսվում են գործածվել առաջին, երկըրորդ, խիյերորդ *և նման բառեր։*

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄ

Անձնական դերանուններն են յես, դու̊, զինք՛ա։

Ցուցական դերանուններն են՝ էս, էն, *բացակայում են* սա, դա, նա *և* այս *դերանունները։ Այդպես, այնպես, այսպես, այդպիսի, այնպիսի, այսպիսի, դերանունների փոխարեն գործ են ածում* էսենց, էնենց *բառերը։ «Այսքան» բառը չկա, կան՝* էտքան, էնքան։ *Այսչափ, այնչափ բառերի փոխարեն գործ են ածվում* էսը ձըդա̈, էնը ձըդա̈ *դերանունները։*

Փոխադարձ դերանունն է միայն «մէյ—մէկ՛ու̊»։ Հարցա-

կան դերանուններն են՝ վա̈վ (ով), ինչ, վա̈ր (վոր), իշթա̈ր (ինչ-պես), իշջըդա̈ (ինչքան)։

Որոշյալ դերանուններն են՝ սաղ (բոլորը), զըմըե̈ն (ամե-նայն), ըմնանքս (բոլորը)։

Անորոշ դերանունն է՝ հա̈ր մէկʼը (յուրաքանչյուրը)։

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ուղղ.	յես	տո̈ւ	զէնքʼա̈
Սեռ.	իմ	քʼօ	ո̈ւր
Տր.	ընձըի(ը)	քʼէզի	ո̈ւրա̈
Հայց.	ընձըի(ը)	քʼէզի	ո̈ւրա̈
Բաց.	ընձմէն	քʼէզմէն	ո̈ւրմէն կամ մէնէն
Գործ.	ընձմօվ	քʼէզմօվ	ո̈ւրմօվ

Հոգնակի

Ուղղ.	մէնքʼ	տո̈ւքʼ	զէնքʼէրա̈
Սեռ.	մէր	ծէր	ո̈ւրէնց (ուրէս)
Տր.	մէզի(ը)	ծէզի(ը)	ո̈ւրէնցա̈(ը)
Հայց.	մէզի(ը)	ծէզի(ը)	ուրէնցա̈(ը)
Բաց.	մէզմէն	ծէզմէն	ուրէնցէն (ուրէսմէն)
Գործ.	մէզմօվ	ծէզմօվ	ուրէնցօվ (ուրէսմօվ)

Նկատելի է, որ անձնական դերանունների մեջ բացառականն ունենում է **մէն** վերջավորությունը, որ հիշեցնում է Արթըվինի բարբառի «մէն» վերջավորությունը, կամ ավելի ճիշտ նույնն է այդ վերջավորության հետ։ Նշանակում է, թե այդ բարբառներն իրար հետ երբեմնի առնչվել են։ «Ինքը» բառի հոգնակի հոլովումը հիշեցնում է «ինքը, իւրեանցի» ձևերը։

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ուղղ.	էտ	էն
Սեռ.	տա̈ր	դա̈ր
Տր.	տա̈րա̈	դա̈րա̈
Հայց.	տա̈րա̈, էտ	դա̈րա̈, էն
Բաց.	տա̈րմէն	դա̈րմէն
Գործ.	տարմօվ	դա̈րմօվ

Ուղղ.	*տա̈նք՛*	*դա̈նք՛*
Սեռ.	*տա̈նց*	*դա̈նց*
Տր.	*տա̈նցա̈(ն)*	*դա̈նցա̈(ն)*
Հայց.	*տա̈նցա̈ (տա̈նք)*	*դա̈նցա̈ (դա̈նք՛)*
Բաց.	*տա̈սմէն*	*դա̈սմէն*
Գործ.	*տա̈սմօվ (տա̈նցօվ)*	*դա̈սմօվ (դա̈նցօվ)*

Բարբառի կանոնի համաձայն «այդ» բառը պետք է որ այս բարբառում լինէր «էտ», «այն» բառը լինէր «էն»։

Հոլովման ժամանակ «էն» բառը դառնում է «դա̈ր», այսինքն՝ իր արմատը կորցնում է սեռական հոլովի վերջավորությունը դառնում է ամբողջ դերանուն՝ «էնդա̈ր > դա̈ր»։ Ըստ երևույթին «դա̈ր» ձևը կազմվել է «էնդա̈ր» ձևից, որտեղ ն-ից հետո առաջանում է ձայնեղ դ, քանի որ ռնգայիններից հետո այս բարբառում խուլերը վերածվում են ձայնեղների, այլապես բառասկզբին չէր կարող լինել ձայնեղ (դա̈ր)։ Հետագայում ձայնեղացումը պահպանվել է, որովհետև հիմնավորվել է իմաստի տարբերությամբ (տա̈ր—սրա, դրա, դա̈ր—նրա)․ այսինքն՝ նմանահունչ բառերի տարբերակման հատկանիշը դառնում է միայն ձայնեղաց-ման *երևույթը։*

Բացառական հոլովում ց-ն վերածվում է ս-ի (աֆրիկատի անկում), որովհետև նրան հաջորդում է բաղաձայն, որ միանգամայն օրինաչափ երևույթ է այս բարբառի համար։

Այսեղ *և* ըյնեղ *բառերը դարձել են* տա̈ղ *և* դա̈ղ։ Այստեղից *և* ըյնեղից *ձևերը դարձել են «տէտան», «դէնան». օրինակ՝ տէտան էկավ, դէնան ընցավ (այստեղից եկա, այնտեղից (ով) անցա)։*

ՀԱՐՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ուղղ.	*վա̈վ*	*ինչ(ա̈)*	*վա̈րա̈*
Սեռ.	*վիր*	*ինչի*	*վա̈րի(ը)*
Տր.	*վիրա̈*	*ինչին*	*վա̈րին*
Հայց.	*վիրա̈*	*ինչ(ա̈)*	*վարին (վա̈րա̈)*
Բաց.	*վիրմէն*	*ինչէն*	*վա̈րմէն*
Գործ.	*վիրմօվ*	*ինչօվ*	*վա̈րմօվ (վա̈րօվ)*

Հոգնակի չկա։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ուրմիայի բարբառն ունի երկու խոնարհում՝ ըլ *և* իլ. *ունի*

նույնքան ժամանակ, որքան և գրական լեզում. դերբայները հետևյալներն են՝

Անորոշ՝	կ'իրէլ	կ'ո̈ւթալ
Անկատար՝	կ'իրէս	կ'ո̈ւթաս
Ապառնի՝	կ'իրէլո̈ւ	կ'ո̈ւթալու
Վաղակատար՝	կ'իրիր	կ'ո̈ւթացիր
Հարակատ.՝	կ'իրած	կ'ո̈ւթացած
Ենթակայակ.	կ'էրօղ	կ'ո̈ւթացօղ
Ըղձական՝	կ'իրի	կ'ո̈ւթա

Անկատար դերբայը ցույց է տալիս, որ այս բարբառը պատկանում է «Ս» ճյուղին։ «Ս» ճյուղի բարբառների մեծ մասի նման (Մեղրի, Կարճևան, Շաղախ), այս բարբառը ևս գործ է ածում օժանդակ բայի ներկայի ձևերը միայն։ Անցյալի գաղափարն արտահայտելու համար գործ է ածվում «էր» մասնիկ-բառը, որը օժանդակ բայի անցյալ անկատար ժամանակի երրորդ դեմքն է։ Այդ «էր» մասնիկ-բառը կորցրել է դեմքի նշանակությունը և արտահայտում է միմիայն անցյալի գաղափարը, ուստի և դրվում է բոլոր դեմքերի վրա։ Յուրաքանչյուր բաղադրյալ ժամանակի անցյալը կազմվում է ներկայի ձևերի վրա «էր» բառմասնիկն ավելացնելու միջոցով։ Միայն 3-րդ դեմքում «էր» բառ-մասնիկը գործ է ածվում և՛ իբրև դեմք ցույց տվող, և՛ իբրև ժամանակ ցույց տվող բառ-մասնիկ։ Օժանդակ բայի ներկա ձևը 3-րդ դեմքում դուրս է ընկնում, եթե նրա վրա ավելանում է «էր» բառ-մասնիկը։ Այդ ապացույց է, թե այդ «էր» բառ-մասնիկը հենց ինքը անցյալ անկատարի օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքն է (կ'իրած եմ «էր», կ'իրած ես «էր», կ'իրած «էր»)։

Ներկայի խոնարհումը կազմելիս բոլոր դեմքերի համար գործ է ածվում «կ'իրէս», «կ'ո̈ւթաս» դերբայները, միայն եզակի 3-րդ դեմքում է գործ ածվում «կ'իրէլ» դերբայը։ «Կ'իրէս», «կ'ո̈ւթաս» ձևերը կազմվել են «կ'իրէլիս», «կ'ո̈ւթալիս» ձևերից, քանի որ ժխտական խոնարհման ժամանակ գործ են ածվում ոչ թե «կ'իրէս», «կ'ո̈ւթաս» ձևերը, այլ «կ'իրէլի», «կո̈ւթալի» ձևերը (կ'իրէլի-ս, կ'ո̈ւթալի-ս ձևերից առաջացած)։

Ներկա

կ'իրէս եմ   կ'ո̈ւթաս եմ

կ՚իրէս ես	կ՚äռթաս ես
կ՚իրէլ ի՛	կ՚äռթալ ի՛
կ՚իրէս ենք	կ՚äռթաս ենք
կ՚իրէս էք	կ՚äռթաս էք
կ՚իրէս են	կ՚äռթաս են

Անցյալի անկատար

կ՚իրէս էմ էր	կ՚äռթաս եմ էր
կ՚իրէս ես »	կ՚äռթաս ես »
կ՚իրէս »	կ՚äռթաս »
կ՚իրէս էնք էր	կ՚äռթաս ենք »
կ՚իրէս էք »	կ՚äռթաս էք »
կ՚իրէս են »	կ՚äռթաս են »

Ապառնի

կ՚իրէլöւ յեմ	կ՚äռթալու յեմ
կ՚իրէլöւ յես	կ՚äռթալու յես
կ՚իրէլöւ յի	կ՚äռթալու յի
կ՚իրէլöւ յենք	կ՚äռթալու յենք
կ՚իրէլöւ յէք	կ՚äռթալու յէք
կ՚իրէլöւ յեն	կ՚äռթալու յեն

Անցյալի ապառնի

կ՚իրէլöւ յեմ էր	կ՚äռթալու յեմ էր
կ՚իրէլöւ յես »	կ՚äռթալու յես »
կ՚իրէլöւ յէր	կ՚äռթալու յէր
կ՚իրէլöւ յենք »	կ՚äռթալու յենք »
կ՚իրէլöւ յէք »	կ՚äռթալու յէք »
կ՚իրէլöւ յեն »	կ՚äռթալու յեն »

Վաղակատար

կ՚իրիր եմ	կ՚äռթացիր եմ
» ես	» ես
» ի	» ի
» ենք	» ենք
» էք	» էք
» են	» են

Անցյալի վաղակատար

կ՛իրիր	*եմ էր*	*կ՛ա̈ռթացիր*	*եմ էր*
»	*ես* »	»	*ես* »
»	*էր*	»	*էր*
»	*ենք՛* »	»	*ենք՛* »
»	*էք՛* »	»	*էք՛* »
»	*են* »	»	*են* »

Վաղակատարի «ր» վերջավորությունն Ուրմիայի բարբառը յուրացրել է Վանի բարբառից, իսկ անցյալ նշանակող անփոփոխ «էր» մասնիկը, հավանական է, Խոյի բարբառից։

Հարակատար

կ՛իրած	*եմ*	*կ՛ա̈ռթացած*	*եմ*
»	*ես*	»	*ես*
»	*ի*	»	*ի*
»	*ենք՛*	»	*ենք՛*
»	*էք՛*	»	*էք՛*
»	*են*	»	*են*

Անցյալի հարակատար

կ՛իրած	*եմ էր*	*կ՛ա̈ռթցած*	*եմ էր*
»	*ես* »	»	*ես* »
»	*էր*	»	*էր*
»	*ենք՛* »	»	*ենք՛* »
»	*էք՛* »	»	*էք՛* »
»	*են* »	»	*են* »

Անցյալ կատարյալ

Ուրմիայի բարբառը անցյալ կատարյալի առաջին դեմքում ունենում է «մ» վերջավորություն։ «Ե» խոնարհման կանոնավոր բայերը անցյալ կատարյալի հիմքում «ց» չունեն, բացի երրորդ դեմքից, վերջավորությունն ավելանում է ուղղակի արմատի վրա։ «Ա» խոնարհման կանոնավոր բայերը «ց» ունեն։

կ՛իրիմ	*կ՛ա̈ռթացիմ*
կ՛իրիր	*կ՛ա̈ռթացիր*
կ՛իրեց	*կ՛ա̈ռթաց*
կ՛իրինք՛	*կ՛ա̈ռթացինք՛*

կ՛իրիք	*կ՛ա̈ռթացիք*
կ՛իրին	*կ՛ա̈ռթացին*

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ըղձականի ապառնի ժամանակի ձևերը նման են ժամանակակից գրական լեզվին։

Անցյալի ապառնին ստանում է սովորական «էր» բառամասնիկը։

Ապառնի

կ՛ի րեմ	*կ՛ա̈ռթամ*
կ՛իր ես	*կ՛ա̈ռթաս*
կ՛իրի	*կ՛ա̈ռթա*
կ՛իրենք	*կ՛ա̈ռթանք*
կ՛իրէք	*կ՛ա̈ռթաք*
կ՛իրեն	*կ՛ա̈ռթան*

Անցյալի ապառնի

կ՛իրեմ էր	*կ՛ա̈ռթամ էր*
կ՛իրես »	*կ՛ա̈ռթաս »*
կ՛իրէր	*կ՛ա̈ռթար*
կ՛իրէնք»	*կ՛ա̈ռթանք »*
կ՛իրէք »	*կ՛ա̈ռթաք »*
կ՛իրեն »	*կ՛ա̈ռթան »*

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Պայմանական եղանակը կազմվում է ըղձական եղանակի ձևերից՝ ավելացրած «կը» եղանակիչը։

Ապառնի

կը կ՛երեմ	*կը կ՛ա̈ռթամ*
կը կ՛իրես	*կը կ՛ա̈ռթաս*
կը կ՛իրի	*կը կ՛ա̈ռթա*
կը կ՛երէնք	*կը կ՛ա̈ռթանք*
կը կ՛իվէք	*կը կ՛ա̈ռթաք*
կը կ՛իրեն	*կը կ՛ա̈ռթան*

Անցյալ ապառնի

կը կ՛երեմ էր	կը կ՛մ̈ռթամ էր
կը կ՛երես »	կը կ՛մ̈ռթաս »
կը կ՛երէր	կը կ՛մ̈ռթար
կը կ՛երէնք՛ »	կը կ՛մ̈ռթանք »
կը կ՛երէք՛ »	կը կ՛մ̈ռթաք »
կը կ՛երեն »	կը կ՛մ̈ռթան »

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հարկադրական եղանակը կազմում է պայմանական եղանակից, ավելացրած «տը» մասնիկը, որ հավանական է «պիտի» եղանակիչի մնացորդն է: Այսպիսով Ուրմիայի բարբառի հարկադրական եղանակիչը կազմված է պայմանական և հարկադրական եղանակիչներից՝ «տըկ՛ը»:

Ապառնի

տըկ՛ը կ՛երեմ	տըկ՛ը կ՛մ̈ռթամ
» կ՛երես	» կ՛մ̈ռթաս
» կ՛երի	» կ՛մ̈ռթա
» կ՛երէնք՛	» կ՛մ̈ռթանք
» կ՛երէք՛	» կ՛մ̈ռթաք
» կ՛երեն	» կ՛մ̈ռթան

Անցյալի ապառնի

տըկ՛ը կ՛երեմ էր	տըկ՛ը կ՛մ̈ռթամ էր
» կ՛երես էր	» կ՛մ̈ռթաս էր
» կ՛երէր	» կ՛մ̈ռթար
» կ՛երէնք՛ էր	» կ՛մ̈ռթանք էր
» կ՛երէք՛ էր	» կ՛մ̈ռթաք էր
» կ՛երեն էր	» կ՛մ̈ռթան էր

Ուրմիայի բարբառի որոշ խոսվածքներում «տը» եղանակիչը միացվում է «կը» եղանակիչին ոչ թե առաջից, այլ հետևից (կ՛ըտը):

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հրամայական եղանակում նույնպես «ե» խոնարհման բայերը հիմքում «ց» չունեն:

կ՛իրի	*կ՛ա̈ռթա*
կ՛իրէք՛	*կ՛ա̈ռթացէք՛*

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ուրմիայի բարբառի ժխտական խոնարհումը կազմված է սովորական «չ» մասնիկով։ Բաղադրյալ ժամանակներում այդ «չ» մասնիկը ավելանում է օժանդակ բայի վրա և օժանդակ բայի հետ ընկնում դերբայից առաջ. օրինակ՝

կ՛իրէս եմ էր—չեմ էր կ՛իրէլի։

Ժխտական խոնարհման ժամանակ գործածվում է «էլի» և «ալի» վերջավորություն ունեցող դերբայ, որ «ելիս» և «ալիս» (կ՛իրէլիս, կ՛ա̈ռթալիս) լրիվ ձևերից է ստացվել ս-ի կորուստի պատճառով.

կ՛իրէլիս > կ՛իրէլի *կ՛ա̈ռթալիս > կ՛ա̈ռթալի*

Այսպես է նաև «Լ» ճյուղի բարբառների ժխտականը (Խոյ, Մարաղա, Ագա), որով դրանք նմանվում են Ուրմիայի բարբառին։ Սակայն ընդհանուր սխեմին նայելով, այդ ձևը «Ս» ճյուղինն է և ոչ «Լ» ճյուղինը։ «Լ» ճյուղի «կըրէլ» և «կարթալ» անորոշ դերբայից չէին կարող ստացվել «կըրիլի» և «կարթալի» ձևերը, որովհետև անման համար պատճառներ չկան։ «Լ» ճյուղի ժխտականը պետք է լիներ «չէմ կառթալ», ինչպես որ գտնում ենք որոշ խոսվածքներում (Բազարչայ գյուղ)։ Չեմ կարթլի, չեմ կրելի ստացվել են «կարթալիս», «կիրելիս» ձևերից։ Այդ ձևերի մեջ «ս» հնչյունի թուլացումը տալիս է «յ» Հավարիկի բարբառում (Հավարիկի բարբառ՝ փ՛ա̈րդալիյ յեմ, չէմ փ՛ա̈րդալիս), որպիսի երևույթ տեղի է ունեցել նաև Ուրմիայի բարբառում, իսկ հետագայում յ հնչյունի անկումը բառավերջի ձայնավորից հետո շատ օրինաչափական է (հմմտ. տղայ—տղա, փեսայ—փեսա)։

Հետևաբար «Լ» ճյուղի մեջ եղած «կրելի», «կարթալի» ձևերը վերցված են «Ս» ճյուղից, հատկապես Ուրմիայի բարբառից։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկա

չեմ կ՛իրէլի	*չեմ կ՛ա̈ռթալի*
չես »	*չես »*
չի »	*չի »*

չենք՛ կ՛իրէլի	չենք՛ կ՛մա̈ռթալի
չէք՛ »	չէք՛ »
չեն »	չեն »

Անցյալի անկատար

չեմ էր կ՛իրէլի	չեմ էր կ՛մա̈ռթալի
չես » »	չես » »
չէր »	չէր »
չենք՛ » »	չենք՛ » »
չէք՛ » »	չէք՛ » »
չեն » »	չեն » »

Ապառնի

չեմ կ՛իրէլո̈ւ	չեմ կ՛մա̈ռթալու
չես »	չես »
չի »	չի »
չենք՛ »	չենք՛ »
չէք՛ »	չէք »
չեն »	չեն »

Անցյալի ապառնի

չեմ էր կ՛իրէլո̈ւ	չեմ էր կ՛մա̈ռթալու
չես » »	չես » »
չէր »	չէր »
չենք՛ » »	չենք՛ » »
չէք՛ » »	չէք՛ » »
չեն » »	չեն » »

Ապառնի ժամանակի մի քանի գործածություն օժանդակ բայը դնում է դերբայից հետո, այսինքն, դրական խոնարհման շարադրությունը պահպանելով նույնությամբ՝ օժանդակ բային սկզբից կցում է «չ» ժխտականը. օրինակ՝

Ինչի՞ չէկար, խօ քե՛զը ուտելու չեմ էր։

Տուն էթալո̈ւ չե՞ս։

Վաղակատար

Ժխտական խոնարհման ժամանակ «ե» խոնարհման բայերի վաղակատար դերբայը կորցնում է վերջին ր-ն, որով նմանվում է ժխտական խոնարհման պայմանական եղանակին։ Այս նույն

երևույթը տեղի է ունենում նաև Արթվինի բարբառում. օրի-նակ՝

Ուրմիայի բարբառ՝ կ՛երեր եմ—չեմ կ՛երի (վաղակատար)
կը կ՛երեմ—չեմ կ՛երի (պայմանական)

Արթվինի բարբառ՝ գըրիլ իմ—չեմ գըրի (վաղակատար)
կու գըրիմ—չեմ գըրի (պայմանական)

«Ա» խոնարհման բայերի վաղակատարը տարբեր է պայմա-նականից։

չեմ	կ՛երի	չեմ	կ՛ա̈ռթացի
չես	»	չես	»
չի	»	չի	»
չենք՛	»	չենք՛	»
չէք՛	»	չէք՛	»
չեն	»	չեն	»

Անցյալի վաղակատար

չեմ	էր	կ՛երի	չեմ	էր	կ՛ա̈ռթացի
չես	»	»	չես	»	»
չէր		»	չէր		
չենք՛	»	»	չենք՛	»	»
չէք՛	»	»	չէք՛	»	»
չեն	»	»	չեն	»	»

Հարակատար

չեմ	կ՛երած	չեմ	կ՛ա̈ռթացած
չես	»	չես	»
չի	»	չի	»
չենք՛	»	չենք՛	»
չէք՛	»	չէք՛	»
չեն	»	չեն	»

Անցյալի հարակատար

չեմ	էր	կ՛երած	չեմ	էր	կ՛ա̈ռթացած
չես	»	»	չես	»	»
չէր		»	չէր		»
չենք՛	»	»	չենք՛	»	»
չէք՛	»	»	չէք՛	»	»
չեն	»	»	չեն	»	»

Անցյալ կատարյալ

չըկ'իրիմ	*չըկ'ա̈ռթացիմ*
չըկ'իրիր	*չըկ'ա̈ռթացիր*
չըկ'իրեց	*չըկ'ա̈ռթաց*
չըկ'իրինք'	*չըկ'ա̈ռթացինք*
չըկ'երիք'	*չըկ'ա̈ռթացիք*
չըկ'իրին	*չըկ'ա̈ռթացին*

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

չըկ'իրեմ	*չըկ'ա̈ռթամ*
չըկ'իրես	*չըկ'ա̈ռթաս*
չըկ'իրի	*չըկ'ա̈ռթա*
չըկ'իրէնք'	*չըկ'ա̈ռթանք*
չըկ'իրէք'	*չըկ'ա̈ռթանք*
չըկ'իրեն	*չըկ'ա̈ռթան*

Անցյալի ապառնի

չըկ'իրեմ	*էր*	*չըկ'ա̈ռթամ*	*էր*
չըկ'երես	»	*չըկ'ա̈ռթաս*	»
չըկ'իրէր	»	*չըկ'ա̈ռթար*	»
չըկ'իրէնք	»	*չըկ'ա̈ռթանք*	»
չըկ'իրէք	»	*չըկ'ա̈ռթաք*	»
չըկ'իրեն	»	*չըկ'ա̈ռթան*	»

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

չեմ	*կ'իրի*	*չեմ*	*կ'ա̈ռթա*
չես	»	*չես*	»
չի	»	*չի*	»
չենք	»	*չենք*	»
չէք	»	*չէք*	»
չեն	»	*չեն*	»

Անցյալի ապառնի

չեմ	*էր*	*կ'իրի*	*չեմ*	*էր*	*կ'ա̈ռթա*
չես	»	»	*չես*	»	»

չէր		*կ'իրէ*	*չէր*		*կ'ա̈ութա*
չենք էր		»	*չենք էր*		»
չէք	»	»	*չէք*	»	»
չեն	»	»	*չեն*	»	»

«Գնալ» բայի փոխարեն Ուրմիայի բարբառը գործ է ա-ծում իթամ > իրթամ *բայի ձևերը սահմանականի* ներկա, անցյալի անկատար, ապառնի, անցյալի ապառնի *ժամանակներում և* ըղձական, պայմանական և հարկադրական *եղանակների ժամանակներում։* Անցյալ կատարյալ *ժամանակը,* վաղակատար, հարակատար և ենթակայական *դերբայները կազմվում են* գնալ *բայի ձևերով։* Հրամայական եղանակի *համար գործածվում է «քայլել» բայի ձևը (ք'է՛լ, ք'էլէ՛ք')։ Այսպիսով* գնալ *գաղափարը բոլոր ժամանակներով արտահայտելու համար բարբառս գործ է ածում երեք բայեր՝* գնալ, երթալ և քայլել։

Գնալ *բայը բոլոր ժամանակներում ստացած ունի սկզբի* ի *աճականը, որ փոխարինում է գրաբարյան* ե *աճականին։ Գրաբարյան բայը «ե» ստանում է* անցյալ կատարյալի *միավանկ ձևերի մեջ։ Ուրմիայի բարբառի անցյալ կատարյալում* ի *աճականի փոխարեն լինում է* է *(էկամ)։ Հրամայականի համար գործ է ածվում միանգամայն ուրիշ արմատ, որ է՝* յա̈ր։ *Այդ արմատը գրաբարի* յառնեմ—յարի *բայն է, որ գրական լեզվի մեջ գործ է ածվում* արի *ձևով։*

Ուրմիայի բարբառը պահպանել է այդ բայի բառասկզբի կիսաձայն յ-ն (յառնեմ—յա̈ր)։

Լինել *բայը այս բարբառում կանոնավոր բայ է, մինչդեռ գրաբարում և գրական լեզվի մեջ անկանոն է։*

Հառնեմ > խառնեմ *բայը գրաբարի օրինաչափությամբ է խոնարհվում իբրև սոսկածանցավոր բայ։*

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ.

	գնալ	գալ	լինել	խառնել
ԵԶԱԿԻ	*ք'է՛լ*	*յա̈ր*	*ըլը՛*	*խառը՛*
	մի՛ ք'էլ	*մի՛ յա̈ր*	*մի՛ ըլը*	*մի՛ խառը*
ՀՈԳՆԱԿԻ	*ք'էլէք'*	*յա̈րէք*	*ըլը՛էք'*	*խառէ՛ք'*
	մի՛ ք'էլէք'	*մի՛ յա̈րէք'*	*մի՛ ըլըէք'*	*մի՛ խառէք'*

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԿԵՐՊԻ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Պատճառական կերպի բայերը ստանում են ացուց *կամ* ե-ցուց *կերպածանցը, իսկ եթե սոսկածանցավոր են, ստանում են* ուց *կերպածանցը (*նստէցո̈ւցեմ, զուռցացուցեմ, խոսուցեմ*)։*

Հրամայականում ածանցի վերջին ց-ն *ընկնում է (*նստէցո̈՛, զուռցացու՛, խոսու՛*), ըստ որում հրամայական եղանակն ունենում է* ու *(*ո̈ւ*) վերջավորություն (հմմտ. գրաբար՝* ո*)։ Բոլոր ժամանակներում պատճառական կերպի բայերը ենթարկվում են* ե *խոնարհման։*

նըստէցո̈ւցէս էմ *զուռցացուցէս էմ* *խասուցէս էմ*
և այլն. *և այլն.* *և այլն.*

Անցյալի անկատար

նըստէցո̈ւցէս էմ էր *զուռցացուցէս էմ էր* *խասուցէս էմ էր*
և այլն. *և այլն.* *և այլն*

Ապառնի

նստէցո̈ւցէլո̈ւ յէմ *զուռցացուցէլո̈ւ յէմ* *խասուցէլո̈ւ յէմ*
և այլն. *և այլն.* *և այլն.*

Անցյալի ապառնի

նստէցո̈ւցէլո̈ւ յէմ էր *զուռցացուցէլո̈ւ յէմ էր* *խասուցէլո̈ւ յէմ էր*
և այլն. *և այլն.* *և այլն.*

Վաղակատար

նըստէցո̈ւցիր էմ *զուռցացուցիր էմ* *խասուցիր էմ*
և այլն. *և այլն.* *և այլն.*

Անցյալի վաղակատար

նըստէցո̈ւցիր էմ էր *զուռցացուցիր էմ էր* *խասուցիր էմ էր*
և այլն. *և այլն.* *և այլն.*

Հարակատար

նըստէցո̈ւցած էմ (կամ) զուռցացուցած էմ (կամ) խասուցած էմ
և այլն. *և այլն.* *և այլն.*

Հարկադրականում, ավելի հարմար է իբրև օժանդակ բայ գործածել կամ, կաս *և այլն, քան՝* էմ, էս *և այլն։*

Անցյալի հարակատար

նըստէցուցած եմ էր (կամ էր) — *զուռցացուցած եմ էր (կամ էր)*
և այլն. — *և այլն.*

խասուցած եմ էր (կամ էր) և այլն.

Անցյալ կատարյալ

նըստէցո̂ւցիմ	*զուռցացուցիմ*	*խասուցիմ*
նըստէցո̂ւցիր	*զուռցացուցիր*	*խասուցիր*
նըստէցո̂ւց	*զուռցացուց*	*խասուց*
նըստէցո̂ւցինք՛	*զուռցացուցինք՛*	*խասուցինք՛*
նըստէցո̂ւցիք՛	*զուռցացուցիք՛*	*խասուցիք՛*
նըստէցո̂ւցին	*զուռցացուցին*	*խասուցին*

Ուրմիայի բարբառի անցյալ կատարյալի խոնարհումը նման է գրաբարին, միայն Ուրմիայի բարբառը երբեմն հիմք վերցնում է բայերի անցյալ կատարյալի հիմքը, իսկ գրաբարը անորոշ դերբայի հիմքը (գրաբար՝ Նստուցի, *Ուրմիայի բարբառ՝* Նստէցո̂ւցիմ, *գրաբ.՝* հասուցի, *Ուրմիայի բարբառ՝* խասուցիմ*)։*

Հրամայականը կազմելու համար թե՛ գրաբարը և թե՛ Ուրմիայի բարբառը վերցնում են անցյալ կատարյալ ժամանակի երրորդ դեմքը և ջնջում ց *վերջավորությունը (գրաբ.՝* Նստեցոյց > *նստեցո. Ուրմիայի բարբառ՝* Նըստէցո̂ւց > Նըստէցո̂ւ*)։ Գրաբարի հրամայականում բառավերջի* յ*-ն միշտ դուրս է ընկնում։*

Հրամայական եղանակ

նստէցո̂ւ՛	*զուռցացո՛ւ*	*խասո՛ւ*
մի՛ նըստէցո̂ւ	*մի՛ զուռցացու*	*մի՛ խասու*
նըստէցո̂ւցէք՛	*զուռցացուցէք՛*	*խասուցէք՛*
մի՛ նստէցո̂ւցէք՛	*մի՛ զուռցացուցէք՛*	*մի՛ խասուցէք՛*

Ըղձական եղանակ

նըստէցո̂ւցեմ	*զուռցացուցեմ*	*խասուցեմ*
և այլն	*և այլն*	*և այլն*

Անցյալի ապառնի

նստէցո̂ւցեմ էր	*զուռցացուցեմ էր*	*խասուցեմ էր*
և այլն	*և այլն*	*և այլն*

Պայմանական և հարկադրական եղանակներ կազմվում են սովորական ձևով։

Ուրմիայի բարբառի մեջ մի հատկանշական գիծն էլ այն է, որ հոդերը դրվում են բայի վրա և փոխարինում են անձնական դերանունների հայցական հոլովին. օրինակ՝ ըրստեցո՞ւցիր խմդ—խս քեզ ըրստեցրել խմ, կանչիմդ—խս քեզ կանչեցի։ Գրաբարում նույնպես հոդը դրվում է բայի վրա, բայց նշանակում է անձնական դերանվան ուղղական հոլով. օրինակ՝ որ ասացերդ=դու, որ ասացիր։ Ուրմիայի բարբառի որոշյալ հոդն է «ա» կամ «ա̈» օրին. տունա > տունը, տա̈շտա̈ > դաշտը։

Մի նմուշ Ուրմիայի բարբառով

ԻԳԻԴ Քյ՚ՕՌ-ՕՂԼԻՆ[1]

Փո̈ւչ ա̈շխա̈րքյ՚ա̈ անցավուէր ի,
Մէնքյ՚ ըմմէնս էլ մահականացու,
Շա՛տ-շատէրն են էկ՚ի-ընցի,
Շա՛տ-շատէրն էլ կիկ՚ա̈ն-կըանեն։
Ցեղը մեռնի, կաշին կըմնա,
Մարթը վուէր մեռնի՝ անունա,
Խօշ էն մարթի հալին իկ՚ա̈,
Անուն կը թօղնի մա̈ռդանա.
Փիսի, նա̈մա̈ռդի անունա
Հա՛ կը հիշվի նըզօվվէլօվ.
Ամմա քաջ, մա̈ռդանա մարթէն
Կը հիշվի փառքօվ, կ՚օվա̈լօվ.
Փառք էն մարթի սուրփ անունին,
Վուէր ապրավ մա̈ռդի-մա̈ռդանա,
Սիրտը անվա̈խ, ճակատը պա̈ց,
Խեխչի, ինգ՚ածի հավադար.
Տա̈լա̈ր մընա էն իգ՚իդի
Իշատակը վուէրթէց-վուէրթի,
Վուէր զօռբայ տեմ չը խեխճացավ,
Վուէր խացի խըմար չը կ՚եղծեց.
Խա̈զա̈ր կ՚էցցէ էն իգ՚իդը,
Վուէր ազադթուէնը չը ծախեց
Մէ մատ ժէշտի, իխտիյարէի,
Կընգա, վուէնսկ՚ու, հանգ՚իստ գ՚ա̈նքյ՚ի։

---

[1] Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն, գրի առնված Գ. Թարվերդյանի կողմից. Արմֆան 1941 թ.

Նտեսք՛էրէն էր Ք՛օռ-Օղլին։
Իգ՛իդ էկավ էտ ա̈շխա̈րք՛ա̈,
Մա̈ռդի-մա̈ռդանա ապըրավ,
Հէշ մէ մարթու կըլօխ չէչո̈ւց։
Վա̈վ վուէր անիրավ իխտիյար
Ո̇ւզեց շաշ տա ո̈ւր լըմանին,
Վա̈վ վո̈ւէր զա̈ռօվ, զօռօվ ո̈ւզեց
Լօխպի, ճընջի բա̈ն-իսանին,
Էտ ջուռա̈նէրին Ք՛օռ-Օղլին
Իրան ա̈դալաթ դիվանօվ
Տա̈տեց, շատէրին ըսպանեց,
Շա̈տ շատէրի խօքին խանեց։
Մի́շտ աղէկ՛ին ք՛օ̈մա̈գ՛, պաշպան,
Վա̈տին, նա̈մա̈ռդին խօքըխան.
Անվա̈խ, անհա̈շիվ, անա̈րխա̈,
Ընչո̈ւկ՛ ա̈հէլութէնի կ՛ա̈խա̈.
Սաղ ո̈ւր ա̈մրին ազնիփ. պա̈րի,
Մէկ օր վուէտ չը տըրեց չարի.
Սիրտը խալխս խօքին պայծառ,
Ապրավ ընչո̈ւկ՛ իցցուն խիյ տարի։

Ք՛ՈՌ-ՕՂԼԻՆ ՈՒ «ԹՎԱ̈ՆԳ՛Ա̈»

Մէկ օր Ք՛օռ-Օղլին, ծին խէծած,
Շիք՛արէն յետ էր տա̈ռնալի.
Մէնակ էր, մարթ չըկար խէտա̈,
Թեխ Ջա̈մլի բէլ էր էթա̈լի։
Ճամխը յերզա̈ մէ խատ չօբան,
Տըսավ, վուէխչար ի պախէլի,
Թևէն էլ մէ պա̈ն ի կախի,
Մէ ղ̈ա̈րիբա̈ անծանօթ պա̈ն։
Վա̈րա̈վո̈ւրդ ա̈րեց Ք՛օռ-Օղլին,
Կըլխի չի́նգ՛ավ, թէ իշ պա̈ն ի.
Տա̈ռցավ, թէ՝ «Ա՛յ չօբան ախպէր,
Էտ ի՞նչ ի՝ կախիր ես թևէտ»։
— Էտիկ՛ աղա ջան, թըվա̈նգ՛ ի։
— Թըվա̈նգ՛ն ի́նչ պա̈ն ի, ա̈յ տըղա։
— Թըվա̈նգ՛ն, աղա ջան, ի́նչ ասեմ,
Ջատէն-զատ զարկ՛օղ սիլահ ի.

Յես մէ փաշայի չօբան եմ,
Կ'ընձացիր էր Փըռանգ'ըստան,
Էտ սիլահը դէն ի պէրի·
Տըվիր ի՝ վուէխչարը պախեմ.
Տարօվ վուէր ունէն զատէն-զատ
Կըզարկ'են, մարթու կըսպանեն.
Նուէր ի ավսար էկ'ի, աղա,
Շատ թարը-թաջիբաթ պան ի։
Ք'ոռ-Օղլին մընաց զարմացած
— Ա՛յ տըղա, ի՞շթար թէ զատէն.
Էտ ի՞շ ջուռա պուէչօվ սուէթ ի.
Ասածըտ գ'ինա՞ս հաստատէլ։
— Խա , աղա ջան. կունզե՞ս, ա՛յ էն
Ո՛ւլիս կ'ինը տու, ալըըհալ
Թըվանգ'օվ տամ քարի կըլխէն,
Ք'ալլայ վըրան կ'էտին պէրեմ։
Ք'ոռ-Օղլին խանեց մէ վուէսկ'ի,
— Դը զարկ', ա՛յ չօբան, մէ տըսնամ.
Խայիր գյազ էն ունը զատ ի,
Ի՞շթար տըկ'ի զարկես, ախըր։
Զօբանը էչուց թըվանգ'ա,
Վուէտը ք'աշէց, նըշան պըռնեց,
Վուէր կըրակեց, ունը քարէն
Ջարկ'ըվավ, ինգ'ավ կ'էտինա։
Էսխէտ Ք'ոռ-Օղլին ավտաց.
Առեց թըվանգ'ը, սըռճ-մըռճեց,
Տակէն-կլլխէն թամանդ արեց.
Խարցուց, թէ՝ «Տար իշկ'իլն ի՞նչ ի»։
Զօբանը մէյ-մէկ շաշ տըվեց,
— Ա՛յ, էտ բարութ ի, լըցես են,
Վրայէն գ'ունլլան ք'ըցես են,
Դը էտ չախմախ ի, էտ էլ քար,
Էտենց ք'աշես են, չըռթես են,
Զըռթէլուն կըրակ ի տալի,
Բիրդան բարութը վըռթալի,
Էն կըրակի թաբէն գ'ունլլան,
Թըռած լունլայէն էթալ ի,
. Էն էթալու թափի խէտա

Իշթա՛ր պա՛նի վուէր կըպնել ի,
Տալ՛ի դայ-դա՛րբա՛ր ա՛նէլի,
Ըսպանէլի, դա՛ղ գ՛ըցէլի։

Թ

Ըշկաց, ըշկաց ջօչ-Գ՛օռ-Օղլին,
Զա՛րկեց ծընգանըյ ձի՛ն ք՛աշեց.
— Վերչացա՛վ,— ասաց,— տա՛րէն յետ
Մա՛ռդ իգ՛իդի պա՛նը բօշ ի.
Թըվա՛նգ՛ը վուէր իջաթ էլավ,
Էլ մա՛ռդըթուէնը փօղմիշավ։
Տու՛ն էլ տա՛րէն յետ, Գ՛օռ-Օղլի,
Փասափուստ ժողել պէտկ՛ի.
Էրկու ջա՛նիմ մէյմէկ՛ու՛ն տեմ,
Սիրմա՛-ջլիջ տու՛ն իկ՛ա՛լու՛ն՝
Մա՛ռդ ինա՛ն նա՛մա՛ռդ իգ՛իդը
Ո՛ւրենցը շաշ են էր տալի.
Ուրաղան նա՛մա՛ռդն անբաշար,
Շուէտ մա՛ռդէն կուէխ էր ուտէլի
Հա՛ր մէյն ու՛ր հու՛նա՛րի գ՛օրա՛
Տեղ ու՛նէր մէյդանը մէջա.
Ամմա Թըվա՛նգ՛ը տու՛ն էկավ.
Նա՛մա՛ռդ մուխա՛նա՛թը կ՛առնի,
Կը մընի մէ պատի դալդա,
Կըդա՛րկ՛ի մա՛ռդին կը գ՛ըցի։
Մա՛նշու՛ր չ՛ա՛նի, վա՛յ ի մա՛ռդը,
Վա՛յ ի նա՛մա՛ռդը մուխա՛նա՛թ։
Թըվանգ՛ը էլավ, խավսըրվավ
Մա՛ռդը-նա՛մառդ, քաջը- վա՛խկուէտ։
Էլ ապրել չա՛ժի տա՛րէն յետ.
Մարթ մեռնի, մէ խէտ ազադվի,
Գ՛ա՛ն թէ պա՛ց աշկէրօվ տըսնի
Նա՛մա՛ռդին՝ Թըվա՛նգ՛ը ծեռա՛ն։
Ասաց, Թըվա՛նգ՛ը ցած Թա՛լեց,
Թըք՛եց վրան ջօչ Գ՛օռ-Օղլին,
Սըրտէն իշօ մէ թել կըռեն,
Գօռը փօշման քըշեց ու՛ր ծին.
Խասավ տունը, մա՛լու՛ն, բէք՛էփ,
Իրեսը կախ, ք՛էփը խարաբ...

ԲԱՌԵՐ

Իգʼիդ—քաջ
Շաշ տալ—ցույց տալ
Ա̈դալա̇թ—արդարադատ
Կʼա̈խ—ժամանակ
Շիքʼար—որսորդություն
Թվա̈նգʼ—հրացան
Սիլահ—զենք
Ջատէն-դատ—հեռվից հեռու
Ավսար իկʼա̈լ—աճել, առաջանալ
Թա̈ջիբաթ—զարմանք
Թա̈մա̈նդ անել—դիտել, նայել
Իշկʼիլ—գաղտնիք
Ղա̈նիմ—ախոյան
Անբաշար—անճարակ
Մա̈նշո̈ւր—հայտնի
Մա̈լո̈ւլ—տխուր
Բէքʼէփ—հիվանդ

3. ԿԱՐՃԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Հնչյունաբանություն

Կարճևանի բարբառի բաղաձայնական սիստեմը եռաստիճան է։ Այդպես է նաև Մեղրու բարբառը։ Գրաբարի ձայնեղները բառասկզբին սովորաբար մնում են ձայնեղ, բառամիջում նույնպես, առանձնապես ն *և* մ *ռնգայիններից հետո, երբ նույնիսկ խուլերն են ձայնեղ դառնում,*

Օրինակ՝ ձուկուն, վարդ, բիմբակ, գող, անգուղ, *չո̈ւր, կʼա̈ր-*դիլ *և այլն։*

Գ, կ, ք *բաղաձայնները քմայնանում են։ Խլացման դեպքեր կան, բայց հազվագյուտ են. օրինակ՝ քʼիշէր > գիշեր։*

Կարճևանի բարբառում կան քմային ձայնավորներ՝ ա̈, օ̈, ո̈ւ, օրինակ՝ գʼո̈ւլբա̈քʼ > գուլպա, քʼլօ̈ր > սեխ։

«Ն» և «ռ» երկբարբառային ձայնավորները չկան, բայց կա Ղարաբաղի բարբառի «ըէ» երկհնչյունը։

Գրաբարի համեմատությամբ բարբառում լինում են ձայնավորների հետևյալ համապատասխանությունները.

ա > ա ծանդր > ծանր, քար > քար

> ա̈. կʼա̈րդիլ > կարդալ, կʼա̈նիչ-կʼա̈րմիր > կանաչ-կարմիր

> է. դիժէր > դժուար, նիշէնվիլ > նշանուել։
> ի. քʹինչէղակ > կաչաղակ
> ö. հöրո̈ւր > հարիւր

է, ե > է. շէն > շէն
> ու. լո̈ւղո̈ւ > լեղու
> ու. մուծ > մեծ

ի > է. ծը̈էտ > ծիտ
> ա. քաթ > քիթ, վաղ > վիղ, ծարան > ծիրան

ո > օ. գʹօղ > գող
> ա. կավ > կով, ծավ > ծով
> ո̈. խընձո̈ւր > խնձոր
> վը̈. վըսկըռ > ոսկր
> ը̈. փըըր > փոր
> ի. հիվիվ > հովիւ

ու > ու. նախշում > նախշուտ, դուռն > դուրք
> ո̈ւ. շո̈ւտ-շո̈ւտ > շուտ-շուտ, բո̈ւթ > բութ
> օ. կըտօց > կտուց, մօկըն > մուկն։

«Հո» կապակցությունը Ղարաբաղի բարբառի նման լինում է վըէ. օրինակ հող > վըէղ, հոտ > վըէտ։

Գրաբարյան երկբարբառների դիմաց բարբառս ունի պարզ հնչյուններ. օրինակ՝ ձո̈ւն > ձիւն, լո̈ւս > լոյս, ած > այծ, մար > մայր։

Կարճևանի բարբառում կա կոշտ ը, որ նշանակում ենք ը̈ գրով։ Այդ հնչյունով հարուստ է և Շաղախի բարբառը։

Կարճևանի բարբառում շեշտը սովորաբար դրվում է նախավերջին վանկի վրա, միայն անկատար դերբայում շեշտն ընկնում է վերջին վանկի վրա։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարճևանի բարբառն ունի հետևյալ հոգնակիները.

Նա (*կլօխ—կլօխնա*), ար (*ակնը—ակնար*), տնան (*ծառ—ծըռըտնան*)։

Կարճևանի բարբառում կա 7 հոլով, բացառականը կազմվում է սեռականով և նէնցի մասնիկով, որ նույնն է Մեղրու բարբառի էնցից մասնիկի հետ։ Կարծում ենք, որ դա նէտնցից բառից պետք է առաջացած լինի։ Գործիական հոլովն ունի ավ, ներգոյական հոլովը՝ ում-ըմը վերջավորություն։ Գոյականների

մեծագույն մասը ենթարկվում է ու հոլովման թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում։ Հոգնակի սեռականից սկսած հոլովիչից առաջ լինում է օռ մասնիկը, որ եր կամ ար հոգնակիի վերափոխությունն է։

Եզակի

Ուղղ.	օբա	քար
Սեռ.	օբու	քարու
Տր.	օբուն	քարուն
Հայց.	օբա	քար
Բաց.	օբու հէնի	քարու հէնի
Գործ.	օբայօվ	քարօվ
Ներգ.	օբումը կամ օբու մանջին	քարումը կամ քարու մանջին

Հոգնակի

Ուղղ.	օբանան	քարար
Սեռ.	օբանօռու	քարօռու
Տր.	օբանօռուն	քարօռուն
Հայց.	օբանան	քարար
Բաց.	օբանօռու հէնի	քարօռու հէնի
Գործ.	օբանօռավ	քարօռավ
Ներգ.	օբանօռումը կամ օբանօռու մանջին	քարօռումը

Եզակի

Ուղղ.	տախտակ	տըվարած
Սեռ.	տախտակու	տըվարածու
Տր.	տախտակուն	տըվարածուն
Հայց.	տախտակ	տըվարած
Բաց.	տախտակու հէնի	տըվարածու հէնի
Գործ.	տախտակօվ	տըվարածօվ
Ներգ.	տախտակումը կամ տախտակու մանջին	տըվարածումը կամ տվարածու մանջին։

Եզակի

	Ծառ	Քուր
Ուղղ.	ծառ	քուր
Սեռ.	ծառու	քվէր
Տր.	ծառուն	քվէր
Հայց.	ծառ	քվէր
Բաց.	ծառու հէնի	քվէր հէնի
Գործ.	ծառավ	քվէրավ
Ներգ.	ծառըմը	քվէր մանջին

	Ախպիր—եղբայր	Հար—հայր
Ուղղ.	ախպիր	հար
Սեռ.	ախպուր	հոր
Տր.	ախպուր	հոր
Հայց.	ախպուր	հոր
Բաց.	ախպուր հէնի	հոր հէնի
Գործ.	ախպուրավ	հոր ավ
Ներգ.	ախպուր մանջին	հոր մանջին

Հոգնակի

Ուղղ.	ծըռըտնան	քուրար
Սեռ.	ծըռըտնօռու	քիվէրաց
Տր.	ծըռըտնօռուն	քիվէրաց
Հայց.	ծըռըտնօռու հէնի	քիվէրաց հէնի
Գործ.	ծըռըտնօռավ	քիվէրավ
Ներգ.	ծըռըտնօռըմը	քիվէրաց մանջին

Ուղղ.	ախպէրնա	հարար
Սեռ.	ախպէրնօռու	հարօռու
Տր.	ախպիրնօռուն	հարօռուն
Հայց.	ախպիրնօռու հէնի	հարօռու հէնի
Գործ.	ախպիրնօռավ	հարօռավ
Ներգ.	ախպիրնօռու մանջին	հարօռու մանջին

Դերանունների հոլովումը

Կարճևանի բարբառի դերանունների հոլովումը հիշեցնում է Մեղրու և Շաղախի բարբառները, սակայն ունի նաև իր առանձ-

նահատակություններըː Դու դերանվան տրականը լինում է քի, բացառականը՝ քի հէնի, ան դերանվան տրականը՝ ո̇ւ̇նդո̇ւ̇ր, բացառականը՝ ո̇ւ̇նդո̇ւ̇ր հէնի։ Ես, ադ, ան դերանունների հոգնակին լինում է իստուք, իտուք, ինդուք, առանց քմայնացման, մինչդեռ մնացած հոլովներում հոգնակի ձևերը քմայնանում են։

Անձնական դերանուններ

Եզակի

Ուղղ.	ես	դու
Սեռ.	իմ	քու
Տր.	ինձ	քի
Հայց.	ինձ	քի
Բաց.	ինձ հէնի	քի հէնի
Գործ.	ինձէնա̈վ	քինա̈վ
Ներգ.	իմ մանջին	քու մանջին

Հոգնակի

Ուղղ.	միք	դուք
Սեռ.	մը̊ր	ձիր
Տր.	միզ	ձիզ
Հայց.	միզ	ձիզ
Բաց.	միզ հէնի	ձիզ հէնի
Գործ.	միզանավ	ձիզանավ
Ներգ.	միզանում	ձիզանում
	մը̊ր մանջէն	ձիր մանջին

Ցուցական դերանուններ

Եզակի

Ուղղ.	աս	ադ	ան
Սեռ.	ո̇ւ̇ստո̇ւ̇ր	ո̇ւ̇դո̇ւ̇ր	ո̇ւ̇նդո̇ւ̇ր
Տր.	»	»	»
Հայց.	»	»	»
Բաց.	ո̇ւ̇ստո̇ւ̇ր հէնի	ո̇ւ̇դո̇ւ̇ր հէնի	ո̇ւ̇նդո̇ւ̇ր հէնի
Գործ.	ո̇ւ̇ստո̇ւ̇րա̈նա̈վ	ո̇ւ̇դո̇ւ̇րա̈նա̈վ	ո̇ւ̇նդո̇ւ̇րա̈նա̈վ
Ներգ.	ո̇ւ̇ստո̇ւ̇րա̈նո̇ւ̇մ	ո̇ւ̇դո̇ւ̇րա̈նո̇ւ̇մ	ո̇ւ̇նդո̇ւ̇րա̈նո̇ւ̇մ
	կամ	կամ	կամ
	ո̇ւ̇ստո̇ւ̇ր մանջին	ո̇ւ̇դո̇ւ̇ր մանջին	ո̇ւ̇նդո̇ւ̇ր մանջին

Հոգնակի

Ուղղ.	խստուք	իդուք	ինդուք
Սեռ.	ո̈նստո̈ց	ո̈նդո̈ց	ո̈նդո̈ց
Տր.	»	»	»
Հայց.	»	»	»
Բաց.	ո̈նստո̈ց հէնի	ո̈նդո̈ց հէնի	ո̈նդո̈ց հէնի
Գործ.	ո̈նստո̈ցա̈նա̈վ	ո̈նդո̈ցա̈նա̈վ	ո̈նդո̈ցա̈նա̈վ
Ներգ.	ո̈նստո̈ց մանջին	ո̈նդո̈ց մանջին	ո̈նդո̈ց մանջին

ՀԱՐՑԱԿԱՆ ԵՎ ԱՑՈՒՅՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Եզակի

Ուղղ.	հո̈՞վ (ով)	հ՞ինչ	ումունցավուն (բոլորը)
Սեռ.	հո̈՞ր	հինչթու	ումմուցու
Տր.	»	հինչթուն	ումմուցուն
Հայց.	»	հի՞նչ	ումմուցուն
Բաց.	հո̈՞ր հէնի	հի՞նչու հէնի	ումմուցու հէնի
Գործ.	հո̈՞րա̈նա̈վ	հի՞նչավ	ումմուցանավ
Ներգ.	հո̈՞ր մանջին	հի՞նչու մանջին	ումմուց ու մանջին

Ուրպի՞սի հարցականը ունի ճիճչո՞ւր ձևը։

ԹՎԱԿԱՆՆԵՐ

Կարճևանի բարբառը համարում է հետևյալ կերպ.

Մին, յօկու, իրիք՛, չօք, հա̈նգ՛, վից, յօխտ, օթ, յայնը, տասը, տասնըմին, տասնըյօկու, տըչչօք, քսան, յէրէսուն, հիսուն, վացցուն, յըխտանասուն, ութսուն, հճո̈ր, հազար։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Կարճևանի բարբառի խոնարհումը որոշ չափով հիշեցնում է Մեղրու բարբառի, մասամբ և Ագուլիսի բարբառի խոնարհումը։ Սակայն Կարճևանի բարբառը ներկայացնում է խոնարհման այլ առանձնահատկություններ։

ԲԱՅԵՐ

Կարճևանի բարբառի անորոշ դերբայն ունենում է իլ *(կյա̈րդիլ),* էլ *(նէլ > գնալ, լէլ > լալ),* ալ *(ա̈լ) (թըշշալ, մընալ),* ուլ *(գուլ > գալ), այսինքն համարյա այնքան վերջավորություններ,*

Հոգնակի

Ուղղ.	*խստուք*	*իդուք*	*ինդուք*
Սեռ.	*ո̇ւստո̇նց*	*ո̇ւդո̇նց*	*ո̇ւնդո̇նց*
Տր.	»	»	»
Հայց.	»	»	»
Բաց.	*ո̇ւստո̇նց հէնի*	*ո̇ւդո̇նց հէնի*	*ո̇ւնդո̇նց հէնի*
Գործ.	*ո̇ւստո̇նցա̈նա̈վ*	*ո̇ւդո̇նցա̈նա̈վ*	*ո̇ւնդո̇նցա̈նա̈վ*
Ներգ.	*ո̇ւստո̇նց մանջին*	*ո̇ւդո̇նց մանջին*	*ո̇ւնդո̇նց մանջին*

ՀԱՐՑԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Եզակի

Ուղղ.	*հո̇՞վ (ով)*	*հ՞ինչ*	*ումունցավուն (բոլորը)*
Սեռ.	*հո̇ւ՞ր*	*հինչու*	*ումմուցու*
Տր.	»	*հինչուն*	*ումմուցուն*
Հայց.	»	*հի՞նչ*	*ումմուցուն*
Բաց.	*հո̇ւ՞ր հէնի*	*հի՞նչու հէնի*	*ումմուցու հէնի*
Գործ.	*հո̇ւ՞րա̈նա̈վ*	*հի՞նչավ*	*ումմուցանավ*
Ներգ.	*հո̇ւ՞ր մանջին*	*հի՞նչու մանջին*	*ումմուց ու մանջին*

Որպի՞սի *հարցականը ունի* ինչպիսի՞ *ձևը։*

ԹՎԱԿԱՆՆԵՐ

Կարճևանի բարբառը համարում է հետևյալ կերպ.

Մին, յուկու, իրիք՛, չոք, հա̈նգ՛, վից, յոխտ, օթ, յայնը, տասը, տասնըմին, տասնըյուկու, տըչչոք, քսան, յէրէսուն, հիսուն, վացցուն, յըխտանասուն, ութսուն, հճո̇ւր, հազար։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Կարճևանի բարբառի խոնարհումը որոշ չափով հիշեցնում է Մեղրու բարբառի, մասամբ և Ագուլիսի բարբառի խոնարհումը։ Սակայն Կարճևանի բարբառը ներկայացնում է խոնարհման այլ առանձնահատկություններ։

ԴԵՐԲԱՅՆԵՐ

Կարճևանի բարբառի անորոշ դերբայն ունենում է իլ *(կ՛ա̈րդիլ),* էլ *(նէլ > գնալ, լէլ > լալ),* ալ *(ա̈լ) (թըշշալ, մընալ),* ուլ *(գուլ > գալ), այսինքն համարյա այնքան վերջավորություններ,*

որքան գրաբարը։ Անորոշ դերբայի լ վերջավորությունը փափուկ է արտասանվում։

Անկատար դերբայն ունենում է յ վերջավորություն բոլոր դեմքերի համար, բացի եզակի երրորդ դեմքից, և ս վերջավորություն եզակի երրորդ դեմքի համար։ Այս յ վերջավորությունը ավելանում է խոնարհիչի վրա (կ՚ըրդէյ, նէյ, Թըշշայ, գույ), իսկ ս վերջավորությունը այդ յ-ն ունեցող ձևի վրա, բացի ի խոնարհման բայերից, որոնք կորցնում են յ վերջավորությունը (կ՚ըրդիս, նէյս, մընայս, գույս)։

Երբ օժանդակ բայը դերբայից առաջ է ընկնում, այդ դեպքում ի խոնարհման բայերն ունենում են իս վերջավորություն (իս իմ կ՚ըրդիս), մյուսները համապատասխանաբար՝ էյս, այս ույս (իս իմ նէյս, իս իմ Թըշշայս, իս իմ գույս)։ Այդ նշանակում է, թե յ-ն ստացվել է լ-ից, այսինքն՝

նէլիս > նէյիս > նէյս
Թշշալիս > Թըշայիս > Թըշշայս
գուլիս > գույիս > գույս։

Այդ վերջին վանկի կորուստը տեղի է ունեցել նախորդ վանկի շեշտընկալության հետևանքով և այդ պատճառով էլ անկատար դերբայի շեշտը վերջին վանկի վրա է։ Ապառնի դերբայի կազմությունը նման է Մեղրու բարբառին, այսինքն կազմվում է ական մասնիկը անորոշ դերբային ավելացնելով՝ կ՚ըրդալական, նէլական, մընըլական, գուլական։ Այդ ձևերն անպայման կ՚ըրդիլաց, նէլաց, մընըլաց, գուլաց ձևերի և ական ածանցի միացումից է կազմվել, ըստ որում ածանցման մեջ ց-ն տարրալուծվել է ս հնչյունի։ Կ՚ըրդիլաց,—կըրդըլաց,—նէլաց,—մընըլաց,—գուլաց ձևերը անորոշ դերբայի հոգնակի սեռական ձևերն են, որ ինքնին արտահայտում են ապառնիի գաղափարը, ինչպես գրաբարում, որտեղ ապառնի դերբայը անորոշ և անցյալ դերբայների սեռական հոլովն է (գրել > գրելոց, մնացեալ > մնացելոց)։

Վաղակատար դերբայը կազմվում է սովորական ձևով ալ վերջավորությամբ (կ՚ա̈րդալ, նիալ, մընալ, իկ՚ա̈լ)։

Հարակատարը նույնպես սովորական ած վերջավորությունն ունի, միայն Ագուլիսի և Մեղրու բարբառների նման ացած ձևի փոխարեն ունենում է ահած ձևը (կ՚ա̈րդած, նիյա̈ծ, մընահած, իկ՚ա̈ծ)

ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐ

Կարճևանի բարբառի եղանակային ձևերը կազմվում են դեր-բայով և օժանդակ բայով, բացի ըղձական ապառնի ձևից։

Սահմանական ներկան կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի յիմ, յիս, *ա̈,* յիք՛, յիք՛, յին *ձևերով, ըստ որում հոգնակի առաջին և երկրորդ դեմքերը նույնն են։*

Օրինակ

կ՚ը̊րդիյ յիմ — կարդում եմ
կ՚ը̊րդիյ յիս — կարդում ես
կ՚ը̊րդիս ա̈ — կարդում է
կ՚ը̊րդիյ յիք՛ — կարդում ենք
կ՚ը̊րդիյ յիք՛ — կարդում եք
կ՚ը̊րդիյ յին — կարդում են

նէյ յիմ — գնում եմ
նէյ յիս — գնում ես
նէյս ա̈ — գնում է
նէյ յիք՛ — գնում ենք
նէյ յիք՛ — գնում եք
նէյ յին — գնում են

ծնայ յիմ — ծնում եմ
ծնայ յիս — ծնում ես
ծնայս ա̈ — ծնում է
ծնայ յիք՛ — ծնում ենք
ծնայ յիք՛ — ծնում եք
ծնայ յին — ծնում են

գուլ յիմ — գալիս եմ
գուլ յիս — գալիս ես
գուլս ա̈ — գալիս է
գուլ յիք՛ — գալիս ենք
գուլ յիք՛ — գալիս եք
գուլ յին — գալիս են

Եզակի երրորդ դեմքի օժանդակ բայը լինում է միշտ քմայնացած ա *(ա̈), մյուս դեմքերի համար գործածվում է օժանդակ բայի արմատի* ի *արտասանությունը։*

Օժանդակ բայը դերբայից առաջ ընկնելիս օժանդակ բայի արմատը միայն առաջին դեմքում (եզակի և հոգնակի) է ունենում ի, *իսկ մյուս դեմքերում, բացի եզակի երրորդ դեմքից, ունենում է* ը*։ Այդ դեպքում հոգնակի երկրորդ դեմքը տարբերվում է հոգնակի առաջին դեմքից, կորցնելով նաև* ք *վերջավորության քմայնացումը (ըք)։*

իս	իմ կ'ըրդիս		իս իմ մնայս
դու	ըս	»	դու ըս »
ան	ա̈	»	ան ա̈ »
միք'	իք'	»	միք' իք' »
դուք	ըք	»	դուք ըք »
ինդուք	ըն	»	ինդուք ըն »

իս իմ նէյս	իս իմ գուլյս
դու ըս »	դու ըս »
ան ա̈ »	ան ա̈ »
միք' իք' »	միք' իք' »
դուք ըք »	դուք ըք »
ինդուք ըն »	ինդուք ըն »

Անցյալի անկատարը, ինչպես և բոլոր բաղադրյալ ժամանակների անցյալը կազմվում է «լէ» անփոփոխ մասնիկով, որ լա̈լ > ըլալ (եղել) բայից է առաջացել (Ղափան՝ ըլա̈լ > Հադրութ՝ լա̈լ > Մեղրի՝ լա̈ > Կարճևան՝ լէ)

Անցյալի անկատար

կ'ըրդիյ յիմ	լէ	— կարդում էի
կ'ըրդիյ յիս	»	— կարդում էիր
կ'ըրդիս ա̈	»	— կարդում էր
կ'ըրդիյ յիք'	»	— կարդում էինք
կ'ըրդիյ յիք'	»	— կարդում էիք
կ'ըրդիյ յին	»	— կարդում էին
նէյ յիմ	լէ	— գնում էի
նէյ յիս	»	— գնում էիր
նէյս ա̈	»	— գնում էր
նէյ յիք'	»	— գնում էիք
նէյ յիք'	»	— գնում էիք
նէյ յին	»	— գնում էին
մնայ յիմ	լէ	— մնում եյի
մնայ յիս	»	— մնում էյիր
մնայս ա̈	»	— մնում էր
մնայ յիք'	»	— մնում եյինք
մնայ յիք'	»	— մնում էիք
մնայ յին	»	— մնում էին

գուլ յիմ	լէ	—	գալիս էի
գուլ յիս	»	—	գալիս էիր
գուլյա ա̈	»	—	գալիս էր
գուլ յիք'	»	—	գալիս էինք
գուլ յիք'	»	—	գալիս էիք
գուլ յին	»	—	գալիս էին

Ես էի, դու էիր, նա էր, մենք էինք, դուք էիք, նրանք էին ձևերը Կարճևանի բարբառում լինում են՝ իս իմ լէ, դու ըս լէ, ան ա̈ լէ, միք' իք լէ, դուք ըք լէ, ինդուք ըն լէ։

Օժանդակ բայը դերբայից առաջ ընկնելու դեպքում լէ բառամասնիկն ընկնում է օժանդակ բայից հետո, դերբայից առաջ։

Անցյալի անկատար

իս	իմ	լէ	կ'ըրդիս	իս	իմ	լէ	նէյս
դու	ըս	»	»	դու	ըս	»	»
ան	ա̈	»	»	ան	ա̈	»	»
միք'	իք'	»	»	միք'	իք'	»	»
դուք	ըք	»	»	դուք	ըք	»	»
ինդուք	ըն	»	»	ինդուք	ըն	»	»

իս	իմ	լէ	մնայս	իս	իմ	լէ	գուլյս
դու	ըս	»	»	դու	ըս	»	»
ան	ա̈	»	»	ան	ա̈	»	»
միք'	իք'	»	»	միք'	իք'	»	»
դուք	ըք	»	»	դուք	ըք	»	»
ինդուք	ըն	»	»	ինդուք	ըն	»	»

Ապառնին ու անցյալի ապառնին կազմվում են ներկայի և անցյալի անկատարի նմանությամբ, ապառնի դերբայով։ Ապառնիում օժանդակ բայի երրորդ դեմքն է ա, մնացած դեմքերում օժանդակ բայն ունենում է արմատում ը ձայնավոր։

Ապառնի

կ'ըրդըլասկան	ըմ	նիլասկան	ըմ
»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա
»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն

ժը̈նը̈լական	ըմ	գուլական	ըմ
»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա̈
»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն

Անցյալի ապառնի

կ՛ը̈րդը̈լական	ըմ	լէ	նիլական	ըմ	լէ
»	ըս	»	»	ըս	»
»	ա̈	»	»	ա	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըն	»	»	ըն	»

մընըլական	ըմ	լէ	գուլական	ըմ	լէ
»	ըս	»	»	ըս	»
»	ա	»	»	ա	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըն	»	»	ըն	»

Կարճևանի բարբառը վաղակատար ժամանակներ չունի, վաղակատար ձևը գործ է ածվում իբրև անցյալ կատարյալ (Մեղրու, Շաղախի և Ագուլիսի բարբառների նման)։

Այսպես են նաև Ղափանի հարավում և Մեղրու շրջանում գտնվող մի շարք գյուղերի խոսվածքները (Կուրիս, Գուդեմնիս, Սրաշեն, Եղվարդ, Հ՛ըգ՛ա̈րա̈գ՛ և այլն)։

Այդ ապացույց է, թե երբեմնի ամբողջ Արևիքը և Ղափանը (Կապանը) խոսում էին մի ընդհանուր բարբառով։ Այդ բարբառով խոսողների ցեղատոհմական միության լեզվական մտածողության մեջ ընդհանուր հայկական վաղակատարի և անցյալ կատարյալի տարբերության ըմբռնումը չկար։ Ցեղա-տոհմական լեզվական այդ հատկանիշները պատկանել են սոկերի *(զոկերի) և* մարդերի *ցեղախմբերին, որոնց հետ խաչավորվելով* սիուճի *ժողովրդի հարավային խումբը կազմել է* սի-սոկ-անք-ը *(*սի *և* սոկ*)։ Դրա ապացույցն այն է, որ այդ հատկանիշն ուժեղանում է* Մեղրիում, Կարճևանում, Շաղախում և Ագուլիսում:

Հարակատար

Կարճևանի բարբառի հարակատարը կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ըմ, ըս, ա՛, ըք, ըք, ըն ձևերով, անցյալի հարակատարը՝ նույնի վրա ավելացրած լէ բառ-մասնիկը։

կ'ա՛րդած ըմ	նիյա՛ծ ըմ	մընահած ըմ	իկ'ա՛ծ ըմ
» ըս	» ըս	» ըս	» ըս
» ա՛	» ա՛	» ա՛	» ա՛
» ըք	» ըք	» ըք	» ըք
» ըք	» ըք	» ըք	» ըք
» ըն	» ըն	» ըն	» ըն

Անցյալի հարակատար

կ'ա՛րդած ըմ լէ	նիյա՛ծ ըմ լէ
» ըս »	» ըս »
» ա՛ »	» ա՛ »
» ըք »	» ըք »
» ըք »	» ըք »
» ըն »	» ըն »

մընահաց ըմ լէ	իկ'ա՛ծ ըմ լէ
» ըս »	» ըս »
» ա՛ »	» ա՛ »
» ըք »	» ըք »
» ըք »	» ըք »
» ըն »	» ըն »

Հարակատար ժամանակներն արտահայտում են միաժամանակ և՛ հարակատարի և՛ վաղակատարի գաղափարները. օրինակ. կ'ա՛րդած ըմ—կարդացել եմ, կարդացած եմ. նիյա՛ծ ըմ—գնացել եմ, գնացած եմ,
կ'ա՛րդած ըմ լէ—կարդացել էի, կարդացած էի, նիյա՛ծ ըմ լէ—գնացել էի, գնացած էի։

Անցյալ կատարյալ

Կարճևանի բարբառը անցյալ կատարյալ կազմում է վաղակատար դերբայով (կ'ա՛րդալ, մընահալ) և օժանդակ բայի ըմ, ըս, ա՛, ըք, ըք, ըն ձևերով։

կ՛ա̈րդալ ըմ—կարդացի
կ՛ա̈րդալ ըս—կարդացիր
կ՛ա̈րդալ ա —կարդաց
կ՛ա̈րդալ ըք—կարդացինք
կ՛ա̈րդալ ըք—կարդացիք
կ՛ա̈րդալ ըն—կարդացին

նիյալ ըմ—գնացի
նիյալ ըս—գնացիր
նիյալ ա —գնաց
նիյալ ըք—գնացինք
նիյալ ըք—գնացիք
նիյալ ըն—գնացին

մընահալ ըմ—մնացի
մընահալ ըս—մնացիր
մընահալ ա —մնաց
մընահալ ըք—մնացինք
մընահալ ըք—մնացիք
մընահալ ըք—մնացին

իկ՛ա̈լ ըմ—յեկա
իկ՛ա̈լ ըս —յեկար
իկ՛ա̈լ ա —յեկավ
իկ՛ա̈լ ըք—յեկանք
իկ՛ա̈լ ըք—յեկաք
իկ՛ա̈լ ըն—յեկան

Ըղձական եղանակ

Ըղձական եղանակի ապառնին կանոնավոր կերպով կազմվում է անորոշ դերբայից (վերջավորությունը փոխելով մ-ի (կ՛ա̈րդիլ—կ՛ա̈րդիմ)։

Ըղձական ապառնի

կ՛ա̈րդիմ —կարդամ
կ՛ա̈րդիս —կարդաս
կ՛ա̈րդի —կարդա
կ՛ա̈րդիք՛ —կարդանք
կ՛ա̈րդիք՛ —կարդաք
կ՛ա̈րդին —կարդան

նէմ —գնամ մընամ
նէս —գնաս մընաս
նէ —գնա մընա
նէք՛—գնանք մընանք
նէք՛—գնաք մընաք
նէն —գնան մընան

գում —գամ
գուս —գաս
գու —գա
գուք —գանք
գուք —գաք
գուն —գան

Ըղձական անցյալի ապառնին կազմվում է սովորական լէ բառ-մասնիկով, որ ավելանում է ապառնիի վրա։

Ըղձական անցյալ ապառնի

կ՛ա̈րդիմ լէ—կարդայի
կ՛ա̈րդիս »—կարդայիր

նէմ լէ—գնայի
նէս »—գնայիր

կ'ա̈րդի լէ—կարդար	նէ լէ—գնար
կ'ա̈րդիք' »—կարդայինք	նէք' »—գնայինք
կ'ա̈րդիք' »—կարդայիք	նէք' »—գնայիք
կ'ա̈րդին »—կարդային	նէն »—գնային

մընամ լէ—մնայի	գում լէ—գայի
մընաս » —մնայիր	գուս » —գայիր
մընա » —մնար	գու » —գար
մընաք » —մնայինք	գուք » —գայինք
մընաք » —մնայիր	գուք » —գայիք
մընան » —մնային	գուն » —գային

Պայմանական եղանակը

Պայմանական եղանակի ապառնին կազմվում է անորոշ դերբայով (ինչպես Մեղրու, Շաղախի և Ագուլիսի բարբառները) և օժանդակ բայի ներկայի ձևերով։

Պայմանական ապառնի

կ'ա̈րդիլ իմ —կկարդամ	նէլ իմ —կգնամ
կ'ա̈րդիլ իս —կկարդաս	նէլ իս —կգնա
կ'ա̈րդիլ ա̈ —կկարդա	նէլ ա̈ —կգնա
կ'ա̈րդիլ իք'—կկարդանք	նէլ իք';—կգնանք
կ'ա̈րդիլ իք'—կկարդաք	նէլ իք' —կգնաք
կ'ա̈րդիլ ին —կկարդան	նէլ ին —կգնան

մընալ ըմ —կմնամ	գուլ ըմ—կգամ
մընալ ըս —կմնաս	բուլ ըս—կգաս
մընալ ա̈ —կմնա	գուլ ա —կգա
մընալ ըք —կմնանք	-կուլ ըք—կգանք
մընալ ըք —կմնաք	գուլ ըք—կգաք
մընալ ըն —կմնան	գուլ ըն—կգան

Պայմանական անցյալի ապառնին կազմվում է պայմանական ապառնիից, վրան ավելացրած անցյալ ցույց տվող լէ բառ-մասնիկը։

Պայմանական անցյալի ապառնի

կ'ա̈րդիլ ըմ լէ—կկարդայի	նէլ իմ լէ—կգնայի
կ'ա̈րդիլ իս »—կկարդայիր	նէլ իս »—կգնայիր
կ'ա̈րդիլ ա̈ »—կկարդար և այլն.	նէլ ա̈ »—կգնար և այլն.

մընալ ըմ լէ—կմնայի
մընալ ըս » —կմնայիր
մընալ ա̈ »—կմնար և այլն.

գուլ ըմ լէ—կգայի
գուլ ըս » —կգայիր
գուլ ա »— կգար և այլն։

Հարկադրական եղանակ

Հարկադրական եղանակը կազմվում է ըղձականի ձևերով, որոնց ավելացվում է միայն այս բարբառին հատուկ մա̈լլա̈ եղանակիչը, որ համասար է գրական լեզվի պիտի եղանակիչին։

Հարակատար ապառնի

մա̈լլա̈ կ'ա̈րդիմ —պիտի կարդամ
» կ'ա̈րդիս — » կարդաս
» կ'ա̈րդի — » կարդա
» կ'ա̈րդիք'— » կանդանք
» կ'ա̈րդիք'— » կարդաք
» կ'ա̈րդին — » կարդան

մա̈լլա̈ նէմ —պիտի գնամ
» նէս — » գնաս
» նէ — » գնա
» նէք'— » գնանք
» նէք'— » գնաք
» նէն — » գնան

մա̈լլա̈ մընամ—պիտի մնամ
» մընաս — » մնաս
» մընա — » մնա
» մընաք— » մնանք
» մընաք— » մնաք
» մընան— » մնան

մա̈լլա̈ գում—պիտի գամ
» գուս— » գաս
» գու — » գա
» գուք— » գանք
» գուք— » գաք
» գուն— » գան

Հարկադրական անցյալի ապառնին կազմվում է սովորական ղի մասնիկ-բառով, որ ավելանում է ապառնիի վրա։

Հարկադրական անցյալի ապառնի

մըլլա̈ կ՚ա̈րդիմ լէ—պիտի կարդայի
» կ՚ա̈րդիս լէ—պիտի կարդայիր
» կ՚ա̈րդի լէ—պիտի կարդար
և այլն.

մըլլա̈ նէմ լէ—պիտի գնայի
» նէս լէ—պիտի գնայիր
» նէ լէ—պիտի գնար
և այլն.

մըլլա̈ մընամ լէ—պիտի մնայի
» մընաս լէ—պիտի մնայիր
» մընա լէ—պիտի մնար
և այլն.

մըլլա̈ գուամ լէ—պիտի գայի
» գուաս լէ—պիտի գայիր
» գուա լէ—պիտի գար
և այլն.

Հրամայական եղանակ

Հրամայական եղանակը կազմվում է երկու կերպ, ց վերջավորությամբ (եզակի երկրորդ դեմքում) և առանց այդ վերջավորության։ Ց *ունեն սովորաբար* ան-են *սոսկածանց ունեցող բայերը, երբեմն և գրաբարում* ի *խոնարհման պատկանած բաները։ Հոգնակին ունենում է* իք՛ *վերջավորությունը։*

Կ՚ա̈րդա̈՛, կ՚ա̈րդէցիք՛, նի՛ (գնա), նէցիք՛—գնացեք, մընա՛ մնացիք՛, յէք՛, յէկ՚իք՛, հըսաց (հասի՛ր), հըսէցիք՛, խուսէց (խոսի՛ր), խուսէցիք՛։

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ժխտական խոնարհումը կազմվում է չ մասնիկով, որ ավելանում է օժանդակ բայի սկզբին։ Այդ դեպքում օժանդակ բայն ունենում է ի *ձայնավոր բոլոր դեպքերում և կարող է մընալ դերբայից հետո, կարող է ընկնել բայից առաջ, նայած տրամաբանական շեշտին. օրինակ՝* իս կ՚ըրդիս չիմ *կամ* իս չիմ կ՚ըրդիս։ *Անկատար դերբայն ունենում է միշտ* ս *վերջավորությունը։*

Ներկա

Կ՛ըրդիս	*չիմ*	*նէս*	*չիմ*
»	*չիս*	»	*չիս*
»	*չի*	»	*չի*
»	*չիք՛*	»	*չիք՛*
»	*չիք՛*	»	*չիք՛*
»	*չին*	»	*չին*
մընաս	*չիմ*	*գուս*	*չիմ*
»	*չիս*	»	*չիս*
»	*չի*	»	*չի*
»	*չիք՛*	»	*չիք՛*
»	*չիք՛*	»	*չիք՛*
»	*չին*	»	*չին*

Անցյալ ժամանակներն արտահայտելու համար մեզ արդեն հայտնի լե *բառ-մասնիկը ավելանում է ներկայի վրա օժանդակ բայից հետո։ Տրամաբանական շեշտի պատճառով* լե *բառ-մասնիկը կարող է ընկնել նաև դերբայից առաջ, օրինակ,* խս չիմ լե կ՛ըրդիս, խս չիմ լե գուս։

Անցյալի անկատար

Կ՛ըրդիս չիմ լէ
» »
» »
և այլն։

Նէս չիմ լէ
» *չիմ* »
» *չի* »
և այլն։

մընաս չիմ լէ
» *չիս* »
» *չի* »
և այլն։

գուս չիմ լէ
» *չիս* »
» *չի* »
և այլն։

Ապառնի

Կ՛ը̈րդը̈լասկան չիմ
» *չիս*
» *չի*
և այլն։

Նիլասկան չիմ
» *չիս*
» *չի*
և այլն։

Անցյալի տարանի

կ՛ը̈րդը̈լասկան չիմ լէ	նիլասկան չիմ լէ
» չիս »	» չիս »
» չի »	» չի »
և այլն։	և այլն։

մը̈նը̈լասկան չիմ լէ	գուլասկան չիմ լէ
» չիս »	» չիս »
» չի »	» չի »
և այլն։	և այլն

Ժխտական խոնարհման ժամանակ անցյալ կատարյալի իմաստով գործածվող վաղակատար դերբայը կորչում է, և հարակատար ձևը արտահայտում է և՛ վաղակատար, և՛ հարակատար և անցյալ կատարյալ ժամանակները. օրինակ.

կ՛ա̈րդած չիմ—չեմ կարդացել, չեմ կարդացած, չկարդացի։
մընահած չիմ—չեմ մնացել, չեմ մնացած, չմնացի։
նիյա̈ծ չիմ—չեմ գնացել, չեմ գնացած, չգնացի
իկ՛ա̈ծ չէմ—չեմ յեկել, չեմ յեկած, չեկա։

Ըղձական եղանակ

Դրական խոնարհման ըղձական եղանակը պարզ ձև է, բայց ժխտական խոնարհման ժամանակ վերածվում է բաղադրյալ ձևի, ըստ որում կազմվում է մի նոր ձև, ըղձական դերբայով և օժանդակ բայով։ Այդ ըղձական դերբայը կազմվում է անորոշ դերբայի լ-ի կորուստով (կ՛ա̈րդիլ > կ՛ա̈րդի, նէլ > նէ, մընալ > մընա, գուլ > գու)։

Ըղձական եղանակն իր ձևով նույնանում է պայմանականի հետ և միևնույն ձևը նշանակում է և այս և այն. օրինակ.

կ՛ա̈րդէ չիմ —չկարդամ, չեմ կարդա
նէ չիմ —չգնամ չեմ գնա
կ՛ա̈րդի չիմ լէ—չկարդայի, չէի կարդա
նէ չիմ լէ—չգնայի, չէր գնա։

Այսպիսով ժխտական խոնարհման ժամանակ Կարճևանի

բարբառը կրճատում է իր խոնարհման ձևերի թիվը, դուրս գցելով անցյալ կատարյալի և ըղձական ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ձևերը։

ԸՂՁԱԿԱՆ-ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

կմա̈րդի չիմ	*նէ չիմ*	*մընա չիմ*	*գու չիմ*
» *չիս*	» *չիս*	» *չիս*	» *չիս*
» *չի*	» *չի*	» *չի*	» *չի*
» *չիք*	» *չիք*	» *չիք*	» *չիք*
» *չիք*	» *չիք*	» *չիք*	» *չիք*
» *չին*	» *չին*	» *չին*	» *չին*

Անցյալի ապառնի

կմա̈րդի չիմ լէ	*նէ չիմ լէ*
» *չիս* »	» *չիս* »
» *չի* »	» *չի* »
» *չիք* »	» *չիք* »
» *չիք* »	» *չիք* »
» *չին* »	» *չին* »

մընա չիմ լէ	*գու չիմ լէ*
» *չիս* »	» *չիս* »
» *չի* »	» *չի* »
» *չիք* »	» *չիք* »
» *չիք* »	» *չիք* »
» *չին* »	» *չին* »

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

մա̈լլա̈ կմա̈րդի չիմ	*մա̈լլա̈ նէ չիմ*
» » *չիս*	» » *չիս*
» » *չի*	» » *չի*
» » *չիք*	» » *չիք*
» » *չիք*	» » *չիք*
» » *չին*	» » *չին*

մա̈լլա̈ մընա չիմ	*մա̈լլա̈ գու չիմ*
» » *չիս*	» » *չիս*

մա̈լլա̈ մընա չի	մա̈լլա̈ գու չի
» » չիքʼ	» » չիքʼ
» » չիքʼ	» » չիքʼ
» » չին	» » չին

Անցյալի ապառնի

մա̈լլա̈ կʼա̈րդի չիմ լէ	մա̈լլա̈ նէ չիմ լէ
» » չիս »	» » չիս »
» » չի »	» » չի »
» » չիքʼ »	» » չիքʼ »
» » չիքʼ »	» » չիքʼ »
» » չին »	» » չին »

մա̈լլա̈ մընա չիմ լէ	մա̈լլա̈ գու չիմ լէ
» » չիս »	» » չիս »
» » չի »	» » չի »
» » չիքʼ »	» » չիքʼ »
» » չիքʼ »	» » չիքʼ »
» » չին »	» » չին »

Հրամայական եղանակ

Հրամայական եղանակը կազմվում է եզակիի համար «ժա̈ն» բառով, հոգնակիի համար «ժա̈քʼ» բառով.

կʼա̈րդի մա̈ն > մի կարդար, նէ ման > մի գնար, մընա ժան > մի մնար, գու ժան > մի գար։

կʼա̈րդի ժա̈քʼ > մի կարդաք, նէ ժա̈քʼ > մի գնաք, մընա մա̈քʼ > մի մնաք, գու ժա̈քʼ > մի գաք։

Բայի արգելական ձևը կազմվում է անորոշ դերբայից առանց լ-ի, այսինքն նույն դերբայը, որը գործածվում է ժխտական ըղձական-պայմանական եղանակները կազմելու համար։

Ինչու բառը լինում է խա°, Մեղրու բարբառում՝ խա̈՞ս, ուստի հարցականը կազմվում է հետևյալ կերպ.

իս խա̈՞ իմ կʼըրդիս —ես ինչո՞ւ եմ կարդում
իս խա̈՞ իմ լէ կʼըրդիս —ես ինչո՞ւ էի կարդում
իս խա̈՞ իմ կʼըրդըլասկան—ես ինչո՞ւ եմ կարդալու
իս խա̈՞ իմ նիյա̈լ —ես ինչո՞ւ գնացի։
իս խա̈՞ նէժ —ես ինչո՞ւ գնամ

իս խամ իմ նէլ	*—ես ինչու գնայի*
իս խամ մա̈լա̈ նէմ լէ	*—ես ինչու պիտի գնայի։*

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Ցուլ—*տեսնել* Փամիլ—*նայել*

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկա

ցույ յիմ—տեսնում եմ և այլն.	*փըմիյ յիմ— նայում եմ և այլն.*
ցույ յիս	*փըմիյ յիս*
ցույս ա̈	*փըմիս ա̈*
ցույ յիք՛	*փըմիյ յիք՛*
ցույ յիք՛	*փըմիյ յիք՛*
ցույ յին	*փըմիյ յին*

Անցյալի անկատար

ցույ յիմ լէ—տեսնում էի և այլն.	*փըմիյ յիմ լէ—նայում էի և այլն.*
ցույ յիս »	*փըմիյ յիս »*
ցույս ա̈ »	*փըմիս ա̈ »*
ցույ յիք՛ »	*փըմիյ յիք՛ »*
ցույ յիք՛ »	*փըմիյ յիք՛ »*
ցույ յին »	*փըմիյ յին »*

Ապառնի

ցուլասկան ըմ—տեսնելու եմ և այլն.	*փըմըլասկան ըմ—նայելու եմ և այլն.*
» ըս	*» ըս*
» ա̈	*» ա̈*
» ըք	*» ըք*
» ըք	*» ըք*
» ըն	*» ըն*

Անցյալի ապառնի

ցուլասկան ըմ լէ—տեսնելու էի	*փըմըլասկան ըմ լէ—նայելու էի և այլն.*
» ըս »	*» ըս »*
» ա̈ »	*» ա̈ »*

ցուլասկան ըք լէ	*փըմըղասկան ըք լէ*
» *ըք* »	» *ըք* »
» *ըն* »	» *ըն* »

Վաղակատար—հարակատար

ցըէծ ըմ—տեսել եմ	*փամած ըմ—նայել եմ*
տեսած եմ և այլն.	*նայած եմ և այլն.*
» *ըս*	» *ըս*
» *ա̈*	» *ա̈*
» *ըք*	» *ըք*
» *ըք*	» *ըք*
» *ըն*	» *ըն*

Անցյալի վաղակատար-հարակատար

ցըէծ ըմ լէ—տեսել էի,	*փամած ըմ լէ—նայել էի,*
տեսած էի	*նայած էի*
» *ըս* »	» *ըս* »
» *ա̈* »	» *ա̈* »
» *ըք* »	» *ըք* »
» *ըք* »	» *ըք* »
» *ըն* »	» *ըն* »

Անցյալ կատարյալ

ցըէլ ըմ—տեսա	*փամալ ըմ —նայեի*
» *ըս*	» *ըս*
» *ա̈*	» *ա̈*
» *ըք*	» *ըք*
» *ըք*	» *ըք*
» *ըն*	» *ըն*

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

ցում—տեսնեմ	*փամիմ—նայեմ*
ցուս	*փամիս*
ցու	*փամի*
ցուք	*փամիք'*
ցուք	*փամիք'*
ցուն	*փամին*

Անցյալի ապառնի

ցում լէ — տեսնեի	*փամիմ լէ—նայ̓եի*
ցուս »	*փամիս »*
ցու »	*փամի »*
ցուք »	*փամիք՛ »*
ցուք »	*փամիք՛ »*
ցուն »	*փամին »*

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ

Ապառնի

ցուլ ըմ—կտեսնեմ	*փամիլ իմ—կնայեմ*
» ըս	*» իս*
» ա̈	*» ա̈*
» ըք	*» իք՛*
» ըք	*» իք՛*
» ըն	*» ին*

Անցյալի ապառնի

ցուլ ըմ լէ—կտեսնեի	*փամիլ իմ լէ—կնայեի*
» ըս »	*» ըս »*
» ա̈ »	*» ա̈ »*
» իք՛ »	*» իք՛ »*
» իք՛ »	*» իք՛ »*
» ին »	*» էն »*

ՀՐԿԱԴՐԱԿԱՆ

Ապառնի

մա̈լլա̈ ցում—պըտի տեսնեմ	*մա̈լլա̈ փամիմ—պըտի նայեմ*
» ցուս	*» փամիս*
» ցու	*» փամի*
» ցուք	*» փամիք՛*
» ցուք	*» փամիք՛*
» ցուն	*» փամին*

Անցյալի ապառնի

մա̈լլա̈ ցում լէ—պըտի տեսնեի	*մա̈լլա̈ փամիմ լէ—պըտի նայեի*
» ցուս »	*» փամիս »*

մա̈լա̈ ցու լէ—պիտի տեսնեի	մա̈լա̈ փամի լէ—պիտի նայեի
» ցուք »	» փամիք »
» ցուք »	» փամիք »
» ցուն »	» փամին »

Հրամայական

տիս, տըէսէ՛ցիք	փամա—նայիր, փամէցիք—նայեցե՛ք
ցո՛ւ մա̈ն, ցու մա̈ք	փամի մա̈ն, փամի մա̈ք

տալ—տալ	խոսել—խոսել

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկա

տայ յիմ	խուսիյ յիմ
տայ յիս	խուսիյ յիս
տայս ա̈	խուսիս ա̈
տայ յիք	խուսիյ յիք
տայ յիք	խուսիյ յիք
տայ յին	խուսիյ յին

խոսել բայի անշեշտ օ-ն վերածվում է ու ձայնավորի.

Անցյալի անկատար

տայ յիմ լէ	խուսիյ յիմ լէ
տայ յիս »	խուսիյ յիս »
տայս ա̈ »	խուսիս ա̈ »
տայ յիք »	խուսիյ յիք »
տայ յիք »	խուսիյ յիք »
տայ յին »	խուսիյ յին »

Ապառնի

տըլասկան ըմ	խուսըլական ըմ
» ըս	» ըս
» ա̈	» ա̈
» ըք	» ըք
» ըք	» ըք
» ըն	» ըն

Անցյալի ապառնի

տըլասկան ըմ լէ	խուսըլասկան ըմ լէ

տըլասսկան ըս լէ	խուսըլասկան ըս լէ
» ա̈ »	» ա̈ »
» ըք »	» ըք »
» ըք »	» ըք »
» ըն »	» ըն »

Վաղակատար—հարակատար

տվօծ ըմ	խուսիյած ըմ
» ըս	» ըս
» ա̈	» ա̈
» ըք	» ըք
» ըք	» ըք
» ըն	» ըն

Անցյալի վաղ.-հարակատար

տվօծ ըմ լէ	խուսիյած ըմ լէ
» ըս »	» ըս »
» ա̈ »	» ա̈ »
» ըք »	» ըք »
» ըք »	» ըք »
» ըն »	» ըն »

Անցյալ կատարյալ

տվօլ ըմ	տվօլ ըք
» ըս	» ըք
» ա̈	» ըն

խուսիյալ ըմ	խուսիյալ ըք
» ըս	» ըք
» ըն	» ըն

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի		Անցյալ ապառնի	
տամ	խօսիմ	տամ լէ	խօսիմ լէ
տաս	խօսիս	տաս »	խօսիս »
տա	խօսի	տա »	խօսի »
տաք	խօսիք՚	տաք »	խօսիք՚ »
տաք	խօսիք՚	տաք »	խօսիք՚ »
տան	խօսին	տան »	խօսին »

Ապառնի		Անցյալի ապառնի	
տալ իմ	*խօսիլ իմ*	*տալ իմ լէ*	*խօսիլ իմ լէ*
» իս	*» իս*	*» իս »*	*» իս »*
» ա̈	*» ա̈*	*» ա̈ »*	*» ա̈ »*
» իքʼ	*» իք*	*» իքʼ »*	*» իքʼ »*
» իքʼ	*» իք*	*» իքʼ »*	*» իքʼ »*
» ին	*» ին*	*» ին »*	*» ին »*

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

մա̈լլա̈ տամ	*մա̈լլա̈ խօսիմ*
» տաս	*» խօսիս*
» տա	*» խօսի*
» տաք	*» խօսիք*
» տաք	*» խօսին*

Անցյալի ապառնի

մա̈լլա̈ տամ լէ	*մա̈լլա̈ խօսիմ լէ*
» տաս »	*» խօսիս »*
» տա »	*» խօսի »*
» տաք »	*» խօսիք »*
» տան »	*» խօսին »*

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԵԶԱԿԻ	*տօր* *խո́ւսէց*	ՀՈԳՆԱԿԻ	*տվէցիքʼ* *խուսէ՛ցիքʼ*
	տա̈ մա̈ն *խօսի մա̈ն*		*տա̈ մա̈քʼ* *խօսի մա̈քʼ*

Իրվալ—*երևալ* յեռիլ—*վերցնել* ճըռանիլ—*հասնել*

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկա

իրվայ յիմ	*յէռիյ յիմ*	*հը́սը́նիյ յիմ*
իրվայ յիս	*յէռիյ յիս*	*հը́սը́նիյ յիս*
իրվայս ա̈	*յէռիս ա̈*	*հը́սը́նիս ա̈*
իրվայ յիքʼ	*յէռիյ յիքʼ*	*հը́սը́նիյ յիքʼ*
իրվայ յիքʼ	*յէռիյ յիքʼ*	*հը́սը́նիյ յիքʼ*
իրվայ յին	*յէռիյ յին*	*հը́սը́նիյ յին*

Անցյալի անկատար

երվայ յիմ լէ	յէռիյ յիմ լէ	հըսընիյ յիմ լէ
երվայ յիս »	յէռիյ յիս »	հըսընիյ յիս »
երվայս ա̈ »	յէռիս ա̈ »	հըսընիս ա̈ »
երվայ յիք՛ »	յէռիյ յիք՛ »	հըսընիյ յիք՛ »
երվայ յիք՛ »	յէռիյ յիք՛ »	հըսընիյ յիք՛ »
երվայ յին »	յէռիյ յին »	հըմընիյ յին »

Ապառնի

երվըլասկան	ըմ	յէռըլասկան	ըմ	հըսընըլասկան	ըմ
»	ըս	»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա̈	»	ա̈
»	ըք	»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն	»	ըն

Վաղակատար-հարակատար

երվահած	ըմ	յէռած	ըմ	հըսահած	ըմ
»	ըս	»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա̈	»	ա̈
»	ըք	»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն	»	ըն

Անցյալի վաղակատար-հարակատար

երվահած	ըմ	լէ	յէռած	ըմ	լէ	հըսած	ըմ	լէ
»	ըս	»	»	ըս	»	»	ըս	»
»	ա̈	»	»	ա̈	»	»	ա̈	»
»	ըք	»	»	ըք	»	»	ըք	»
»	ըք	»	»	ըք	»	»	ըք	»
»	ըն	»	»	ըն	»	»	ըն	»

Անցյալ կատարյալ

երվահալ	ըմ	յէռալ	ըմ	հըսահալ	ըմ
»	ըս	»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա̈	»	ա̈
»	ըք	»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն	»	ըն

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

երգա̈մ	յեռիմ	հը́սառիմ
երգա̈ս	յեռիս	հը́սանիս
երգա̈	յեռի	հը́սանի
երգաք	յեռիք	հը́սանիք
երգա̈ք	յեռիք	հը́սանիք
երգան	յեռին	հը́սանին

Անցյալի ապառնի

երգա̈մ	լե	յեռիմ	լե	հը́սանիմ	լե
երգաս	»	յեռիս	»	հը́սանիս	»
երգա̈	»	յեռի	»	հը́սանի	»
երգա̈ք	»	յեռիք	»	հը́սանիք	»
երրա̈ք	»	յեռիք	»	հը́սանիք	»
երգա̈ն	»	յեռին	»	հը́սանին	»

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

երգալ	իմ	յեռիլ	իմ	հըսանիլ	իմ
»	իս	»	իս	»	իս
»	ա̈	»	ա̈	»	ա̈
»	իք	»	իք	»	իք
»	իք	»	իք	»	իք
»	ին	»	ին	»	ին

Անցյալի ապառնի

երգա̈լ	իմ	լե	յեռիլ	իմ	լե	հը́սանիլ	իմ	լե
»	իս	»	»	իս	»	»	իս	»
»	ա̈	»	»	ա̈	»	»	ա̈	»
»	իք	»	»	իք	»	»	իք	»
»	իք	»	»	իք	»	»	իք	»
»	ին	»	»	ին	»	»	իք	»

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

մա̈լլա̈	երգա̈մ	մա̈լլա̈	յեռիմ	մա̈լլա̈	հը́սանիմ
»	երգա̈ս	»	յեռիս	»	հը́սանիս

մա̈լլա̈ էրվա̈ մա̈լլա̈ յէռի մա̈լլա̈ հը՛սանի
» էրվա̈ք » յէռիք » հը՛սանիք
» էրվա̈ք » յէռիք » հը՛սանիք
» էրվա̈ն » յէռին » հը՛սանին

Անցյալի ապառնի

մա̈լլա̈ էրվա̈մ լէ մա̈լլա̈ յէռիմ լէ մա̈լլա̈ հը՛սանիմ լէ
» էրվա̈ս » » յէռիս » » հը՛սանիս »
» էրվա̈ » » յէռի » » հը՛սանի »
» էրվա̈ք » » յէռիք » » հը՛սանիք »
» էրվա̈ք » » յէռիք » » հը՛սանիք »
» էրվա̈ն » » յէռին » » հը՛սանին »

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի

էրվա̈ց յէռ հը՛սաց
էրվա̈ մա̈ն յէռի մա̈ն հը՛սանի մա̈ն

Հոգնակի

էրվէցէք յէռիցէք հը՛սը՛նէցէք
էրվա̈ մա̈ք յէռի մա̈ք հը՛սանի մա̈ք

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Պատճառական բայ — Կրավորական բայ

Նստեցնել—*նստըցնել* — Մանդվել—*ջարդվել*

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն ե ր կ ա

նը՛ստը՛ցընիյ յիմ — մանդվիյ յիմ
» յիս — » յիս
նը՛ստը՛ցնիս ա̈ — մանդվիս ա̈
նըստըցընիյ յիք — մանդվիյ յիք
» յիք — » յիք
» յին — » յին

Անցյալի անկատար

նը՛ստը՛ցընիյ յիմ լէ — մանդվիյ յիմ լէ
» յիս » — » յիյ »

Նը́սառը́ցը́նիս	ա̈	լէ	մանդվիս	ա̈	լէ
Նը́սառը́ցնիլ	յիք	»	մանդվիլյ	յէ	»ք
»	յիք	»	»	յիք	
»	յին	»	»	յին	

Ապառնի

Նը́սառը́ցը́նըլասկան	ըմ	մը́նդվըլասկան	ըմ
»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա̈
»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն

Անցյալի ապառնի

Նըսառըցընլասկան	ըմ	լէ	մընդվըլասկան	ըմ	լէ
»	ըս	»	»	ըս	»
»	ա̈	»	»	ա̈	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըն	»	»	ըն	»

Վաղակատար-հարակատար

Նը́սառը́ցուած	ըմ	մանդված	ըմ
»	ըս	»	ըս
»	ա̈	»	ա̈
»	ըք	»	ըք
»	ըք	»	ըք
»	ըն	»	ըն

Անցյալի վաղակատար-հարակատար

Նը́սառը́ցուած	ըմ	լէ	մանդված	ըմ	լէ
»	ըս	»	»	ըս	»
»	ա̈	»	»	ա̈	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըն	»	»	ըն	»

Անցյալ կատարյալ

Նը́սառը́ցուալ ըմ   մանդվալ ըմ

Նը́ստը́ցուալ ըս   մանդուալ ըս
» ա̈ » ա̈
» ըք » ըք
» ըք » ըք
» ը́ն » ը́ն

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

Նը́ստը́ցանիմ   մանդվիմ
Նը́ստը́ցանիս   մանդվիս
Նը́ստը́ցանի   մանդվի
Նը́ստը́ցանիք՛   մանդվիք՛
Նը́ստը́ցանիք՛   մանդվիք՛
Նը́ստը́ցանին   մանդվէն

Անցյալի ապառնի

Նը́ստը́ցանիմ լէ   մանդվիմ լէ
Նը́ստը́ցանիս »   մանդվիս »
Նը́ստը́ցանի »   մանդվի »
Նը́ստը́ցանիք՛ »   մանդվիք՛ »
Նը́ստը́ցանիք՛ »   մանդվիք՛ »
Նը́ստը́ցանէն »   մանդվին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

Նը́ստը́ցանիլ իմ   մանդվիլ իմ
» իս » իս
» ա̈ » ա̈
» իք՛ » իք՛
» իք՛ » իք՛
» էն » էն

Անցյալի ապառնի

Նը́ստը́ցանիլ իմ լէ   մանդվիլ իմ լէ
» իս » » իս »
» ա̈ » » ա̈ »
» իք՛ » » իք՛ »
» իք՛ » » էք՛ »
» էն » » էն »

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի

մալլա̈ նը́ստը́ցանիմ	*մալլա̈ մանդվիմ*
» *նը́ստը́ցանիս*	» *մանդվիս*
» *նը́ստը́ցանի*	» *մանդվի*
» *նը́ստը́ցանիքʹ*	» *մանդվիքʹ*
» *նը́ստը́ցանիքʹ*	» *մանդվէքʹ*
» *նը́ստը́ցանին*	» *մանդվին*

Անցյալի ապառնի

մալլա̈ նը́ստը́ցանիմ լէ	*մալլա̈ մանդվիմ լէ*
» *նը́ստը́ցանիս* »	» *մանդվիս* »
» *նը́ստը́ցանի* »	» *մանդվի* »
» *նը́ստը́ցանիքʹ* »	» *մանդվիքʹ* »
» *նը́ստը́ցանիքʹ* »	» *մանդվիքʹ* »
» *նըստըցանին* »	» *մանդվին* »

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի

նը́ստը́ցո̈ւր	*մա̈նդվա*
նը́ստը́ցա̈նի մը́էն	*մա̈նդվի մա̈ն*

Հոգնակի

նը́ստը́ցընէ՛ցիքʹ	*մընվէ՛-ցիքʹ*
նըստըցա̈նի մա̈քʹ	*մա՛նդվի մա̈քʹ*

Մի նմուշ Կարճևանի բարբառով

ԲԱՐԻԿԷՆԴԱՆ

Մին մարդ նա̈ն կընա̈ց ա̈ նիս. ոնդո̈նք մի-մա̈նու սա̈փիլ ին ը-նիս. Մին դօնըմ մարդը նէյս ա, յըղ նա̈ն բիրինձ ա̈ բիրիս տօն, կընգանը ըսիս.

Աս յէռ պահա բարիկէնդան հէտի. Աթ կընա̈ցի էնդի յա̈ գիդիս, վըր բարիկէնդանը մարդ ա նիս. Աթ յըղ նա̈ն բիրինձը յըռիս ա պընհիս չուվախտ փօ̈նլի.

Շատ ա ըսպըսիս թա խոր, ցույս ա վօ̈ր բարիկէնդանը կա վուչ.

Մին դօնըմ ա̈լ դո̈նս ա̈ գույս քօ̈նչա̈ն, ցույս ա մին մարդ ա տնց կայս, ըսկըսիս ա̈ ոնդո̈ր կանչիլը.

— Բարիկէնդանը դո̈ւ՞ վըա։

Աթ մարդ ցույս ա, վըր աթ կընափը սա̈փիլ ա, ըսիս ա.

— Հա̈, իս իմ բարիկէնդանը։

Ուզիս ա̈ ցու՝ քամակը հինչ ա դըռիս։

Աթ կընա̈փը վըր լըսիս ա՝ բարիկէնդանը աթ մարդն ա, քսկըսիս ա ձնդձնըա̈ ուշանց տալը, ըսիս ա̈.

— Խա չիս գույս քու յըղ նա̈ն բիրինձը տընիս. հի՞նչ ա, միք՛ քու նօքա՞րիթ իք՛։

Աթ մարդը ըսիս ա.

— Խա̈յիս ըջըղվիս, իս ալ իկած ըմ վըր տանըմ։

Աթ մարդը յըղ նա̈ն բիրինձը յըռիս ա, նընիս ա̈ հըղա̈փ՛, նէյս: Աթ վախտըմ ա̈լըա̈հա̈լ ան մին յանաց կընփ՛ան մարդը գույս ա։

Կընա̈փը մարդան առաջն ա վազ տայս, ըսիս.

— Բարիկէնդանուն ցէլ ըմ, մին սօրա̈ն ա̈լ բիյաբուռ ըմ արալ, յըղ նա̈ն բիրինձը տըվօլ ըմ, տարալ ա̈։

Աթ մարդը կընփ՛ա̈նը սա̈փիլ ա ըսիս, իլլիս ձին նէյս։ Հըղա̈փ՛նի յըղ նա̈ն բիրինձ տանօղը քամակն ա փըմիս, ցույս ա, վըր մին ձիավըրէր ա գույս, ա̈լըա̈հա̈լ հըսկընիս ա̈, վըր ա̈ն կընփ՛ա̈ն մարդն ա, յըղ նա̈ն բիրինձը գիղիս ա̈։ Ձիավ նէցօղը ըսիս ա̈.

— Էստինի մարդ չի նիյալ։

Ա̈ն մարդն ըսիս ա.

— Նիյալ ա, չիլէկ՛ին ա̈լ յըղ նա̈ն բիրինձ։

Ձիավ նէցօղը ըսիս ա̈.

— Վըէր նէմ, հըսա̈նիլ իմ։

Մարդն ըսիս ա̈

— Հաքավ նէս, հըսանիլ իս, ձիավ նէս, հըսանիլ չիս, չունքի քու ձիթ մի՞ն, էրկո՞ւ, իրի՞ք, չօ՞ք արի, հաղըր դու մի՛ն էրկու վըս արէլ, հըսանիլ։

Ձիավ նէցօղը էդի յալ ըրիս ա̈։ Ա̈ն մարդն ա̈լ յըղ նա̈ն բիրինձը յըռիս ա̈, իլլիս ձին, նէյս, քըմակաց ալ ըսիս. ա̈ս հո̈ւնչո̈ւր սա̈փիլ ուխման ա լի։

Զուվախտ մըհէփ՛ ա̈լ կընա̈փը մարդան ա ըսիս.

«Ձա̈րափամա ա̈ս հո̈ւնչո̈ւր սա̈փիլ մարդ ա̈,— մարդն ալ կընփ՛անը։

Մի նմուշ Մեղրու բարբառով

ՍԸՏԱՍԱՆ ԱՎՋԻ

Հօրս կընքավ, մօրս ծընընդավ, վիր էք՛ կ՛էցալ մին օր հէնգ՛ի—վըէց ջանավ Թուրավ-Թըրփա̈նգ՛ա̈վ, գէցալըք ավուռ։ Հադէն ի լա̈, Հո̈ւդէն ի լա̈, Զատէն է լա̈, Մատէն է լա̈, հարըս ի լա̈, էս իմ լա̈, գ՛էցալըք ավուռ... Սարար, ձուրար դուզ ըք գ՛էցալ, ըշտէղ ավը լա̈, սուս ըք գէցալ, ըշտէղ ահը լա̈՝ կօզ-կօզ ըք գ՛էցալ... Գ՛էցա̈լ ըք, գէցա̈լ ըք, շէտ Թա̈ խօր, մին ա̈լ տըսնիք՛ իրիք՛ գ՛ծլ· էրկուսը ցըմաք, մինո̈ւն մանջան ա̈լ ըսկի ջո̈ւր չի լա̈· մինա̈լ, ըհը, Թըմաշա արիք՛,[1] հօր ա̈ս անջո̈ւր գ՛ծլամը լուղ ըն իրէս, ճըվաս են իրիք՛ սըպտակ բադ, էրկուսը ըստակած, ա̈ն մինն ա̈լ սաղ չի լա̈։

— Հադէ՛, տօ՛ր հա, տօ՛ր։

Թա̈՝ Թըրփա̈նգ՛ չօնիմ։

— Հո̈ւդէ՛, տօ՛ր հա, տօ՛ր։

— Իս ա̈լ չօնիմ։

— Զատի... Մատի...

— Պա հի՞նչ ա̈՞րիք՛...

Հօրս ձիք՛էն կարճ ու էրկ՛էն, հաստ ու բէրակ մին փէտ ը լա̈· իրիս ա̈ առա̈լ, Նըշա̈ն դիրա̈լ, մինա̈լ՝ տըրա՛ք, հօր գ՛իրէկը տըվալ... Ա̈ն գ՛իրէկը տվալ, իս կուփալըմ, հօր կուփալըմ փըռվալա̈ խստի—ումէն մին Թիվըի հէնգի գ՛ա̈զ ու կըծս...

— Հադի, դէնա̈կ...

Թա̈՝ դէնակ չօնիմ...

— Հո̈ւդի, դու...

— Իս ա̈լ չօնիմ

— Զատի՞, Մատի՞...

— Մէք ա̈լ չօնիք։

— Պա հի՞նչ ա̈րիք՛...

Հարիս ա̈լ օնի, բէրան չօնի։

Ա̈ս անբէրան դէնակը ք՛ա̈շալ ըք։ Հադէն մուրթալ ա̈, կըրէցալ չի, Հո̈ւդէն մուրթալ ա̈, կըրէցալ չի, Զատէն կըրէցալ չի, Մատէն կըրէցալ չի, հարիս ա̈լ չի կըրէցալ, իս ք՛ա̈շալ ըմ մուրթալ։ Մուրթալ ըմ, վէր ցըք՛ա̈լ, բադ մա̈ն ասիլ մին գ՛ո̈ւմէշ ասա։ Հադէն շիլէկալ ա̈, կըրէցա̈լ չի, Հո̈ւդէն շիլէկալ ա̈, կըրէցալ չի, Զատէն կըրէցալ չի, Մատէն կըրէցալ չի, հարիս ա̈լ չի կըրէցալ, իս շիլէկալ ըմ։ Շիլէկալ ըմ գ՛էցալըք։ Գէցալըք, հասալ ըք մին տըէղ,

---

1 Կա և «տըսնիք» բառը։

մին ա̈լ Թըմաշա ա̈րիք՛ իրիք՛ չէն, էրկուսըն տէղը խսկի իրվա̈ս չի, մինամն ա̈լ ըսկի շընական չի լա̈լ։ Ա̈ս անշէն շէնամը՝ դէս ըք շօռ իկ՛ա̈լ, դէն ըք շօռ իկ՛ա̈լ, մին տօն ըք գ՛իդա̈լ, մանջին իրիք՛ պառավ, էրկուսը մըէռած, մինումն բերանըմն ա̈լ նա̈փա̈ս չի լա̈լ։

— Տըղա̈ք,— ասալըք,— իկ՛իք՛ բաղավ փըլավ ա̈րիք՛։

Ա̈ս աննա̈փա̈ս պառավը գ՛էցալ ա̈ դէս շօռ իկ՛ա̈լ, դէնը շօռ իկ՛ա̈լ, կըէսը բըրինձի գ՛իդա̈լ, իրիք՛ ղազղան, էրկուսը ծակ, մին-նա̈լ ըսկի ուռ չօնի։

Ջուր լիցալ ըք ա̈ս անտակ ղազղանը, ժանջը ածալ ըք բադ-նա̈ն բիրինձի, անգ՛իրէկ իփալ ըք։

Իփալ ա, էփալ ա, մէս նա̈ն բիրինձի գ՛էցալ ըն, մնացալ ա ջուրը։

Ավէն իկ՛ա̈ծ, քօխցած մարդէ՛ք՛, վէր աք տըվալ՝ կ՛էրալ հա̈, կէրալ. հունչ ակըննէս ի բէն տէսալ, հունչ ա̈լ բէրաննէս ի մըտալ։

Գրի առավ՝ Ասկանդարյան Հովհաննեսը

Մի նմուշ Հադրութի բարբառով

Մի կաղլէգ՛ մարթ Թիփա̈նգ՛ը ձէռքէն քիխս ա̈ ինխս կըռվըէ դո̈նշմա̈ննուն հէտ։ Մի մարթ տըսընալա̈վ ծըծղէս ա, ըսէս ա.

— Խէխչ, էտ Թօռըս քիխս, տո̈ւ կըռվըմը իլըհալ կըսպան-վիս, ընդրա̈ մհար, վըէր կարէլ չըս փըխչիս։

Կաղլէգ՛ դօչաղը տօշ տըված ջօղաբ ա տըվալ.

— Կըռըէվ ք՛ինօղը վըէչ Թա փըխչիլի մհար ա քիխս, քիխս ա̈ կըռվըէ՝ դո̈նշմո̈ննուն հախթըէ։

Գրի առավ՝ Արմենակ Պողոսյան

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ «Լ» ԵՎ «ԿԸ» ՃՅՈՒՂԵՐԸ

ՀԱՅԵՐԵՆ «Լ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Հայերեն բարբառների «Լ» ճյուղին պատկանում են առայժմ հայտնի երկու բարբառներ, Մարաղայի և Խոյի։ Մարաղայի բարբառը ներկայանում է խոսողների համեմատաբար քիչ թվով, մինչդեռ Խոյի բարբառով խոսողներ շատ կան, դրանք ցրված են զանազան տեղեր։ Այդ բարբառով խոսողներ կան Սիսիանում Ազիզբեկովի և Միկոյանի շրջաններում, որտեղ հայտնի են Էր-դափին, Քարագլուխ, Թառաթումբ գյուղերը, Ղամարլվի շրջանում Ջոհրաբլու, Մեհրաբլու, Աղջակըշլաղ և Աղհամզալու (հին անուններով) գյուղերը, Կոտայքի շրջանում Արամուս և Թազագյուղ անունով գյուղերը և Ապարանում՝ Մոլլակասում (Ջրվումի) գյուղը։

Խոյի բարբառով խոսողներ կան շատ տեղերում, առանձին գյուղերում փոքրիկ խմբերով, որ ատրճանաբար ձուլվում են «Ս» ճյուղի Ուրմիայի բարբառի հետ, ինչպես, օրինակ, Ղամար-

լվի շրջանի Ղըրղովան գյուղում։ «Ղ» ճյուղի բարբառների ընդհանուր հատկությունները.

1. Ներկան կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայով, օրինակ. սըրել եմ—*սրում եմ,* մըճալ եմ—*ծռում եմ,* կարթալ եմ—*կարդում եմ,* ազատել եմ—*ազատում եմ (Խոյ).* սըրել իմ—*սրում եմ,* մըճալ իմ—*ծռում եմ,* կյարթալ իմ—*կարդում եմ,* ազատել իմ—*ազատում եմ (Մարաղայի բարբառ)։*

2. Բաղադրյալ անցյալ ժամանակները կազմվում են ներկայի ձևերով՝ ավելացրած անփոփոխ «էր» մասնիկը. օրինակ, սըրել եմ էր—*սրում էի,* կարթալ եմ էր—*կարդում էի (Խոյ).* սըրել իմ էր—*սրում էի,* կ՚յարթալ իմ էր—*կարթում էի (Մարաղա)։*

3. Ըղձականի, ուրեմն և պայմանականի ու հարկադրականի անցյալի ապառնի ձևերը կազմվում են ապառնիից՝ ավելացրած «էր» անփոփոխ մասնիկը. օրինակ, սըրիմ—*սրեմ,* սըրիմ էր—*սրեի (Մարաղա).* սըրեմ—*սրեմ,* սըրեմ էր—*սրեի (Խոյ)։*

4. Անցյալ կատարյալի առաջին դեմքն ունի «մ» վերջավորություն, «ե» խոնարհման բայերի հիմքում «ց» չկա. օրինակ սըրըմ—*սրեցի,* կ՚յարթացըմ—*կարդացի (Մարաղա).* սըրիմ—*սըրեի,* կարթացիմ—*կարդացի (Խոյ)։*

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Մարաղայի բարբառի հայրենիքն է Ուրմիայի լճի հարավարևելյան կողմը։ Այդ բարբառով խոսվում է այժմ Մարաղա գյուղում։

Մարաղայի բարբառով խոսում են Ղարաբաղի Մարաղա գյուղը, որը գաղթել է Մարաղայից, Ագուլիսի շրջանի Ազա գյուղը և Երևանի շրջանի Ավան գյուղը։ Պետք է ենթադրել, որ խոսողների փոքր թիվը բացատրվում է նրանով, որ Մարաղայի շրջանի բնակչության զգալի մասը ցրվել է հայկական զանազան գյուղեր, Սովետական Հայաստանում, Ղարաբաղում Հյուսիսային Կովկասում և այլն և ձուլվել Խոյի և Ուրմիայի բարբառով խոսող բնակչությանը։

Մարաղայի բարբառը իր լեզվական վիճակով գտնվում է Վանի, Ուրմիայի, Խոյի և Ղարաբաղի բարբառների միջև։ Այդուհանդերձ նա ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք նրան խիստ տարբերում են մյուս բարբառներից։

Հնչյունաբանություն

Մարաղայի բարբառը հարուստ է ձայնավորներով և հատկապես երկբարբառներով. դա միակ բարբառն է, որն ունի շուրջ

6 երկբարբառ։ Դրանք են՝ ըի, ըէ, ուի, ուէ, օւ, օի. օրինակներ՝

Ամըիս > ամիս, խարփըէլ > հարբել, սաղմուիս > սաղմոս, կակուէղ > կակուղ, կօիտըռվըէլ > կոտրուել։

Մարաղայի բարբառի ձայնավորներն են՝ ա, ա̈, է, ի, ի՛, ը, ըի, օ, օ̈, ու, ու̈։

Այդ բարբառում կա մի տեսակ «ի»(ըի), որ խիստ նման է ռուսական «Ы» ձայնին. օրինակներ՝ ա̈րիվ > արև, օ̈ռու̈ն > արիւն, ճըիլտիկ' > ճկոյթ, ծըիմըէռ > ձմեռ։

Մարաղայի բարբառի ձայնավորները ենթարկվում են բավական զգալի փոփոխությունների, այսպես օրինակ.

Ա > ա. խասնէլ > հասնել, պէրան > բերան, խավնէլ > հաւանել.

> ա̈. պա̈ժին > բաժին, խա̈րէր > հարյուր, տա̈տրէլ > դադարել.

> =. մըէրնէլ > մեռանել, մըիննէլ > մտանել, տապկէլ > տապկել.

> ը. ընէլ > անցանել, մըխաթ > մախաթ, խըմար > համար.

> է. տէնակ > դանակ, վէխէնալ > վախենալ, գ'իթէլ > գտալ.

> ի. շիլա̈կ' > շալակ, տինիս > տանիք։

Ե > յէ. յէզ > եզն, յէրզ > եզր, յէրգ' > երգ.

> յի. յիս > ես. յիփ > երբ.

> է. էրազ > երազ, էրկ'էն > երկայն, կ'էտին > գետին.

> ըէ. (բ, պ, փ, մ, ն հնչյուններից հետո)։ Խափըէլ > խափել, կապըէլ > կապել.

> ըի. (վ-ից հետո). ավըիլ > աւել, ավըիրէլ > աւերել.

> օ. ո̈ւզօլո̈ւ > ուզելու, պա̈նօլո̈ւ > բանալու, նըստօցուցէլ > նստեցնել։

Ը > ու. պուռունկ > պռունկ, պուտուկ > պտուկ, ճունջուղ > ճնճղուկ.

> ո̈ւ, օ̈. թո̈ւթո̈ւ > թթու, տո̈ւտո̈ւմ > դդում, կ'ո̈ւլօ̈րէլ > գլորել.

> ի. պիրինձ > բրինձ, գ'իդա̈յ > գդակ, գ'իթէլ > գտալ, միժիկ' > մժեկ.

> ու. պուխտիր > պղտոր, սուղից > սղոց.

> ըի, ուի. (խ-ից հետո, ղ, մ, ն, բաղ. առաջ). խըիմըէլ > խմել, խուինձիր > խնձոր, ծըիմըէռ > ձմեռ։

Իւ > իվ. հա̈շիվ > հաշիւ, պատիվ > պատիւ.

> ո̈ւ. ա̈լո̈ւր > ալիւր, ա̈խպո̈ւր > աղբիւր, ծո̈ւն > ձիւն.

> ի, ու. խա̈րիր > հարիւր, իր > իւր, սուն > սիւն.

> է. կ'էղ > գիւղ, յէղ > իւղ։

Ոյ > վըէ, ու. վըէժ > ոյժ, պառուք > պատըոյգ, կապուտ > կապոյտ.

> ուի. լուխս > լոյս, կուխր > կոյր։

Մարաղայի բարբառի հիմնական հատկանիշներից է ձայնավորների ներդաշնակությունը, ըստ որի բառասկզբի կամ վերջնավանկի ձայնավորների ազդեցությամբ մյուս վանկերի ձայնավորները համապատասխանաբար փոխվում են կամ թեթև (քմային) կամ ծանր (ներքին կամ միջին բարձրության) ձայնավորների. օրինակ՝ ա̈խպո̈ր, խա̈ղա̈ր, խա̈րիր, տա̈ռմա̈ն > դարման, վա̈ստա̈կ > վաստակ և այլն։

Մարաղայի բարբառի պայթական բաղաձայնների սիստեմը ենթարկվում է առաջին տեղաշարժին, այսինքն ձայնեղների դիմաց կան շնչեղ խուլեր բառամիջում և խուլեր՝ բառասկզբում.

Օրինակներ. պա̈րա̈կ > բարակ, պա̈ռց > բարձ, պո̈րթ > բուրդ, կ՛էտ > գետ, կ՛ա̈րի > գարի, կ՛իրէլ > գրել, տա̈խց > դախձ, տուռ > դուռն, յէրք՛ > երգ, և այլն։

Մարաղայի բարբառում, այնուամենայնիվ, ձայնեղներ կան, այդ ձայնեղները պատահում են օտարներից փոխ առնված բառերում և ռնգային հնչյուններից հետո, օրինակ. կ՛ինձ > գինձ պ՛ըրինձ > բրինձ, կ՛ա̈նդ՛ա̈տուըէլ > գանգատուել, զա̈նգ՛ > զանգ, բազար—շուկա, բարըմ—արդյոք, դա̈ղիյա̈—րոպէ, դա̈րդ—վիշտ և այլն։

Մարաղայի բարբառում կան քմայնացված գ, կ, ք, մի հատկություն, որ գտնվում է Ղարաբաղի, Ուրմիայի և Վանի ու ընդհանրապես բոլոր արևելյան բարբառներում. օրինակներ. վը̈սկ՛ը̈ > ոսկի, իրէք՛ > երեք, գ՛իշէր > գիշէր և այլն։

Որոշ խոսվածքներում (օրինակ, Աղա գյուղի) գ՛, կ՛, ք՛ հնչյուններն արտասանվում են ջ, ճ, չ:

Մարաղայի բարբառում քմային ետնալեզվային հնչյունները վերածվում են յ և ճ հնչյունների, ըստ որում կ հնչյունը վերածվում է յ-ի, իսկ ք և ճք հնչյունները վերածվում են հ՛-ի օրինակ.

Ա̈րիվա̈ ո̈ղէլէր փըստիյ փըստիյ մըննէր։ Նա̈հ՛ (նանք > նրանք) պըրծան։

Այդ երևույթը տեղի է ունենում հատկապես բաղաձայնից առաջ գտնվելու դեպքում և այն դեպքում, երբ հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով, իսկ նախորդը վերջանում է ետնալեզվային գ, կ, ք հնչյուններով։

Աֆրիկատներն այդ բարբառում վերածվում են պարզ հնչյուններին, այսինքն տարրալուծվելով իրենց բաղադրիչ մասերի, կորցնում են պայթական մասը, պահպանելով շփական ս և զ հնչյունները. օրինակ. նձամէն > նրանցմէն, աշկ > աչք, պձավէլ իմ > բացվում եմ։

Այս հատկությունը գտնում ենք Ուրմիայի և Վանի բարբառներում և Սալմաստի խոսվածքներում, ինչպես և Ասլանբեկի խոսվածքում։

Մարաղայի բարբառը «ֆ» հնչյունը չունի, դրա փոխարեն գործ է ածվում «փ» հնչյունը. օրինակ, փա̈ս > ֆէս, գլխարկ, քէփ > քէֆ, փայտօն > ֆայտօն և այլն։

«Հ» հնչյունը Մարաղայի բարբառում վերածվում է «խ» հնչյունի, օրինակ՝ խաց > հաց, խէր > հայր, խառնիս > հարսանիք, պա̈խ > բահ, շօ̈ննա̈խավը̈ը̈ր > շնորհաւոր և այլն։

«Տն» հնչյունները վերածվում են «նն» կամ միայն «ն» հնչյունի. օրինակ՝ խաննէլ > հատնել, հատանել «սատկել», մը̈ննէլ > մտնել > մտանել, գ̈իննէլ > գտանել, մանը̈կ > մատնիք > մատանիք։

«Ր» հնչյունը շատ բառերի միջից դուրս է ընկնում. օրինակ՝ յէփ > երբ, նիս > ներս, մըսը̈էլ > մրսել, խամա > համար։

«Ր» հնչյունը շփոթվում է «ռ» հնչյունի հետ. օրինակ՝ Թուէր > Թոռն, մը̈րնէլ > մեռնել, պա̈ռց > բարձ, խռշտակ > հրեշտակ, առածալ > արածել, խըռնէլ > խրտնել, խառնիս > հարսանիք, շառէլ > շարել, տավառ > տավար, տա̈ռմա̈ն > դարման, կառ > կար և այլն։

Մարաղայի բարբառը բազմաթիվ, բառերի մեջ ավելացնում է այս կամ այն հնչյունը. օրինակ՝ խուխտխուխտալ > հոտոտալ, խա̈լվիր > հալվոր, ճանաճչ > ճանաչ, լիճքմա̈ > լիքը, ցա̈նձըր > ցածր, ծիյաճվը̈ը̈ր > ձիաւոր, ծանդըր > ծանր, Թօ̈նդօ̈ւր > Թոնիր, շի̈րէշց > շրէշ և այլն

Մարաղայի բարբառը սիրում է կրկնել հնչյունները, մի երևույթ, որ խիստ զարգացած է Տիգրանակերտի բարբառում, տալով նրան իտալական լեզվի քաղցրահնչյունություն. օրինակ՝ վիցց > վեց, տա̈սսա > տասն, իսսուն > հիսուն, խա̈զզա̈ր > հազար, աննօ՛շ > անուշ, փըռռէլ > փռել, կ̈իննա̈ց > գնաց, շա̈պպա̈Թ > շաբաԹ և այլն։

Հետաքրքրական են նաև Մարաղայի բարբառի հապավումները. օրինակ՝ մէշ > մի քիչ, սօննա̈մ > ես ինչ իմանամ, սկօ > ահավասիկ, ծըռնիկ > ծիծեռնակ և այլն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարաղայի բարբառի հոգնակիներն են «իր», «նիր», և «ք'իր», որոնցից, «իր» ունենում են միավանկ բառերը, «նիր» ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը և «ք'իր» բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերը. օրինակ. եծ, եծիր. առչ առչիր. թիվ, թիվիր. կասու, կասունիր. *կ'ա̈*րի, *կ'ա̈*րինիր. երազ, երազք'իր. սուղից, սուղիսք'իր *և այլն։*

Մարաղայի բարբառն ունի 6 հոլով, ներգոյական հոլով չունի, բառերի մեծ մասը պատկանում են «ի» հոլովման, բայց մի շարք բառեր ենթարկվում են «ու» հոլովման, հատկապես անորոշ դերբայները։ Մարաղայի բարբառում բացառական հոլովը ունենում է «է» վերջավորություն։

Կան բառեր որոնք ենթարկվում են ա, վա, օչ, օր, *հոլովումներին։*

Եզակի

Ուղղ.	*էք'ի*	*խուխտ*	*պըտիկ'*	*աշուն*
Սեռ.	*էք'իյի*	*խուխտու*	*պըտկա*	*աշունվա*
Տր.	*էք'իյին*	*խուխտուն*	*պըտկան*	*աշունվան*
Հայց.	*էք'ի*	*խուխտ*	*պըտիկ'*	*աշուն*
Բաց.	*էք'իյէն*	*խուխտէն*	*պըտկէն*	*աշունվանէն*
Գործ.	*էք'իյօվ*	*խուխտով*	*պըտկով*	*աշունվանով*

Հոգնակի

Ուղղ.	*էք'ինիր*	*խուխտիր*
Սեռ.	*էք'ինիրի*	*խուխտիրի*
Տր.	*էք'ինիրին*	*խուխտիրին*
Հայց.	*էք'ինիր*	*խուխտիր*
Բաց.	*էք'ինիրէն*	*խուխտիրէն*
Գործ.	*էք'ինիրով*	*խուխտիրով*

Ուղղ.	*պըտիյնիր*	*աշունք'իր*
Սեռ.	*պըտիյնիրի*	*աշունք'իրի*
Տր.	*պըտիյնիրին*	*աշունք'իրին*
Հայց.	*պըտիյնիր*	*աշունք'իր*
Բաց.	*պըտիյնիրէն*	*աշունք'իրէն*
Գործ.	*պըտիյնիրով*	*աշունք'իրով*

Ածականների մեջ գործածական է «ավըլին» ածանցը, որ առանձին համեմատական աստիճան է կազմում. օրինակ՝ սիվավըլին >

ըևաւուն, Ննղավըրն > նեղավուն։ Գերադրական աստիճանը կազմվում է «լափ» խիստ բառով. օրինակ՝ լափ ճուչ=ամենամեծ, լափ աղէկ'=ամենալավ։ Քանակական թվականներից հետաքըրքրական են՝ իցցուն > հիսուն, օխտանացցուն > յոթանասուն, վացցուն > վաթսուն, ութանացցուն > ութսուն, իննանացցուն > իննըսուն։

Դասական թվականները կազմում են ածրբեջանական «իմջի» վերջավորությամբ. «առաջին» բառը հենց ադրբեջաներենով է. օրինակ՝ ա̈վվա̈լիմջի > առաջին, էրկուսըմջի > երկրորդ, իրիք'իմջի > երրորդ, չուիրսըմջի > չորրորդ և այլն։

Մարաղայի բարբառի դերանունների հոլովումը բավական նման է Ուրմիայի բարբառին, մասամբ էլ Վանի բարբառին։ Ավանի խոսվածքում հոլովումը բավական մոտեցել է Ուրմիայի բարբառին.

Անձնական դերանունների հոլովում

Եզակի

յիս	*տո̇ւ̇ն*	*զինք'ա̈*
իմ	*ք'ու*	*ո̇ւ̇ր*
ինձի	*ք'էզի, քիզի*	*ո̇ւ̇րա̈ ո̈ւրո̈ւն*
»	» »	» »
ինձիմէն ինձմէն իզմէն	*ք'էզիմէն, ք'իզիմէն, ք'իզմէն*	*ո̇ւ̇րմէն, ո̈ւրէն*
ինձիմօվ, ինձմօվ իզմօվ	*ք'էզիմօվ, ք'իզիմօվ, ք'իզմօվ*	*ուրմօվ, ո̈ւրօվ*

Հոգնակի

մինք'	*տո̇ւ̇ք'*	*զինք'իրա̈*
միր	*ծիր*	*ո̇ւ̇րո̇ւ̇նց, ո̇ւ̇րո̇ւ̇ւս*
մէզի միզի	*ծիզի, ծէզի*	*ո̈ւրո̇ւ̇նցա̈*
» »	» »	»
մէզիմէն, միզիմէն մէզմէն միզմէն	*ծիզիմէն, ծէզիմէն ծիզմէն, ծէզմէն*	*ո̇ւ̇րո̇ւ̇նցէն, ո̇ւ̇րո̇ւ̇ւսմէն, ո̇ւ̇րո̈ւնցմէն*
մէզիմօվ, միզիմօվ մէզմօվ, միզմօվ	*ծիզիմօվ, ծէզիմօվ ծիզմօվ, ծէզմօվ*	*ո̇ւ̇րո̇ւ̇նցմօվ, ո̇ւ̇րո̇ւ̇ւսմօվ*

«Զինք'ա̈ բառը ստացական հոդով գործածվելով ՝հոգնակիում ստանում է «իք» մասնիկը. օրին. զինք'իս, զինքիրիս, զինք'իք'իրիս։

Ցուցական դերանունների հոլովումը

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	էտ (էտա)	տա̈նք', տա̈նք'ա̈ն, տա̈ն'
Սեռ.	տա̈ր, տա̈րա̈	տա̈նց, տա̈նցա̈, տա̈ս
Տր.	տա̈րա̈ տա̈րա̈ն	տա̈նցա̈, տա̈նցա̈ն
Հայց.	» »	» »
Բաց.	տա̈րմէն	տա̈սմէն տա̈նցէն
Գործ.	տա̈րմօվ	տա̈սմօվ տա̈նցօվ

Եզակի

Ուղղ.	էն
Սեռ.	նա̈ր, նա̈րա̈, ինդա̈ր, ինդա̈րա̈
Տր.	նա̈րա̈, նա̈րա̈ն, ինդա̈րա̈, ինդա̈րա̈ն
Հայց.	» » » »
Բաց.	նա̈րմէն, ինդա̈րմէն
Գործ.	նա̈րմօվ ինդա̈րմօվ

Հոգնակի

Ուղղ.	նա̈նք' նա̈նք'ա̈ն, նա̈ն', ինդա̈նք', ինդա̈ն'
Սեռ.	նա̈նց, նա̈նցա̈, նա̈ս, ինդա̈նց, ինդա̈նցա̈, ինդա̈ս
Տր.	նա̈նցա̈, նա̈նցա̈ն, ինդա̈նցա̈, ինդա̈նցա̈ն
Հայց.	» » » »
Բաց.	նա̈սմէն, նա̈նցէն, ինդա̈սմէն, ինդա̈նցէն
Գործ.	նա̈սմօվ, նա̈նցօվ, ինդա̈սմօվ, ինդա̈նցմօվ

Մարաղայի բարբառում «էս» դերանունը բացակայում է այնպես, ինչպես Ուրմիայի բարբառում։

Հարցական դերանունների հոլովում

Եզակի

Ուղղ.	վա̈վ—ծվ	վա̈ր—ո՞ր
Սեռ.	վա̈րի	վիրի
Տր.	վա̈րին	վիրին
Հայց.	»	»
Բաց.	վա̈րմէն	վիրմէն
Գործ.	վա̈րմօվ	վիրմօվ

Հոգնակի

Ուղղ.	վա̈վիր	վա̈րիր, վիրիրա̈
Սեռ.	վա̈րինց	վիրինց

Տր. վա̈րինցա̈, վա̈րիրին, վիրիրին
Հայց. » » »
Բաց. վա̈սմէն, վիրիսմէն, վիսմէն, վա̈րիրէն, վիրիրէն,
Գործ. վա̈սմօվ, վիսմօվ, վիրիրմէն վիրիրմօվ, վիրինցմօվ, վի-
վարիսմօվ, վարիրմօվ, րիսմօվ։

Մարաղայի բարբառն այն հազվագյուտ բարբառներից է, որի «ով» հոլովական դերանունն ունի հոգնակիի ձևեր բոլոր հոլովներում։

Խոնարհում

Մարաղայի բարբառն ունի «ի» և «ա» խոնարհում։ Սահմանական եղանակի ներկան կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի ներկայով, իսկ անցյալի անկատարը, ինչպես և բոլոր բաղադրյալ ժամանակների անցյալը կազմվում է «էր» անփոփոխ մասնիկով, որն ընդհանուր է Ուրմիայի, և Մարաղայի բարբառներում և Խոյի բարբառի որոշ խոսվածքներում։

Ներկա

սըրէլ իմ—սըրում եմ	տօղալ ը́մ—դողում եմ
» իս	» ըս
» ի́	» ը́
» ինք՛	» ընք՛
» էք՛	» էք՛
» ին	» ըն

Անցյալ անկատար

սըրէլ ի́մ էր—սըրում էի	տօղալ ը́մ էր—դողում էի
սըրէլ ի́ս »	տօղալ ը́ս էր
սըրէլ է՛ր	տօղալ է՛ր
սըրէլ ինք՛ էր	տօղալ ը́նք՛ էր
սըրէլ է՛ք՛ էր	տօղալ է՛ք՛ էր
սըրէլ ին էր	տօղալ ըն էր

Մարաղայի բարբառում ներկան կազմվում է նաև «ի» (ը) վերջավորություն ունեցող դերբայով, այսինքն լինում է՝ սըրէլի յիմ, սըրէլի յիս և այլն։

Ապառնին կազմվում է ապառնի դերբայով, որի հիմքի «է»

ձայնավորը բարեհնչյունության օրենքով վերածվում է օ-ի, սըրբօլու, տըղալօլու։

Ապառնի

սըրբօլու յիմ	տօղալու յիմ
» յիս	» յիս
» յի	» յի
» յինք	» յինք
» յէք	» յէք
» յին	» յին

Անցյալի ապառնի

սըրբօլու յիմ էր	տօղալու յիմ էր
» յիս էր	» յիս էր
» յէր	» յէր
» յինք էր	» յինք էր
» յէք էր	» յէք էր
» յին էր	» յին էր

Վաղակատար դերբայը կազմվում է «իր», իսկ որոշ խոսվածքներում «ըր» վերջավորությամբ՝ սըրիր, սըրէր։ Խոյի բարբառի որոշ խոսվածքներում (ինչպես օրինակ Կոտայքի շրջանի Արամուս գյուղի) լինում է նաև «իյ» վերջավորությամբ՝ սըրիյ (էմ, էս, ի)։

Վաղակատար

սըրբիր իմ	տօղացիր իմ
» իս	» իս
» ի	» ի
» ինք	» ինք
» էք	» էք
» ին	» ին

Անցյալի վաղակատար

սըրբիր իմ էր	տօղացիր իմ էր
» իս »	» իս էր
» էր	» էր
» ինք էր	» ինք էր
» էք էր	» էք էր
» ին էր	» ին էր

Նույնպես է կազմվում հարակատարը, միայն «ած» վերջավորություն ունեցող հարակատար դերբայով։

Անցյալ կատարյալը առաջին դեմքում ունենում է «մ» վերջավորություն, ինչպես Ուրմիայի և Խոյի բարբառներում, ըստ որում «է» խոնարհման բայերը ցոյական են, իսկ «ա» խոնարհման բայերը անցոյական։

Անցյալ կատարյալ

սըրըմ	տօղացըմ	մընացըմ
սըրէր	տօղացըր	մընացըր
սըրից	տօղաց	մընաց
սըրընք	տօղացընք	մընացընք
սըրըք	տօղացըք	մընացըք
սըրըն	տօղացըն	մընացըն

Ներդաշնակության օրենքով անցյալ կատարյալի վերջավորության ձայնավորը համաձայնում է արմատում եղած ձայնավորին, որով և տարբերվում է ընդհանուր կանոնից, օրինակ՝ ունձում, ունձիր, ունձից, ունձունք, ունձուք, ունձուն. խարփամ, խարփար, խարփավ, խարփանք, խարփաք, խարփան։

Ըղձական եղանակում «է» խոնարհման ձևերը ունենում են հիմքում «ի» ձայնավոր, բացի երրորդ դեմքից, որտեղ լինում է «ը» և հոգնակի երկրորդ դեմքից, որտեղ լինում է «է», որով և տարբերվում է անցյալ կատարյալից. օրինակ՝

Սըրիմ—սրեմ, սըրըմ—սրեցի։ Ըղձական անցյալի ապառնին կազմվում է նույն անփոփոխ «էր» մասնիկով։

Ըղձական եղանակ

Ապառնի		Անցյալի ապառնի	
սըրիմ	տօղամ	սըրիմ էր	տօղամ էր
սըրիս	տօղաս	սըրիս էր	տօղաս էր
սըրը	տօղա	սըրէր	տօղար
սըրինքʼ	տօղանք	սըրինքʼ էր	տօղանք էր
սըրէքʼ	տօղաք	սըրէքʼ էր	տօղաք էր
սըրին	տօղան	սըրին էր	տօղան էր

Պայմանական և հարկադրական եղանակները կազմվում են ըղձականի ձևերից, ավելացրած՝ պայմանականի համար «կ» կամ «կը» եղանակիչը, իսկ հարկադրականի համար կամ «կիպտա̈» և կամ արդրբեջանական «փ̈ա̈րա̈քʼ, փ̈ա̈րա̈նʼ» եղանակիչը։

Պայմանական եղանակ

Ապառնի

կըսըրիմ—կսրեմ	*կիկ՛ա̈մ—կգամ*
կըսըրիս	*կիկ՛ա̈ս*
կըսըրը	*կիկ՛ա̈*
կըսըրինք՛	*կիկ՛ա̈նք՛*
կըսըրէք՛	*կիկ՛ա̈ք՛*
կըսըրին	*կիկ՛ան*

Անցյալի ապառնի

կըսըրիմ էր—կսրեի	*կիկ՛ա̈մ էր*
կըսըրիս էր	*կիկ՛ա̈ս էր*
կըսըրէր	*կիկ՛ա̈ր*
կըսըրինք՛ էր	*կիկ՛ա̈նք՛ էր*
կըսըրէք՛ էր	*կիկ՛ա̈ք՛ էր*
կըսըրին էր	*կիկ՛ա̈ն էր*

Հարկադրական եղանակ

Ապառնի

կիպտա̈ կամ փ՛ա̈րթա̈ն՛ սըրիմ
» » *սըրիս*
» » *սըրը́*
» » *սըրինք՛*
» » *սըրէք՛*
» » *սըրէն*

Անցյալի ապառնի

կիպտա̈ կամ փ՛ա̈րթա̈ն՛ սըրիմ էր
» » *սըրիս էր*
» » *սըրէր*
» » *սըրինք՛ էր*
» » *սըրէք՛ էր*
» » *սըրին էր*

ՆՄՈՒՇՆԵՐ «Լ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՎ

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌՈՎ

ԻՄ ՆԻՇԱՆԲԱԶՈՒԹԻՆԸ̈[1]

Ախպէր, խօսկը́ դո̈նգա̈. մըկա Թա̈րվիզ հէս պա̈նիր իմ տըսնէլի,

---

[1] *Բերված է Հ. Աճառյանի «Քննություն Մարաղայի բարբառի» աշխատությունից, էջ 326—336։*

մըկա իմ ինա̈լի, ք՚ի միր ա̈յյամա իշ կէղա̈ կուիր էր։ Դո̈ւղա̈ միր ա̈յյամին էտէս պա̈ցութունք՚իր չըկար․ էն ք՚ի օսօր յիս իմ տըսնէլի, լափ ճ̈ալըմ շուււար։

Դէյա—բաբաս (հայրս—մայրս) վաղո̈ւց ինք՚իր ին էր քամըկօվըս, ինձի նիշան տինին էր․ ամմա յիս շատ էլ վիզի տէմ չիմ էր տա̀լը։ Ախպըէր, ախըրա, էրկու շա̈պպա̈թ կըյէր, էլ միր տունա ո̈ւրո̈ւշ խօսկ չըկար․ Մարաղայը քո̈ւլլո̈ւ ախչիյք՚իրէ անունա տուրուն․ ամմա, էտ էլ ասիմ, իձիմէն իսկէ խա̈բա̈ր տունօղ չըկա, ք՚ի վա̈րին իմ ո̈ւզէլի, յա վա̈րին իմ խավնէլի, յա իսկի չիմ ո̈ւզէլի։ Մա̈խլա̈ս․ մէ քիշիր մըտանք տէղիք՚իրիս ք՚ինօլու։ Կասիս հէնց ինձի այան էլավ․ օց ինփ՚ավ վիրա̈ս․ կատալու կուղըա̈թ ք՚ո̈ճ̈ո̈ւս չտարավ․ զարթո̈ւն իմ էր․ մէկ՚ էլ տըսսամ Նա̈նա̈ս ասաց․ «Ք՚էզի խէտ իմ, օ՜յ․ տիս էն փ՚ա̈ղա̈ն ք՚ինած ը յա զարթո̈ւն ո̈ւ»։ Ցէս էլ, ք՚ո̈ւ ա̈րիվա̈, ինձի հէս թո̈ւլք՚ծլո̈ւմո̈ւ տուրուիմ, իսկի նա̈փա̈ս էլ չիմ ք՚ա̈շէլի՛․ հա̈լա̈ կա̈ստա̈ն թիվիրս էլ խանիր իմ տո̈ւս։ Դաղաշա էկավ, թիվիրիս ժօղից, յօրղանա ք՚ա̈շից վիրա̈ս, տա̈ուցավ Նա̈նա̈յիս, ասաց․ «Գ՚ուզիրէ ախչիկ՚, փ՚ա̈ղա̈ն վաղո̈ւց ի ք՚ինի»։

Դէ բույօլ տա̈նք՚ բաշլամըշըն նաուին նաուին փ՚ա̈լա̈ջին տաղիրէ մէչա։ Նա̈նա̈ս ասաց․ «Մարթ, ինա̈լիս իշ կա․ օսօր Վա̈րթիփ՚ո̈ւլո̈ւ խէտա̈ կ՚ինա̈ցընք հութանը լան Գ՚աբրէլիս տունա․ նա̈րա̈ մէ խօրօտիկ՚ ախչիկ՚ ո̈ւնո̈ւ, էրկ՚էն ծամէրօվ, թութուշ—մութուշ, պա̈ղա̈ճի պէս իրիսօվ։ Դո̈ւզա̈, մարթ, իմ սիրտիս շատ կըպպավ․ իս էն ախչըկան ծէռէս չիմ խանօլու։ Ամմա էտ էլ ասըմ, ո̈ւզօխք՚իր էլ շատ ո̈ւնո̈ւ։ Իշ մա̈սլահաթ իս ինա̈լի, մարթ»

Դաղաշս էլ տա̈ուցավ ասաց․ «Բալամ, Գ՚ուզիրէ ախչիկ՚․ էտ կընգա պա̈ն ի․ զինք՚իտ կ՚ինա̈ս․ ա̈յա̈ մա̈սլահաթ իս ինա̈լի՝ տու»։

Էտ էլավ տա̈ս մա̈սլահաթա։

Մա̈խլա̈ս, տարան միր մանիկ՚ա̈ տուրուն։ Վիցց ամըս ընցիր էր միր նիշան տինէլէն, ամմա նա̈ր էն խօրօտիյ պա̈ղա̈ճի իրիսի հա̈սրա̈թա̈ ճ̈ացըմ։

Ախպըէր, միր էտ յօլդաշք՚իրա̈ միզի ճամբըխաս խանըն․ հէս վա̈խ էլավ, ասաց․ «Գ՚ա̈ղա̈, տո̈ւն իշ բէկկիրյա̈թ իս․ Վիցց ամըս ի տո̈ւն մէ չիմացար նիշանածիտ տըսնէլ»։ Ցիս էլ ախու ծէնիս լափ կըուիր իմ էր․ էլ ինչ ասիմ․ տըսնէլա̈ հասանդ չի ք՚ի։

Մա̈խլա̈ս, միր խէլք՚ին մըտավ, ախպըէր, ամմա, ինչօխ տըսնիմ․ հէնց էն ի չա̈թին դա̈։ Ասէլիմ․ «ասված, բա̈ էտէնց էլ կըայ կ՚ը՛լը․ յիս բէյնավա, անունս ըլը նիշանած; ք՚ինչ ճ̈աց տաու՛

ըլ՛ը, իմ տըսսածա, իմ իմացածա անջաղ էն ի, ինա՛լիմ նիշանածիս անունա Սարահփ՛ո̈ւլ ո̈ւ։ Աղվիրթէն խօրօտիկ՛ ի, իրխսա պա՛ղա՛ճի պէս ի, էն էլ նա՛նա՛ս կինա՛. ասէլ ին»։

Մա՛խլա՛ս. անէրիս կնիկ՛ա՛, Լէյլին, միզի մէ կօլայ ուժուդ տուրից. ասաց. «փէսա, վա՛ղա՛ քիշիր յա՛ր, Սարահգո̈՛ւլին նիշաս կըտամ»։ Մինք՛ էլ յէլան՛ կ՛ինա՛ցընք, մէ օնգո̈՛րթ շահը տուրուն՛ Թարվիզի նօղուլո̈ւ, մո̈՛նգո̈՛րթ շահը տուրուն՛ խուրմայը̈, մո̈՛նգո̈՛րթ շահը էլ տուրումք էրկու գա՛նա՛ աղէյ սավա նառը, տա՛ն՛ տիրըն՛ մէ փ՛ո̈ւլմաշալլահ լայըղը̈ մէչ։ Քիշէրէն մէ էրկու սահաթ կը̈՛լէր ընցիր էր, ինձի տուրում Գ՛իլասըլի (փողոցի անումն է)։ Աժմա ծէռ—վը̈՛տըս հէս տօղալը, ասէլ իմ՝ բառըմ ասված ա՛նէր տա՛ն՛ զարթո̈ւն չըլլին էր. իլահըմ անէրըս Կըվընդին (Ղևոնդ), չո̈ւնքո̈ւ էն զըմմընէն շո̈ւնո̈ւ։

Խասսամ տուռա. հա՛լբա՛թ Լէյլին ինա՛լ էր. ինձի պա՛նի տինօղա հէս զին՛ն էր. տուռա թամամ չէր սօղնըկած. պա՛ցըմ, մտամ նիս՝ պա՛կ՛ա՛։ Տըսսամ ճրան՛ զադ չկա. զըմմըին ք՛ինիր ին կ՛ո̈ւշո̈՛վլին. տուռն էլ կ՛էս պա՛ց ի, չո̈ւնք՛ո̈ւ շատ էլ հա՛լա՛ հավանիրա՛ չի ցուռտը̈։ Սօլիրիս խանըմ, տուռում կօլթուղուս, ընցամ նիս։ Ա̈վվա՛լ մէ աղէյ ա՛նգ՛աշ տիրըմ, տըսսամ խէյր, զըմմըին ք՛ինած ին. աժմա հէս սիրտիս թըփթըփալը ք՛ի ասէլ իմ՝ յարաբ էտ Լէյլին էլ ք՛ինած չը̈՛լը̈. բառըմ զարթո̈ւն ըլէր, մէ թա՛հրօվ ա՛նգ՛ա՛ճիս ասէր մէ պա՛ն, յա ծէռէս պըռնէր տանէր լափ հէս Սարահգ՛ո̈ւլո̈ւ կը̈շտա։ Հէնց էտ ջո̈ւռ խիյալաթք՛իրա՛ վէրցիր էր ինձի, մութ տէղա՛ պտըռտալով մէ ք՛իշ ա՛ռա՛շ կ՛ինա՛ցըմ, մէկ՛էլ տըսսամ բիրդա՛ն թառմպ, ինգ՛ամ թո̈՛նգո̈ւրա՛։ Աղէկ՛ էր ք՛ի թո̈՛նգո̈ւրա՛ պաղ էր։ Դէ բույօլ իմ թառապպալու ծէնէն զըմմըին զա՛րթան։ Ա̈վվա՛լ մէ չալըշմըշ յէլամ, ո̈ւզո̈ւմ տո̈ւս կ՛ա՛մ, տըսսամ հասաթթումօվ չըլլօլու։ Ծիր ա՛րիվա՛, նօղուլ—մօղուլ, խուրմա—մուրմա, նառ—մառ, զըմմըին ցիրվավ թո̈՛նգո̈ւրա՛։

Իմ իտ թըըպպուցէն զըմմըին զա՛րթան. էլ հարասան յէլան սաղ կ՛ո̈ւշո̈՛վլիի քինօխք՛իրա՛։ Անէրըս ասաց. «հո̈՛յհման կուէղ ը»։ Կըվընդին ծէն տուռից. «Շուխտ մէ ճըրաք ա՛րէք՛. Լէյլի, այ նամարթ, փշտօվա դա՛ուիր ի»։ Լէյլին խասկըցավ. ճրաք չա՛րա՛ց, խուփա տիրից թո̈՛նգո̈ւրո̈ւ պէրանա, մարթուն ասաց. «Պա՛ն չըկա, կատույ էր թըըպպաց»։ Մա՛խլա՛ս. տա՛նք՛ ճրան՛ն արը̈ն, հա՛րա՛ մէ գա՛յա՛նա՛յ առըն, ինգ՛ան սաղ տունա շուռ էկան. մէ զադ չիգ՛իդան. ախըրա ք՛իթած՝ (հոգնած) ինգ՛ան գէնա՛ ք՛ինան։

Դէ բույօլ յա՛ր իմ հալէս խա՛բա՛ր առ. շո̈ւնն էլ իմ հալիս

չը̈լէր. խա̈ղա̈ր խէյալ ընցավ միտքʹէս, յարաբ Աստված, յէս ունչուն յէ̈փ իմ մեալու թո̈նդո̈նրա̈. ա̈յա̈ կո̈նդիմ մէ թա̈հրօվ տո̈նս կʹա̈մ թո̈նդո̈նրէն, գʹէնա̈ կʹիղա̈րթնին տա̈նքʹ, տա̈ մեալ էլ չը̈լը̈. մէ քʹինչ էլ ընե̈ը, նա̈յին բույօլ լո̈խսա̈ կի պա̈սվի, դէ բույօլ ի̈շ քար քʹիցիմ կըլլիս. յէս կինիմ էտ անիրավքʹիրի ծէռա̈: Ախ իրիստ սիվ ը̈լը, Նէյլի խարս, էտ ի̈շ կրակա քʹիցիր ինձի: Ջա̈հա̈ննա̈մ, ո̈նչո̈ն մըկա Սարահգʹո̈նլո̈ն իրիսա̈ չիմ էր տըսալ, գʹէնա̈ չո̈նդո̈մ բա̈րա դա̈... էն կէղա̈ ը̈լը մէ տէտ իրիսի արուռօվ ռա̈դդ ը̈լըմ. կա̈լա̈թ իմ ա̈րի. մէկʹէլ տա̈ կիկʹա̈°մ...: Բա̈րա, վա̈խտին Սարահգո̈նլա̈ գինքʹա̈ կիկʹա̈. գա՜հ, էլ ինչ ա̈նիմ. սիրալ ըմ, աղվիրթ ի, կպախիմ սիրտիս. էլ տա̈ ինչ ո̈նո̈մ քʹի կʹա̈մ ինիմ կրակը մէչ:

Էտ ջո̈ռա̈ խիյալաթքʹիր վէրցիր էր ինձի, բիրդա̈ն տըսամ թո̈նդո̈նրո̈ն խուփա վէրցըն: Նէյլի խարսա յավշջա̈ ասաց. «Փէսա, յիլ քʹէլ, մէ ո̈նրո̈շ տիր կիկʹա̈ս. էս տիր իմացան»: Ծէռէս պըռնից, տո̈նս էկամ, թո̈նդո̈նրէն կո̈շծվին, ինձի մէ թա̈հրօվ քʹիցըմ տո̈նս, թիքʹը̈մ դարանըս. քո̈չայի տուռին ըռշացըմ, տըսամ պիթ շինածը. ախու կըփըլիր ին էր: Աղէկʹ էր պատա պա̈նցիր չէր. շատ ցանձր էր. մէ թա̈հրօվ ինձի քʹիցըմ քʹո̈նչա̈ն. էլ ունչուն միր տուռա քամակ էլ չըռշացըմ: Էտ էլ ասիմ, պատէն թըրպպալուն փիս իմ էր ինգʹի, մէ յանիս վիրա̈ն: Էկանʹ տուն, մէ քʹա̈նի շա̈պպա̈թ էլ ծամը̈ն քʹիցից նա̈նա̈ս կարըռկայիս. ախու կըմմիս կաղան նա̈ դադաշիս ասըմ, նա̈ էլ նա̈նա̈յիս:

Մէ ութթ ամըս էլ ընցավ, միղի փըսակըն: Ամմա մէ տիր Սարահգʹո̈նլին թա̈րիփ ալըմ, հէն կէղա̈ ծըղղաց քʹի՝ ասըմ. «Իրիսիտ սիվ ը̈լը, մըկա բույօլ կըծըղղա̈ս բա̈:

Ախպըրէր, էտ ի յէլի իմ նիշանբազութինա̈: Դէ բույօլ յա̈րէքʹ տըսնինքʹ. մինքʹ ինքʹ էր աբուռ հա̈յհա̈յօվ, յա տո̈նքʹ:

ԽՈՅԻ ԲԱՐԲԱՌՈՎ (ԲԱՋԱՐՋԱՅ ԳՅՈՒՂ)[1]

Ըլլէլ, չիլլէլ՝ մէ տուն ըլլէլ, էտ տունը ապրէլ ինն օխտ ախչիկ. էտ ախչթերին ըլլել մէ մէր, մէկ էլ մէ խէր, ըստա̈նց խէրը մէռնէլ, կընիկը ուրիշ մարթ ի առնէլ: Մառթը կընդան ասէլ. «Օխտը խատ կըլօճ թըխի՝ էթալ իննք ցախի»: Էտ կընիկը հա̈ր ախչկան մէ կըլօճ ի թխէլ, մարթի խըմայ էլ մէ կʹա̈տա̈. յի-

[1] Գրի առավ Գեղանուշ Գրիգորյանը:

տօվ վերցել իեն, էթալ իեն ցախի։ Էտ մարթը ուր խետ վերցել մէ փէտ, մէկ էլ մէ խատ շըլէլ. վերճը էթալ իեն խասնել իեն ցախի տեղը։ Ախչըթերէն մէկն ասէլ «Ծարավ իեմ». Խէրը վեր-ցէլ մէ կըլօճ ի կըլդօրէլ, յետօվ ախչըկան ասէլ. «Թամկէն կընա՛, վարտի կայնի, ընդա՛ յէլ ճո՛ւր կա, կըխըմէս»։ Էտ լըսէլ խօրը. էթալ։ Ախչըթերը հըմմենօվ. էլ էթալ են ընդա՛ ճո՛ւր իեն խըմէլ, յետօվ նըստէլ իեն դինջանալ իեն։ Խէրը մընալ մէնակ, փէտը տընդէն շըլէլն էլ քըցէլ վըրա՛ն, յետօվ էթալ թեխ տուն։ Ախ-չըթերը կ՛ա՛լ իեն տըսնալ իեն խէրն ընդա՛ չի, ասէլ իեն.

«Կօռը կա, կօպալը կա, դա՛դէն չըկա»։ Յետօվ էտ ախչը-թերը ինէլ իեն սարը չ՛ըլ, շատ իեն ման կ՛ա՛լ, վերճը խասնէլ իեն մէ կ՛եղի, նստէլ իեն մէք՛ա՛ դինջանալ են։ Յետօվ ախչը-թերը ասէլ իեն. «Քաղցած իենք»։ Ճօ՛չ ք՛ո՛ւրն ասէլ. «Վա՛վո՛ր փըստիկ ի, ա՛րէք ընդա՛յըն ուտենք»։ Փըստիկ ք՛ո՛ւրը կըլօխը տը-նել ճուեչ ք՛ըլվուէր կուջաղը, յետօվ փըստիկ ք՛ո՛ւրը կ՛ետինը ք՛ա՛նդէլ տո՛ւս ի կ՛ա՛լ մէ չա՛մից, տալ ճուեչ ք՛ըլվուէրը, էն էլ ուտէլ, մէկ էլ ի ք՛ա՛նդէլ, խանէլ տո՛ւս մէ աղուեջ, մէկ էլ ի ք՛ա՛նդէլ, էրէվալ մէ փա՛յա՛։ Էդ փա՛յա՛յի մէջ կապած ի ըլլէլ թա-քավուէրի ծիանքը։ Հա՛ր օր էդ ախչըկան էչցէլ իեն մէ վէդրա՛ չա՛մից ի խանէլ, վերճը ախչիկը մէկ էլ մըննէլո՛՝ պըռնըվէլ. Թա-քավուէրի տըղան խարցցէլ. «Ախչի տո՛ւք վա՛վ էք, հէրի՞ էք էկի ստա՛»։ Ախչիյն ասէլ. «Յեթիմ ենք, պախօղ չո՛ւնենք»։ Թաքա-վուէրի տըղան պըռնէլ տանէլ իրանց տուն, յետօվ խարցցէլ, ասէլ. «Ախչի ծէռէտ ինչ ի կ՛ա՛լ»։ Փըստիկն ասէլ. «Յես կըպէրիմ մէ ջուխտ վուէսկի—ք՛ա՛քո՛լվուէր տըղա»։ Խարցցել ճուէչ ք՛ը-վուէրը. էն էլ ասէլ. «Յես մէ խալի կըկ՛ուէրծիմ վուէր Թաքա-վուէրի կօշումը նըստի, կ՛էսն էլ կըծալին»։ Մըշնէկն ասէլ. «Յես էլ մէ ծըվի կըճեփի մէչ էնէնց խօռագ կէփիմ, վուէր Թաքավու-էրի կօշումը ուտի կ՛էսն էլ ավըլնա։ Փըստիկ ախչըկան էտ տըղան առնէլ։ Կընիկը ճըֆօվ ի մընալ. Թաքավուէրի տըղան էթալ կը-ռիվ։ Ըստա՛ր կընիկը պէրէլ մէջուխտ վուէսկի ք՛ա՛ք՛ո՛լվուէր տըղա։ Ճուէչ ք՛ո՛ւրը կ՛ուեղնիկ կ՛ուեղնալ տանէլ տընէլ մէ յա-շիկի մէչ, քըցէլ ճաղչի ճըռտուէնը, ընդանց ա՛վա՛ղը մէ շան ջուխտ թուլա յի տանէլ տընէլ տեղը։

Տըղայի խէրը նամակ ի կըրէլ, վուէր՝ Կընիկտ մէ ջուխտ շան թուլա յի պէրի։ Տղան կըրէլ, վուր՝ Հա՛ր ինչ ի, պախէք մինչև յես կ՛ա՛մ։ Նամակը ինէլ ճուէչ ք՛ըվուէր ծէռը, նամակը փուէխէլ, կըրէլ. վուէր՝ Այ խէր, կընդանըս տընէն տո՛ւս կա՛նիս։ Խէրը խար-

սի՛ն տո՛ւս ի ա՛նէլ։ Կընիկը ըլլէլ լա՛լօվ ինէլ ճամբախ, էթալ պատահէլ ճաղչըպանի. ասէլ. «Այ կընիկ, հէ՞ր իես լա՛լ»․ ասէլ. «Բա՛ ի՛նչ ա՛նեմ՝ չըլա՛մ, ճըժէրս վերցիր՛ իեն տարիր իեն Թալիր» իեն, մէ ջուխտ շան Թուլա իեն պէրի տըրի տեղը»։

Ճաղչպանի խեխճը կ՛ա՛լ, ասէլ, ճըժերիդ յես իեմ պըռնի, ընգօ մէր տունը»։ Էդ կընգան վերցէլ, տանէլ իրանց տունը, պախէլ ո՛ւրանց խըմա խարս։ Ճըժերը ճուէչանալ ին։ Թաքավուէրի տըղան կըռվէն կ՛ա՛լ, տըսնալ կընիկը տունը չի, ասէլ. «Այ խէր. բա՛ կընիկս հո՛ւ՞ր ի»։ Խէրն ասէլ. «Տո՛ւ կըրիր իր, վուէր կընգանս խան տո՛ւս, յես էլ խանիր իեմ»։ Էտ տըղան նըստէլ ձին՝ ինէլ սարը—չո՛լ ի ման կ՛ա՛լ, վերճը կընգան էլ ճժերին էլ ճարէլ. վէրցէլ տանէլ իրանց տունը. յետօվ իմանալ, վուէր կընգա ճո՛ւէչ քո՛ւրն ի սատանութուն ա՛րի. ճուէչ քըրվուէրը մաղէրը կապէլ կաթրի պուէչէն, տանէլ սարէն, քարէն քըցէլ։

Ստա՛րէն յետ Թաքավուէրի տըղան ո՛ւր կընգա խէտ ապրէլ իեն շատ աղէկ։

ՀԱՅԵՐԵՆԻ «ԿԸ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

«Կը» ճյուղին պատկանող բարբառների թիվը բավական մեծ է՝ համեմատած մյուս ճյուղի բարբառների հետ։ Հ. Աճառյանի դասակարգումով դրանց թիվը 21 է, սակայն մի շարք ենթաբարբառներ կարելի է համարել բարբառ և այդ դեպքում «Կը» ճյուղի բարբառների թիվը կարող է հասնել մինչև 25-ի։ «Կը» ճյուղի բարբառների մեծ մասը քիչ է ուսումնասիրված կամ բնավ չի ուսումնասիրված, ինչպես օրինակ՝ Տիգրանակերտի, Շապին-Գարահիսարի, Տրապիզոնի, Սյուրիայի, Սեբաստիայի, Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, և Ռոդոստոյի բարբառները։

Հայտնի բարբառներից ուսումնասիրման ենթակա են եղել հետևյալ բարբառները. Սուչավայի, Նոր-Նախիջևանի, Պոլսի (Հ. Աճառ.), Եվդոկիայի (Ց. Գազանճեան), Ակնա (Մ. Ս. Գաբրիելյան), Արաբկիրի (Մելիք Ս. Դավիթ. բեկ) և Կիլիկիայի։

Այս ուսումնասիրությունները, բացի Հ. Աճառյանի գործերից, մեծ մասամբ ավարտված չեն և կամ լեզվաբանորեն ճիշտ մշակված չեն։ Այդ պատճառով էլ «Կը» ճյուղի բարբառների մանրամասն նկարագրություն տալը առավել հնարավոր չէ։ «Կը» ճյուղի բարբառներից ամենահին ուսումնասիրությունը պետք է համարել Պոլսի բարբառի ուսումնասիրությունը, որ կատարել է

Մխիթար Աբբան, որ նպատակ է ունեցել տալու Պոլսի բարբառի քերականությունը. այդ ուսումնասիրությունը կատարված է տաճկերեն լեզվով և չի կրում լեզվաբանական ուսումնասիրության բնույթ, ուստի այդ գործով Պոլսի բարբառի մասին շատ մեծ գաղափար կազմել չի կարելի։

Միջին հայերենի աշխարհաբար տարրը պետք է համարել «Կը» ճյուղի բարբառներին պատկանող, սակայն նկատի ունենալով եղած ուսումնասիրությունների անկատարությունը, դժվար է ամեն դեպքում որոշել, թե միջին հայերենով գրողները «Կը» ճյուղի որ բարբառն են օգտագործել իրենց գրվածքների մեջ։ Շատ որոշ հայտնի է միայն, որ Կիլիկիայի միջին հայերենը հենվել է Կիլիկիայի բարբառի վրա։

«Կը» ճյուղի բարբառներով տեքստեր շատ կան, առանձնապես գրանք շատ են 19-րդ դարի սկզբներից սկսած։

«Կը» ճյուղի բարբառները, մեծ տարբերություններ ներկայացնելով, ունեն հետևյալ հիմնական ընդհանուր գծերը.

1. Ներկա և անցյալի անկատար ժամանակները կազմում են «կը» մասնիկով, որ ունենում է կը, կու, գը, գի, գա, գօ և նման ձևեր. օրինակ՝ կըսիրէմ, գըսիրէմ, գիսիրիմ և այլն։

2. Սեռական հոլովը ստանում է ն հոդը, բացի մի երկու բարբառից (Վան և այլն)։

3. Հոգնակին ենթարկվում է «ու» հոլովման (բացի Վանի, Մոկաց և Ոզմեցոց բարբառներից)։

4. Բացառական հոլովն ունենում է «է» վերջավորություն, բացի Վանի, Մոկաց և Ոզմեցոց բարբառներից։

5. Վաղակատար դերբայը կազմվում է «ր» վերջավորությամբ։

6. Շեշտը դրվում է վերջին վանկի վրա։

Այդ բոլոր նմանությունների մեջ, սակայն, ամենակարևորը և վճռականը ներկայի կազմությունն է, որ աչքի է ընկնում և անմիջապես զատում «Կը» ճյուղի բարբառը մյուսներից։

«Կը» ճյուղի բարբառներն ունեն միմյանցից բավական մեծ տարբերություններ, առանձնապես դերանունների հոլովման, մասամբ և գոյականների հոլովման, իսկ հատկապես հնչյունական սիստեմի մեջ։

Կան բարբառներ, որոնց հիմնական տարբերությունը միայն հնչյունական սիստեմի մեջ է և, եթե հոլովման կամ խո-

նարհման մեջ էլ կան տարբերություններ, ապա այդ առաջ է գալիս հնչյունական տարբերությունների հետևանքով։

«Կը» ճյուղի բարբառները հնչյունական սիստեմով ներկայացնում են բազմաթիվ այլազանություններ։ Բաղաձայնական սիստեմի բոլոր տեղաշարժերը կարելի է գտնել «Կը» ճյուղի բարբառների մեջ։ Առաջին տեղաշարժին ենթարկվում են Վանի և Մոկաց բարբառները, երկրորդ տեղաշարժին ենթարկվում են մնացած բոլոր բարբառները, բացի Կիլիկիայի բարբառից, որը ենթարկված է տեղաշարժ-տեղափոխության։

Երկրորդ տեղաշարժի հետևանքով առաջացած երկաստիճան խլազուրկ սիստեմ ունեն ութ բարբառ, որոնք մինչև առաջին համաշխարհային պատերազմը աշխարհագրորեն դասավորված էին Փոքր Ասիայի հարավում և հյուսիսում, ըստ որում հյուսիսի խումբը ձայնեղները թողնում է անշարժ, խուլերը վերածում ձայնեղների, իսկ հարավի խումբը ձայնեղները ենթարկում է առաջին տեղաշարժին, վերածելով նրանց շնչեղ խուլերի, իսկ խուլերը վերածում է ձայնեղների։ Այդ երկու խմբի բարբառները քերականությամբ միմյանց բավական նման են։ Երկաստիճան խլազուրկ բարբառների հյուսիսային խմբին պատկանում են Տրապիզոնի, Եվդոկիայի, Ղրիմի և Պոլսի բարբառները իսկ երկաստիճան խլազուրկ սիստեմի հարավային խմբին պատկանում են Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոստոյի և Նիկոմեդիայի բարբառները։ Ըստ այսմ, Նիկոմեդիայի բարբառը, թեև փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքումն է, բայց ընկնում է հարավային խմբի մեջ։ Այս ութ բարբառներից՝ իր քերականությունն արևմտահայ գրական լեզուն վերցրել է հիմնականում հյուսիսային խմբի բարբառներից, իսկ հարավային խմբի բարբառներից վերցրել է իր արտասանությունը կամ հնչյունական սիստեմը, այդ պատճառով էլ արևմտահայ գրական լեզուն պատկանում է երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմի հարավային խմբին. օրինակ․ Գադուն փերանը փաց արավ։ Գարաքեղը գուզե իր քիրքը։

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Փոքր Ասիայի միջին նահանգներում էին դասավորված հայերեն բարբառների այն խումբը՝ որ բաղաձայնական սիստեմը ենթարկում է երկրորդ տեղաշարժին։ Այդ բարբառների ձայնեղները վերածվում են շնչեղ ձայնեղների, իսկ խուլերը՝ ձայնեղների, որի հետևան-

քով ստացվում է եռաստիճան խլացուրկ բաղաձայնական սիստեմ.

բ՛ բ փ
դ՛ դ թ
ձ՛ ձ ց
ջ՛ ջ չ
գ՛ գ ք

Այսպիսի բաղաձայնական սիստեմ ունեն Ակնա, Սեբաստիայի, Խարբերդ—Երզնկայի, Շապին-Գարահիսարի և Համշենի բարբառները։ Վերջինս գտնվում է փոքր Ասիայի հյուսիսում։ Դրանից բացի այդ խմբին են պատկանում Հայաստանից և Փոքր Ասիայից դուրս գտնված Սյուրիայի և Սուչավայի բարբառները, որով կարելի է ենթադրել, թե այդ բարբառները տեղափոխվել են իրենց սիստեմակից բարբառների միջավայրից, հիմնականում արևելյան Փոքր Ասիայի միջին նահանգներից։

Այսպիսով «կը» ճյուղի բարբառների մեծ մասն ունեն բաղաձայնական խլացուրկ սիստեմ. դա այնքան շատ բարբառների հատկություն է, որ առաջին հայացքից թվում է, թե «կը» ճյուղի բարբառների ընդհանուր հատկանիշ է։ Բայց «կը» ճյուղի բարբառներից երկուսը պատկանում են քառաստիճան սիստեմին, այսինքն դրանց բաղաձայնական սիստեմը ենթարկվում է երկրորդ աստիճանի լրիվ տեղաշարժին։ Այդ բարբառներն են Մշո և Կարնո բարբառները։ Բաղաձայնական սիստեմով դրանք նմանվում են «Ում» ճյուղի երկու հիմնական բարբառներին՝ Երևանի և Նոր-Ջուղայի։ Այսպիսով կենտրոնական Հայաստանի հիմնական բարբառները պատկանում են բաղաձայնների քառաստիճան խմբին։ Այս վերլուծությունից կարող ենք մի եզրակացություն անել, դա այն է, որ բաղաձայնական սիստեմով նման բարբառները միմյանց հարևան են եղել, աշխարհագրորեն մոտիկ դասավորված, ուստի եթե դրանցից մեկը կամ երկուսը գտնում ենք այժմ ավելի հեռու և կամ շատ հեռու, պետք է ենթադրենք, որ գաղթած են այդ միջավայրից։ Բաղաձայնական սիստեմի նմանությունը առաջացել է պատմականորեն, այդպես է եղել նաև ձևաբանությունը, սակայն, ըստ երևույթին, բաղաձայնական սիստեմի ընդհանրությունները ստեղծվել են ավելի դանդաղ և ուշ, քան ձևաբանության ընդհանրությունները։

Բաղաձայնական սիստեմը, մեր, կարծիքով, նախկին տոհ-

մական լեզվի վերապրուկ է, որ դեռ չի անհայտացել, և դրա հետևանքով էլ պահպանվել է բարբառայնությունն ընդհանրապես։ Չի կարելի ժխտել, որ ձևաբանական կատեգորիան ևս, ինչպես և բառապաշարային տարբերությունները, բարբառայնությունը պահպանելու հիմնական պատճառներից են։ «Կը» ճյուղի բարբառների մեջ չկան այնպիսինները, որոնց բաղաձայնական սիստեմը որևէ տեղաշարժի չենթարկվեր, այսինքն լինեն այնպիսի սիստեմի, ինչպիսին Թբիլիսիի, Արթվինի, Ագուլիսի, Մեղրու և Կարճևանի բարբառներն են, որոնց բաղաձայնական սիստեմը գրաբարանման է։

1. ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Հնչյունաբանություն

Վանի բարբառը պատկանում է «Կը» ճյուղի երկաստիճան ձայնեղագուրկ խմբին։

Վանի բարբառը ձայնավորով հարուստ բարբառներից է, ունի ա, ա̈, է, ե, ը, ի, ո, օ, օ̈, ու, ու̈։

Այս ձայնավորներից ա̈, օ̈, ու̈ վերին բարձրության ձայնավորներ են, ե-ն և ռ-ն երկբարբառային արտասանություն ունեցող ձայնավորներ են, մյուսները հայերենի սովորական ձայնավորներն են։ Վանի բարբառն առանձնապես աչքի է ընկնում իր ռ և ե երկբարբառային ձայնավորներով, ի տարբերություն մյուս շատ բարբառների։ Այդպիսի ձայնավորներ ունեցել է նաև գրաբարը։ Մեր կարծիքով՝ այս ձայնավորները Վանի բարբառը ժառանգած պետք է լինի իր նախամայր բնիկ լեզվից, որովհետև խալդերեն լեզվի մեջ հաճախ նկատում ենք «ie» և «uu» վանկերը, որոնք այլ բան չեն, քան երկբարբառային ե և ռ հնչյունների սեպագիր նշանները։

Գրաբարի երկբարբառները Վանի բարբառում ունեն համապատասխան պարզ հնչյուններ, ըստ որում.

ա̈յ > է. խէր > հայր, փէլք > փայլ, լէն > լայն.

> ի. իկ՛ի > այգի, իրիցէլ > այրել, իրիկ > այրիկ.

ոյ > ո, ո̈է, ու. կապուտ > կապոյտ, պո̈էն > բոյն, պատրուք՛ > պատրոյգ։

«Ը» ձայնավորը բառասկզբում չի հանդիպում, այդպիսի ձայնավոր ունեցող բառերի մեջ Վանի բարբառը, կամ ը-ն վերափոխում է ի-ի, ինչպես օրինակ, ինգ՛եր—ընկեր, ինգ՛ա̈վ—ընկավ, և կամ ուղղակի դուրս է գցում, օրինակ, գյո̈գ—ընկոյզ,

ձիկ—ընձիկ. ինչպես այստեղ դուրս է ընկնում ոչ միայն ը ձայնավորը, այլև ըն կապակցությունը։

Դժվար է որևէ օրենք գտնել վերին բարձրության ձայնավորների գործածության մեջ, բացի վաղուց դիտած այն կանոնից, որ վ-ից հետո սովորաբար գործածվում է վերին բարձրության ա, օրինակ, վա̈զնել—վազել, վա̈րտապետ—վարդապետ, լըվա̈լ—լվալ և այլն։

Բաղաձայնական սիստեմով Վանի բարբառը պատկանում է արևելյան խմբին, այսինքն ենթարկվում է առաջին տեղաշարժին. ձայնեղները վերածվում են խուլերի, որով և ստացվում է երկաստիճան ձայնեղազուրկ սիստեմ։ Ձայնեղ հնչյուններ պատահում են կամ ռնգայինից հետո կամ օտար բառերի մեջ, նույնիսկ բառամիջում շատ դեպքերում ձայնեղները վերածվում են ոչ թե շնչեղ խուլերի, ինչպես մյուս բարբառներում, այլ խուլերի, օրինակ, վա̈րտա̈պետ—վարդապետ, պէրան, > բերան, պա̈ն > բան, տա̈շտ > դաշտ, կընա̈ց > գնաց և այլն։

Բաղաձայնների մասնակի փոփոխություններից կարելի է նշել հետևյալները.

«Հ» հնչյունի փոխարեն Վանի բարբառն ունի «խ», մի հատկություն, որ ունեն Վանի բարբառը և նրան մոտիկ գտնվող բարբառները. այդ հատկությունը ևս մեր կարծիքով Վանի բարբառը ժառանգած պիտի լինի բիայնական լեզվից. օրինակներ՝

Խաց > հաց, խոկ՛ի > հոգի, խազալ > հազալ և այլն։

«Բ» հնչյունը բաղաձայնից առաջ վերածվում է «հ» հնչյունի, օրինակ ահ՛լոր—աքլոր, կիհ՛սեր—կանայք, կ՛իճիյտեր—գինիներ և այլն։

Վանի բարբառում ձ, ծ, ց, և ջ, ճ, չ, հնչյունները երբեմն ենթարկվում են անկման, կորցնելով իրենց պայթական մասը։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վանի բարբառի հոգնակիներն են՝ եր, ներ, հ՛տեր, ստար, օրինակ. խուշտեր, առուներ, կ՛ինիհ՛տեր, էկ՛եստար։

Վանի բարբառը ներգոյական հոլով չունի։ Բացառականի վերջավորությունն է «ից» («Ում» ճյուղի բարբառների նման), հոգնակի սեռական, տրական և բացառական հոլովներն ունեն «աց» վերջավորություն։ Հոլովման ընդհանուր պատկերը կլինի հետևյալը.

Եզակի-հոգնակի

Ուղղ.	*խուէտ*	*խուէտեր*
Սեռ.	*խուէտի*	*խուէտերաց*
Տր.	*խուէտին*	*խուէտերաց*
Հայց.	*խուէտ*	*խուէտեր*
Բաց.	*խուէտից*	*խուէտերաց*
Գործ.	*խուէտով*	*խուէտերով*

Վանի բարբառի դերանունները յուրատեսակ են հոլովվում. այսպես՝ առաջին դեմքի անձնական «ես» դերանունը տրականում լինում է «ձի», «ձիկ» կամ «զի», «զիկ», որովհետև սկզբի «ըն» կորցնում է, բացառականում լինում է «ձիզնից», գործիականում՝ կամ ձիզնով կամ զիզնով։ Բառասկզբի «ձ»-ն վկայում է, թե դրան նախորդել է ռնգային հնչյուն, որ ընկել է, այլապես Վանի բարբառը բառասկզբում ձայնեղ չէր գործածի։ Տրական հոլովում անձնական դերանունների եզակիում և հոգնակիում վերջին «զ»-ն կորչում է, բայց վերականգնվում է բացառականում. Տրակ. մե, Բացառական՝ մեզնից, Տրական ք՛ե, ձե, *Բացառական՝* ք՛եզնից, ձեզնից։

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	*յես*	*տու̇*	*մենք՛*	*տու̇ք՛*
Սեռ.	*իմ*	*ք՛ո*	*մեր*	*ձեր*
Տր.	*ձի, ձիկ, զի, զիկ*	*ք՛ե*	*մե*	*ձե*
Հայց.	»	»	»	»
Բաց.	*ձիզնից զիզնից*	*ք՛եզնից*	*մեզնից*	*ձեզնից*
Գործ.	*ձիզնով, զիզնով*	*ք՛եզնով*	*մեզնով*	*ձեզնով*

Ցուցական դերանունները լինում են էս, էսի, էսա էտ, էտի, էտա, էն, էնի, էնա *ձևերով. բացակայում են՝* սա, դա, նա *ցուցական դերանունները։ Հոլովման ժամանակ «է» ձայնավորը, հետևելով հայերենի ընդհանուր օրենքին, վերածվում է* ի*-ի, իսկ սեռականը ստանում է «որ» վերջավորություն, որ գտնում ենք գրաբարյան* սորա, դորա, նորա, այսորիկ, այդորիկ, այնորիկ *ձևերի մեջ։ Այդ «որ» մասնիկը Վանի բարբառն արտասանում է* ուեր

Եզակի

Ուղղ.	*էս, էսի, էսա*	*էտ էտի էտա*	*էն, էնի, էնա*
Սեռ.	*իսոր*	*իտոր*	*ինոր*
Տր.	»	»	»

Հայց.	էս, իսոր	էտ, իտոր	էն, ինոր
Բաց.	իսորմից	իտորմից	ինորմից
Գործ.	իսորմով	իտորմով	ինորմով

Հոգնակի

Ուղղ.	իսոնք	իտոնք	ինոնք
Սեռ.	իսոնց	իտոնց	ինոնց
Տր.	»	»	»
Հայց.	»	»	»
Բաց.	իսոնցից	իտոնցից	ինոնցից
Գործ.	իսոնցով	իտոնցով	ինոնցով

Հարցական և հարաբերական *դերանունը Վանի բարբառում կլինեն* վով և վոր *ձևով, այսինքն բառասկզբի* ո-ն *(ով), որ մենք արտասանում ենք «օ», Վանի բարբառը հավատարիմ գրաբարին և իրեն, արտասանում է «վով», այսինքն* ո *հնչյունի շրթնային էլեմենտը ուժեղացնում է և արտասանում «վ», իսկ* ո-ն *շարունակում է երկբարբառային ձևով արտասանել։ Նույն պատճառով էլ «ով» դերանվան գրաբարյան «ոյր» ձևը արտասանում է «վիր»։*

	Եզակի		Հոգնակի
Ուղղ.	վուէվ	վուէր	վուրոնք
Սեռ.	վիր	վուրու	վուրոնց
Տր.	վիր	վուրու	վուրոնց
Հայց.	վիր	վուէր	վուրոնք
Բաց.	վիրնից, վիրմից	վուրուց	վուրոնցից
Գործ.	վիրնով, վիրմով	վուրնով	վուրոնցմով

Խոնարհում

Վանի բարբառի ներկան կազմվում է «կը» մասնիկով, որն ավելանում է ըղձական ձևի վրա, այսինքն Վանի բարբառի ներկայի ձևը նույնն է, ինչ որ մեր գրական լեզվի պայմանական ձևը։ Այդ պատճառով Վանի բարբառի ներկան, անցյալի անկատարը և պայմանականի ձևերը նույնն են։ Որովհետև Վանի բարբառը ապառնի դերբայ չունի, ուստի ներկայի և անցյալի անկատարի ձևերը նաև ապառնի ժամանակներ է ցույց տալիս։ Վաղակատարն ունենում է «ր» վերջավորություն, որին նախորդում է «է», եթե օժանդակ բայն ունի «ե» ձայնավոր, և «ի», եթե

օժանդակ բայն ունի «ի» ձայնավոր։ Հարակատար դերբայն ունենում է և՛ «ած» և՛ «ուկ» վերջավորություն։ Կարծում ենք, որ վերջին վերջավորությունը Մշո բարբառից յուրացրած ձև է։

Ներկա	Անցյալի անկատար
կը սըրեմ	կը սըրի
կը սըրես	կը սըրիր
կը սըրի	կը սըրէր
կը սըրենք	կը սըրինք
կը սըրէք	կը սըրիք
կը սըրեն	կը սըրին

Վաղակատար	Անցյալի վաղակատար
սըրէր եմ	սըրեր ի
» ես	» իր
» ի	սըրեր էր
» ենք	սըրեր ինք
» էք	սըրեր իք
» են	սըրեր ին

Անցյալ կատարյալ		Հրամայական	
սըրեցի	սըրեցինք	սըրի́	սըրէ՛ք
սըրեցիր	սըրեցիք	մի սըրե́	մէք սըրե́
սըրեց	սըրեցին		

ՆՄՈՒՇՆԵՐ ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌՈՎ

ԾԷ՞Թ Ի, ԹԷ ՊԷ՞Տ Ի

Երևանցի.— Լա́վ աղ, լա́վ աղ...
Վանեցի պառավ.— Քյա տըղա́, էտա́ ի́նչ ի կըծախես։
Երևանցի.— Մայրիգ, ա́ղ էմ ծախըմ։
Վանեցի.— Պե́ խե́մ, պե խե́մ, ճէթ ի, թէ պէտ ի։
Երևանցի.— Մա́յրիգ, ճէթ չէմ ծախըմ, աղ էմ ծախըմ։
Վանեցի.— Աղէ՞կ, կըխասկընա́մ. պե խեմ, ծէթ ի, թէ պէտի։
Երևանցի.— Տօ մա́յրիգ, ա́սըմ էմ՝ ճէ՛թ չէմ ծախըմ, ա́ղ էմ ծախըմ։
Վանեցի.— Քյա տըղա́, աղէ՞կ... կըխասկընա́մ... պե խեմ, ճէթ ի, թէ պէտ ի։

ճէթ—մանր

պէտ — խոշոր
պե խեմ — բեր նայեմ

ՕՐՄ ԱՐԵ ՄԵՐ ՏՈՒՆ

Բ՛ե մեռնեմ, խաթուն,
Օրմ արե մեր տուն.
Առատուն կ՛ա̈ս՝ ծուխ ի մեր տուն...
Կէսօրին կ՛ա̈ս՝ ես տուն չեմ...
Իրիկուն կ՛ա̈ս՝ ճըրրահ՛ լուէս չըկա...
Բ՛ե մեռնեմ, խաթուն,
Օրմ արե մեր տուն։

2. ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌ

Համշենի բարբառը պատկանում է «Կը» ճյուղի եռաստիճան խլազուրկ խմբին։ Դա մեր այն բարբառներից է, որոնք դժվար հասկանալի կամ անհասկանալի են։ Այդ բարբառի հայրենիքը Տրապիզոնի շրջանն է, բայց այդտեղից գաղթելով, նրանք բնակություն հաստատեցին Աբխազիայի գյուղերում և քաղաքներում, նաև Ադլերում, Սոչիում և հյուսիսային Կովկասի Մերձսևծովյան շրջաններում։ Համշենի բարբառով խոսող տասնյակ հազարավոր հայեր կան։

Համշենի բարբառն ուսումնասիրել է Սովետական մեծ լեզվաբան և հայագետ ակ. Ն. Յակ. Մառը։

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համշենի բարբառն ունի ա, է, ի, օ, ու և ը ձայնավորները։ Բարբառս ունի նաև վերին բարձրության ա̈, օ̈, ու̈ ձայնավորները։ Բացակայում են ե և ո երկբարբառային հնչյունները։ «Ա» ձայնավորը ռնգային հնչյուններից առաջ վերածվում է օ ձայնավորի. օրինակ՝ գէօդօն գուքօն > կերթան կգան (գնում գալիս են), բօն > բան, հօմար > համար, դօնուշ > տանել։ Այս փոփոխությունը մոտեցնում է Համշենի բարբառը Կիլիկիայի բարբառին և մեծ չափով պատճառ դառնում բարբառի անհասկանալի լինելուն։

Բացի այս՝ Համշենի բարբառում նկատելի են ձայնավորների հետևյալ տարբերությունները.
ա > է, ը. ամեն > էմէն, անեմ > ընեմ, կար > գէր, պահեց > բէհից.
> ա̈ աչքեց > ա̈չէց (նայեց), վայում էր > վա̈յէր գու.

ե > յի (միավանկ բառերի սկզբին) ես > յիս, չեմ > չիմ, հետ > հիդ, երբ > յիփ.

> է. (բազմավանկ բառերի սկզբին և մեջը). երկու > էրգու, եղած > էղաձ, երթամ > էշդօմ.

ո > օ. որ > օր, ոտք > օդք, քիչուոր > քիչվօր, քող > քօխք.

> ö. խնձոր > խընձöյ, ձոր > ձöր, չորս > չöյս, գործ > փöյդ.

> ու. Նոր > նուր, խնձոր > խնձույ, ձոր > ձուր։

Համշենի բարբառում երկբարբառներ չկան. երկբարբառների դիմաց գտնում ենք պարզ հնչյուններ. օրինակ՝

այ > ա. հայր > հար, մայր > մար, ծայր > ձար, այգ > ակ.

ոյ > ու. լոյս > լուս, քոյր > քուր.

իւ > ու. արիւն > արուն, սիւն > սուն, հարիւր > հարուր.

Բաղաձայնական սիստեմով Համշենի բարբառը ենթարկվում է երկրորդ տեղաշարժին (II խմբին), այսինքն՝ ձայնեղ հնչյունները վերածվում են շնչեղ ձայնեղների, իսկ խուլերը ձայնեղների, որի հետևանքով ստացվում է ռուստիճան խլազուրկ սիստեմ։

բ՛ բ փ. բարձր > բ՛այսրը, բաց > բ՛աց, բան > բ՛օն, Պետրոս > Բէդռօս պայել > բա՛հուշ

դ՛ դ թ. դեղին > դ՛էղին, դրաւ > դ՛ըրավ, տուն > դուն, տանձ > դօնձ.

ձ՛ ձ ց. ձայն > ձ՛ըն, ձի > ձ՛ի, ծայր > ձար, ծառ > ձառ.

ջ՛ ջ չ. բանջար > բ՛օնջ՛ար, ճամփա > ջօմփա.

գ՛ գ ք. գետ > գ՛էդ, գովել > գ՛օվուշ, կատու > գադու, գործ > գ՛օյդ.

Կիլիկիայի բարբառի նման Համշենի բարբառում «ր» հընչյունը բաղաձայնից առաջ վերածվում է «յ» կամ «շ» հնչյունի. օրինակ՝ սիրդ > սիյդ, զարդարել > զայթառուշ, ճերս > ճիյս, ճրեղճ > ճըյգիճ, մարդ > մաշդ, երթալ > էշդուշ։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համշենի բարբառի հոգնակիներն են իր, ճիր, վի, ճի, դաք. *օրինակ՝* քարիր, խըճձօյճիր, դըճվօյճիճ։ *Որպես «Կը» ճյուղին պատկանող բարբառ Համշենի բարբառը չունի ներգոյական հոլով. սեռականն ստանում է հոդ, բացառականն ունենում է «էն» կամ «ըն» վերջավորություն, հոգնակին մեծ մասամբ ենթարկվում է «ու» հոլովման։*

Եզակի

Ուղղ.	*քար(ը)*	*մաշդ(ը)*	*ձուգ*
Սեռ.	*քարի(ն)*	*մաշդու(ն)*	*ձըգօն(ը)*
Տր.	*քարի(ն)*	*մաշդու(ն)*	*ձըգօն(ը)*
Հայց.	*քար(ը)*	*մաշդու(ն)*	*ձուգ*
Բաց.	*քարըն*	*մաշդվըն*	*ձըգըն*
Գործ.	*քարօվ*	*մաշդվօվ*	*ձըգօվ*

Ուղղ.	*օր(ը)*	*գընըգ*
Սեռ.	*օրվօն*	*գընգօն*
Տր.	*օրվօն*	*գընգօն*
Հայց.	*օր(ը)*	*գընգօն*
Բաց.	*օրվօնըն*	*գընգօնըն*
Գործ.	*օրօվ*	*գընգնօվ*

Հոգնակի

Ուղղ.	*քարիր(ը)*	*մաշդիգ(ը)*	*ձըգնիր(ը)*
Սեռ.	*քարէրու(ն)*	*մաշդգաց)ը)*	*ձըգնէրու(ն)*
Տր.	»	*մաշդգաց(ը)*	*ձըգնէրու(ն)*
Հայց.	*քարիր(ը)*	*մաշդգաց(ը)*	*ձըգնիր(ը)*
Բաց.	*քարէրըն*	*մաշդգացըն*	*ձըգնէրըն*
Գործ.	*քարէրօվ*	*մաշտգացօվ*	*ձըգնէրօվ*

Ուղղ.	*օրիր(ը)*	*գընգըդաք(ը)*
Սեռ.	*օրէրու(ն)*	*գընգըդաց(ը)*
Տր.	*օրէրու(ն)*	*գընգըդաց(ը)*
Հայց.	*օրիր(ը)*	*գընգըդաց(ը)*
Բաց.	*օրէրըն*	*գընգըդացմըն*
Գործ.	*օրէրօվ*	*գընգըդացմօվ*

Համշենի բարբառում անձնական դերանուններն են՝ յես, դ'ուն, հեն. *ցուցական դերանուններն են՝* ա̈ս, ա̈դ, ըն, իսա, իդա, ինա. *դերանունների հոլովումը հետևյալն է.*

Եզակի

Ուղղ.	*յէս*	*դ'ուն*
Սեռ.	*իմ*	*քու*
Տր.	*ինձի, ինձիգի*	*քեզի, քեզիգի*
Հայց.	*ինձի (իզիս)*	»
Բաց.	*ինձմըն(մէն)*	*քեզմէն*
Գործ.	*ինձմօվ*	*քեզմօվ*

Ուղղ.	աս, իսա	ադ, իդա	ըն, ինա
Սեռ.	ասու, իսու	ադու, իդու	ընու, ինու
Տր.	»	»	»
Հայց.	ասա, իսա	ադ, իդա	ըն, ինա, զըն
Բաց.	ասդի, իսդի	ադդի, իդդի,	ընդի, ինդի
Գործ.	ասու հիդ, իսօվ,	ադու հիդ, իդօվ,	ընու հիդ, ինօվ

Հոգնակի

Ուղղ.	մէք	դ՛ունք
Սեռ.	միյ, միր	ձիր, ձիյ
Տր.	մէզի, մէզիզի	ձէզի, ձէզիզի
Հայց.	միյս, մէզի	ձիյս, ձէզի
Բաց.	մէզմըն(էն)	ձէզմըն(էն)
Գործ.	մէզմօվ	ձէզմօվ

Ուղղ.	ասէր, իսէր	ադէր, իդէր	ընէր, ինէր
Սեռ.	ասօ̈ց, իսուց	ադօ̈ց, իդուց	ընօ̈ց, ինուց
Տր.	»	»	»
Հայց.	»	»	»
Բաց.	ասօ̈ցմըն, իսուցմէն	ադօ̈ցմէն, իդուցմէն	ընօ̈ցմէն, ինուցմէն
Գործ.	ասօ̈ցմիրօվ, իսուցմիրօվ	ադօ̈ցմիրօվ, իդուցմիրօվ	ընօ̈ցմիրօվ, ինուցմիրօվ

Եզակի

Ուղղ.	վօ̈վ	ինչը	վօ̈ր	ինքը
Սեռ.	վում	ինչին	վօրին	ուր, ույ, ուրին
Տր.	վում	ինչին	վօրին	ուրինը
Հայց.	վում	ընչը	վօրին	»
Բաց.	վումմըն	ինչըն	վօրմէն	ուրմէն, ուրմըն, ուրէնմէն
Գործ.	վումմօվ	ինչօվ	վօրօվ	ուր հիդ ուրինը հիդ

Հոգնակի

Ուղղ.	վօրօք			
Սեռ.	ումինց,	վումինց,	վօրինց,	վօրօ̈ց
Տր.	»	»	»	»
Հայց.	»	»	»	»
Բաց.	ումինցմէն, վօրօցմէն, վօրո̈նցմէն, վումէցմէն, ումօցմէն			
Գործ.	ումինցմօվ, վումինցմօվ, վօրօցմօվ			

Ուղղ.	*ինչէր*	*վուրօքը*	*ուրինք*
Սեռ.	*ինչէրուն*	*վուրօցը*	*ուրինց*
Տր.	*ինչէրուն*	»	»
Հայց.	*ինչէր*	»	»
Բաց.	*ինչէրըն*	*վուրօցմըն*	*ուրինցմըն*
Գործ.	*ինչէրօվ*	*վուրօցմօվ*	*ուրինց հիդ*

Խոնարհում

Համշենի բարբառի խոնարհումն ընդհանուր առմամբ նման է «Կը» ճյուղի բարբառների խոնարհմանը. «գու» (կը) մասնիկը դնում է բայից հետո, երրորդ դեմքում ունենում է ա̈ (ա) վերջավորություն, անցյալի անկատարի երկրորդ դեմքում ունի «դը» վերջավորություն, եզակի երրորդ դեմքում «աքը» վերջավորություն. սահմանական եղանակի ապառնի ժամանակները կազմվում են ենթակայական դերբայով (գ̈ըրող), վաղակատարի և հարակատարի ժամանակները կազմվում են «ունիմ» բայի օգնությամբ, պայմանականը և ձեղմականը կազմվում է «նա» մասնիկ բառով:

Ամենահետաքրքրականը Համշենի բարբառի անորոշ դերբայն է, որ ունենում է «ուշ» վերջավորություն. օրինակ՝ բերուշ, խոսուշ, էշդուշ, գ'ըրուշ *նշանակում են՝* բերել, խոսել, երթալ, գրել: *Այդ դերբայը հոլովվում է այնպես, ինչպես գրական լեզվի անորոշ դերբայը. օրինակ՝*

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	*գ̈ըրուշ*	*գ̈ըրուշնին*
Սեռ.	*գ̈ըրուշի*	*գ̈ըրուշնուն*
Տր.	*գ̈ըրուշին*	*գ̈ըրուշնուն*
Հայց.	*գ̈ըրուշ*	*գ̈ըրուշնին*
Բաց.	*գ̈ըրուշըն*	*գ̈ըրուշնըն*
Գործ.	*գ̈ըրուշօվ*	*գ̈ըրուշնէրօվ*

Սահմանական եղանակի ներկա *և* անցյալի անկատար *ժամանակներում «գու» (կը) մասնիկը դրվում է բայից հետո, «ե» խոնարհման բայերը ներկայի բոլոր դեմքերում ունենում են «ի» խոնարհիչ, բացի եզակի երրորդ դեմքից, որ ունենում է «ա̈» և հոգնակի երկրորդ դեմքից, որ ունենում է «է»: Անցյալի անկա-*

տար ժամանակի ոնգային վերջավորություն ունեցող դեմքերում խոնարհիչն է «օ»։

Սահմանական եղանակ

Ներկա

գ́ըրիմ	*գու*	*գաշդ́օմ*	*գու*
գ́ըրիս	»	*գաշդ́աս*	»
գ́ըրա̈	»	*գաշդ́ա*	»
գ́ըրինք	»	*գաշդ́օնք*	»
գ́ըրէք	»	*գաշդ́աք*	»
գ́ըրին	»	*գաշդ́օն*	»

Անցյալի անկատար

գ́ըրէյը	*գու*	*գաշդ́այը*	*գու*
գ́ըրէյդ(ը)	»	*գաշդ́ա̈յդ(ը)*	»
գ́ըրէր	»	*գաշդ́ա̈ր*	»
գ́ըրայքը	»	*գաշդ́այք*	»
գ́ըրէյքը	»	*գաշդ́ա̈քը*	»
գըրէյնը	»	*գաշդ́ա̈յնը*	»

Ապառնի

գ́ըրօղ	*իմ*	*գաշդօղ*	*իմ*
»	*իս*	»	*իս*
»	*ա̈*	»	*ա̈*
»	*ինք*	»	*ինք*
»	*էք*	»	*էք*
»	*ին*	»	*ին*

Անցյալի ապառնի

գ́ըրօղ	*էյը*	*գաշդ́օղ*	*էյը*
»	*էյդը*	»	*էյդը*
»	*էր*	»	*էր*
»	*այքը*	»	*այքը*
»	*էյքը*	»	*էյքը*
»	*էյնը*	»	*էյնը*

Ապառնի իմաստով գործ են ածվում հարկադրականի ձևերը, որ կազմվում են ըղձականի ձևերով և «բէդի» եղանակիչով։ Ապառնիի առաջին դեմքում «բիդի» եղանակիչի փոխարեն գործ է

ածվում «ինի» կամ «իդի» ձևը. վերջինս «ըիդի» եղանակիչն է առանց սկզբի «ը»-ի։

Ապառնի

գ́ըրիմ ինի (իդի)	գաշդ́օմ ինի(իդի)
գ́ըրիս ըիդի	գաշդ́աս ըիդի
գ́ըրա̈ »	գաշդ́ա »
գ́ըրինք »	գաշդ́օնք »
գ́ըրէք »	գաշդ́ա̈ք »
գ́ըրին »	գաշդ́օն »

Անցյալի ապառնի

գ́ըրէյը ըիդի	գաշդ́ա̈յը ըիդի
գ́ըրէյդը »	գաշդ́ա̈յդը »
գ́ըրէր »	գա̈շդ́ա̈ր »
գ́ըրայքը »	գաշդ́այքը »
գ́ըրէյքը »	գաշդ́ա̈յքը »
գ́ըրէյնը »	գաշդ́ա̈յնը »

Համշենի բարբառում ավելի սովորական է հարակատար ժամանակների գործածությունը թե՛ վաղակատարի և թե հարակատարի իմաստով։ Իբրև օժանդակ բայ օգտագործվում են թե «իմ» (եմ), թե «ունիմ» բայերը։

Հարակատար-վաղակատար

գ́ըրած իմ, ունիմ	գաշդ́ըցած իմ, ունիմ
» իս, ունիս	» իս, ունիս
» ա̈, ունի	» ա̈, ունի
» ինք ունինք	» ինք, ունիք
» էք, ունէք	» էք, ունէք
» ին, ունին	» ին, ունին

Անցյալի հարակատար-վաղակատար

գ́ըրած էյը, ունէյը	գաշդ́ըցած էյը, ունէյը
» էյդը, ունէյդը	» էյդը, ունէյդը
» էր, ունիր	» էր, ունիր
» այքը, ունայքը	» այքը, ունայքը
» էյքը, ունէյքը	» էյքը, ունէյքը
» էյնը, ունէյնը	» էյնը, ունէյնը

Վաղակատար ժամանակի համար գործածվում է նաև վաղակատար դերբայով կազմված ձևեր. օրինակ՝

Գըրիր իմ, գըրիր իս և այլն. գաշճըցիր իմ, գաշճըցիր իս *և այլն։*

Անցյալ կատարյալ

գըրէցի	*գըրէցաք*	*գաշճըցի*	*գաշճըցաք*
գըրէցիր	*գըրէցիք*	*գաշճացիր*	*գաշճացիք*
գըրէց	*գըրէցին*	*գաշճաց*	*գաշճացին*

Ըղձական եղանակ

Ապառնի

գըրիմ	*գաշճօմ*
գըրիս	*գաշճաս*
գըրա̈	*գաշճա*
գըրինք	*գաշճօնք*
գըրէք	*գաշճա̈ք*
գըրին	*գաշճօն*

Անցյալի ապառնի

գըրէյը	*գաշճա̈յը*
գըրէյդը	*գաշճա̈յդը*
գըրէր (գըրէյ)	*գաշճա̈ր*
գըրայքը	*գաշճայքը*
գըրէյքը	*գաշճա̈յքը*
գըրէյնը	*գաշճա̈յնը*

Ըղձականի ձևերի վրա «նա» մասնիկն ավելացնելով բարբառս կազմում է հորդորական կամ մեղմական ձևեր. օրինակ՝

Գըրիմ նա, գըրիս նա *և այլն։*

Պայմանական եղանակի ձևերը նույնն են ներկայի և անցյալի անկատարի ձևերի հետ։

Ժխտական ձևերը կազմվում են «չ», «չի» և հետադաս «յօ̈չ» մասնիկներով։ «Չ» մասնիկը դրվում է օժանդակ բայերի վրա, «չի» մասնիկը «բիդի» եղանակիչի վրա, իսկ «յօ̈չ» մասնիկը խոնարհման ձևերից հետո։

Ներկայի և անցյալի անկատար դերական խոնարհման «դու» մասնիկի հետ գործածվում են ըղձականի ձևերը, իսկ նույն ժա-

ժամանակների ժխտական խոնարհման ձևերը կազմելիս օգտագործ-վում է անորոշ դերբայը օժանդակ բայի հետ։

Ներկա	Անցյալի անկատար
չեմ գըրէլ կամ՝ գըրէլ չեմ	գըրէլ չէյը
չես » և այլն.	» չէյդը
չի »	» չէր
և այլն.	և այլն.

Անցյալ կատարյալ

գըրէցի յօ̈չ	գըրէցաք յօ̈չ կամ	չի գըրէցի
գըրէցիր »	գըրէցիք »	չի գըրէցիր
գըրէց »	գըրէցին »	չի գըրէց և այլն։

ՄԻ ՆՄՈՒՇ ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՎ

ԲԷԴՌՕՍԸ[1]

1

Խաչիգին ըմընըն բիջիգ դըղին օնունը Բէդռօս էր։ Ընէր աբռուշի հնայ չունէյնը, ընու հօմար ա̈լ Բէդռօսը հօրճօրը մէդ քօ̈լա մը-դած էր (հօրճօրը օնունը Մայդռօս էր)։ Դարին օր պօլօրէցավ Բէդռօսը ուզէց ուր խախը։ Մայդռօս հազըրմիշ չըղավ, չունքի Բէդռօսը շադ լավ ճօնիր գու։

— Չիմ դալ,— ասդավ Մայդռօս,— դըհա էրգու դարի ա̈լ ճօ-նիս բիդի մօդըս, բօնիս նա՝ գուդօմ, ամա դա̈ ճօնիս յօ̈չ նա, օնդօջիդ էդէվին դէնուս գու, խախըդ դէմնուլ չիս։

— Ցէս քէզի աջիմիշ գըլլիմ,— ասդավ Բէդռօսը,— արի ի-րաց վադուլթին չընինք. ճուն ինձի լըսա̈, իմ աշխադանքը ջուրը մի նէդիլ, յէս մէխկ իմ։

— Գընա, ինչըէս օր գուդիս, ըմօն ա̈լ ա̈րա̈, յէս քէզի դա-լիք չունիմ։

— Շադ լավ, ճուն օր ա̈դմօն ա̈րիր, յէս ա̈լ իմ աշխադօն-քին դէղը քու արունը գառնում։ Աշա դէս, յէս դըհա դանըչօ̈յս դարէգօն իմ հըմ ա̈լ քօ ախճօրօշէ̈ին իմ, ամա ասդաձս գընիմ։

2

Բէդռօսու քուրը ուրիշ գէ̈ղի մը հայս ըղաձ էր։ Բէդռօսը գընաց քուրօ̈չը մօդ։ Փէսըն ու քուրը ընու շադ թըվացընէյնը գու (փէսին օնունը Սէդռագ էր, քուրօ̈ջը Մայրօմ)։

Քօնի մը օմիս բիտունն ա̈լ շադ սէրքօվ գաբուլին։

---

[1] Գրի առավ՝ Մանվել Թամազյան։

Ակը մը Սէյդռագն ու Մայրօմը վէր գէլլին, դէսնուն գու, յօր Բէդռօ̈սը դօնը չա։ Գասին բա̈սպա̈յլու կընցած ա̈ դէղ մը, հիմի գուձա̈։ Ուըրինքը ա̈լ ընու բէդ ընիլ չին, գէշդօն այդը։ Հընչագ ցօրէգ մօնին գու, բէդ գընին, դա̈հա հա հիմի բիդի Բէդռօ̈ս ձա, հա հիմի բիդի ձա, ձալ չի։ Ծօրէգին նըսդին գու հաց ուդուշի։

Ընօց դըրգից Առթինը չաբախ չաբախ գուձա Սէյդռագին ու Մայրօմին մօդ, հընու հայցընա̈ գու։

— Դօ Սէյդռագ, Բէդռօսու ձէռքը Թվօնգը դուն դըրված ունէյդը դա̈։

Սէյդռագը ինչիգ ասիլ չի, նըսդած դէղըն վիյ Թըռչի գու, Թըռչօնց գէշդա̈՝ հընօր Բէդռօ̈սը յէդ դառցնա̈։

3

Բէդռօ̈սը ձիդէր, հընօր ա̈դ օրը Մայդռօ̈ս արաբօվ Թուլթուն դօնի բիդի քաղաք։ Գէշդա̈, ընու ջօմբուն վըրըն բահվի գու։ Դէսնու գու, հընօր Մայդռօս արաբին վըրըն նըսդած յէրգէլըն յէդնին քըշա̈ գու։ Բէդռօ̈ս մէգնամէգ գէլլա̈ ջօմբուն օռդա դէղը գօյնի գու։ Մայդռօ̈ս ջա̈հըրըն նէդա̈ գու, հասգըննա̈ գու ըմըն ինչ, ամա դէղըն ժաժվիլ չի գարի։

— Հօրբա̈ր, իդմօն ա̈լ դէղըդ գօյնա̈, հիչ ժաժվիլ մի, յէս խօսկին դէյն իմ, ասդած յէս հիմի գաղարիմ ինի։

Ըսմօն ասէլըն Բէդռօ̈ս Թվօնգը ուսըն հօնա̈ գու։ Մայդռօ̈սու լիզուն բըռնվի գու, ալ խօսիլ ա̈լ չի գարի, արունը դօմըյնուն նէս բաղի գու…

Թվօնգը դալդա̈ գու, Մայդռօ̈ս կընգնի։

Սէյդռագը հասնի գու ըն ժամանագ, յէբ ըմըն ինչ բաշ ըղած էր։

ԲԱՌԵՐ

Բիջիգ—փոքր
Հօրբա̈ր—հորեղբայր
Քօ̈լա̈—ծառա
Խախ—հասանելիք
Հագըրմիշ չըղավ—չսիրեց
Օնգօջ—ականջ
Աջիմիշ ըլլուշ—ափսոսալ
Դալիք—պարտք
Հըմ—ա̈լ
Ախբօրօշդի—եղբորորդի
Հայս ըլլուշ—ամուսնանալ (հարս դառնալ)

Թ'վացընուշ—սիրել
Սէրքօվ—սիրով
Բճապճյլու—երևի
Բէդ ընուշ—սպասել
ցօրէգ—կեսօր (ճաշ)
Թ'վօնդ—հրացան (Թվանք)
Ինչիդ—ոչինչ
Թ'ըռչօնց—վազեվազ

Բահվուշ—Թաքնվել
Գէլլճ—դուրս է գալիս
Օրդադէղը—մեջտեղ
Ջճհրճ—գույն (երեսի)
Դալդուշ—պայթել, տրաքել
Դօմար—երակ
Բաշ ըլլուշ վերջանալ

3. ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պոլսի բարբառը պատկանում է «Կը» ճյուղի երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ ունեցող խմբին։ Պոլսի բարբառն ունի հետևյալ ձայնավորները՝ ա, է, ի, ը, ու, օ. ո̈ւ և օ̈ ձայնավորները հանդիպում են Թուրքերենից փոխ առնված բառերի մեջ. օրին. ո̈ւվէզ, օ̈դ (լեղի), օ̈ջ (վրեժ)։ Հայերեն երկու բառերի մեջ ևս կա օ̈ հնչյունը. դրանք են՝ ցօ̈րէն > ցորեն և ցօ̈րէգ > ցերեկ։

Նկատելի են ձայնավորների հետևյալ տարբերությունները գրաբարի համեմատ.

ե > է (բացի յեփ > երբ բառից). ես > էս, ել > էլ, եղանակ > էղանակ, ասեղն > ասէխ և այլն։

> ի. երեկոյ > իրիգուն, երեք > իրէք.

ո > օ. ողբ > օխպ, որ > օր, որոտումն > օրօդում, ոլորել > օլըրէլ, գովել > գօվէլ։

> վօ. ով > վօվ, որ > վօր (ո՛րը)։

Այս օրենքներից դուրս կան մի շարք մասնակի երևույթներ, որ երևում են գրական փոփոխությունների մեջ կամ առանձին բառերում. օրինակ՝

ե > ա. եղբայր > ախբար, ձեռք > ձառք.

ե > յէ. երգ > յէրք, Երջանիկ > Յէրջանիգ.

ո > ա. եպիսկոպոս > յէբիսգաբօս, շնորհաւոր > շնաավօր։

Պոլսի բարբառի համարյա բոլոր ձայնավորները, բացի ե-ից, կարող են ենթարկվել հնչյունափոխության. օրինակ՝

Աշակերտ > աշգէրդ, ամբարտաւան > ամփըռդավան, անկանիլ > իյնալ, աւելել > ավլէլ, կարենալ > գըրնալ, ճղակոտոր > ջըգագօդօր, սովորել > սօրվիլ և այլն։

Պոլսի բարբառը երկբարբառներ չունի, գրաբարյան երկբարբառների դիմաց գտնում ենք պարզ հնչյուններ հետևյալ կարգով՝

այ > ա. ա՛յս, այդ, այն > աս, ադ, ան. այծ > աձ, ձայն > ձան, հայր > հար, մայր > մար.

այ > է. (բազմավանկ բառերի սկզբին). այրիկ > էրիգ, այրիլ > էրիլ.

աւ > օ. (բաղաձայնից առաջ). աւր > օր, աւձ > օց.

> ավ (բառավերջում). ցաւ > ցավ, հաւ > հավ.

իւ > ի. իւր > իր, իւրեանք > իրէնք. նաև ուքիւն > ուքին. մեծութիւն > մէնձութին.

> ու. (շեշտի տակ). ձիւթ > ձութ, ձիւն > ձուն, ալիւր > ալուր.

> է («ղ» բաղաձայնից առաջ). ճիւղ > ջէղ, իւղ > յէղ.

ոյ > ու. գոյն > գուն, լոյս > լուս, կոյր > գուր, քոյր > քուր։

Պոլսի բարբառի բաղաձայնները բառասկզբին ենթարկվում են երկրորդ տեղաշարժին՝ խուլերը վերածվում են ձայնեղների, որից ստացվում է երկաստիճան խլագուրկ սիստեմ.

բ փ. բարձ > բարց, պատռել > բադռէլ, փեսայ > փէսա.

դ թ. դանակ > դանագ, տուն > դուն, թթու > թութու.

ձ ց. ձայն > ձան, ծայր > ձար, ծոց > ձօց, ցաւ > ցավ.

ջ չ. ջարդել > ջարթէլ, ճանաչել > ջաշնալ, ճեղքել > ճըխգէլ, չամիչ > չամիչ

գ ք. գետին > գէդին, կանաչ > գանանչ, վկայ > վըգա, քսան > քսան

Բառամիջում ձայնեղները վերածվում են շնչեղ խուլերի կամ նույնիսկ խուլերի, ձայնեղ են մնում միայն ռնգական հնչյուններից հետո։

Գրական լեզուն Պոլսի բարբառի նման խուլերը վերածում է ձայնեղների, բայց ձայնեղները վերածվում է շնչեղ խուլերի. օրինակ՝ ձեռք > ցէռք, դուռ > թուռ, բան > փան և այլն։

Պոլսի բարբառում գրական լեզվի ազդեցության տակ որոշ բառեր, հատկապես գրականից փոխ առնված, բառասկզբի ձայնեղները նույնպես վերածում են շնչեղ խուլերի. օրինակ՝ գիրք > քիրք, բաղնիլ > փաղնիլ, դպրոց > թըբրօց, թըբըրօց, ձագ > ցաք և այլն։

Ձ, ծ, ց, ջ, ճ, չ պայթաշփականները բառամիջում բաղաձայնից առաջ կորցնում են իրենց արմատային պայթական բաղադրիչը և վերածում զ, ս, շ, ժ հնչյունների, օրինակ՝

Անձրև > անզրէվ, վարձք > վարսկ, խծպել > խզբէլ, ծածկել > ձազգէլ, անցնիլ > ասնիլ, մուրացկան > մուրասկան, իջանել > իշնալ, մէջք > մէշկ, կոճակել > գօժգէլ, խղճմտանք > խըժմըդանք, ամաչել > ամըշնալ, աչք > աշկ։

Գ՛, Կ՛, Ք՛ հնչյունները հանդիպում են թուրքերենից վերցրած բառերում. օրինակ՝ փ՛օզգ՛ծրէ, էշկ՛արէ։

«Ղ» հնչյունը բառասկզբին արտասանվում է խ, օրինակ՝ ուղարկել > խըրգել, Ղևոնդ > Խէվօնդ, Ղունկիանոս > Խունգիանոս։ Այս ամենից բացի՝ Պոլսի բարբառում նկատելի են հնչյունների տեղափոխություն, հավելում, կրկնություն և այլն. օրինակ՝ ականջ > անգաջ, գլխաւոր > գխլավօր, նշան > նիշան, զրուցել > զուրուցէլ, թթու > թութու, ծալել > ձալլէլ, հրամայել > հրամմէլ և այլն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պոլսի բարբառն ունի եր, ներ, վներ, իք, դիք հոգնակի վերջավորությունները. օրինակ՝ կով > գօվ, գովեր, գինի > գինի, գինիներ, աշակերտ > աշգէրդ, աշգերդներ, աչք > աչկ, աչվըներ, ձեռք > ձառք, ձառքվըներ, ծունկ > ձունգ, ձընգվըներ, մանչ > մանչ, մանչիք, կին > գընիգ, գընգըդիք և այլն։

Պոլսի բարբառի գոյականներն ունեն չորս հոլով, որովհետև սեռականը «ն» հոդ ստանալով բոլորովին նմանվում է տրականին, իսկ հայցականը ամեն դեպքում նման, է ուղղականին օրինակ՝ Անուշին դըղան գըձեձե Սիրուշին դըղան։

Բացառական հոլովի վերջավորությունն է «է»։ Պոլսի բարբառի գոյականների մեծագույն մասը ենթարկվում է «ի» հոլովման (եղակիում), իսկ հոգնակիում՝ ու հոլովման։ «Ի» հոլովման են ենթարկվում նույնիսկ այնպիսի բառեր, ինչպիսին են՝ տուն, շուն, մուկ և այլն։

Հոլովում

Եզակի

Ուղղ.	հաց(ը)	մանչ(ը)	օր(ը)
Սեռ.	հացի(ն)	մանչու(ն)	օրվա(ն)
Տր.	հացի(ն)	մանչու(ն)	օրվա(ն)
Հայց.	հաց(ը)	մանչ(ը)	օր(ը)
Բաց.	հացէ(ն)	մանչէ(ն)	օրվընէ(ն)
Գործ.	հացօվ	մանչօվ	օրօվ

Ուղղ.	մէնձութին(ը)	քուր(ը)
Սեռ.	մէնձութան(ը)	քըրօչ(ը)
Տր.	մէնձութան(ը)	քըրօչ(ը)
Հայց.	մէնձութին(ը)	քուր

Բաց.	*մէնձութէնէ(ն)*	*քըրօչմէ(ն)*
Գործ.	*մէնձութինօվ*	*քըրօչմօվ*

Հոգնակի

Ուղղ.	*հացէր(ը)*	*մանչէր(ը)*	*օրէր(ը)*
Սեռ.	*հացէրու(ն)*	*մանչէրու(ն)*	*օրէրու(ն)*
Տր.	*հացէրու(ն)*	*մանչէրու(ն)*	*օրէրու(ն)*
Հայց.	*հացէր(ը)*	*մանչէր(ը)*	*օրէր(ը)*
Բաց.	*հացէրէ(ն)*	*մանչէրէ(ն)*	*օրէրէ(ն)*
Գործ.	*հացէրօվ*	*մանչէրօվ*	*օրէրօվ*

Ուղղ.	*մէնձութիննէր(ը)*	*քուրէր(ը)*
Սեռ.	*մէնձութիննէրու(ն)*	*քուրէրու(ն)*
Տր.	*մէնձութիննէրու(ն)*	*քուրէրու(ն)*
Հայց.	*մէնձութիննէր(ը)*	*քուրէր(ը)*
Բաց.	*մէնձութիննէրէն*	*քուրէրէ(ն)*
Գործ.	*մէնձութիննէրօվ*	*քուրէրօվ*

Պոլսի բարբառի որոշիչ հոդն է ը *կամ* ն, *անորոշ հոդը՝* մը, *որ էական բայից և* ալ *շաղկապից առաջ դառնում է* մըն. *օրի-նակ՝* դուն մը ունի՛, գրչից մըն ալ ունի։

Դերանունների հոլովումը

Անձնական դերանունների հոլովումը ունի 6 հոլով, ցուցականներինը չորս.

1. Անձնական դերանուններ՝ ես, դու, նա։

Եզակի

Ուղղ.	*էս*	*դուն*	*ան*
Սեռ.	*իմ, իմին*	*քու, քուկին* *քույին*	*անոր*
Տր.	*ինծի, ընծի*	*քեզի*	*անոր*
Հայց.	*ինծի, իս, ընծի*	*քեզի*	*ան*
Բաց.	*իզմէ(ն), իսմէ* *ինծէ, ինէ*	*քեզմէ, քէնէ* *քեզմէն*	*անգէ, անօրմէ,* *անգէց*
Գործ.	*իզմօվ*	*քեզմօվ,*	*անօվ, անօրմօվ*

Հոգնակի

Ուղղ.	*մէնք*	*դուք*	*անօնք*
Սեռ.	*մէր, մէրին*	*ձէր, ձէրին*	*անօնց*
Տր.	*մէզի*	*ձէզի*	*անօնց*
Հայց.	*մէզի*	*ձէզի*	*անօնք*

Բաց. մէզմէ, մէնէ, ձէզմէ, ձէնէ, անօնցմէ
մէզմէն ձէզմէն
Գործ. մէզմօվ, ձէզմօվ անօնցմօվ

Հետաքրքրական է ինքըզինքս, ինքըզինքդ, ինքըզինքը դերանվանական ձևերի հոլովումը.

Եզակի	Հոգնակի I	Հոգնակի II
Հայց. ինքըզինքս	ինքըզինքնիս	ինքըզինքէրնիս
Սեռ. ինքըզինքիս	ինքըզինքնուս	ինքըզինքէրնուս
Տր. ինքըզինքիս	իոքըզինքնուս	ինքըզինքէրնուս
Բաց. ինքըզինքէս	ինքըզինքնէս	ինքըզինքէրնէս
Գործ. ինքըզինքօվ	ինքըզինքօվնուս	ինքըզինքէրօվնիս

III

Հայց.	ինքիրզինքս
Սեռ.	ինքիրզինքէրնուս
Տր.	ինքիրզինքէրնուս
Բաց.	ինքիրզինքէրնէս
Գործ.	ինքիրզինքէրօվնիս

2. Ցուցական դերանունները լինում են զանազան ձևերով՝ աս, սա, ասի, ասիգագ, ասիգա, սավի, սավիգագ, սավիգա, սվի, սվիգագ, սվիգա. նույն ձևով էլ՝ ադ, դա, ադի, ադիգագ և այլն

Եզակի

Ուղղ. աս	ադ	ան
Սեռ. ասօր	ադօր	անօր
Տր. »	»	»
Հայց. աս	ադ	ան
Բաց. ասդէ, ասօրմէ(ն) ասդէց	ատդէ, ադօրմէ(ն) ատդէց	անդէ, անօրմէ(ն), անդէց
Գործ. ասօվ, ասօրմօվ	ադօվ, ադօրմօվ	անօվ, անօրմօվ

Ուղղ. սվի	դվի	նվի
Սեռ. սվօր	դվօր	նվօր
Տր. »	»	»
Հայց. սվի	դվի	նվի

Բաց.	սվգէ, սվօրմէ(ն)	դվգէ, դվօրմէ(ն),	նվգէ, նվօրմէ(ն)
	սվգէց	դվգէց	նվգէց
Գործ.	սվօվ, սվօրմօվ	դվօվ, դվօրմօվ	նվօվ, նվօրմօվ

Հոգնակի

Ուղղ.	ասօնք	ադօնք	անօնք
Սեռ.	ասօնց	ադօնց	անօնց
Տր.	ասօնց	ադօնց	անօնց
Հայց.	ասօնք	ադօնք	անօնք
Բաց.	ասօնցմէ(ն)	ադօնցմէ(ն)	անօնցմէ(ն)
Գործ.	ասօնցմօվ	ադօնցմօվ	անէ՞նցմօվ

Ուղղ.	սվօնք	դվօնք	նվօնք
Սեռ.	սվօնց	դվօնց	նվօնց
Տր.	սվօնց	դվօնց	նվօնց
Հայց.	սվօնք	դվօնք	նվօնք
Բաց.	սվօնցմէ(ն)	դվօնցմէ(ն)	նվօնցմէ(ն)
Գործ.	սվօնցմօվ	դվօնցմօվ	նվօնցօվ

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Պոլսի բարբառն ունի էլ, իլ և ալ խոնարհման բայեր։ Ներկայի և անցյալի անկատարի ձևերը նման են գրաբարին (բացի հոգնակի՝ առաջին դեմքից), միայն ստանում են «գը» մասնիկը։

Ներկա

գըգըրէմ	գըխօսիմ	գըխաղամ
գըգըրէս	գըխօսիս	գըխաղաս
գըգըրէ	գըխօսի	գըխաղա
գըգըրէնք	գըխօսինք	գըխաղանք
գըգըրէք	գըխօսիք	գըխաղաք
գըգըրէն	գըխօսին	գըխաղան

Անցյալ անկատար

գըգըրէյի	գըխօսէյի	գըխաղայի
գըգըրէյիր	գըխօսէյիր	գըխաղայիր
գըգըրէր	գըխօսէր	գըխաղար
գըգըրէյինք	գըխօսէյինք	գըխաղայինք
գըգըրէյիք	գըխօսէյիք	գըխաղայիք
գըգըրէյին	գըխօսէյին	գըխաղային

Պոլսի բարբառն ունի շարունակական ներկա և շարունակական անցյալի անկատար, որ կազմվում է սովորական ներկայից և անցյալի անկատարից, ավելացրած «գոր» անփոփոխ մասնիկը. օրինակ՝ գըխօսիմ գոր, գըխաղամ գոր, գըխօսէյի գոր, գըխաղայի գոր և այլն։

Վաղակատարը և անցյալի վաղակատարը կազմվում են վաղակատար դերբայով և օժանդակ բայով.

Վաղակատար

գըրէր	էմ	խօսէր	էմ	խաղացէր	էմ
»	էս	»	էս	»	էս
»	է	»	է	»	է
»	էնք	»	էնք	»	էնք
»	էք	»	էք	»	էք
»	էն	»	էն	»	էն

Անցյալի վաղակատար

գըրէր	էյի	խօսէր	էյի	խաղացէր	էյի
»	էյիր	»	էյիր	»	էյիր
»	էր	»	էր	»	էր
»	էյինք	»	էյինք	»	էյինք
»	էյիք	»	էյիք	»	էյիք
»	էյին	»	էյին	»	էյին

Անցյալ կատարյալ

գըրէցի	խօսէցա	խաղացի
գըրէցիր	խօսէցար	խաղացիր
գըրէց	խօսէցավ	խաղաց
գըրէցինք	խէսէցանք	խաղացինք
գըրէցիք	խօսէցաք	խաղացիք
գըրէցին	խօսէցան	խաղացին

Ըղձական եղանակը նույնն է սահմանական ներկայի և անցյալի անկատարի հետ առանց «գը» մասնիկի։

Իբրև ապառնի գործածվում է հարկադրական եղանակի կազմությունը։

բիդի գըրէմ	բիդի խօսիմ	բիդի խաղամ
» գըրէս	» խօսիս	» խաղաս

բիդի գըրէ | բիդի խօսէ | բիդի խաղա
» գըրէնք | » խօսինք | » խաղանք
» գըրէք | » խօսիք | » խաղաք
» գըրէն | » խօսին | » խաղան

«Բիդի» եղանակիչը դրվում է նաև հետադաս. օրինակ՝ գըրէմ բիդի, խօսիմ բիդի, խաղամ բիդի և այլն։

Անցյալի տպառնին կազմվում է ըղձական անցյալի ապառնիով և «բիդի» եղանակիչով. օրինակ՝ բիդի գըրէյի, բիդի խօսէյի, բիդի խաղայի։ Ներկայի և անցյալի անկատար ձևերը գործածվում են իբրև ապառնի և իբրև պայմանականի ձևեր։

Սիրած և սիրելու դերբայներով կազմվում են բազմաթիվ ձևեր.

սիրած էմ	սիրելու էմ
» ըլլամ	» ըլլամ
» » նէ	» » նէ
» ըլլալու ըլլամ	» ըլլալու ըլլամ
» » » նէ	» » » նէ
» էղած ըլլամ	» էղած ըլլամ
» » » նէ	» » » նէ
» բիդի ըլլամ	» բիդի ըլլամ
» » » նէ	» » » նէ
» ըլլալու էմ	» ըլլալու էմ
» գըլլամ	» գըլլամ
» գըլլամ նէ	» » նէ
» » գօր	» » գօր
» ըլլայի	» ըլլայի
» » նէ	» » նէ
» էղած բիդի ըլլայի	» էղած բիդի ըլլայի
» » » » նէ	» » » » նէ
» ըլլալու էյի	» ըլլալու էյի
» գըլլայի	» գըլլայի
» » նէ	» » նէ
» » գօր	» » գօր
» ըլլայի	» ըլլայի
» » նէ	» » նէ
» ըլլալու ըլլայի	» ըլլալու ըլլայի
» » » նէ	» » » նէ
» էղած »	» էղած ըլլայի
» » » նէ	» » » նէ

Բացի այդ ձևերից, կազմվում են զանազան պատմողական ձևեր «էղէր» բառով. օրինակ՝ բիդի գա էղէր, բէրէլու բիդի ըլլայի նէ էղէր, գացած էղած ըլլայի նէ էղէր, հասնելու վրա գըլլա գօր էղէր, սիրած էղած ըլլալու ըլլայի նէ էղէր և այլն։

Հրամայական կերպը կազմվում է «վ» մասնիկով. այդ դեպքում բոլոր բայերը պատկանում են «ի» խոնարհման. օրինակ՝ դըրվիմ—դըրվէցա, սիրվիմ—սիրվէցա և այլն։

Ժխտական խոնարհումը կազմվում է «չ» մասնիկով, որ դրվում է օժանդակ բայի, կամ «բիդի» եղանակիչի և կամ դերբայի վրա. ժխտական խոնարհման ներկայի համար օգտագործվում է վաղակատար դերբայը։

չէմ	սիրէր—չեմ սիրում կամ չեմ սիրել		չէմ ի քար—չեմ գալիս	
չէս	»		չէս ի	»
չը́	»		չի ի	»
չէնք	»		չէնք ի	»
չէք	»		չէք ի	»
չէն			չէն ի	»
չէմ	սիրէր գօր կամ՝		չը́ սիրէր գօր	
չէս	»	»	չը́ սիրէս	»
չը́	»	»	չը́ սիրէ	»
չէնք	»	»	և այլն։	
չէք	»	»		
չէն	»	»		

Չը́ բիդի սիրեմ կամ՝ չի բիդի սիրեմ կամ՝ չսիրեմ բիդի։

Կարող է լինել նաև՝ չսիրէր էմ, չսիրէր էյի, չսիրած էմ, չսիրած էյի և այլն։

Բաղադրյալ կազմության մեջ լինում է հետևյալ կերպ. սիրած չբիդի ըլլամ, սիրած բիդի չըլլամ, սիրած չըլլամ բիդի չըլլամ սիրած բիդի, չսիրած բիդի ըլլամ, չը́ բիդի սիրած ըլլամ, չը́ բիդի ըլլամ սիրած, բիդի սիրած չըլլամ, բիդի չըսիրած ըլլամ։

ՄԻ ՆՄՈՒՇ ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌՈՎ

ՏԱՆ ՄԸ ՄԷՋ[1]

— Քա ախճիգ, էգուր գըդօր մը յարդըմ ըրէ. թէքնէին դագը ճայէ ինգա։

[1] Բերված է պրոֆ. Հ. Աճառյանի «Քննություն Պոլսահայ բարբառի» աշխատության մեջ, էջ. 182։

— Էս վէրը գըժօղվըդէմ գօր

— Ժօղվուդուքիթ ճալլիթ. ի՞նչ է էի չը՛ լմըննար գօր։

— Դօլաբճիրը գը շըդգէմ գօր։

— Մահման դօղէրու գաս ճիմճն, ախճիկ. Ջղիգ Ջղիգ գօդըր-դիս։

— Ամմէն իժիր ասանգ գը բօռաս. ձանդ աշխարք գը բռնէ. Թէրմաշ ճալլիքնէրը դաճա չլմընցան։

— Հալ ունիմ լըմընցընէլիք. գէս քիշէրին բիրի է՝ էլէր էմ օջախը վառէր էմ։

— Մէգ բանը ինքիրէնըթ չէս գըրնար ընէլ, աշխարք ալ գուլխութ թօփ ընէլ գընայիս.

ԲԱՌԵՐ

Ցարդըմ—օգնություն
Թէքնէ—տաշտ
Հալ—վիճակ
Նալլէթ—անեծք
Գի—որ, թե
Դօլաբ—պահարան
Հէմէն—հանկարծ
Դահա—էլի, դեռ, տակավին
Բէրի—ի վեր
Թօփ ընէլ—հավաքել

4. ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌ

Կարնո բարբառին պատկանում են Լենինական քաղաքի և շրջանի, Ախալքալաքի, Ախալցիխայի քաղաքների և շրջանների գյուղերի խոսվածքը։ Այդ բարբառով էին խոսում Կարսի և իր շրջանի, Կարին քաղաքի և շրջանի և Սպերի շրջանի խոսվածքները։ Ստ. Սյունեցու քերականության մեջ հիշատակվող «բառք եզերականք»-ի թվում հիշատակվում է «Սպերացին», այսինքն Սպերի խոսվածքն իբրև բարբառ, որ պետք է ընդունել որպես ամենահին վկայությունը Կարնո բարբառի մասին։

Կարնո բարբառով խոսող հայերի թիվը 100000-ից ավելի կլինի, այդ պատճառով էլ այդ բարբառը պետք է ընդունել մեր կենդանի բարբառներից ամենամեծերից մեկը։

Կարնո բարբառը պատկանում է «Կը» ճյուղի քառաստիճան բաղաձայնական սիստեմ ունեցող խմբին։

Կարնո բարբառն ունի «ա», «ը», «է», «օ», «ու» և «ի» ձայնավորները, «ա̈», «ո̈ւ», «օ̈» ձայնավորներ հանդիպում են թուրքերենից փոխ առնված բառերի մեջ. ձայնավորների փոփոխությունը մեծ չէ, նույնիսկ հազվագյուտ է՝ օրինակ՝ ա > է, ա > ը (անել > էնել, ասել > ըսել)։

Գրաբարյան բառասկզբի «հ» հնչյունի դիմաց «ո» ձայնավորից առաջ բարբառումս գտնում ենք «ֆ» բաղաձայնը (ֆօղ > հող, ֆօս > հոս, ֆօդ > հոտ), բառամիջում գրական «վ» հնչյունի դիմաց նույն «ֆ»-ն (հաֆքիլ > հավաքել, նըֆալ > նվալ)։

Բարբառումս կա երկու «հ»՝ մեկը խուլ, մյուսը ձայնեղ («Հ՛ագօ», «Հ՛արութ»)։ «Ր», «ռ», «ճ», «ժ» հնչյուններից առաջ «տ» հնչյունը նույնանում է իր հաջորդի հետ, բայց այս դեպքում «ր»-ն արտասանվում է «ռ», «ժ»-ն «ճ» (պառռէլ > պատռել, Պէռռօս > Պետրոս, պաճճառ > պատճառ, պաճճէլ > պատժել), մի քանի դեպքերում «ն»-ն կրկնվում է (մէննակ)։ Գոյականների հոգնակին կազմվում է հետևյալ վերջավորություններով՝ «էր», «նէր», «ձնէր» (Ախլց.—աչձնէր), «քձնէր» (Ախլց.—ունքձնէր—հոնքեր), «ստան» (բանէստան—«բանալիներ», «փարէստան»—դրամներ)։

Գոյականների հոլովման մեջ առանձին հատկանշական գծեր չկան, եզակի բացառականն ունի «է» վերջավորություն, սեռականը հոդ չի ստանում, հոգնակին ենթարկվում է «ու» հոլովման։

Դերանունների հոլովում

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	իսի	իսօնք
Սեռ.	իսօր	էսօնց
Տր.	իսօր	իսօնց
Հայց.	իսի, իսօր	իսօնք, իսօնց
Բաց.	իսօրէն կամ իսօրմէն	էսօնցէն կամ էսօնցմէն
Գործ.	էսօրօվ կամ իսօրմօվ	իսօնցօվ կամ էսօնցմօվ

Այսպես են հոլովվում նա «իդի», «ինի» դերանունները։

Բայերի խոնարհումը ներկա և անցյալի անկատար ժամանակներում կատարվում է «կը» մասնիկով, որը դրվում է խոնարհվող բայից հետո, իսկ եթե բայն սկսվում է ձայնավորով, «կը» մասնիկը դրվում է և՛ բայից առաջ, և՛ բայից հետո. միավանկ բայերի սկզբից դրվում է «կու», իսկ հետո «կը» մասնիկները։

Ներկա	Անցյալի անկատար	Ներկա	Անցյալի անկատար
սիրեմ կը	*սիրեյի կը*	*կուտեմ կը*	*կուտեյի կը*
սիրես կը	*սիրեյիր կը*	*կուտես կը*	*կուտեյիր կը*
սիրե կը	*սիրեր կը*	*կուտե կը*	*կուտեր կը*
և այլն.	*և այլն.*	*և այլն.*	*և այլն։*

Ներկա	Անցյալի անկատար
կուտամ կը	*կուտայի կը*
կուտաս կը	*կուտայիր կը*
կուտա կը	*կուտար կը*
և այլն.	*և այլն։*

ՄԻ ՆՄՈՒՇ ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌՈՎ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԽՈՍՎԱԾՔ

ՄԷ ԲԸ̈ՌԲԸՌԻ ՄԸ ՄՕՏ[1]

Շաբաթ օրը Գասպար աղէն պըդի թըրաշվիր։

Բը̈ռբըռիմ խանութ կէրթա ու կըսէ.

— Ընձի թէզըմ թըրաշէ՞ս կը։

— Ընչի չէ,—կըսէ բը̈ռբը̈ռը։

Գասպար աղէն նըստի կը ըստօլի վըրա։

Բը̈ռբը̈ռը սաբնէ կը միշտարուն ու հաջըթնէրը կառնի ձէռը։

Գասպար աղէն կըսէ.

— Կաղաչէմ, օր աձըլիդ սուր էղնի, միրուքըս քիչըմ սարթ է, դու յէլ կը չարչըրվիս, յէս էլ։

— Մի մըղաձէ, արխէյին էղի,—կըսէ բը̈ռբը̈ռը։

Աղէն կըսէ.

—Խօրունգ չէմ հուզէ, մէ քիչըմ հէրէսանց առ։

---

[1] *Գրի առավ Հեղ. Վարդանյան։*

— Ջանըմ, մի՛ մըղաձէ, բա̈ռբա̈ռ էլ կա, բա̈ռբա̈ռ էլ,— կըսէ բա̈ռբա̈ռն ու աձըլօվ մօղէնա կը Գասպար աղին։

— Գըլօխըդ խապէս դ՛ի՝ աշէմ։

— Դ՛ըրինք։

Գօրծը կըսկըսէ թէ չէ, հարուսը կը ֆըշշա։

— Կըդռէցի՞ր, ա՛յ օղուլ, քինըմ կամաց էրա։

— Պըդդի չիրանըմ կար, հարընավ։

—Ահան խառէղ էլ կըռռավ։

— Իդէղ էլ մազըդ ծուռ էր բուսնէ։

— Ա՛յ օղուլ, հըբը դընչիս վրա̈...

— Մի վախէնա, ծօ՛, հիմի յէս իդօնք ժամըրկօվ սըրփէմ կը։

— Վաղն արի, աղբէր, հօքիս հանիր, հէրէսըս կըրակի պէս վառի կը։

— Համփիրէ քինըմ էլ՝ թէթէվցընէմ. շըբօվ լըվամ՝ կանցնի, էլ ճան չի մընա։

— Ձէմ հուզէ, ախբէր, պըրծի՛։

— Հ՛առանց իդօր չի էղնի։

— Ախբէր գըլօխը իմըս չէ՞, պըրծի։

— Գըլօխը քուգըդ է. հըմը հ՛ամէն խանութ հ՛իրան պադիվն ունի։ Թըրաշէլու մաղէր կան հըլը հ՛էրէսիդ վրա, իդպէս թօղնէլը մէզի հըմար անպադվութուն է. դ՛ու գ՛ըլօխըդ քինըմ դ՛աթար պայէ ու հանքիստ էղի։

— Ախբէր, հէրիք չէղա̈վ տանջէս, ղասպի պէս գ՛ըլխուս վէրը կայնէ մնացէր էս։

— Շատ հէրսօդ կէրէվաս, իդ՛օր հըմար չէմ հ՛ուզէ խաթրիդ դ՛իբնի։ Տընաշէն, քինըմ համփիրէ հիմի պըրծինք կը. ծօ հըլը մէ էդ շիշէն ընծի տու,— ու հաշկէրդէն շիշէն կառնի ու քըսէ կը Գասպար աղի հ՛էրէսին։

Գասպար աղէն արշինըմ տէղէն վէր-վէր կըթըռնի ու կըսէ.

— Շնօրակալ էմ, ախբէր, շնօրակալ։

Բա̈ռբա̈ռը հ՛էրէսը պըրծէլէն հէդէվ գուզէ քինըմ էլ գ՛ըլօխը թէթէվցընէ, հըմը Գասպար աղէն տէղէն վէր կըթըռնի ու ջէբէն հընգնօցըմ քըցէն ու դ՛ուս փախնէլը մէգ կէղնի։

Բա̈ռբա̈ռը հէդէվէն կըսէ.

— Էսպէս էլ վա̈սվա̈սա մա̈րթ էղնի։

Իսկ Գասպար աղէն դ՛ուս գ՛ալէն կըսէ.

— Էսպէս էլ հ՛անդէր աշխար էղնի, գ՛ըլխնէրուս տէրը բիլա̈ չէնք կըռնա էղնի։

5. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Կիլիկիայի կամ Զեյթունի բարբառը բազմաթիվ տարբերակներ ունի. հիմնականը Զեյթունի (ըստ Զեյթունցիների՝ Գ'եղի) խոսվածքն է։ Այդ խոսվածքի բաղաձայնական սիստեմը ենթարկվում է տեղաշարժ տեղափոխության, այսինքն՝ ձայնեղները վերածվում են խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների։ Կիլիկիայի բարբառում կան հետևյալ ձայնավորները՝ ա, ա̈, է, ե, օ, ո, ը, ը́, ի, ու, ո̈ւ։ Մի շարք խոսվածքներում գտնում են նաև ո͡ը, է͡յ, ի͡յ, և ա͡յ երկբարբառները։ Բարբառի մեջ ձայնավորները ենթարկված են խիստ մեծ փոփոխության, որի հետևանքով բարբառս անհասկանալի է ոչ Զեյթունցի հայի համար։ Առանձնապես նկատելի է ա ձայնավորի վերածվելը «օ»-ի կամ «ո»-ի (օրինակ՝ օսղ > աստղ, ջամփօ > ճամփա, պանոլ > բանալ, բարոբ > պարապ, քոյ > քար և այլն)։

«Ր» հնչյունը սովորաբար լինում է «յ» բայց ատամնայիններից առաջ երբեմն «շ», օրինակ՝ միյ > մեր, ուսգույ > ոսկոր, գաշդիմ > կերթամ և այլն։

Նկատելի է, որ բարբառս ձգտում ունի միմյանց նմանեցնելու բառի մեջ եղած ձայնավորները (օրինակ կօնոց > գնաց, քօսոն > քսան, իսգի > ոսկի և այլն). այս կանոնի հետևանքով անորոշ և որոշող հոդերը բազմապիսի ձևեր ունեն (ը, ի, ո̈ւ, ու, մ, մի, մու, մո̈ւ)։ Հոգնակիները կազմվում են իյ, Ցիյ, դա̈ք, սդա̈ք, Ցա վերջավորություններով։

Հոլովում

Եզակի

Ուղղ.	դուն	դախդոգ	ք'իյ «քույր»
Սեռ.	դո̈ն	գախդըգը	ք'ո̈յը
Տր.	դո̈նը	»	»
Հայց.	դուն	դախդոգ	(ղ)ք'իյ
Բաց.	դընէն	դախդըգէն	ք'իյէն
Գործ.	դոնօվ	դախդըգ'օվ	ք'իյօվ

Ուղղ.	գը̊նը̊գ	ծը̊
Սեռ.	գը̊նգո	ծիո
Տր.	»	»
Հայց.	գը̊նը̊գ	ծը̊

Բաց.	*գը̊նը̊գէն*	*ծը̊վէն*
Գործ.	*գը̊նը̊գ՛օվ*	*ծիյօվ*

Հոգնակի

Ուղղ.	*ղընիյ*	*ղախըղըգնիյ*	*քըյվըղա̈ք*
Սեռ.	*ղընիյուն*	*ղախըղըգնիյուն*	*քըյվըղօնց*
Տր.	»	»	»
Հայց.	*ղընիյ*	*ղախըղըգնիյը*	*քըյվըղա̈ք*
Բաց.	*ղընիյօնց*	*ղախըղըգնյօնց*	*քըյվըղօնցից*
Գործ.	*ղընիյօվ*	*ղախըղըգնիյօվ*	»

Ուղղ.	*գընգըղա̈ք*	*ծը̊ք, ծիյըսղա̈ք*
Սեռ.	*գընգըղոց*	*ծիյըսղօնց*
Տր.	»	»
Հայց.	*գընգըղա̈ք*	*ծիյըսղա̈քը*
Բաց.	*գընգըղօցնէ*	*ծը̊յիյից*
Գործ.	*գընգըղօցօվ*	*ծըյիյօվ*

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անձնական դերանուններ ի մեջ նկատելի են երկու ուշադրավ երևույթ, մեկը՝ որ հայցական հոլովում ստանում են «զ» նախդիրը, մյուսը՝ որ բացառականում, հակառակ «Կը» ճյուղի մյուս բարբառներին, լինում է էց *(ից) վերջավորություն.*

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	*իս*	*տօն*	*մինք*	*տօք*
Սեռ.	*իմ*	*քու*	*միյ*	*ծիյ*
Տր.	*ինձէ*	*քիզ*	*միզ*	*ծիզ*
Հայց.	*զըս*	*զքիզ*	*զմիզ*	*զծիզ*
Բաց.	*ինձնէ, իմնէց ինձիկէց*	*քիզնէ, քիննէց*	*միզնէց*	*ծիզնէց*
Գործ.	*իմնօվ, ինձմօվ*	*քիզմօվ*	*միզնօվ*	*ծիզնօվ*

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Եզակի

Ուղղ.	*ա̈ս*	*ա̈դ*	*ա̈ն*
Սեռ.	*ծսօնյ*	*ծդօնյ*	*ծնօնյ*
Տր.	»	»	»
Հայց.	*զա̈ս*	*զա̈դ*	*զա̈ն*

Բաց.	*էսիգէց*	*էդիգէց*	*էնիգէց*
Գործ.	*ծ̆սո̇նքծ̆ք*	*ծ̆դո̇նքծ̆ք*	*ծ̆նո̇նքծ̆ք*

Հոգնակի

Ուղղ.	*էսիյ*	*էդիյ*	*էնիյ*
Սեռ.	*ծ̆սո̇նց*	*ծ̆դո̇նց*	*ծ̆նո̇նց*
Տր.	»	»	»
Հայց.	*զէսիյ*	*զէդիյ*	*զէնիյ*
Բաց.	*ծ̆սո̇նցնէ*	*ծ̆դո̇նցնէ*	*ծ̆նո̇նցնէ*
Գործ.	*ծ̆սո̇նցմ̆ծ̆վ*	*ծ̆դո̇նցմ̆ծ̆վ*	*ծ̆նո̇նցմ̆ծ̆վ*

Այս, այդ և այն *դերանունները լինում են նաև* օսս, օդս, օնս *ձևով։* Ես ինքս, դու ինքդ *լինում են՝* իս զա̃ս, *տօն* ըսկիզ։

Հարցական դերանուններն են՝ ո̇նվ (ով) և չիյք *(ինչ), որոնց հոլովումը հետևյալն է.*

Ուղղ.	*ո̇նվ*	*չիյք*
Սեռ.	*օմ*	*չիյքու*
Տր.	*օմ*	*չիյքու*
Հայց.	*զո̇նվ(զիվ)*	*չիյք*
Բաց.	*ումնէց(օմնէց)*	*չիյքէն*
Գործ.	—	*չո̈յքծ̆վ*

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Պատկանելով «Կը» ճյուղին, Զէյթունի բարբառը գործածում է «գօ» (գո) մասնիկը, որ դնում է սկզբից։ Անորոշ դերբայում «էլ» խոնարհման բայերն ունենում են «իլ», իսկ «ալ» խոնարհման բայերը՝ «ոլ» վերջավորություն (կը̊յիլ, գայտոլ)։

Ներկա

գօ	*կը̊յիմ*[1]	*գո*	*գայտոմ*[1]
»	*կը̊յիս*	»	*գայտոս*
»	*կը̊յէ*	»	*գայտո*
»	*կը̊յինք*	»	*գայտոնք*
»	*կը̊յէք*	»	*գայտա̃ք*
»	*կը̊յին*	»	*գայտոն*

---

[1] *Գրում եմ, կարդում եմ։*

Անցյալի անկատար

գը	կը̊յայա	գօ	գայտի
»	կը̊յայայ	»	գայտիս
»	կը̊յէյ	»	դայտի
»	կը̊յայօնք	»	գայտինք
»	կը̊յայա̈ք	»	դայտիք
»	կը̊յայը̊ն	»	գայտին

Ապառնի

Ապառնին կազմվում է հարկադրական եղանակիչով.

Ապառնի		Անցյալի ապառնի	
բիդի կը̊յիմ	բիդի գայտոմ	բիդի կը̊յայա	բիդի գայտի
» կը̊յիս	» գայտոս	» կը̊յայայ	» գայտիս
» կը̊յէ և այլն.	» գայտո	» կըյէյ	» գայտի
	և այլն.	և այլն.	և այլն։

Վաղակատար		Անցյալի վաղակատար	
կը̊յիյ իմ	գայտացիյ իմ	կը̊յիյ յա	գայտացը յա
» իս	» իս	» յայ	» յայ
» ը	» ը	» յէյ	» յէյ
» ինք	» ինք	» յօնք	» յօնք
» յէք	» էք	» յա̈ք	» յա̈ք
» յէն	» ին	» յը̊ն	» յան

Անցյալ կատարյալ

կը̊յիցի	գայտացը
կը̊յիցիյ	գայտացիյ
կը̊յից	գայտաց
կը̊յիցոնք	գայտացոնք
կը̊յիցիք	գայտացիք
կը̊յիցին	գայտացըն

ՄԻ ՆՄՈՒՇ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԲԱՐԲԱՌՈՎ

ԶԷՅԹՈՒՆԻ ԽՈՍՎԱԾՔ[1]

ԿՈՒԿՈՒՑԸ (ԳԻՔՈՐԸ)

Կ՚եղացը Համփը̊յան դունը գըեոըեվ էյ էը̊նգի։ Համփայը գո գուզանէյ յու իյ դասնէյգու դայու Կուկույը քաղօք դոնը, պանը մը դոը, յույ մօյթ տառնօ ու ծավծավա։

---

1 Գրի առավ՝ Հ. Խաչատրյանը։

Գը̈նը̈զն ու օյզո չօ գունէյ։

— Զօ գուզիմ, իմ մասում բօլուզը ա̈ն անհավոտ աշխօյը մի ըցգի, չօ գուզիմ,—գո գուլէյ գը̈նըգզը̈։

Ամմա Համփայը չի լը̈սից։

Ըռահօթ առավդուն մէյ, Թօթու առավդուն մը։ Դօնը խռանթա̈ն ու տըյացը̈նիյը իգին չո̈ւյ կէղճէն ծա̈յը, Կուկուլյան Թը̈շէյը պաքօն ու ջամփօ դը̈յան։ Քիյը՝ Զանին գո գուլէյ, բըդիգ հա̈լո̈ւցն ու իյ մծյ ոնթը գո գուլէյ. «Կուկուլ, յօ՞յ կօյթօս, հէ՛ Կուկուլ»։

Կուկուլը Թէգ-Թէգ իդիվը գո հեյէյ։ Գո դիմնեյ, յու էնիյ կէղճէն ծա̈յը կանօծին ու մա̈յը աղըո̈ւխծվ էչվանան գո սը̈յպեւ։ Ավա̈ իյ բաբուն քուվէն գո վազէյ, յա առճիվը գո գը̈նգնէյ։

Դաբո մա̈ իդիվը հեյիցօվ, կեղը լեռօնը իդեվը ծաճգըվիյ էյ՝ Կուկուլը ա̈լ իդ գո մը̈նէյ։

— Այգո հա̈, հիկկես Կուկուլ, այգո հա̈, հասոնք հա̈,—Համփայը իյ դը̈ղին գո ջը̈վէյ ու գոյթէյ. շալգիյ էյ մանդըք մը, մէչ նա̈ գա̈յ մէգ իյգու հուռց, բանիըյ ու մէգ-մէգ դուլթոմ թո̈ւթո̈ւն։

Օյգովոն տահը, լէռնիյը գո գը̈լը̈վինը, կեղը խօռու դումանըն մէչը դաբո մա̈ օյվօնցօվ։

— Դադա̈, մէյ դոմը օնօյէ հա̈,—Կուկուլը ցօցուց՝ մօդը իյգենցուց կեղճէն տահը, ամմա դունը հէչ չօ գը̈յվը̈նէյ ու ը̈լը̈վիցօն դե կացըն։

ԲԱՌԵՐ

Ցու(յ)—որ
Բօլուզ—տղա
Ըռահօթ—խաղաղ
Խռանթա̈ն—ընտանիք
Ոնթը—վիրկը
Գո հէյէյ—նայում էր
Դաբո մա̈—մի անգամ էլ
Մանդըք—տոպրակ, խուրջին
Օյզո չօ գունէյ—չէր ուզում
Գո գուլէյ—լալիս էր
Իդիվը հէյիցօվ—ետևը նայեց
Այգո—արի
Գոյթէյ—գնում էր
Դուլթոմ—դաստա
Օյվօնցօվ—երևաց

ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՑԱՆԿ

էջ

ԱՌԱՋԱԲԱՆ . . . 5

Մ ա ս ն I

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ բարբառագիտություն . . . 7
2. Հայ բարբառագիտության պատմությունից . . . 9
3. Հայերենի բարբառները . . . 14
4. Բարբառների առաջացումը . . . 18
5. Հայերեն բարբառների պատմությունից . . . 23
6. Հայերեն բարբառների դասակարգումը . . . 43
7. Հնչյունաբանություն . . . 56
   Ձայնավոր հնչյուններ . . . 57
   Երկբարբառներ . . . 67
   Բաղաձայններ . . . 69
8. Հայերեն բարբառների ձևաբանությունը . . . 81
   Հոգնակիներ . . . 84
   Հոլովում . . . 86
   Դերանուններ . . . 90
   Խոնարհում . . . 106
   Սահմանական ներկա . . . 115
   Անցյալի անկատար ժամանակ . . . 123
   Շարունակական ժամանակներ . . . 126
   Ապառնի ժամանակ . . . 132
   Վաղակատար ժամանակ . . . 144
   Հարակատար ժամանակ . . . 147
   Անցյալ կատարյալ ժամանակ . . . 149
   Ըղձական եղանակ . . . 151
   Պայմանական եղանակ . . . 153
   Հարկադրական եղանակ . . . 153

Մ ա ս ն II

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՉՈՐՍ ՃՅՈՒՂԵՐԸ

Հայերենի «Ում» ճյուղի բարբառները

1. Երևանի (կամ Արարատյան) բարբառ . . . 164
   Նմուշներ Երևանի բարբառից . . . 176
2. Ղարաբաղի բարբառ . . . 180

Նմուշներ Ղարաբաղի բարբառով 191
3. Թբիլիսիի բարբառ 194
Նմուշներ Թբիլիսիի բարբառով 208
4. Ագուլիսի բարբառ 212
Նմուշներ Ագուլիսի բարբառով 223
5. Ջուղայի բարբառ 224
Նմուշներ Նոր-Ջուղայի բարբառով 331
6. Շամախու բարբառ 232

Հայերենի «Ս» ճյուղի բարբառները

1. Արթվինի բարբառ 242
Նմուշներ Արթվինի բարբառով 259
2. Ուրմիայի բարբառ 262
Մի նմուշ Ուրմիայի բարբառով 282
3. Կարճևանի բարբառ 286
Մի նմուշ Կարճևանի բարբառով 317
Մի նմուշ Մեղրու բարբառով 319
Մի նմուշ Հադրութի բարբառով 320

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ «Լ» ԵՎ «ԿԸ» ՃՅՈՒՂԵՐԸ

Հայերեն «Լ» ճյուղի բարբառներ

Մարաղայի բարբառ 321
Նմուշներ «Լ» ճյուղի բարբառներով 331

Հայերեն «Կը» ճյուղի բարբառները

1. Վանի բարբառ 340
Նմուշներ Վանի բարբառով 344
2. Համշենի բարբառ 345
Մի նմուշ Համշենի բարբառով 353
3. Պոլսի բարբառ 355
Մի նմուշ Պոլսի բարբառով 363
4. Կարնո բարբառ 364
Մի նմուշ Կարնո բարբառով 366
5. Կիլիկիայի բարբառ 368
Մի նմուշ Կիլիկիայի բարբառով 371

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
14	6 ներքևից	կարելի ի	կարելի է
21,27	զանազան տողերում	ֆեոդոլական	ֆեոդալական
23	4 ներքևից	հաջորջմամբ	հորջորջմամբ
31	6 վերևից	աղվաղումներով	աղավաղումներով
48	19 »	«Ու» և «Կը ճյուղերը	«Ում» և «Կը» ճյուղերը
49	5-6 ներքևից	Կարնո բարբառը և Ակնա բարբառը պատկանում են միևույն «Ում» ճյուղին	Կարնո բարբառը և Ակնա բարբառը պատկանում են միևնույն «Կը» ճյուղին
50	19 »	«փ» և «կ» հնչյուննների	«փ» և «ֆ» հնչյունների
54	4 »	ուր > ճուր	ջուր > ճուր
56	6-7 »	ռ́ -երբև փափուկ «լ» ր́-երբև շնչեղ «ր»	«ր́ երբև շնչեղ «ր»
62	7 վերևից	միշտ դրվում է	միշտ դրվում է
65	18 »	Կիլիկայի	Կիլիկիայի
68	20 »	ուրաթ	ուրբաթ
71	12 ներքևից	Ազերբ	ազերի
79	9 վերևից	բարձրացրել	բարձրացել
83	17 »	գրում ես	գրում ես
97	3 »	մեղա̃նա̃մ	Ներգ. մեղա̃նա̃մ
101	10 ներքևից	ըստում	ըստում
107	8 »	ասպես	այսպես
126	14 վերևից	կ'իրիս ինք'—գրում ենք	կ'իրիս ինք'—գրում էինք
133	8 ներքևից	դեմքը	դեմքը
141	1 վերևից	«ալո̃ւ»	«ալո̃ւ» «իլո̃ւ», «ըլո̃ւ»
141	12 ներքևից	ժամասակը	ժամանակը
144	18 »	դերբայը	դերբայը
155	17 »	Ղազախի	Ղազախի
171	18 »	մե-մեծ մարդ	մէ-մէնձ մարդ
1›6	2 »	գործ ածվում	գործ է ածվում
188	19 »	Թվականները դասականը	Թվականների դասականը
197	3 վերևից	աչկըս ցամաքում՝	աչկըս չի ցամաքում՝
231	15 »	պետլա եղանակինչով	«պիտլա» եղանակինչով
239	6 ներքևից	կարթալու եմ	կարդալու եմ
289	14 »	Հայց. ծըռըտնօրու հէնի քիվէրաց հէնի	Հայց. ծըռըտնան, քիվէրաց Բաց. ծըռըտնօրու հէնի, քիվէրաց հէնի
289	7 »	Հայց. ախպիրնօրու հէնի հարօրու հէնի	Հայց. ախպիրնուն, հարօրուն Բաց. ախպիրնօրուն հէնի հարօրուն հէնի

ՎՖ 2291, Տիրաժ 500 օր. պատվեր № 697
ВФ 2291, Тираж 500 экз. заказ № 697

Գիտա-մանկ. հրատարակչ. տպ., Երևան, Աբովյան, 104
Тип. Научно-педагогич. изд., Ереван, Абовян, 104

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0013427

ԳԻՆԸ ~~20 կ.~~ 2ռ.

ЦЕНА
12786